

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՎԵՐԱՊՐԱՇՆԵՐԸ

Ինգա Ավագյան

ԻՄ ԿՅՅԱՆՔԸ.

Գևորգ Հմայակյանի հուշապատումը

Գյումրի
Էլդորադո
2020

Ինգա Ավագյան

ԻՄ ԿՅԱՆՔԸ.

Գևորգ Հմայակյանի հուշապատումը

Գյումրի
Էլդորադո
2020

ՀՏԳ- 821.19-94:94(479.25)

ԳՄԴ- 84(5Հ):63.3(5Հ)

Ա 770

Երաշխավորված է հրատարակության ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի (10.09.2018)

Շիրակի պետական համալսարանի հիմնադրամի սոցիալական գիտություններ և իրավունք ֆակուլտետային խորհրդի (23.01.2019)

Գյումրու «Կոմայրի» պարունման կոլեկտիվի սրբեկոց-բանագրականի որոշումներով

Գիտական խմբագիր՝

Գրախոսներ՝

Խմբագիր՝

ս. գ. ք. Համիկ Հմայակյան
ս. գ. դ. Ռուբեն Կարապետյան
ս. գ. ք. Արթակ Հովհաննիսյան
ք. գ. ք. Անահիտ Մկրտչյան

Ավագյան Ինգա

Ա 770 Մեծ եղեռնը վերապրածները-6, Իմ կյանքը. Գևորգ Հմայակյանի հուշապատումը. / Ի. Ավագյան.- Գյումրի: Էլդորադո, 2020. - 388 էջ + ներդիր:

«Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարի վեցերորդ գիրքն է, որը, ինչպես և նախորդ հինգը, արեղծվել է իրական դեպքերի և փաստերի հենքի վրա: Այս անգամ մշակվել, պարունական փաստերի հետ համադրվել և գրքի տեսքով ընթերցողի սեղանին են դրվել Փոքր Ասիայի Նիկոնեդիա գավառում 1915-1921թթ. Հայոց եղեռնը վերապրած մերդեպրացի մի ընտանիքի պարունությունը, որը արտագոված է կտրորածից մագապործ Գևորգ Հմայակյանի հիշողություններում: Հիշողությունները, ի պարիվ թե՛ հուշագրի, թե՛ մատենաշարի հեղինակի, պարունական, փաստագրականի, աղբյուրագիտականի և ազգագրականի հետ մեկտեղ ունեն նաև գեղարվեստական արժեք, քանզի պարունական իրադարձությունները, գործող հերոսները, վերապրողի քնարական պարունակները վիպականություն են հաղորդում գրքին: Ընթերցողի վրա հոգեցունց տպավորություն են թողնում Մերդեպրացի և հարևան գյուղերի հայկական քնակչության կտրորածը, հայերի գորակոչը և մասնակցությունը 1915թ. ապրիլին Գալիպոլիի նակարամարտին, հայկական կամավորականի՝ ֆիդայական ջոկարի պայքարը և վրիժառությունը, որի գործունեության բացահայտումից հետո Գևորգի հայրը՝ Կարապետը, դարապարտվում է ցանհ քանդակության Երզնկայի քարհանքերում: Զարդեզագրի մանրակրկիտությամբ ներկայացված են Նիկոնեդիա գավառի գյուղերի, Կոստանդնուպոլսի, Բուլղարիայի գյուղերի, Վառնայի տեղագրությունը, քաղերն ու փողոցները, ինչպես նաև հայ, թուրք, հույն և բուլղար ազգաբնակչության փոխհարաբերությունները, կենցաղն ու նկարագրը, ավանդույթներն ու քարերը Երկրում: Մանրակրկիտ ներկայացված է բուլղարական սփյուռքի պարունությունը և բուլղարահայերի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին:

Գիրքը մեծապես արժեքավորվում է գիտական և մեկնաբանական հարուստ ծանոթագրություններով, պարունական քարտեզներով, լուսանկարներով, ինչպես նաև Մերդեպրացի խափածքում օգտագործվող օտար բառերի և արտահայտությունների բացարձակով: Գրքի հավելվածում ամփոփված են Գևորգ Հմայակյանի արեղծագործությունները, որոնց մեջ առավել արժեքավոր է «Թգբեհր» վիպակը:

Գիրքը հասցեագրվում է Մեծ եղեռնի թեմայով զբաղվող գիտական հաստատություններին, պարունակներին, աղբյուրագետներին, ազգագրագետներին, սփյուռքագետներին, քանասերներին, ժողովրդագրությամբ զբաղվողներին և ընթերցող լայն շրջանակներին:

ՀՏԳ- 821.19-94:94(479.25)

ԳՄԴ- 84(5Հ):63.3(5Հ)

ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ

«Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարը հրատարակվում է 2004թ.: Մատենաշարում ընդգրկվել են Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում, Շիրակի մարզում և Գյումրիում Մեծ եղեռնը վերապրած մարդկանց հուշապատումները: Մատենաշարում հրատարակած հուշապատումներն են՝ 2004թ.՝ «Ծննդավայրիցս դեպի Տեր Զոր (Քաջունի Ղարազոյանի հիշողությունները)», 2006թ.՝ «Հուշեր անցյալից (Հայրապետ Տոնոյանի հիշողությունները)», 2008թ.՝ «1915թ. Բիթլիսյան ողբերգություն (Միհրան Ղազարյանի հուշապատումը)», 2015թ.՝ «Հիշողություն մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից (Աղասի Մակարյանի հուշապատումը), 2016թ.՝ «Մեր գնդի ճակատագիրը (Հովհաննես Թռչունյան-Հովհաննիսյանի հուշապատումը)»: 2020թ. հրատարակվում է «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարի վեցերորդ գիրքը՝ «Իմ կյանքը (Գևորգ Հմայակյանի հուշապատումը)»:

АВТОБИОГРАФИЧЕСКОЕ ЭССЕ ГЕВОРКА АМАЯКЯНА

Богатое событиями XX –е столетие, свидетелем и участником которых был Геворк Амаякян обуславливает особый интерес к изложенному им в его автобиографическом эссе материале. Этот интерес обусловлен и тем, что в нем переданы не только фактология весьма длительного исторического периода (он охватывает 1915-1990гг.), но и показаны особенности жизни армян-беженцев в диаспоре и после репатриации - в самой Армении. Причем автор пересказывает также отдельные эпизоды из жизни своего отца, бабушки, которые охватывают более ранний период истории семьи. Весьма знаменательно и то, что Геворк Амаякян родился именно в апреле 1915 года. Он представитель того поколения, которое видело ужасы геноцида, пережило две мировые войны, стало свидетелем становления армянской государственности и многих других не ме-

нее важных событий прошлого столетия. К тому же жизнь автора представлена в двух ипостасях - до 1946 года в инонациональном окружении, вдали от родины, а после репатриации - в Армении.

В контексте вышесказанного следует отметить, что информация автобиографического свойства может стать весьма полезной для исторических реконструкций, если свидетель и участник событий отличается наблюдательностью, способностью запоминания, умением передать не только сведения о прошлом, но и описать дух того времени. Именно эти качества и отличают Геворка Амаякяна, который в весьма лаконичной манере в более чем четырех десятках очерках показывает отдельные этапы своего жизненного пути. В них прошлые события отражены не только в констатации фактов, но и в ощущениях, переживаниях его самого - непосредственного участника исторических процессов долгого, насыщенного событиями XX столетия. Они изложены в хронологической последовательности, но местами автор нарушает этот порядок, вкрапывая в очередной сюжет повествования рассказ не соответствующий данному отрезку времени. Что нисколько не сбивает с ритма повествование, наоборот, автор подобным образом дополняет конкретный сюжет причинно-следственными связями. Помимо описания действия (Бегство, Дорога в Тер-Дзор, Возвращение отца и т.п.) автор дает весьма интересные, можно сказать весьма исчерпывающие характеристики людей. Причем, они даны в действиях - поступках, в динамике, а полнота их образов связана с длительностью общения с ними. Особенно ценно и то, что в этих очерках весьма реалистично, без стереотипных клише представлены армяне, турки, цыгане, болгары, греки в большей степени в их социальных и личностных характеристиках. Их этнические особенности даны в реальных и конкретных культурных маркерах и лишены всякой предубежденности.

Для современного исследователя этносоциальных явлений и процессов весьма важен и следующий подход автора в описании людей, нравов, взаимоотношений, словом всего того, что образует конкретную ситуацию действия. Геворк Амаякян в своих рассказах

несколько отстранен от современных реалий и передает свое восприятие ситуации именно в контексте того времени и среды. Это открывает широкие возможности проникновения и погружения в социально-психологическую ситуацию того времени и той среды. В этом отношении весьма ценны сведения о взаимоотношениях турок и армян, армян и болгар, армян репатриантов и представителей армянской диаспоры 1970-1990 гг. Очень интересны наблюдения о состоянии армян в Болгарии в этот период.

Для исторических реконструкций и в осмыслении современных явлений и процессов, происходящих в армянском этносе в своей и инонациональной среде, сведения автобиографического характера очень важны. В ряду таких источников свое значимое место занимает автобиографическое эссе Геворка Амаякяна, публикация которого позволит современному читателю познать реалии прошлой действительности, по новому осмыслить историю своего народа без политической и идеологической заданности. Для конкретного же исследователя, независимо от круга его интересов, занимается ли он прошлым или современностью, автобиографические очерки автора весьма важны и необходимы в их изысканиях.

**Рубен Карапетян, д.и.н. зав.отделом исследований диаспоры
Института археологии и этнографии НАН РА**

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Պատմագիտական գրականության մեջ Եղեռնը թվագրվում է 1895-1923 թթ.: Հայ ժողովրդի հիշողությունից անհնար է ջնջել այդ օրերին կատարված եղերական իրադարձությունները: Մեծ եղեռնը արտացոլված է ժողովրդական բանահյուսական ստեղծագործություններում և Մեծ եղեռնը վերապրածների հուշապատումներում: Վերջին տարիներին հրապարակված գրականության մեջ կարևոր տեղ են գրավում պատմական հիշյալ իրադարձությունների անմիջական մասնակիցը դարձած ականատես վկաների և Մեծ եղեռնը վերապրածների պատմած ու գրի առած հիշողությունները: Հուշապատումները աչքի են ընկնում իրենց եզակիությամբ, բայց իրարից անկախ՝ գրեթե նույնությամբ պատկերում են պատմական միևնույն իրողությունները, նման դեպքերը, կերպարները և իրադարձությունները, նույն ահասարսուռ տեսարաններն ու դաժանությունները, որոնք զուգակցվելով հաստատում, շարունակում, լրացնում և ընդհանրացնում են միմյանց՝ անձնականից վերածվելով ընդհանուր, ապա և համագգային ողբերգության՝ Մեծ եղեռնի ու հայոց ցեղասպանության¹: Ականատես-վկաների պատմած կամ գրի առած հուշերը իրենց կառուցվածքով կա՛մ հակիրճ են ու սեղմ, կա՛մ ծավալուն ու երկարապատում: Այս դեպքում հիշողությունները ծավալուն ու երկարապատում են և ներառում են զանազան երկխոսություններ, մեջբերումներ, ժողովրդական բանահյուսություն՝ երգ, վիպերգ, գրույց, առած-ասացվածք, օրհնանք, անեծք, աղոթք, երգում, ավանդույթներ²: Գևորգ Հմայակյանի «Իմ կյանքը» հուշապատումը հարուստ աղբյուր է ոչ միայն հայոց պատմություն ուսումնասիրողների և ցեղասպանագետների, այլև սփյուռքի պատմություն և համաշխարհային պատմություն ուսումնասիրողների համար³:

Մեծ եղեռնը վերապրած Գևորգ Կարապետի Հմայակյանը ծնվել է 1915թ. ապրիլին, պատմական Բյուրանիայի⁴ (Նիկոմեդիա) Մերդիգոզ գյուղում⁵: Ըստ Մինաս Գասապյանի (Ֆարհատ) և Միհրան Թումանյանի՝ գյուղը հիմնադրվել է 1600թ., XX դարի սկզբին ունեցել է 240 տուն հայ և 7 տուն թուրք բնակիչ, որոնք սահուն խոսել են տեղական հայկական բարբառով: Ըստ ավանդության՝ գյուղի հայ բնակիչները գաղթել են Մերտինի, Խարբերդի և Կիլիկիայի կողմերից:

Գյուղի ավետարանը ունի հիշատակարան.«Գրեցավ հայոց ՌԺՁ [1567] թվին ի թագավորության տաճկաց Սուլթան Սելումին⁶ և հայրապետության տ. Խաչատուրին ձեռամբ Հովհաննես երեցի ի գյուղն Մանճրլըխ, ընդ հովանեավ ս. Թորոսի և ս. Հակոբա»։ Գիրքն իր հալալ վաստակով գնել է Ղուլիճանը և նվիրել Ղալընկ գյուղին⁷։ Գյուղը Մերոփգյոզ ձևով հիշատակվում է XVIII դ. Միմեոն կաթողիկոս Երևանցու Ձամբռուն⁸։ Գյուղը պատկանում էր Էջմիածնի կաթողիկոսության երկրորդ նվիրական վիճակին⁹։

Գևորգը «Իմ կյանքը» խորագիրը կրող հուշերում¹⁰ գրում է, որ մոր՝ Ալմաստի առաջին ծնունդը շատ ծանր է լինում, և նրան տեղափոխում են Կոստանդնուպոլիս, որը գտնվում էր Մերոփգյոզից հարյուր կմ արևելք։ Վերադառնալով ընտանիքը՝ գյուղում չի գտնում մոր հարազատներից ոչ մեկին։ Պարզվում է, որ տասն օր առաջ բոլորը հեռացել են գյուղից, և ընտանիքը ստիպված միանում է մեկ այլ, երեք հարյուր հոգուց բաղկացած հայ գաղթականների խմբին։ Գևորգը իր հուշերում գրում է.«Ես կյանքովս պարտական եմ մեծ մորս և ավագ հորեղբորս։ Մի օր ինձ տանում էր մեծ մայրս, երեք օր՝ հորեղբայրս։ Ճանապարհը տևել է վեց ամիս։ Չարմանալի է, թե ինչ ահավոր զրկանքներ է կրել մեր խումբը։ Այդ օրերին մեզ փրկել են մեծ մորս ունեցած ոսկիները»։ Անապատ տարվող քարավանից ընտանիքը փախչում է Կոնիա ու հանգրվանում Կոնիայի գյուղերից մեկում¹¹։ Հրաշքով փրկված ընտանիքին ապաստան է տալիս մի թուրքական ընտանիք։

Գ. Հմայակյանի հայրը՝ Կարապետը, եղել է Մերոփգյոզի փահլեվանը, նրա թիկունքը երբեք գետնին չի դիպել։ Կարապետը ծառայել է թուրքական հեծելազորում, ապա դարձել գերմանացի գնդապետի թիկնապահ։ Մեջբերենք «Իմ կյանքը» հուշապատումից հետևյալ հատվածը. «...**Այն ժամանակ թուրքական բանակը գերմանացի սպաներն էին մարզում։ Գերմանացի գնդապետը րեսնում է հորս, որը շար դուրեկան երիտասարդ էր, և ասում է. «Ես վերցնում եմ Հմայակ օղլու Կարապետին»։ Թուրքական փաշան առարկում է՝ ասելով, թե 90 օրան (118 կգ) հեծելազորայինի համար շար ծանր քաշ է։ «Ես նրա նմանների համար չի ունեմ», - պատասխանում է գերմանացի սպան։ Մի առավոտ դաշտում կանգնած գերմանա-**

կան գնդապետը նայում է թուրք զինվորներին, որոնք ուզում են մի քար բարձրացնել: Մի քանիսը քարը տեղից կարողանում են շարժել, իսկ մի քանիսը չեն կարողանում այդ անել: Հայրս մոտենում է և քարը բարձրացնելով գլխի վրայով՝ գցում է հեղու: Գնդապետը գալիս թիֆուսացնում է հորս թիկունքին, ճանաչում է ու դարձնում իրեն թիկնապահ, ու հայրս նրա մոտ մի տարի ծառայելուց հետո վերադառնում է գյուղ»: Մեկ տարի ծառայելուց հետո նա զորացրվում է, սակայն ամուսնությունից մեկ ամիս անց սկսվում է Առաջին աշխարհամարտը: Մյուս ազգականների հետ զորակոչվում է նաև Կարապետը, մասնակցում Գալիպոլիի¹² ճակատամարտին: Տեղեկանալով հայոց տեղահանության և ջարդերի մասին՝ նա և իր հայ ու հույն ընկերները լավ զինվում և փախչում են թուրքական բանակից: Նրանք ստեղծում են չեթեական խումբ և պայքարում են՝ լուծելով կոտորված հայ և հույն բնակչության վրեժը: Խմբի հիմնական հարվածը ուղղված էր դատարկված հայկական և հունական գյուղերը զավթած նորաբնակ թուրքերի դեմ: Այստեղ մենք կարող ենք դիտարկել նաև թուրքերի կողմից հույն ժողովրդի տեղահանության ու կոտորածի փաստը, և պատահական չէ, որ Կարապետի խմբում նաև հույն ֆիդայիներ էին կռվում: Խմբապետ Կարապետի չեթեների խումբը զիջերները հարձակումներ է գործում Այոլոս, Նորգեղ, Յալաղ-դերե, Վարգեղ գյուղերի վրա, իսկ ցերեկները՝ թաքնվում: Խումբը, ընդհարումների ժամանակ զոհեր տալով, նստահանում է, և, ի վերջո, երեք հոգուց բաղկացած ջոկատը բացահայտվում է, ձերբակալվում ու բանտարկվում է Իզմիրի¹³ բանտում: Կարապետը հույն է ձևանում ու մի կերպ խուսափելով մահապատժից՝ մյուս երկու հույն չեթեների հետ դատապարտվում է Երզնկայի քարհանքերում ցմահ տաժանակրության: Այստեղից փախչելով, սոսկալի փորձություններ ու դժվարություններ կրելով՝ Կարապետը իր ընտանիքը գտնում է Կոնիայի Բավաքըր գյուղում:

Մեծ մոր՝ Անուշի հիվանդության մասին գրելիս Գևորգը անդրադառնում է Օսմանյան կառավարության նախարարների և Աբդուլ - Համիդ սուլթանի պալատական բժիշկների՝ Հովսեփ էֆենդու և Արբին էֆենդու հայազգի լինելու փաստին: Ներկայացնում է Բալկան-

յան առաջին պատերազմը կանխելու համար Եվրոպա մեկնած օսմանյան արտգործնախարար Տատուրյանին¹⁴:

Պատերազմի ավարտից հետո ընտանիքը կրկին վերադառնում է «Երկիր»՝ Սերդիգյոզ, սակայն Թուրքիայում բռնկվում է «... Բեմալի շարժումը», և Կարապետին սկսում են փնտրել հին հաշիվների պատճառով: 1916-1917թթ. որոշ փախստականներ վերադարձել էին հայրենի բնակավայրեր, իսկ 1919թ. փախստականների և աքսորվածների շրջանում լուր տարածվեց, որ Թուրքիայում հեղաշրջում է եղել, և հայերը կարող են վերադառնալ իրենց հայրենիք¹⁵: Ոմանք հավատացին և մեծ դժվարություններով վերադարձան: Նախճիրը, սակայն, կրկնվեց, և հայրենի բնակավայրերը վերադարձած հայերը, 1918-1922թթ. նոր զոհեր տալով, կրկին փախստական դարձան, իսկ Թուրքիայի արևմուտքում՝ կրկնակի աքսորական¹⁶: Ֆրանսիական զորահրամանատար Գուրոն «մեծ զորավար» էր հռչակում Բեմալին (ակներևաբար, սրան դեռևս հակակրող անգլիացիներին խոցելու համար) և հայտնում էր, թե նրա կառավարությունը խոստացել է կյանքի, ինչքի և ազատության երաշխիքներ Կիլիկիայի բոլոր բնակիչներին, ուստի պետք է նրան վստահել և մնալ տեղերում¹⁷: Այս զենեարալը մերժում էր առհասարակ հայերի հավակնությունները Կիլիկիայում¹⁸:

Բեմալական շարժման բռնկումից հետո ընտանիքը ստիպված գաղթում է Կոստանդնուպոլիս, այստեղից էլ՝ Բուլղարիա, որտեղ տարիներ առաջ ապաստանել էր Կարապետի հորեղբայրը: Կարապետի այս հորեղբայրը մասնակցել էր Օտոմանյան բանկի գրավմանը:

Ա.Պետրոսյանը սփյուռքի ձևավորման մասին գրում է.«Կայուն սփյուռքը հաճախ ձևավորվում է ողբերգական իրադարձությունների հետևանքով: Յեղասպանությունը՝ որպես տիեզերածնություն և ազգածնություն, հանդես է գալիս հատկապես հայկական սփյուռքի դեպքում, քանի որ հենց ցեղասպանության հետևանքով և դրանից հետո ձևավորվեցին հայոց նոր ժամանակների կարևորագույն գաղութները (հայոց նոր «տիեզերքները»)...

Տիեզերածին և ազգածին ավանդությունները, որոնք վերարտադրվում են այլ տեսակի առասպելաբանական ու բանահյուսական տեքստերում, գրականության

մեջ, անվերջ կրկնվելով տարբեր մակարդակներում, փոխանցվում են սերունդներին՝ ապահովելով տվյալ ազգի, էթնոսի, հասարակության պահպանումը: Ծեսերը կրկնում, վերարտադրում են տիեզերածին ու ազգածին սխեման և առասպելների համապատասխանություններն են ծիսական մակարդակում: Դա պարզորոշ երևում է սփյուռքում, որտեղ բոլոր նշանակալի հանդիսությունների ժամանակ ոգեկոչվում է Եղեռնը... Ազգածին ավանդության կորուստը հավասարազոր է էթնիկ ինքնության կորստի: Եղեռնի մոռացումը կարող է հանգեցնել սփյուռքահայ ինքնության և սփյուռքի կորստին...»¹⁹:

Կարծում ենք՝ այս ամենի հետևանքով է, որ Գևորգ Հմայակյանը ակամա շոշափում է բուլղարական սփյուռքում ծառացած հայապահպանման խնդիրները, համայնքի քաղաքական և մշակութային կյանքն ու գործունեությունը, ազգային դպրոցի խնդիրները: Այս ամենը արտացոլված է նրա հուշերում և ստեղծագործություններում: Նա մասնավորապես գրում է, որ Վառնայում բուլղարական և հայկական դպրոցները բաժանված էին մի բարակ միջնորմով, և հաճախ ազգայնական բուլղար երեխաների և հայերի միջև տեղի էին ունենում ընդհարումներ: Բուլղար երեխաները հայերին անվանում էին եկածներ՝ «**գելմեկներ**»: Այս իրադրությունը քիչ բարվոք կարելի է համարել՝ համեմատած այն հայ ընտանիքիների դրության հետ, որոնք հաստատվել էին բուլղարական գյուղերում, որոնցում գործում էին միայն բուլղարական քառամյա դպրոցներ: Գևորգը գրում է. «**Եկավ սեպտեմբերը, ես պեպք է նորից դպրոց գնալի, հինա էլ հայերենն էի մոռացել: Եթե մեծ մայրս բուլղարերեն գիտենար, հայերեն խոսելն ալ կմոռանայինք**»: Նա, Բուլղարիայի Վառնա քաղաքի և հարևան գյուղերի կրթական համակարգը, Վառնայի հայկական դպրոցը ներկայացնելուց բացի, պատմում է հայկական եկեղեցու գործունեության մասին, որը ջանում էր պահպանել մեր ազգային սովորույթները: Այս օտար միջավայրում միշտ չէ, որ դա հաջողվում էր: Ուշագրավ է բազմազգ Բուլղարիայում ապրող ազգերի միջև եղած փոխհարաբերությունների նկարագրությունը: Բուլղարների, թուրքերի, հույների և հայերի մի շարք ազգային սովորույթները, այնուամենայնիվ, չէին կանխում խառնամուսնություններ-

րը: Այսպիսին է պանդխտության մեջ հայտնված հայի ճակատագիրը:

Գևորգը գրում է Վառնայում գործող Ազգային միություն, Հնչակյան, Ռամկավար և Դաշնակցական կուսակցությունների, Անդրանիկի և Գարեգին Նժդեհի մասին: 1921թ.Չանգեզուրում խորհրդային իշխանության հաստատումից հետո, Նժդեհը²⁰ անցնում է Իրան, ապա ապրում Բուլղարիայում, որոշ ժամանակ էլ՝ ԱՄՆ-ում: 1944թ., երբ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ խորհրդային զորքերը մտան Բուլղարիա, այստեղ բնակվող Նժդեհը ձերբակալվեց, տեղափոխվեց ԽՍՀՄ, դատապարտվեց երկարատև ազատազրկման: Նա մահացավ Վլադիմիր քաղաքի բանտում, իսկ 1983թ. Հայաստան տեղափոխվեց նրա աճյունը, որի մի մասը թաղվեց Ղափանի շրջանի Խուստուփ լեռան ստորոտին, մյուսը՝ Եղեգնաձորի շրջանի Ս.Սպիտակավոր եկեղեցու մոտ²¹: Գ.Նժդեհը հայկական և արտասահմանյան մամուլում տպագրված մի շարք բանաստեղծական և հրապարակախոսական ստեղծագործությունների հեղինակ էր: Ըստ Գ. Հմայակյանի պատմածի՝ Նժդեհի՝ Վառնայում գտնվելու ժամանակ ՀՅԳ-ն ժողով է կազմակերպում, որտեղ Նժդեհը հրապարակախոսական ելույթ է ունենում: Այդ ժողովին մասնակցում է նաև Գևորգը՝ իր ընկերների հետ: Բնական է թվում Խորհրդային Հայաստանում բնակվող Գևորգի քննադատական վերաբերմունքը ՀՅԳ-ի և Նժդեհի հանդեպ: Գևորգը չգիտեր, որ 1942թ. գերմանացիների կազմավորած հայկական լեզեռնում, որում ծառայել են Դրոն, Արտաշես Արեղյանը, Գարեգին Նժդեհը, գործում էր ընդհատակյա հակաֆաշիստական հայրենասիրական կազմակերպություն, որը ղեկավարում էր քաղաքական աշխատանքը և ռազմագերիների փախուստի գործը²²: Ինչ վերաբերում է Անդրանիկին, որը չեզոք վերաբերմունք ուներ Խորհրդային Հաստատանի նկատմամբ, ապա նա Գևորգի սիրելի հերոսն է:

Անդրանիկը իրեն նվիրված մի քանի զինվորներով 1919թ. ապրիլի վերջին անգլիական նավով մեկնեց Եվրոպա, ապա 1922թ.՝ ԱՄՆ՝ Կալիֆորնիայի Ֆրեզնո քաղաք, ուր ապրեց ու աշխատեց մինչև իր կյանքի վերջին օրերը²³: Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Գ.ԱԹ)՝ Հովհաննես Թումանյանի (ՀԹ) ֆուն-

դում, մի ինքնագիր նամակ է պահպանվում, որը Անդրանիկը Թումանյանին գրել է Թիֆլիսից: Նամակը գրված է «Начальник армянского особого ударного отряда»²⁴ բլանկի վրա: Նամակի բովանդակությունից հայտնի է դառնում, որ նա Թիֆլիսից մեկնել է Բաթում՝ Վառնա մեկնելու նպատակով: Անդրանիկը գրում է. «1919, մայիսի 11, Բաթում: Սիրելի Հովհաննես, Թիֆլիսեն մեկնելիս մեկ օրեն հասա Բաթում: Այստեղ կապասենք դեռ նավու, ձիս ու մաս մը իրեղեններ արդեն դրկեցի Վառնա, իսկ մենք երևի դեռ մի քանի օր կապասենք մինչև մեզ տանող շոգենավի գալը: Շատ ու շատ բարևներ բոլորին, սիրով՝ Անդրանիկ: Հ.Գ. Քեֆ անողին քեֆ չի պակսիր, դերդ²⁵ անողին դերդ չի պակսիր. Աշխարհը այսպես է եկեր, այսպես կերթա»²⁶: Նամակը վկայում է այն մասին, որ գորավարը որոշ ժամանակ բնակվել է Վառնայում մինչև Ֆրեզնո տեղափոխվելը: Վառնայում գորավարը հաստատվում է Գալաթայում, որտեղ իր սեփական ձեռքերով մեկ տասնամյակ առաջ տուն էր կառուցել²⁷:

Բուլղարիայում՝ Վառնայում, գործում էին զանազան միություններ, որոնց անդամագրվում էին սփյուռքում հայտնված հայ երիտասարդները²⁸: Այսպիսի միություններից էին Բանվորական երիտասարդական միությունը, ՀՕԿ-ը (Հայաստանի օգնության կոմիտե): ՀՕԿ-ը այն եզակի կազմակերպություններից էր, որ, ստեղծվելով 1921թ. Հայաստանի կառավարության որոշումով, ուներ մի կարևոր նպատակ՝ ներգրավել արտասահմանի հայությանը երկրի վերաշինության գործում, սերտ կապեր հաստատել նրա և Հայաստանի միջև: Տարբեր երկրներում ՀՕԿ-ի մասնաճյուղերը սկզբնական շրջանում հավատարիմ մնացին այդ նպատակներին, սկսեցին կարևոր դեր խաղալ սփյուռքի ազգային կյանքում: Սակայն հետզհետե, հետևելով Երևանից ստացած հրահանգներին՝ նրանք իրենց գործունեությունը ծառայեցրին կոմունիստական գաղափարախոսության քարոզչությանը: Նման դիրքորոշումը բացասաբար ազդեց ՀՕԿ-ի հեղինակության վրա, իսկ որոշ երկրների իշխանությունները ընդհանրապես արգելեցին նրա գործունեությունը: 1937թ. ՀՕԿ-ի գործունեությունը դադարեցվեց Բուլղարիայի ֆաշիստական կառավարության կողմից: Իրենց հերթին ԽՍՀՄ իշխանությունները 1937թ. լուծարեցին ՀՕԿ-ը՝ հակախորհրդային գործունեության շինծու մեղադրանքներով:

Գևորգը տալիս է ֆաշիստական կառավարության դաժան դատաստանի նկարագրությունը, երբ առանց դատ ու դատաստանի գնդակահարվում էին հակաֆաշիստականության մեջ կասկածվող հայերը և բուլղարները, ներկայացնում է ցար Բորիսի չեզոք քաղաքականությունը, տալիս Կարմիր բանակի կողմից Բուլղարիայի ազատագրումից հետո կառավարության և հասարակության շրջանակներում կազմակերպված գտումների նկարագրությունը: Անհրաժեշտ է նշել Մեծ հայրենադարձության մասին, որի ընթացքում 1946թ. Բուլղարիայից առաջին քարավանով Հմայակյանների ընտանիքը ներգաղթեց Հայաստան: Խիստ արդիական է սփյուռքահայերի վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի նկատմամբ, որ նույնպես արտացոլված է հուշապատումի մեջ: Այդ վերաբերմունքի մեջ անգամ կարելի է տեսնել ազգային կուսակցությունների քարոզչության հետքերը: Հատկապես սաստիկ բացասական է Գաշնակցական կուսակցության քարոզչությունը, որի հետևորդների վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ ոչ միշտ է դրական: Հուշապատումը ներկայացնում է նաև հայրենադարձության խնդիրները և հայրենադարձների ծանր դրությունը Խորհրդային Հայաստանում: Ոչ բոլոր հայրենադարձներն էին, որ կարողանում էին իրենց գտնել Խորհրդային Հայաստանում:

Գ. Հմայակյանը շնորհաշատ մարդ էր, նա երգիչ էր և ստեղծագործող: Նրա ստեղծագործությունները արևմտահայերենից փոխադրվել են արևելահայերենի: Գևորգի որդին՝ Ս.Հմայակյանը, պատմում է.«Գևորգը հուշապատումը գրել է 1979 թ.մորս՝ Գլշխուհու մահվանից հետո: Այս գրադմունքը նրան փրկեց թախիծին զոհ գնալուց: Նա շարունակում էր գրել մինչև 1990թ.: Բուլղարիայում Գևորգը ձգտել էր շարունակել կրթությունը՝ այդ նպատակով դիմելով Վառնայի զինվորական դպրոց, սակայն նրան չէին ընդունել, քանի որ նրա քաղաքացիությունը նախնայան էր»:

Գևորգը հիմնականում ստեղծագործել է արձակ ժանրում: Նա գրել է մի քանի պատմվածքներ: Պատմվածքներից «Տարգանը»²⁹ և «Ցանկատորը»³⁰ իրական հենքի վրա գրված ստեղծագործություններ են, որոնցում նկարագրվում է ծովայինի՝ դժվարություններով և արկածներով լի կյանքը: «Ինչպես երգիչ եղա»³¹ պատմվածը Գևոր-

գի կյանքից փոքր հատված է, որը ամբողջությամբ ներկայացնում է նրա մարդկային կերպարը և հային բնորոշ մարդասիրությունն ու մտերիմին կարեկցելու ունակությունը: Այս պատմվածքը կարելի է համարել «Իմ կյանքը» հուշապատումի մի փոքր հատվածը: Այդ պատճառով էլ պատմվածքը գետեղել ենք «Իմ կյանքը» հուշապատումի մեջ և հրատարակում ենք որպես հուշապատումի ենթագլուխ: Գևորգն ունի նուրբ հոգեկերտվածք. դա է պատճառը, որ ուշադրություն է դարձնում մտերիմների և հարազատների հետ կապված բոլոր մանրուքներին: Կենսագրականի մեջ երևում է, թե նա ինչքան ծանր է տանում իր ծանոթներից յուրաքանչյուրի մահը: «Մարիամը»³² պատմվածքում արտացոլված է Մեծ եղեռնը վերապրածի բողոքը՝ ուղղված ամենակարող Աստծուն, և ընդվզումը նրա դեմ: Այս երևույթը բնական է, քանի որ Հայոց ցեղասպանությունից բոլոր մազապործ եղածները պարբերաբար դիմում են Աստծուն և հարց տալիս, թե ինչու այդպես եղավ, ինչպես նա հանդուրժեց անմեղ հայության կոտորածը: Այստեղից էլ ի հայտ է գալիս Աստծու գոյության ժխտման ձգտումը, Հիսուսի մարդածին էության ընդունումը: Աստվածաշնչյան այս թեմայով գրված պատմվածքում Գևորգը Մարիամի մեջ տեսնում է Հերովդեսի ծառային ու հարճին, որը ի վիճակի չէ մերժելու արքային և հղիանում է նրանից: Հիսուսի հրաշքները նա մեկնաբանում է որպես Եգիպտոսում ապրած տարիներին հեքիմներից մեկին աշակերտելու և հիպոնոսին տիրապետելու արդյունք: Հանգուցյալներին բժշկելու հանգամանքը Գևորգը փորձում է մեկնաբանել մարդկային զանազան տարրական հնարքներով: Նա պատմվածքը գրել է 1988 թ.: Շատ հաճախ նրա ստեղծագործություններում առկա է տարբեր ժանրերի միաձուլում (ժանրային ներթափանցում): Այս երևույթը հատկապես բնորոշ է «Թճբեիը» վիպակին: Գևորգն այստեղ թարգմանաբար ներկայացրել է մի շարք բուլղարական ազգագրական երգեր, բուլղարական, թուրքական և հայկական ժողովրդական սովորույթներ, առակներ ու ասացվածքներ: Բուլղարական ժողովրդական երգերը սիրո և հավատարմության մասին են՝

Երկու արցունք թափիր սիրո համար,
 Եվ հեղոտ սաս, որ իմն ես դու, փոքրիկս,
 Եվ ամեն ինչ պիտի ներենք եղ, սիրելիս,
 Հավարարիմ մնա, մեզ համար կզան երջանիկ օրեր,
 Շուրով նորից երջանիկ պիտի ըլլանք մենք,
 Մինչև ուշ գիշերը պիտի շոյենք քո այտերը, փոքրիկս,
 Քնքուշ համբույրով պիտի սիրուիմք քո սիրտը,
 Հավարարիմ մնա, շուրով երջանիկ օրեր կզան մեզ համար:
 Երկու արցունք թափիր սիրո համար,
 Եվ հեղոտ սաս, որ սիրում ես ինձ,
 Եվ ես ինձ երջանիկ կզգամ, սիրելիս,
 Եվ ամեն ինչ կներենք եղ, փոքրիկս:

Շուրջ մեկ տասնյակի հասնող այս երգերը բուլղարերենից թարգմանվել են արևմտահայերեն, ապա փոխադրվել արևելահայերենի: Ժանրային ներթափանցման վառ օրինակներից են Գևորգի պատմած առակները: «Թզբեղ» վիպակում վերապրածը ամփոփել է մի շարք առակներ, որոնց սյուժեները հայտնի են համաշխարհային բանահյուսության մեջ³³, օր՝ «Խորամանկ հրեաների վերջը», «Անթաց մարդը», «Հաճի աղան»³⁴:

Գևորգն օգտագործել է բազմաթիվ օտար և բարբառային բառեր ու արտահայտություններ³⁵: Դա պայմանավորված է այն միջավայրով, որում նրա ընտանիքը ապրել է երկրում և սփյուռքում: Մեծաքանակ են թուրքերեն, բուլղարերեն, ռուսերեն բառերն ու արտահայտությունները, տեղանուններն ու անձնանունները: Նա հատկապես շատ է օգտագործում օտար լեզուներից փոխառված տիտղոսներն ու կոչումները. թուրքերենից՝ **աղս, հաճի, բեյ, վալի, խացից, փաշա, սուլթան, էֆենդի, խայմախամ, խան, խոջա, սեիդ, հանում, գելին**: Դրանցից մի քանիսի ռուսերեն և բուլղարերեն, լատիներեն, ֆրանսերեն համարժեքները նույնպես օգտագործվում են հեղինակի կողմից՝ **պայ, գիրի, դայդայ, դրուժնիկ, գոսպոդին, պարրիկ, պարրոն, մայո, մինիպար**: Ֆիդայական շարժումը ներկայացնելիս Գևորգը օգտագործում է իմաստով համարժեք **ֆիդայի, հայդուկ, չեթե և չեթնիկ, պարպիզան** բառերը: «Երկրի», Բուլղարիայի, Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական գործառույթի մասին գրելիս

Գևորգը հիշատակում է թուրքական դրամը՝ *մեճիդիե*³⁶, *դուրուշ*³⁷, բուլղարական *լևան*, խորհրդային *ռուբլին*, *կոպեկը (բարբառային)*: Օգտագործում է անգլիական՝ *ֆունտ սպեյրլինգը*³⁸, *շիլլինգը և ցենտը*³⁹ (*արևմտահայերեն՝ սանտիմ չեռով*) և չափի մի քանի միավորներ՝ *օխա*, *վարեյ (բարեյ)*, *փուֆ*⁴⁰, *միլ*⁴¹, *կիլո (խոսակցական)*, *դյուծին (12հայ)*: Կոստանդնուպոլսի, Վառնայի և Բուլղարիայի մասին գրելիս նա մի շարք տեղանուններ է օգտագործում՝ *Մորսկայա Կրաստինա (հավանաբար՝ ծովային այգի)*, *Ջլայանի Պյասկի (Ոսկե ավազներ)*, *Սփարայա Բլանինա (լեռնանցքի անվանում)*, *Սվեֆի Վրաչ*, *Փոփոլեունա բանկ*, *Ալաջա մոնաստիր*, *Ուսկիդար գաբալը չարշը (Սկյուրար քաղամասի փոնավաճառ-շուկա)*, *Ելփոց հրասարակ*: Գևորգը անտարբեր չէ կրոնական թեմայի նկատմամբ: Նրա խոսվածքում առկա են *պրոպետարանը*⁴², *մոնաստիրը*⁴³, *մեջիդ*⁴⁴, *մինարե*, *այա Սոֆյա*, *դերվիշ*⁴⁵, *սինագոգ*⁴⁶, *խախամ*⁴⁷ և այլ բառերը: Այս մեծաքանակ փոխառությունները ամփոփված են օտար բառերի և արտահայտությունների բառարանում:

Նուրբ հոգեկերտվածք ունեցող Գևորգը «Թզբեհը» վիպակում⁴⁸ արտահայտել է պանդիստության խնդիրը, երբ հայ շինականը բռնում էր օտար քաղաքների ճամփաները՝ բարեկեցիկ կյանք գտնելու նպատակով, և ակամա լքում հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը:

Վարդանը հենց ինքը Գևորգն է՝ անչափ զգայուն, երազկոտ, բարի, գեղեցիկ մի երիտասարդ, որը երագում է տեսնել Եվրոպան: Պատմվածքի կերպարները իրական են, նրանք կրում են Գևորգի հարազատների անունները: Վերապրածի մեծ մայրը՝ Անուշը, որ կատարյալ հայ կնոջ մարմնացում էր, կարծես իր շարունակությունն է գտնում վիպակի հերոսուհի Վարդանի հորաքրոջ մեջ: Վահանի կինը՝ Արշալույսը, կարծես նույն Արշո քույրիկը լինի, որ, Գևորգի երկրորդ մայրը դառնալով, ավելի շատ քույր էր և ընկերուհի, քան խորթ մայր: Գևորգ Հմայակյանը «Թզբեհը» վիպակում արժարծում է «խառնամուսնության» խնդիրը, երբ բուլղարական միջավայրում հայտնված երիտասարդը աղջկա ծնողների արգելքի պատճառով չի կարող վերադառնալ իր հայրենիքը և պսակադրվում է օրթոդոքս եկեղեցում՝ ստիպված բավարարվելով միայն մի արևելաուղղափառ քահանայի ներկայությամբ: Վիպակում յուրահատուկ կերպար է

Վարդանի և Նելլիի որդու՝ Անդրանիկի՝ Անտոյի կերպարը: Պատահին քաջակորով է, առնական և անվախ, նա իր մեջ կրում է երկու ազգերի՝ բուլղարների և հայերի ազնվակորով բնավորության բոլոր գծերը, նա իր մեջ է ամփոփում Բուլղարիայի ազգային հերոս Անդրանիկ Օզանյանի՝ հայերի ամենասիրած գորավարի կերպարը: Սակայն սյուժեի մեջ հային ցնցող մի կարևոր հանգամանք կա. դա կտտանքների ենթարկված անմեղ հայուհիների մարմնի մասերից՝ կրծքի պտուկներից պատրաստված թզբեհն է, որի համար Վարդանի որդին՝ Անդրանիկը, դաժան դատաստան է տեսնում արյունարբու թուրք ջարդարարի նկատմամբ, բայց չի սպանում, այլ դատապարտում տանջանքների մինչև մահ: Թզբեհը այն թեման է, որ ցնցում է թե՛ հայերին, թե՛ բուլղարներին, և շատ թե քիչ մարդկային հատկանիշներ ունեցող թուրքերին: Ակնհայտ է սյուժեում իրական հենքի առկայությունը: Վ.Սվազլյանը ականատես վերապրողների վկայությունները համակարգելիս իր աշխատության մեջ «Սպանված աղջիկների և կանանց ստիճանների պտուկներից ձեռքի համրիչ հուռուրթ պատրաստել և ձեռքից ձեռք անցկացնել» ենթավերնագրի տակ բերում է նմանօրինակ երեք վկայություն (170, 172, 260)⁴⁹: 170-րդ վկայությունը թողել է Սամսունի բնակիչ Մեսրոպ Հակոբի Մինասյանը. «...Կույս աղջիկների կրծքերի պտուկներն էին կտրում»⁵⁰: Նմանատիպ է նաև Մարաշի բնակիչ Մաքրուհի Հալաջյանի վկայությունը (թիվ 260)⁵¹, որում նա պատմում է. «Թուրք ժանդարմները իրենց գործը տեսնելեն վերջ՝ աղջիկներուն պտուկները թզբեղ կշինեին»: Սակայն առավել հոգեցունց վկայություն կարելի է համարել Փոքր Ասիայի կենտրոնական տարածքում գտնվող Յոզղատ⁵² քաղաքի բնակիչ Մեսրոպ Մանվելի Մեսրոպյանի պատմածը (թիվ 172). «Բաթալցի իմամի ձեռքի հարյուրհատանի համրիչը կբաղկանար իր սպանած հայ կանանց և աղջիկների ստիճաններու պտուկներեն, գոր որպես հուռուրթ, ձեռքից ձեռք կխալեին իսլամության հիմնադիրի միջնորդությամբ առողջություն մուրացող հիվանդ թուրքերը»: Ինչպես տեսնում ենք, այս կտտանքների ձևը երեք դեպքում էլ կիրառվել է Փոքր Ասիայի տարածքում բնակվող հայերին կոտորելիս, և զարմանալի չէ, որ Գևորգը տեղյակ է եղել կտտանքների այս տեսակին: Նա նաև ծանոթ է եղել թզբեհի իրական պատմությանը: Թզբեհի

հետ կապված՝ նա հիշում է մի շարք նշանավոր մարդկանց, որոնց մեջ են Լ. Կարախանը՝ ԽՍՀՄ դեսպանը Թուրքիայում (1934-37թթ.)⁵³, Բուլղարիայի ցար Ֆերդինանդը, ցար Բորիս III-ը, Մուստաֆա Բեմալը⁵⁴: Վիպակում ինքնատիպ են ներկայացված հայերից կազմված ֆիդայական ջոկատի պայքարը (որ վերապրածը անվանում է պարտիզանական) և հայոց մեջ խոր վերք թողած Մեծ եղեռնը, որի արդյունքում ծնվում է այդ պայքարը⁵⁵:

Գրքի «Հավելվածում» գետեղված են Գևորգի ստեղծագործությունները: Բոլոր ստեղծագործությունների վերջաբաններում արժարժվում է միասնականության գաղափարը: Բոլորի համատեղ ու երջանիկ ապրելու գաղափարը հեղինակին երջանիկ է դարձնում: Իր փոքրիկ պատմվածքներում նա արտահայտում է մեր կոտորված ու աշխարհով մեկ սփռված ազգի համախմբման վեհ գաղափարը:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Գևորգ Հմայակյանի որդուն՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիմոն Հմայակյանին՝ ձեռագրերը, լուսանկարները տրամադրելու և աշխատանքին սատարելու համար: Առանձնակի շնորհակալություն ենք հայտնում ՀՀ «Արդիմպեքս» կազմակերպության գլխավոր ճարտարագետ Էդուարդ Ավագյանին և «Շիրակի պետական համալսարան» հիմնադրամի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արտակ Հովհաննիսյանին՝ գրքի հրատարակությանը սատարելու համար, նաև Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնին և «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանին, լրագրող Համլետ Մոսինյանին՝ աջակցություն ցուցաբերելու համար: Հույս ունենք հանրության ուշադրությունը սևեռել 1915թ. Հայոց ցեղասպանության, հայկական հարցի, հայ դատի, պահանջատիրության և հատուցման հիմնահարցերի վրա:

Ինգա Ավագյան, Հասմիկ Հմայակյան

ԻՄ ԿՅԱՆՔԸ

Մի սիրո պատմություն, որ տևեց հինգ և կես տարի

Այս պատմությունները գրում եմ որդիներիս խնդրանքով: Առանց սկզբում գրվածների իմ կյանքի պատմությունը չարժեք գրել:

Տեր-Չորի ճանապարհին

Սկսենք հեռվից: Ծնվել եմ 1915թ. ապրիլ ամսին: Մայրս իր առաջին ծննդաբերությունը ծանր է տարել, նրան Մերդիգյոզից տարել են ծննդաբերելու Կոստանդնուպոլիս: Ոչ ոք չի իմացել հորս գտնվելու վայրը: Հորս մայրը կարծել է, թե նա բանտարկված է Բուրսա⁵⁶ քաղաքում: Մեր գյուղը գտնվում էր Պոլսից մոտ 100 կմ արևելք: Պոլսից մորս վերադառնալուց անմիջապես հետո սկսվել է հայերի տեղահանությունը գյուղից: Մորս հարազատները տասն օր առաջ հեռացել էին գյուղից, այնպես որ մեծ մայրս իր երկու անչափահաս տղաներին (11-12 տարեկան) կրել է տալիս ամենաանհրաժեշտ իրերը, ինձ էլ կապում է շալակին ու մորս հետ ճանապարհ ընկնում դեպի անհայտություն՝ իմանալով, որ պիտի քայլեն շատ ամիսներ: Նրանք միացել են այլ գյուղերից հավաքված մոտ երեք հարյուր հոգանոց մի խմբի: Ես կյանքովս պարտական եմ մեծ մորս և ավագ հորեղբորս: Մի օր ինձ գրկում էր մեծ մայրս, երեք օր՝ հորեղբայրս: Այս ճանապարհը տևել է վեց ամիս: Չարմանալի է, թե ինչ ահավոր գրկանքներ է կրել մեր խումբը: Այդ օրերին մեզ փրկել են մեծ մորս ունեցած ոսկիները: Ամենօրյա դադարներից մեկի ժամանակ մեծ հորեղբայրս պահակին տալիս է մեկ ոսկի, գնում դեպի հարավ ու մի ժամից հասնում մի գյուղաքաղաքի: Նա հագնված է լինում քրդի մնան և չի ճանաչվում որպես հայ. այստեղ նա հարցուփորձ է անում և իմանում, որ հասել է Քոնիա⁵⁷: Մեծ մայրս շատ է անհանգստանում Օնիկի⁵⁸ մեծ հորեղբորս համար: Հորեղբայրս վերադառնում է իրիկնադեմին: «Օնիկ, ու՞ր էիր»,-հարցնում է մեծ մայրս: «Մա՛, ունեցած-չունեցածդ հավաքելնք, այս գիշեր փախչելու ենք, Քոնիան մոտ է»: «Իսկ պահա՞կը»: «Պահակը մի քանի ոսկով կթողնի»:

Փախուստ

Պահակին տալիս են հինգ ոսկի, ու նա թողնում է, որ փախչեն՝ խորհուրդ տալով, որ Քոնիա չմտնեն, այլ ապաստանեն գյուղերից մեկում: Հեռանալով՝ անցնում են Քոնիան ու լուսաբացին մտնում մի գյուղ: Գյուղին մոտիկ մի բացատում հանգստանալիս նրանց մոտով անցնող կանայք, որոնք, թուրքական սովորույթի համաձայն, չադրա էին կրում, նայում են մեծ մորս ու մորս և զարմանալով, որ նրանք չադրա չունեն, բացականչում.«*Վա՛յ, հայերն էլ աչքեր ու քիթ ունեն*»:

Արդեն նոյեմբեր ամիսն էր, սակայն եղանակը մեղմ էր ու տաք: Հորեղբայրս ուզում է գնալ սենյակ վարձելու, սակայն մինչ այդ մի լավ հագնված թուրք մոտենում է ու հասկանում, որ փախստականներ են: «*Հեղրե՛ք ինչ*» ասելով՝ առաջ է ընկնում: Մեծ մայրս տատանվում է, բայց հետո որոշում է գնալ: Անցնելով մի քանի հողաշեն⁵⁹ միահարկ տներով կառուցապատված փողոցներով՝ հասնում են մի եռահարկ տան, մտնում են բակ, որի մի անկյունում տեսնում են միահարկ մի շինություն: Թուրքը բաց է անում այդ շինության դուռը, որը ուներ երկու սենյակ, և ասում.«*Այս սենյակները ձեզ*»: Այնուհետև վերցնում է մեծ հորեղբորս ու տանում երկրորդ հարկ և ցույց տալով այնտեղի կահկարասին՝ ասում է.«*Ինչի պերք ունեք, փարե՛ք*»: Մի քանի ժամից բակի կառույցի երկու սենյակներն էլ կահավորվում են:

Լաթիֆե հանումը

Մայրս, որ շատ էր թուլացել, մտնում է անկողին, ինձ էլ, որ արդեն յոթ ամսական էի, տեղավորում են նրա կողքին: Թուրքը գալիս է՝ ձեռքին ուտեստով լի մի զամբյուղ բռնած, նայում է մեծ մորս ու ասում.«*Մե՛ծ հանում, քաղցած, հոգնած կլիներ, կերե՛ք, խմե՛ք ու հանգարացե՛ք, վաղը կրեսնենե՛ք՝ ինչ անենք ձեզ հետ*»: Մեծ մայրս այդ ժամանակ հագիվ քառասուներեք տարեկան էր: Երեկոյան մորս վիճակը ծանրանում է, ինձ վերցնում են մորս մոտից: Դուռը բացվում է, մտնում է չադրայով մի կին: «*Գյունսուս հայիր օյուն*» (բարի օր) ասելով՝ հանում է չադրան: Չտեսնված գեղեցկության այդ երեսնամյա կինը բարձրահասակ էր, սև աչքերով ու սև մազերով.«*Ես*

աղայի կանանցից մեկն էմ»: Մեծ մայրս զարմացած նայում է կնոջը ու մտածում, թե այս հրեշտակ աղջիկը ինչպես է այս խուլ գյուղն ընկել: «*Ոչինչ, հսկում, շար լավ տեղավորվեցինք, բայց երեխայի մայրը հիվանդ է*»: Կինը նայում է անկողնում պառկած շատ գունատ մորս, չաղրան հագնում ու գնում է: Տասը րոպեից նա վերադառնում է մի ավելի տարիքով կնոջ հետ: Այս կինը գյուղի հեքիմն էր: Նա նայում է մորս ու ասում.«*Լաթիֆե՛ հսկում, կանչե՛ Մեհմեդ էֆենդիին, այս հսկումին եթե մի ժամից հիվանդանոց չհասցնենք, կմեռնի*»: Մեծ մայրս լաց է լինում: Գալիս է Մեհմեդը.«*Մե՛ծ հսկում, ամեն ինչ լավ կլինի*», -ասում է ու դուրս է գնում: Որոշ ժամանակ հետո՝ մինչև մեծ մորս ուշքի գալը, կանայք մորս տեղավորում են կառքի մեջ, և հեքիմն ու Մեհմեդը մորս տանում են Քոնիա՝ մոտ յոթ կմ ճանապարհ: Երկու ժամից վերադառնում են: Հեքիմ կինը մեծ մորս հանգստացնում է՝ ասելով, որ աղան շատ ազդեցիկ մարդ է և որ պատվիրել է բժիշկներին անպայման փրկել մորս ու ասել, որ գլխով են պարտական նրա կյանքի համար: «*Ի՞նչ ունի հարսս, որ այսքան նեղություն Կվեց Մեհմեդ էֆենդիին*»: «*Տիֆո*»: Այս սարսափելի հիվանդության անունը լսելով՝ մեծ մայրս զարմանում է, թե ոնց չի ուշաքափվում: Այս բոթը ի՛նչ էր որ 1914թ. մյուս դժբախտությունների համեմատ, երբ իր ամուսնուն և երեք եղբայրներին տարան բանակ, իսկ ավագ որդուց ոչ մի լուր չունեք: Այս տանը մի սոսկալի գիշեր անցկացնելուց հետո՝ առավոտյան, Մեհմեդը գալիս է և երկու տղաներին տանում աշխատանքի, փոքրին իր անչափահաս հովիվներին է խառնում, իսկ մեծին՝ վար անողներին՝ պատվիրելով չնեղացնել պատանիներին: Առավոտյան գալիս է հրեշտականման կինը, որի անունն էր Լաթիֆե հանում.«*Սաքահնգ հայիր օլտուն*» (բարի լույս), *գիշերը լավ չես քնել, աչքերդ արյուն են լցված*»: «*Բարի լույս, -պատասխանում է մեծ մայրս, -երեխասն առանց մոր հանգիստ չէր*»: Այդ ժամանակ դուռը բացվում է, և մի կին կողովը դնում է գետնին ու գնում.«*Մե՛ծ հսկում, այստեղ ամեն ինչ կա, ուրելիք՝ շեր և երեխայի համար: Այդ երեխասն քո ի՞նչն է*»: «*Նենեն էմ*»: «*Այդ հիվանդ փոքրիկ հսկումը քո հա՞րսն է*»: «*Այո*»: «*Այսքան երիտասարդ ու հա՞րս ունես: Ամուսինդ ու՞ր է*»: «*Չգիտենք*»: «*Այդ տղաները քո՞նն են*»: «*Այո*»:

Մեծ մայրս ունեցել է հինգ երեխա, երեք տղա և երկու աղջիկ, աղջիկները երեք և յոթ տարեկան հասակում մահացել են: «*Ամուսինդ ու՞ր է*»: «*1914թ. զինվորագրեցին, ու միևնույն հիմա ոչ մի տեղեկություն չունեն*»: Այնուհետև Լաթիֆեի հետ ինձ լողացնում են, Լաթիֆեի բերած նոր հագուստները հագցնում ու սանրում: «*Հիմա նստե՞նք ճաշի*»: Բացում է կողովը, սուփրայի վրա շարում է ուտեստը, և սկսում են ճաշել: «*Մե՛ծ հանում, փոքրիկին փու՛ր կերակրեն*»: Ավելի ուշ պարզվում է, որ Մեհմեդը ուներ երկու կին՝ Լաթիֆեն և Խումարը, որոնք ավելի քան տասը տարի է, որ երեխա չեն ունեցել աղայի անպտղության պատճառով: «*Մե՛ծ հանում, մի՛ գարնանա, որ Գևորգիկին սիրում եմ, ես երեխա չունեցա, այնպես որ միևնույն մոր գալը պիտի պահեն Գևորգիկին*»: «*Պիտի գա՞ որ*»: «*Դուք ամուսնու չգիրեք, մեր գյուղապետն է, գյուղում բռնուն էլ չի բռնի առանց նրա գիրություն: Քոնիայի վալիին նրա մորեղբայրն է: Շատ խղճով մարդ է, ամեն ինչ կանի փոքր հանունին փրկելու համար: Հիմա թող փանեն Գևորգիկին իմ հարկաբաժնում քնացնեն, իսկ դու հանգստացիր*»: Մեծ մայրս շատ հոգնած-ջարդված է լինում, ինքնաբերաբար քնում է: Չարթնում է դռան ձայնից: Ներս է մտնում Մեհմեդ Էֆենդին: «*Քոնիայից եմ գալիս: Բարե՛, հանում, չեր փոքրիկ հանումը իրեն լավ է զգում, այնպես որ վախի պատճառ չկա: Պարմե՛ք, ուրքե՛ր եք, որպեղի՞ց եք, չեր և փոքր հանումի ամուսինները որպե՞նդ են*»: Մեծ մորս աչքերից արցունքներ են կաթում: «*Այս փոքր հանումը քո հա՞րսն է*»: «*Այո՛, Էֆենդի՛, իմ հարսն է*»: «*Հանգիստ եղեք, ամեն ինչ կանցնի, ժամանակին հասցրի՛նք: Փոքրիկը ու՞ր է*»: «*Լաթիֆե հանումը լողացրեց, նոր հագուստներ հագցրեց, փարավ*»: «*Շան աղջիկը երեխայի խենթ է: Ես երկու կին ունեմ, երեխաներ չունեցա: Գիրեն՝ շատ եք փառապել, բայց այսպեղ չեր մազին կպչող չի լինի, հանգիստ կապրեք*»:

Օրեր են անցնում: Մեհմեդը⁶⁰ մեծ մորս մի քանի անգամ տանում է Քոնիա՝ մորս տեսնելու: Մորս ոսկեգույն վարսերը չէին կտրել Մեհմեդի հրամանով: Մայրս քառասուն օր մնում է հիվանդանոցում: Մի առավոտ Լաթիֆե հանումը գալիս է և մեծ մորս ասում.«*Պարտապարտ վիր, գնում եմք հարսիդ քերելու*»: Գնում են բակ և տեսնում, որ այդտեղ արդեն պատրաստ կանգնած է կառքը, որը պիտի քշեր Մեհմե-

ղը: «Անուշ հասնում, չեղավ, գոնե գլուխդ մի քանով ծածկիր, Լաթիֆե՛, գնա՛ երկու ալ շա՛րֆ քեր»: Չնայած Մեհմեդը զիտեր, որ քրիստոնյաները չաղբա չեն կրում, բայց զգուշության համար գլուխը կապել է տալիս: Ծածկելով մեծ մորս գլուխը՝ ճամփա են ընկնում: Հիվանդանոցում մայրս արդեն պատրաստ սպասում էր: Համբուրվում է սկեսրոջ և Լաթիֆեի հետ, համբուրում է Մեհմեդի ձեռքը և կառք է նստում: Մայրս շատ հարուստ ընտանիքից էր, ոսկեգույն փարթամ, մինչև կոնքերը հասնող մազերով, ծովի նման կապույտ աչքերով, ոչ շատ գեղեցիկ և յոթ եղբայրների միակ քույրը:

Սև ծաղիկ

Մորս վերադարձից հետո գյուղում սև ծաղիկ⁶¹ է բռնկվում: Երեխաների 90%-ը մահանում է: Լաթիֆե հանումը, վախենալով, որ կհիվանդանամ, տանում է իր հարկաբաժինը կարանտինայի⁶² տակ նույնիսկ մորս չի թողնում իր սենյակ մտնել: Հիվանդությունը քառասուն օր հնձում է մարդկանց, դրանից հետո համաճարակը մարում է: Ինձ ողջ-առողջ քերում, հանձնում է մորս: Ես այդ ժամանակ արդեն քայլում էի և հաճախ փախչում գնում էի Լաթիֆեի մոտ:

Մի ուրիշ դեպք. իլիկը ձեռքիս վազում, ընկնում եմ, և իլիկը մտնում է բերանս, ուժեղ արյունահոսություն է սկսվում: Մեծ մայրս ինձ վերցնում, վազում է Լաթիֆե հանումի հարկաբաժինը:

-Լաթիֆե՛, օգնե՛, Գևորիկը մեռնում է:

-Ի՞նչ է պատահել:

-Ընկավ, իլիկը մտավ բերանը:

Լաթիֆեն մի կերպ բերանս բացում է և բութ մատով ծածկում վերքս: Հեքիմ կինը գալիս նայում է և հանգստացնում.

-Բան չկա, մի քանի օրից կանցնի:

Հորս վերադարձը

Երկու տարի է, ինչ եկել ենք այս *Քավաքլը քյո*⁶³ գյուղը: Նենե ասելով՝ բակում խաղում էի: Մրանից հետո մեծ մայրիկիս «նենե» պիտի ասեմ: Բակի դուռը բացվում է, և սև մորուքով, հին ու մաշված շորերով մի թափառաշրջիկ է մտնում՝ գլխին մի հին ֆես: Մեծ մայրս, վերցնելով ինձ, վախեցած շտապում է սենյակ, բայց կես ճա-

նապարհին լսում է՝ մա՛: Մեծ մայրս բաց է թողնում ինձ, նետվում առաջ, և ընկնում եմ իրար գիրկ: Մայրս, որ լսում է լացս, դուրս է գալիս ու հանկարծ տեսնում է սկեսրոջը օտարականի գրկում: Սակայն հաջորդ վայրկյանին ճանաչում է հորս: Վերցնում է ինձ ու մտնում սենյակ: Մեծ մայրս կանչում է (մորս անունը Ալմաստ էր, սակայն ասում էին Էլմաս):

-Էլմա՛ս, եկու՛ր, Կարապետը եկեր է:

Էլմասը ամոթից դուրս կգա՞ որ. պիտի գրկի՞ ամուսնուն սկեսրոջ մոտ⁶⁴:

Մտնում են տուն, նստում թախտին, մայրս մյուս սենյակից դուրս չի գալիս:

Մեծ մայրս գնում բերում է ինձ ու դնում հորս գիրկը: Ասում են՝ արյունը կքաշե, հայրս գրկում է ինձ, իսկ ես սկսում եմ խաղալ նրա մորուքի հետ ու «պապա, պապա» կանչել: Մեծ մայրս բարձրանում է Լաթիֆե հանումի հարկաբաժինը. նա այս երկու տարիներին մեր պահապան հրեշտակն էր, իմ էլ՝ երկրորդ մայրը: Լաթիֆեն նայում է մեծ մորս աչքերին, որ ուրախությունից փայլում էին և հարցնում է: *«Անու՛շ հանում, ի՞նչ է պատահել, աչքերիդ մեջ ուրախություն կա»:* *«Լաթիֆե՛ հանում, տղաս եկել է»:* Լաթիֆե հանումը գրկում է մեծ մորս ու «աչքդ լույս» ասելով՝ համբուրում: *«Լաթիֆե՛ հանում, աղան ու՞ր է»:* *«Հորեղբոր հետ սուրճ է խմում պատրզամբում»:* Լաթիֆե հանումը մեծ մորս գլուխը շորով կապում է ու այդպես ուղարկում պատրզամբ: *«Անու՛շ հանում, ի՞նչ է պատահել»:* *«Տղաս է եկեր»:* *«Գնանք, ամուջա՛, տեսնենք՝ ինչ մարդ է»*,-ասում է Մեհմեդը հորեղբորը: Երբ սենյակում նրան դիմավորում է մի թափառաշրջիկ, նա, *«Տղա՛ ջան, այս ի՞նչ հալի ես, գնանք»* ասելով, տանում է իր վարսավորի մոտ, հետո՝ իր բաղնիքը, տալիս է նոր հագուստ ու բերում տուն: Մեծ մայրս նայում է իր գունատ տղային ու մտածում՝ *ուր է առաջվա Կարապետը*: Սուփրան գցում է, նստում են ճաշի: Մայրս մինչև այդ սենյակից դուրս չի գալիս: *«Ու՞ր է Էլմաս հանումը»*,- հարցնում է Մեհմեդը: Մեծ մայրս ցույց է տալիս մյուս սենյակը: *«Էլմա՛ս հանում, եկու՛ր՝ «բարի ես եկել» ըսե՛ ամուսնուդ»*,-ասում է թուրքը: Մայրս գլուխը կախ գալիս բարևում է հորս ու հեռանում է: *«Օղլու՛մ, պին բաջ գյուն տինեն, սորա բարարը, մլարը չքմա»*

(Տղա՛ս, քանի մը օր հանգստացի՛ր, հետո կտեսնենք, փողոց դուրս մի՛ գա): Մեհմեդի գնալուց հետո գալիս է Լաթիֆեն՝ չադրա հագած, քանի որ հայրս էլ էր այդտեղ, ու մորս տանում է, առաջին հարկի մի փոքր սենյակի դուռը բացում է և ասում. «*Հայրե՛, Էլմա՛ս հանում, այս սենյակը մինչև իրիկուն մաքրենք, սրբենք, կահավորենք, որ գիշերը այսպեղ ամուսնուդ ընդունես*»: Երկուսով անցնում են գործի: Լաթիֆե հանումը բերում է շատ ճաշակով սպիտակեղեն, վերմակ, գիշերաճոցներ, մի խոսքով, ամեն ինչ, որ կարող էր պետք գալ ամուսիններին: Լաթիֆեն բերված էր Պոլսից և շատ լավ դաստիարակված ու ճաշակ ունեցող կին էր: Մի քանի օր Մեհմեդը չի երևում: Մի առավոտ ծառան հայտնում է հորս, որ գնա նրանց հարկաբաժինը: Մեհմեդը, հորեղբոր հետ նստած, նարգիլե էր քաշում և սուրճ խմում: Հայրս շատ լավ թուրքերեն գիտեր, ֆարսի: «*Սպահնըզ հայիր օլսուն էֆենդիներ*» (բարի առավոտ, էֆենդիներ),-ասում է հայրս: «*Հայիլ օլսուն, օրուր*» (Բարև՛, նատի՛ր): Ծառան սուրճ է բերում, խոսում են դեսից-դենից, հարցեր են տալիս, հետո անցնում են բուն խոսակցությանը: «*Ի՞նչ գործ կարող ես անել*», -հարցնում է Մեհմեդը, -*մայրդ ասաց, որ ջաղաց⁶⁵ եք ունեցել*»: «*Ունեցել ենք, ջրով աշխատող*»: «*Հիսնալի է*»: Ծառան հայտնում է, որ ճաշը պատրաստ է: «*Գնանք ճաշենք*»: Ծաշից հետո իջնում են բակ, ուր նրանց էին սպասում երեք թամբած ձիեր: «*Տղա՛ս, լսել եմ, որ հեծելագործում ես ծառայել, այս չին քեզ*»: Մինչև թուրքերը կպատրաստվեին նստել իրենց ձիերի վրա, հայրս արդեն ձիու վրա էր, որը խաղում էր նրա տակ: Հայրս այդ ժամանակ 28-29 տարեկան պիտի լիներ: Վարճով ճանապարհ են ընկնում դեպի ջրաղաց: Ջրաղացի մոտ ձիերը տալիս են ծառային ու մտնում ներս: «*Կարասպե՛ր, մի փարուց ավելի է, որ ջրաղացը չի աշխատել*»: «*Լավ ջաղաց է, բայց մի մարդու գործ չէ, Օնիկին և մեկին էլ քո ուժեղ ծառաներից պիտի փաս*»: «*Հասան, գնա՛ Կարասպերի մեծ եղբորը և Ալիին բե՛ր արտից: Հորեղբայր, օգնենք*»: «*Կարիք չկա, էֆենդիներ,-ասում է հայրս,-դուք հանգստացե՛ք, մինչև ջուրը բաց թողնեն*»: Մի ժամից արդեն մեծ անիվը սկսում է աշխատել, իսկ այդ ընթացքում դաշտից եկած Օնիկն ու Ալին կարգի են բերում ջրաղացի ներսը: Հայրս աղացի մեջ է լցնում անցյալ տարիներից ամբարում մնացած չոր ցորենը, ջրաղացի քա-

րերը միացնում է մեծ անիվին, և ջրաղացը սկսում է աշխատել: Այս ամբողջ գործը տևում է երեք ժամ: Այնուրը տաք-տաք դուրս է գալիս քարերի տակից: «*Կարասպե՛ր, հասար է դուրս գալիս*»: «*Գիտե՛մ, քարերը կրահած (սրած) չեն: Օնիկ, Ալի՛, եկե՛ք*»: Հատուկ հարմարանքներով սրում են քարերը, որը ջրաղացպանի ամենաձանր գործն է, ինչից հետո ջրաղացը սկսում է անվթար աշխատել: Այնուհետև հայրս, հորեղբայրս ու Ալին սկսում են մշտապես աշխատել ջրաղացում: Մի քանի օր հետո, իմանալով Մեհմեդի ջրաղացի աշխատելու մասին, գյուղացիները իրենց ցորենը աղալու համար սկսում են այստեղ բերել:

Մեծ մայրս

Մեծ մորս⁶⁶ ծննդյան թիվը հայտնի չէր, բայց իմ հաշվարկներով ծնվել էր 1874-1875 թթ.⁶⁷: Տասնչորս տարին լրանալուց հետո ամուսնացնում են, որից մի տարի անց հայրս արդեն նրա գրկում էր: Նրա պատմածով՝ հայրս ծնվել էր 4 կգ 800գ (4 օխա) քաշով: Հղիության վերջին օրերին Մերդեգյոզում իրենց տան առաջ նստած է լինում աթոռակին: Մի դերվիշ է գալիս, նստում է մեծ մորս մոտ՝ գետնին. «*Գեղն (հարս), մի կտոր պանիր, հաց ու մի փարջ էլ ջու՛ր բեր*»: Մեծ մայրս բերում է հաց, պանիր, կանաչ սոխ ու թան: Դերվիշը օխորժակով կուշտ ուտում է, վրայից թանը խմում ու ասում է. «*Հարսիկ, հիմա ինչ լավ լսիր, մի տղա կունենաս, աջ ականջի երևը ոսպի չասի խալ կունենա: Ծնվալ՝ խեղդի՛, որովհետև գլխիդ սև ձյուն է բերելու*»: Սև ձյունը ի՞նչ էր որ, հետո կտեսնեք: Երեխան ծնվում է: Երեխային իր մորքուր Սուլթանն է ընդունում⁶⁸, գյուղի մանկաբարձը: «*Մորքու՛ր, նայի՛ր աջ ականջի հերևը խալ կա՞*»: Մորքուր Սուլթանը նայում է ու բացականչում: «*Աղջի՛, ի՞նչ գիտեիր, որ խալ կա*»: «*Կա՞*»: «*Աղջի՛, կա*»: Հետաքրքիր է, որ իմ փոքր տղան էլ ականջի հետևում խալ ունի⁶⁹:

Այն ո՞ր մայրը կարող է իր առաջնեկին խեղդել: Այս բոլորը պատմել է ինձ մեծ մայրս: Հայրս օրեօր մեծանում է, տասը տարեկան հասակում գյուղի բոլոր երեխաներին ծեծում է: Մեր գյուղը 400 տուն էր, որից 90%-ը՝ հայ, մնացածը՝ հույն և թուրք: Ծերերի ասելով՝ հայերի չորս ընտանիք գաղթել են այստեղ Տարոնի Մերդ⁷⁰ գյուղից 500

տարի առաջ: Ամեն կողմից բողոքներ: Պապս՝ Հմայակը, տանում է որդուն՝ Կարապետին, ջրաղացում աշխատելու, որ գյուղում չարություն չանի: Կարապետը տասնութ տարեկան հասակում արդեն մեր գյուղի փահլիվանն⁷¹ էր: Հայրս պատմում էր, որ տոների ժամանակ տեղի էր ունենում շրջակա գյուղերի ըմբիշների մրցում⁷²: Մի անգամ աշնանը՝ բերքահավաքից հետո, երբ մրցումը Մերդիգյոզում էր, հայրս հիվանդության պատճառով չի կարողանում մասնակցել դրան: Մրցումը տևում է մոտ մի շաբաթ: Մերդիգյոզի մյուս բոլոր ըմբիշները դուրս են մնում: Վերջին օրը հայրս, չնայած հիվանդությանը, գնում է մրցասպարեզ: Մերդիգյոզցիները ախուլախի մեջ են լինում. հորս նկատում են թե չէ, սկսում են գլուխները օրորել, իբր թե ժամանակ գտար հիվանդանալու: Հայրս այնտեղ տեսնում է իր ազգականներից հորը, հոր քեռիներին, հորեղբայրներին: Հարևան հունական Ֆլաջուխ⁷³ գյուղից Յուրի անունով մի ըմբիշ՝ հորս լավ բարեկամը, ըմբիշների հարթակում պտտվում է ու գոռում.«*Վար մը քանս լան քարան*» (*Ինչ ինք նայող կա՞*): Նայում է հորս ու ծիծաղում: Հայրս զայրանում է, բայց ճար չունի: Այդ ժամանակ ազգականների խմբից դուրս է գալիս մեկը: Բոլորը իրար են խառնվում.

-Օո՛ւ՛ Հակոբ, ի՞նչ կընես:

-Գրա մարը պիտի լացընես:

Հակոբը՝ մեծ հորս հորեղբոր որդին, երբեք փեհլիվանություն չէր արել: Հայրս մոտենում է Հակոբին.

-Հակոբ՛ք, ի՞նչ կընես, խենթացել ես:

-Չէ՛, խելքս տեղն է, դրա հախից պիտի գամ:

Այն ժամանակ ըմբիշների մարմինը յուղում էին ձիթայուղով: Ըմբիշները հագնում էին միայն քյուսպե՝ կաշվե յուղած վարտիք: Հայրս օգնում է նրան յուղվելիս և հագուստը փոխելիս ու խորհուրդ է տալիս.«*Հակոբ՛ք, ինչի հիմա լավ լսե, միշտ հեռու՛ պահե քեզի Յուրիից, նայե՛, որ չեռքերդ անցնես Յուրիի քյուսպեի գուրիի մեջը և գլխիդ վրայեն նեպե՛ ետ*»: Հակոբը կնոջս մոր առաջին ամուսինն էր՝ աներձագիս հայրը: Հակոբը մերդիգյոզցիների գոռում-գոչյունի տակ ելնում է հրապարակ: Յուրին Հակոբին լավ է ճանաչել, բայց չի իմացել նրա փեհլիվան լինելը: Սկսվում է պայքարը. Յուրին անմիջապես հասկանում է, որ Հակոբը փեհլիվանություն չգիտի: Յուրին մի

քանի անգամ բռնացնում է Հակոբին, Հակոբը փախչում է: Հայրս նայում է Հակոբին ու տեսնում է, որ նրա ուշադրությունը Յուրիի գոտու վրա է: Յուրին հարձակվում է, որ վերջ տա այս կատակերգությանը, բայց իրեն տեսնում է Հակոբի գլխավերևում և, մինչև ուշքի կգար, տապալվում է գետնին: Վեր է կենում, մոտենում է Հակոբին ու ասում. «Այդ քո խելքի բանը չէր, Կարապետի էրածն էր»: Այսպես Հակոբը փրկեց Մերդիգյոզի պատիվը:

Մի փոքր դրվագ հորս պատմածից

Փահլևան հորս թիկունքը գետնին չի դիպել: Թուրքական բանակում ծառայել է որպես հեծելազորային: Զինվորական հանձնաժողովը 90 օխա (118 կգ) քաշ ունենալու դեպքում թուրքական բանակի հեծելազոր չէր ընդունում: Այն ժամանակ թուրքական բանակը գերմանացի սպաներն էին մարզում: Գերմանացի գնդապետը տեսնում է հորս, որը շատ դուրեկան երիտասարդ էր, և ասում է. «*Ես վերցնում եմ Հմայակ օղլու Կարապետին*»: Թուրք փաշան առարկում է՝ ասելով, թե 90 օխան հեծելազորայինի համար շատ ծանր քաշ է: «*Ես նրա նմանների համար չի ունեմ*», - պատասխանում է գերմանացի սպան:

Մի առավոտ դաշտում կանգնած գերմանացի գնդապետը նայում է թուրք զինվորներին, որոնք ուզում են մի քար բարձրացնել: Մի քանիսը քարը տեղից կարողանում են շարժել, իսկ մի քանիսը չեն կարողանում այդ անել: Հայրս մոտենում է և քարը բարձրացնելով գլխի վրայով՝ գցում է հետ: Գնդապետը գալիս, թփթփացնում է հորս թիկունքին, ճանաչում է ու դարձնում իրեն թիկնապահ: Հայրս նրա մոտ մի տարի ծառայելուց հետո վերադառնում է գյուղ:

Համաշխարհային պատերազմ

1914թ. հայրս ամուսնանում է մորս հետ: Ամուսնությունից մեկ ամիս անց սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Թուրքիան, որ գերմանական կոալիցիայի մեջ էր, 16-45 տարեկանների զորահավաք է հայտարարում⁷⁴: Հորս, մեծ հորս, մորեղբայրներիս, մեծ մորս եղբայրներին տանում են բանակ: Գյուղում մնում են միայն ծեբերը, կանայք ու երեխաները: Հայրս Գալիպոլիսում⁷⁵

կռվում է անգլիացիների դեմ: Մի քանի անգամ վիրավորվում է: Մի օր էլ լսում է այն բոթը, թե հայ բնակչությունը տեղահան է արվել: Մի քանի հայ ու հույն որոշում են հայրուկ⁷⁶ (չեթե)⁷⁷ դառնալ և վրեժ լուծել թուրքերից: Նրանք հորս դեկավարությանը լավ զինվում ու դասալքում են: Մի ամիս թափառելուց հետո առաջին հարձակումը անում են Այոլյոս⁷⁸ գյուղի վրա և կոտորում են թուրք նորաբնակներին: Մինչև հայերի տեղահանությունը սա հայկական մի գյուղ էր, որն այդ ժամանակ բնակեցվել էր թուրքերով: Այնուհետև գիշերները հարձակվում են Նոր գեղի⁷⁹, Յալաղ-դերե⁸⁰, Վար-գեղ⁸¹, Մերդիգյոզ⁸² գյուղերի վրա, իսկ ցերեկները՝ թաքնվում: Մերդիգյոզ վաղ առավոտյան են մտնում, բնակիչները դեռ քնած են լինում: Իր պապական տունը գրաված բոլոր թուրքերին հայրս կոտորում է ու հեռանում: Այս ընթացքում հորս խմբից շատերը ընկնում են, ու մնում են միայն չորս հոգի, որոնք ի վերջո ընկնում են թուրք պատժիչների կրակի տակ ու մի կերպ ճողոպրում անտառ: Երկուսը սպանվում են: Պատժիչները՝ մոտ քսան հոգի, բայց շատ վատ զինված՝ հետապնդում են նրանց: Հորս խումբը, որը բաղկացած էր երեք հոգուց և ավելի լավ էր զինված (մասնավորապես՝ հայրս ուներ երեք նռնակ և ժամացույցի պես աշխատող ինը հարվածանոց ատրճանակ), դիրքավորվում է ու արգելում թուրքերի առաջխաղացումը: Հայրս հրամայում է փամփուշտները խնայել: Այսպես մինչև մայրամուտ թփից թուփ, ծառից ծառ դիրքավորվելով՝ պաշտպանվում են: Հանկարծ հայրս լսում է, որ ընկերները չեն կրակում, այն դեպքում, երբ թուրքերի կրակը չի դադարում, իսկ իր փամփուշտները շատ են պակասել: Ստիպված նետում է նռնակները ու փախչում, ընկնում է մի փոսի մեջ ու դուրս չի գալիս մինչև առավոտ: Առավոտյան զարթնում է թռչունների երգի ձայներից, նայում է ու տեսնում, որ մոտը քսան փամփուշտ է մնացել: Փոսից դուրս է գալիս ու սողալով մոտենում կռվի վայրին ու տեսնում մի սոսկալի տեսարան. ջախջախված դիակներ ու հեռացածների կաթկթած արյան հետքեր: Հանկարծ երկու ընկերները հայտնվում են նրա կողքին: Սկսում են խորանալ անտառի մեջ, սակայն կրկին նրանց շրջապատում են ասկյարները և պահանջում հանձնվել: Նրանց գերի են վերցնում: Խմբի հրամանատարը բարեգութ է գտնվում և տեղում չզնդակահարելու հրաման տալիս:

Քանաքկույթուն

Տանում են Իզմիրի բանտը⁸³: Հայրս իր երկու հույն ընկերների հետ որոշում է ինքն էլ հույն ձևանալ՝ Նիկո անունով: Սկսվում է դատարանական քաշքշուկը: Առաջին դատավարության ժամանակ նրանք հրաժարվում են իրենց՝ հայդուկ լինելուց, բայց դա չի օգնում, երեքին էլ մահվան են դատապարտում: Երկրորդ դատավարությունը հաստատում է այդ դատավճիռը, սակայն գերագույն դատավարության ժամանակ հույների ազգականները ազգությամբ հրեա երկու վարժ դատապաշտպաններ են վարձում, որոնք սկզբում դատապարտյալներին ազատում են շոթաներից, քանի որ դատարանում իրավունք չկար դատապարտյալներին շոթայակապ պահել, այնուհետև մահվան դատավճիռը փոխում են տասնամյա տաժանակիր աշխատանքով, որը անց կացնելու էին Երզնկայի քարհանքերում⁸⁴: Երզնկայում նրանք մնում են ավելի քան մեկ տարի: Մեկը փախչում է, հայրս մնում է մյուս ընկերոջ՝ Յանիի հետ: Հայրս տաժանավարում, որտեղ հավաքված էին Հայաստանի և Թուրքիայի տարբեր շրջաններից բերված դատապարտյալներ, հարցուփորձ է անում իր ընտանիքի մասին, սակայն ոչ մի բան չի կարողանում իմանալ: Մի առավոտ նոր խումբ են բերում: Հայրս ճանաչում է մի նորգեղցի երիտասարդի, որը հայտնում է, որ հորս ընտանիքը հիմա Քոնիայի գյուղերում է, և որ հայրս արդեն մի տղա ունի: Այդ օրվանից հայրս մտածում է փախչելու մասին և այդ մասին հայտնում Յանիին: «*Ես էլ կգամ քեզ հետ, մանավանդ որ լավ գիտեմ Հոնիան: Այսրեղից պիտի հարավ-արևմուտք գնանք*»: «*Որքա՞ն է հեռու Քոնիան*», հարցնում է հայրս: «*800-1000 կմ, երկու ամսից կհասնենք*»: Հայրս մտածմունքի մեջ է ընկնում, 1000 կմ-ը՝ կատակ բան չէր, սակայն ընտանիքը գտնելու հույսը նրան թևեր է տալիս:

Փախուստ

Մանրամասների վրա չպիտի ծանրանամ, որովհետև այս ամենը հայրս է պատմել: Յանին և հայրս փախչում են և շարժվում դեպի Հոնիա: Ճանապարհին մի քանի անգամ հրաշքով խուսափում են մահից: Մի տասն օր ճանապարհ գնալուց հետո մի խումբ թուրք ձիավորների են հանդիպում: Գլխավորը հարցնում է. «*Ի՞նչ ազգի եք,*

ու՞ր եք գնում»: «Հույն ենք, գնում ենք Հոնիա»: Խմբից աղվեսի նման մի սմբաժ լակոտ բացականչում է.«Աղա՛, գլավորներ են, սպանել է պեպք»: «Սուլեյման՛, հանգադասցի՛ր, ես ավելի հեպաքըր-քիր մի բան եմ մրաժել: Հանվե՛ք, մորեներկ: Հիմա հեռասցե՛ք»: Հայրս ու Յանին ոտքերի ամբողջ ուժով փախչում են, բայց ու՞ր գնան մերկ: Այս դեպքը առավոտյան է պատահում: Մինչև կեսօր թափառում են անտառում: Մի արտի եզրին տեսնում են երկու թուր-քի, որոնք նստած ճաշում են, չորսբոլորը ուրիշ մարդ չի լինում: «Յանի՛, քեզ տեսնեն», -ասելն ու հարձակվելը մեկ է լինում: Յանին տասը տարով մեծ էր հորիցս, բայց ուժը տեղն էր, այնպես որ գոտեմարտը կարճ է տևում: Այդ երկուսին մերկացնում են, կապկպում ու զցում ծառերի տակ: Հագնում են նրանց շորերը, վերցնում են նրանց մեկ շաբաթվա ուտելիքը, զինվում են նրանց որսորդական դանակներով, նստում են նրանց էշերի վրա ու շարունակում են իրենց ճանապարհը: Այսպես տասն օր՝ մինչև էշերի հալից ընկնելը: Հետո ավանակներին բաց են թողնում ու շարունակում են գնալ ոտքով. դա ճամփորդության քառասունհինգերորդ օրն էր: Կրկին ընկնում են թուրք ձիավորների ձեռքը: Սրանք, իմանալով, որ փախստականների հետ գործ ունեն, կատակ չեն անում, կապում են ծառին ու սկսում են ցախ հավաքել ու լցնել նրանց ոտքերի տակ:

-Յանի՛, վերջերնիս եկավ, պիտի վառեն մեզ:

Յանին լաց է լինում:

Ես հորս հետ ապրել եմ 1917-1962 թթ.: Այս ընթացքում հորս արցունքը չեմ տեսել, նույնիսկ մորս մահվան ժամանակ չլացեց, միայն 1958թ. լաց եղավ, հետո կասեմ, թե ինչու: Թուրքերը ամեն ինչ պատրաստելուց հետո այրում են ցախն ու հեռանում են: Երկու դժբախտները ամբողջ կոկորդով սկսում են գռռալ՝ իմդա՛թ (օգնություն): Կյանքում երբեմն հրաշքներ պատահում են: Հայրս տեսնում է, որ մի քանի քաջ տղաներ իրենց մահակներով ցրում են կրակը: Տղաներից մեկը դանակով կտրում է հորս կապերը: Տղայի օգնությամբ նա կտրում է նաև Յանիի կապերը, որն ուշաթափված ընկնում է: Մոտի առվից ջուր են բերում, հայրս մի քաջ ապտակ է տալիս, և Յանին զգաստանում է:

-Կարապետ, ո՞ր դջ ենք:

-Հա՛, ողջ եմք:

Յանիի գլուխը նորից կախվում է կրծքին: Այս անգամ հայրս կատակ չի անում, նորից մի ապտակով ուշքի է բերում նրան, բայց պարզվում է, որ Յանին ճանապարհը շարունակելու ուժ չունի: Նրանց ազատող տղաները հովիվներ են լինում, ամենամեծը՝ տասնհինգ տարեկան: Վերջինս ասում է. «*Սպասե՛ք, գնամ մեծ մորս կանչեմ, տեսնենք՝ ինչ կասի*»: Միառժամանակ հետո վերադառնում է մոտ հիսուն տարեկան մի քրդուհու հետ, որը գյուղի հեքիմն էր: Նա գնում է Յանիին և տեսնում, որ բարձր ջերմություն ունի: «*Ու՞ր եք գնում, երիտասարդ», - հարցնում է կինը: «Քոնիա»:* «*Ու՞ր, Քոնիա՞: Այս մարդը ոչ մի տեղ չի կարող գնալ: Կրակները մեր տուն, մեկ շաբաթից կլավանա*»: Այդպես էլ անում են: Հեքիմ քրդուհին, որի ամուսնուն և երկու որդիներին տարել էին բանակ, Յանիին տեղավորում է երկրորդ հարկում և սկսում է բուժել, իսկ հայրս առավոտ շուտ գնում է հովիվ տղաների հետ ու երեկոյան ուշ վերադառնում: Մի շաբաթից քրդուհու ջանքերով Յանին առողջանում է: Մի առավոտ քրդուհին տասն օրվա պաշար է պատրաստում, լծում երկձի կառքը: Հորս, Յանիին և իր թոռանը նստեցնում է կառքը, ինքը նստում կառավարի տեղը ու քշում է դեպի Քոնիա. այսպես հինգ օր: Վեցերորդ օրը շատ ջերմ բաժանվում են: «*Այս ճանապարհը չեզ մեկ ամսից կհասցնի Քոնիա, Ասրված չեզ հեյր, գնացե՛ք*»: Վերցնելով պաշարի խուրջիները՝ հայրս և Յանին ոտքով շարունակում են ճանապարհը: Մի շաբթ արկածներից հետո մի առավոտ մտնում են Քոնիա: Անցնելով մի քանի ցեխոտ փողոցներով՝ հայտնվում են կայարանի ցորենի պահեստի մոտ: Հորս աչքից չի վրիպում մի երիտասարդ, որը պահեստից ցորեն է կրում դեպի վագոն: «*Ծո Սարգի՛ս*»: Սարգիսը պարկը շալակից զցում է: «*Ծո Կարապե՛տ*»: Գրկախառնվում են: Սարգիսը մորս մորաքրոջ տղան էր՝ Սարգիս Չալիկյանը՝ այժմ՝ դերասան⁸⁵ Գրիգոր Չալիկյանի⁸⁶ հայրը: «*Կարապե՛տ, քեզ մեռած գիրեհնք*»: «*Ի՞նչ ես անում այստեղ*»: «*Բեռնակիր եմ. սա վերջին վագոնն է, մի ժամից հեյրո Մերսե՛⁸⁷ պիրի գնանք՝ այս ցորենը տեղ հասցնելու*»: Յանին, լսելով, որ Մերսե պիտի գնան, մոտենում է. «*Ինչ էլ հեյրդ տար, այնտեղից Հունաստան շար հեշտ է անցնել*»: «*Մենք շար ենք, կիսառնվես այն խմբին, որտեղ շար հույներ կան*»:

«Սարգիս, որպե՞ղ են մերոնք», - հարցնում է հայրս: «Այսպեղից մի յոթ կմ հեռու Քալվաբլու՞⁸⁸ գյուղ կա: Այս ճանապարհը ուղիղ դեպի այդ գյուղն է փանում, կհարցնես աղայի փունը»: Հայրս Յանիին հրաժեշտ է տալիս ու ճանապարհի ընկնում:

Ձերբակալություն

Այսպիսով՝ Երզնկայից դուրս գալու յոթանասուներորդ օրը հայրս վերջապես գտնում է իր ընտանիքը: Ինչպես գիտենք, սկսում է աշխատեցնել թուրք աղայի ջրաղացը: Օրեցօր գյուղացիների հոսքը դեպի ջրաղաց շատանում է, մարդիկ օրերով հերթ են կանգնում իրենց ցորենը աղալու համար: Ջրաղացը գիշեր-ցերեկ աշխատում է:

Հայրս ահա արդեն երեք ամիս է, որ ջրաղացում է: Մի առավոտ ձիով գնում է գործի, հանկարծ վեց զինված ձիավորներ նրան շրջապատում են: Հարյուրապետը հրամայում է:

-Հմայակյան օղլու Կարապետ, դու ձերբակալված ես:

Հայրս ուրիշ անելիք չունեի, այստեղ իր ուժը չէր օգնի: Նա գնում է ձիավորների հետ: Աղայի ծառաներից մեկը տեսնում է այս թափորը և հայտնում աղային Կարապետի ձերբակալության մասին: Հորս տանում են գյուղի ոստիկանապետի մոտ: Նա սկսում է հարցաքննել հորս, այդ ժամանակ աղան մտնում է ոստիկանատուն:

-Ո՞վ է քեզ հրաման տվել, որ ձերբակալես իմ աշխատողին:

-Այս գյավուրը պիտի գնա կռվի այնպես, ինչպես կռվում են մեր որդիները:

-Այս բոպեիս ազա՛տ արձակիր:

-Մեհմե՛ղ էֆենդի, ճիշտ է, որ այս գյուղի պետը դու ես, բայց ես ոստիկանության պետն եմ, քեզնից բարձր պաշտոնի եմ, այնպես որ լավ է չխառնվես այս գործին: Այս գյավուրը վաղն առավոտ պիտի գնա Քոնիա՝ զինվորական հրամանատարության տրամադրության տակ:

-Ոչ մի դեպքում, ազա՛տ արձակիր: Ջրաղացս նրան է սպասում, տարի ու կես ոչ ոք չկարողացավ աշխատեցնել, իսկ ինքը մի օրում կարգի գցեց, բա՛ց թող:

-Ոչ մի դեպքում:

Աղան գնում է, տասը բոպե հետո աղայի հորեղբայրը, երկփողա-

նի որսորդական հրացանը ձեռքին, մտնում է ոստիկանատուն, նրա ետևից էլ՝ աղան: Աղայի հորեղբայրը հրացանը դնւմ է անում ոստիկանապետի կրծքին և ասում է.

-Շան գավակ, դու քանի գլխանի ես, որ մարդ ես ձերբակալում առանց գյուղապետի իմացության, այն էլ՝ նրա աշխատողին: Գու ինձ զիտես, շանաստակ կանեմ:

-Այս գյավուրը պիտի գնա, կովի մեր թշնամիների դեմ:

-Չա՛յնդ կտրիր, շա՛ն լակոտ, Մեհմե՛դ, Կարապետի հետ գնա՛ ջրաղաց: Հայրս ու աղան դուրս են գալիս: Ոստիկանապետը փրփրում է:

-Ես քեզ դատի կտամ:

-Ի՛նձ նայիր, Ալի՛ քեյ, կսատկեցնեմ, ոչ ոք ինձ չի մեղադրի, հիմա գնանք:

Մուստաֆան Ալիին տանում է տուն, կերակրում է, խմեցնում է իր ունեցած շերբեթներից լավագույնը, տալիս է տասը ոսկի և այսպիսով լուծում Ալիի հարցը, հորդուբորդը դադարեցնում:

-Հիմա գնանք ջրաղաց,-ասում է Մուստաֆան:

Տեղ են հասնում գործի եռուն ժամանակ: Ջրաղացի քարերի աղմուկից Ալին զարմանում է:

-Մուստաֆա՛ քեյ, այս ի՞նչ դժոխային աղմուկ է: Ու՞ր է այն երիտասարդը:

Գնում են առաջ ու տեսնում են, որ մեծ հորեղբայրս պարկն է բռնել, իսկ հայրս ջրաղացի տակից եկած տաք ալյուրը պարկն է լցնում: Ալին թփթփացնում է հորս ուսին ու ասում.

-Ապրի՛ս, երիտասա՛րդ, հիմա քեզ ձեռք տվող չի լինի:

Վերադարձ երկիր

Երբ Վերդենի⁸⁹ տակ Գերմանիան ջախջախվեց, Թուրքիան տակնուվրա եղավ: Տեր-էլ-Չորից ազատված հայերը սկսեցին վերադառնալ իրենց բնակավայրերը: Հայրս էլ աղայից վերադառնալու թույլտվություն խնդրեց: Աղան չառարկեց: Միայն ուզեց, որ Խաչիկը՝ փոքր հորեղբայրս, մնա իր մոտ:

-Մեհմե՛դ էֆենդի, մի՛ մոռանա այն լավությունը, որ արել ես իմ ընտանիքին, մայրս կմեռնի, բայց չի համաձայնի առանց Խաչիկի

այստեղից հեռանալ,-ասում է հայրս:

Այստեղ պիտի ասվի, որ մայրս մի տղա էլ ունեցավ՝ Հմայակին, որի քառասունքը այս ընթացքում նոր էր լրացել:

-Լավ, պատրաստվե՛ք, ես երեք օր հետո ձեզ կտանեն Քոնիա և ամեն ինչ կանեն, որ բարեհաջող հասնեք Անկարա: Ամենահուզիչ հրաժեշտը եղել է Լաթիֆե հանումի հետ: Մերոնք մոտ երեք տարի Քավաքը գյուղում ապրելուց հետո վերադառնում են Մերդիգյոզ: Ստացվում է այնպես, որ ամեն գերդաստանից մեկ-երկու հոգի վերադառնում են գյուղ, և արդեն մի քանի ամսից պարզվում է, թե ով է ողջ մնացել, ով՝ մարտիրոսվել: Մորս կողմից վերադարձել էր միայն Խաչիկ մորեղբայրս: Կենդանի մնացածները սկսում են ամուսնանալ միմյանց հետ: Մեծ մայրս վեց ամիս սպասում է ամուսնուն, սակայն պարզվում է, որ նա էլ է զոհվել: Մինչ այդ մեծ հորեղբայրս ամուսնանում է, որոշ ժամանակ անց ամուսնանում է նաև մորեղբայրս և գնում է իրենց տուն: Մեծ մորս համոզում են ամուսնանալ, սակայն նա կտրականապես մերժում է՝ ասելով.«*Երկու հարս ունեմ, ո՞ր տղաս կհամաչայնի, որ ամուսնանամ*»: Եվ մեծ մայրս, այրիանալով քառասուն տարեկան հասակում, չամուսնացավ մինչև վերջ: Ապագա գորանչս՝ Ղևոնդիկը, որ ամուսնացած էր Մերդիգյոզի պատիվը փրկող Հակոբի՝ մեծ հորս հորեղբոր տղայի հետ, որը նույնպես չէր վերադարձել, մնացել էր այրի իր վեց տարեկան տղայի հետ: Ղևոնդիկին ամուսնացնում են իրենից տասնհինգ տարի մեծ, բայց շատ հարուստ Ռեջեբի⁹⁰ տղա Հարությունի⁹¹ հետ: Սկսվում է խաղաղ կյանքը:

Հայրս իր ջրադացով, երկու հորեղբայրներս՝ արտերով ու այգիներով, այնքան շատ հարստություն են ունեցել, որ մի մասն էլ վարձով են տվել: Արդեն մի քանի տարի անց ախոռները, փարախներն ու զոմերը լցվում են կենդանիներով: Մեծ հորեղբայրս իր համար տուն է կառուցում և առանձնանում է հորիցս, այդ ժամանակ նա արդեն մի տղա ուներ՝ Փիլիպոսը:

Երկիր վերադառնալուց հետո երրորդ տարվա սկզբին կրկին սև ամպեր են սկսում կուտակվել հայ բնակչության գլխին⁹²: Սկսվում է ... Քեմալի շարժումը⁹³: Հին հաշիվների պատճառով սկսում են փնտրել հորս: Հայրս փախչում է Պոլիս՝ այնտեղից Բուլղարիա անց-

նելու նպատակով, որտեղ ապրում էր իր մորեղբայրը:

Այս մորեղբայրը մասնակցել էր Օտոմանյան բանկի գրավմանը⁹⁴ և պատասպարվել Բուլղարիայում, ամուսնացել էր, կուտակել հարբստություն և ուներ մի տասնվեց տարեկան աղջիկ: Հորս քեռեկինը, լսելով որ հորս գերդաստանին վտանգ է սպառնում, ամուսնու հետ խորհուրդ է անում և որոշում, որ հայրս ամբողջ գերդաստանով փոխադրվի Բուլղարիա: Մորեղբայրը մի նամակ է տալիս հորս, որ գնա Պոլիս ու նամակը հանձնի Նուբար էֆենդիին: «Նուբար էֆենդիին ամեն ինչ կանի, որ բոլորդ միասին ներգաղթեք Բուլղարիա»: Հայրս, Պոլիս գալով, առաջին հերթին մարդ է ուղարկում գյուղ՝ մեծ հորեղբորս հայտնելու, որ նա ունեցած-չունեցածը հավաքի ու գա Պոլիս: Այս ընթացքում հայրս Նուբար էֆենդիի տանը ապրում է իբրև փախստական: Մի ամսից ավելի է անցնում, մինչև որ հորեղբայրս գալիս է Պոլիս չոր դրամ՝ երկու հարյուր ոսկով: Նա իր ունեցվածքը այս դրամով գրավ էր դրել մի թուրքի՝ հույս ունենալով, որ անգլիացիները ի վերջո կգրավեն Պոլիսն ու նրա շրջակայքը, և ինքը կվերադառնա ու կրկին կտիրանա իր ունեցվածքին: Նրանք Պոլսի արվարձաններում մի տուն են վարձում:

Այստեղ մի դրվագ պիտի պատմեմ, որ իմ հիշողության մեջ տպավորվել է շատ հստակ: Ես շատ չարաճճի երեխա եմ եղել, իսկ այդ ժամանակ արդեն յոթ տարեկան էի: Մենք երեխաներով զվարճանում էինք՝ փողոցով սլացող անգլիացի հեծյալների առջևը կտրելով: Այդպիսի մի փորձի ժամանակ ձիու առաջին ոտքը խփում է ձախ ոտքիս կոճին, ես ընկնում եմ ճանապարհի եզրի վրա: Չիավորը կանգնեցնում է ձիւն և ինձ վերցնում տանում է մոտակա ամերիկյան հիվանդանոցը:

Երեխաները վազում գտնում են մեծ մորս ու հայտնում, որ ես ընկել եմ ձիու տակ, և որ ձիավորը ինձ տարել է հիվանդանոց: Մեծ մայրս տան հագուստով, չստերով վազում է դեպի հիվանդանոց, որը մեր տնից մոտ հինգ հարյուր մետր է հեռու եղել: Վազելիս կորցնում է չստերը և բոքիկ մտնում է հիվանդանոցի բակը, որտեղ դեռ կանգնած էր գունատ անգլիացի ձիավորը: Մեծ մայրս հասկանում է, որ այս երիտասարդն է ինձ գցել ձիու տակ: Բոքիկ, գլուխը բաց, ցրված վարսերով, ինչպես վայրի մի ամազոնուհի, առանց դժնապանի վրա ուշադրություն դարձնելու, բարձրանում է հիվանդանոցի երկրորդ

հարկը: Տեսնում է ինձ գունատ, սեղանի վրա պառկած լալով: Բժիշկները, տեսնելով այս ոտաբոբիկ, ցրված մազերով, վազելուց այտերը կարմրած կնոջը, հարցնում են. «*Հանուն, դու ո՞վ ես*»: «*Այս տղայի նեկեն եմ*»: Բժիշկները, քույրերը իրար են նայում զարմացած. «*Այսքան երիտասարդ և յոթ տարեկան թո՞ն: Հանուն, այս տղայի ուրբը կտրելու ենք*»: Մեծ մայրս վախեցած նայում է բժիշկներին: Մինչև բժիշկների ուշքի գալը, մեծ մայրս ինձ զցում է շալակն ու դուրս գալիս հիվանդանոցից, բերում է տուն ու պառկեցնում թախտին: Տանտիկնոջ հետ զնում ու տուն են հրավիրում մի հայ հեքիմի: Մինչ այդ մեծ մայրս լվանում է վերքս: Հեքիմը զնում է վերքս ու զարմանում բժիշկների շուտափույթ արած որոշման վրա: «*Տասն օրից ուրբի կեղև*»: Վերքին մեղեմ է քսում, երկու տախտակներով շտկում է ոտքս ու կապում: Մեղեմը ժողովրդական քսուք էր, որով բուժում էին բաց վերքերը, պատրաստում են արցունքի նման խնկի ծամոնի, մեղրամոմի, ձիթապտղի յուղի և մեղրի խառնուրդից⁹⁵: «*Երեք օր թող պառկի, չեռք չտաք, ես կգամ*»: Առավոտյան դուռը թակում են, մեծ մայրս դուռը բացում է և տեսնում է անգլիացի ձիավորին ու նրա հետ մի ուրիշ մարդու՝ թարգմանիչին: Անգլիացու ձեռքին մի պարկ կար: Բարևելով ներս են մտնում: «*Այս շիավորը մեղք չունի, չեք տղան է չիու առաջից վազել, այնպես որ: Շա՞տ է ցավում: Այս պարկի մեջ ամեն ինչ կա, հիմա տղային սնունդ է պետք, այս տասը ոսկին ալ նվեր է տալիս*»: Անգլիացին շոյում է գլուխս, համբուրում է մեծ մորս գլուխն ու հեռանում: Մինչև մեծ մայրս ուշքի կգար, նրանց մեքենան հեռանում է: Այս դեպքերի մեծ մասը ես հիշում եմ: Երրորդ օրը եկավ հեքիմը, այնուհետև տասներորդ օրը քանդեց տախտակները և ինձ սենյակում ման բերեց: Վերքը, սակայն, դեռ չէր փակված: Պոլիս գալուց երեք ամիս հետո թույլտվություն ստացանք Բուլղարիա գաղթելու: Բայց հորեղբայրս՝ Խաչիկը, անցավ Հունաստան: Նա նշանված էր մի աղջկա հետ, որի ծնողներն արտագաղթեցին Հունաստան, ինքն էլ՝ նրանց հետ: Այս դեպքը մեծ վիշտ պատճառեց մեծ մորս, քանի որ նա ամենից շատ Խաչիկի հետ էր կապված:

Թորախտով հիվանդը

Մի քանի խոսք մեծ մորս մասին: Նա չորս եղբայրների միակ քույրն էր, տասնչորս տարին դեռ չբոլորած՝ նրան ամուսնացնում են խոշորների՝ «Խոջամանների» տոհմի միակ տղայի՝ քսանմեկամյա Հմայակի հետ: Հմայակը Օթելլոյից էլ ավելի խանդոտ էր, կնոջը պահում էր ստրկուհու մման: Հմայակը ծնողներ չուներ, ուներ միայն յոթանասուն տարեկան մի մեծ մայր, որը դարձավ խավարամոլ սկեսուր: Պատկերացնում եմ, թե ինչ վիճակում է ապրել մեծ մայրս: **Շատ խիստ լեզու պիպի պահեք**, սկեսուրը պիտի կարգադրեր, իսկ Անուշիկը պիտի անխոս կատարեր նրա հրամանները: Նրա պարտականությունն էր կովերն ու ոչխարները կթելը և առավոտյան նրանց հովիվներին հանձնելը: Բացի դրանից՝ նրան արգելվում էր մոր տուն գնալը, իսկ նրա մայրը իրավունք չուներ մեր տուն գալ⁹⁶: Միայն երբ Հմայակը տանը չէր լինում, նրա մորաքույրը գաղտնի գալիս և օգնում էր աղջկան: Մեծ մորս երեքամյա աղջկա մահը լրիվ քայքայում է նրա առողջությունը: Չորս ամսվա (չորրորդ) հղիության ժամանակ նա հիվանդանում է թոքախտով, իսկ նրան խնամող չի լինում: Հմայակը հայտարարում է. «*Եթե կհևս ու երեխաներս պիպի մեռնեն, ապա թող մեռնեն իմ տանը*»: Մի առավոտ Անուշիկի հայրը՝ Մարգարը⁹⁷, վերցնում է հրացանն ու Անուշիկի մորաքրոջը և գնում փեսայի տուն, նա Հմայակին գտնում է անասուններին խնամելիս, իսկ Կարապետին ու Օնիկին՝ բակում խաղալիս: Հրացանը դեմ է անում Հմայակին ու ասում. «*Չջարժվես, թե չէ կսպանեն: Սուլթան, գնա՛ վեր, Անուշիկին թե՛ր և երեխաների հետ տա՛ր մեր տուն*»: Հմայակը քար կտրած նայում է աներոջը, որը կատակ անելու միտք չի ունենում: Անուշիկի և երեխաների գնալուց հետո աներն ասում է. «*Լա՛վ լսիր, եթե տանս չենն անցնես, տեղնուրեղը կգնդակահարեն, երեխաները Սուլթանենց տանը կլինեն, երբ ուզենաս, նրանց կարող ես տեսնել*», - և նա հեռանում է: Ծանր օրեր են սկսվում Անուշիկի ծնողների համար: Բժիշկները դեղեր չեն տալիս Անուշիկի հղիության պատճառով: Հեքիմները զանազան հնարքներ են գործածում. **սե հավը ողջ-ողջ կիսում են, կռնակին են կապում, շան թուլեն կերցնում, հեպո էլ ցույց են տալիս գլուխն ու կաշին, որ հետք տա, ու միկրոբները քափվեն**: Ոչինչ չի օգնում: Հիվանդությունը

ավելի է խորանում: Այս ծանր վիճակում նա վաղաժամ յոթ ամսական տղա է ծնում: Սուլթանը նույն բուպեին տանում է իր մոտ: Տղայի անունը Սուդնոց⁹⁸ է դնում (հետագայում՝ Խաչիկ): Մի քանի օր Անուշիկը անզգա վիճակում է մնում: Հայրը ի վերջո որոշում է գնալ Պոլիս ու խորհրդի համար մի քանի բժիշկ բերել: Առավոտ շուտ, ձի նստած, գնում երկու բժիշկ է բերում, մեկը սուլթան Համիդի պալատի բժիշկն էր, մեկն էլ մինիստրների խորհրդի բժիշկը: Այստեղ պիտի ասեն, որ Մարգար աղան շատ ազդեցիկ բժիշկների է ճանաչել Պոլսում⁹⁹: Բժիշկները՝ Արբին էֆենդին¹⁰⁰ և Հովսեփ էֆենդին, գնում են, լսում Անուշիկի թոքերը և գալիս են այն եզրակացության, որ Անուշիկը մի ամիս ալ չի ապրի, ու հայտնում են հորը: Երեքով ձի նստած գնում են՝ ամեն մեկը իր մտքով տարված, ոչ մեկը չի խոսում: Արբին էֆենդին նայում է Մարգար աղային և ասում.

-Մարգար աղա, արի՛ գնանք Պոլիս, ինձ հյուր կմնաս, մի բան կմտածենք: Մյուս առավոտ վերադառնում են: Արբին էֆենդին նայում է Մարգար աղայի աչքերին և ասում.

-Աղջիկդ մեռած է, մի հույս կա: Նրա սիրտը Սարգիսովի¹⁰¹ ժամացույցի պես աշխատում է, ես մի դեղ եմ բերել. մեռավ՝ մեռավ, ապրեց՝ ապրեց: Համաճա՞յն ես:

-Ճարս ինչ, աղջիկս քեզ եմ հանձնում:

Հեռացնելով բոլոր կանանց և «մի թա՛ս բերեք» ասելով՝ անցնում է գործի: Ճաշի գդալի մեջ կիսով չափ ջուր է լցնում, մի փոքրիկ սրվակից մի քանի կաթիլ կաթեցնում և խմեցնում է Անուշիկին: Անուշիկը մի քանի բուպեից սկսում է հազալ ու հետ տալ: Թասի մեջ սև արյան հետ լցվում են խառը մսի կտորներ և փրփուր: Այս ամենը երկար չի տևում, Անուշիկը իյնում է կողքի: «*Արբին էֆենդի, մեռա՞վ*»: Արբին էֆենդին, Անուշիկի զարկերակը բռնած, ասում է. «*Հանգիստ, ոչինչ չկա, ամեն ինչ կարգին է*»: Երեք ժամ սպասում են, Անուշիկը հանգիստ շնչում է: Արբին էֆենդին այդ դեղից երկրորդ անգամ էլ է խմեցնում, միայն թե այս անգամ կաթիլները քիչ ավելի շատ է ջրին ավելացնում: Անուշիկի հետ կրկնվում է նույն բանը, բայց այս անգամ ավելի մաքուր արյուն է գալիս: Կռնակին պառկած Անուշիկի աչքերը պլպլում են: «*Մարգար աղա, հիմա գնանք ճաշենք*»: Բժիշկը մինչև երեկո ոչ մեկին չի թողնում Անուշիկի մոտ,

միայն երբեմն ինքն է մտնում նայելու: «Մարգար աղա, աաս, որ երկուսիս համար անկողին պարտասարեն Անուշիկի սենյակում, բայց առանց աղմուկի»: Առավոտյան նույն դեղը խմելուց հետո Անուշիկը միայն արյուն է փսխում: «Ո՞վ պիտի խնամի Անուշիկին»: «Մորքուր Սուլբանը»: «Սուլբան հանում, հիմա ինչ լավ լսիր, մի ժամ հետո մեղրով խառնած կարագը գդալով կրաս, որ ուրի, որքան ուրի, կրաս, խմած ջուրն էլ պիտի փաք լինի և օխլամուր¹⁰², վաղը՝ միայն եսիած հավի ջուրը, մի քանի օր հետո՝ թեթև ճաշ՝ քիչ հացով: Մի փասն օրից ես կգամ»: Կեսօրվա ժամին բժիշկը մեկ անգամ էլ գննում է աչքերը բաց չորս կողմը նայող Անուշիկին: Բոլորը հավաքվում են Անուշիկի սենյակում, և Անուշիկը, որ մինչ այդ արդեն չէր կարողանում ճանաչել իր հարազատներին, նայում է նրանց ու սկսում նրանց անուններով կոչել:

-Մարգար աղա, ինձ ճամփու՛ղի, աղջկադ արդեն վտանգ չի սպառնում:

Անուշիկը կամաց-կամաց սկսում է կազդուրվել: Տասն օր հետո բժիշկը գալիս է և տեսնում, որ Անուշիկը սենյակում ման է գալիս:

-Ապրիս, աղջիկս, ամեն ինչ հաղթահարեցիր, շուտով կերթաս ամուսնուդ մոտ:

-Արբին էֆենդի, -հայրը մատը դնում է շուրթերի վրա՝ հասկացնելով, որ չշարունակի:

Գնում են մյուս սենյակը.«Դժվար կացության մեջ ենք, ոչ մի կերպ չի ուզում ամուսնու մոտ վերադառնալ, իսկ ամուսինը չի ուզում լսել բաժանության մասին»:

-Մի ամսից շուտ նա չի կարող երթալ ոչ մի տեղ, ես կխոսեմ Հմայակի հարազատների հետ, իսկ դու էլ չշտապես Անուշիկին տանելու: Մի ամսից ես նորից կգամ, այն ժամանակ կմտածենք:

Քառասուն օրից Արբին էֆենդին գալիս է: Կազդուրված, առողջացած Անուշիկը Արբին էֆենդիի ձեռքն է համբուրում ու Արբին էֆենդու գիրկը տալիս երեք ամսական Սուղնոցին (Խաչիկին). բժիշկը Անուշիկին երկու տղաների հետ միասին տանում հանձնում է Հմայակին:

Անցնում է մի տարի: Գյուղի սրճարանի առաջ երկու մեզ ծանոթ բժիշկները գրուցում են գյուղի երևելի մարդկանց հետ: Անուշիկը, իր

նորածին աղջկան գիրկն առած, գալիս է սրճարանի կողմը:

-Այս աղջիկը կճանչնա՞ս, Հովսեփ էֆենդի:

Հովսեփ էֆենդին նայում է այդ կարմիր այտերով առողջ կնոջը:

-Չէ՛, չեմ ճանաչում:

-Այս Անուշիկը, այն աղջիկն է, որին մի շաբաթվա կյանք տվիր:

Հովսեփ էֆենդին, մորուքը բռնած, նայում է Արբին էֆենդիին և գլուխը շարժում:

Արբին էֆենդին

Այս մասին հորիցս եմ լսել: 1912թ. Թուրքիայի և Բալկանյան երեք պետությունների՝ Բուլղարիայի, Սերբիայի և Հունաստանի միջև լարված վիճակ էր ստեղծվել: Արտաքին գործերի մինիստր Տատուրյանը հրավիրվեց պալատ: «*Այս ու՞ր ես, չես երևում*»: «*Քսանասյա Կղաս հիվանդ է թոքախորով*»: «*Տղուդ հանչնում ես ինչ, վաղը առավոտյան մեկնելու ես և Բալկանյան պետություններին առաջարկելու ես կնքել չհարձակման մասին պայմանագիր: Բալկաններից անցնելու ես Ավստրո-Հունգարիա, այնուհետև՝ Փարիզ, հետո՝ Հռոմ, այս ճանապարհորդությունը կրկի երեք ամիս*»: «*Քայց...*»: «*Ոչ մի քայց, առավոտյան կնեկնես, մինչև գաս, որդիդ առողջացած կըլլա, սուլթանի խոսք եմ Կալիս*»: Տատուրյանին չհաջողվեց կանխել Բալկանյան պատերազմը: Նա վերադարձավ երեք ամսից, իսկ կայարանում նրան դիմավորեց նրա ողջ ու առողջ որդին: Հայրս ասում էր, որ դա Արբին էֆենդիի արած գործն էր:

Գեպի Բուլղարիա՝ Վառնա քաղաք

Մայիսյան մի օր, երբ ամեն ինչ պատրաստ էր, նստեցինք Վառնա մեկնող նավը: Իրիկնադեմին նավահանգստից հեռացանք, մտանք Բոսֆոր, առավոտյան Սև ծովում էինք: Նավի՝ ճանապարհ դուրս գալուց անմիջապես հետո մայրս հիվանդացավ ծովային հիվանդությամբ և տառապեց մինչև Վառնա հասնելը: Առավոտյան մեծ մայրս տարբեր կտորների կտորտանքով կապում էր ոտքիս վերքը: Միպտակ խալաթ հագած մի երիտասարդ տեսնում է այս ամենը, շարժում է գլուխն ու հեռանում: Մի քանի րոպե հետո գալիս է մի աղջիկ ու ինձ տանում: Ես դա հիշում եմ: Աղջիկը վերքս լվանում, մաք-

րում, վիրակապում է և բերում հասճնում մեծ մորս, այսպես՝ երեք օր: Ծանրաշարժ նավը միայն երեք օրվա ընթացքում հասավ Վառնա: Մեկ օրվա ճանապարհ էր: Տեղ հասնելուն պես հայրս գնում է մորեղբորը հայտնելու, որ եկել ենք, բայց մորեղբոր տանը ուրիշ մի ընտանիք է գտնում: Հայրս հարցնում է. «*Ու՞ր ես գնացել Մանթաշյանները*»: Այդպես էր մեծ մորս աղջկական ազգանունը: Նոր տանտերը հայտնում է. «*Քառասուն օր առաջ այն սիրուն կինը մահացավ երեք օրվա մեջ, և Մանթաշյանը ամուսնացավ մեկ ուրիշ՝ րեղացի կնոջ հետ ու այս րունը ծախեց ինձ, գնաց փանկեսա իր երկրորդ կնոջ մոտ*»: «*Որտե՞ղ է այդ րունը*»: «*Հայոց եկեղեցու մոտ: Սպասի՛ր*»: Կանչում է իր փոքր տղուն՝ Իլյային. «*Իլյա՛, րա՛ր այս չիչոյին Մանթաշյանի նոր րունը*»: Հայրս մտնում է տան՝ փոքր պարտեզով բակը, տալիս է դռան զանգը: Մի փառահեղ կին բացում է դուռը ու զարմանում՝ գյուղացու հագուստով մարդուն տեսնելով: «*Ու՞մ ես ուզում*»: «*Մորեղբորս*»: «*Ի՞նչ մորեղբայր*»: «*Մանթաշյանին*»: «*Գու՞նի ես*»: «*Մանթաշյանի քրոջ որդին ես*»: «*Ես քեզ չեմ ճանաչում*»: «*Մենք Պոլսից նոր ենք եկել*»: «*Հեյրո ինչ, սենյակ վարձե՛ք, սպրե՛ք, Մանթաշյանի հետ ի՞նչ գործ ունեք*»: Այս խոսակցության ընթացքում հայտնվում է մորեղբոր աղջիկը՝ Մերսեդեսը, որն այդ ժամանակ տասնվեց տարեկան էր: «*Գնանք, դայդայ՛*¹⁰³»: «*Ու՞ր ես գնում, հե՛տ արի, աղջիկ*»: Մերսեդեսը ուշադրություն չի դարձնում, հայրս հարցնում է. «*Ո՞վ է այդ կինը*»: «*Խորթ մարս է, մորս մահից րասն օր հետո հայրս ամուսնացավ. դայդայ, դու այստեղ սպասի՛ր*»: Մի քանի րոպե հետո գալիս է մորեղբայրը: Հայրս մոտենում է նրան, որ համբուրի, և տեսնում է մորեղբորը գույնը գցած, դողացող շուրթերով, շատ վախեցած: «*Չէի՞ք կարող Հունաստան գնալ*»: «*Մորեղբայր, քո հույսով եկանք այստեղ*»: «*Քսնի՞ հոգի եք*»: «*Ուր*»: «*Պահ, պահ, Մերդիգյոզ ալ մարդ չկա՞ր*»: Մինչ այդ մի ցմփոր մարդ է հայտնվում. «*Կարպիս, մի կառք բռնի՛ր, այս մարդու հետ գնա՛, բոլորին բե՛ր գոնքաչիս րունը*»: Մի ժամ հետո արդեն իրերը թափված էին բակում: Բոլորս երկրորդ հարկ բարձրացանք: Երևելի կինը ուշաթափվեց, նրան տարան մյուս սենյակը, մորեղբայրս գնաց նրա հետևից: Նա այլևս դուրս չեկավ սենյակից: Երևելի կնոջ՝ հնդկացու դեմքով մայրը բուլղարերեն փնթփնթում էր: Ոչ մեկը չի խոսում. մռռելի տուն: Մորեղբայրը գլուխը սենյակից հանում է

դուրս.«*Կարպիս, գնա՛ փիփիհնի խանը*¹⁰⁴, երկու սենյակ վարձի՛ր, սրանց տա՛ր»։ Նա դուռը փակում է։ Մերսեդեսը գլուխը կախ լաց է լինում։ Սի ժամից Կարպիսը գալիս է և մեզ տանում է փիփիջի խանը։ Կառքը խանի բակը մտնելուց հետո Կարպիսը փախչում է։ Խանի տերը ցույց է տալիս երկու փոքր սենյակները՝ մի-մի փոքր լուսամուտներով և հողե հատակով։ Խանի տերը երկու խսիր է տալիս և երկուական մոմ՝ ամեն սենյակի համար ու հեռանում է։ Սի կերպ տեղավորվում են։ Մեծ մայրս էլ չհամբերեց, ափերից դուրս եկավ. «*Չրեանեմ, չլսեմ, որ մեկն ու մեկը երթա Բարսեղի մոտ*»։ Առավոտյան պարզվեց, որ մեր ունեցած ամբողջ դրամից մնացել է յոթ ոսկի։ Սի շաբաթ ապրեցինք փիփիջի խանում։ Հորեղբայրս հայտնեց, որ գնալու է գյուղ, քանի որ այնտեղ ավելի հեշտ է աշխատանք ճարելը։ Նա վեց ոսկուց չորսը տվեց հորս ու հեռացավ։ Հայրս սկսեց բեռնակրությոն անել։ Փիփիջի խանից տեղափոխվեցինք բաստիան խան¹⁰⁵, ուր ունեինք ավելի մեծ ու լուսավոր մի սենյակ, խոհանոց՝ էլեկտրականությամբ։

Սի առավոտ բաստիան խանում հայտնվեցին մի խումբ մերդիզյոզցի գաղթականներ։ Սի անկյունում նստած էին իմ ապագա զոքանչը՝ տասը տարեկան տղայի և երկու տարեկան աղջկա՝ իմ ապագա կնոջ հետ։ Հայրս մոտեցավ ու հարցրեց.«*Ղևոնդիկ, ու՞ր է ամուսինը*»։ «*Մերդիզյոզում սպանեցին*»։ Այսպիսով, սպանվել էր Ղևոնդուհու երկրորդ ամուսինը. նա երկու երեխաների հետ որբևայրի էր մնացել։ Նրանց հայրս բերեց մեր տուն։ Մեծ մայրս շատ էր դժգոհում։ Բարեբախտաբար, հորեղբայրս, որ գնացել էր գյուղ ու արտ էր վարձակալել, ուներ բանվորի կարիք։ Նա հորս էլ գյուղ տանելու հույս ուներ։ Սակայն հայրս գյուղ գնալու միտք չունեց։ Հորեղբայրս Ղևոնդիկին առաջարկեց գյուղ գնալ։ Ղևոնդիկը համաձայնեց, հորեղբայրս տասը ոսկի տվեց նրան և ասաց.«*Այս դրամը, ինչպես կուզես, տրևորի՛նիր, միայն մեզ առանձին մի՛ թող*», - քանի որ տեսնում էր, որ Անուշիկը նրանց չէր ուզում։

Մորս մահը

Ես արդեն ութ տարեկան էի, պիտի գնայի դպրոց։ Մայրս շատ տկար էր, այդ ժամանակ տան ամբողջ հոգսը ընկած էր մորս վրա։ Սի առավոտ մեծ մայրս ինձ խրրդ ու բրրդ հագած տարավ ու խառ-

նեց առաջին դասարանցիների հետ: Լավ էի սովորում, բայց շատ չար էի ու մի քիչ էլ ճարպիկ: Կռիվ էի անում այն երեխաների հետ, որոնք ինձ «*գեյմեկներ*» (եկածներ) էին անվանում: Օր չէր պատահում, որ մի քանիսին չջարդեի կամ չջարդվեի, այս ամենի պատճառով էլ մի քանի ապտակ էի ստանում դասատուներից: Հայոց դպրոցն ու բուլղարական դպրոցը կողք կողքի էին և իրարից բաժանվում էին միայն մի միջնորմով: Երկրորդ դասարանում էի, հիմա էլ կռիվ էինք սարքում բուլղար աշակերտների հետ: Մի անգամ ջարդեցի բուլղար աշակերտի գլուխը: Երկու բուլղար ուսուցչուհիներ արյունլի աշակերտին բերեցին մեր դպրոցի ուսուցչարանը: Չեմ հիշում, թե ինչքան ապտակ կերա, բայց որոշեցին ինձ վտարել դպրոցից: Միայն ուսուցչուհի օրիորդ Նվարդը պաշտպան կանգնեց ինձ՝ ասելով, որ ինքը իր վրա է վերցնում իմ դաստիարակությունը: Այսպես փոխադրվեցի երրորդ դասարան: Մորս վիճակը օրեօր վատանում էր, բժիշկները եկան այն եզրակացության, որ պիտի վիրահատեն կույրադիքը: 1923թ. նրան վիրահատեցին, սակայն արդեն շատ ուշ էր:

Հիմա հորս մասին: Նա մի ձիու հարթ բեռնակառք գնեց: Իմանալով նրա առեղի ուժի մասին՝ ամենածանր գործերի համար նրան էին կանչում: Ես ինքս տեսել եմ, թե ինչպես նա 100 կգ աղի պարկերը վերցնում ու դնում էր կառքը, այն էլ՝ տասը-տասներկու հատ: Ձին էլ նրանից ուժեղ էր: Ուս էր տալիս կառքին ու գոռում՝ *գևա, Աչո՛*:

Մորս հիվանդանալուց հետո հորս վաստակած դրամի մի մասը գնում էր ազատամիտ կանանց ձեռքը, իսկ մյուսը՝ գինեվաճառների: Մեծ մայրս կռիվներ էր սարքում, բայց ոչինչ չէր օգնում: Այդ ողջ կռիվների հերոսը հայրս ինձ վրա էր թափում: Փոքր եղբայրս այնպես խելոք էր, որ տնից դուրս չէր գալիս: Հայրս նրան շատ էր սիրում: Բայց ես արժանի էի դրան: Խանում կար մի տասը ընտանիք. օր չէր լինում, որ մեկն ու մեկին վնաս չհասցնեի. ապակիներն էի ջարդում, հավերին էի հալածում: Մի անգամ մի կնոջ երեսուն լևան փախցրի տնից. ի՞նչ կերուխում սարքեցի դասընկերներիս հետ: Մեծ մայրս դեսից-դենից մի կերպ հավաքեց ու կնոջը վերադարձրեց այդ դրամը, որ հայրս չիմանա: Այս վերջինն արդեն չափազանց էր: Խանի սրճարանի դիմաց՝ խաղողի թառնայի¹⁰⁶ տակ, մարդիկ սուրճ էին

խմում ու նարգիլե քաշում, իսկ ես հեռվից քար էի գցում, որ խաղող իյնա: Շոգ էր, ու Ջոջ գլուխ Հակոբը առանց գլխարկի էր նստած: Նրա գլխին ոչ մի մագ չկար: Հայրս էլ էր այնտեղ նստած սուրճ խմում ու ծխում: Չվից քիչ փոքր մի քար գնաց, դիպավ Հակոբի գլխին, գլուխը ծակեց: Հայրս հասավ, բռնեց ինձ ու մի այնպիսի ջարդ տվեց, որ եթե սրճարանի հաճախորդները չբռնեին, վերջս եկած էր: Բայց հայրս չհանգստացավ, գնաց, բերեց պարկերը կապելու պարանը ու ինձ կապեց խանի մեջտեղի բարդուն: Մեծ մայրս եկավ որ քանդի, բայց հայրս այնպես բռռաց, որ նա փախավ: Մայրս արդեն էլ չէր կարող վեր կենալ: Բարեբախտաբար, այդ օրը հորեղբայրս գյուղից եկավ և երեք ժամ հետո կապերս քանդեց: 1925թ. հունվարին մայրս մահացավ, ես երրորդ դասարանում էի, ուսուցիչներից ոչ ոք չգիտեր, որ ես մայր չունեմ:

Իմ մի արարքով չափն անցա. իմ լաթե պայուսակում, որ կարել էր մեծ մայրս, ամեն ինչ կար՝ հող, պարսատիկ և ուրիշ մանր-մունր բաներ, հարյուր էջանոց մի տետրակ, մի դասագիրք: Մի առավոտ՝ ուշացած դպրոց գնալու ժամանակ, ցրտից կուչ եկած մի սև ագռավ տեսա, բռնեցի ու դրեցի պայուսակիս մեջ: Չանգը նոր էր տվել, ուսուցչուհին դեռ չէր եկել: Այս ժամի ուսուցչուհին՝ տիկին Պերճուհին, մոտ հիսուն տարեկան շատ չար կին էր: Նա սկսեց դասը: Ես նստած էի երրորդ նստարանին, կողքիս Ավետիսն էր: Ուզեցի ագռավը ցույց տալ Ավետիսին, բայց մինչև ուշքի եկա, ագռավն արդեն առաստաղի տակ թռչում էր: Դասարանում քառասուն աշակերտ կար: Բոլորը գոռում-գոչյունով բարձրացան նստարանների վրա, որ բռնեն, չնայած որ առաստաղը ամենաբարձր հառված ձեռքերից մի մետր էլ բարձր էր: Տիկին Պերճուհին հասցրեց տնօրենին և ժամկոչին բերել: Ժամկոչը մի կերպ ագռավին պատուհանից դուրս քշեց: Չգու՞մ էի, որ տնօրենը՝ պարոն Նախկիկյանը, ամբողջ մարմնով դողում է: «Ո՞վ քերեց ագռավը»: Ամբողջ դասարանը քար կտրած լսում է: Ավելի բարձր ձայնով. «Ո՞վ քերեց ագռավը»: Զար լռության մեջ լավեց իմ ձայնը. «Ես»: Տնօրենը այնպես նայեց, որ ես կուչ եկա: «Եկու՛ր հոս: Հիմա կերթաս մորդ կքերես»: Մեր դասարանում մի շատ խելոք աղջիկ կար՝ Մաղլեն անունով. «Պարոն՝ Նախկիկյան, Գևորգի մայրը երկու ամիս առաջ մահացավ»: Դասարանը ավելի քար կտրեց. շատերը չգիտեին: Պա-

րոն Նախկինկյանը ձեռքիցս բռնեց, տարավ ուսուցչարան.« *Ճիշտ է, որ մայրդ մահացել է*»: Ես լաց եղա: « *Գնա՛ դասարան*»: Այդ օրվանից ես արդեն չարություն չարեցի:

Գեպի խուլ գյուղ

Մորս մահից հետո հայրս ավելի շատ ընկավ խմիչքի և կանանց հորձանքի մեջ: Մեծ մայրս մի կերպ երկու ծայրը կապում էր իրար¹⁰⁷: Ապրիլից սկսած մինչև հոկտեմբեր ես և եղբայրս բոքիկ էինք, ձմռանը՝ հին կոշիկներով: Նոր էի վերջացրել երրորդ դասարանը, երբ հայտնի եղավ, որ գյուղ պիտի գնանք: Հայրս ծանոթացել էր Բայ Սիխալ անունով մի բուլղար գյուղաբնակի հետ: Բայ Սիխալը իմացել էր, որ հայրս գիտի կանեփի տերևներից **էսրաբ**¹⁰⁸ պատրաստելու ձևը (այդպես էին անվանում կանեփի տերևներից պատրաստված նյութը, որի մի գրամը սուրճի մեջ զցել խմելուց կամ փաթաթովի ծխախոտի մեջ դրած ծխելիս մարդու վրա երանություն է գալիս): Էսրաբի կիրգրամը Հունաստանում մի քանի ոսկի արժեր: Մեծ հորեղբայրս, որը արդեն գյուղից Վառնա էր տեղափոխվել, հորս հետ մի խումբ է կազմում՝ Անանիան, որի կինը մահացել էր մի քանի ամիս առաջ, Ղևոնդիկը և էլի երկուսը մեր ազգականներից՝ Եղիշեն և բաստուրմաճի Սարգիսը, երկուսն էլ՝ ամուրի: Մայիսի կեսերին երկու ձիու կառքերով գնում են գյուղ, որը Վառնայից հեռու էր մոտ 70 կմ: Տեղ հասնելով՝ տեղավորվում են տարբեր տներում: Մի օր հանգստանալուց հետո սկսում են մշակել Բայ Սիխալի կանեփի արտը: Հորս ծախսած ձիու և կառքի դրամն ու հորեղբորս ունեցած դրամը դրվում է գործի մեջ: Փայտերերը երեքն էին՝ հայրս, հորեղբայրս և Բայ Սիխալը: Մնացածը աշխատում էին օրավարձով: Գյուղում կար միայն մի ճաշարան ու նպարավաճառի մի խանութ: Գյուղի անունն էր Սաղիսի¹⁰⁹:

Մի քանի խոսք հորեղբորս կնոջ մասին. շատ սիրունատես կին էր, բայց մեզ՝ երկու եղբայրներիս, տեսնել չէր ուզում, առավելապես չէր սիրում սկեսրոջը, այն պատճառով, որ Պոլսում երեքս էլ հիվանդանում ենք՝ մենք և հորեղբորս տղան՝ Փիլիպոսը: Չմայած որ գատ սենյակներում էինք ապրում, մեծ մայրս գիշեր-ցերեկ աղոթում էր, որ եթե պիտի մահ լինի, ապա մեզնից մեկն ու մեկը մեռնի, միայն թե հո-

րեղբորս տղային՝ Փիլիպոսին, բան չպատահի: Եղավ հակառակը. մահացավ հորեղբորս տղան: Այս և այլ նման պատճառներով մեզ չէր սիրում, չնայած որ արդեն մի տղա ու մի աղջիկ ունեք՝ Փիլիպոս և Իսկուհի (Միլվա): Հորեղբայրս այս մասին գիտեր, այդ պատճառով միշտ առանձին բնակարան էր վարձում:

Եկավ դպրոց գնալու ժամանակը: Գյուղում մի դպրոց կար՝ մի դասասենյակով, առաջինից չորրորդ դասարանցիների համար, և մի ուսուցիչ՝ մինչև ուղնուծուծը ազգայնական: Ես բուլղարերեն գրել կարդալ չգիտեի: Ուսուցիչը հարցրեց՝ գրել-կարդալ գիտե՞ս, թե՞ ոչ: Ես ասացի, որ չգիտեմ, բայց գիտեմ բուլղարերեն խոսել: Նշանակեց առաջին դասարան:

Կանեփի ցանելը, մշակելը, բերքը հավաքելն ու էսրարի ստանալը վեց ամիս տևեց: Այս անգամվա ապրանքը Վառնայում հատուկ այդ գործով զբաղվող մարդիկ գնեցին: Այս եկամուտը փակեց բոլոր ծախսերը, բացի այդ, մի կլորիկ գումար մնաց փայատերերին: Օրավարձով աշխատողները գնացին Վառնա, հորեղբայրս էլ չմնաց, նա էլ գնաց: Հայրս, մեզ թողնելով մի քանի շաբաթվա մթերք, Բայ Միխայիլի հետ գնաց Վառնա՝ զվարճանալու, չնայած որ Բայ Միխայիլ ուներ կին, երկու աղջիկ և մեկ տղա, որոնք արդեն մեծ էին: Պիտի ասեմ, որ Բուլղարիայում այդ ժամանակ հասարակաց տներ չկային, դրանք արգելված էին օրենքով, բայց կային կանայք, որոնք հավաքում էին մի տասնյակ աղջիկների ու զբաղվում էին այդ գործով. ոչ մի բժշկական քննություն: Այդպիսի մի կին՝ (Կակա Անկան) դառնում է հորս սիրուհին: Ես նրան տեսել եմ 1930թ.:

Բայ Միխայիլ իր տունը գրավ է դնում և բանկից մի կլոր գումար է ստանում: Հորս հետ մի ավելի մեծ բրիգադ է կազմում և վերադառնում է գյուղ: Այս անգամ ավելի մեծ գործ են բռնում. կանեփ են ցանում երկու հեկտար տարածության վրա: Չերկարացնեմ. անցյալ տարվա նման գիշեր-ցերեկ աշխատում են:

Մի հարսանիք

Ամանիան, որի կինը մահացել էր մի տարի առաջ, ամուսնացավ Ղևոնդիկի հետ: Առավոտ շուտ Բայ Միխայիլ երկու ձիանոց կառքով հորեղբորս, նրա կնոջը և հարս ու փեսային տարավ Վառնա: Ամա-

նիան ու Ղևոնդիկը պսակվեցան, երեկոյան վերադարձան, և մինչև լույս հարսանիք արինք: Այսպիսով՝ ապագա զոքանչս երրորդ անգամ ամուսնացավ:

Գեայի Հունաստան

Այս անգամ հիանալի ապրանք ստացվեց: Որոշվեց մի մասը Վառնայում ծախել ու իրենց ծախքերը փակել, Բայ Միխայի տունը գրավից ազատել, իսկ մյուս մասը տանել Հունաստան, որտեղ էսրարի գինը շատ բարձր էր: Հայրս Հունաստան պիտի տաներ մոտ հազար կգ էսրար: Մի հունահպատակ հույն, որ զբաղվում էր մաքսանենգությամբ, նավ ուներ. գիշերով հատուկ նավասենյակում տեղավորում է այս ապրանքը, իսկ առավոտյան անտառանյութ են բարձում՝ ձևացնելով, թե անտառանյութ են տեղափոխում Հունաստան: Նավի անձնակազմում, բացի հորիցս ու կապիտանից, կային ևս չորս հոգի: Մեկ այլ մարդ, որ պիտի դիմավորեր այս նավը, դուրս է գալիս ավելի շուտ և գնացքով ուղևորվում դեպի Փիրե¹¹⁰ նավահանգիստ: Նա Փիրեից դեպի արևելք կրակներ պիտի վառեր, որտեղ և պիտի նավակներով բռնաթափեին ապրանքը: Այդ մարդը պիտի սպասեր տասը-տասնհինգ օր: Ճանապարհորդությունը Վառնայից Պոլիս ընթանում է հանգիստ: Պոլսում կանգ չեն առնում: Մարմարա ծովը մի քիչ նեղություն է տալիս, մտնում են Դարդանել և մի առավոտ դուրս են գալիս Միջերկրական ծով: Չնայած որ մարտի կեսերն է լինում, Միջերկրական ծովում շատ ուժեղ փոթորիկ է սկսվում: Ամբողջ օրը պայքարում են փոթորիկի դեմ: Հայտնի է դառնում, որ ամբողջ օրվա ընթացքում հազիվ քսան մղոն¹¹¹ ճանապարհ են անցել: Գիշերը փոթորիկը ավելի է սաստկանում, նավում ամեն ինչ տակնուվրա է լինում, միայն ապրանքի սենյակը ջուր չի լցվում: Առավոտյան տեսնում են միայն մռնչացող ծովն ու ամպերից մթնած երկինքը: Հայրս հարցնում է:

-Դիմիտրի՛ (այդ էր կապիտանի անունը), ու՞ր ենք գնում:

-Կարապետ, ես տասը տարի է՝ արդեն այս ծովերում եմ, այսպիսի փոթորիկ չեն տեսել: Ամեն ինչ տակնուվրա է եղած: Ոչնչից գլուխ չեմ հանում, կողմնացույցն էլ չի աշխատում, երկինքն էլ ամպոտ է, ոչինչ չի երևում: Մի քանի օրից եղանակը կպարզվի, այն ատեն կի-

մանանք, թե որտեղ ենք:

Փոթորիկը տևում է տասը-տասնհինգ օր: Մի առավոտ կապիտանը խնդրում է.

-Բարեկամներ, մեր վիճակը շատ ծանր է, ամեն մարդ թող իր գլխի ճարը տեսնի: Տախտակներ շատ ունենք, ամեն մեկը թող իր համար լաստ սարքի, նավի վրա հույս մի՛ դրեք:

Կաշվե փոկերով յուրաքանչյուրը իր համար մի լաստ է կապում: Մի գիշեր, երբ, ամեն մեկը, իր լաստին կապված, ննջում է, հանկարծ կապիտանը ամբողջ կոկորդով բռռում է.

-Կարապետ, եզու՛ր հոս:

Հայրս բարձրանում է դեկի հարթակը, տեսնում է դեկին իրեն կապած կապիտանին, որը գլխի մազերն է քաշում:

-Դիմիտրի՛, ի՞նչ պատահեց:

-Հաշվի՛ր այդ փարոսի լույսերը:

Հայրս ուզում է ոտքի կանգնել, բայց նորից տապալվում է տախտակամածին, այդ դիրքով նայում է փարոսի կողմը:

-Չորս անգամ լույս է տալիս ու փակվում է, հետո մեկ անգամ լույս է տալիս ու նորից փակվում:

-Գիտե՞ս, թե այդ փարոսը որտեղ է գտնվում:

-Չգիտեմ:

-Լավ է, որ չգիտես, թե չէ դու էլ մազերդ կպոկեիր: Այդ փարոսը աշխարհի յոթ հրաշալիքներից մեկն է՝ Ալեքսանդրիայի փարոսը¹¹²:

Հայրս պապանձվում է: Առավոտյան ամեն ինչ հանդարտվում է, ծովի ալիքները հանգստանում են, բացվում է մի բարի առավոտ:

-Կարապետ, նավը կարգի՛ բերեք, գնում ենք Հայֆա¹¹³՝ վառելիք և մթերք բառնալու:

Հայֆա չեն հասնում, ճանապարհին հանդիպում է մի անգլիական նավ: Հասկացնում են, որ օգնության կարիք ունեն, բայց անգլիական նավից նրանց վրա նույնիսկ ուշադրություն չեն դարձնում: Հաջորդ նավը, որ իտալական դրոշի տակ էր, կանգնում է, ամեն անհրաժեշտով ապահովում և կողմնացույց տալիս: Հայֆա գնալու կարիքը վերանում է, ամբողջ թափով նավը սկսում է դեպի Հունաստան շարժվել: Բայց արդեն ակամա թափառումների պատճառով քսան օր կորցրել էին: Առանց խոչընդոտների տասն օրից հասնում

են Փիրե: Գիշերը մոտենում են այն տեղին, ուր պիտի վառվեին կրակները: Այսպես երեք գիշեր. ցերեկը հեռանում են, գիշերը՝ մոտենում, սակայն անարդյունք: Որոշում են, որ մեկն ու մեկը՝ հունարեն իմացող, ափ իջնի: Նավում հունարեն երկու իմացող կար՝ կապիտանը և Գրիգորը: Կապիտանը չէր կարող նավը թողնել, այնպես որ գնում է Գրիգորը: Նա մի տախտակի վրա է կապում շորերը և հրելով ու լողալով հասնում է ափ: Հագնվում է, բայց ընկնում է ոստիկանների ձեռքը: Մինչ այդ հայտնաբերվում է նաև նավը: Տանում են Փիրեի նավահանգիստը: Նավի ողջ ապրանքը էսրաբի հետ բռնագրավում են, անձնակազմին էլ՝ բանտարկում: Սկսվում է քննությունը: Հայրս ժխտում է, որ այդ ապրանքը Հունաստանի համար է, ասում է, որ պիտի տանեին Մարսել և հանձնեին ֆրանսիական վաճառականներին: Քննիչը փոխվում է: Բոլորն էլ խոսքները մեկ արած պնդում են, թե ապրանքը Հունաստանի համար չէ: Նորից են փոխում քննիչին, նոր քննիչը սկզբում կանչում է կապիտանին, հետո՝ մյուսներին, վերջում՝ հորս: Հայրս մտնում է ու տեսնում է մայրի համազգեստով մի հիսուն տարեկան հաղթանդամ մարդու՝ գլուխը հակած թղթերին: Հայրս ճանաչում է Յանիին: Մայրը առանց գլուխը բարձրացնելու հարցնում է. «*Անունդ, ազգանունդ*»: «*Հմայակ օղլու Կարապետ*»: Հայրս պիտի ասեր Հայրապետյան Կարապետ, ինչպես անձնագրում էր: Մայրը գլուխը բարձրացնում է և զարմացած նայում: «*Կարապետ*»: Գրկախառնվում են: «*Այս ապրանքը քոնն է*»: Հայրս ամեն ինչ պատմում է: «*Ախտ՝ս, ապրանքը զնաց, չեզ էլ մեկից հիևզ փարվա բանտարկություն է սպառնում*»: Յանիի ջանքերով վճարում են բռնագրավված ապրանքի պետական գինը, նավն էլ հետ են հանձնում, որ հեռանան: Հայրս ստանում է ութ հարյուր ոսկի դրամ: Հարյուրական ոսկի տալիս է անձնակազմին ու հեռանում է: Նա մնում է Հունաստանում, ապրում է Յանիի տանը, որն արդեն մի աղջիկ ու մի տղա ուներ: Հայրս հիսուն ոսկի է նվիրում Յանիին, որը Յանին շատ դժվարությամբ է վերցնում: Յանին նրան մի ժամանակավոր անձնագիր է տալիս: Հորս մոտ մնում է 150 ոսկի: Այս փողերով ոտքից գլուխ զգեստավորվում է: Հորս նման ուտող-խմող մարդ... Ազատ Հունաստանում ինչքան ուզես գինետուն, հասարակաց տուն, կանայք: Մի առավոտ հայտնում է, որ գնալու է Սե-

լանիկ¹¹⁴ եղբոր մոտ: Շատ ջերմ բաժանվում է Յանիից ու հեռանում: Գնում է Սելանիկ, որտեղ ամբողջ գերդաստանն է ապրում՝ Խաչիկը՝ փոքր եղբայրը, նրա աներձագը՝ Սեմերջյան Խաչիկը, նրա կնոջ մորաքրոջ երկու որդիները՝ Սարգիս և Հակոբ Չալիկյանները: Ինչպես նշել ենք, Սարգիսը դերասան¹¹⁵ Գրիգոր Չալիկյանի հայրն էր: Հայրս եղբորը քսան, աներձագին՝ տասը ոսկի է տալիս: Մի ամսում իր մոտ եղած հարյուր ոսկու հախից գալիս է ու մի առավոտ տեսնում է, որ մի քանի ոսկի է մնացել մոտը. Վառնա գնալուն չի հերիքում: Ստիպված Հակոբ Չալիկյանից տասը ոսկի պարտք է վերցնում այն պայմանով, որ Վառնայից մեկն ու մեկի հետ կուղարկի: Հայրս բնավորության մի հետաքրքիր գիծ ուներ. շատ էր սիրում ապրել ուրիշի փողերով և ուրիշի կանանց հետ, հետո ես այս բանի մասին դեռ կխոսեմ: Մեծ մայրս կըսեր. «*Պապադ բռած Կառկային պարտք ունի*»:

Հիմա գանք մեզ: Մի ամիս ու կես հորիցս ոչ մի լուր չունեինք, մեծ մայրս լացուկոծը զցել էր: Ես արդեն երրորդ դասարան էի փոխադրվել: «*Ի՞նչ պիտի անեն այս երկու որբերով*», թորքերեն գանգատվում էր նա Բայ Միխայի կնոջը: «*Անու՛շ մայրիկ, Բայ Միխայը գնաց Վառնա, մի խաբար կբերի*»: «*Բայ Միխայը կգա, ես այս որբերին ինչո՞վ կերակրեմ, ոչինչ չունեմ փանը, ալ պարտեզներում աղցան չմնաց, իաշեցի կերցրի*»: «*Անու՛շ մայրիկ, միևնչև Բայ Միխայի գալը միասին կուտենք*»: Այդպես էլ եղավ: Բայ Միխայը տասնհինգ-քսան օրից եկավ, բայց ոչ մի լուր հորիցս: Չարմացա, թե մեծ մայրս ինչպես չուշաթափվեց: Առավոտյան Բայ Միխայը բերեց մի պարկ ալյուր, կես փութ յուղ և այլ մթերքներ: «*Բայ Միխայ, գոնե Օնիկը գար*»: «*Վաղը չէ մյուս օրը կգա, հիմա քեզ հանգիստ պահիր*»: Մեծ հորեղբայրս եկավ՝ նամակը ձեռքին, այն մասին, որ Կարապետը Սելանիկում է: Խաչիկը նամակ էր գրել Սեդրակին. Սեդրակը մեր դիպրոզի էր՝ Ղևոնդիկի մոտ ազգականը:

«*Մա՛, փասափոսադ հավքե՛, մի շաբաթից գնում եմք Վառնա*»: Մոտավորապես 1927թ. հունիս ամիսն էր: Մոտ երեք տարի անտեր գյուղում մնալուց հետո նորից Վառնա եկանք: Մի տասնհինգ օրից կերած-խմած բուռայի նման հայտնվեց հայրս: Վարձել էինք գետնին հավասար մի հաշտ ու մի սենյակից կազմված, կավե հատակով,

առանց էլեկտրականության տուն: Տունը լուսավորելու համար օգտվում էինք նավթի լամպից: Հայրս իր մոտ մնացած մի քիչ դրամով տան համար մանր-մունր բաներ առավ: Մնացածն էլ գնաց ապրուստի վրա: Հայրս սկսեց բեռնակրություն անել, բայց առանց կառքի դժվարությամբ էր փող աշխատում: Ես ստիպված սկսեցի բուլկեղեն վաճառել: Ապրանք էի վերցնում փուռից, վաճառված ապրանքի քսանհինգ տոկոսը մնում էր ինձ: Մի հարյուր լևա շաբաթը աշխատում էի: Վաճառականներից հարյուր կգ ընկույզ էինք վերցնում, ջարդում, մաքրում ու հանձնում էինք, այդտեղից էլ էր մնում մի հարյուր լևա, մի կերպ ծայրը ծայրին հասցնում էինք:

Եկավ սեպտեմբերը, ես պետք է նորից դպրոց գնայի, հինա էլ հայերենն էի մոռացել: Եթե մեծ մայրս բուլղարերեն գիտենար, հայերեն խոսելն ալ կմոռանայինք: Գպրոցում նույն տնօրենը, նույն դասատուներն էին, ճանաչեցին ինձ:

-Գևորգ, ի՞նչ անենք քեզ հետ:

Նորից օրիորդ Նվարդը եկավ օգնության.

-Ես կվերցնեմ երկրորդ դասարան:

Այսպիսով՝ տասներկու տարեկան էի, բայց պիտի սովորեի երկրորդ դասարանում:

Հորս ընկերներից մեկը հարմար մի կառք ուներ հորս համար: Այդ մարդը պատրաստվում էր գաղթել Ֆրանսիա:

-Կարապետ, կառքը ձեռք քեզ ծախեն:

Հորս որտեղի՞ց փող: Հայրս կատակով ասում է՝ ինչքա՞ն տամ:

-Մի հինգ հազար լևա:

-Երկու օրից կպատասխանեն:

Թքում է ամեն ինչի վրա, մորից գաղտնի գալիս է մորեղբոր տունը: Գալու օրվանից ոչ մեկը նրա դուռը չէր գնացել: Հայրս տալիս է զանգը, դուռը բացում է Մերսեդեսը.

-Դայդա՛յ, արի ներս:

-Մերսեդե՛ս, պապադ տա՞նն է:

-Այո, դայդա՛յ, տանն է:

-Օ՛, բիզիմ քյովըրու (Օ՛, մե՛ր գեղացի): Նստի՛ր:

Կանանցից ոչ մեկը չի երևում, մորեղբայրը նստած թեյում էր:

-Կարապետ, ի՞նչն է քեզ բերել այստեղ:

-Մորեղբայր, գործերս լավ չեն: Առանց կառքի դժվար է:

-Ուրիշ գործ գտիր:

-Իմ գործը այդ է, ուրիշ գործ ինձ համար չկա, պիտի օգնես: Իմ ընկերներից մեկը իր կառքը ծախում է:

-Եվ ի՞նչ է ուզում:

-Հինգ հազար լևա:

-Մորեղբայրը վեր է թռչում:

- Հինգ հազար լևա՞ : Ինձ այդքան դրամ որտեղի՞ց:

-Մորեղբայր, կվերադարձնեն:

Այս ժլատ Մանթաշովը Վառնայի բանկերում մեկ միլիոն լևա դրամ ուներ:

Մերսեդեսը աչքով է անում, որ հայրս չչարունակի՝ վախենալով, որ հայրը կաթվածահար կլինի: Մանթաշովը հանում և հորս երկու հարյուր լևա է տալիս:

-Գնա՛, մի քանի օր ապրի՛, քեզ համար ուրիշ գործ ճարի:

Հայրս գլուխը կախ դուրս է գալիս, Մերսեդեսն էլ, իբրև թե ճամփու դնելու համար, նրա հետ դուրս է գալիս:

-Գ-այդա՛յ, գնա՛ «**Փոփոլեունա**»¹¹⁶ բանկի առաջ կանգնի՛ր: Կես ժամից կգամ:

Մերսեդեսի մոր մահից հետո մորաքույրը Մերսեդեսի անունով մի որոշ գումար էր դրել բանկը: Մերսեդեսը բանկից հանում է 5500 լևա և տալիս է հորս:

-Հինգ հազարով կառքը կառնես, իսկ հինգ հարյուրը հորաքրոջս կտաս:

-Գ-նանք մեր տուն, հորքուրդ կուրախանա: Հինգ հարյուրը դու կտաս: Այս հինգ հազարի մասին բան չասես, ոչ էլ ձեր տուն գալու մասին:

Գալիս են տուն: Մտնում են մութ, խոնավ սենյակը, Մերսեդեսը ընկնում է հորաքրոջ գիրկը, լաց է լինում:

-Գ-այդա՛յ, վաղը մի կարգին բնակարան կվարձես,-դրամը տալիս է հորաքրոջը,-հորքու՛ր, այս դրամը հորս դրամը չէ, մորս ժառանգությունն է:

Առավոտյան հորս առաջին գործը նոր բնակարան փնտրելն էր, այն էլ՝ ախոռով: Այդպիսի մի բնակարան ճարվեց մեր խրճիթից մի

500 մ հեռավորության վրա: Լուսավոր, էլեկտրականությամբ երկու սենյականոց բնակարան էր երկրորդ հարկում: Հայրս 4500 լւաշով կառքը գնեց: Այնպես որ մեր տանը այդ օրերին մոտ 1200 լւա դրամ կար:

Հիմա գանք ինձ: Երկրորդ դասարանում տարիքով ամենամեծը ես էի: Արդեն հայոց դպրոցներում սկսել էին բուլղարերեն ալ ավանդել: Ես ավելի շատ էի աշակերտների հետ պարապում բուլղարերենի ժամերին, քան ուսուցչուհի Մակեդոսկան, որը շատ բարի, ազնիվ ու հիանալի մի կին էր: Տարիներ հետո ես իմացա, որ նա եղել է Բուլղարիայի ընդհատակյա բանվորական կոմունիստական կուսակցության անդամ: Ես շատ մաքուր խոսում ու կարդում էի բուլղարերեն, միևնույն ժամանակ երգում էի եկեղեցու երգչախմբում: Պարոն Նախկիկյանը մի օր կանչեց ինձ ուսուցչարան: Հիմա մի քիչ ավելի կարգին էի հագնված. «*Գևորգ, սրանից հետո դու կկազմակերպես քաղման քափորը: Հիմա չե՛ր դասարանից վեց հոգի աշակերտ վերցրու՛ ու գնա՛ ժամկոչի մուր*»: Ժամկոչը մեզ հատուկ շապիկներ տվեց, որոնք հագանք, մի-մի հատ էլ սև, կլոր փայտե ձողեր, որոնց ծայրերին առաքյալների պատկերներն էին: Ժամկոչի գլխավորությամբ գնացինք ննջեցյալի տունը: Մեր փայտե սյունիկներին մեկական թաշկինակ կապեցին: Թաղումից հետո վերադարձանք եկեղեցի: Պարզվեց, որ թաշկինակների մեջ քսանական լւա կա կապած: Չնայած դասերը վերջացել էին, բայց տնօրենը ուսուցչարանում էր, ներկայացանք նրան: «*Պարոն՝ Նախկիկյան, ի՞նչ անենք այս թաշկինակներն ու դրամները*»: «*Ադոնք չե՛րն են, բաժանի՛ր րդանե՛րին*»: Այսպես շարունակվեց մինչև դպրոցս ավարտելը՝ 1929թ.:

Չորրորդ դասարանում էի, ժամկոչը եկավ. «*Գևորգ, պարոն Նախկիկյանը քեզ է կանչում*»: Գնացի ուսուցչարան, որտեղ բացի Նախկիկյանից նա և ուսուցչուհի Նվարդն էր: Ուսուցչուհին մոտեցավ ինձ, հագուստներս կարգի բերեց, օձիքս ուղղեց: «*Գնա՛նք*» ասելով՝ տնօրենը ընկավ առաջ:

Հայոց եկեղեցին մի փառավոր շենք էր, ուներ հատուկ խուց կնունքի համար. խցի առաջ կանգնած էին շատ վատ հագնված ամուսիններ: Կինը մոտ մեկ տարեկան մի երեխա էր գրկել: Մտանք խուց, քահանան և ժամկոչը արդեն պատրաստվել էին կնունքի:

Տնօրենը ինձ ասաց. «Գևորգ, այս երեխային կնքահայր կկանգնես»: Ուսուցչուհի Նվարդը մորից երեխային վերցրեց, ցնցոտիները հանեց, մի լաթ զգեց ձեռքերիս և մերկ երեխային տվեց ինձ: Սկսվեց արարողությունը: Երեխան մինչ այդ հանգիստ պառկած էր ձեռքերիս: Քահանան երեխային վերցրեց, երեք անգամ թաթախեց ավագանի մեջ և նորից հանձնեց ինձ, երեխան սկսեց բարձր ճչալ: «Կնքահայր, երեխան ի՞նչ է ցանկանում»: «Հույս, հավատ և մկրտություն»: Այս արարողությունը կրկնվեց երեք անգամ: «Կնքահայր, ի՞նչ է անումը»: Հուշեցին՝ «Գրիգոր»: Այնուհետև ուսուցչուհի Նվարդը երեխային հագցրեց նոր ու գեղեցիկ հագուստ և հանձնեց մորը: Մայրը ինձ մի թաշկինակ նվիրեց, որը ես երկար ժամանակ պահեցի՝ ի հիշատակ իմ սանիկ Գրիգորից:

Մեր դպրոցի և եկեղեցու բակը մոտ երկու հեկտար էր, այնքան փայտի, քարի, երկաթի կտորներ կային, որ բակը բանի մման չէր: Տնօրենը կանգնած նայում էր երեխեքին: Գնացի կանգնեցի նրա առաջ, նայեց ինձ. «Գևորգ, ի՞նչ կա»: «Այս աշակերտներին դասամիջոցին ի՞նչ տուր՝ պայմանով, որ զանգը չտան»: Չանգը ժամկոչն էր տալիս: Ծափ տվեց, երեխեքը հավաքվեցին նրա շուրջ՝ մոտ 120 երեխա. «Գևորգը ինչ ասի, կլսեք»: «Երեխեք, մեր այս բակը բանի մման չէ: Չեզ տեսնեմ, ամեն ինչ հավաքեմք, հիմա ես դույլեր կբերեմ»: Ժամկոչից դույլեր խնդրեցի, ավելի ուժեղ տղաներին մեկական դույլ տվի, մեկն էլ ես վերցրի: Երեխաները մրջյունի մման սկսեցին հավաքել: Կես ժամ չանցած՝ բակը մաքուր էր, ուսուցիչները, որոնք չէին լսել զանգի ձայնը, բակ էլան: Տեսան, որ երեխաները բակը մաքրել են և հավաքվել են տնօրենի շուրջը: Ուսուցչուհի Նվարդը, պարոն Նախկիկյանին նայելով ասաց. «Պարոն՝ Նախկիկյան, լավ գործ ես բռնել»: «Ես չեմ, Գևորգի գործն է»: «Այդքան չար էր, բայց ինչքան խելոք երեխա դարձավ»:

Արդեն վերջին ամիսն էր. 1929թ. մայիսի վերջին ավարտեցի դպրոցը:

Արհեստի գնալս

Հայրս վատ չէր վաստակում, բայց մեծ մորս ձեռքը շատ քիչ դրամ էր հասնում: Սկսեցի նորից հրուշակեղեն ծախել: Արդեն երեք ամիս է՝ այդ գործով էի զբաղվում, երբ մի օր մեծ մայրս պայ-

թեց. «Գևորգը մինչև երբ «սիմիթ, գերեզ» պիտի ծախի, արհեստի չե՞նք ուղարկելու: Դու ե՞րբ պիտի տունն ու տեղը մարդավարի պահես: Հա՛, Հմայակը պրոգիմնագիտ պիտի երթա»: Իմ պրոգիմնագիտ գնալու տարիքն արդեն անցել էր: «Մի ամիս էլ թող անցնի, հետո արհեստի կրանք»:

1929թ. սեպտեմբերին արհեստի գնացի, սկզբում՝ որպես դերձակ: Միառժամանակ աշխատեցա, բայց դուրս չեկավ: Գնացի կոշիկի երես կարողի մոտ, մի վեց ամիս աշխատեցա, բայց դա էլ դուրս չեկավ: Նույն արհեստանոցում մի քանի կոշիկ կարողներ կային: «Վարպե՛տը Արարակի, ուզում եմ կոշիկ կարել սովորել, ինչ մտորդ աշակերտը չե՞ս ընդունի»: Չերկարացնենք, դարձա վարպետ Արտակիի աշակերտը: 1930թ. մի բուլղար կոշկակար ընդունվեց մեզ մոտ, առաջին օրն իսկ ինձ համակրեց ու մի քանի օր հետո ինձ տարավ РМС (Рабочий Младенческий Союз), հայերեն՝ ԲԵՄ (Բանվորական երիտասարդական միություն), որը Բուլղարական բանվորական կոմունիստական ընդհատակյա կուսակցության ճյուղն էր: Ամեն չորեքշաբթի՝ ժամը վեցից հետո, հավաքվում էինք ընկերներից մեկն ու մեկի տանը, որտեղ խոսում էինք Մարքսի, Էնգելսի, Լենինի ուսմունքի, Ստալինի և Սովետական Միության, համաշխարհային հեղափոխության մասին, մի խոսքով, առաջադեմ¹¹⁷ խմբակ էր: 1932թ. ես արդեն այդ կազմակերպության ակտիվ անդամն էի և մասնակցում էի բոլոր գործողություններին¹¹⁸: Գիշերները թռուցիկներ էինք ցրում, կպցնում պատերին կամ գցում շքամուտքերում: Դրոշմանիշներ էինք ծախում, որոնց եկամուտը գնում էր քաղաքական բանտարկյալների օգնության ֆոնդին: Երկու անգամ բռնվեցի ոստիկանության կողմից: Քաղմասի պետը հորս ծանոթ դուրս եկավ, բաց թողեց, երկրորդ անգամ քաղմասի ճանապարհին ընկերներս հանդիպեցին, համոզեցին ոստիկանին, և նա ինձ բաց թողեց:

Մի քանի տարի վարպետ Արտակիի մոտ աշխատելուց հետո աշխատանքի անցա բուլղար վարպետի՝ Գեորգիի մոտ:

Գշտուհին (Քնրուշիկ)՝ ապագա կինս

Մի քիչ հետ գնանք: 1930թ. մեր տուն էր գալիս Ղևոնդիկի տասը տարեկան աղջիկը: Մեծ մայրս երես չէր տալիս: Փոքրիկը չէր հասկանում, ինձ Գևորգ եղբայր էր անվանում: Ես նրան փոքր պատմ-

վածքներ, փոքր վեպեր էի տալիս կարդալու: Ինձ հետ շատ էր կապված: Ու՞մ մտքով կանցներ, որ հետագայում պիտի սիրենք իրար ու այնքան շատ տառապենք: Անանիան արդեն ուներ երկու աղջիկ՝ Մարիամը՝ ծնված 1927թ. և Եղիսաբեթը՝ ծնված 1929թ.: Այդ տարիներին ես չեմ տեսել, որ Ղևոնդիկը մեր տուն գա: Ես երբեմն այցելում էի նրան, քանի որ հարևաններ էինք:

Թուրք կինը

1932թ. մի իրիկնադեմ աշխատանքից նոր էի վերադարձել, թախտի վրա պառկած էի, մեծ մայրս գուլպա էր հյուսում, փոքր եղբայրս տանը չէր, դուռը կամաց թակեցին:

-Մտե՛ք:

Մի թուրք կին՝ դեմքը բաց, կաթոլիկ մայրապետի նման հագնված, միայն թե սև շորերով, ներս մտավ:

-Հայիր օլսուն (բարև),-ասաց ու նստեց աթոռակին՝ ճիշտ մեծ մորս դիմաց:

Նայեցա. սիրունատես մի կին էր, մոտ երեսուն տարեկան:

-**Հանրմ, նե իստիորսուն** (ի՞նչ ես ուզում):

Նայեցա, աչքերից կաթիլ-կաթիլ արցունք է կաթում, հետո սկսեց հեկեկալ:

-Հանու՛մ, հանգստացի՛ր, ի՞նչ է պատահել:

Քիչ հանգստանալուց հետո խոսեց:

-Դու Կարապետի մա՞յրն ես:

-Հա՛, ի՞նչ կա:

Ես հասկացա, որ սա հորս սիրուհիներից մեկն է:

-Ես Կարապետին սիրում եմ, մեկ տարուց ավելի է, որ միասին ենք, նա խոստացավ, որ կամուսնանա հետս, ես քրիստոնեություն կընդունեմ, կմկրտվեմ: Քեզ վարդի պես կպահեմ և երկու որբերին ալ կպահեմ: Միայն համաձայնվիր ինձ հարս առնել:

Ես նայում էի, թե ինչպես պիտի վերջանա այս ամենը: Տեսա միայն, թե ինչպես ձագերին պաշտպանող մի էգ հովազի նման մեծ մայրս հարձակվեց կնոջ վրա ու բռնեց նրա ուսերից և իրենից մի գլուխ բարձր կնոջը դուրս շարտեց.

-**Պաղբե՛, օռո՛սփու**, միայն թուրք հարսն էր պակաս:

Մենք ապրում էինք երկրորդ հարկում, տակն էլ ախոռն էր, ունեինք մի տախտակե աստիճան՝ յոթ-ութ կողիկներով: Բարեբախտաբար, աստիճանները կողքի էին, թե չէ թուրք կինը աստիճաններից ցած կզլորվեր քարե սալահատակի վրա: Կինը կռնակի վրա ընկավ փոքր հաշտը: Ես թռա տեղիցս, բռնեցի մեծ մորս, որը պատրաստվում էր նրան աստիճաններից վար գցել: Մեծ մորս հրեցի սենյակ: Թուրք կնոջ ձեռքերից բռնեցի և իջեցրի աստիճաններից: Ես թուրքերեն լավ գիտեի և թուրքերեն ասացի.

-Գնա՛, քանի ողջ ես:

Ու տարա դեպի բակի դուռը:

Կինը գոռում էր.

-Բեն Կարապետի ալաջայմ (Ես Կարապետին պիտի առնեմ):

Բարձրացա վերև: Մեծ մորս մագերը արձակ էին, երեսը կատած էր, շուրթերը դողում էին: Վախեցա, որ կխելագարվի, ջուր բերի, երեսը լվացի, թախտին պառկեցրի:

-Նենե՛, հանգստացի՛ր:

Մի քիչ հետո նայեցա, քնել էր, ես էլ թախտին թիկնեցի: Մոտ մի ժամ անցել էր, երբ նա ելավ, վարսերը հավաքեց, նստեց: Նայեցա, որ հանգստացել էր: Պատահեց սոսկալին. հայրս, որ տուն շուտ եկող չէր, հակառակի պես բացեց դուռը ու կանգնեց շեմին: Հովազը թռավ տեղից, թքեց երեսին ու փոքրիկ բռունցքներով տու՛ր թե կտաս: Հայրս շշմեց, բռնեց մոր ձեռքերը և տարավ, նստեցրեց թախտին:

-Մա՛, ի՞նչ է եղել:

Մեծ մորս լեզուն բռնվել էր, խոսել չէր կարողանում: Միայն կարողացավ ասել.

-Շու՛ն, ինչու՞ չլսեցի դերվիշին ու չխեղդեցի քեզ: Շու՛ն:

Հայրս մոր ձեռքերը չէր թողնում:

-Գևորգ,-ես արդեն տեղիցս վեր էի կացել,-ի՞նչ է պատահել:

-Մի ժամ առաջ մի թուրք կին էր եկել, ուզում էր հարս գալ մեզի:

Հիմա հայրս գույնը գցեց: Ես թողեցի հեռացա: Իրիկունը ուշ գնացի: Ամեն ինչ խաղաղ էր: Այնուհետև թրքուհուն էլ չտեսանք. թե ինչպես հայրս փակեց այս հարցը, չիմացանք:

Խորթ մայրս

Նոր էր թորք կնոջ պատմությունն ավարտվել, երբ նորից սև ամպեր կուտակվեցին մեր տան վրա: Պիտի ասեմ, որ մեծ մայրս շատ հավատացյալ կին էր և շատ հակառակ էր ամուսնալուծությանը: Ամեն կիրակի նա եկեղեցի էր գնում, պահում էր բոլոր պատերը, ամեն գատկի և ծննդի հաղորդություն¹¹⁹ էր առնում: Ուներ խոստովանահայր՝ տեր Օհաննեսը, որը իր ամենամոտ ազգականերից մեկն էր: Տեր Օհաննեսի տղան հետագայում Վառնայում քահանա դարձավ՝ տեր Վրթանեսը: Մի կիրակնօրյա առավոտ՝ նախաճաշի ժամանակ, մեծ մայրս նայեց ինձ և ասաց. «*Ե՞րբ այսքան մեծացար: Գևորգ, պապադ կին է քերելու*»: Ես մի թեթև լսել էի, որ հայրս մի ամուսնացած կնոջ հետ կապ է հաստատել: «*Նե՛նե՛, հա՛յ է, թե՛ թորք*»: «*Հայ է, ամուսնացած է, երկու փոքր աղջիկ ունի*»: «*Ես չգիտեմ, ինչպե՞ս կըլլա, որ ամուսնացած կնոջը փուն քերի*»: «*Պապադ ամեն ինչ կանի, նրանից ամեն ինչ կսպասվի*»: Այդ նույն օրը ծովային այգու երկրորդ բաժնում ընկերներով կանգնած զրուցում էինք, ընկերներիցս մեկը՝ Մարտիրոսը, որը մեր տուն շատ էր գալիս և ճանաչում էր հորս, ասաց. «*Գևորգ, հայրդ է գալիս մի կնոջ հետ*»: Ուզեցա խույս տալ հորս հետ հանդիպումից, բայց արդեն ուշ էր: Հայրս իր նոր սիրուհու հետ կանգնեց առջևս: «*Արշալույս, իմ մեծ փղան է*»: Տիկինը երկարացրեց ձեռքը: Ես ստիպված բարևեցի: Ծիշտ են ասում, թե կինը գիշերը ավելի գեղեցիկ է երևում: Արշալույսը շատ գեղեցիկ, բարձրահասակ, լավ կազմվածքով, հազիվ քսանհինգ տարեկան կին էր:

Մի երկու խոսք այդ կնոջ մասին. տասնյոթ տարեկան հասակում ամուսնացել էր մի շատ տգեղ մարդու հետ: Կաշխատեմ մի քիչ նկարագրել այդ մարդուն. չափից ավելի սև, կարճահասակ, կճատ քթով, կոշտ մազերով, եթե խառնվեր հաբեշների մեջ, չէր ջոկվի: Ունեցել էին երկու աղջիկ: Կինը գնալով գեղեցկանում էր, իսկ նա՝ տգեղանում:

Նրանց ընտանիքը հեղափոխությունից հետո Պյատիգորսկից փախչում է Երևան, իսկ երբ այստեղ էլ իշխանությունը անցնում է կարմիրներին, գալիս են Վառնա: Ութ տարվա համատեղ կյանքից հետո ի հայտ է գալիս հայրս: Հանդիպում են Գեմակ Ռահան անու-

նով մի միջնորդ կնոջ տանը: Միառժամանակ հետո Արշալույսը վերցնում է իր վեց ամսական աղջկան՝ Անոյին, հեռանում է ամուսնուց և գնում Ճեմակ Ռահանի տունը: Մեծ աղջկան՝ Աշխենին, թողնում է ամուսնուն: Ամուսինը շատ է ջանում վերադարձնել կնոջը, բայց՝ ապարդյուն: Հայրս արդեն իր արածը արել էր:

Մի քանի խոսք հորս մասին. բարձրահասակ, ցորմագույն մաշկով, սև վարսերով, շատ խնամքով հարդարված բեղերով գեղեցիկ տղամարդ էր: Այդ կնոջը խելքահան էր արել: Այդ տարիներին Բուլղարիայում դժվար էին ամուսնալուծվում: Եկեղեցին միայն երեք դեպքում էր ամուսիններին բաժանում. եթե ամուսիններից մեկն ու մեկի բերանից վատ հոտ էր գալիս, եթե տղամարդը սրիկա է, և եթե կինը անհավատարիմ է: Արշալույսին բաժանեցին երրորդ հոդվածով և գրկեցին հինգ տարի ամուսնանալու իրավունքից:

Գնաք մեր տուն. մեծ մայրս ինձ նեղն էր զգում.«*Գևորգ, ի՞նչ գիտես այդ կնոջ մասին*»: Ես ստում էի.«*Ոչինչ չգիտեմ, բայց որ հայրս այդ կնոջ հետ է, գիտեմ*»: Այսպես անցնում էին օրերը, մի օր չորսով ճաշում էինք: Ճաշը վերջացրինք, մեծ մայրս սուփրան հավաքեց: Հայրս ուզում էր գնալ, բայց մեծ մայրս նրան պահեց.«*Նսրի՛ր, խոսելի՛ք ունեն*»: Ես շատ շուտ գլխի էի ընկնում, թե երբ էր փոթորիկ լինելու, բայց այս անգամ չկռահեցի, որ փոթորիկ պիտի պայթի: «*Կարապետ, այսօր մի մարդ եկավ Կուն*»: Ես նորից չհասկացա: Հայրս հարցրեց՝ ո՞վ էր: «*Նա, որի ընկալանքը քայքայել էս, կնկան գլխահան էս արել. երկու երեխաներին որք էս թողել. Տո՛ շուն, ուրիշ կին չկա՞ր, որ այդ խեղճուկրակ մարդու Կունը քանդեցիր: Ամուսինը երեխայի պես լաց էր լինում, որ քեզ համոզեմ՝ չեռ քաշես իր կնոջից*»: «*Ինչ որ եղել է, եղել է, ես կընդունեմ*»:

«*Տո՛ չբավեց սև չյուն բերես գլխիս. առնեն այս դառակը, փորդ խտեմ, միանգամից պրծնեմ. եթե ես չսպանեմ, այդ մարդը քեզ սպանելու է, եթե կինը մի քանի օրից Կունն չվերադառնա*»: «*Այդ կինը ոչ մի տեղ չի գնալու, այստեղ հարս պիտի գա, իր վեց տարեկան աղջկանով*»: «*Եթե այդ կինը այստեղ գա, ես այս տնից կերթամ*»: «*Ոչ մի տեղ ալ չես գնա, այդ կնոջը եկեղեցին բաժանեց ամուսնուց, փոքր աղջկան Կունը մորը, իսկ մեծ աղջկան՝ հորը, այնպես որ ամեն ինչ վերջացած է*»: «*Ա՛խ, շուն, այդ տեր Օհաննեսի արած գործն է, այդքան շուտ բաժանեց*»:

Մյուս օրը եկավ Մերսեդեսը. այն օրվանից հետո միշտ գալիս էր: Ես ալ տանն էի, հայտնի էր, որ հայրս է ուղարկել.

-Հորքու՛ր, արի փեշիդ քարերը թափի՛ր, այդ կնոջը թող բերի, այն օրը մեր տանն էին:

Մեծ մորս շուրթերը սկսեցին դողալ.

-Ի՞նչ, Կարապետը ձեր տա՛նը, ինչպե՞ս չի ամաչում այդքան բանից հետո:

-Հորքու՛ր, իմ խաթեր համար ների՛ր, հորս էլ, անցած-գնացած բան է: Դարձածին ալ կյանքը կյանք չէ: Այս կինը լավն է, երիտասարդ, աղվորիկ, քո գործն ալ կթեթևանա: Հորքու՛ր, արի իմ խաթեր համար համաձայնվի՛ր:

Ես արդեն տասնութ տարեկան էի.

-Նենե՛, Մերսեդես քույրիկը ճիշտ է ասում, էլ կռիվ մի՛ սարքի, հայրս ալ տիտիկ կանի:

Մեծ մայրս մտածեց, մտածեց, նայեցա, շուրթերը չեն դողում, հանգստացել էր.

-Ճարս ի՞նչ, թող բերի:

Ինչպես երևում է, Մերսեդեսը հորս դրամ էր տվել: Հայրս մեզ ոտքից գլուխ հագցրեց, մի բարձր բացովի սեղան բերեց, վեց հատ աթոռ, ափսեներ՝ տարբեր չափսերի, մեր հին կահույքը դուրս գցեց: Մի կիրակի (նախազգուշացված էինք) ամենաշքեղ ֆայտոնով եկան Մերսեդեսը, խորթ մայրս՝ Արշոն և հայրս: 1933թ. էր: Այսպես մորս մահվանից 8 տարի հետո մեր տուն եկավ խորթ մայրս: Հորիցս մոտ քսան տարով փոքր, ինձնից հինգ տարի մեծ: Այնպես, որ մամա չէր ասվի, որոշեցի Արշո քույրիկ ասել:

Անոյի հիվանդությունը և մահը

Անոն մորն էր նման, շատ սիրուն երեխա էր: Նա շատ շուտ կապվեց ինձ հետ, ինձ ապերիկ էր ասում: Վեց ամիս էր անցել մեր տուն գալուց հետո: Մի առավոտ Անոն իրեն վատ զգաց, բարձր ջերմություն ուներ: Կարծեցինք, թե մրսած է, բայց նա երրորդ օրը կորցրեց գիտակցությունը: Փոքրիկի վարդագույն շուրթերը հագիվ էին շարժվում, ամբողջ տունը տազնապի մեջ էր: Առավոտ շուտ գնացի Մերսեդեսի մոտ. «Մերսեդես՛ս քույրիկ, Անոն մեռնում է, երեխայի բժիշկ է

պեղք»։ Մերսեղեսը հազնվեց, դուրս եկանք, նստեցինք առաջին հանդիպած ֆայտոնը ու գնացինք մանկական բժշկ Կաննի տունը։ Կես ժամ անց արդեն մեր տանն էինք։ Բժիշկը զննեց երեխային, շարժեց երեխայի գլուխը։ Գլուխը կարծես ձուլված լիներ իրանին, չէր շարժվում։ Դեղատոմս գրեց։ Մերսեղեսը մնաց, ես դուրս եկա բժշկի հետ։ Կառքը սպասում էր մեզ։ Բժշկի տան առաջ իջանք, կառքը գնաց։ Բժիշկը տխուր նայեց երեսիս և հարցրեց.

-Ի՞նչդ է։

-Վեց ամիս առաջ հայրս ամուսնացավ։ Կինը այս երեխային հետը բերեց։

-Ոչ մի բան չի փրկի։ Ծանր մենինգիտով հիվանդացած է, չորս օրից կմահանա։

-Իսկ այս դեղատոմսը։

-Բժիշկը մի բան պիտի գրի՞, թե՞ ոչ։ Վերցրու՛, չնայած որ նա ոչինչ չի կարող կուլ տալ։

Ուզեցի դրամ տալ, ասաց.

-Վճարված է։

Դեղատանը հայտնեցին, որ մի ժամից գամ։ Գնացի քաղաքային այգի, ուր գողտրիկ շատ տեղեր կային։ Նստեցի և դառը լաց եղա։ Ի՞նչ մեծ դժբախտություն մեր տան համար։ Վերցրի դեղը և գնացի տուն։ Բոլորն էլ տանն էին, ոչ մեկը ոչինչ չհարցրեց։ Արշո քույրիկը, մեծ մայրս ու Մերսեղեսը նստած լաց էին լինում, պարզ էր, որ ամեն ինչ գիտեին։ Չորս օրից արդեն փոքրիկ հրեշտակը մահացավ։ Այս անգամ Մանթաշովը իր կնոջ հետ եկավ թաղմանը։

Միհրանը (այս էր Անոյի հոր անունը), լսելով Անոյի մահվան մասին, կորցրել էր հոգեկան հավասարակշռությունը։ Նա հայտարարել էր, որ պիտի սպանի Կարապետին։

Մի քանի օր անց տեսա, որ հայրս խոհանոցում մի վեցհարվածանի է փորձում։ «Հայրի՛կ, ի՞նչ կընես»։ «Գնա՛, քո գործը չէ»։ Հայրս զինվեց, Միհրանը վախեցրել էր նրան։ Բայց ես գիտեի, որ Միհրանը մարդ սպանողը չէ։ Մի տարի հետո ես վերցրի այդ վեցհարվածանին՝ իր տասներկու փամփուշտներով։

*
* *
*

Մի քիչ հետ գնանք՝ 1932թ.: Ես շարունակում էի կոշկակար աշխատել: Միևնույն ժամանակ ՌԵՄՍ-ի անդամ էի: Գործադուլ էինք կազմակերպում: Ես ակտիվորեն մասնակցում էի այդ գործին: Միևնույն ժամանակ «Կայծ»¹²⁰ կազմակերպության անդամ էի: Պիտի ասեմ, որ Վառնայում կար չորս կուսակցություն՝ *Ազգային միությունը, Հնչակյանների, Ռամկավարների և Գաշնակցական*: Առաջին երեք կուսակցությունները Խորհրդային Հայաստանի համակիրներն էին, վերջինը՝ հակառակորդը: «Կայծը» Հնչակյան կուսակցության երիտասարդական միությունն էր և միավորում էր մոտ 100 տղաների ու աղջիկների: Նոր կազմակերպություն էր, որը ղեկավարում էր Հրայրը:

Մի տարի անց Փարիզից Սոֆիա պատգամավոր եկավ, որը կազմակերպեց Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ): Այդ պատգամավորը եկավ նաև Վառնա: Այստեղ ևս սկսեց իր կազմակերպչական աշխատանքը: Ես առաջիններից էի, որ օգնում էի նրան: Երեք կուսակցության առաջնորդները¹²¹ անցան ՀՕԿ-ի կողմը և օգնում էին այն կազմակերպելու գործին: Վեց ամիս հետո ՀՕԿ-ն արդեն ուներ չորս հարյուր անդամ: ՀՕԿ-ի երիտասարդական խմբակում ընդգրկված էին արդեն մոտ հարյուր աղջիկ և հիսուն տղա: Տոն և կիրակի օրերին կազմակերպում էինք արշավներ, երեկույթներ, պարահանդեսներ, դրամ ձեռք բերելու համար անում էինք ամեն ինչ: Ունեինք ակումբ, բայց չունեինք աթոռ-սեղան և այլ կահույք. դրամ էր պետք: Մի քիչ էլ առաջնորդներն օգնեցին: Մի քանի ամիս անց ակումբում ամեն ինչ կար, նույնիսկ՝ ռադիոընդունիչ, որի միջոցով Հայաստանից լուրեր էինք ստանում: Մեծ իրադարձություն էր՝ իբրև ներգաղթի կոմիտեի պատգամավոր, Շահվերդյանի¹²² Վառնա գալը: Այդ իրադարձությանը՝ առաջին ներգաղթի¹²³ կազմակերպմանը, մասնակցեցին բոլոր վերոհիշյալ կուսակցությունները՝ բացի դաշնակներից, որոնք աշխատում էին խանգարել ներգաղթի կազմակերպումը: Վառնայի ամենամեծ սրահում՝ ծովային կազինոյում, Շահվերդյանի պատվին կազմակերպեցինք մի շքեղ պարահանդես: Ծովային կազինոն փոքր եղավ, քանի որ այդ պարահանդեսին մասնակցում էր Վառնայի ամբողջ հայությունը:

Նկարագրեմ Շահվերդյանին. միջահասակ, սպիտակող մազերով, ամրակազմ, աշխույժ աչքերով, շատ շարժուն մարդ էր: Ես Անդրանիկ գորավարին չեմ տեսել, բայց հայրս նրա հետ ծանոթ է եղել, ասում էր. «**Հա՛ գորավար Անդրանիկին ես տեսել, հա՛ Շահվերդյանին**»:

Շահվերդյանը մոտ հարյուր երիտասարդների ուղեկցությամբ մտավ սրահ: Կարծես ռումբ պայթեց, ամենքս «կեցցեց» էինք գոչում: Նրան երկու սպիտակ աղավնի տվեցին, եկավ սրահի մեջտեղը և ճառ արտասանեց, նվագախումբը «Ինտերնացիոնալը» նվագեց, նորից պայթեց «կեցցեն» (*ես հիշեցի իմ ազոսավը*):

1935թ.

Արշո քույրիկի գալուց հետո մեր տանը շատ բան փոխվեց: Մենք հարթուկ չունեինք, բոլորս մի ամանից էինք ուտում: Այդ բոլորը մնաց անցյալում: Եթե Անոյի մահը չըլլար, ավելի երջանիկ կապրեինք:

Չմայած մեծ մորս չկամությանը՝ այս տարիների ընթացքում Ղևոնդուհու աղջիկը շատ կապվեց Արշալույսի հետ: Նա շաբաթը մի քանի անգամ գալիս էր մեր տուն: Աղջիկը օրեցօր մեծանում ու գեղեցկանում էր: Իմ մեջ սկսեց մի բան կատարվել: Քնքուշիկի՝ մեր տանը եղած ժամանակ մի բան ինձ կարծես քաշում էր իր կողմը: Ապագա աներձագս ՀՕԿ-ի անդամ էր և մասնակցում էր մեր արշավներին: Տեսարժան վայրերը այնքան շատ էին, որ ամեն կիրակի մի տեղ գնում էինք: Քնքուշիկը ինձնից չէր պոկվում: Ապագա աներձագս շատ անտարբեր էր մեր մտերմության նկատմամբ, այն ժամանակ մեր մեջ ոչինչ չկար: Ղևոնդիկի շատ մոտ ազգականի՝ Սեդրակի տասը տարեկան աղջիկը՝ Արմենը, միշտ մեզ հետ էր լինում: Մայիսի 11-ին որոշվեց երկու օրով՝ շաբաթ, կիրակի, Ալաջա վանք գնալ: Ալաջա մոնաստիրը (Նախշուն վանք) Վառնայի ամենագեղեցիկ վայրերից մեկն էր: Երկու ճանապարհ ունեք. մեկը մոտ 20 կմ անցնում էր ծովափով՝ «Ոսկե ավազների»¹²⁴ աջ կողմով: Պետք էր մեկ կմ գառիվայր բարձրանալ: Երկրորդը՝ մոտ 1.5 կմ, բայց մի քիչ վտանգավոր ճանապարհ էր, պետք է անցնեինք Դոբրուջա¹²⁵ թաղամասով, որտեղ կապը կտրած երիտասարդները կռիվ էին սար-

քում: Որոշվեց գնալ Դոբրուջայով, պատճառը այն էր, որ ՀՕԿ-ի ամբողջ երիտասարդությունը և մի քսան ընտանիք իրենց երեխաներով մասնակցեցին այս արշավին: Ուրբաթ օրը՝ ժամը տասնութին, ճանապարհ ընկանք: Արտավազդի՝ Հաճիի հայրը իշու կառք ուներ, այդ էլը մի ջորու շափ կլիներ, կառքն էլ՝ մի ֆուրգոն, այնպես որ բոլոր իրերը լցրինք կառքը, և մեր ձեռքերը ազատ մնացին: Մի երկու կմ էր մնացել Դոբրուջա թաղամասին, երբ սկսվեց գոռում-գոչյունը: Հրամայվեց կանգ առնել, ու մտածեցինք մեր անելիքի մասին: Որոշվեց, որ ընտանիքավորներն ու Հաջին իր կառքով՝ Լևոն Սողիկյանի գլխավորությամբ, առաջ անցնեն և դուրս գան թաղամասից, իսկ մի հիսունից ավելի երիտասարդներ մնան՝ կապը կտրածներին դիմավորելու: Այդպես էլ արվեց: ՀՕԿ-ի անդամներից ամենահարուստը՝ Մեր Գալեջյանը, երկու հարյուր հիսուն լևա¹²⁶ հանձնեց Յաբանի¹²⁷ Գրիգորին: *(Այս դրամով խաղաղությունն կնքեք):*

Ես էլ այդ կովող խմբի մեջ էի, չնայած որ ամենաթույլն էի: Մի տասը բույս հետո մենք ալ առաջացանք: Սկսանք ցանկապատերից փայտեր հանել, զինվեցինք: Գոռում-գոչյունը սաստկանում էր: Մերոնց մեջ շատ ուժեղ տղաներ կային: Այդ կվարտալը¹²⁸ ձգվում էր ճանապարհի երկարությամբ մի երեք կմ: Մթնշաղ էր, ծովի կողմից մի թեթև լուսավորում էր լուսինը: Դոբրուջացիները արդեն մեր թիկունքում էին: Գոռոցների մեջ մի ծանոթ ձայն լսեցի: Կարծեցի, թե իմ կողքին աշխատող տղայի ձայնն էր: Ես խմբի մեջտեղում էի, կամաց-կամաց հետ մնացի: Արդեն իրարից տասը մետրի վրա էինք: Նրա անունը Խրիստո էր, Սպաս էինք ասում: «Սպաս»:
«Չո՛, արմենե՛նե՛ց»:

Այդպես էին անվանում ինձ: Պաշարեցին մեզի. «Բարև»:
«Բարև»:
Ողջունեց ձեռքսեղմումով, կարծես ոչինչ չէր պատահել: Ամբողջ խումբը ընկավ առաջ: Գրիգորը դրամը հանձնեց ինձ, որ տամ ընկերոջս: Ես առաջարկեցի, բայց ընկերս մերժեց՝ *չե՞ս ամաչում*: Այդպես միասին թաղամասից դուրս եկանք: Դոբրուջացիները ցրվեցին: Մեր խումբը ամբողջ թափով ընկավ առաջ, որ հասնի մյուսներին: Տղամարդկանց մի մասը Սողիկյանի գլխավորությամբ, որը սարսափելի ուժեղ մարդ էր, հետ էր գալիս՝ մեզ օգնելու: Նրանք տեսան, որ կովի ոչ մի հետք չկա, բացատրեցինք, որ ամեն ինչ հարթ է անցել: Ես արդեն դրամը

հանձնել էի Գրիգորին: Լևոնը հարցրեց. «Դրամ արվի՞ք»: Գրիգորը հայտնեց, որ դրամը իր մոտ է. «Լավ, արու՛ր ինձ, վաղը մի ոչխար կարձնենք, խորոված կսկենք»: Մինչ այդ արդեն հասանք գլխավոր խմբին: Ի՞նչ մեծ ուրախություն էր, որ այս դեպքը վերջացավ առանց կռվի: Ես չէի ուզում, որ իմանան, որ կռվի խափանողը ես եմ եղել, բայց իմացվեց. այդ արշավի հերոսը ես էի:

Գիշերվա ժամը տասին հասանք տեղ: Բոլորս հնձվածի պես ընկանք գետնին: Մի ժամ հանգստանալուց հետո սկսեցինք վրանները խփել: Ունեինք երեք վրան. մեկը՝ շատ մեծ, երկուսը՝ փոքր: Մեծը ակունքինն էր: Ճաշելուց հետո կանայք և երեխաները անցան վրանների տակ, իսկ մյուսները տեղավորվեցին, ով ինչպես կարող էր: Չեմ երկարացնելու. հաջորդ օրը անցավ շատ ուրախ: Ոչխարը բերին, յուրաքանչյուրիս հագիվ մեկական կտոր խորոված հասավ, չնայած որ մոտ վաթսուն կիլոգրամանոց կենդանի էր, գնելու համար դրամ էին ավելացրել:

Մայիսի 13-ին քունս չէր տանում, Քնքուշիկի պատկերը աչքիս առաջից չէր հեռանում:

Տառապանքների սկիզբը

Արշալույսն արդեն բացվում էր: Ելա գնացի այն բարձր բացատը, որտեղից երևում էին «Ոսկե ավազները» և կապույտ ծովը: Նստեցի և սպասեցի արևածագին: Արևը ծովից էր դուրս գալիս, երկինքն արդեն կարմրել էր: Մի խշշոց լսեցի թիկունքումս: Նայեցա, ինձնից մի քանի քայլի վրա կանգնած էր Քնքուշիկը, վեր ելա, նայեցա, աչքերը փայլում էին:

-Ինչու՞ չես քնացել:

-Քունս չէր տանում, դու ինչու՞ չես քնացել:

Ավելի մոտեցավ ինձ: Նայեցա, աչքերը արցունքոտվում են:

-Քնքուշիկ, ի՞նչ է եղել:

-Դու չե՞ս հասկանում, ինչքան կսիրեմ քեզի:

Ես գիրկս առա նրան ու ջերմ համբուրեցի: Նա համբուրեց երկու այտերս:

-Քնքուշիկ, կյանքիցս ավելի շատ կսիրեմ քեզի:

Այստեղ սկսվեց մեր սերը, որը տևեց հինգուկես տարի: Երկուսս,

կողք կողքի նստած, նայում էինք արևածագին: Արևի շողերը խաղում էին ծովի կապույտ ալյակների վրա: Հանկարծ հայտնվեց Արմենը ու նայեց մեզ:

-Ի՛նչ լավ եք նստել:

Նստեց կողքերնիս: Երեքով նայում էինք ծովի վրա շողշողացող արևի ցոլքերին: «*Քնքուշիկ, գնացե՛ք, հիմա եղբայրդ կփնտրի ձեզ*»: Նրանց հեռանալուց հետո, ես երկար մնացի այստեղ: Մտածում էի այն խոչընդոտների մասին, որ կային մեր միջև: Գիտեի, որ ոչ մի դեպքում մեծ մայրս, հայրս չէին համաձայնի, որ ես ամուսնանամ Ղևոնդուհու աղջկա հետ: Ես էլ գնացի հավաքատեղին. բոլորը խառնվել էին իրար, նախաճաշի պատրաստություն էին տեսնում: Ապագա աներձագս. «*Ծո՛, ու՞ր էիր, քեզի կփնտրեի, չպիտի՞ նախաճաշեք*»: «*Երկու աղջիկ կա, թող պատրասարեն*»: Նախաճաշից հետո երիտասարդները անտառով մեկ ցրվան: Քնքուշիկը և Հերմինեն ուրախ-ուրախ զրուցում էին, պարզ էր, որ Հերմինեն ամեն ինչ գիտեր: Այդ օրը շատ ուրախ անցավ, ես անչափ երջանիկ էի գգում ինձ: Քաղաք վերադարձանք ծովափով: Ես ու Քնքուշիկը հանդիպում էինք շաբաթը մի քանի անգամ: Մեր սիրած վայրը ծովային այգու երրորդ մասն էր: Շատ անգամ հանդիպում էինք Սիլկային և Յովկոյին, որոնք շատ գեղեցիկ գույզ էին: Նայում էինք իրար ու ծիծաղում: Իսկ արշավներին մասնակցում էինք երեքով: Փնտրում էինք առանձին մնալու առիթներ: Մի կիրակի օր միասին փախանք Փնտրչիք: Դա Վառնայի մոտ գտնվող մի գեղեցիկ զբոսավայր էր, տեսնեն՝ Սիլկան և Յովկան էլ են այնտեղ: Ժպտալով բարևեցինք իրար: Մնացինք մինչև ուշ առտին: Վերադարձից հետո ապագա աներձագս ապտակել էր Քնքուշիկին՝ ասելով.«*Մինչև այս ուշ ժամը ու՞ր էիր*»:

1937թ., փոթորիկ մեր տանը

Երկու տարի մեր սերը մնաց գաղտնի, ավագներից միայն Արշո քույրիկն էր, որ գիտեր այս մասին, այն էլ ոչ հաստատապես: Քնքուշիկն արդեն ավարտել էր գիմնագիան և աշխատում էր դերձակուհի մի հույն կնոջ տանը¹²⁹: Հույնի տան մոտ հանդիպում էինք ու գնում մեր սիրած վայրը: Ես արդեն կոշկակարություն չէի անում, աշխատում էի վառարանների ֆաբրիկայի նիկելապատման ցեխում: Ավե-

լի շատ էի վաստակում: Հայրս արդեն մի ուրիշ երեքսենյականոց տուն էր վարձել: Մի երեկո՝ աշխատանքից հետո, տեսա, որ երկու եղբայրներիս սենյակում նստած են հայրս, մեծ մայրս և Արշո քույրիկը: Հայտնի է, որ ինձ են սպասում:

-Նենե՛, ի՞նչ պիտի ուտեմ:

Նայեցա, մեծ մորս շուրթերը դողում են, հայրս նայեց ինձ.

-Ծո՛, ամուսնանու՛մ ես, Ղևոնդիկի աղջկա՞ն պիտի առնես:

Մեծ մայրս.

-Թու՛, մեղք իմ էմեգիս:

Հեռու էի, թուքը ինձ չհասավ: Նայեցա Արշո քույրիկին: Նա աչքերը խոնարհեց:

-Ի՞նչ եք ասում, չեմ հասկանում:

Հայրս ելավ տեղից:

-Նստի՛ր,-ասացի,-տասը տարեկան չեմ: Ես ում ուզեմ, անոր կառնեմ: Իսկ մի քանի տարի դեռ ամուսնանալու միտք չունեմ:

Ուղիղ ժամադրավայր գնացի: Քնքուշիկը եկավ, հարցրի.

-Եղբայրդ ոչ մի բան չի՞ ասել քեզ:

-Ի՞նչ պիտի ասեր:

-Մեր սիրո մասին:

-Ոչինչ չասաց, ընդհակառակը, հարցրեց.«*Գևորգը չի երևում, չե՞ս տեսել*»:

Երեկոյան ուշ գնացի տուն, ճաշս խոհանոցում էր: Առավոտ շուտ գնացի աշխատանքի, աշխատանքից հետո՝ ժամադրավայր: Նայեցա՝ աներձագս անկյունում կանգնած է, եկել էր քրոջը տանելու: Մեր տանը Արշո քույրիկից բացի հետս ոչ ոք չէր խոսում: Մի ամսից ավել մենք հանդիպել չէինք կարողանում: Արմենը եկավ օգնության: Քնքուշիկենք ապրում էին մի ելք չունեցող փողոցի վերջում, ուր էլեկտրականություն չկար: Արմենը հայտնեց, որ գիշերը՝ ժամը տասին, գնամ ու այդ փողոցի վերջում Քնքուշիկին սպասեմ: Մենք հանդիպեցինք: Այնքան բան կար միմյանց ասելու: Քնքուշիկը հայտնեց, որ հայրս սպառնացել էր աներձագիս, որ երկուսիս էլ կսպանի, և խորհուրդ էր տվել քրոջը արգելել ինձ հետ հանդիպել:

ՀՕԿ-ի ցրումը

1937թ. բուդդարական նոր ֆաշիստական կառավարությունը ՀՕԿ-ը ցրեց: Արշավները դադարեցին: Մենք միայն գիշերներն էինք հանդիպում, բայց այդ էլ խափանվեց: Աներձագս տնից գնալուց հետո դուռը միշտ բանալիով փակում էր և անում էր ամեն ինչ, որ չհանդիպենք: Արմենը մի ուրիշ խորամանկություն բանեցրեց: Նա համոզեց աներձագիս, որ շաբաթ-կիրակի օրերը Քնքուշիկը գնա իրենց տանը քնի, քանի որ իր հայրն ու մայրը գնում են գյուղ: Աներձագս համաձայնեց: Բայց այդ օրերին նա մինչև ժամը տասը մնում էր Արմենենց տանը: Ես գնում էի այնտեղ միայն տասից հետո:

Մեծ մորս խարդավանքները

Հայրս հետս չէր խոսում, մեծ մայրս հազվադեպ էր խոսում հետս, նա սկսել էր գիր անողների հետ գործ ունենալ: Մորս գերեզմանից հող էր բերում, ջրի մեջ բացում և այդ լուծույթով եփած ճաշը կերցնում ինձ: Անում էր ամենը, որ ինձ Քնքուշիկից սառեցնի: Մերսեդեսին էին խնդրում, որ ինձ համոզի: Ես Մերսեդեսին հասկացրի, որ իրենց ջանքերն իզուր են: Ու եթե միտք ունենամ ամուսնանալու, Ղևոնդուհու աղջկան պիտի առնեմ:

1938թ. կեսերն էր: Սիլկան, Յովկոն արդեն չկային: Հերմինեն ուզում էր Սոֆիա տեղափոխվել: Հորս հետ նորից ընդհարվեցինք: Մերսեդեսը մեր տանն էր: Հայրս հարցրեց. «Նորից Ղևոնդիկի աղջկա հե՞տ էս: Կսպանեմ, եթե Ղևոնդիկի աղջկան առնես»: Ես շատ զայրացած էի և պատասխանեցի. «Քո գործը չէ, թե ես ում կառնեմ: Ղևոնդուհու աղջկա՞ն կառնեմ, թե՞ շան աղջկան»: «Դու՛րս տրևից, մեկ էլ այս տունն ուրք չկոխես»: Ես դուրս ելա, դեռ մի տասը քայլ չէի անցել, երբ Մերսեդեսը հասավ ինձ. «Ու՞ր ես գնում»: «Չգիտեմ, հյուրանոց կերթամ»: «Երթանք մեզի»: Մերսեդեսը արդեն ամուսնացած էր: Ամուսինը՝ Հայկը, շատ վրդովվեց՝ իմանալով հորս դաժանության մասին. «Կգաս, մեր ամառանոցում կապրես»: Ճաշեցինք: Ամառանոցը երեք կմ էր հեռու քաղաքից: Երեքով կառք նստեցինք և գնացինք ամառանոց: Մերսեդեսը մեր ընտանիքի պահապան հրեշտակն էր:

Հայկը մի փոքրիկ կահավորված սենյակ ցույց տվեց և ասաց.

«*Ահա և բանալիները, այս սենյակը քեզ, գիշերները կգաս, այստեղ կպառկես*»:

Մենք շարունակում էինք շաբաթ-կիրակի օրերը գիշերները իրար հետ հանդիպել Արմենենց տանը, բայց այդ էլ խափանվեց:

Ես երեք ամիս տուն չէի գնացել: Արշո քույրիկը լվացած սպիտակեղենս թողնում էր հարևանի մոտ, որտեղից ես այն վերցնում էի: Ճաշում էի բանվորական ճաշարանում: Մի կիրակնօրյա առավոտ դուրս եկա ամառանցից, տեսնեմ հայրս, իր կառքին նստած, սպասում է ինձ:

-Նստե՛, տանիմ քաղաք:

Ոչ մի խոսակցություն, արդեն մտել էինք քաղաք, երբ հայրս ասաց.

-Տուն չպիտի՞ գաս:

Ես ձայն չհանեցի, նա արագացրեց կառքի ընթացքը: Կես ժամ հետո տանն էինք: Հայրս գնաց իր գործին, ես վեր բարձրացա: Մեծ մայրս, Արշո քույրիկը, հարևաններից մի կին նստած սուրճ էին խմում: Հարևանուհին ասաց.

-Եզու՛ր, նենեիդ ձեռքը պա՛ք:

Այսպես ես վերադարձա տուն:

Վեցհարվածը

Մի քիչ հետ գնանք: Ես մի շատ մոտ ընկեր ունեի՝ Հարությունը: Նա մինչև ուղնուծուծը դաշնակցական էր: Շատ ջանքեր թափեց, որ ինձ քաշի դաշնակցականների շարքը, բայց ապարդյուն: Ինչպես նշել էի, վերջը տիրացել էի հորս վեցհարվածին: Հարությունն էլ ուներ նման զենք, գնում էինք անտառ, կրակում: 1936թ. էր: Ընկերս փամփուշտ էր ճարում.«*Գևորգ, քեզ մի գաղտնիք պիտի ասեմ*»: «*Ի՞նչ գաղտնիք*»: «**Գարեգին Նժդեհը գալու է Վառնա**»: «*Ի՞նչ ես ասում, Հարություն, ի՞նչի կապակցությամբ*»: «*Մի քսան երիտասարդ պիտի երդում փան*»: «*Դու էլ ե՞ս փալու*»: «*Իմ փարիքը չի բռնում*»:

Այստեղ պետք է ասեմ, որ դաշնակցականները երկու խմբավորում ունեին՝ երզվյալներ և հասարակ: Երզվյալները կուսակցության ամեն մի հրաման կատարում էին առանց առարկելու: Նժդե-

հի¹³⁰ դաժանության մասին հորիցս էի լսել¹³¹: Այնպես որ, արժեր տեսնել նրան: Նորից գնացինք անտառ՝ կրակելու, հիսուն փամփուշտ էր բերել: «Գևորգ, վաղը չե՞ս գա՝ գնանք Նժդեհին դիմավորենք»: «Չեմ գա, եթե գամ, կկրակեմ վրան», -կատակեցի ես: Մի քանի օրից հանդիպեցի ընկերոջս.«Հարություն՛ն, շար եմ ուզում տեսնել Նժդեհին»: «Եթե ասորճանակդ տաս ինձ, վաղը ընդհանուր ժողով պիտի անի, մի կերպ քեզ կմտցնեն»: Այստեղ պետք է ասեմ, որ ասորճանակս միշտ մոտս էր՝ պահված հատուկ կարված գրպանում: «Քեզ չեմ տա, տանը կթողնեմ, կսարուգես: Առածը չգիրե՞ս. կհեր, ասորճանակը, չի՛ն, ժամացույցը ուրիշ չե՛ն տա»: «Ես քեզ համար ուրիշ չեմ»: «Գաղափարով ուրիշ ես, չնայած «երդվյալ» չես, բայց եթե հրամայեն, կգնդակահարես ինձ»:

Այդպես ես մի կերպ մասնակցեցի Նժդեհի ընդհանուր ժողովին: Ի՛նչ օվացիաներ, ի՛նչ գոչյուններ՝ մեր հայրենիք՝ թշվառ, անտեր: Անբողջ ճառը հակասովետական, հակաբոլշևիկյան էր. թուրքերին պիտի միանանք կարմիրներից հայրենիքը ազատելու համար: Ժողովականներից մի քանիսը ձայն տվեցին.

-Ծովից ծով Հայաստան կուզենք:

-Ուուս մարդը երկաթը շարտում է մի կողմ, գերմանացին այդ նույն երկաթից սուկալի գենք է պատրաստում,-ասում էր Նժդեհը:

Նժդեհին հարցեր տվեցին.«Ի՞նչ է անում Գերմանիան»: «Ի՞նչ դիրք է բռնում մեր կուսակցությունը»: «Պատրաստվում է աշխարհը փրկել բոլշևիկներից»: Նա պատասխանեց.«Կամավորների բանակ պիտի կազմակերպենք, միանալու ենք գերմանական բանակին»: Ուրիշ շատ հարցեր տվեցին, բոլորն էլ՝ հակասովետական: «Հարություն, ես գնացի»: «Սպասի՛ր, միասին գնանք»:

Միասին գնացինք «Արիեստավորների սրճարանը», մեկական սպիտակ անուշ վերցրինք.«Հավանեցի՞ր Նժդեհի ճառը»: «Շար դաժան էր դարում իմ կուսակցության առաջնորդին»: «Լա՛վ, լա՛վ, հերիք է վրան փեղբուկս»: Ուշ ատեն բաժանվեցինք:

Հանդիպում մոր և աղջկա հետ

Երեք ամսից ավելի է, որ չէինք հանդիպել: Արմենը նամակ էր տանում-բերում: Աշխատանքից նոր էի եկել, երբ Արշո քույրիկը ասաց:

-Գևորգ, քեզ ասելու բան ունեմ: Ղևոնդիկը իր աղջկա հետ սեփեթչիի¹³² տանն է:

Սեփեթչին մեր հարևանն էր:

-Գնա՞մ, Արշո՛ քույրիկ:

-Գնա՛:

Սեփեթչին մեծ բակ ուներ, մտա բակը, գմացի ուղիղ հաշտը, որտեղ նստած էին Ղևոնդիկը, Քնքուշիկը, տանտիկիներ, նրա աղջիկը: Բարևեցի ու նստեցի աթոռին՝ ճիշտ նրանց դիմաց: Չարմացած իրար նայեցին: Սեփեթչիի աղջիկը Քնքուշիկին տարավ դիմացի սենյակը:

-Հերիք չէ՞, այդ դանդալոշ տղադ հոգինիս կուտե: Տիկի՛ն Ղևոնդիկ, ես աղջկանդ պիտի առնեմ, կուգե աշխարհի փուլ գա: Եթե տղադ ինքը պիտի ամուսնանա քրոջ հետ, ես կհեռանամ:

-Հապա հայրդ, մեծ մայրդ, անոնք ի՞նչ կսեն:

-Ես քսանհինգ տարեկան եմ, ինձ ոչ մեկը չի կարող խանգարել: Ես հիմա լավ եմ վաստակում, մի՛ վախեցեք, թե աղջիկդ անոթի կմնա:

-Գնա մորդ, մեծ մորդ համոզի՛ր, թող գամ ուզեն:

-Անոնք Ղևոնդիկի աղջիկը ուզողը չեն, ես ինքս պիտի գամ ուզեն:

-Մեր տունը չգաս, արյուն կթափվի:

Սրանից հետո աներձագս ավելի խիստ էր Քնքուշիկի նկատմամբ:

Մերին և Ֆիրդեսը

1940թ. սկզբներն էին, մեր միջև մի սառը քամի էր անցել, առաջվա նման էլ չէինք ձգտում միմյանց, հոգնել էինք դժվարություններից: Արմենը մեկ-մեկ նամակ էր բերում ու տանում: Արդեն Ելենան ու Տանյան էլ չկային, հանգչում էին իրենց շիրիմներում: Մեկ-մեկ գնում կանգնում էի նրանց շիրիմների առաջ: Մեր տանը խաղաղություն էր իջել, ոչ ոք չէր հետաքրքրվում ինձնով: Վաստակիս մի մասը տալիս էի հորս, մի մասն էլ հավաքում էի: Գիտեի, որ վերջիվերջո պիտի ամուսնանանք: Վառնայում Քնքուշիկին ո՞վ կառներ, բոլորն էլ գիտեին, որ նա իմ սիրած աղջիկն էր:

Ապրիլ ամիսն էր: Ծովային այգում՝ ճանապարհին, իմ ծանոթ

աղջիկներից մեկը՝ Աղավնին, եկավ մտավ թևս.« *Գևորգ, աղջիկ մը կա, կուզե քեզի հետք մասն գա*»: «*Աղավնի՛, չե՞ս գիտեր, որ ես սիրած աղջիկ ունիմ... Ո՞վ է այդ աղջիկը*»: «*Իմ ընկերուհիներից մեկն է՝ Սերին*»: «*Անհկա բուլղար սպաների հետք շար է մասն եկած, չե՞նք քաշեք ինչմե*»: «*Այ տղա, հետքը հո չպիտի ամուսնանաս: Օրդ անցուր, իշտե*»: Աղավնին կորավ, մի քիչ հետո եկավ երկու աղջիկների՝ Սերինի և Եվայի հետ: Չեքստեղմումներից և երկու քայլ անելուց հետո Աղավնին և Եվան անհետացան: Հետագայում Աղավնին ամուսնացավ Արշո քույրիկի եղբոր հետ: Մնացինք երկուսով, մտանք այգի: Չէինք գրուցում, առաջացանք մինչև ծով, նստեցինք մի նստարանի վրա: «*Օրհորդ Սերի, ի՞նչ ես մտածում իմ մասին, չէ՞ որ գիտես, որ սիրած աղջիկ ունեմ*»: «*Դու հիմա բաժանված ես*»: «*Ո՞վ ասաց*»: «*Աղավնին*»: «*Բաժանված եմք, բայց ի վերջո պիտի ամուսնանանք*»: «*Պատահել է այնպես, որ հիմա ազատ ես, մի ֆլիրտ կանենք*»: «*Եթե այդքանին համաչայն ես, ոչինչ*»: Շաբաթը երկու-երեք անգամ հանդիպում էինք: Թեթև համբույրներ, քնքշանքներ, սիրո մասին ոչ մի խոսք: Այսպես մի երեք ամիս: Մի շաբաթ օր մինչև ուշ մնացինք ծովային այգում: Հետո նրան ճանապարհեցի: Նրանց տնից մինչև մեր տուն հինգ կմ ավել ճանապարհ էր: Մոտեցանք նրանց տանը:

-Գնանք մեզի, առավոտյան կգնաս տուն:

Չարմացա:

-Չեր տանը մարդ չկա՞:

-Կա, քնած են:

-Դու իսկապես հանելուկ աղջիկ ես, ի՞նչ գործ ունեմ ձեր տանը:

-Դու առաջինը չես, ոչ ալ վերջինն ես:

-Ես այդ գիտեմ, այնպես որ այլևս աչքիս չերևաս:

Մեր ֆլիրտը այսպիսով վերջացավ:

Անցնում էին օրերը, Քնքուշիկն ու ես էլ իրար նամակ չէինք գրում: Հունիսի սկիզբն էր: Ծովային այգու երկրորդ մասում նստած հիանում էի ծովից բարձրացող լուսնով, միննույն ժամանակ մտածում էի, թե ինչպես լեզու գտնեմ աներձագիս հետ: Կողքս հայտնվեց մի ծանոթ աղջիկ՝ Սիրանույշը:

-Սիրանույշ, մենա՞կ ես, ու՞ր է Էմիլը:

Սիրանույշը ման էր գալիս մի բուլղար տղայի հետ:

-Ընկե՛ր Գևորգ, մի աղջիկ ուզում է քեզ հետ խոսել:

-Ի՞նչ աղջիկ:

-Գնանք:

-Ու՞ր գնանք, ի՞նչ է ուզում այդ աղջիկը, ո՞վ է:

-Ֆիրդե՞սը՝ իմ ընկերուհին:

-Մեր առաջվա տանտիրոջ քրոջ աղջի՞կը:

-Այո՛:

-Ֆիրդեսը այս ժամին ի՞նչ գործ ունի այստեղ:

-Չգիտեմ, հարցու՛ր իրեն:

1928-1935 թթ.մենք ապրում էինք Ֆիրդեսի մորեղբոր տանը, այն ժամանակ նա մի փոքրիկ աղջիկ էր: Մի տարի առաջ հրավիրել էր իրենց տուն՝ պարերեկոյի: Այնտեղ էին Սիրանույշը, Էմիլը, մի քանի թուրք գույգեր: Ֆիրդեսի մայրը թուրք էր, հայրը՝ թաթար: Մեծ մայրս ասում էր. «*Թաթարը հայու դահիճ է*»: Մինչև ուշ ատեն պարեցինք, դրանից հետո Ֆիրդեսի հետ երբեմն հանդիպում էինք, խոսում, ու՞մ մտքից կանցներ, որ սիրահարվել է ինձ: Ֆիրդեսը արևելյան գեղեցկությամբ, բարձրահասակ, դուրեկան աղջիկ էր: Գնացինք ծովային այգու երրորդ մասը: Թփերի միջից դուրս եկավ Ֆիրդեսը: Սիրանույշը արդեն գնացել էր: «*Ֆիրդես, ի՞նչ է եղել*»: Ավելի մոտեցավ: «*Ի՞նչ է, խելքդ թռցրե՞լ ես, սիրահարվե՞լ ես*»: «*Չե՛ս հասկանում, խեղճի պես կսիրեմ քեզի*», -ըսավ ու ընկավ գիրկս: Այնպես ջերմ համբուրեց, ես զգուշորեն նրան նստեցրի նստարանին. «*Ֆիրդես, խելքդ գլուխդ ժողվե, դու չես հասկանում, թե ինչ ես անում*»: «*Կսիրեմ, կսիրեմ քեզի, պիտի մեռնեմ, եթե ինչի արհամարհելու ըլլաս: Գիտեմ, ինչ չպիտի սիրես, ամա ցգե՛, ես քեզի սիրեմ*»: «*Հեղո՞, հայրդ կսպանի քեզի*»: «*Ոչինչ ալ չի ընեիր*»: Այսպես մի ժամից ավել մնացինք: Սիրտս սառած էր, բայց դեռ զգացմունքներս կային, սկսեցի քնքշանքով վարվել, համբուրել: Սիրանույշն ու Էմիլը եկան: «*Ֆիրդես, գնանք*»: Չորսերնիս այգուց դուրս եկանք: Մեր տունը Ֆիրդեսենց տան մոտ էր, Սիրանույշն ու Էմիլը ուրիշ ճանապարհով պիտի գնային: Մենք բաժանվեցինք, Ֆիրդեսը մտավ թևս: Ավելի մութ փողոցներով նրան տարա տուն: «*Ե՞րբ պիտի տեսնվենք*»: «*Սիրանույշը գիտե տեսնու*»: Գնացի տուն ու ընկա խոր մտածմունքների մեջ:

Բոյան և Սաֆիեթ հանում

Վառնայում մի դեպք էր պատմվում: Բոյան անունով մի բուլղար և Սաֆիեթ հանում թրքուհին սիրում էին միմյանց: Այս կապը բավականին երկար ժամանակ զաղտնի է մնում, բայց, այնուամենայնիվ, իմացվում է: Վառնայում մի փողոց կա՝ «Բենկովսկա»¹³³, որն ունի մոտ 24 մ երկարություն: Այդ փողոցում միասին ապրում էին թե՛ հայեր, թե՛ բուլղարներ և թե՛ թուրքեր: Թուրքական միակ մզկիթը¹³⁴ ևս այս փողոցում էր գտնվում: Այս զույգը այդ փողոցում էր ապրում: Բուլղարիայում մի տոն կա, որը փետրվար ամսին են տոնում, կոչվում է դիմակահանդեսի օր: Այդ օրը տոնին մասնակցում էր նաև այդ դիմակավորված զույգը: Բուլղար տղաները ճանաչում են Բոյանին և սկսում են ծեծել: Թուրքերն էլ, տեսնելով, որ բուլղարներն իջեցրել են Սաֆիեթ հանը մի դիմակը, սկսում են կռվել բուլղարների հետ: Կռիվը տարածվում է փողոցով մեկ: Ջինվորական պահակախումբը, որ մոտերքում է լինում, գալիս է այդ փողոցը: Պահակախմբի պետը հրամայում է օդ կրակել, որ կռվողները ցրվեն: Սակայն դա չի օգնում: Տեսնելով, որ կռվողները միտք չունեն ցրվելու, հրամայում է կրակել կռվողների վրա: Ջինվորները կրակում են: Մարդիկ ցրվում են, փողոցում ընկած են մնում վեց սպանված և քսան վիրավոր տղա, սպանվածներից երկուսը բուլղար էին, երեքը՝ թուրք, մեկը՝ հայ: Սաֆիեթ հանումն ու Բոյանը անհետանում են: Առանց եկեղեցու պսակի Ռումինիայում կարելի էր քաղաքացիական ամուսնություն ձևակերպել, իսկ Բուլղարիայում՝ ոչ: Սաֆիեթ հանընը և Բոյանը Ռումինիայում զագսով ամուսնանում են: Բուլղարիայում տարբեր հավատքի մարդկանց ամուսնությունը հնարավոր չէր: Եկեղեցին ոչ մի դեպքում թուրքի աղջկան չէր մկրտի: Հրեա աղջիկներին, սակայն, մկրտում էր: Շատ հրեա աղջիկներ այս կերպ ամուսնանում էին բուլղար տղաների հետ: Հրեաներին մկրտում էին այն պատճառով, որ Քրիստոսի ժամանակներում շատ հրեաներ քրիստոնեություն ընդունեցին:

*
* *
*

Հիմա գանք իմ պատմությանը: Ինչպես դուրս գամ այս անելանելի դրությունից: Այդ թուրք աղջիկը խենթի նման սիրահարվել էր: Երկու օր չերևաց, երրորդ օրը եկավ Սիրանուշի և Էմիլի հետ: Գնացինք այգու երրորդ մասը, չորսով նստեցինք իշտոնուկների վրա. «Սիրանուշ, Էմիլ, Ֆիրդեսին հասկացրե՛ք, որ մեր սերը անկարելի է: Ֆիրդեսը շատ երկիրասարդ է, ամբողջ կյանքը դեռ առջևում է»: «Ես քեզնից սեր չեմ աղերսում, թո՛ղ ինչ հանգիստ, որ սիրեմ քեզ մինչ մեր Թուրքիա ներգաղթելը: Հայրս արդեն դիմել է, և շուտով կհեռանանք Բուլղարիայից: Թող անուշ, սրտագին հուշեր փանեմ քեզանից»: Չորսս էլ լռեցինք: Էմիլը Սիրանուշի հետ գնաց:

Սեպտեմբերի սկիզբն էր, օրն էլ՝ ուրբաթ, Ֆիրդեսը եկավ շատ վրդովված, հայտնեց, որ կիրակի օրը իր ընտանիքը մեկնում է: Գնացինք մեր սիրած թփերի տակ, մինչև ուշ մնացինք: «Վաղը ինչ սպասիր»: Վերջին անգամ Ֆիրդեսը մի քիչ ուշացումով եկավ. «Ինչու՞ ուշացար, հույսս կտրել էի, թե կգաս»: «Ինչպես չեմ գա, եկել եմ ողջ գիշերը մնալու»: «Իսկ փա՞նք»: «Ասացի, որ ընկերուհուս փանն եմ մնալու»: Գնացինք մեր սիրած վայրը, մինչև ուշ գրկախառնվում ու սիրում էինք միմյանց: Գրկիս մեջ կամաց-կամաց փոքր երեխայի նման քունը տարավ: Անթարթ նայում էի թուրքի և թաթարի խառնուրդ տասնյոթ տարեկան աղջնակին, որը վարդագույն շրթունքներով մի գեղեցկուհի էր: Նա շատ հանգիստ էր շնչում: Մտածում էի, թե վաղը պիտի հեռանա ու դեռ շատ է տառապելու կորստից: Լուսաբացին շատ քնքուշ համբույրով արթնացրի. «Ֆիրդես, արդեն լուսացավ, գնանք ծովափ, մաքուր օդ շնչենք»: «Շա՞ր եմ քնել, ինչ անխիղճն ես, ինչու՞ թողիր՝ քնեմ»: «Այնքան անուշ էիր քնած, որ չուզեցի արթնացնել»: Ելանք, հագուստներս կարգի բերեցինք, իջանք ծովափ: Ծովը շատ խաղաղ էր: Ծովափում ոչ ոք չկար: «Դու աշարեղ սպասի՛ր, ես հիմա...», -ասաց Ֆիրդեսը: Ես կարծեցի՝ բնական պահանջ ունի: Մեկ էլ տեսա՝ մորեմերկ նետվեց ջուրը: Մի տասը բուռն լողաց. «Մի՛ նայիր այս կողմը»: Ես վերև նայեցի: Հագնված եկավ կանգնեց կողքիս՝ վարսերը թաց ու արձակ. «Մանրդ փուր՛ր»: Սանրվեց և մի նեղ արահետով հազիվ կողք կողքի քայլեցինք. «Գնա-

լուցս հեարո ի՞նչ ես անելու»: «Պիրի աշխատեմ աներձագիս հեար լեզու գարնել ու մինչև փարվա վերջ ամուսնասնալ»: «Երջանկություն եմ ցանկանում քեզ»: «Սրտսն՞ց ես ասում»: «Սրտանց, շար եմ ուզում՝ դուք երջանկիկ լինեք»: Արդեն հասել էինք քաղաք, մնացել էր մի գառիվայր: «Ֆիրդեն, պեարք է բաժանվենք»: Ընկավ գիրկս, համբուրեց, հեռացավ, էլ հետ չնայեց:

Մեծ մայրս անհանգիստ ինձ էր սպասում.«Որդե՞ն էիր գիշերը»:
«Ընկերոջս փանն էի»:

Հանդիպում աներձագիս հետ

Այս տարիներին Արմենի հորեղբայրը ամուսնացավ: Հարսանիքին ես ծանոթացա հարսի մոտիկ ազգականի հետ, որի հետ հետո շատ մտերմացանք: Նրա անունը Արտավազդ էր: Նա հույն սիրած աղջիկ ուներ՝ Փինչեն: Ես ուղի էի փնտրում աներձագիս հետ հանդիպելու, բայց առիթ չէր լինում: Աշխատանքից նոր էի եկել, եկավ հարևանի փոքր աղջիկը.«Գևորգ դայդայ, Բիսպրիսը քեզ է կանչում»: Բիսպրիսը փոքր եղբորս ապագա կինն էր: Մածունի խանութ ուներ: Աղջիկներն ու տղաները այնտեղ էին հանդիպում: Գնացի, տեսնեմ Արմենը մի քանի աղջիկների հետ խոսում է: Արմենը ինձ թևանցուկ արեց.«Գնանք, ասելիք ունեն: Վաղը՝ ժամը վեցին, կինո «Ռոյալի» մոտ սպասիր: Քնքուշ քույրիկը քեզ ասելիք ունի»: Գնացի, ինձ արդեն սպասում էին.«Գևորգ դայդայ, ես կհնո մտնեմ, դուք խոսե՛ք»: Արմենը գնաց: Քաղաքային պարտեզը մոտ էր, մենք էլ գնացինք, մարդկանց աչքից հեռու նստեցինք: Վեց-յոթ ամիս իրար չէինք տեսել:

-Արմենը ասաց, որ խոսելիք ունես:

-Ի՞նչ անենք, ի՞նչ խոսենք, մեր վերջը ի՞նչ է լինելու:

-Պետք է նայեմ, եղբորդ հետ հանդիպեմ: Մերոնք համաձայն չեն մեր ամուսնությանը, բայց չեն էլ խանգարում: Կաշխատեմ ամեն ինչ անել, որ մինչև նոր տարի ամուսնանանք:

Արմենը եկավ, գտավ մեզ:

-Գնանք, քույրիկ:

-Արմեն, վաղը չէ մյուս օրը քույրիկիդ «Ավվարիում» կբերես, ես ձեզ կսպասեմ ժամը ութին:

Վառնայի «Ակվարիումը» հրաշալի մեծ շենք էր, մեծ այգի ուներ ծովափից հիսուն մետր հեռավորության վրա:

Շատ մաքուր ֆիկնակներով ծովին նայող նստարաններ էին: Մի առանձին նստարանին նստած՝ սպասում էի. եկան, նստեցին կողքիս: «*Գևորգ դայդայ, ես գնամ, մեկուկես ժամից կգամ, ընկերուհիներս սպասում են*»: Սովերի նման մի անձնավորություն անցավ, սա իմ մի քիչ պակաս «ընկերուհին» էր: Ոչ ոք չէր մտածում, որ նա կհանդիպի աներձագիս և կասի մեր տեղը: Արդեն մթնեց: Ոտնաձայն լսեցինք: Շատ կոպիտ արտահայտություններով աներձագս կանգնեց մեր գլխին: Ես վեր թռա: Քույրը վախեցած ընկավ մեր մեջ, հեռացրեց եղբորը:

-Քնքուշիկ, գնա՛ տուն, ես եղբորդ հետ խոսելիք ունեմ:

Նա տատանվում էր, չէր ուզում գնալ: Ես ամբողջ մարմնով դողում էի: Գոռացի.

-Գնա՛:

Քնքուշիկը հեռացավ: Ես հանեցի վեցհարվածը, դեմ արեցի կրծքին, աներձագս շշմեց:

-Հիմա ինձ լավ լսիր, ինձ Յովկոյի օրին մի՛ բեր, քեզ էլ կսպանեն, քրոջդ էլ, ինձ էլ: Ես քրոջդ հետ պետք է ամուսնանամ, պա՞րզ է, հույսդ չդնես մերոնց վրա, որ կգան խնամախոսության: Ես քեզ հետ ուզում էի խոսել, առիթ չէր լինում, հիմա եղավ: Ես մի քիչ դրամ ունեմ, սենյակ պետք է վարձեմ, կահավորեմ, մինչև դեկտեմբեր պատրաստ կլինի, գնա՛, մտածի՛ր:

-Կմտածեմ:

Ես հնձվածի նման ընկա խոտերի վրա, էլ ուժ չունեի: Ջգացի, որ մեկը ուսերիցս քաշում է:

-Գևորգ դայդայ, այդ ի՞նչ եղավ, ու՞ր է քույրիկը:

-Արմեն, վազիր քույրիկիդ տունը, դայդայդ այստեղ էր, վիճեցինք, կերթա քրոջդ կծեծի:

Արմենը թռավ, հիմա էլ մի ուրիշը պոկեց ինձ գեանից, գիրկն առավ ու սկսեց համբուրել:

-Գու այստե՞ղ ես, ինչու՞ տուն չես գնացել:

-Ու՞ր գնամ, քեզ ու՞մ թողնեի:

Բարձրացանք:

-Գնանք, եղբայրդ հիմա իրար կխառնվի:

«Ակվարիումից» նոր էինք դուրս եկել, տեսա, որ աներձագու ու Արմենը վազեվազ գալիս են: Մեզ տեսնելով՝ կանգ առան: Նայեցա, աներձագիս աչքերը ժպտում էին, վախեցել էր, թե մի խենթություն կանեն: Միառժամանակ քայլեցինք միասին: Ես Արմենին պիտի տուն տանեի, բաժանվեցինք, աներձագս քրոջ հետ գնաց:

-Արմեն, դայդայդ շա՞տ էր վախեցել:

-Լեզուն բռնվել էր, չէր կարողանում խոսել:

Աներձագս համաձայնեց իմ որոշմանը: Ես սկսեցի սենյակ փնտրել: Գ-տա երկու պատուհանով մի շատ կոկիկ սենյակ՝ փոքրիկ հաշտով, որին կից կար և մի այլ սենյակ, որտեղ ապրում էր մի միջահասակ կին. խոհանոցը ընդհանուր էր: Տանտիրոջը բացատրեցի, որ առայժմ՝ մինչև ամուսնությունս, չեմ ապրելու այդտեղ, բայց տան վարձը պիտի տամ:

-Որ այդպես է, մինչև ամուսնանալդ 150 լևա կտաս, կամուսնանաս՝ 250 լևա կվճարես:

Ես արդեն ունեի 4000 լևա, առաջին հերթին մահճակալ գնեցի, որ արժեր 2000 լևա, մի թիթեղից վառարան, ուրիշ մանր-մունր բաներ, կամաց-կամաց կահավորեցի: Արշո քույրիկին հայտնեցի մեր որոշման մասին.«*Արշո՛ քույրիկ, հայր ու մայրս (հորս մայրը) հիմա պետք չէ, որ իմանան*»: Գրամ տվեցի, որ տեղաշոր պատրաստեր: Դրանից հետո օրերը շատ արագ անցան:

Քավոր

Մենք հանդիպում էինք շաբաթը երկու-երեք անգամ: Մի անգամ հանդիպեցինք Արտավազդին և Փինչեին: Դրանից հետո միշտ հանդիպում էինք: Արտավազդին հայտնեցի իմ մտադրության մասին: «*Շատ լավ էս մրտածել, ուզու՞մ էս քավոր կանգնես*», -ասաց Արտավազդը: «*Ես էլ այդ էի ուզում*»: Այսպես քավոր էլ ունեցանք: Արդեն դեկտեմբերի սկզբին ամեն ինչ պատրաստ էր: Այն օրվանից աներձագիս չէի տեսել: Գնացի: Նա կոշիկի վերանորոգման խանութ ուներ: Հայտնեցի.«*Դեկտեմբերի 22-ին (1940թ.)՝ չորեքշաբթի օրը, պիտի պսակվենք*»: Տե՛ր Վրթաճեա՛ր այդպես որոշեց, նա գիտեր մեր մասին ու ասաց.«*Գոնե՛ եղբայրը պսակին գա, Արտավազդն ալ իր*

նշանածի հետք քավոր կկանգնի»: Աներձագս համաձայնեց: Այսպիսով՝ պատկառության ժամանակ ներկա էին Արմենը, աներձագս, քավորը իր նշանածի՝ Փինչեի հետ և մի տասը ծեր կին, որոնք այդ օրը եկել էին եկեղեցի: Եկեղեցուց գնացինք ռեստորան, այստեղից բողոքս, բացի աներձագիցս, գնացինք իմ վարձած սենյակը: Շատ ուշ բաժանվեցինք: Այսպիսով՝ երկար տառապանքներից հետո դարձանք ամուսիններ:

Նվերները

Ես երեք օրվա հանգստի արտոնություն էի վերցրել աշխատավայրից, ինչպես ասել եմ, վառարանի ֆաբրիկայի նիկելի ցեխում էի աշխատում: Ֆաբրիկայի տերը՝ Ենգիբարյանը, եկավ կանգնեց ցեխում և դիմեց ինձ. «*Գևորգ, ամուսնացե՞լ ես*»: «*Այո՛, պարոն Ենգիբարյան*»: «*Այսօրվանից աշխատավարձդ ավելացնում եմ օրական տասներկու լիայով: Սենյա՞կ ես վարձել*»: «*Այո՛*»: Գնաց, մի տասը ռուպեից եկավ քարտուղարը, որին մենք «Արբանյակ» էինք անվանում, հիանալի տղա էր, ԲԲԿ (Բուլղարական բանվորական կուսակցություն)¹³⁵ ընդհատակյա աշխատող: Ֆաբրիկայում հիսուն աշխատող կար, որոնցից քառասունը ֆաշիստներին համակիր էին, և ոչ մեկը չէր կասկածում, որ Իվանը կոմունիստ է: Այդ մասին միայն ես գիտեի, իսկ նա չգիտեր, որ ես գիտեմ: «*Գևորգ, պատրոնը հարցնում է, թե վառարան ունե՞ս*»: «*Թիթեղից մի վառարան ունեմ*»: Մի տասը ռուպե հետո վառարանի հավաքման ցեխից կանչեցին: Գնացի: Վառարան հավաքող վարպետ Առաքելը ասաց. «*Այս վառարանի մասերը տար՛ր, նիկել արար՛, քո վառարանի՞նն եմ: Պատրոնը քեզ վառարան է նվիրում*»: Ամեն շաբաթ աշխատավարձ էինք ստանում: Շաբաթ օրը Ենգիբարյանը գալիս և բաժանում էր մեր աշխատավարձը: Հերթով կանգնում էինք՝ վարպետները, ենթավարպետները, բանվորները: Հերթով էլ մտնում էինք նրա մոտ, աշխատավարձը ստանում և դուրս էինք գալիս: Ես մտա. «*Գևորգ, դու մի քիչ սպասիր*»: Բոլորը ստացան, ինձ կանչեցին: «*Անցած շաբաթ քանի՞ օր ես աշխատել*»: «*Երեք օր, այս շաբաթ՝ վեց օր*»: «*Դիմիտրի՛, հաշվիր՛ ռուբուսնով*»: «*Պարոն Ենգիբարյան, 960 լիա է անում*»: Հազար լիա տվեց. «*Վառարանը պատրաստ է*»: «*Պատրաստ է, պարոն*

Ենզիբարյան»: «*Ասա՛ կառապան Միքայելին, որ վառարանը փակի չեր փուն: Ասա՛, որ ես եմ ասել*»: Նոր տարվա առթիվ ես ունեի նոր վառարան, որն արժեր 1500 լևա: Արդեն վերջին կոպեկս ծախսել էի: Նոր տարուն մենք 1300 լևա ունեինք, որից 300-ը Քնքուշիկն էր բերել:

Անցնում էին օրեր, ամիսներ, մեր տնից՝ ոչ մի լուր, մեկ-մեկ Արշո քույրիկն էր այցելում: Գալիս էր Արտավազըր Փինչեի հետ: Արմենը գրեթե ամեն օր մեր տանն էր: Ապրիլի վերջն էր, աշխատանքից եկա տուն, հարևանուհիս դիմավորեց ինձ՝ ասելով.«*Նվեր ես սրահել*»: Մտա սենյակ, տեսա մի սեղան, վեց աթոռ, կոնյակի վիեննական սերվիզ, արծաթե վեց գդալ, վեց դանակ, վեց պատառաքաղ: «*Բերողը հայրենեց, որ նվերները Մերսեդեսն է ուղարկել և մեզ կիրակի օրը՝ ժամը չորսին, հրավիրում է իրենց փուն:*

Կիրակի՝ ժամը չորսին, արդեն Մերսեդեսի տանն էինք: Հայկը շատ էր ուրախացել, որ երկար քաշքշուկից հետո մենք վերջապես ամուսնացել էինք: Ես շատ-շատ շնորհակալություն հայտնեցի նվերների համար: «*Գևորգ, սրանից հետո եկեք, երբ կուզեք*», -ասաց Մերսեդեսը:

Ես առաջվա նման ընդհատակյա կոմունիստական կուսակցության հայկական մասնաճյուղի անդամ էի: Գեկավարներն էին **Ժիրայր Սիմոնյանը, Հարություն Պողոսյանը, Թորգոմ Բոյաջյանը** և ուրիշներ: Բացի Հարություն Պողոսյանից, որը մի քանի ընկերների հետ գնդակահարվեց, մյուսները ինձ հետ ներգաղթեցին հայրենիք:

Էլի ուրախություն եղավ մեր տանը. Արմենի հայրը և եղբայրը մի դուռը լրիվ հայելի ունեցող զգեստապահարան էին նվիրել: Մեզ դեռ չէին հրավիրել իրենց տները, չէին ուզում հորս նեղացնել: Քնքուշիկը իրենց հարազատների աղջիկն էր:

Հայրենական պատերազմը

1941թ. հունիսի 22-ին՝ կիրակի առավոտյան, գնացի «Արիեստավորների սրճարանը», որը ինտերնացիոնալ սրճարան էր. ամեն ազգի երիտասարդ ու ծեր մարդիկ հաճախում էին այդտեղ (հայ, գնչու, հրեա, բուլղար): Արտավազըր՝ Հաճին, դիմավորեց՝ ասելով.«*Գևորգ, նորություն լսեցի՞ր*»: «*Հարևանուհիս, որ գնացել էր խառնութ, ինչ մի*

թեթև հայտնեց»: «Ի՞նչ է լինելու»: «Փայտոջիլի պես կկոտորվենք»:

Այստեղ պետք է ասեմ, որ Բուլղարիան եռյակ դաշինքի¹³⁶ անդամ էր, այնպես որ ինքն էլ պետք է պատերազմ հայտարարեր Սովետական Միությանը, ինչպես հայտարարեց Անգլիային և Ֆրանսիային 1940թ.¹³⁷:

Թերթը ձեռքին՝ սրճարան մտավ Բարթուղը՝ մինչև ուղնուծուծը երդվյալ դաշնակցական: Թերթը գլխի վերևում շարժելով՝ ձայն տվեց. «Տասնութ օրում՝ ֆրանսիան, քսան օրում՝ Սովետական Միությունը»: Ծանր-ծանր ոտքի ելավ անկուսակցական, հայրենասեր, յոթանասուն տարեկան Հարություն աղան. «Բարթու՛ղ, դու վայրա՛հ ես, որ քսան օրից պատերազմը կվերջանա, ու Սովետական Միությունը կկործանվի: Նսպողենուն էլ այդպես մտածեց»:

Թերթերում քիչ բան կար գրված. Գերմանիան հարձակվել է ՍՍՀՄ-ի վրա: Անտիֆաշիստների համար սկսվեցին սև օրեր: Պարետային ժամը գիշերը տասներկուսից մինչև առավոտյան ժամը վեցն էր: Փակվեցին բոլոր առաջադեմ ակումբները: Ամեն բուլե բուլղարական ֆաշիստական կառավարությունը հարմար առիթի էր սպասում ՍՍՀՄ-ին պատերազմ հայտարարելու համար, բայց ցար Բորիսը¹³⁸ չէր շտապում. նա խաղաղասեր ցար էր: Եռյակ դաշինքի մեջ մի կետ կար, նա այդ կետին զոհ գնաց: Այդ կետի համաձայն՝ այն պետությունները, որոնք պատերազմ կհայտարարեն Գերմանիային, պատերազմի մեջ են նաև եռյակ դաշինքի մյուս անդամների հետ, իսկ երկրորդ կետը, եթե Գերմանիան պատերազմ հայտարարի, ապա նրան դաշնակից մյուս երկրները պարտադիր չէ, որ պատերազմ հայտարարեն այն երկրներին, որոնց Գերմանիան պատերազմ էր հայտարարել: Այդ վերջին կետի համաձայն՝ թագավոր Բորիսը պատերազմ չհայտարարեց Սովետական Միությանը, ինչպես և ճապոնիային¹³⁹: Արդեն տարին լրանում էր, իսկ ֆաշիստական զորքերը ջախջախվեցին Մոսկվայի տակ: Բուլղարական ֆաշիստները ավելի կատաղեցին ու փոխեցին կառավարությունը, նոր պրեմիեր մինիստր նշանակեցին Բոգդան Ֆիլովին¹⁴⁰, որը մինչև ուղնուծուծը ֆաշիստ էր: Նրան հաջողվեց օկուպացնել¹⁴¹ Հունաստանի Էգեյան ծովափերը, Հարավսլավիայի մի մասը: Հունաստանի պարտիզանների հետ կապ ունենալու պատճառով բուլղարական պատժիչները

որոշ գյուղեր ամբողջությամբ գետնին հավասարեցրին:

1942թ. հունիսի 6-ին ունեցա մի տղա: Արշո քույրիկը ամեն օր գալիս լողացնում էր Հարությունին. հայրս դեմ չէր, մեծ մայրս էլ հաշտվել էր: Իմ՝ տանը չեղած ժամանակ զոքանչս էլ էր գալիս: Այդ տարիներին զոքանչս քառասուներեք տարեկանում մահացավ՝ ծանր վիշտ պատճառելով Քնքուշիկին ու թողնելով երկու անչափահաս աղջիկներին: Մենք մոտ էինք ապրում, այնպես որ Քնքուշիկը դարձավ երեխաների երկրորդ մայրը: Մենք մեծ հույսեր էինք կապում աներձագիս հետ, բայց մեր հույսերը չարդարացան, որը և մի տարի հետո ամուսնացավ մերդիգյոզցի¹⁴² մի աղջկա հետ: Միառժամանակ հետո աներձագս բավական հեռու տուն վարձեց ու այնտեղ տարավ կնոջը և գրեթե մոռացավ քույրերին՝ նրանց թողնելով Քնքուշիկի և իրենց հոր՝ Անանիայի հույսին:

Հարությունը արդեն վեց ամսական էր: Մի երեկո ես թերթ էի կարդում, Քնքուշիկը երեխային էր կերակրում, դուռը թեթև թակեցին: «*Ես ես*»: «*Մտե՛ք*»: Դուռը բացվեց, դռների մեջ երևաց հայրս՝ Արշո քույրիկի հետ: Ես վեր թռա, կանգնեցի հորս առաջ, սեղմեցի ձեռքը: Արդեն Արշո քույրիկը երեխային վերցրել էր, հայրս Քնքուշիկի ճակատը համբուրեց, Քնքուշիկն էլ՝ հորս ձեռքը: Արշո քույրիկը երեխային հանձնեց հորս: Հայրս մի բան դրեց բարուրի մեջ, նայեց, նայեց երեխային, քթի տակ ծիծաղեց. իր առաջին թռուն էր: «*Ռեջեպին Հարությունի անու՞նն էք դրե՛լ*»: Մերսեդեսի նվիրած սեղանի առաջ նստեցինք: Արմենը տեսել էր հորս՝ մեր տուն գալը, վազել գնացել էր իր հոր հետևից: Դուռը նորից թակեցին: Գնացի, բացի, տեսա Արմենին՝ հոր հետ, ներս եկան: Այստեղ պետք է ասեմ, որ Արմենի մայրը հիվանդ կին էր, դուրս չէր գալիս, դրա համար էլ հայրը աղջկա հետ էր եկել: «*Ծո՛ Կարապե՛տ, դու այստե՛ղ է՛ս, եկել էս թոռանդ տեսությունս: Երջանիկ մարդ էս, թոռան տեր եղար*»: Արմենը պայուսակից հանեց 750 գրամանոց **մաստիքայի**¹⁴³ շիշը, երշիկ, ապիտամ միս. տասը բոպե հետո սեղանն արդեն պատրաստ էր, երկուսն էլ՝ ջուր չխմող... Ուշ էր, երբ գնացին: Մտածում էի, թե Արշո քույրիկը ինչքան ջանք է թափել, որ համոզվի հորս ու մեր տուն բերի, հորս համառությանը չափ ու սահման չկար: «*Գևորգ, տես՛ս՝ հայրդ ինչ նվեր տվեց Հարությունին: Հազար լեվա*»: Մյուս օրը բռնացրի Արշո քույրի-

կին. «Այդ ինչպե՞ս հորս համոզեցիր»: «Կարապետ, եկ գնանք թռնակդ տես: Նեկնեղ ասաց. «Գնացե՛ք, եղածը եղած է»: Այս մի քակի օրը երեխային առեք եկե՛ք»: Քնքուշիկի հետ շաբաթ երեկո գնացինք, բոլորն էլ տանն էին: Կինս մեծ մամայիս ձեռքը համբուրեց և երեխան տվեց նրա գիրկը: Մեծ մամայիս աչքերը լցվեցին: Ես ևս ձեռքը համբուրեցի, փոքր եղբորս հետ շատ ժամանակ չէինք խոսում, համբուրվեցինք: Այսպես ամեն ինչ հարթվեց:

*
* * *

Սև ամպեր էին կուտակվել հակաֆաշիստների¹⁴⁴ գլխին: Ստալինգրադի¹⁴⁵ տակ պարտություն կրելուց հետո ֆաշիստները ավելի կատաղեցին: Հակաֆաշիստների մի մասը արտոբվեց¹⁴⁶ ս. *Սվետլի վրաս* վայրը, մի մասն էլ՝ Վառնայից ութսուն կմ հեռու գտնվող *Բիվսկ* վայրը, որտեղ աշխատեցնում էին գնացքի ճանապարհի շինարարության վրա: Ես այդ երկրորդ խմբի մեջ էի: Աշխատեցնում էին տասներկու ժամ, տալիս էին 250 գ հաց, խաշած լոբի: Այդ շրջանի գյուղացիները մեզ օգնում էին մթերքով: Մենք 450 հոգի էինք, գիշերելու տեղ չլինելու պատճառով ազատ արձակեցին: Դ-ա տևեց մայիսից մինչև նոյեմբեր, այդ ընթացքում գիշերում էինք բաց երկնքի տակ:

Եկավ 1944թ.: Վառնայի զինվորական գառնիզոնի¹⁴⁷ հրամանատար գեներալ-մայոր Խրիստովի¹⁴⁸ հրամանով առանց դատ-դատաստանի գնդակահարվում էին հակաֆաշիզմի¹⁴⁹ մեջ փոքր-ինչ կասկածվողները: Վառնայում այդ հրամանին զոհ գնացին երեք հայ, ինը բուլղար: Հայերն էին՝ Հարություն Պողոսյանը (42 տարեկան), Հակոբ Պարոնյանը (22 տարեկան), Կարապետ Հարությունյանը (50 տարեկան): Ծովային զորանոցի փոքր նավով տարան Սև ծովի խորքը և գնդակահարելով ծովը նետեցին:

1944թ. սեպտեմբերի 9-ին՝ *ցերեկվա ժամը երեքին, Կարմիր բանակի մուտքը Վառնա վերջ դրեց սև օրերին*¹⁵⁰: *Գեներալ-մայոր Խրիստովը իր շքախմբով եկավ դիմավորելու Կարմիր բանակին*: Տիկին Մանդալին, տեսնելով գեներալ Խրիստովին, գնդակահարեց նրան: Պատճառն այն էր, որ գեներալը գնդակահարել էր նրա ամուսնուն: Շքախումբը հանձնվեց ու ձերբակալվեց առանց դիմադ-

րության: Պատերազմը շարունակվում էր: Բուլղարական նոր կառավարությունը գլխավորեց *Չվեկուար*¹⁵¹ հակաֆաշիստական զինվորական կուսակցությունը, պրեմիեր-մինիստր դարձավ Քիմոն Գեորգիևը¹⁵², ռազմական մինիստր՝ գեներալ Միխայր, ներքին գործերի մինիստր նշանակվեց Բուլղարական բանվորական կուսակցության անդամ Անտոն Յուկովը: Բուլղարական նոր կառավարությունը պատերազմ հայտարարեց Գերմանիային: Առաջին բանակի հրամանատար գեներալ Ստոյչեվի գլխավորությամբ բուլղարական զորքը միացվեց Սովետական Միության մարշալ¹⁵³ Ֆ.Ի.Տալբուխինի¹⁵⁴ բանակին: Բուլղարական զորքի կանոնավոր զորամասերը հասան մինչև Վիեննա: 1945թ. մայիսի 9-ին Կարմիր բանակի հաղթանակով վերջացավ պատերազմը: Ինձ նշանակեցին երրորդ քաղմասի դրուժինայի պետ: Իմ ձեռքի տակ կար քսան երիտասարդ՝ հայ, բուլղար, հրեա. գիշերները հսկում էինք քաղաքում: Ամեն մի խումբ կազմված էր մեկ միլիցիոներից և երկու դրուժնիկից, որոնք զինված էին կարաբիններով: Յուրաքանչյուր ունեինք տասնհինգ փամփուշտ: Ես բանակում չէի ծառայել, այդ զենքից գաղափար չունեի, ես իմ վեցհարվածով բավարարվեցի: Ֆաշիստների կողմից ոչ մի անկարգություն ոչ սկսվել էր, ոչ եղել. կարծես նրանք ոչ էլ կային: Խրիստովի խումբը¹⁵⁵ գնդակահարվեց¹⁵⁶: Անվտանգության կոմիտեն պետի՝ Դրաժևի գլխավորությամբ գնդակահարվեց: Գնդակահարվեցին նաև 104 դեպուտատներ, ցար Բորիսի եղբայրը և բոլոր մինիստրները¹⁵⁷: Մի խումբ դեպուտատներ, գրողներ, ժուռնալիստներ¹⁵⁸ տարբեր ժանկետներով դատապարտվեցին: Անվտանգության երեք անդամները՝ Պետրովը, Մուրադովը, Թոմովը, փախել էին Շումեն¹⁵⁹, քանի որ մասնակցել էին տասներկու կոմունիստների գնդակահարությանը, ապա ելք չգտնելով՝ ինքնասպան էին եղել Շումենում:

Եկավ 1946թ.: Հայտնի դարձավ, որ պիտի ներգաղթ կազմակերպվի Սովետական Հայաստան¹⁶⁰, եկավ պատգամավորը՝ ընկեր Խրիմյանը, որը Հայաստանի առողջապահության մինիստրն էր: Կազմվեցին արձանագրություններ: Մենք երեք ընտանիք էինք: Այսպես՝ Բուլղարիայի առաջին քարավանով եկանք հայրենիք. տղաս՝ Հարությունը, չորս տարեկան էր: Երրորդ օրը աշխատանքի ընդունվեցի քաղտվետի մեխանիկական գործարանում որպես փայլեցնող: 1951թ. ունեցա ևս մեկ արու զավակ՝ Միմոնը:

Գժբախտությունները

Գրանից հետո ինչպես անցան տարիները՝ չիմացա: Հարությունը տասներորդ դասարանում էր, երբ հազաց, ու բերանից արյուն եկավ: Պետք է ասեմ, որ հայրս երկու տուն այն կողմ էր ապրում, այնպես որ այդ օրը Արշո քույրիկն էլ մեր տանն էր: Խառնվեցինք իրար. դա թոքախտի նշան էր, ես այդ հիվանդությունից շատ էի վախենում: Ես ինձ չկորցրի. վերցրի Հարությունին, միասին գնացինք դպրոցի դիրեկտոր Ալոյանի մոտ, բացատրեցի եղելությունը: Նա գրություն տվեց դիսպանսերի վրա: Գնացինք, մի ժամից ավել քննեցին, եկան այն եզրակացության, որ ուժեղ հազից արյուն է եկել, ոչ մի թոքախտի նշան էլ չկա, թոքերը շատ մաքուր են: Ուրախ-ուրախ եկանք տուն: Արշո քույրիկը հորս ասել էր, հայրս լաց էր եղել, գնացի հանգստացնելու, ինձ տեսավ, նորից լաց եղավ: Ես հայտնեցի, որ ոչինչ չկա, բայց նա չէր հանգստանում: Հայրս ո՛չ մորս, ո՛չ էլ Անոյի մահվան ժամանակ լաց չէր եղել, հիմա չէր հանգստանում. այդ ժամանակ նա 62 տարեկան էր:

Թոքախտ

Հիշեցի, որ այն տարիներին Վառնայում Արշո քույրիկից բացի ոչ ոք ուշադրություն չէր դարձնում ինձ վրա: Շատ էի նիհարել, «նիկելի» աշխատանքը շատ ծանր էր: Չարլի Չապլինի նման աշխատում էի ութ ժամ: Արդեն մի բանի նման էլ չէի: Տղամարդ տեղովս ընդամենը 66 կգ էի, հիմա 100 կգ եմ: Սկզբից գլխի ցավեր ունեի, գիշերները քրտնում էի, ջերմաստիճանս բարձրանում էր: Ստիպված եղա գնալ բանվորական դիսպանսեր: Բժիշկը քննեց, գլուխը շարժեց, ուղարկեց ռենտգենի, որը տվեց հետևյալ դիագնոզը՝ թոքերի բորբոքում: Պատկերի վրա ռենտգենոլոգը գրեց և ուղարկեց բժշկին: Հատուկ թերթիկների վրա երևում էր, որ թոքերիս վրա խզբզներ կային: Բժիշկը նայեց թերթիկին և ասաց, որ էլ չեմ աշխատելու, քանի որ թոքերի բորբոքում ունեմ և պիտի լավ բուժվեմ: Տասնհինգ օրով աշխատանքի ազատման թերթիկ տվեց, ըստ որի՝ պիտի ստանայի աշխատավարձի 60%-ը:

-Ամուսնացա՞՞ծ ես:

-Ո՛չ:

-Եթե սիրած աղջիկ ունես, չհամբուրվես, տանը աման-չամանդ կջոկես, հատուկ բաժակով ջուր կխմես, այս հիվանդությունը վարակիչ է: Մտքումս ասացի.«*Մաքուր թոքախարով եմ հիվանդ*»:

Լեզուս կապ էր ընկել: Բուլղարիան այդ տարիներին առաջին տեղն էր բռնում թոքախտով: Ստատիստիկայի¹⁶¹ համաձայն՝ ամբողջ Եվրոպայում յուրաքանչյուր տասնյոթ թուպեում մեռնում էր 18-25 տարեկան մեկ երիտասարդ: Այդ սոսկալի հիվանդությունից մահացան ինձ ծանոթ մարդկանցից, հայ ընկերներից, բարեկամներից, ազգականներից, ծանոթներից շատերը՝ երկու մորեղբայրներս (1913թ.), Մարտիրոսը (նա, որ հայտնեց հորս՝ կնոջ հետ գալը), Խորենը, Կարալիսը, Հովսեփը, Խաչիկը, կոշկակար Վարդանն ու Ալեքսանը, մի շարք թուրք, բուլղար, հրեա տղաներ ու աղջիկներ, որ մեկն ասեմ, իսկ Նազարեթի մասին հետո կասեմ: Այսքան դժբախտություններից հետո, իհարկե, լեզուդ կապ կընկնի:

100%-ով կատարում էի բժշկի խորհուրդները, գործածում դեղերը: Ես մի փոքրիկ քողտիկ ունեի: Աման-չամանս, անկողինս տեղափոխեցի այնտեղ: Արշո քույրիկը գլխի ընկավ.«*Գևորգ, այդ ի՞նչ է, հիվանդ ես*»: «*Ոչինչ, բան չկա, կանցնի*»: «*Թոքախարով ես հիվանդացել*»: Ինչպես երևում էր, աչքերս արցունքակալվել էին, նայեց ինձ. «*Վայ մեզ*»: «*Չայն չիսնես, թող ոչ որ բան չիմասն*», -բայց, ինչպես երևում էր, հորս ասել էր: Մի առավոտ հայրս եկավ իմ փոքրիկ սենյակը.«*Ի՞նչ է, աշխատանքի չե՞ս գնում, հիվանդ ես*»: «*Մի քիչ տկար եմ, կանցնի*»: Գնաց, ես զարմացա նրա անտարբերության վրա: Էլի օրեր անցան, մի առավոտ Արշո քույրիկը եկավ սենյակս: «*Գնանք*»: «*Ու՞ր*»: «*Քո հոգսը չէ, գնանք*»: Գնացինք ուղիղ Մերսեդեսի տունը: Պետք է ասեմ, որ Մանթաշովը մի քիչ ֆեղջեր էր՝ անդիպլոմ բժիշկ: Մերսեդեսը խիստ զայրացավ վրաս.«*Այսքան ժամանակ ի՞նչու էիր սպասում*»: Տասը թուպե հետո արդեն ֆայտոն էինք նստել. «*Դոկտոր Դեչևի փուն*»: Դոկտոր Դեչևը¹⁶² թոքախտի մասնագետ էր: Մի քանի հիվանդ սպասում էին, երբ հերթը հասավ մեզ, երեքով մտանք բժշկի մոտ: Բժիշկը Մանթաշովին ճանաչում էր, Մերսեդեսին ճանաչեց: Բարևելուց հետո հարցրեց, թե ով է հիվանդը, Մերսեդեսը ցույց տվեց ինձ: Ես թերթիկը տվեցի բժշկին: Մեկ ինձ նայեց, մեկ թերթիկին՝ հանվիր: Մանրագնին քննելուց հետո ռենտ-

գեների ուղարկեց:

-Հազնվիր: Այս թերթիկը տվողը իր գլխում բորբոքում ունի, քո թոքերը կաթի նման մաքուր են, վախենալու հարկ չկա, շատ միհար ես, պետք է լավ սնվես, աշխատանքի թերթիկը կփակես, երկուշաբթի կգնաս աշխատանքի:

Կարծես նոր ծնվեցի, Մերսեդեսը, Արշո քույրիկը ինձ համբուրեցին: Դրանից հետո գնացիմք ուղիղ Մերսեդեսի, ապա՝ մեր տուն:

Հիմա գանք Նազարեթին: 1945թ. էր, ես նորից իմ ընկերոջ՝ դաշնակցական Հարությունի մոտ սկսեցի կոշկակար աշխատել. նա կոշկակարի արհեստանոց ուներ: Իրենից փոքր տասնյոթ տարեկան եղբորը՝ Նազարեթին, տվեց ինձ աշկերտ: Տղան ամրակազմ էր, բռնցքամարտով էր զբաղվում, մի խոսքով, առողջ տղա էր: Մարտ ամիսն էր, ուժեղ հազաց.«*Ճո՛ւ, այդ ի՞նչ հազ է*»: «*Չգիտեմ, միաժամանակ այդպես է*»: Ճաշին գնացիմք բանվորական ճաշարան, ճաշեցիմք, դուրս ելանք, նորից ուժեղ հազաց, խորխու հանեց, որի մեջ արյան բծեր կային: «*Նազարեթ, այս ի՞նչ է*»: «*Այս մի քանի օր է՝ այդպես է, խորխիս մեջ արյան բծեր կան*»: Ես Նազարեթին շատ էի սիրում իր միամտության, ազնվության և խելոքության համար: Եղբայրը քաղաքում չէր, մի շաբաթով Շումեն էր գնացել: «*Նազարեթ, դրամ ունե՞ս*»: «*Ունեմ*»: «*Հարյուր լևա րուր*»: Գնացիմք ուղիղ դոկտոր Դեչևի մոտ: Ինձ չճանաչեցիր, բայց ես բացատրեցի, որ Մերսեդեսի բարեկամն եմ: «*Հա՛, հիշեցի, դեռ ո՞ղջ ես*»: «*Ինչպես րեսնում ես: Այս երիտասարդին մի լավ կքննես*»: Նույն պրոցեսը կրկնվեց, ինչպես ինձ հետ: Կանգնեցրեց ռենտգեն ապարատի առաջ, ինձ էլ տարավ ռենտգենի հայելու մոտ, որ նայեմ.«*Նայիր այսպեղ*»: Բոլոր ներքին օրգանները երևում էին: Թոքերի վրա բծեր, ձախ թոքի վրա տասը կոպեկի չափ կավերնա՝ խոց, մի հատ էլ՝ ավելի փոքր: «*Տեսա՞ր*»,-կամաց հարցրեց բժիշկը: «*Տեսա*»: «*Հազնվիր, երիտասարդ, գնա՛: Բո ի՞նչն է*»: «*Ընկերոջս փոքր եղբայրն է*»: «*Ոչինչ չի փրկի, չախ կողմը՝ երկու կավեռնա, աջ կողմն էլ բորբոքված է*»: Ես դուրս եկա շատ տխրած: Նազարեթը սպասում էր ինձ: «*Գործերս ինչպե՞ս են*»: «*Ոչինչ, լավ են, եղբայրդ կգա, կմտածենք*»: Մի քանի օրից Հարությունը եկավ: Ես ամեն ինչ պատմեցի նրան: «*Այդ ինչպե՞ս է պարտահեղ*»: «*Բժիշկն ասաց, որ շար ուժեղ մրսեցրել է թոքե-*

րը»: «Դուկտոր Դեչևի մոտ երթալու կարիք չկա, կզնանք ամերիկյան բժշկի մոտ. չնայած նա ռենդգեն ապարատ չունի, բայց թրքահայ հիվանդության մասնագետ է և լավ է հասկանում այդ հիվանդությունից»:

Ամերիկյան բժիշկը մոտ յոթանասուն տարեկան էր, նայում էր մարդու երեսին և գիտեր, թե ինչ հիվանդություն ունի: Գնացինք նրա մոտ, շատ կատակասեր մարդ էր: Երեքս միասին մտանք նրա կաբինետը: Նայեց մեզ, հարցրեց.

-Երեքդ ալ հիվա՞նդ եք:

Ես ասացի.

-Նայե՛ և գիտցի՛ր:

Ուշադիր նայեց:

-Դու, փոքրիկ, հանվի՛ր:

Ափը դրեց թիկունքին, թփփացրեց: Բժիշկը կարծես մի ակնթարթ սառեց, սթափվեց, սկսեց մանրագնին ստուգել:

-Երիտասա՛րդ, հագնվի՛ր, գնա՛: Ձեր ի՞նչն է:

Հարությունը ասաց.

-Փոքր եղբայրս է:

-Այլևս բժշկի սանտիմ չծախսեք, եղածը եղած է: Դրամի կողմից ինչպե՞ս եք:

-Ոչինչ, լավ եմ:

Դուկտոր Դեչևի ասածը լրիվ հաստատեց:

-Հիմա մարտ ամիսն է, մասնավոր կարգով վեց ամսով ուղարկե՛ք Տրոյան¹⁶³, հրաշքներ պատահում են, շատ առողջ է:

Մի շաբաթ հետո Նազարեթն արդեն Տրոյանի առողջարանում էր: Վեց ամիս հետո եկավ, լավ կազդուրված էր, ամբողջ ձմեռ եղբայրը չաշխատեցրեց, միայն երբեմն գալիս էր ինձ օգնելու: 1946թ. մարտին վեց ամսով նորից ուղարկեց: Ալ Նազարեթին չտեսա:

Հունիսին ներգաղթեցի Հայաստան: Արմենից նամակ ստացա, գրել էր, որ Նազարեթը նոյեմբեր ամսին մահացել է, և որ Հարությունը Նազարեթի մահվանից երեք ամիս առաջ ամուսնացել է, հարսանիք չի արել, այլ միայն պսակադրվել է: Մի ամիս առաջ Արմենն էլ էր ամուսնացել:

Գանձ գերդաստանիս

1952թ. մահացավ մեծ մայրս: 86-87 տարեկան էր: 1962թ. 73 տարեկանում մահացավ հայրս: 1970թ.՝ 60 տարեկանում մահացավ Արշո քույրիկը: 1987թ. մահացավ Հարությունը 71 տարեկան հասակում: Չգիտեմ՝ ինչքան պիտի ողբամ հարազատներիս համար:

Հորս կողմից մեծ մայրս Անուշիկ Մանթաշյանն էր, մեծ հայրս՝ Համայակ¹⁶⁴ Հայրապետյան: Մեծ մորս հինգ զավակներն են Մարիամը, Արտեմը, Կարապետը, Օնիկը, Խաչիկը: Մորս կողմից մեծ մայրս Եղիսաբեթ Մեմերջյանն էր, մեծ հայրս՝ Սիմոն¹⁶⁵ Մեմերջյան: Մայրս՝ Ալմաստը, յոթ եղբոր քույր էր, ահա նրանց անունները՝ Խաչիկ, Տիգրան, Հակոբ, Վարդան, մյուսներինը չգիտեմ:

Անցան տարիներ: Տղաներս երկուսն էլ բարձրագույն վերջացրին, Հարությունը ամուսնացավ, երեք զավակ ունի. Հասմիկը՝ 13 տարեկան, Թագուհին՝ 6 տարեկան, Գևորգը՝ 5 տարեկան: 1979թ. մահացավ կինս՝ Քնքուշիկը: Կնոջս մահը շատ մեծ կորուստ էր, մինչև հիմա էլ խորը վշտի մեջ եմ: Թոռնիկներովս եմ մխիթարվում: 1982թ. ամուսնացավ Սիմոնը: Ունի մի աղջիկ (Թագուհի երրորդ): Հիմա 66 տարեկան եմ, բոլորս մի տան մեջ ենք սպրում:

*
* * *

Ես շատ տարի գլուխ էի ծեծում հասկանալու համար, թե ինչու է մեծ մայրս այդքան ատում Ղևոնդուհուն: Արշո քույրիկը իր մահից մի տարի առաջ պատմեց: Ինչպես ասացի, Հակոբը մեծ հորս հորեղբոր տղան է եղել: Իբրև թե Ղևոնդուհու տանեցիք գիր են արել, որ Հակոբը ամուսնանա իրենց աղջկա հետ, որն այն ժամանակ ընդամենը տասնհինգ տարեկան է եղել: Աներձագիս ծնվելուց հետո՝ 1912թ., նրան իր սկեսրոջ երեսին թողնելով, Ղևոնդուհին տեղափոխվել էր Վարգեղ՝ իր հարազատների մոտ ապրելու, ամուսինը՝ Հակոբը, զգացել էր իր սխալը և ամեն ինչ թողնելով՝ հեռացել էր Ղևոնդուհուց: Դրանից հետո ոչ ոք չգիտի, թե ինչ է եղել: Իբրև թե Հակոբը սպանվել է 1915թ. պատերազմին:

1968թ. հորս հասցեով մի նամակ եկավ Պոլսից: Փոստատարի հետ վեճի բռնվեցինք՝ ասելով, թե մենք Պոլսում ծանոթ-բարեկամներ չունենք:

-Այ ընկեր, հասցեում Հայրապետյան Կարապետ գրված է: Բարեկամության 65 գրված է:

-Հա՛, ամեն ինչ ճիշտ է, բայց նամակը մերը չէ:

-Լավ, բացենք, տեսնենք:

Արշո քույրիկը Վառնայում մի թուրք ընկերուհի ուներ՝ Յուրքյուշ անունով, որը մեզանից մի քանի ամիս առաջ ներգաղթել էր Պոլիս: Նամակը այդ կինն էր ուղարկել: Յուրքյուշը, իմանալով, որ Արշո քույրիկը ներգաղթել է Հայաստան (Արշո քույրիկի հասցեն իմացել էր Վառնայում ապրող իր մոր միջոցով), նամակ էր գրել: Նամակը գրված էր բուլղարերեն, այնպես որ կարդալը դժվար չէր:

Նամակ գրեցինք Պոլիս, հարցրինք, թե Պոլսում մեզ ծանոթ մյուս ընտանիքներն ինչ են անում, այդ թվում նաև Ֆիրդեսի՝ «հայու դահիճ» հոր ընտանիքը: Արշո քույրիկը նայեց ինձ, ասաց. «*Ֆիրդեսի համար չէ՞ս հարցնում*»: «*Ի՞նչ Ֆիրդես*»: «*Հայրե՛, ես ամեն ինչ գիտեմ, Ֆիրդեսը ամեն ինչ պատմել է ինչ: Այսքան փարի է անցել, նամակը իմ անունով է, գրի՛ր, հարցրու*»: Արշո քույրիկի խնդրանքը կատարեցի, չնայած ես էլ էի ուզում իմանալ: Նամակը մեր հարևանուհին սրբագրեց, ուղարկեցինք: Երեք ամսից պատասխանը եկավ: «*Ֆիրդեսը 1940թ. ամուսնացել էր մի սպայի հետ, մի աղջիկ ու մի փրկա ունի, շար լավ են ապրում: Ֆիրդեսի հայրն ու մայրը մահացել են, Յուրքյուշենցից մի 300 մ վրա մի հոյակապ քնակարանում են ապրում: Մորեղբայրն ալ մահացել է, մորեղբոր կինը կա*»: Մի քանի անգամ էլ նամակ ստացանք, սակայն 1970թ. հետո այլևս նամակ չստացանք:

*

* * *

Գանք եղբորս, որն ինձնից երկու տարով փոքր է: Նա այլ հայացքներ ուներ, մեր աստղը չբռնեց մեկմեկու, եթե մի տարի խոսում էինք միմյանց հետ, ապա երեք տարի չէինք խոսում: Նա դեռ Վառնայում ամուսնացավ: Ունեցավ մեկ տղա և մի աղջիկ: Հիմա չորս թոռ ունի, մի տարի է, ինչ հաշտ ենք¹⁶⁶:

Հիմա գանք Միհրանի երկրորդ աղջկան՝ Աշխենին¹⁶⁷: Տասնհինգ տարեկան էր, որ եկավ մոր մոտ ապրելու: Միասին ներգաղթեցինք հայրենիք: Միհրանը չեկավ: Աշխենը ամուսնացավ Սերոբի հետ, ու-

նի երկու տղա, որոնք ամուսնացած են: Աշխենն ունի չորս թոռ: Երբորս հետ հաշտվելուց հետո եղանք մի մեծ գերդաստան: Եղած տխրությունն ու ուրախությունը միասին էինք անցկացնում: Մեզանից հետո երկու քենիներս ներգաղթեցին Հայաստան, առանց աներձագիս, ամուսնացան: Մարիամն¹⁶⁸ ունեցավ երկու աղջիկ, մեծը ամուսնացավ, ունի աղջիկ, Էլիզը ունի մի տղա՝ 18 տարեկան: Նրանց հայրը մահացավ 1972թ. 86 տարեկան հասակում:

Գանք աներձագիս, որը մնաց Վառնայում: 1947թ. հունվարի 1-ին ծննդաբերության ժամանակ մահացավ կինը՝ թողնելով մի աղջիկ՝ Ղևոնդուհուն: Երկրորդ անգամ ամուսնացավ բուրգասցի¹⁶⁹ մի որբևայրի կնոջ հետ: 1966թ. կնոջս հետ գնացինք Բուլղարիա: Ինչպիսի՞ մեծ ուրախություն ազգականներիս, մասնավորապես՝ Մերսեդեսի համար¹⁷⁰, որը կորցրել էր իր 21 տարեկան միևուճար որդուն: Տղան Սոֆիայում¹⁷¹ սեղանի թենիսի չեմպիոնատին մասնակցելու ժամանակ արևահարվել էր, կորցրել գիտակցությունը: Շտապօգնությունը նրան տարել էր հիվանդանոց, որտեղ սխալ բուժման պատճառով ուշքի չեկած մահացել էր: Ի՞նչ մեծ դժբախտություն Հայկի և Մերսեդեսի համար: Տղային թաղել էին հերմետիկ փակած ցիմնե դագաղի մեջ, առանց երեսը տեսնելու:

Արմենը մեր՝ Հայաստան գալուց հետո ամուսնացել էր: Չէր կարող հավատալ, որ բաժանումից քսան տարի անց հանդիպել ենք: Ավելի շատ Մերսեդեսի ամառանոցում էինք լինում:

Մի հանդիպում ունեցա, որը շատ հուզեց ինձ: Հիանալի օր էր, պատրաստվում էինք ծով գնալ, հանկարծ մի մեքենա կանգնեց ամառանոցի առջև: Մոտ հիսուն տարեկան մի շատ գեղեցիկ կին մի տղամարդու հետ մտավ այգի: Մերսեդեսը և Հայկը դիմավորեցին նրանց, հրավիրեցին նստելու: Հասկացա, որ տղամարդը բուլղար է, գրույցը տարվում էր բուլղարերեն: Ես ուշադրություն չդարձրեցի գույզին, բայց երբ Մերսեդեսն ասաց՝ Մադլեն, ինչպե՞ս ես: Նայեցի տիկնոջը և, ո՛վ զարմանք, Մադլենն էր՝ իմ դասընկերուհին: Նա էլ ճանաչեց ինձ, կանգնեց, ձեռքը համբուրեցի: Զանի՜ տարի էր անցել այն օրից, երբ Մադլենը պարոն Աբելին հայտնեց, որ մայրս մահացել է: Ամուսնացել է, ունի երկու տղա, մեկ աղջիկ: Աղջիկը նունպես ամուսնացել է, ունի մեկ աղջիկ: Բոլորս միասին գնացինք ծովափ,

հիանալի օր անցկացրինք: Աներձագիս տանը քիչ էինք լինում: Աներձագիս աղջիկը՝ Գևորգուհին, հաճելի աղջիկ էր, մինչև հիմա ամուսնացած չէ: 1980թ. մահացավ աներձագիս երկրորդ կինը:

1969թ. Մերսեդեսը հրավերով եկավ Երևան: Հայաստանի մասին ուներ այլ հայացքներ, մասնավորապես՝ վատ կարծիքի էր Երևանի մասին: Գիշեր էր, երբ ժամանեց Երևան: Նստեցինք սեղան, բուխանկա հացը կտրեցի, վերցրեց, նայեց.«*Այս հացը որտեղի՞ց առիր*»: «*Խաևուրթից, ինչու՞ ես հարցնում*»: «*Ընկերուհիս երեք ամիս առաջ հոս էր, ասաց՝ Երևանի հացը չի ուրվի*»: «*Ընկերուհուդ ես ճանաչում եմ, Յոլիենն էր, ես նրան հյուրանոցում տեսա: Նա միևնչև ուղևորածուծը դաշնակցական էր, ուրիշ բան չի գտել, հացից է բռնել*»:

Առավոտյան գնացինք Երևանում շրջելու, զարմացավ.«*Այս ի՞նչ հրաշալի քաղաք է Երևանը, այս ի՞նչ հոյակապ վարդագույն շենքեր են, ուրեմն Յոլիենն ամեն ինչ սուտ է ասել՝ փողոցները՝ ցեխուտ, նեղ, առանց լուսավորության*»: «*Այս գիշեր նորից կգնանք զբոսնելու, կրեսենս, թե ինչքան գեղեցիկ է գիշերային Երևանը*»: Գիշերը ավելի հիացավ Երևանով.«*Ես եղել եմ Փարիզ, Լոնդոն, Հռոմ, Բեռլին, բայց Երևանը ուրիշ է, չեք Երևանը*»: Եղբորս տղան Մերսեդեսին Թիֆլիս տարավ, ապա գնացինք Սարդարապատ, նայեց Մասիսին ու ասաց.«*Այս ի՞նչ բարձր է Արարատը*»: Մի ամսով նրա մնալու ժամկետը երկարացրինք: Երկու ամիս մնալուց հետո հիանալի տպավորություններով վերադարձավ Բուլղարիա՝ ասելով.«*Նորեն պիրիզ գամ ամուսնուս հեպ*»: 1968թ. աներձագս կնոջ հետ եկավ Հայաստան. ամբողջ ծանրությունը ինձ վրա էր, ամեն ինչ արեցի, որ լավ զգան իրենց, բայց աներձագս ուզում էր, որ իրենց տանեմ Մոսկվա, Կիև, Լենինգրադ, ինչը ես չէի կարող, սակայն բաջանաղներիս հետ նրանց համար 250 ռուբլիանոց «Չմամյա» հեռուստացույց նվեր առանք՝ իր պահեստամասերով, բայց ինձնից նա նեղացած գնաց:

1975թ. Միլվին¹⁷² իր ամուսին Բարետի հետ Ֆրանսիայից երեք օրով եկավ Հայաստան: Գիտեի, որ Բարետը շատ հարուստ էր.«*Այ կիև, այնպես դիմավորենք, որ զարմանան*», -ասացի ես Դշխուհուն: Այնպիսի մի սեղան էր պատրաստել կլինս՝ տապակած հավ, սուպ¹⁷³, ընտիր կոնյակ, միրգ՝ ամեն ինչի լավը: Գնացի հյուրանոցից վերցրի,

մոտ երկու ժամ Երևանով շրջեցինք, գնացինք Ծիծեռնակաբերդ¹⁷⁴, Եղեռնի հուշարձան: Եկանք տուն, սեղանը պատրաստ էր: Միվիին նայեց.«Այս ի՞նչ է, մենք այս ուրեղիքը մի ամսում չենք ուրի»:
«Նստե՛ք, հիմա կրեսնեք, թե ինչպես են ուրում»:
Իսկուհին¹⁷⁵ ճնճողուկի պես էր ուտում, ամուսնուն էլ չէր թողնում՝ ասելով.«Զի՛չ կեր, կչաղանաս¹⁷⁶»: Բարեսը պայթեց.«Թո՛ղ, ինչքան ուզես, այն-քան պիտի ուրես: Մայո՛ Գևորգ...»: «Ընկե՛ր Բարեպ, մայո Գևորգը ցգե, ընկեր Գևորգ ըսե, ավելի լավ է»:
«Ես եղա մի քանի ֆրանսահայերի մոյ, շար խեղճ են ասրում, րուներնին բան չկա»:
Տարա սառնարանը բացեցի՝ ասելով.«Նայե՛, ի՞նչ չկա»:
«Լավ կապրիս»:
«Ընկե՛ր Բարեպ, քուկին ծանոթներդ աշխատել չեն սիրեր, վարժված են ուրիշին աշխատածը ուրելու, հոս պիտի աշխատիս, որ ուրես»:
Շատ ջերմ բանավիճեցինք: «Ուրիշ անգամ վիզայով կգամ, կմնամ երկար»:
Մինչև հիմա էլ չեն եկած¹⁷⁷:

Ես Վառնայում հեռավոր մի ազգական ունեի՝ Մինաս Շահբազյանը, իր ազգանունով շատ էր պարծենում՝ «Շահ»: Մինչև ուղնուծուծը երդվյալ դաշնակցական էր: Կամավոր պիտի գնար, հայրս և նրա մորեղբայրը տասն օրով բանտարկեցին նրան: Մայրը, որ մի ծեր կին էր, ասաց.«Եթե երթաս, ինչի ծովը պիտի ներես»:
Այսպիսով՝ հետ մնաց, ինչի պատճառով նրան վտարեցին Գաշնակցությունից: Մինասի հետ մենք մահացու թշնամիներ էինք. չնայած որ նա ինձանից հինգ տարով մեծ էր, շատ անգամ մեր միջև տուրուդմիտոց է եղել: Մի անգամ՝ մայիսի 28-ին, նա, եռագույն դրոշակը ձեռքին կապած, ման էր գալիս. մինչև ուշքի կգար, թևակապը հանեցի, գցեցի գետնին ու ոտքերով տրորեցի: Ուզեց հարձակվել: «Չարժվես, շանսարակ կանես»:
Աներձագս հասավ, կանգնեց մեր միջև: «Չե՞ս ամաշում, Վառնայում հարյուրից ավել մերդիզոյոցի կա, միայն դու ես դաշնակցական, մեր պարիվը գցում ես»:

Մինասի քույրը Երևանում է ասրում, երբեմն գնում են տեսության: Քույրը մի օր հայտնեց, որ Մինասը գալու է Երևան:

-Մինասը ի՞նչ գործ ունի Հայաստանում:

Նա Հայաստանի մահացու թշնամին էր. դաշնակցականները թուրքերի հետ պիտի միանային Հայաստանը ազատագրելու համար: Ես չգնացի ո՛չ դիմավորելու, ո՛չ էլ քրոջ տուն՝ տեսակցության: Սա

հինգ տարի առաջ էր: Երկրորդ անգամ եկել էր որպես զբոսաշրջիկ: Այդ ժամանակ ես քաղաքում չէի: Պատահաբար գնացի քրոջը տեսության:

-Մինասը մեկ շաբաթ առաջ հոս էր, կուզեր քեզի տեսնալ: Հիմա այնպես հայրենասեր է դարձել, ասում է, որ շատ է սխալվել այն ժամանակ:

-Ես քաղաքում չէի:

Անցյալ տարի քույրը հայտնեց.

-Մինասը գալու է, գնա՛ դիմավորելու:

Քրոջ տղան ասաց.

-Գևորգ, արի՛ վաղը գնանք:

-Լավ, գնանք:

Մինասը վազոնից իջավ, նայեց, զարմացավ: Կնոջ հետ, որին շատ լավ գիտեի, համբուրվեցինք: Մինասը եկավ, առջևս կանգնեց, աչքերը թաց էին, գրկախառնվեցինք:

Իսկական հայրենասեր էր եղած:

Գնացինք քրոջ տուն, քրոջ ուրախությանը չափ չկար, որ հաշտվել էինք: Մյուս առավոտ քրոջ տղան զանգեց.

-Գևորգ, արի՛, Մինասին տա՛ր օվիլր, ես հիվանդ եմ: Գնացի, մի-մի բաժակ մաստիքա ու սուրճ խմելուց հետո դուրս եկանք:

-Գևորգ, քայլելով գնանք:

-Չէ՛, հեռու է, մետրոյով կգնանք:

Քրոջ տունը շատ մոտ էր «Բարեկամություն» կայարանին: Նրանց մի կերպ կանգնեցրի էսկալատորի վրա: Բուլղարիայում՝ ո՛չ - Վառնայում, ո՛չ էլ Սոֆիայում, դեռ մետրո չկա:

-Գևորգ, ու՞ր ենք իջնում, ինչքա՛ն խորն է:

-Մոտ հիսուն մետր գետնի տակն ենք:

Երեք գնացք բաց թողեցինք, որ կայարանը դիտենք: Չորրորդին նստեցինք, ամեն կանգառին դուրս էին գալիս՝ կայարանները տեսնելու: Հիացած էին.

-Այս ի՛նչ աշխատանք են թափել բանվորները:

-Հավանեցի՞ք մետրոն:

-Թերթերում կարդացինք, բայց սա հրաշք է, գետնի տակ մի քաղաք ևս:

Օվիրից դուրս գալուց հետո քաղաքում ման եկանք:

-Գևորգ, հոգնեցա, երթանք տուն, միայն թե մետրոյով:

Առավոտ նրանց բերեցի մեր տուն, հյուրասիրեցի: Նրա վիզան երեսուն օրով էր, իմ ծանոթների միջոցով տասնհինգ օրով երկարացրինք: Օր չէր լինում, որ գեթ մի անգամ մեր տուն չգալին:

-Գևորգ, քեզի եղբորս պես սիրեցի:

-Հայդե՛, Սինա՛ս, մոռացա՞ր անցյալը, իրար գգում էինք:

-Ճիշտ է, որ սխալվել եմ:

Շատ ջերմ բաժանվեցինք: Մինասը ասաց.

-Նորից պիտի գամ:

-Եթե ողջ մնանք:

-Հարյուր տարի պիտի ապրեն:

Ինչպես երգիչ եղա

Մեր՝ Բուլղարիա գնալուց երկու տարի առաջ՝ 1986թ., մահացել էր Մերսեդեսի ամուսինը՝ 81 տարեկանում, իսկ մեկ տարի առաջ մահացավ Մերսեդեսը՝ 80 տարեկանում¹⁷⁸: Վառնայից նոր լուր ստացա, որ դժբախտ պատահարի հետևանքով մահացել է Արմենը՝ մոտ 60 տարեկան¹⁷⁹ հասակում:

1983թ. Երևանում կազմակերպվեց բուլղարահայ վերաբնակվածների երգչախումբը¹⁸⁰ Անդրանիկի գլխավորությամբ, դիրիժորն էր Սամվել Վարոնցյանը: Մի տարի հետո հանդիպեցի Անդրանիկին, որն ինձ ճանաչում էր օպերայից¹⁸¹: Նա ասաց. «*Ընկեր՝ Հմայակյան, ինչո՞ւ չես մտնում մեր երգչախումբ*»: Ես էլ ասացի. «Ինձնից ի՞նչ երգիչ. ո՛չ նոտայից եմ հասկանում, ո՛չ ալ ձայն ունեմ»: Անդրանիկն ասաց. «*Այ ընկեր, մենք երեսուն երգիչ ենք, գիտես, թե բոլորն էլ նոտայից հասկանու՞մ են կամ երգել գիտե՞ն, կգաս, բասերի մեջ կերգես*»: Անցան օրեր: Նորից հանդիպեցինք, փորձի օրն էր: «*Արի՛ գնանք,-ասաց Անդրանիկը,-ընկերներիդ տե՛ս*»: Գնացի: Այնտեղ էին իմ երկու բաջանադները, քենիս, մի քանի ծանոթներ և Թորոսյան Անդրանիկը: Նատեցի բասերի մոտ: 1986թ. դարձա երգիչ: Անդրանիկը երգչախմբի կազմակերպիչն էր, նա նաև դիրիժորի օգնական էր: Դիրիժորն էր օպերայի երգչախմբի դիրիժոր Սամվել Վա-

րոնցյանը: Ամբողջ երգչախումբը կազմված էր երեսուն կանանցից և քսան տղամարդուց: Դասավորված էին չորս ձայներով, տղամարդիկ՝ բասեր, տենորներ, կանայք՝ ալտեր և սոպրանոներ: Երգչախումբը պատկանում էր մշակույթի պալատին: Նրանք աշխատում էին անվճար և սովորեցնում էին հայերեն, ռուսերեն, բուլղարերեն, իտալերեն, ռումիներեն և վերջերս՝ հունարեն երգեր, և մենք շուտ ընթրնում էինք, քանի որ բոլորս էլ բուլղարահայեր էինք. արդեն մոտ քսան երգ սովորել էինք: Մենք փորձերի համար տեղ չունեինք, մի քանի համերգներ տվեցինք, երգչախմբի շնորհիվ դրամական պարզևատրություն ստացանք, հետո որոշվեց մի շինություն վարձել: Մշակույթի պալատի ղեկավարության աջակցությամբ սկսեցինք շրջաններ գնալ ու համերգներ տալ: Կիրակի գնացել էինք Դիմիտրովի ավան, հետո՝ Իջևան, մի օր էլ հայտնի դարձավ, որ երգչախումբը ցրելու վտանգ կա:

Հովհաննիսյան Արամը համոզել էր Սամվելին՝ մեր դիրիժորին, որ միանա իրեն, Անդրանիկին հեռացնեն երգչախմբից, և Սամվելը վերցնի ղեկավարությունը: Միտք ունեին հեռացնել նաև երգչախմբի մի մասին և բերել իրենց մարդկանց: Ուզում էին ազատել բասերից հինգ հոգու, որոնցից մեկը ես էի: Արամը նույնիսկ ինձ առաջարկեց. «*Եթե Սամվելի օգտին քվեարկես, կմնաս երգչախմբում*»: Ես ձեռքս դրի ճակատին ու հարցրի. «*Դու ջերմությու՞ն ունես, դուք այս 45 հոգուց տասի չայնը անգամ չեք սրանա*»: Մենք Սամվելին դուր չէինք գալիս: Մի գեղեցիկ օր Սամվելը հայտարարեց՝ կա՛մ ես, կա՛մ Անդրանիկը: Բոլորս շշմեցինք: Երգչախմբի անդամները զգում էին, որ ինչ-որ բան է կատարվում: Արամը շատ կուլտուրական ձևով Անդրանիկի դեմ էր պրոպագանդում: Սամվելը համաձայնեց Արամի հետ ու մի քանի փորձերի չեկավ, և ղեկավարության այն հարցին, թե ինչու չի գալիս, Սամվելը պատասխանում է. «*Անդրանիկի հետ չեմ կարող աշխատել*»: «*Ի՞նչ ես առաջարկում*»: Առաջարկում է հարց դնել երգչախմբի առաջ և փակ քվեարկությամբ որոշել, բայց ներկա են գտնվելու նաև մշակույթի պալատի տնօրենը, երգչախմբերի միության տնօրենը՝ իր տեղակալի հետ: Որոշվեց ժողովի օրը: Կուլեկտիվը ներկա էր, ներկա էին նաև երգչախմբի միության տնօրենը և երկու անդամները: Ելույթ ունեցավ Սամվելը: Նա հայտարար

րեց. «Ով գալիս է, Անդրանիկը ընդունում է՝ անկախ նրանից՝ գիրի՞ երգել, թե՞ ոչ: Վերցնենք Հնայակյանին¹⁸², Չովանյանին և ուրիշներին»: Ելույթ ունեցավ Արամը և հայտարարեց. «Անդրանիկը դիրիժորությունից ոչինչ չի հասկանում: Նրան պետք է հեռացնել երգչախմբից, որպեսզի երգչախմբում կարգ ու կանոն լինի»: Ելույթ ունեցավ Անդրանիկը և ասաց. «Այս երգչախումբը արեղծել ենք Արամը և ես: Իսկ որ դիրիժորությունից ոչինչ չեմ հասկանում, Արամը սխալվում է: Ես Բուլղարիայում ավարտել եմ դիրիժորի գծով դասընթացներ: Ես համաշայն եմ փակ քվեարկությանը»: Մշակույթի պալատի տնօրենը, որն իր ձայնը տալու էր Արամին, ասաց. «Անդրանիկը երգչախումբը փանում է քայքայման և ով գալիս է, ընդունում է, օրինակ, Հնայակյանը, որ ո՛չ երգել գիրի, ո՛չ էլ նուրայից է հասկանում. մեր երգչախումբը կփրկի միայն Սամվելը»: Քվեարկությանը չմասնակցեցին Սամվելը և Անդրանիկը: Քվեարկության արդյունքները շատ զարմանալի էին: Քառասունութ քվեարկողներից քառասունմեկը ձայները տվել էին Ադրանիկին, յոթը՝ Սամվելին, միայն Արամը, նրա կինը, տղան և չորս ուրիշ անդամներ: Նույնիսկ երգչախմբի միության տնօրենը զարմացավ: Այսպես՝ Սամվելը հեռացավ, կոլեկտիվը հեռացրեց նաև Արամին: Արամը բողոքեց, բայց նրա ջանքերն իզուր էին: Ժամանակավորապես մնացինք առանց դիրիժորի: Մեզ նոր դիրիժոր նշանակեցին Սարգսյան Գագիկին: Մեզ սկսեցին հրավիրել գյուղեր և քաղաքներ: Եղանք Դիմիտրով ատրական գյուղում, Սպիտակում, Կիրովականում, Իջևանում: Մեծ հաջողություններ ունեցանք, հրավիրեցին նաև Ղափան, բայց չստացվեց: Մեզ միայն մենակատարներն էին պակասում, և գտան բուլղարահայ ժողովրդական արտիստ, օպերայի մենակատար Քարամյան¹⁸³ Հարությունին, բուլղարահայի դուստր Սիլվա Սարյանին և դաշնակահարուհի Նելլի Հարությունյանին: Երգչախումբը ավելի հզորացավ, արդեն 52 երգիչ էին: Երգչախմբային ընկերությունը սիրողական երգչախմբերի մրցույթ հայտարարեց, մեզ էլ հրավիրեցին: 16 երգ երգեցինք՝ բուն ծափահարությունների տակ և առաջին տեղը գրավեցինք, մեզ դրամական պարգև տվեցին ու շնորհեցին ժողովրդական երգչախմբի կոչում, իսկ Ժողովրդական կոչում ստացած երգչախմբի դիրիժորը պետք է ունենար բարձրագույն

կրթությամբ: Գագիկը չուներ: Նշանակեցին տիկին Լուիզային: Նա երկմտանքի մեջ էր, շատ քիչ աշխատեց մեզ հետ, հետո հրաժարվեց: Նշանակեցին բուլղարահայի որդի Քեշիշյան Կոմիտասին: Կոմիտասն ավելի խիստ էր, ավելի պահանջկոտ: Երգչախմբին նոտաներ բաժանեց. ավելի զգաստացանք: 1988թ. Երևան եկավ Պլովդիվի վետերանների երգչախումբը: Երկու երգչախմբեր միասին համերգ տվեցին երգչախմբային ընկերության սրահում: Հիանալի ընդունելություն կազմակերպեցինք, «Արմենիա» հյուրանոցում ճաշկերույթ տվեցինք, միասին բուլղարական երգեր երգեցինք, խոստացան մեզ հրավիրել Բուլղարիա: Հրավերը եկավ 1988թ.: Կոմիտասը մի մենակատար էլ բերեց: Մենք արդեն պատրաստ էինք համերգին: Շաբաթը երեք անգամ փորձեր էինք անում: Կոմիտասն ամեն ինչ անում էր, որ երգչախումբը պատրաստ լինի: 10 օր էր մնացել մեկնելուն, երբ այցելությունը չեղյալ հայտարարվեց: Պլովդիվի վետերանները հրաժարվեցին մեզ ընդունել՝ պատճառաբանելով, որ չեն կարող 65 հոգու ապահովել բնակարանով և սնունդով: Լուրը կայծակնահար արեց բոլորիս, բայց ի՞նչ արած, հրամանը հրաման էր: Մենք Բուլղարիա գնացինք 1989թ. սեպտեմբերին, երբ հյուրանոցի և սնունդի ծախսերը վերցրինք մեզ վրա: Երկու ամիս առաջ սկսեցինք շաբաթական չորս փորձ անել:

Բասերը տասներկու հոգի էին, ամենաջահելը յոթանասուն տարեկան էր: Տենորները՝ տասնհինգ, քառասունհինգ տարեկանից մինչև յոթանասուն: Սոպրանոների մեջ կային մայր ու աղջիկ, տասնու թոռ: Ամենատերիտասարդները տասնութից քսանհինգ տարեկան էին, մեծերը՝ յոթանասուն: Ալտերը՝ հիսունհինգից մինչև յոթանասուն: Մեներգիչ Գարաճյանը՝ յոթանասուն, Սիլվան՝ երեսունհինգ, դաշնակահարուհին՝ քառասունհինգ տարեկան էր: Օրենքով մենք պետք է բժշկական զննություն անցնեինք, ինչը չեղավ: Ինչպես ասացի, սեպտեմբերի 4-ին վաթսունհինգ հոգի նստեցին ինքնաթիռ. բոլոր մեծերը ճնշում ունեին: Մեր բուժքույրը՝ Ադունիկը, զինված էր ամեն ինչով: Մեզ հետ էր տենորներից Կարոն, որ սֆիսահայ էր՝ ծնված 1914թ.: Նա երկու անգամ սրտի ինֆարկտ¹⁸⁴ էր տարել և մեկ ժամ չանցած՝ իրեն սկսեց վատ զգալ: Բուժքույրը սրսկեց, վաերիսահի¹⁸⁵ կաթիլներ տվեց:

Բուժքույրը ինձ ճանաչում էր օպերայից: Օպերայում աշխատել էի երեք տարի: Այն ժամանակ նա կոկորդի բաժնի բուժքույրն էր: Գիտեր, որ ճնշում ունեմ, հարցրեց, թե ինչպես եմ: Ասացի, որ դեռ կաթիլի կարիք չունեմ: Նա չափեց ճնշումս: Սովորաբար ճնշումս 160/80 էր, իսկ ինքնաթիռի մեջ՝ 100/60: «*Աղունի կ, դեռ ողջ ես*»: «*Բա ի՞նչ ես ուզում, 7000 մ բարձրություն, 800 կմ/ժ արագություն, 55 ասփիճան ցուրտ*»: Վալերիանի կաթիլներ տվեց: Բոլոր կասկածելի անդամների ճնշումները չափեց: Մոտ երեք ժամ սրահում ոտքի վրա մնաց: Աշխատակցուհին հայտնեց, որ մեկ ժամից կլինենք Վառնայում և թռչում ենք 7000 մ բարձրության վրա, 800 կմ/ժ արագությամբ, օդի ջերմաստիճանը՝ 59 աստիճան ցուրտ: Իջանք Վառնայի օդանավակայանում. Կարոյին մի կերպ իջեցրին: Բժիշկները նորից արսկեցին:

Ինձ, քննուս և երկու բաջանաղներին եկավ դիմավորելու աներ-ձագիս աղջիկը: Ես չէի ուզում նրա մոտ գնալ, սակայն աղջիկը ասաց. «*Պապաս ասաց՝ Գևորգին ալ կբերես*»: Նա լավ գիտեր, որ ես չեմ գնալու: Աղջիկը երկու բաջանաղներին գոռով տարավ: Մեր երգիչներից մի քանիսին ազգականները նույնպես տարան իրենց տները: Մյուսներին շատ մեծ ավտոբուսով տարան Չլատնի Պյասկի՝ «Ոսկե ավազներ» ծովափի հյուրանոց: Առավոտ գնացի տեսնելու, թե ինչպես էին տեղավորվել մեր ընկերները: Տեսա, որ Կարոն ծովում լողանում է: Բուլղարերեն ասացի. «*Ի՞նչ ես անում, գժվե՞լ ես, Վառնայում սեպտեմբերին շար ցուրտ է, կկապրես, դու՛րս արի*»: «*Քո ինչ գործն է, ես ինչ կուզեմ, այն էլ կանեմ*»: Եկավ բուժքույրը. «*Կարո՛, ջրից դու՛րս արի*»: Նրան չպատասխանեց:

Սեպտեմբերի 4-ին մենք Վառնայում էինք, որտեղ երկու համերգ տվեցինք: Ծափահարություններին վերջ չկար, կանայք հուզված էին, լաց էին լինում: Այցելեցինք Գալաթա, որտեղ գտնվում էր գորավար Անդրանիկի տուն-թանգարանը: Բացօթյա երգեցինք: Երրորդ օրը գնացքով գնացինք Պլովդիվ: Բուլղարական գնացքները քնելու տեղ չունեն: Ութ հոգի տեղավորեցին մի կուպեում՝ չորս-չորս իրար դեմ դիմաց նստած: Գնացք նստեցինք երեկոյան 22⁰⁰-ին: Տասներկու ժամ ճանապարհ գնացինք: Դե արի ու դիմացի՛ր: Բուժքույրը նորից իր պարտականություններն էր կատարում: Նրան հարցնում

էինք. «Կարոն ինչպե՞ս է»: «Արդեն մի անգամ կաթիլ եմ տրվել»: Յերեկվա ժամը 12⁰⁰-ին հասանք Պլովդիվ: Բոլորս էլ շարքից դուրս էինք եկել: Կոլեկտիվում ազգականներ ունեցողներ շատ կային:

Չորրորդ օրը մենք արդեն Պլովդիվ քաղաքում էինք: Մեզ դիմավորեցին այն մարդիկ, որոնք 1988թ. մերժել էին ընդունել մեզ: Մի մասը հյուրընկալվեց հարազատների մոտ (այսպես էինք արել նաև Վառնայում), մի մասը՝ մոտ քսան հոգի, ով որ սոֆիացի և վառնացի էր, գնաց հյուրանոց: Մեզ դիմավորողը քաղաքային կոմիտեի քարտուղարն էր, որը մեզ տրամադրեց կուսակցական հիանալի հյուրանոցը: Այստեղ Կարոն ուշաթափվեց: Բուժքույրը ամեն ինչ արեց, բայց անօգուտ էր. շտապ օգնություն կանչելուց հետո, երբ երակից¹⁸⁶ սրկեցին, նա ուշքի եկավ: Հյուրանոցում ամբողջ տասներեքերորդ հարկը մեզ հատկացրին: Հերթով բարձրացանք: Կարոյի սենյակում ես, բուժքույրը և Չուվանճյանը հերթապահեցինք մինչև գիշերվա ժամը երեքը: Նա կամաց-կամաց զարթնեց: «Կա՛ր, լա՛վ էս»: Ջուր ուզեց ու նորից քնեց: Չուվանճյանն ու բուժքույրը գնացին, ես մնացի մինչև ժամը հինգը, հետո գնացի իմ սենյակ: Ընդհանրապես բոլորն էլ հետաքրքրվում էին նրանով: Ես Կարոյենց տանը շատ եմ եղել: Նրա կինը բուլղարուհի էր, շատ ազնիվ կին էր:

Պլովդիվում մնացինք ութ օր: Հինգ համերգ տվեցինք, երկուսը՝ Պլովդիվի վեստերանների երգչախմբի հետ: Քաղաքային կոմիտեն մեզ երկու ավտոբուսով տարավ Պանչարևո քաղաքը: Հիանալի սրահում ճաշկերույթ տվեցին: Պլովդիվից զատ այցելեցինք ևս երկու քաղաք՝ Մոնչիլովգրադ, Սմոլենց, և Բաչկովո Մոնաստիր՝ վանք:

Մինչև այսօր վանքի հիմնադրման շուրջ պայքար է գնում. կա կարծիք, թե վրացիներն են հիմնադրել, բայց իրականում հիմնադիրը հայ է՝ անունը Գրիգոր: Մի հայ գիտնական ասաց, որ եկեղեցին հայ իշխանի հրամանով հայ վարպետներ են կառուցել, բայց այդ փաստը վկայող փաստաթղթեր չեն պահպանվել: Վանքը պատկանում էր հույներին: Այն ժամանակ որտեղի՞ց Բուլղարիայում վրացի: Ըստ տվյալների՝ հիմնադիրը հայ էր՝ Գրիգոր: Վրացիները Գրիգորա վեյի¹⁸⁷ էին ասում:

Այնտեղից նույն ավտոբուսով գնացինք Մոնչիլովգրադ, որտեղ բացօթյա համերգ տվեցինք: Քաղաքի հյուրասրահում հիանալի

ճաշկերույթ տվեցին: Երկու գիշեր անց վերադարձանք Պլովդիվ: Այս բոլորը կատարվեց սեպտեմբերի 9-ին: Բոլոր համերգները անցան հիանալի: Նույնիսկ հայկական եկեղեցում երգեցինք: Այստեղ էլ կանայք հուզմունքից լալիս էին:

Պլովդիվում ութ օր մնալուց հետո մեկնեցինք Սոֆիա, որտեղ մնացինք չորս օր և երեք համերգ տվեցինք: Բոլոր քաղաքներում՝ Վառնա, Պլովդիվ, Մոնչիլովգրադ, Սոֆիա¹⁸⁸, բոլոր հանդիսականները, լինեին բուլղարներ թե հայեր, մեր համերգներից հուզվում էին, կանայք լաց էին լինում: Գալիս էին սպասասարահներ, համբուրում իրենց ընկերուհիներին, տղամարդիկ սեղմում էին մեր ձեռքերը: «*Ղուզով կոտրինե նեսար ցասարավիլ դա գովորիտի ի բեհտի ասունեիվ*», - ասում էին բուլղարերեն (Այսքան տարի չեք մոռացել բուլղարերեն խոսել և երգել):

Սոֆիայում մեզ շատ վատ դիմավորեցին: Այստեղ էլ պատահեց դժբախտությունը: Սոֆիացիները շատ անխիղճ վարվեցին մեզ հետ: Տրամադրել էին մի փոքր ավտոբուս, որտեղ նույնիսկ մեր բագաժը¹⁸⁹ չէր տեղավորվում, ուր մնաց մենք տեղավորվեինք: Վաթսուհինգ հոգի էինք, յուրաքանչյուրն ուներ երեք ճամպրուկ¹⁹⁰, զանազան պաշտակներ: Ավտոբուսը ԼԱՁ մակնիշի էր¹⁹¹: Ասացի.«*Կարո՛, մի՛ բարձրանա, սպասի՛ր, իրերը*¹⁹² *տեղավորեն, հեպո կնայենք*»: Իսկ նա բուլղարերեն պատասխանեց.«*Իմ գործերին մի՛ խառնվիր...*», ու *բարձրացավ*: Ես էլ զայրացած հեռացա, իջա ավտոբուսից, մի հարյուր մետր գնացի ու նստելով մի քարի վրա՝ գլուխս բռնեցի: Ես մտածում էի, թե այսքան էլ կոպիտ լինի մարդ: Եկավ բաջանադս.«*Ելի՛ր, գնում եմք*»: Մինչ այդ տենորներից մեկը վազելով եկավ, թե Կարոն իրեն էլի վատ է զգում: Նա մտավ մի գրասենյակ ու զանգեց շտապօգնություն: Շտապօգնությունը եկավ ու Կարոյին տարավ: Մի կերպ խցկված գնացինք: Տեսանք, որ դուրս ենք գալիս քաղաքից. ոչ մի հյուրանոց, ոչ մի շինություն, Տեր-Չորի չոլ: Հասանք քաղաքից 25 կմ հեռավորության վրա գտնվող մի կացարան ու կանգնեցինք մի դարպասի առջև: Դռնապանը բացեց դարպասը, մտանք բակ¹⁹³, միհարկանի շինություն էր, որը պատերազմի ժամանակ համակենտրոնացման¹⁹⁴ ճամբար էր եղել: Ամեն սենյակում հինգ մահճակալ կար, հինգ-հինգ հոգով մի կերպ տեղավորվեցինք:

Ճաշարան չկար: Կազմակերպության տնօրենն ասաց, որ չորս օր յոլա գնանք: Այս ամենի ողբերգական հետևանքը եղավ այն, որ ավտոբուսի մեջ վատացած Կարոն գիշերը երկուսին մահացել էր հիվանդանոցում: Փաստորեն երրորդ անգամ այստեղ կաթված էր ստացել ու մահացել:

Գիշերը վերադարձանք Վառնա, որտեղ մնացինք չորս ժամ, իսկ մյուս օրը թռանք Երևան: Մեր մահացած ընկերոջն էլ հանձնեցինք հարազատներին:

Երևանում մեկ ամիս հանգստանալուց հետո վերսկսեցինք փորձերը¹⁹⁵: Երկու համերգ տվեցինք Շահումյանի պալատում: Ապրիլի 24-ին ելույթ ունեցանք Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Հիմա 1990թ., 75 տարեկան եմ:

ՄԻ ՀԱՏՎԱԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԱՔՈՒԿՅԱՆԻ «ԿՅԱՆՔԻՍ ՏԱՐԻՆԵՐԸ» ԳՐՔԻՑ

...Մեր տնից կար երկու ճանապարհ՝ մեկն աստիճաններով տանում էր դեպի վեր՝ Բաղրամյան փողոց, մյուսով գնում էիր դեպի վար՝ ներկայիս Օրբելի եղբայրների փողոցը:

Մի քանի իմ հասակի երեխաների հետ դեպի ցած իջնելը մեզ համար Մազելանի ճանապարհորդություն էր թվում... Նաև վտանգ ներկային: Նախ այնտեղ էր գտնվում զինվորական հոսպիտալը, ուր անընդհատ ելումուտ էին անում ավտոմեքենաներ: Հետո այդ ներքևի թաղն արդեն այլ երեխաների «սեփականությունն» էր:

Առանց կոիվ անելու մենք այնտեղ չէինք կարող մտնել: Եվ քանի որ իրենք շատ էին ու տարիքով մեզանից մեծ, բնականաբար 110 հաղթանակն էլ իրենցն էր, ու ցածի թաղ գնալն էլ մեզ համար մնում էր երազանք... Այդպիսի մի հերթական ծեծկռտուքի օր իմ մնացած ընկերները ճողոպրել էին, ու ես մեմակս մնացել էի թիրախ այդ 8-9 տարեկանների ձեռքին: Հանկարծ մի փոքր ավելի այն կողմ գտնվող տներից մի քանի տղաներ եկան ու ստանձնեցին դատապաշտպանի դերը: Հակառակորդներս՝ իսկ ավելի ստույգ՝ ինձ ծեծողները, փախան: Այս նոր տղաների մեջ ինձ պես բավականին գիրուկ մի տղա սկսեց հարցնել, թե ով եմ ու որտեղ եմ ապրում: Անունը Սիմոն էր: Ապրում էր մի քիչ այն կողմ եղած երկհարկանի բազմաբնակարանանոց քարե շենքերից մեկում, որ հայտնի էր, «բուլղարահայերի տներ» անունով: Ընկերացանք: Այդ ընկերությունը կես դար է, ինչ շարունակվում է... Արդեն կարող էի ազատ իջնել այդ կողմը խաղալու: Պաշտպաններ ունեի: Իրենց խմբում մի տղա կար՝ Քրիս անունով: Կանչելիս ձայնում էին «Ար՛ա, Քրի՛ս, արի ստե՛ղ...»: Կամ մի այլ բան: Ես էլ, երբ իմ թղռությամբ կրկնում էի նրա անունը, ստացվում էր «ավա Բվիս...»:

Քրիսն, իհարկե, զայրանում էր, որ իր անունն աղավաղում էի, իսկ Սիմոնը կուշտ հռհռում էր ու ինձ «ավա քվիս» կանչում...

Ես չէի նեղանում, քանի որ Սիմոնի ընկերությունը շատ ավելի կարևոր էր ինձ համար: Լեզուս փոխել չէի կարող... Եվ ահա սեպտեմբերի մեկին ես ու Սիմոնը հայտնվեցինք նույն դասարանում:

Ուրախությանս չափ չկար: Արդեն Երանուհին ու Աննիկն այնտեղ էին, հիմա՝ նաև Սիմոնը: Սիմոնենց ընտանիքը բուլղարահայ էր: Իրենից մեծ եղբայր ուներ՝ Հարութը, որը հետո երկար տարիներ աշխատեց «Պատմաբանասիրական հանդեսում»: Ի՛նչ հրաշալի ծնողներ ուներ: Հայրը միշտ լուռ նստած, իր լրագրի ընթերցանության մեջ ընկղմված, մայրը՝ գիրուկ, կարճահասակ, ժպտադեմ ու հյուրասեր...

Մեր դասարանում Աիդա Միխայլովնան ավանդույթ էր դարձնում անխտիր նշելու բոլորի ծննդյան տոները: Ով ինչ ձևով որ կարող էր, և ում նյութականն ինչպես ներում էր: Հետո ոչ բոլորն էին իրար տուն գնում: Հիմնականում նշում էինք դասարանում: Բացառությունը Սիմոնի ծննդյան օրն էր՝ փետրվարի 20-ին: Ծնված լինելով Տյառընդառաջի տոնին մոտ (այդ տոնը 14-ին է), ըստ եկեղեցական ավանդույթի՝ անվանակոչել էին Մեծն Սիմեոնի անունով: Մենք գնում էինք ամբողջ դասարանով: Պարտադիր: Սիմոնի մայրիկը հոգ էր տանում, որ բոլորը լինեն, տեղավորվեն և հյուրասիրվեն ինչպես որ հարկն է: Բազմաթիվ համեղ խորտիկներ ու թխվածքեղեն էր պատրաստում՝ մի հարսանիքի պատրաստությամբ...

Սիմոնի հետ մեր ընկերությունը շարունակվեց համալսարանում, ասպիրանտուրայում, ապա՝ աշխատանքի ընթացքում: Ես տեղափոխվեցի այլ աշխատանքի, իսկ նա՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, դասախոս, Հայաստանում բավականին ճանաչված ու հարգված հնագետ, ուրարտագետ Սիմոն Հմայակյանը, առ այսօր դեռ Հնագիտության ինստիտուտում է... Ինքն ու իր սիրած գործը՝ հնագիտությունը...

Հավելված

**ԳԵՎՈՐԳ ՀՄԱՅԱԿՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԹՉԲԵՀԸ

Որբերը

Էրգրումից հյուսիս-արևելք՝ կառքով ութ ժամ հեռավորությամբ վրա՝ Տաճկահայաստանում, կար մի գյուղ, որ կորած էր այգիների մեջ: Փոքր գետակը, որ անցնում էր գյուղի միջով, բավարարում էր տնամերձ այգիները ջրելու համար: Տները երկուհարկանի էին: Հաշվվում էր մոտավորապես երեք հարյուր տուն: Յոթանասուն տուկուսը հայեր էին, իսկ մնացածը՝ թուրքեր, ասորիներ, քրդեր և ուրիշ ազգեր: Գյուղի վարչակարգը թուրքերի ձեռքին էր, բայց բոլորը իրար հետ ապրում էին համերաշխ: Ոչ մեկը մյուսի գործերին չէր խառնվում: Այդ գյուղում ապրում էր Հովսեփյանների ընտանիքը: Հորաքույրս՝ Անուշը, հոր պահանջով, իր կամքին հակառակ, ամուսնացել էր մի մարդու հետ, որին չէր սիրում: Երկու տարի իրար հետ ապրելուց հետո ամուսինը հրաժարվել էր ապրել գյուղում: Նա առաջարկել էր կնոջը տեղափոխվել Պոլիս, բայց Անուշը չէր համաձայնել: Եվ ամուսինը, թողնելով ամեն ինչ Անուշին, հեռացել էր գյուղից: Անուշը մնացել էր իր երկու եղբայրների հետ: Մեծ հորեղբայրս՝ Վահանը, նույնպես չուզեց մնալ գյուղում և փող աշխատելու պատճառաբանությամբ գնաց պանդխտության: Անուշը մնաց իր փոքր եղբոր՝ Կարապետի հետ, որն այնքան էլ առողջ չէր: Անուշը Կարապետին ամուսնացրեց, որ նա էլ չփախչի գյուղից: Կարապետն ամուսնացավ գյուղի հայ բնակիչներից մեկի աղջկա հետ, որի անունը Վարդուհի էր: Անուշը երկու տարի սպասեց ամուսնու վերադարձին և երբ համոզվեց, որ չի վերադառնալու, ծախեց տունը, այգիներն ու արտերը և տեղափոխվեց հորական տուն, որտեղ ապրում էր Կարապետն իր կնոջ հետ: Հորից ժառանգություն մնացած արտերի և այգիների մի մասը տվեց վարձով: Վարդուհին՝ մայրս, որը շատ խելամիտ և մաքրասեր աղջիկ էր, շատ շուտ ընտելացավ Անուշ մայրիկին: Սկսվեց հաշտ ու խաղաղ կյանքը: Վարդուհին երկու տղա ունեցավ: Մեծի անունը Հովսեփ դրեցին, փոքրինը՝ իմը՝ Վարդան: Բայց դժբախտությունը հալածում էր Անուշին: Երրորդ ծննդաբերության ժամանակ Վարդուհին և երեխան մահացան: Սա խոր վիշտ պատճառեց հորս՝ Կարապետին, և Անուշին: Կարապետը չղիմացավ վշտին և քառասուն օրը դեռ չլրացած՝ մահացավ՝ իր երկու որբերին

քրոջ խնամքին թողնելով: Հովսեփը չորս տարեկան էր, ես՝ երկու: Տարիներն անցնում էին, իսկ երկու պանդուխտներից ոչ մի լուր չկար: Հովսեփն արդեն տասնութ տարեկան էր, երբ Անուշ մայրիկը ամուսնացրեց նրան գյուղի աղջիկներից մեկի՝ Նվարդի հետ: Սկսեցինք խաղաղ ապրել: Արտերը և այգիները երեքով էինք մշակում: Անուշ մայրիկը մնում էր տանը: Նա զբաղվում էր հեքիմությամբ և մանկաբարձությամբ: Գյուղի երեխաների կեսից ավելին նրա ձեռքի առնվածներն էին, հմուտ մանկաբարձուհի էր: Նա ոչ մեկից փող չէր վերցնում: Մթերք էին բերում՝ յուղ, պանիր, ձու:

Նամակը

Մի առավոտ, երբ բոլորը աշխատանքի էին գնացել, Անուշ մայրիկի բակի դուռը թակեցին: Անուշ մայրիկը դուրս եկավ բակ և մի ձիավորի տեսավ, որը կանգնած էր իրենց դռան առաջ: Այդ ձիավորը վաճառականի տեսք ուներ: Նա, քաղաքավարի բարևելով, հարցրեց. «Հովսեփյան Անուշը դու՞ք եք»: Անուշը պատասխանեց. «Այո՛, ես եմ»: «Չեր եղբայր Վահանից Բուլղարիայի Պլովդիվ⁹⁶ քաղաքից նամակ եմ բերել: Վահանը իմ ամենամուտ ծանոթներից է»: Անուշ մայրիկը ուրախացած տուն հրավիրեց ձիավորին, որ մի բանով հյուրասիրի, բայց վաճառականը մերժեց՝ ասելով, որ քարավանը գնում է, և ինքը պետք է հասնի: Նա, նամակը հանձնելով, հեռացավ: Անուշ մայրիկը մինչև ուշքի եկավ, ձիավորն արդեն հեռացել էր: Նա, նամակը ձեռքին, շվարած կանգնել էր: Ո՛չ ինքը կարողալ գիտեր, ո՛չ Վարդանը, ո՛չ էլ ամուսինները: Հիշեց, որ գյուղում միայն տիրացու Սիմոնը կարողալ գիտի: Գնաց դեպի տիրացու Սիմոնի տունը: Տիրացուն տանը չէր: Տիրացուի կինը՝ Հռիփսիմեն, տանն էր: Առավոտ շուտ տեսնելով Անուշ մայրիկին՝ շատ զարմացավ և հարցրեց. «Անուշ մայրիկ, ի՞նչ է պատահել»: «Հռիփսիմեն՛, Սիմոնը ու՞ր է: Կորած եղբորիցս՝ Վահանից նամակ եմ սրացել»: «Նե՛րս արի, Սիմոնը հիմա կգա, գնաց եղբոր մոտ»: Մինչև զրուցում էին, Սիմոնը եկավ. «Բարև, Անուշ մայրիկ, առավոտ շուտ ի՞նչ է պատահել»: «Վահանից նամակ եմ սրացել»,-ու հանձնեց նամակը Սիմոնին: Սիմոնը բացեց ծրարը և կարդաց նամակը. «Ես Թուրքիայում մի քանի տարի թափառելուց հետո անցա Բուլղարիայի Պլովդիվ քաղա-

քր: Ամուսնացել եմ, Կրուն-Կրեղ եմ դրել, երեխաներ եմ ունեցել, մի փոքր արհեստականոց ունեմ, որտեղ պայտում եմ Կրուսյին կենդանիներ»: «Միմոն, կարդա»: «Անու՛շ մայրիկ, ուրիշ ոչինչ գրած չկա, ոչ էլ հասցե կա»: Շնորհակալություն հայտնելով կնոջը և տիրացուին՝ Անուշ մայրիկը վերադարձավ տուն: Սպասեց, որ արտերից վերադառնան տնեցիները և ուրախանան ստացած նամակով:

Իրիկնադեմին երեքս էլ արտերից վերադարձանք: Անուշ մայրիկը ուրախ դիմավորեց մեզ և ցույց տվեց նամակը՝ ասելով.«Ձեր Վահան հորեղբորից եմք ստացել»: Բոլորս էլ շատ ուրախացանք, որ մեր հորեղբայրը ողջ է: Նամակը ձեռքից ձեռք էր անցնում, բայց ոչ ոք կարդալ չգիտեր: Հովսեփը հարցրեց Անուշ մայրիկին.«Ի՞նչ է գրված նամակում»: «Նամակը կարդաց Կրուսյու Միմոնը, որ չէր հորեղբայրը գտնվում է Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում: Տուն-Կրեղ է դրել, ամուսնացել է, երեխաներ է ունեցել, մի արհեստականոց էլ ունի, որտեղ ընկրանի կենդանիներ է պայտում»:

Իմ ուրախությանը չափ չկար, ես արդեն պատկերացնում էի, թե գտնվում եմ Բուլղարիայում՝ հորեղբորս մոտ: Երեկոյան աչքալույս անելու համար, որ Վահանը ողջ և առողջ է, հավաքվեցին Անուշ մայրիկի ազգականներն ու բարեկամները:

Անցան տարիներ, արդեն տասնինը տարեկան էի: Հովսեփի ընտանիքը երեխաներ չունեցավ: Այդ ամռանը և աշնանը լավ բերք ստացանք: Մեր ձմեռվա պաշարը լրացնելուց հետո մնացած մասը վաճառեցինք: Միայն մնացել էր խաղողի բերքահավաքը:

Մի երեկո, մեր ընտանիքով նստած, զրուցում էինք: Ես, որ միշտ երազում էի գնալ հորեղբորս գտնելու, այդ երեկո բոլորին հայտնեցի իմ երազանքը: Անուշ մայրիկը խիստ հայացքով նայեց ինձ և ասաց.«Ինչ է, գժվե՞լ ես, ուզում ես գնաս, որ չվերադառնաս մ»: Հովսեփը չառարկեց, իսկ Նվարդը ասաց.«Աշնանացանի բոլոր գործերը ավարտել եմք, մնացել է միայն խաղողի բերքը, այդ մենք էլ կանենք, իսկ Վարդանը միևնչև գարուն կվերադառնաս»: Անուշ մայրիկը ոչ մի կերպ չէր համաձայնում, իսկ ես հաստատ մնացի իմ որոշման մեջ:

Գեպի Բուլղարիա

Ես գնացի տիրացու Սիմոնի մոտ՝ իմանալու թե ինչպես Բուլղարիա հասնեմ: Տիրացուն ինձ բացատրեց. «Սկզբում կզնաս կառքով մինչև Էրզրում, իսկ հետո չումենդեֆերով՝ գնացքով, կզնաս Պոլիս»: Մեպտեմբերի վերջն էր: Ես, հրաժեշտ տալով բարեկամներին և ծանոթներին, վարձած կառքով ճանապարհ ընկա դեպի Էրզրում: Ինձ հետ ես վերցրի հարյուր ոսկեդրամ և հորեղբորս նամակը: Լուսադեմին հասանք Էրզրում: Ես արձակեցի կառապանին և ուղիղ կայարան գնացի՝ իմանալու, թե երբ է գնացքը գնալու դեպի Պոլիս: Կայարանապետը ասաց, որ գնացքը կզնա Պոլիս ցերեկվա ժամը տասին: Ես, Պոլիս գնալու համար տոմս վերցնելով, որոշեցի ման գալ գյուղաքաղաքում: Մտնելով մի սրճարան՝ սուրճ խմեցի և հարցրի, թե որտեղ կարող եմ ճաշել: Հետո գնացի շուկա՝ ճանապարհի համար անհրաժեշտ մթերքներ գնելու համար: Նշված ժամին ես ժամանեցի կայարան: Բարձրացա վագոն, նստեցի իմ կուպեում, որտեղ կային երեք ուրիշ ճանապարհորդներ: Գնացքը փնչոցով ճանապարհ ընկավ դեպի Պոլիս: Ծանապարհորդությունը շատ ձանձրալի էր. կա՛մ ջուրն էր վերջանում, կա՛մ ածուխը, գնացքը ժամերով կանգնում էր կայարաններում, իսկ Պոլիսը շատ հեռու էր՝ մոտավորապես հազար հարյուր կմ: Ես այդ իմացա ճամփորդներից մեկից: Այդ ճանապարհորդը ասաց նաև, որ երեք օրից հազիվ հասնենք Պոլիս: Երրորդ օրվա առավոտյան ուղեկցողը, որը ազգությամբ թուրք էր, հայտնեց, որ արդեն մոտեցել ենք Ստամբուլին: Եվ իրոք, գնացքը մի քանի ժամից փնչացնելով կանգնեց Պոլիս կայարանում: Բոլորս էլ հոգնել էինք երեքօրյա այդ ձանձրալի ճանապարհորդությունից: Ես դուրս եկա կայարանամերձ հրապարակ: Շատ էի լսել Պոլսի մասին, բայց երբեք չէի պատկերացնում այդպիսի իրարանցում: Բոլորը շտապում էին իրենց աշխատանքին: Ես շվարած կանգնել էի մարդկանց հորձանքի մեջ: Չգիտեի՝ ում դիմեմ, ուր գնամ: Նկատելով մի համալի¹⁹⁷, մոտեցա, բարևեցի, հարցրեցի, թե որտեղ կարող եմ մի խան (հյուրանոց) գտնել: Բեռնակիրը, որը լավ մարդ դուրս եկավ, ասաց, որ հետևեմ իրեն: Ես հետևեցի նրան: Մենք շուտով հասանք խանին և մտանք բակ, որը շատ ընդարձակ էր: Բակում կային բեռնված ուղտերի քարավաններ, որոնք պատ-

կանում էին վաճառականներին: Բեռնակիրը ասաց. «*Այսրեղ քեզ համար լավ կլինի, րեքն էլ հայ է*»: Ես գրպանիցս հանեցի մի քանի խրուշ¹⁹⁸, բեռնակրին վարձատրելու համար: Բեռնակիրը մերժեց՝ ասելով. «*Հարկավոր չէ, ես էլ քեզ նման էի, առաջին օրերին նեղություն քաշեցի, մինչև որ վարժվեցի*»: Բեռնակիրը կարծում էր, թե ես պանդուխտ եմ, եկել եմ փող աշխատելու և ոչինչ չվերցնելով ու ինձ հաջողություն մաղթելով՝ հեռացավ: Ես առաջացա դեպի խանի տերը, որը կանգնած էր խանի մեջտեղում: Բարևեցի և հարցրի, թե տերը կարող է մի քանի օրվա համար մի սենյակ տրամադրել ինձ: Իջևանատերը հարցրեց. «*Թեսկերե ունե՞ս*»: «*Այո՛, ունեմ*», - և անձնագիրս տվեցի իջևանատիրոջը: Իջևանատերը, նայելով անձնագրին, հարցրեց՝ հա՞յ ես: «*Հա՛, հայ եմ*»: «*Նե՛րս հրամանե*»: Ես հետևեցի նրան: «*Այս սենյակը քեզ հարմար կլինի*»: Հարցրի, թե որտեղ կարող եմ մի քան ուտել: Իջևանատերը, ցույց տալով ճաշարանը, պատասխանեց, որ իրենց մոտ ամեն ինչ կա: Ես գնացի ճաշարան, ճաշելուց հետո վերադարձա իմ սենյակը, պառկեցի և հոգնածությունից արագ քնեցի: Արթնացա, արդեն մութ էր, այնքան հոգնած էի ճանապարհորդությունից, որ նորից քնեցի: Չարթնեցի առավոտյան, հագնվեցի, իջա բակ և գնացի ճաշարան, որտեղ սուրճ խմեցի ու նախաճաշեցի: Ես ուզում էի դուրս գալ իջևանատնից, բայց տերը հետևիցս կանչեց. «*Ու՞ր ես գնում, երիտասարդ*»: «*Գնամ, մի քիչ քաղաքը ման գամ*»: Տերը հարցրեց. «*Երիտասարդ, դրամ ունե՞ս*»: Ես պատասխանեցի. «*Հա՛, ունեմ*»: «*Զգուշացիր յաքենջիներից (գրպանահատ), սա Պոլիս է: Այնպես հնարորեն փողը կհանեն մոտիցդ, որ դու էլ չես զգա: Եթե ուզում ես, փողի մի մասը թող ինչ մոտ*»: Վերցնելով երկու ոսկի՝ մնացածը հանձնեցի իջևանատիրոջը և գնացի քաղաքում շրջելու: Ես մտածեցի. «*Բաղաք չէ, դժոխք է*»: Ուզեցի անցնել գրպանահատներով հոշակված Պոլսի կամուրջը և ընկա մարդկանց հորձանքի մեջ: Իմանալով, որ եկվոր եմ, սկսեցին մանրագնին ստուգել, չգտան ոչինչ, որովհետև ոսկիներս ավումս էի պահել: Հրմշտելով դես-դեն՝ մի կերպ անցա կամուրջը: Մի երկու ժամ քաղաքում թափառելուց հետո վերադարձա իմ սենյակը՝ հանգստանալու: Երկու-երեք օր այսպես անցկացրի Պոլսում: Ուղտի քարավանը գնացել էր դեպի Պարսկաստան: Նոր քարավան էր

եկել: Քարավանատերը և իջևանատերը նստած խոսում էին հայերեն: Ես մոտեցա, բարևեցի և նստեցի նրանց մոտ: Խոսակցությունից իմացա, որ քարավանը գնալու է Բուլղարիա ու միջամտեցի.«*Ես էլ եմ եկել հեռվից, որ գնամ Բուլղարիա, բայց ոչ մի փաստաթուղթ չունեմ՝ բացի թուրքական անձնագրից*»: Քարավանատերը նայեց ինձ և հարցրեց.«*Ի՞նչ գործ ունես Բուլղարիայում*»: «*Պեղք է գնամ հորեղբորս փնտրելու, որը Պլովդիվ քաղաքում է*»: «*Քարավանը պիտի գնա Սոֆիա Պլովդիվ քաղաքով, բայց արտոնագրի գործը շատ դժվար է: Իմ աշխատողներից մեկը հիվանդացել է, ուզում ենք, որ գնա, ազգային հիվանդանոցում պառչի: Եթե չորս-հինգ օրից չչավանա, մի քանի ոսկի կտանք և կվերցնենք նրա արտոնագիրը: Նա էլ քեզ նման մի երկրաստորդ է*»: Ես շատ ուրախացա, մի քանի օրից հայտնի եղավ, որ աշխատակիցը չի կարող ճանապարհը շարունակել և համաձայնել է երեք ոսկով իր արտոնագիրը տալ ինձ: Տասն օր Պոլսում մնալուց հետո քարավանի հետ ուղևորվեցի դեպի Բուլղարիա: Առանց խոչընդոտների անցանք թուրքական սահմանը: Քարավանը սկսեց առաջանալ դեպի Պլովդիվ: Ուղտերը շատ դանդաղ էին գնում, որովհետև ծանրաբեռնված էին զանազան ապրանքներով և գալիս էին շատ հեռվից՝ Պարսկաստանից, այնպես որ շատ հոգնած էին: Մի առավոտ՝ լույսը չբացված, քարավանատերը հայտնեց, որ մտնում ենք Պլովդիվ: Մի ժամ չանցած՝ արդեն գտնվում էինք քաղաքի արվարձաններում: Ես, արտոնագիրը քարավանատիրոջը հանձնելով, շնորհակալություն հայտնեցի: Քարավանը թեքվեց դեպի քաղաքի ծայրամասը, իսկ ես գնացի դեպի քաղաքի կենտրոն, այն հույսով, որ մի սրճարան կգտնեմ:

Արդեն լուսանում էր, երբ ես մի սրճարան նկատեցի, որը դեռ նոր էր բացվել, և որում ոչ մի հաճախորդ չկար: Բարևելով սրճարանատիրոջը՝ նստեցի սեղանի մոտ և մի բաժակ սուրճ պատվիրեցի: Նրանք խոսում էին թուրքերեն: Սրճարանատերը հարցրեց ինձ, թե այսքան վաղ որտեղից եմ գալիս և ուր եմ գնում: Ես պատասխանեցի.«*Պոլսից եմ գալիս, այս քաղաքում ապրում է իմ հորեղբայրը*», - և ցույց տվեցի նամակը: Սրճարանատերը վերցրեց նամակը, շուռուժուռ տվեց, ինչպես երևում էր, կարդալ չգիտեր և նայելով նամակին՝ հարցրեց.«*Ո՞վ է հորեղբայրդ*»: «*Հովսեփյան Վահանք*»: «*Ծո՛, հա՞յ*

ես»: «Հայ եմ»: «Վահանը իմ քարեկամն է: Մի ժամից հետո Պայ Դմիտրիի հետ կզան սուրճ խմելու և կզնան աշխատանքի»: Սրճարանատերը նույնպես պանդուխտ էր, որ եկել և մնացել էր Բուլղարիայում: Մինչ մենք գրուցում էինք, սրճարան մտան մի քանի հաճախորդներ, բայց Վահանը ուշանում էր: Մեկ էլ սրճարանատերը վեր կացավ և դիմավորեց Վահանին.«Բարի լույս, Վահան, քեզ մոտ հյուր է եկել՝ եղբորդ փղան»: Մինչ այդ ես մոտեցա հորեղբորս: Ես նրան չէի հիշում: Նա բարձրահասակ, թավ բեղերով, հանգիստ դեմքով տղամարդ էր: Ինձ նայեց և հարցրեց.«Վարդա՞նն ես, թե՞ Հովսեփը»: «Վարդանն եմ» ասելով՝ ընկա նրա գիրկը: Հորեղբայրս ամուր գրկեց, համբուրեց, և նրա աչքերին արցունքներ երևացին, հետո դառնալով իր հետ եկող մարդուն՝ ասաց.«Պայ Դմիտրի, եղբորս փղան է, շատ հեռվից է եկել»: Պայ Դմիտրին նայեց ինձ: Տեսքս բանի նման չէր. տրեխներով, չսափրված, շորերս մաշված. մի խոսքով՝ շրջմուխի տեսք ունեի: Բոլորով նստեցինք մի առանձին սեղանի շուրջ և սուրճ խմեցինք:

«Դու զնա՞ք գործին, իսկ ես այս քափառականին կարգի բերեմ, երեկոյան կհանդիպեմք,-ասաց հորեղբայրս,-իսկ հիմա զնանք»: «Հորեղբայր, ու՞ր զնանք»: «Տուն»: «Չէ՛, հորեղբայր, ինչ մոտ փող կա, արի զնանք խանութները, հագուստ ու կոշիկ առնենք, բաղնիք զնանք, սափրվեմ, հետո նոր մարդկային փեսքով փուն զնանք»: Հորեղբայրս համաձայնեց և նայելով ինձ՝ ծիծաղեց ու ասաց.«Լավ, ինչպես ուզում ես, այնպես էլ կանենք»: Եվ մենք, դուրս գալով սրճարանից, ուղղվեցինք դեպի խանութները: Հագուստ ու կոշիկ գնելուց հետո զնացինք բաղնիք, սափրվեցի, լողացա և մարդկային տեսքով դուրս եկա: Հորեղբայրս, որ սպասում էր ինձ մոտակա պուրակում, զարմացավ և ծիծաղելով ասաց.«Արդեն իսկական եվրոպացի ես»: Ապա միքսում երևի շարունակեց.«Ի՛նչ գեղեցիկ, բարչրահասակ երիտասարդ է՝ առողջ փեսքով, զանգուր մազերով, սև աչքերով: Շատ բուլղարացի երիտասարդներ կնախանչեին նրան», -իսկ բարչրաշայն ասաց. «Գնանք, Վարդա՛ն»: Ծուռ ու նեղ փողոցներով հասանք մի արհեստանոցի: «Վարդա՛ն, սա իմ արհեստանոցն է, այսօր չենք աշխատի, անցնենք Պայ Դմիտրիի՝ նպարավաճառի խանութի մոտով», -ասաց հորեղբայրս: Մի քանի փողոց անց-

նելուց հետո հասանք մի փոքրիկ խանութի, որտեղ Պայ Դմիտրիին առևտուր էր անում: Հորեղբայրս հարցրեց նրան. «*Պայ Դմիտրի, այս երիտասարդին կճանաչե՞ս*»: Պայ Դմիտրիին զարմացավ. «*Պահ, պահ, այս ի՞նչ երիտասարդ է, սա էն գյուղացի տղա՞ն է*»: «*Պայ Դմիտրի, մի քիչ շուր՝ արի տուն, վաղուց քե՛ֆ չենք արել, արի այսօր քե՛ֆ անենք*»:

Պլովդիվ քաղաքը կառուցել է Ալեքսանդր Մակեդոնացու հայրը՝ Ֆիլիպ Մակեդոնացի թագավորը, և կոչել է իր անունով՝ Ֆիլիպոլի: Բուլղարները, գաղթելով Վուլգա գետի ափերից, IX դ. անցնելով Դունավ¹⁹⁹ գետը, իրենց պետությունը հիմնադրեցին Բալկանյան թերակղզում՝ Հունաստանին սահմանակից տարածության վրա, որի մեջ էր մտնում Ֆիլիպոլի ավանը: Բուլղարները այդ ավանը կոչեցին Պլովդիվ: Քաղաքը կառուցված է Մարիցա գետի երկու ափերին: Պլովդիվը երկու կամ երեքհարկանի տներով փոքրիկ քաղաք էր: Վահանի տունը երկհարկանի գեղեցիկ տներից մեկն էր, ուներ շատ հրաշալի պարտեզ, որը մոտավորապես մեկ հեկտար էր: Պարտեզում աճում էին երփներանգ ծաղիկներ, որոնց մեջ աչքի էին ընկնում գեղեցիկ վարդերի թփերը, պտղատու ծառերը, որոնց հասունացած պտուղները կախվել էին ծառերի ճյուղերից, իսկ խաղողի վազերից կախվել էին ոսկեգույն ողկույզները: Այդ տան առաջ հորեղբայրս կանգնեցրեց ինձ՝ ասելով. «*Վարդան, սա իմ տունն է*»: Ես նայեցի տանն ու պարտեզին և զարմացած բացականչեցի. «*Ի՛նչ գեղեցիկ տուն ու պարտեզ ունեն*»: Մտանք բալ: «*Աղջի՛ Արշալույս, տես՝ ով է եկել*»: Կինը, որ քառասուն տարեկան կլինեք, մի երեխա գրկին, դուրս վազեց պատշգամբ: Հորեղբայրս ուներ երեք երեխա՝ մի տղա և երկու աղջիկ: «*Վահան, այդ ո՞վ է*»: «*Եղբորս տղան է, այն նամակի հետքերով Հայաստանից ինչ փնտրելու է եկել, այն նամակի, որը ես մի քանի տարի առաջ ուղարկել էի վաճառականի միջոցով*»: «*Դե՛, վեր բարչրացեք*»:

Նեկի

«*Աղջի՛ Արշալույս, -սասց հորեղբայրս, -գևա՛ Պայ Դմիտրիի կնոջն ու աղջկան կանչի՛, որպեսզի իրիկվա պատրաստությունն տեսնենք, եղբորս տղայի՝ Վարդանի գալը շնորհավորենք: Վարդան, դու*

հանգարացի՛ր, ես գնամ մթերք քերես»: Այսպիսով՝ ես, մենակ մնալով, իջա այգի, մի քանի պտուղ պոկեցի: Մեկ էլ տեսա, որ հորեղբորս կինը մի շատ գեղեցիկ աղջկա և մի մեծահասակ կնոջ հետ երկու այգիների մեջտեղում գտնվող փոքրիկ դռնից մտավ բակ: Աղջիկը ինձ նայեց կապույտ, խոշոր աչքերով: Նա առողջ տեսքով, շագանակագույն փարթամ մազերով, սլացիկ հասակով մի գեղեցկուհի էր: Հորեղբորս կինը ինձ ծանոթացրեց նրանց հետ՝ ասելով, որ Հայաստանից եմ եկել և Վահանի եղբոր տղան եմ, անունս էլ Վարդան է: Հորեղբորս կինը ինձ ասաց.

-Վարդան, ծանոթացի՛ր, Պայ Գմիտրիի կինն է՝ Ստոյանկան, և աղջիկը՝ Նելին: Ես սեղմեցի կնոջ և աղջկա ձեռքերը, իրենք բարձրացան վերև, ես մնացի այգում:

Մինչ այդ հորեղբայրս եկավ:

-Հորեղբայր,-դիմեցի ես նրան,- Պայ Գմիտրին ինչ գեղեցիկ աղջիկ ունի:

Հորեղբայրս կատակելով ասաց.

-Հանկարծ իսերդ չուտես սիրահարվես, Պայ Գմիտրին քեզ աղջիկ չի տա: Այս մի աղջիկն է, հազիվ տասնութ տարեկան է:

-Գե լավ, չեմ սիրահարվի:

Բարձրացանք վերև, մատեցինք առանձին սենյակում, և հորեղբայրս սկսեց ինձ հարցուփորձ անել իր հարազատներից: Ես պատմեցի հորաքրոջս մասին, ասացի, որ հայրս ու մայրս շատ տարիներ առաջ մահացել են: Այդ լսելով՝ հորեղբայրս շատ տխրեց և հարցրեց, թե ինչպես պատահեց: Ես պատմեցի: Հետո պատմեցի Հովսեփի մասին, որը ամուսնացած էր և երեխաներ չուներ, պատմեցի գյուղի մասին: Խոսեցինք, մինչև այդ օրը անցավ:

Ստոյանկան ուղարկել էր Նելին՝ հյուրերին կանչելու: Արդեն հյուրերը հավաքվել էին: Եկավ Պայ Գմիտրին, հորեղբորս կողմից եկավ Մեսրոպ աղան՝ կնոջ՝ Շողիկի հետ: Մեսրոպ աղան էլ էր պանդուխտ, եկել և մնացել էր այստեղ, ամուսնացել, տուն-տեղ էր դրել, բայց երեխաներ չուներին: Մեսրոպ աղան, դառնալով ինձ, բացականչեց.

-Ծո՛, Հայաստանի՞ց ես եկել:

Իսկ հորեղբայրս միջամտեց.

-Եղբորս տղան է:

Մերոպ աղան շարունակեց.

-Ի՞նչ կա Հայաստանում:

-Ի՞նչ պիտի լինի, թուրքի և քրդի լծի տակ ապրում ենք,-պատասխանեցի ես:

Սեղաններն արդեն պատրաստ էին, սկսեցինք ուտել ու խմել: Բոլոր խոսակցություններն իմ մասին էին: Հարցերի տարափ էր տեղում: Խոսում էին բուլղարերեն, մեկ-մեկ էլ՝ թուրքերեն: Ես հյուրերի մի մասին թուրքերեն էի պատասխանում, իսկ ովքեր բուլղարերեն էին հարցնում, հորեղբորս կինը ինձ համար թարգմանում էր հայերեն: Ես պատասխանում էի հայերեն: Մեր քեֆը շարունակվեց մինչև կեսգիշեր: Տղամարդիկ արդեն հարբել էին: Ես ինձ զսպում էի և շատ չէի խմում: Մի քանի ուրիշ աղջիկներ կային, բայց ոչ մեկը Նելլիի գեղեցկությունը չուներ: Ես միայն Նելլով էի տարված: Նա էլ ծածուկ ինձ էր նայում ու թեթևակի ժպտում էր: Կանայք սկսեցին երգել, երգեցին նաև աղջիկները: Ստիպում էին, որ Նելին երգեր, բայց նա չէր ուզում: Վերջապես նրան համոզեցին: Նա երգեց. հրաշալի ձայն ուներ: Ես խոսքերը չէի հասկանում, հորեղբորս կինը թարգմանում էր: Երկու երգ երգեց, երկրորդը՝ շատ տխուր: Ահա առաջին և երկրորդ երգերի բառերը.

Առաջին երգ

Առանձին րնակում քեզ հետ սպրեկ եմ ուզում,

Հեռու բոլոր մարդկանցից երազում եմ ես:

Գարնանային ծով գիշերը երգ պիտի երգեմ քեզ համար, սիրելի՛ս,

Մերս պիտի հայրնեմ քո հանդեպ այս ժամին,

Եթե գալու չլինես, սիրելի՛ս, էլ չեմ սիրելու ես քեզ,

Իմ բոլոր երազանքներս երազ պիտի թվան ինձ,

Առանձին րնակում քեզ հետ սպրեկ եմ ուզում,

Հեռու բոլոր մարդկանցից երազում եմ ես:

Երկրորդ երգ

Հիշում եմ, հիշում եմ այն օրը երջանկության,

Երբ առաջին անգամ քեզ տեսա,

Ապրեցի այն ժամանակ հույսով և ուրախությամբ,
 Իսկ հիմա անհիծում եմ այն օրը:
 Խաղաղ լուսնյակ երեկո, զով գիշեր,
 Ամեն ինչ քնած հանգիստ, անուշ երազներով,
 Միայն ես՝ դժբախտ, չեմ քնում, լալիս եմ
 Եվ անհիծում եմ այն օրը:
 Ես չէի ուզում ոչ մի հարսություն
 Եվ չեմ ուզում թագավորական պալատներ,
 Միայն երդիկի իրճիթ եմ փափագում,
 Նրա մեջ հանգիստ, անուշ քնեմ:
 Մերը և իրճիթը երգվում են վեպերում,
 Բայց այդ քեզ չի համապարասխանում,
 Շուրով կաներևութանա այն սերը,
 Եթե այդ իրճիթում մի փշրանք հաց չկա:
 Երեխա՛ անմիտ, դու կյանքը չես ճանաչում,
 Դու կարծում ես, թե ամեն ինչ սիրո մեջ է,
 Ես սիրում եմ քեզ, դրա համար թողնում և հեռանում եմ:

Դրանից հետո բոլորը գնացին իրենց տները: Մնացին Պայ Դմիտրիին՝ իր կնոջ և աղջկա հետ: Մի ժամ մատելուց հետո նրանք էլ գնացին: Նելին, ինձ նայելով, ժպտաց և դուրս եկավ սենյակից: Նրա հետ իմ սիրտն էլ գնաց: Չէի հասկանում՝ ինչ էր կատարվում ինձ հետ: Միրահարվե՞լ էի, ինչ է: Ինձ ուշքի բերեց հորեղբորս կինը՝ ասելով. «Վարդան, քեզ համար առաջին հարկում սենյակ եմ պատրաստեմ, գնա քնի՛ր, հանգստացի՛ր»: Ես գնացի քնելու, պառկեցի, բայց խելքս ու միտքս Նելին էր: Եվ չիմացա էլ, թե երբ քնեցի: Առավոտյան արթնացա, լվացվեցի և դուրս եկա պարտեզ: Մեպտեմբերի վերջն էր: Աշնանային արևը փայլում էր և ջերմորեն տաքացնում: Կիրակի օր էր: Հորեղբայրս չէր երևում: Հորեղբորս կինն էլ զբաղված էր երեխաներով: Մեկ էլ հարևան պարտեզից Պայ Դմիտրիին կանչեց. «Վարդան, արի՛ ինչ մոտ»: Նայեցի Պայ Դմիտրիին և փոքրիկ դռնակից մտնելով՝ գնացի նրա մոտ: «Վարդան, նսրի՛ր գրուցենք»,-ասաց Պայ Դմիտրիին: Տեսա, որ սեղանը արդեն պատրաստ էր, դրված էր, զանազան ուտեստեղեն, փարչով²⁰⁰ զինի և մի ափսե թթու կաղամբ: Բուլդարները առանց թթու կաղամբի սեղան չեն նստում:

«Նեյի՛, Վարդանի համար մի ափսե, գինու բաժակ և սուրճ բեր»:
 «Հիմա, հայրիկ»։ Մի քիչ հետո Նեյին բերեց հոր պահանջածը։ Պայ
 Գ-միտրին հարցրեց ինձ.«Երկար ճանապարհից շար հոգնած էիր,
 ինչպե՞ս քնեցիր գիշերը»։ «Ոչինչ, Պայ Գ-միտրի, քնել եմ»։ Մինչ
 այդ փոքր դռնակից ներս մտավ հորեղբայրս.«Բարի լույս, Պայ
 Գ-միտրի»։ «Բարի լույս,-ասաց Պայ Գ-միտրին հորեղբորս,-եկու՛ր,
 նստի՛, մի-մի բաժակ խմենք»։ Նեյին, տեսնելով, որ հորեղբայրս էլ
 եկավ, նրա համար էլ սուրճ, բաժակ և ափսե բերեց։ Նա փայլուն
 աչքերով ինձ էր նայում և հանկարծ հարցրեց.«Ինչպե՞ս ես, Վար-
 դան, քեզ լա՛ւ նստում, երեկ շար հոգնած տեսք ունեիր»։ «Ոչինչ,
 Նեյի՛, ինչ լավ եմ զգում»։ Սկսեցինք նախաճաշել, սուրճ խմեցինք։
 Պայ Գ-միտրին հարցրեց հորեղբորս.«Վարդանը ինչքա՞ն է մնալու»։
 «Երևի մինչև մարտի վերջը կմնա»։ Եկավ Պայ Գ-միտրիի կինը՝ ձեռ-
 քին մի փարչ կարմիր գինի։ Նեյի բերած գինին արդեն վերջացել
 էր։ Նորից բերեցին զանազան ուտելիքներ։ Ես զարմացա, թե ինչ-
 պես Պայ Գ-միտրին և հորեղբայրս երեք փարչ գինին դատարկեցին,
 բայց դեռ չէին հարբել։ Մի փարչը երկու լիտր կլիներ։ Մի քանի բա-
 ժակ էլ ես խմեցի, և ինձ թվում էր, թե արդեն հարբել եմ։ Կեսօրին
 նախաճաշը վերջացրինք։ Այսպես օրն անցավ։ Երեկոյան նորից
 հավաքվեցինք Պայ Գ-միտրիի տանը։ Սոֆիայից հյուրեր էին եկել։
 Գիշերը շատ ուրախ անցավ։ Նեյին անընդհատ շարժման մեջ էր։
 Նա նորից երգեց. ահա երգի բառերը.

*Երկու արցունք թափի՛ր սիրո համար,
 Եվ հեկոտ ասա՛, որ իմն ես դու, փոքրիկս,
 Եվ ամեն ինչ պիտի ներեմ քեզ, սիրելի՛ս,
 Հավարարի՛մ մնա, մեզ համար կգան երջանիկ օրեր,
 Շուրով նորից երջանիկ պիտի ըլլանք մենք,
 Մինչև ուշ գիշեր պիտի շոյեմ քո այտերը, փոքրիկս,
 Զնքուշ համբույրով պիտի ափսոսիմ քո սիրտը,
 Հավարարի՛մ մնա, շուրով երջանիկ օրեր կգան մեզ համար:
 Երկու արցունք թափի՛ր սիրո համար,
 Եվ հեկոտ ասա՛, որ սիրում ես ինչ,
 Եվ ես ինչ երջանիկ կզգամ, սիրելի՛ս,
 Եվ ամեն ինչ կներեմ քեզ, փոքրիկս:*

Հորեղբորս կինը նորից թարգմանում էր: Կեսգիշերից հետո մենք գնացինք մեր տուն, և ես գնացի իմ սենյակը: Երկուշաբթի առավոտյան հորեղբայրս գնացել էր աշխատանքի: Ինձ չէր արթնացրել: Այդ ժամանակ հորեղբորս կինը կանչեց ինձ:

-Արի՛ սուրճ խմենք, Նելին էլ է այստեղ:

-Հորեղբայրս ինչու՞ ինձ չարթնացրեց, որ միասին գնալինք աշխատանքի:

Նախաճաշեցինք, սուրճ խմեցինք: Նելին շատ ուրախ էր, ավելի շատ խոսում էր թուրքերեն, որ ես հասկանամ: Նա ասաց.

-Գու պետք է բուլղարերեն սովորես, մինչև երբ ես քեզ հետ պետք է թուրքերեն խոսեմ:

Ես կատակով պատասխանեցի.

-Կսովորեմ, անպայման կսովորեմ:

Մի քիչ մնալուց հետո ես գնացի հորեղբորս արհեստանոցը:

-Հորեղբայր, ինչու՞ ինձ չարթնացրիր, ես էլ գալի, քեզ կօգնեի:

-Գու հանգստանալու ես եկել, ոչ թե աշխատելու:

-Դե լավ, կտեսնենք:

Ես դուրս եկա, ուղիղ գնացի աշխատանքի համար հատուկ հագուստի խանութ: Աշխատանքի համար անհրաժեշտ հագուստներ գնեցի և վերադարձա արհեստանոց ու սկսեցի հագուստներս փոխել: Հորեղբայրս, նայելով ինձ, բացականչեց:

-Ծո՛, ի՞նչ կենես:

-Հիմա կտեսնես:

Մուրճը վերցրի, անցա դիմացը:

-Վարդան, ամոթ է, մարդիկ ի՞նչ կասեն՝ երեկ եկավ, այսօր աշխատում է:

Սկսեցինք միասին պայտ պատրաստել: Մինչ այդ մի կառք կանգնեց արհեստանոցի առաջ: Կառապանը կանչեց.

-Վահան, արի ձիս պայտի՛:

-Հորեղբայր, թո՛ղ ես պայտեմ,-և գործիքները վերցնելով՝ դուրս եկա:

Կառապանը զարմացած հարցրեց հորեղբորս.

-Վահան, այս ո՞վ է:

-Եղբորս տղան է:

Սկսեցի պայտել, հորեղբայրս և կառապանը, նայելով աշխատանքիս, ասացին.

-Այնպես հմուտ է պայտում, կարծես այս գործի վարպետը լինի:

Կառապանը ասաց հորեղբորս. «*Հոգիդ պրծավ*»: Այսպիսով՝ ես սկսեցի աշխատել հորեղբորս մոտ: Օրերն անցնում էին, արդեն հոկտեմբերն էր: Իմ տուն գալուն պես Նելին հայտնվում էր բակում, ձեռքերիս ջուր էր լցնում, որ լվացվեմ, սրբիչ էր տալիս: Ես շատ ուրախ էի Նելիի հետ: Հորեղբորս կինը միշտ դիմավորում էր: Միասին ճաշում էինք, սուրճ էինք խմում: Հոկտեմբերի վերջերին ցրտերը ավելի սաստկացան, այնպես որ ես սենյակումս էի լվացվում: Նելին ինձ օգնում էր: Ինձ բուլղարերեն էր սովորեցնում: Ես շատ շուտ տիրապետեցի բուլղարերենին: Նելիի հետ խոսում էի բուլղարերեն: Նոյեմբերի վերջն էր: Աշխատանքից վերադարձա տուն: Նելին շատ շուտ էր եկել: Հորեղբորս հետ զրուցում էին: Իմանալով իմ գալը՝ եկավ, ջուր լցրեց, առաջարկեց սրբիչը: Սրբիչի հետ ձեռքը բռնեցի: Քաշեցի իմ կողմը: Չդիմադրեց: Ավելի մոտեցրի և համբուրեցի այտերը. «*Նելի՛, սիրում եմ քեզ, առանց քեզ չեմ կարող ապրել*»: «*Ա՛խ, Վարդա՛ն, այնքա՛ն եմ սպասել այս օրվան*», -ասելով՝ սեղմեց ինձ իր կրծքին: Այնպես ջերմ համբուրեց ու լաց եղավ: «*Սիրում եմ քեզ, Վարդ, առանց քեզ կյանք չունեմ: Գիտեմ, որ շատ անախորժություններ կլինեն: Հայրս ոչ մի կերպ չի համաձայնի, որ դու ինձ Հայաստանի փանեա*», -լաց լինելով ու ջերմ համբուրելով ինձ՝ հեռացավ սենյակից: Մինչև ուշքի եկա, արդեն չկար: Նելին ճիշտ էր: Հայրը շատ լավ մարդ էր, բայց ոչ մի դեպքում չէր համաձայնի իր միակ աղջկան օտարության մատնել: Այդ խոհերով բարձրացա վերև: Պետք է ասեմ, որ հորեղբորս կինը շատ հասկացող կին էր: Հարցրեց. «*Ի՞նչ է պատահել, ու՞ր է Նելին, ինչու՞ վերև չեկավ*»: Ոչինչ չկարողացա պատասխանել: Արցունքները խեղդում էին ինձ: «*Վարդա՛ն, ի՞նչ եղավ Նելիին, վերջացրու՛, խոսի՛ր, պատանձվե՞լ ես, ինչ է, -հետո նայելով ինձ՝ գլուխը բռնեց, -վա՛յ մեզ, կասկածներս իրականացան: Սիրահարվե՞լ ես, հա՞*»: «*Այո՛*»: «*Իսկ Նելի՞ն*»: «*Ի՞նչ ասեմ, մենք սիրում ենք իրար*»: «*Խելքդ թռցրե՞լ ես, ինչ է, Պայ Դմիտրիև մեզ աղջիկ փվողը չէ, այն էլ՝ պիպրի փանեա*»: «*Ես կմնամ այստեղ, կաշխատեմ հորեղբորս հետ*»: «*Հեշտ է ասելը, բա չերոնք, չէ՞ որ նրանք*

էլ քեզ են սպասում»: «Դու՛ խոսիր հորեղբորս հետ, հույսս քեզ վրա է»: Մինչ մենք այս խոսակցությունը կանեինք, Նելլի մայրը տխուր ներս մտավ.«Արշալույս, այս ի՞նչ է պատահել, Նելլին եկավ շար վշտացած, արցունքն աչքերին ու գնալով իր սենյակը՝ դուռը ծածկեց: Ինչքան ինկրեցի, որ ասի, թե ինչ է պատահել, միայն հեկեկում էր: Կարո՞ղ ես բացատրել՝ ինչ է եղել»: Ապա նայեց ինձ: Մինչ ինձ հարց կտային, ես հեռացա սենյակից: «Նարի՛ր, Սրոյանկա, մեր երեխաները շար հեռու են գնացել, սիրահարվել են: Շար դժվար կացության մեջ ընկանք»: «Վա՛յ մեզ» ասելով՝ տիկին Ստոյանկայի աչքերը արցունքոտվեցին: «Խե՛ղճ աղջիկս»: «Ես այս գիշեր կհոսես՝ Վահանի հետ, որ վաղը Վարդանին ճամփու դնենք»: «Գժվե՞լ ես, ինչ է, Ուզում ես ողջ-ողջ աղջկաս գերեզման ն դնել: Ուրիշ ելք գրվենք»: «Լավ, Սրոյանկա, ես ամեն ինչ կանեմ: Վահանին կհամոզեմ, որ Վարդանը մնա այսօր, ամուսնացնենք Նելլի հետ»: «Արշալույս, ես ամեն ինչի համաձայն եմ, միայն աղջիկս դժբախտ չլինի»: «Գնա՛, հանգուրացրո՛ւ Նելլին: Ամեն ինչ լավ կլինի, բայց առայժմ Պայ Դմիտրիին թող ոչինչ չիմասնա»:

Երեկոյան հորեղբայրս շատ ուշ եկավ, բայց ես դեռ չէի քնել: Երևում էր, որ խմած էր.«Արշալույս, դեռ չե՞ս քնել»: «Նարի՛ր, Վահան, քեզ հետ խոսելիք ունենմ»: «Ի՞նչ է պատահել, Արշալույս»: «Վարդանը և Նելլին սիրահարվել են: Դժվար կացության մեջ ընկանք: Սրոյանկան համաձայն չէ, որ Վարդանին հետ ուղարկենք, վահանում է, որ Նելլին դժբախտ կլինի: Կարևորը Պայ Դմիտրիին է: Դու ի՞նչ կասես, Վահան»: Վահանի հարբածությունը անցավ, սթափվեց.«Պայ Դմիտրիին լավ մարդ է, բայց մեջը մի քիչ հույնի արյուն կա, և նա ոչ մի դեպքում իր միակ աղջկան չի ուղարկի Հայաստան»: «Ես Վարդանի հետ խոսել եմ, ասաց՝ կմնա, կաշխատի քեզ հետ»: «Հեշտ է ասելը՝ կմնա, բա րնեցի՞ք, բա քու՞յրս: Մենք երկուսս հեռացանք, հիմա էլ՝ Վարդանը»: «Ի՞նչ անենք, Վահան, ինչպե՞ս այս դրությունից դուրս գանք, այսքան փարվա հարևանությունից հետո»: «Ես վաղը կհոսեմ Պայ Դմիտրիի հետ: Իսկ հիմա քնելու ժամանակն է»:

Ես առավոտ շուտ գնացի սրճարան: Սրճարանը նոր էր բացվել: Սրճարանատերը ճանաչում էր ինձ.«Խե՛ր լինի, այսքան շուտ ու՞ր ես

զնում»: «Արհեստասնոց եւմ զնում, մի քիչ գործ կա»: Նստեցինք, միասին սուրճ խմեցինք: Հետո գնացի ճաշարան, ճաշեցի և գնացի աշխատանքի: Սկսեցի աշխատել: Պայտերի համար մեխ էի սարքում: Հորեղբայրս շատ ուշ եկավ, ես արդեն մի քանի ձի պայտել էի: *«Բարի լույս»*, -ասաց հորեղբայրս և ուրիշ ոչինչ չխոսեց, միայն գործի մասին կարգադրություններ էր անում: Արդեն օրվա շատ ժամանակը դրսում էի աշխատում: Ոչինչ չգիտեի գիշերվա խոսակցության մասին: Դեկտեմբերյան կարճ օրը վերջանում էր: Նայելով ինձ՝ հորեղբայրս ասաց. *«Արհեստասնոցը կփակես և տուն կգնաս»:* Մինչև ուշ մնացի արհեստանոցում, աշխատեցի: Չէի ուզում ոչ ոքի տեսնել: Փակեցի արհեստանոցը, գնացի ճաշարան, հետո գնացի սրճարան, սուրճ խմեցի և շատ ուշ գնացի տուն: Ոչ ոք չնկատեց ինձ, մտա սենյակս, հագուստով թիկնեցի բարձին: Մի վայրկյան ննջեցի: Հորեղբորս հազը արթնացրեց ինձ: Հորեղբայրս շատ էր ծխում, դրա համար էլ մեկ-մեկ հագում էր: Բարձրացավ վերև: Առավոտյան նույն ձևով գնացի և սկսեցի աշխատել: Հորեղբայրս եկավ ու ասաց. *«Բարի լույս, Վարդան, այս քանի օրը վեր չես բարչրանում, որտե՞ղ ես ճաշում»:* *«Հորեղբայր, երես ունե՞մ, որ վերև բարչրանամ: Այսքան տարվա չեմ մտերիմ հարևանությունը ուրևապակ արեցի: Հորեղբայր, ես կհեռանամ, բայց առանց Նելիի չեմ ապրի»:*

Վարդանի և Նելիի նշանդրերը և հարսանիքը

-Լավ, լավ, պատրաստվիր, մյուս շաբաթ նշանդրերը կանենք: Պայ Դմիտրին համաձայնեց, միայն թե մնաս այստեղ:

Մուրճը ձեռքիցս ընկավ.

-Հորեղբայր, ի՞նչ ես ասում, ճի՞շտ է, որ Նելին իմն է:

-Հա՛, քոնն է: Չե՞ս մտածում ձերոնց մասին:

- Ի՞նչ անեմ, հորեղբայր, առանց Նելիի ինչպե՞ս ապրեմ:

Մինչ այդ մի կառք կանգնեց դռան առաջ:

-Վարդան, տուն գնա, քեզ սպասում են:

-Չէ՛, հորեղբայր: Գործի ժամանակն է, գործ ենք անում:

Վերցնելով գործիքները՝ սկսեցի պայտել: Հորեղբայրս, տեսնելով, որ տուն գնալու միտք չունեմ, ճաշից հետո փակեց արհեստանոցը ու ասաց՝ գնանք: Ես ամոթից մեռնում էի: Երեխայի նման ձեռ-

քիցս բռնեց ու տարավ դեպի Պայ Դմիտրիի խանութի կողմը:

-Հորեղբայր, ու՞ր ենք գնում:

-Չայնդ կտրի՛ր, ժամանակին ամաչեիր:

Մտանք խանութ: Պայ Դմիտրին նայեց ինձ, չժպտաց: Ես ամոթից գետնի տակը մտա: Պայ Դմիտրին ասաց հորեղբորս.

-Վահա՛ն, ամեն ինչ տուն եմ ուղարկել, գնացե՛ք, մի քիչ հետո ես կգամ:

Երեկոյան բոլորը հավաքվել էին Պայ Դմիտրիենց տանը: Ես չէի ուզում գնալ: Հորեղբորս կինը ինձ շատ ստիպեց, բայց ես հաստատ որոշել էի չգնալ: Ամաչում էի Պայ Դմիտրիից: Առավոտ շուտ գնացի աշխատանքի: Մինչև երեկո աշխատեցիմք: Հորեղբայրս ասաց.

-Վարդա՛ն, հավաքի՛ր գործիքները, գնանք տուն:

Ես ուզեցի գնալ իմ սենյակ: Հորեղբայրս խստադեմ նայեց ինձ ու բարկացած ասաց.

-Ի՞նչ է, չե՞ս ուզում բարձրանալ վերև:

Գլուխս կախեցի ու հետևեցի նրան: Հորեղբորս կինը նայեց ինձ ու ծիծաղեց.

-Ինչքան էլ ամաչկոտ ես:

-Արշալու՛յս, վաղը կգնաս խոսկապի համար կապույտ քարով մատանի կառնես: Վաղը խոսկապի²⁰¹ կգնանք:

-Արշալու՛յս քույրիկ, իմ ոսկիների մեջ մի անցքով ոսկի կա, մի հատ էլ ոսկե շղթա կառնես:

Կիրակի առավոտյան ես շատ ուշ արթնացա, հորեղբայրս տանը չէր, ոչ էլ՝ Պայ Դմիտրին: Մտա պարտեզ: Յուրտ, բայց արևոտ օր էր: Հորեղբորս կինը ձայն տվեց.

-Վարդա՛ն, արի՛ վերև՝ նախաճաշենք:

-Հիմա կգամ, Արշալու՛յս քույրիկ:

Բարձրացա վերև: Նեխի՛ն նստած էր՝ հորեղբորս երեխան գրկին:

-Բարի լու՛յս, Նեչի՛:

-Բարի լու՛յս, Վարդ: Այս քանի օրը ինչպե՞ս անցկացրիր:

-Ուրիշ բանի մասին խոսե՛ք, անցավ գնաց,-ասաց հորեղբորս կինը,-տեսնենք պապադ ու Վահանը ու՞ր գնացին:

Սկսեցիմք նախաճաշել: Մեկ էլ դուռը աղմուկով բացվեց, և լսվեց հորեղբորս ձայնը.

-Արշալույս, տե՛ս՝ ինչ ենք բերել:

Երեքս էլ ելանք պատշգամբ, որ տեսնենք, թե ինչ են բերել. մի շատ մեծ ոչխար:

-Վահան, այդ ինչ մեծ ոչխար եք բերել:

Հորեղբայրս հարցրեց.

-Արշալույս, խոսկապի և նշանդրեքի համար կհերիքի՞: Այդ սիրահավածները այդտե՞ղ են:

-Բա ու՞ր պիտի լինեն:

-Վարդանը թող գա, մեզ օգնի, որ մինչև գիշեր պատրաստ լինի:

Մինչ այդ եկավ Պայ Գմիտրիին՝ դանակով.

-Բարի լույս, Վարդան:

-Ճօծքօ ցրօ, տա՛ (Բարի լույս, հայրիկ):

-Տե՛ս է, բուլղարերեն է խոսում, ինչքան շուտ սովորեց:

-Մեսրոպ աղային քավոր չանե՞նք,-ասաց հորեղբայրս Պայ Գմիտրիին:

-Դրանից լավ մա՞րդ: Վարդան, Նելին ու՞ր է:

-Այստեղ եմ, պապա՛:

-Ա՛յ աղջի, ի՞նչ գործ ունես այդտեղ, գնա՛, Մեսրոպ աղային կանչի՛: Եղնիկի արագությամբ գնա՛:

Տասը րոպե չանցած՝ Մեսրոպ աղայի հետ եկան: Մեսրոպ աղան բարևելով հարցրեց.

-Այդ ի՞նչ գործի եք:

-Տեսնում ես՝ պատրաստություն ենք տեսնում:

-Ինչի՞համար:

-Հետո կիմանաս, հիմա օգնի՛ր:

Ամեն ինչ պատրաստ էր, եկան կանայք և իմ օգնությամբ միսը տարան Պայ Գմիտրիենց տուն: Երեքով գնացինք մեր տուն: Հորեղբորս կնոջը մի րոպեով կանչեցի: Նա եկավ:

-Մեզ համար սեղան պատրաստի՛ր, անպայման գինի կբերես: Մնացածը մենք կանենք:

Հորեղբորս կինը ամեն ինչ պատրաստեց ու գնաց:

-Մեսրոպ աղա, գլխի ընկնու՞մ ես, թե ինչու ենք քեզ կանչել:

-Հասկանում եմ:

-Վարդանի ու Նելիի քավորը պիտի լինես: Համաձա՞յն ես:

-Էդ էլ խոսք է:

-Որ այդպես է, երեկոյան կնոջդ հետ արի՛ մեր տուն:

Ես անընդհատ շարժման մեջ էի. մեկ Նելիենց տանն էի, մեկ՝ մեր: Այդպիսով օրը անցավ: Երեկոյան մեր կողմից հյուրերը հավաքվել էին, երբ հորեղբայրս ասաց.

-Գնանք, Վարդան, դու չե՞ս գալու:

-Հորեղբայր, եթե չես ուզում, չեմ գա:

Բոլորը ծիծաղեցին, իջանք մեր պարտեզը: Հիանալի գիշեր էր: Աստղերը շողշողում էին: Լուսինը այնպես էր փայլում, կարծես ցերեկ լիներ: Պայ Դ-միտրիենց տանից ձայներ լսվեցին.«Идват» (գալիս են): Մտանք Պայ Դ-միտրիենց բակը, մեզ դիմավորեցին: Բարձրացանք երկրորդ հարկ: Մտանք հյուրասենյակ, որտեղ ճոխ ու մեծ սեղան էր դրված՝ ճաշերով, մրգերով, գինու փարչերով: Պայ Դ-միտրին, Մեսրոպ աղան ու հորեղբայրս նստեցին կողք կողքի: Հորեղբորս կինը, Ստոյանկան և տիկին Շուշանիկը ինձ ու Նելիին նստեցրին իրենց մեջտեղը: Մեսրոպ աղան, վերցնելով գինու բաժակը, կանգնեց, հայտարարեց խոսկապի մասին: Բոլորը, բաժակները վերցնելով, ոտքի ելան: Հորեղբորս կինը տվածս ոսկով ոսկե շոթան գցեց Նելիի վիզը, ոսկե մատանին դրեց մատը և համբուրեց այտերը: Բոլորը ծափ տվեցին: Տիկին Ստոյանկան էլ իմ մատին մի շատ գեղեցիկ կարմիր քարով ոսկե մատանի դրեց, համբուրեց ճակատս և երջանկություն մաղթեց: Բոլորը ծափ տալով նորից շնորհավորեցին մեզ: Հետո սկսվեց կերուխումը: Երեկոն շատ ուրախ անցավ, բոլորը նորից երգեցին, Նելին էլ երգեց: Ես արդեն շատ լավ հասկանում էի բուլղարերեն: Ահա երգի բառերը.

«Աշուկներդ ամեն գիշեր երազումս եմ տեսնում,

Աստղերի նման լուռ եմ գիշերով,

Հարցնում եմ, փոքրիկս, ինչու՞ եմ լուռ և տխուր,

Դրա համար, որ սիրու՞մ ես ինչ:

Աշուկներդ ամեն գիշեր երազումս եմ տեսնում,

Չեմ ասում՝ այո՛, քայց չեմ էլ ասում՝ ո՛չ,

Ինչ չէի տա՝ միայն իմանալու՝

Դու ի՞նչ ես, դու, որ սիրում ես ինչ:

Աշուկներդ ամեն գիշեր երազումս եմ տեսնում,

Բայց տեսնում եմ, որ սիրում ես ինձ,
 Ինձ, որ իմն ես դու, որ պիտի սիրես ինձ,
 Առաջին քնքուշ համբույրը պիտի նվիրես ինձ:
 Ինչու՞ մոռացար այն անուշ, երջանիկ օրերը,
 Առանց մտածելու անցյալ օրերին վերջ դրիր,
 Այդ սիրուն, սևորակ աչքերով մի անգամ էլ նայի՞ր ինձ,
 Վերջին համբույրը առաջվա նման նվիրի՞ր,
 Քեզ համար ապրում էի, քեզնով երջանիկ էի,
 Ինչու՞ ինձ թողիր հեռացար,
 Ինչնից բացի ուրիշին սիրեցիր:
 Կանցնեն օրեր, նորից կվերադառնաս, փոքրիկս,
 Բայց ես առաջվա նման չեմ սիրելու քեզ:
 Ես քեզ դավաճանեցի, ների՞ր ինձ,
 Առաջվա նման քնքու՞շ փայտիայիր,
 Մոռացի՞ր անցյալը, սիրի՞ր ինձ, սիրելի՛ս,
 Առաջվա նման քնքու՞շ համբուրիք:
 Ես քեզ կնեղեմ, քնքուշ կփայտայեմ,
 Բայց առաջվա նման չեմ կարող սիրել:
 Քո հեռանալուց հետո ուզեցի ուրիշին սիրել,
 Շարերին հանդիպեցի, բացի քեզնից,
 Ոչ ոքի չկարողացա սիրել,
 Ների՞ր ինձ, ների՞ր, սիրելի՛ս:
 Հիշու՞մ ես, սիրելի՛ս, որ երդվում էիր,
 Որ ինձ հավատարիմ պիտի մնաս ամբողջ կյանքում,
 Հիշու՞մ ես, սիրելի՛ս, կուսական, բուրավեպ անտառում,
 Վայրի քնքուշ վարդերի թփերի տակ
 Առաջին համբույրը քեզ նվիրեցի:
 Լաց էիր լինում իմ գրկում, որ սիրում ես ինձ:
 Ինչու՞, ինչու՞ ինձ թողեցիր հեռացար,
 Բացի ինչանից ուրիշին սիրեցիր:
 Ես վարդ էի, եղյամբ այրեց ինձ,
 Երջանիկ էի, դժբախտացրիր ինձ:
 Ինչու՞, ինչու՞ ինձ թողեցիր, ուրիշին սիրեցիր:
 Հիշու՞մ ես, սիրելի՛ս, որ մի անգամ նորից անտառում
 Ասացիր, որ գալու ես ինձ ուզելու,

Բայց մի քանի օր անց տեսա՝ ուրիշին սեր էիր բացատրում:
 Ես վարդ էի, եղյամբ այրեց ինձ,
 Երջանիկ էի, դժբախտացրիր ինձ:
 Ասա՛, ասա՛, անհավատարի՛մ թշվառական,
 Ինչպե՞ս մոռացար երդումը, որ մինչև մահ հավիտյան
 Ինձ պիտի սիրես, ոչ մի ուրիշի,
 Այրեցիր ինձ, այրվես մինչև մահ հավիտյան,
 Ես քեզ սիրեցի ջերմ սիրով ու հիմա
 Լաց եմ լինում ու ողբում իմ դժբախտ սերը,
 Անիծվե՛ս, թշվառական՛, որ ինձ դժբախտացրիր,
 Կյանքս խորտակեցիր:

Արդեն լուսանում էր, բայց մեր քեֆը այնքան ուրախ էր, որ ոչ մեկը չէր մտածում տուն գնալու մասին: Երբ արդեն լրիվ լուսացել էր, հյուրերը ցրվեցին: Պայ Դ-միտրիին, Մեսրոպ աղան ու հորեղբայրս շարունակում էին իրենց կերուխումը: Ես ինձ շատ երջանիկ էի գգում և չէի ուզում հեռանալ: Հորեղբորս կինը հասկացավ այդ և ասաց Ստոյանկային, Նելիին ու տիկին Շուշանիկին.«*Եկե՛ք, մենք էլ գնանք մեր տուն՝ սուրճ խմելու*»:

Գնացինք մեր տուն, սուրճ խմեցինք, գրուցեցինք: Տղամարդիկ արդեն սրճարան էին գնացել: Ստոյանկան և տիկին Շուշանիկը գնացին իրենց տները: Մեր տանը երեքով մնացինք: Հորեղբորս կինը հարցրեց.«*Չե՞ք ուզում հանգստանալ: Նելի՛, գնա՛ տուն, հանգրստացի՛ր: Իրիկնադեմին կգնանք քաղաքային այգի*»: Նելին գնաց, ես էլ գնացի իմ սենյակը՝ հանգստանալու: Այսպես օրերը անցնում էին: Ես առաջվա նման աշխատում էի հորեղբորս մոտ: Եկավ մեր նշանդրեքի օրը: Ինչպես խոսկապը, այնպես էլ նշանդրեքը անցավ շատ ուրախ: Շատ երգեր երգեցին: Նելին էլ երգեց: Ես նորից ձեզ կներկայացնեմ այդ երգի բառերը:

*Մեր բաժանման համար, գիրեմ, դու չես տխրում,
 Դու ուրիշին ես փայփայում ու համբուրում, մոռացար ինձ,
 Ես միշտ երազում եմ, որ ինձ մոտ ես դու,
 Առաջվա նման քնքուշ փայփայում ու համբուրում:
 Բայց այդ ուրախությունը ընդմիշտ չէ ինձ համար,*

Այդպիսի երջանկությունը մի ակնթարթ չի մնում,
 Բայց հիշիր, որ այս աշխարհում,
 Ոչ ոք չի սիրելու քեզ այնպես, ինչպես ես էի սիրում:
 Մեր բաժանման համար, գիտեմ, դու չես տխրում,
 Դու ուրիշին ես փայտիայում ու համբուրում, մոռացար ինձ,
 Ես քեզ սիրեցի ջերմ, քնքուշ սիրով,
 Բայց դու չհավատարացիր, թողիր հեռացար:
 Թափվում եմ տերևները, ժպտում եմ աստղերը,
 Մթության մեջ մենակ թափառում եմ ես,
 Զնքուշ փայտիայանք, ջերմ համբույրներ,
 Միրյա երագում է վերջին-վերջին անգամ:
 Չեմ տեսնելու ընդմիջյալ քեզ, չեմք հանդիպելու մենք
 Եվ գաղտնիքներ առաջվա նման չեմք ասելու իրար,
 Զնքուշ փայտիայանք, անուշ համբույրներ,
 Միրյա փափագում է վերջին-վերջին անգամ:
 Թափվում եմ տերևները, ժպտում եմ աստղերը,
 Առանց քեզ մթության մեջ թափառում եմ ես,
 Ուզում եմ քեզ հանդիպել, ուզում եմ քեզ տեսնել,
 Վերջին-վերջին անգամ քեզ համբուրել:
 Ամեն գիշեր երագումս քեզ եմ տեսնում,
 Զնիս մեջ տեսնում եմ քո գեղեցիկ էությունը,
 Զո սև, գանգուր վարսերը,
 Զո սքանչելի, փայլուն, սև աչքերը:
 Ե՞րբ պիտի երգեմ քեզ համար հավիտյան,
 Երգ միայն սիրո և ուրախության:
 Պիտի շոյեմ և համբուրեմ,
 Դու, իմ աննման, քնքուշ սեր:
 Ե՞րբ պիտի երգեմ քեզ համար,
 Դու, սիրո՛ թագուհի,
 Զո ճանապարհը պիտի շաղեմ
 Մքանչելի վարդերով և հուրավեր ծաղիկներով:
 Ե՞րբ պիտի երգեմ քեզ համար, սիրելիս,
 Երգ միայն սիրո մասին,
 Իմ անգի՛ն կյանք, իմ անգի՛ն սեր,
 Զո ճանապարհը պիտի շաղեմ քնքուշ

*Վարդերով, հուրավեր ծաղիկներով:
Ամեն գիշեր երազումս քեզ եմ տեսնում,
Զնիս մեջ տեսնում եմ քո զեղեցիկ էությունը,
Քո սև, զանգուր վարսերը,
Քո սքանչելի, փայլուն, սև աչքերը:*

Նշանդրեքից հետո Պայ Դմիտրիենց և հորեղբորս տանը ամեն ինչ ընդհանուր էր: Ամեն երեկո մեզ մոտ ուրախություն էր: Մի օր մեր տանն էինք ուրախանում, մի օր՝ նրանց: Գիշերը անցնում էր: Եկավ մասնակցների 31-ը՝ նոր տարվա գիշերը: Նոր տարին անցկացրինք մեր տանը: Հրաշալի տոնածառ էինք զարդարել: Հորեղբորս երեխաները շատ ուրախ էին, անընդհատ երգում էին, պարում տոնածառի շուրջը: Ժամը տասներկուսի մոտերը երեխաները քնեցին: Եկավ ժամը տասներկուսը, բոլորը ոտքի կանգնեցին և շնորհավորեցին միմյանց նոր տարին: Գիշերվա ժամը երեքին եկավ Մեսրոպ աղան՝ իր կնոջ հետ: Մտան սենյակ և զարմացած բացականչեցին.

-Պահ, պահ, այս ի՞նչ ուրախություն է:

Մեսրոպ աղան նստեց Պայ Դմիտրիի և Վահանի մեջտեղը: Երկուսի քեֆն էլ շատ լավ էր: Նոր տարվա գիշերը շատ ուրախ անցավ: Առավոտյան՝ հունվարի մեկին, գնացինք Պայ Դմիտրիենց տուն, որտեղ ճոխ սեղան էին պատրաստել: Ինձ համար այս տարին իմ կյանքում ամենաերջանիկ տարին էր: Հունվարի մեկին էլ որոշվեց մեր հարսանիքի օրը՝ հունվարի տասնվեցը: Այսպիսով՝ օրերն անցնում էին: Տիկին Ստոյանկան և հորեղբորս կինը օր ու գիշեր պատրաստվում էին հարսանիքին: Նելլի համար մի շատ զեղեցիկ հարսանեկան ճերմակ զգեստ կարեցին, իսկ ինձ համար քաղաքի ամենալավ դերձակի մոտ կոստյում պատվիրեցին: Հորեղբայրս և Պայ Դմիտրիին գյուղից նորից մի մեծ ոչխար բերեցին: Հորեղբորս և Պայ Դմիտրիի միջև մի փոքրիկ վեճ ծագեց, թե որ եկեղեցում կատարեն պսակադրությունը: Պայ Դմիտրիին ուզում էր, որ պսակադրությունը կատարվի բուլղարական եկեղեցում, հորեղբայրս չառարկեց և չուզեց գործը բարդացնել, բայց առաջարկեց, որ մի հայ քահանա էլ մասնակցի պսակադրությանը: Մեսրոպ աղան էլ համաձայնեց այդ որոշմանը: Այսպես հարցը լուծվեց: Առաջին դեպքն էր, որ հայ

տղան ամուսնանում էր բուլղարացի աղջկա հետ: Ամբողջ Պլովդիվը կարծես ուրախանում էր, որ մենք ամուսիններ էինք դառնալու: Մեր հարսանիքի հանդեսը տևեց երկու օր՝ կիրակի առավոտից մինչև երկուշաբթի առավոտ: Սոֆիայից հյուրեր էին եկել, բերել էին նվերներ: Հորեղբորս կինը մեզ համար իրենց տան երկրորդ հարկում մի սենյակ պատրաստեց՝ շատ ճաշակով կահավորված: Երկուշաբթի առավոտ հորեղբորս կինը, բռնելով մեր երկուսի ձեռքերը, ասաց. «*Դուք հիմա ամուսիններ եք, գնացե՛ք*»:

Չորեքշաբթի առավոտ շուտ գնացի աշխատանքի: Հորեղբայրս եկավ շատ բարկացած. «*Ի՞նչ է, հացի կարո՞ւր ենք մնացել: Շուր կորի՞ր, մինչև երկուշաբթի քեզ այսպեղ չտեսնեն*»: Զգացի, որ առարկելն ավելորդ է: Հորեղբայրս ավելի կորոքեցվեց: Շորես փոխեցի, դուրս եկա, ուղիղ տուն գնացի: Հորեղբորս կինն ու Նելին երկրորդ հարկում, կողք կողքի կանգնած, ծիծաղում էին. «*Հը՞, ծեծ կերա՞ր*»: «*Քիչ մնաց, որ ուրե՛ի*»: «*Արի՛ վերև, սուրճ խմենք*»:

Անցան օրեր: Եկավ փետրվար ամիսը: Մի օր հորեղբայրս հայտնեց. «*Այն վաճառականը, որ առաջին նամակը տարավ, նորից գնում է Տաճկահայաստան*²⁰²: *Արշալույս, մի նամակ գրի՛ր այն մասին, որ Վարդանը չի վերադառնալու, որ ամուսնացել է, տուն-տեղ դրել*»: Մարտ ամսին վաճառականը վերադարձավ: Անուշ մայրիկը շատ էր վշտացել: Հովսեփի և Նվարդի մասին ոչինչ չէր գրել: Եկավ գարունը, Նելինեց և մեր պարտեզների ծառերը ծաղկել էին: Մենք մեր պարտեզում՝ բալի ծառի տակ, մի գողտրիկ անկյուն ունեինք: Բալի ծաղիկները շատ հոտավետ են:

Եկավ հունիսը: Մի կիրակի առավոտ գնացինք քաղաքային այգի՝ զբոսնելու: Նելիի հետ նստել էինք մի նստարանի վրա և զրուցում էինք. «*Վա՛րդ, դու ոչ մի երգ չե՞ս երգելու ինչ համար*»: «*Հոգի՛ս, ես չայն չունեմ, որ երգեմ*»: «*Ոչինչ, Վա՛րդ, մի հայկական երգ երգի՛ր, շատ եմ ուզում լսել*»: «*Լա՛վ, կերգեմ «Դլյաման*²⁰³», *բայց չես ծիծաղելու վրաս, որովհետև այնքան էլ լավ չի սրացվելու*»:

Դլյաման²⁰⁴,

Արև ելավ Վանա ծովից,

Ա՛խ, դլյաման, ես քեզ սիրեցի, որ ինձ յար լինես,

Յամա՛ն, յամա՛ն,

Ա՛խ դլլաման, մեր տուն ձեր տան դիմաց:
 Աչքով կանես, ունքով կանես,
 Յամա՛ն, յամա՛ն,
 Ա՛խ, դլլաման, արև ելավ Սեպան²⁰⁵ սարից,
 Ա՛խ, դլլաման, դու ինձ չսիրեցիր,
 Յամա՛ն, յամա՛ն:

«Վա՛րդ, սիրում եմ քեզ: Առանց քեզ կյանք չունեմ: Վա՛րդ, քեզ մի գաղտնիք պիտի ասեմ: Դու շուտով հայր պիտի դառնաս: Մենք երեխա ենք ունենալու»: Ես զարմանքից քարացել էի, լեզուս կապ էր ընկել: Ես վախեցնում էի, որ Հովսեփի պես ես էլ երեխաներ չեմ ունենա: Գրկեցի Նելիին և ջերմ համբուրեցի: «Վա՛րդ, ամոթ է, մարդիկ կրեսնեն»: «Թող կրեսնեն, ես աշխարհի ամենաերջանիկ մարդն եմ հիմա: Հոգի՛ս, մի ե՛րզ երգի՛ր»: «Լավ, երգեմ», - շատ ցածր ու քնքուշ երգեց.

*Փոքրիկ երեխա, դու չգիտես՝ ինչ է վիշտը,
 Մի՛ հարցրու ինձ՝ ինչքան շար եմ տառապել:
 Պիտի սիրես դու, այն ժամանակ պիտի զգաս՝
 Ինչի համար է ողբում ամեն սիրող սիրույ:
 Փոքրիկս, զգուշացի՛ր սիրուց,
 Շար վիշտ կպատճառի քեզ,
 Պիտի սիրես դու, այն ժամանակ պիտի զգաս՝
 Ինչի համար է ողբում ամեն սիրող սիրույ:
 Զգուշացի՛ր սիրուց, փոքրիկս,
 Շար տառապանքներ կրերի քեզ,
 Ընտրի՛ր քեզ համար կյանքի ընկեր,
 Որ համապատասխան սիրեք իրար:*

Մինչև ցերեկ այգում մնացինք, հետո գնացինք պարի հրապարակ, այնտեղից էլ գնացինք տուն: Հորեղբորս կինը նայեց ինձ ու ասաց. «Վարդա՛ն, շար ուրախ ես, այդ ի՞նչ է պատահել»: «Նելիին հարցրու»: Նելին նայեց հորեղբորս կնոջը և աչքով արեց: «Ի՞նչ է, Նելի՛, չկարողացա՞ր համբերել»: Իսկ ես, որ ավելի չշարունակեմ, ասացի. «Դե՛ լավ, ես ամեն ինչ գիտեմ»:

Ընդհանրապես առավոտյան շուտ էի գնում աշխատանքի և մինչև հորեղբորս գալը մեխ էի սարքում պայտելու համար: Եկավ հորեղբայրս և ասաց. «*Բարի լույս, Վարդան, Արշալույսը Նեյիին տարավ մոր տունը, տես՝ ինչ խաբար կգա*»: Արդեն ճաշի ժամանակն անցել էր, հորեղբորս կինը եկավ. «*Աչքալուսանք արեք, Նեյին տղա ունեցավ*»: Եկավ և համբուրեց ինձ, հորեղբայրս նայեց ինձ ու ասաց. «*Վարդան, երկուս էիք երեք եղաք*»: Հորեղբորս կինը ասաց. «*Աստված չարից պահի*»: «*Գնա՛, Արշալույս, քան-մասն առ: Վաղուց է՝ քեֆ չենք արել: Պայ Դմիտրիին խաբար տվի՞ք*»: «*Չէ՛*»: «*Լա՛վ, դու գնա: Վարդան, արհեստանոցը ժամը չորսի կողմերը կփակես, կգնաս, ես գնամ Պայ Դմիտրիի մոտ*»: Այնպես եղավ, որ չկարողացա շուտ գնալ: Մթնել էր, երբ գնացի տուն: Հորեղբայրս հարցրեց. «*Վարդան, ինչու՞ ուշացար*»: «*Հորեղբայր, գործ պատահեց: Մի քանի ձի պայտեցի: Հակառակի նման անընդհար գալիս էին*»: Տեսա, որ սեղանը պատրաստ էր: Պայ Դմիտրին, հորեղբայրս և Մեսրոպ աղան նստած էին սեղանի շուրջը, երեքի քեֆն էլ լավ էր: Մեսրոպ աղան, դառնալով ինձ, ասաց. «*Աչքը լույս, Վարդան, - և տալով մի քաժակ գինի՝ ասաց, - Վարդան, խմիր տղայիդ կենացը*»: Պայ Դմիտրին, բռնելով իմ ձեռքից, նստեցրեց իր կողքին: Նստեցի: Ես էլ մասնակցեցի կերուխումին: Պայ Դմիտրին, դառնալով Մեսրոպ աղային, հարցրեց. «*Մեսրոպ աղա, ի՞նչ ես դնելու տղայի անունը*»: Օրենքով առաջին երեխայի անունը դնում է քավորը: «*Պայ Դմիտրի, դա շատ դժվար խնդիր է: Ես մտածել եմ այսպես, երեխայի անունը դնենք Անդրանիկ, հայերը Անդրանիկ կկանչեն, իսկ բուլղարները՝ Անդո*»: «*Մեսրոպ աղա, շատ խորամանկն ես, որտեղից էլ մտածել ես, Վարդան, դու ի՞նչ կասես*»: «*Քավորի ասածը օրենք է*»:

Այսպիսով՝ տղայիս անունը դրեցինք Անդրանիկ:

Գժբախտությունը

Անդրանիկը չորս տարեկան հասակում խոսում էր հայերեն, բուլղարերեն, բուրբերեն: Նեյին սովորեցնում էր բուլղարերեն, հորեղբորս կինը՝ հայերեն: Վեց տարեկանից գնաց հայկական դպրոց: Այստեղ առարկություն չեղավ, որովհետև հայկական դպրոցում բուլղարերեն էին սովորում: Հայկական դպրոցը մինչև հինգերորդ դա-

սարան էր: Անցան տարիներ: Անդրանիկը գերազանց վերջացրեց հինգերորդ դասարանը և ընդունվեց բուլղարական դպրոցի վեցերորդ դասարան: Նա իր տարիքից երկու անգամ մեծ էր երևում: Փարթամ հասակով, գանգուր, շագանակագույն մազերով, կապույտ աչքերով պատանի էր: Հորեղբորս և Պայ Գմիտրիենց ընտանիքները սերտ կապված էին իրար: Մի օր մեր տանն էինք, մի օր՝ նրանց: Անդրանիկի համար երկու տներն էլ հարազատ էին: Այս տարիների ընթացքում մի օր չպատահեց, որ մենք իրար վիրավորեինք:

Մի առավոտ նկատեցի, որ Նելին իրեն լավ չի գգում.«*Նելի՛, քեզ ի՞նչ է պատահել*»: «*Ոչինչ, Վարդան, ամեն ինչ կանցնի, մի քիչ գլուխս է ցավում*»: Գնացի հորեղբորս կնոջ մոտ, նա էլ ասաց, որ մի քանի օր է՝ գանգատվում է գլխի ցավից.«*Ոչինչ, կանցնի, վաղը կզնանք բժշկի*»: Գնացի արհեստանոց, սկսեցի աշխատել: Հորեղբայրս եկավ և ասաց.«*Բարի լույս, Վարդան: Նելիին բա՞ն է պատահել: Շար մի՛ սրածիր, վաղը հորեղբորդ կինը կտանի մեզ ծանոթ բժշկի մոտ: Ամեն ինչ կանցնի*»: Բժշկի գնալուց հետո հորեղբորս կինն ասաց, որ առանձնապես բան չկա, բայց մյուս օրը մի մարդ եկավ արհեստանոց: Շատ մաքուր էր հագնված, ակնոցով էր, ուներ փոքր մորուք: Հորեղբորս հետ գնացին: Մի ժամից հորեղբայրս եկավ: «*Վարդան, արհեստանոցը կփակես, տուն կզնաս, ես մի քիչ գործ ունեմ քաղաքում*»: «*Հորեղբայր, ո՞վ էր այդ մարդը*»: «*Ըն գործը չէ, դու քո գործին նայիր*», -ասաց ու գնաց: Չգացի, որ լավ բան չի պատահել: Հորեղբայրս շատ տխուր էր: Գնացի տուն, հորեղբայրս դեռ չէր եկել: Նելին ինձ էր սպասում: Ջուր լցրեց, լվացվեցի, բարձրացանք վերև: «*Նելի՛, ինչպե՞ս ես գգում քեզ*»: «*Շար լավ*» ասելով՝ մտավ իր սենյակը: Գնացի հորեղբորս կնոջ մոտ.«*Հորեղբայրս չեկա՞վ*»: «*Չէ*»: «*Արշալույս քույրիկ, այսօր մի մարդ եկավ արհեստանոց: Շար մաքուր էր հագնված: Ինչպես երևում էր, բժիշկ էր: Հորեղբորս հետ ինչ-որ տեղ գնացին*»: Մի ժամից հորեղբայրս վերադարձավ, շատ վրդովված էր: Հետո նորից գնաց: Նկատեցի, որ հորեղբորս կինը գույնը գցեց ու ասաց.«*Գնա՛ Նելիի մոտ: Հինա սեղան կպատրաստես*»: Արդեն սեղանը պատրաստ էր: Հորեղբայրս եկավ: Նստեցինք ճաշելու: Անդրանիկը տանը չէր: Ոչ մեկը ոչինչ չէր խոսում: Չգում էի, որ վատ բան էր պատահել: Հորեղբայրս, դառնալով ինձ, ասաց.«*Նելիին վերցրու՛, զնա՛ իրենց տուն*»: Նե-

լինեց տանը ավելի հանգիստ վիճակ էր: Բժշկի տված դեղերից հետո Նելին իրեն ավելի լավ էր զգում: Բայց մի քանի շաբաթ հետո նա իրեն թույլ էր զգում: Գիշերները քրտնում էր, և ջերմությունը 37 ու կես աստիճանից չէր իջնում, գլխի ցավեր էր ունենում: Բժշկի խորհրդով պետք է առողջարան²⁰⁶ ուղարկեինք: Ես գլխի ընկա, որ Նելին բարակ ցավով է տառապում (թոքախտով): Իմ կասկածները հայտնեցի հորեղբորս կնոջը: «*Չա՛յնդ կտրիր, ինչե՞ր ես դուրս տալիս*»: «*Արշալույս քույրիկ, ես տասնութ տարեկան չեմ*»: Հորեղբորս կինը, նայելով աչքերիս մեջ, լաց եղավ: Ամեն ինչ պարզվեց: Տասն օր հետո որոշվեց, որ Նելին առողջարան գնա: Ես ինքս տարա նրան: Պլովդիվից 50 կմ վրա էր, գնացքով մի ժամվա ճանապարհ էր, այնպես որ շաբաթը երկու անգամ այցելում էի Նելիին: Նելին իրեն լավ էր զգում: Ես գիտեի, որ դա ժամանակավոր է, և իմանալով բժշկի բնակարանը՝ գնացի նրա մոտ: Բժիշկը ճանաչեց ինձ: Ասացի, որ Նելիի ամուսինն եմ, որ բժիշկը պետք է ինձ ամեն ինչ ասի: Նա շատ համառեց, բայց ես նրան ասացի, որ արդեն երեխա չեմ, պետք է ինձ ճշմարտությունն ասի: Խոստովանեց, որ թոքախտի երրորդ ստադիան է, և ոչ մի հույս չկա: Վերադարձա տուն: Գնացի առաջին հարկի իմ սենյակը, ընկա մահճակալին և դառը լաց եղա: Այդ օրը ես աշխատանքի չգնացի: Հորեղբայրս եկավ, բարձրացավ վերև ու հարցրեց. «*Արշալույս, Վարդանը ու՞ր է*»: «*Առավուր քեզնից հետո դուրս եկավ, չգիտեմ՝ եկա՞ մի, թե չէ՞*»: «*Հորեղբայր, այսպեղ եմ*»: «*Արի՛ վերև, ի՞նչ ես գլուխդ կորցրել: Մի քիչ տղամա՛րդ եղիր*»: Ես ձայն չհանեցի: Նստեցինք ճաշելու: «*Վարդան, Նելիի մոտ վերջին անգամ ե՞րբ ես եղել*»: «*Երեկ չէ՛ առաջին օրը*»: «*Ինչպե՞ս էր զգում իրեն*»: «*Ոչինչ, իրեն լավ էր զգում*»: «*Տեսա՞ր, որ լավանում է, և հույս կա լավանալու*»: «*Հորեղբայր, ես ամեն ինչ գիտեմ: Նելին չի ապրի: Ես եղա այսօր բժշկի մոտ: Բժիշկը շատ համառեց, բայց հետո խոստովանեց*»: Հորեղբայրս ոչինչ չասաց, քեռակինս հեկեկալով լաց էր լինում: Եկավ տիկին Ստոյանկան Անդրանիկի հետ: Անդրանիկը վզիս փաթաթվեց ու հարցրեց. «*Պա՛ս, ինչու՞ եմ մեր տներն այսպես տխուր*»: «*Ոչինչ, տղա՛ս, ամեն ինչ կանցնի: Մաման կլավանա և առողջացած կվերադառնա*»:

Նելիի մահը

Նելիի ուղեգիրը 24 օրվա համար էր, նա վեց օր էլ ավել մնաց: Ես և Անդրանիկը գնացինք բերելու: Շատ լավ կազդուրվել էր, իրեն լավ էր զգում: Բայց մեկ-մեկ մտածմունքի մեջ էր ընկնում: Բոլոր ծանոթ-բարեկամները եկել էին կայարան՝ դիմավորելու: Նելին համբուրվեց մոր հետ: Ուրախությունից լաց էին լինում: Այդպես խմբով տուն գնացինք: Հորեղբայրս և Պայ Դմիտրին մեզ դիմավորեցին դռան առաջ: Պայ Դմիտրին համբուրեց Նելին, հորեղբայրս էլ համբուրեց: Բոլորս բարձրացանք Պայ Դմիտրիենց տուն: Բարձրացանք վերև, որտեղ սեղան էր պատրաստված: Եկավ Մեսրոպ աղան՝ տիկին Շուշանիկի հետ:

Անցավ մի քանի օր: Մի երեկո Նելին իր սենյակում, ձեռքի վրա հենված, պառկած էր: Հորեղբայրս և հորեղբորս կինը երեխաների հետ գնացել էին իրենց սենյակը՝ քնելու: Այս երեկո էլ պատրաստվեցի գնալ առաջին հարկի իմ սենյակը: Նելիի հիվանդությունից հետո ես մեկ-մեկ գնում էի քնելու իմ առաջվա սենյակում: Այս երեկո էլ պատրաստվեցի գնալ, բայց Նելին ձայն տվեց. «*Վա՛րդ, արի՛, բան ունեն ստե՛լու*»: «*Նելի՛, հոգի՛ս, վաղը կասես, այսօր շար հոգևած Կրեաք ունես*»: «*Ոչինչ, արի*»: Ես մտա նրա սենյակը: «*Նարի՛ր կողքս, բայց ինչ չես համբուրելու*»: Ընդհակառակը, ես համբուրեցի այտերը, չդիմադրեց: Նստեցի կողքը: «*Վա՛րդ, ների՛ր ինչ, ես շար մեղավոր եմ քո առաջ: Ես շար անզգույշ վարվեցի ինչ հեյր: Ես մի ընկերուհի ունեի, որը Կրեապում էր թոքախարով: Նա աշխարհում ոչ ոք չունեք, միայնակ աղջիկ էր: Հազիվ էր կարողանում իր ասրոսարը վաստակել: Ես գնում էի նրա Կրեաք, նյութապես օգնում էի: Նարում էիք, միասին ձաշում էիք, ջուր էի խմում, բաժանվելիս համբուրվում էիք: Նա մահացավ: Ես սխալս զգացի, բայց արդեն ուշ էր. ես վարակվել էի թոքախարով*»: «*Նելի՛, ինչե՛ր ես ասում*»: «*Լսի՛ր, Վա՛րդ, ես ամեն ինչ գիտեմ: Արդեն երրորդ պրադիան է: Ես շուրով կմեռնեմ*»: Գրկելով Նելին՝ ուզում էի խոսել, ձեռքով ծածկեց բերանս: «*Լռի՛ր*»: Նայեցի աչքերին, արցունքները կաթում էին: «*Վա՛րդ, հիմա լսի՛ր և երդվի՛ր, որ միևնչև կյանքիդ վերջը Անդրանիկից չես բաժանվելու: Գիտեմ, որ իմ մահից հեյրո հազիվ թե մնաս Պլովդիվում: Անդրանիկին միշտ քե՛զ հեյր պահիր իբրև մեր սիրո*

հիշատակ»: «Նեյի՛, քեզ ոչինչ չի պատահի»:
 «Վարդ, դու քո ասածին չես հավատում, ի՞նչ ես հավատացնում: Ես գիրեմ, որ դու ամեն ինչ գիրես: Վարդ, հիմա գնա՛, հանգստացի՛ր»:
 Ես չգիտեի ինչ անել: Սրտիցս արյուն էր կաթում: Գրկելով Նեյիին՝ զգացի, որ աչքերիցս արցունքներ էին հոսում: Նեյին գրկիս մեջ հանգիստ քնեց: Համբուրեցի երկու այտերը, շատ զգույշ տեղավորեցի անկողնում, ծածկեցի, մի պահ նայեցի հրեշտակի նման գունատ, գեղեցիկ դեմքին, հիշեցի մեր առաջին համբույրները, սիրո խոսքերը: Չգիտեմ՝ ինչքան էի մնացել այս վիճակում, երբ զգացի, որ մեկը ձեռքը դրեց իմ ուսին: «Վարդա՛ն, գնա՛ քնի՛ր»:
 Հորեղբորս կինն էր: «Ու՛ր գնամ, ու՞մ թողնեմ այս հրեշտակին»:
 «Վարդա՛ն, սթափվի՛ր, դու էլ կհիվանդանաս»:
 «Ի՞նչ նշանակություն ունի»:
 «Անդրանիկի մասին չե՞ս մտածում»:
 Սթափվեցի: «Ի՞նչ ես ասում, Արշալույս քույրիկ, Անդրանիկը իմ հոգին է, Նեյիից հետո՛ւր ուրիշ ո՞վ ունեմ: Նայի՛ր, այս հրեշտակը պետք է մեռնի»:
 Հորեղբորս կինը ոչինչ չպատասխանեց, բռնեց ձեռքիցս և փոքր երեխայի պես դուրս տարավ: «Գնա՛, քնի՛ր»:
 Օրորվելով զնացի առաջին հարկի իմ սենյակը: Չգիտեմ՝ ինչքան լաց եղա իմ սև բախտի համար: Չարթնեցի հորեղբորս հագից: Ես էլ ելա, զնացիմք արհեստանոց, սկսեցիմք աշխատել: Հորեղբայրս, նայելով ինձ, սկսեց մեղմ խոսել: «Վարդա՛ն, քեզ մանչի պես պահի՛ր: Ի՞նչ ես գլուխդ կորցրել: Վաղը Սոֆիայից Պայ Դմիտրիին ծանոթ բժիշկն է գալու: Մեր բժշկի հետ կոնսուլտացիա պիտի անցկացնեն»:
 «Հորեղբայր, անօգուտ է, Նեյին թոքախորով վարակվել է իր ընկերուհուց, որը մահացել է, այնպես որ Նեյին գիրի, որ չի ապրելու»:
 «Քեզ ո՞վ ասաց, Նեյի՞ն ասաց»:
 «Այո՛, Նեյին ասաց»:

Մինչ այդ մի կառք կանգնեց դռան առաջ, զնացի պայտելու: Աշխատանքից հետո ես շուտ տուն գնացի: Տեսա հորեղբորս կինն ու Նեյին նստած գրուցում են: Անդրանիկը երեխաների հետ էր: Հորեղբորս կինն ասաց. «Նայի՛ր, Վարդա՛ն, վաղը Սոֆիայից բժիշկ է գալու»:
 «Ամեն ինչ գիրեմ, հորեղբայրս ասաց»:
 «Սոված չե՞ս»:
 «Արշալույս քույրիկ, հորեղբայրը կգա, միասին կուրենք»:
 Հորեղբայրս եկավ Պայ Դմիտրիի հետ: Միասին նստեցիմք ճաշելու: Խոսակցությունը Սոֆիայից եկող բժշկի մասին էր: Ո՛չ Սոֆիայի, ո՛չ Պլովդիվի հեքիմներն ու բժիշկները չկարողացան օգնել Նեյիին: Նոր տարուց

հետո նորից առողջարան տարանք: Այս անգամ ավելի հայտնի՝ «Տրոյանի»²⁰⁷ առողջարան տարանք, որը գտնվում էր Սոֆիայի մոտերքում՝ Վիտուշեի բարձունքում: Նելին 24 օր մնաց այդտեղ: Փետրվարի սկզբին բերեցինք տուն: Դրանից հետո հիվանդությունը շատ արագ զարգացավ: Մարտի սկզբին արդեն անկողնուց վեր չէր կենում: Մարտի 6-ի գիշերը իրեն շատ վատ էր զգում: Բժիշկը եկավ, մնաց մեր տանը: Ես, Նելիի անկողնու մոտ նստած, մտածում էի՝ երևի մի փոքր ննջեց: Նելին շատ թույլ ձայնով ինձ կանչեց: Ձեռքս բռնեց, քաշեց, ջուր ուզեց: Բաժակը հպեցի շուրթերին, մի քանի կում խմեց: Մինչ այդ հորեղբորս կինը, Ստոյանկան ու բժիշկը եկան սենյակ: Շատ թույլ ձայնով ասաց. «*Վա՛րդ, ների՛ր ինձ*»: Սրանք էին Նելիի վերջին խոսքերը: Մի թեթև սարսուռ, և Նելին այլևս չկար: Բժիշկը ինձ հեռացրեց Նելիի մոտից: Կանանց օգնությամբ տեղավորեցին անկողնում: Բժիշկը ափի շատ նուրբ շարժումով ծածկեց Նելիի աչքերը: Ամբողջ քաղաքը սգաց Նելիի մահը: Թաղմանը կարծես ամբողջ Պլովդիվը մասնակցեց:

Անդրանիկը շատ ծանր տարավ մոր մահը: Հիվանդացավ, մեկ ամիս տառապեց, հետո կամաց-կամաց կազդուրվեց, նորից սկսեց գիմնագիտ հաճախել:

Ամիսներն անցնում էին, արդեն մայիսն էր: Անդրանիկի քննությունները վերջացել էին: Ես ուզում էի Անդրանիկի հետ վերադառնալ գյուղ և արձակուրդը անցկացնել գյուղում: Այդ մասին հայտնեցի հորեղբորս:

-Ինչու՞ չէ, գնացե՛ք: Օգոստոսի վերջին կվերադառնաք, որ Անդրանիկը շարունակի գիմնագիտ:

Պայ Գմիտրին էլ համաձայնեց.

-Գնացե՛ք, կազդուրվե՛ք, օգոստոսի վերջ կուզաք:

Որոշված օրը բոլորս գնացինք կայարան: Եկավ Սոֆիա-Պոլիս գնացքը: Բոլորը Անդրանիկին գրկեցին, համբուրեցին, ես էլ բոլորի հետ համբուրվեցի: Բարձրացանք գնացք, գնացքը շարժվեց: Ում մտքով կանցներ, որ վերջին անգամն էմ տեսնում հարազատներիս:

Հարազատներիս մոտ

Մի քանի օր տևեց Պլովդիվից Պոլիս ճանապարհը: Ճանապարհներին, կայարաններում բեռնատար գնացքների վագոնները լեփ-լե-

ցուն էին զինվորներով, որոնք գնում էին դեպի թուրքական սահման: Ինձ դուր չէր գալիս, որ այդքան զինվոր փոխադրվում էր դեպի սահման: Սահմանին կատարվեց փաստաթղթերի ստուգում, որոնք կարգին էին: Անցանք սահմանը, նույն դրությամբ էր. զինվորներով, զինամթերքերով լեփ-լեցուն թուրքական գնացքները գնում էին դեպի բուլղարական սահմանը: Էդիրնե²⁰⁸ խոշոր քաղաքը մի մեծ զինվորական ճամբարի էր վերածված: Շարունակելով ճանապարհը՝ հասանք Պոլիս: Գնացինք նույն իջևանատունը, որտեղ շատ տարիներ առաջ մնացել էի: Մի քանի օր հետո գնացքով հասանք Էրզրում: Նույն դրությամբ էր. գնացքները լեփ-լեցուն էին զինվորներով, բարձված էին զինամթերքով և շարժվում էին դեպի արևմուտք: Մի կառք վարձեցի, որը մեզ հասցրեց մեր գյուղի կալերը: Վճարելով կառապանին և շնորհակալություն հայտնելով՝ ճանապարհեցինք ու ճանապարհ ընկանք դեպի տուն: Ուղիղ գնացինք մեր տուն. տեսա՝ հորքուրս գալիս է մեր կողմը: «*Բարև, հորքուր*», -ասացի: «*Բարև*», -ասաց ու անցավ, չճանաչեց: «*Անու՛շ մայրիկ*», -կանչեցի: Հետ նայեց, մի քանի քայլ մոտեցավ: Վար կրնկներ, եթե ժամանակին չմոտենայի: «*Վարդա՛ն, յավրու՛ն, այդ որպեղի՞ց*»: Կանայք հավաքվեցին՝ տեսնելու, թե ինչ է պատահել: Շատերը ինձ ճանաչեցին.«*Վարդանը եկել է, Անու՛շ մայրիկ, ա՛ջքդ լույս*»: Հորքուրս ուշքի եկավ, տեսավ կողքիս կանգնած Անդրանիկին, նայեցավ ինձ: Ասացի.«*Մանչու է*»: Գրկելով Անդրանիկին՝ համբուրեց: Շարժվեցանք դեպի տուն, մտանք պարտեզ: Ի՛նչ մեծ փոփոխություն էր այստեղ կատարվել, այն փոքր ծառերը մեծացել էին, մի մասի պտուղները արդեն սկսել էին հասունանալ: Բարձրացանք երկրորդ հարկ: «*Վարդա՛ն, կիևդ ինչու՛ չես բերել*»: «*Կին չկա, մարտին մահացավ*»: Մի պահ խոր լռություն տիրեց: «*Վարդա՛ն, սոված կլինեք, հիմա սուրփա՞*²⁰⁹ *կպարտասարին, կճաչենք*»: Նայեցա չորս կողմս. ոչ մի փոփոխություն, ամեն ինչ այնպես էր, ինչպես շատ տարիներ առաջ: Սուրփան արդեն պատրաստ էր: Նստանք, ճաչեցինք: Ամբողջ խոսակցությունը հորեղբորս շուրջ էր: Ամեն ինչ պատմեցի: Հորքուրս մեկ լալիս էր, մեկ ծիծաղում: Հովսեփն ու Նվարդը արտերում էին: «*Այսօր խաղողի այգին գնացին, շաքաթ օր է, շուր կուզան: Վարդա՛ն, գնա՛՛ փոքր սենյակ, հանգստացի՛ր: Մենք Անդրանիկի հետ կիջնինք*

պարտեզ: Գնանք, փղաս»: «Գնանք, հորքուն»:

Ուզում էի քնել, չկարողացա: Իջա պարտեզ, Անդրանիկը հորաքրոջ հետ պարտեզում ավելորդ բաներն էր հավաքում: Մինչ այդ եկան Նվարդն ու Հովսեփը. մտնելով պարտեզ՝ զարմացան: Մեկ ինձ էին նայում, մեկ՝ Անդրանիկին: Առաջինը սթափվեց Հովսեփը: Վագելով իրար գիրկ ինկանք: «Վարդասն, հոգիս, այս որտեղի՞ց»: Հետո գրկեց Անդրանիկին, Նվարդը մեզ նայում ու լաց էր լինում: Եկավ, համբուրեց ինձ, հետո՝ Անդրանիկին: Բարձրացանք վերև, Հովսեփը ոչինչ չէր հարցնում կնոջս մասին: «Հորքուն, փար՝ Անդրանիկին, թող քնի, հանգստանա»: Մնացինք երեքով: «Վարդասն, ինչպես երևում է, դժբախտությունն է պատահել»: «Հա՛, կինս բուլղար էր, անունը՝ Նելի, այս փարի մարտին մահացավ»: Մանրամասն պատմեցի ամբողջ եղելությունը: Նվարդը աչքերից կլոր-կլոր արցունքներ էր թափում. «Վա՛խ, յավրուն, վա՛խ, այդ ինչ ցավ է բռնվախ»:

Կիրակի առավոտ էր, ամբողջ գյուղը իմացել էր մեր գալու մասին: Գալիս էին աչքալուսանքի, երբ անցնում էին տան մոտով: Բացի հորքուրիցս՝ բոլորս գնում էինք արտերը՝ աշխատանքի: Անդրանիկը իրեն շատ լավ էր զգում, իր հետ վերցրած գրքերով պարապում էր՝ աշնանը զիմնազիս ընդունվելու համար: Մի ամիս էր անցել, երբ իրիկնադեմին երկու եղբայր, պարտեզում նստած, գրուցում էինք: Ներսեկան տիրացու Սիմոնը և մեր հեռու ազգականներից Նուբարը²¹⁰ ու նստեցին աթոռակներին: Նուբարը, դառնալով ինձ, ասաց. «Վարդասն, փաստիուսադ հավաքի՛ր, գնա՛, երեկ ընդհանուր զորահավաք հայտարարվեց Թուրքիայում, ու քեզ էլ կտանեն»: «Լավ, բայց ես բուլղար հպարակ եմ»: «Այդ նշանակություն չունի, դու այստեղ ես ծնված: Եվ հեյրո, ինչպես երևում է, պարտեզում բուլղարների և թուրքերի մեջ պիտի ըլլա, կարող է՝ հույներն էլ մասնակցեն»: Արդեն ուշ էր, երբ գնացին: Մնալով երկուսով՝ եկանք այն եզրակացության, որ ես Անդրանիկի հետ պիտի շուտ, հեռանամ, բայց առավոտյան պարզվեց, որ գյուղը պաշարված է ասկյարներով: Ոչ մեկին չէին թողնում հեռանալ, հավաքատեղի էին տանում քսանից մինչև քառասուն տարեկան մարդկանց: Ես ներկայացա և վալիին հայտնեցի, որ բուլղարական հպատակ եմ, որպեսզի նա Բուլղարիա գնալու արտոնություն տա: Վալին, վերցնելով անձնա-

գիրս, պատռեց և գրելով մի նոր՝ թուրքական անձնագիր՝ ասաց, որ գնամ ու ներկայանամ հավաքատեղի: Երեք օր հետո, միանալով ուրիշ գորամասի, գնացինք դեպի արևմուտք: Հովսեփը, որ փոքր ժամանակ ոտքը կոտրել ու հիմա աննշան կաղում էր, չգորակոչվեց: Անդրանիկը, մնալով հարազատներիս մոտ, շարունակեց իր առօրյա աշխատանքները:

Բալկանյան պատերազմ²¹¹

Թուրքիան, զավթելով Բալկանյան թերակղզին՝ Եվրոպայի կեսը, ահուսարսափի մեջ էր պահում Բալկանյան ժողովուրդներին: Մոտ 500 տարի տևած այս զավթումի պատճառով ամենեն շատը տուժեցին երեք բալկանյան ժողովուրդները՝ Բուլղարիան²¹², Հունաստանը, Սերբիան: Թուրքերը կողոպտում, թալանում, ջարդեր էին կազմակերպում, կործանում ամբողջ գյուղեր, արյան մեջ խեղդում այդ երեք ժողովուրդներին: Շատ հայրենասերներ պայքարեցին՝ Գեորգի Տիլչև, Տիտան Գարաճա, Հաջի Դեմիր²¹³, Բիթլիշզո, Վասիլ Լիվալ, Մանուլ Վովորա, Հրիստո Բոթև: Բոլորը ապստամբներ էին և անխնա ճնշվեցին: Վերջը հարավային Բուլղարիայում կոտորած եղավ: Նորից ամբողջ գյուղեր կործանվեցին: **Բառակ**²¹⁴ գյուղի տեղն անգամ հայտնի չմնաց: Արևմտյան՝ եվրոպական մեծ տերությունները բողոք հայտնեցին և վերջնագիր ներկայացրին թուրք կառավարությանը, որ իր գորքերը դուրս բերի Բալկաններից և ինքնավարություն տա բալկանյան երեք ժողովուրդներին: Թուրքական կառավարությունը մերժեց: Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան չուզեցին ավելին անել, բայց թուրքական կառավարությունը ավելի կոնկրետ քայլի դիմեց և երկրորդ վերջնագիրը տվեց, բայց նորից մերժվեց: Այս անգամ Ռուսիո կառավարությունը պատերազմ հայտարարեց: Սամարա քաղաքում կազմակերպեց Բուլղարական աշխարհագորային միավորումը, որը միացավ ռուսական բանակին: Ռուսական զորքը անցավ Դանուբը՝ ջարդելով թուրքական ահռելի բանակին: Թուրքական զորքը նահանջելով ամրապնդվեց Ստարայա Բլանինայի²¹⁵ հարավային մասում: Վրա հասավ սաստիկ ձմեռը: Թուրքական գլխավոր հրամանատարությունը, կարծելով, թե ռուսական զորքերը ձմեռվա պայմաններում չեն կա-

րող անցել Ստարայա Բլանինան, սպասում էր գարնանը, որ ջախջախի ռուսական զորքերին: Բայց թուրքերը սխալվեցին: Բուլղարական աշխարհագրի մեջ կային մարդիկ, որոնք գիտեին Ստարայա Բլանինան անցնելու տեղերը: Նրանք ողջ ռուսական զորքն անցկացրին Ստարայա Բլանինան և բերեցին Հարավային Բուլղարիա: Ստարայա Բլանինան այն լեռնաշղթան է, որը արևմուտքից սկսած մինչև արևելք Բուլղարիան կիսում է երկու մասի՝ Հարավային և Հյուսիսային Բուլղարիաների, և վերջանում Սև ծովով՝ մխրճվելով ծովի մեջ:

Թուրքական հրամանատարությունը, տեսնելով, որ ռուսական զորքերը անցել են Ստարայա Բլանինան (թուրքական զորքի կազմում կային անգլիական խորհրդատուներ), թուրքական զորքը հետ տարավ դեպի Բլիվին²¹⁶ քաղաքը և ամրապնդվեց այնտեղ: Կար մի լեռնանցք, որը կոչվում էր Շեբչինսկի բրոհոս²¹⁷, և այնքան ամրացված չէր: Թուրքական հրամանատարությունը գրավեց այդ լեռնանցքը, որտեղով կարելի էր անցնել ռուսների թիկունք: Մի ամբողջ թուրքական միավորում սկսեց բարձրանալ դեպի այնտեղ: Լեռնանցքը փակում էին բուլղար աշխարհագրայինները՝ շատ քիչ ռուսական զինվորների հետ: Այդ աշխարհագրայինների և ռուսական զինվորների հրամանատարը մի ռուս սպա էր, որը տեսնելով, որ չի կարող դիմադրել, հրաման տվեց, որ նահանջեն դեպի գագաթ, որտեղ և ամրանան: Թուրք ասկյարները քայլ առ քայլ հետևում էին նրանց: Ռուսական սպան հրաման տվեց անցքի վերևի հարթակում ամրապնդվել և դիմադրել: Սկսվեց կյանքի և մահու կռիվը: Երեք օր տևեց այդ արյունալի ճակատամարտը: Թուրքական միավորման հրամանատարը ամեն ջանք թափեց, որ անցնի լեռնանցքը, բայց՝ ապարդյուն: Արդեն պաշտպանների զինամթերքը սպառվում էր: Սկսեցին քարեր գլորել: Մեկուկես օր նրանք ոչինչ չունեին՝ բացի քարերից ու սվիններից: Հրամանատարը տեսավ մի աշխարհագրայինի, որին կոչում էին Պորի Մեչգա²¹⁸: Նա այնպիսի քարեր էր գլորում, որ երեք հոգի չէին կարող շարժել:

Բացվում էր չորրորդ առավոտը: Պաշտպանները քնած էին քաղցած և հոգնած, այլևս քար էլ չէր մնացել: Հրամանատարը հրամայեց սվիններ անցկացնել զենքերին: «Մեռնենք, բայց չհանձնվենք»

ասելով՝ նետվեց առաջ՝ այնտեղ, որտեղ մի խումբ ասկյարներ բարձրացել էին գազաթին: Սպան ընկավ, լեռնանցքի պաշտպանները ավելի կատաղեցին: Այս կատաղի սվինամարտի ժամանակ լավեց հզոր «ուռա»-ն, որով հաստատվեց ռուսների՝ օգնության գալը, և թուրքական զորամասը գլխովին ջախջախվեց: Թուրք ասկյարները անկանոն նահանջեցին դեպի Բլևեն, բայց շուտով ռուսական զորքերը պաշարեցին այն²¹⁹, պաշարումը մի քանի ամիս տևեց: Ռուսական հրամանատարությունը հանձնվելու մասին վերջնագիր ներկայացրեց պաշարվածներին: Պաշարված թուրք հրամանատարությունը, տեսնելով, որ ոչ մի տեղից օգնության հույս չկա, իր երեք հազարից ավել ասկյարներով հանձնվեց: Դրանից հետո ռուս զինվորները գրավեցին Էգեյան ծովի ափին գտնվող Սան-Ստեֆանո քաղաքը, որը Պոլսի դարպասն էր: Թուրքական կառավարությունը, տեսնելով, որ ռուսական զորքերը կարող են գրավել Պոլիսը, աճապարեց հաշտության պայմանագիր կնքել: Մի տարուց ավել տևած պատերազմը վերջացավ Սան-Ստեֆանո քաղաքի պայմանագրով²²⁰: Սերբիային հանձնվեց Մակեդոնիայի մի մասը՝ Սկոբիա քաղաքով, մի մասը՝ Հունաստանին՝ Սելանիզ (Սոլոն) քաղաքով²²¹: Սան-Ստեֆանոյի պայմանագրով՝ մնացած տարածությունը, որի մեջ մտնում էր Թրակիան՝ Օտրին քաղաքով, Էգեյան ծովի ափերը²²², Սերեզ, Տրամա, Գավալա, Քսանտիա քաղաքներով, հանձնվեց Բուլղարիային: Սան-Ստեֆանո քաղաքը հանձնվեց Թուրքիային: 200000 կմ² կազմող տարածության վրա հաստատվեց բուլղարական իշխանությունը, որի տիրակալ նշանակվեց հորից ռուս, մորից՝ գերմանացի ռուսական թագավորական ընտանիքից մի իշխան՝ Ալեքսանդր Բատտենբերգ²²³ անվամբ, որը շատ շուտ ընկավ գերմանական ազդեցության տակ: Բոլոր խորհրդատուները, բանակի սպաները, զինվորական գլխավոր հրամանատար մայոր Կերմանովը²²⁴ նույնպես գերմանացիներ էին. այսպես՝ ռուսական ոչինչ չէր մնացած: Այդ իրադրությունը դուր չեկավ Ավստրո-Հունգարիային, որը Կենտրոնական Եվրոպայի ամենահզոր պետությունն էր և պատրաստվում էր Գերմանիայի դեմ պատերազմի: Այնպես որ Սերբիային, որը նրա ազդեցության տակ էր, ստիպեց, որ Բուլղարիայից պահանջի մի շարք քաղաքներ: Սերբիան վերջնագիր ներկայացրեց բուլղարա-

կան իշխանությանը, որ իր գորքերը հանի Նեշ, Վրաց, Մելնից, Վետեն քաղաքներից՝ այս տարածքներին տիրանալու համար: Երկու սրվեն պետությունների միջև պատերազմ սկսվեց: Պատերազմը վերջացավ սերբական զորքի ջախջախումով: Սպանվեց Միլան²²⁵ թագավորը: Բուլղարական զորքը առաջացավ դեպի Բելգրադ: Ավստրո-Հունգարիան, տեսնելով, որ բուլղարական զորքը կարող է գրավել ամբողջ Սերբիան, վերջնագիր ներկայացրեց բուլղարական իշխանությանը, որ դադարեցնի առաջացումը և հետ քաշվի իր հին սահմանները:

Բուլղարիային այս իրադարձությունների ժամանակ ուրիշ անելիք չէր մնում: Բուլղարիայում ստեղծված կուսակցությունների միասնությունը պառակտվեց, ինչի հետևանքը եղավ իշխանի տապալումը: Օգտվելով այս իրադրությունից՝ թուրքական հորդաները խուժեցին Թրաքիա, գավթեցին Օդրին քաղաքը և առաջացան Էգեյան ծովի ափով: Նվաճվեց ողջ Մակեդոնիան, Բուլղարիան հագիվ կարողացավ փրկել իր տարածության կեսը: Սերբիան և Հունաստանը նույնպես կորցրին իրենց տարածքների մի մասը: Հունաստանը կորցրեց Մելանիկը, Սերբիան՝ Սկոպյեն: Մինչ այդ բուլղարական կուսակցությունների միջև համերաշխություն տիրեց: Գերագույն ժողովը նոր իշխան ընտրեց՝ ազգությամբ ավստրիացի Ֆերդինանդ Կոբուրգացուն²²⁶, որը տարիներ շարունակ ոչ մի մեծ պետության ազդեցության տակ չընկավ:

Անցան տարիներ: Երեք ճնշված ժողովուրդները շատ ջանքեր թափեցին, որ վերականգնեն Սան-Ստեֆանոյի պայմանագրի սահմանները, որ Թուրքիան զորքերը հետ քաշի, բայց ապարդյուն: Թուրքիան հաստատ նստած էր այդ տարածությունների վրա և միտք չուներ հեռանալու: Տեսնելով, որ ոչ մի արդյունքի չեն հասնում, երեք պետությունները որոշեցին կռաւիցիա կազմել և զինվել: Այդ կռաւիցիային ամենեն շատ ձգտում էր ցար Ֆերդինանդը, որը վերջերս իրեն ցար էր հռչակել: Իշխանական գնամիսգո²²⁷ Բուլղարիան դարձավ ցարստվո Բուլղարիա²²⁸: Թուրքիան, որը զբաղված էր ներքին խռովություններով, չնկատեց, թե ինչպես երեք պետությունները իրենց տարածությունները ազատագրելու համար կռաւիցիա էին կազմել և զինվում էին: Այդ զինումը տարիներ տևեց: Վերջապես ամեն ինչ պատրաստ

էր: Չավթած տարածություններից հեռանալու վերաբերյալ երեք պետությունները միասին վերջնագիր ներկայացրին Թուրքիային: Թուրքիան մերժեց՝ ասելով, որ այդ տարածությունները պատկանում են Թուրքիային: Այդպես սկսվեց Բալկանյան պատերազմը: Այդ պատերազմին Բուլղարիայի հրամանատարության տակ մասնակցեց գորավար Անդրանիկի գլխավորությամբ մի քանի հարյուր զինվորներից կազմված հայ կամավորական ջոկատը, որը միացվեց գեներալ Կուրևի միավորմանը: Ամբողջ սահմանի երկայնքով բուլղարական զորքերն անցան հարձակման: Նույն ժամանակ հույները նույնպես սկսեցին իրենց հարձակումը: Սկսվեց թուրք զինվորների անկանոն նահանջը: Մի մասը նահանջեց դեպի Օդրին, մյուսը՝ Էգեյանի ափերը: Օդրին գնացող զորքը ամրացավ քաղաքում, բայց բուլղարական զորքերը պաշարեցին այն: Գեներալ Կուրևի զորքերը, գրավելով Էգեյան ծովափի քաղաքները, հույներին օգնելու նպատակով առաջացան դեպի Սելանիկ (Սոլուն) քաղաքը՝ այն վերցնելու համար: Թուրքերը ուժեղ դիմադրում էին: Հայ կամավորները չտեսնված քաջությամբ էին կռվում Սելանիկի գրավման համար մղվող ճակատամարտում: Անդրանիկը հայտնվում էր այնտեղ, որտեղ որ նեղվում էին հույն կամ բուլղար զինվորները: Նրանք առաջիններն էին, որ մտան քաղաք: Գրավված քաղաք ժամանած Ֆերդինանդը զորավար Անդրանիկին ժեներալի կոչում շնորհեց և Վառնայի մոտ՝ Կալաթ կոչվող բնակավայրում, մի տասնյակ հեկտար հողամաս հատկացրեց: Շատ կամավորներ շքանշաններով և մեդալներով պարգևատրվեցին: Սելանիկի գրավումից հետո Մակեդոնիայի, Թրակիայի մի մասում թուրքական զորք գոյություն չունեի՝ բացի Օդրին քաղաքից, որն արդեն պաշարված էր բուլղարական զորքով: Շատ բուլղար զինվորներ ընկան: Վերջիվերջո փաշան ստիպված եղավ հանձնվել և երեք հազար զորքով լրիվ զինաթափվեց: Յար Ֆերդինանդը այստեղ ժամանեց: Գերիների մի մասը՝ մոտ հազար հոգի, հայ, հույն, գերմանացի և ուրիշ քրիստոնյա ազգերից էին: Ֆերդինանդի հրամանով նրանց առանձնացրին և ազատ արձակեցին, որ ով որտեղ կուզի, գնա՝ բացի Թուրքիայից: Բալկանյան պատերազմը վերջացավ թուրքական բանակների լիակատար ջախջախումով, և Թուրքիան ստիպված եղավ ճանաչել Սան-Ստեֆանոյի պայմանագրով տրված սահմանները:

Բալկաններում միառժամանակ խաղաղություն տիրեց: Այդ իրադարձությունները դուր չեկան Գերմանիային, որը նախապատրաստվում էր պատերազմի: Գերմանիան նոր կռալիցիա է ստեղծում, որի մեջ ուզում էր մտնել նաև Ռումինիան, որը Ավստրո-Հունգարիայի ազդեցության տակ էր և, ինչպես Սերբիան, խանգարում էր իր հաշիվներին: Գերմանական կառավարությունը գտավ ելքը՝ արտաքին գործերի մինիստրի գլխավորությամբ զինվորական և քաղաքական միսիայով օժտված մի խումբ ուղարկելով Բուլղարիա: Յար Ֆերդինանդը²²⁹ միսիան ընդունեց մեծ ուրախությամբ: Կառավարական թերթերում երևաց այն լուրը, որ Հունաստանը՝ Սելանիկ քաղաքը, իսկ Սերբիան Սկոպյա քաղաքը պիտի հանձնի Բուլղարիային, իբրև Մակեդոնիայի տարածություն: Երկու կառավարությունների արտաքին գործերի մինիստրները Բուլղարիայի արտաքին գործերի մինիստրին խնդրեցին պարզաբանել այդ հարցը: Արտաքին գործերի մինիստրությունը հայտարարեց, որ այդպես պիտի լինի: Ռուսական կառավարությունը ամեն ջանք թափեց, որ խափանի այդ վտանգավոր քայլը, բայց՝ ապարդյուն: Յար Ֆերդինանդը հաստատ որոշել էր կատարել այդ վտանգավոր քայլը: Գերմանիան խոստանում էր ամեն ինչով օգնել: Այդ անիմաստ քայլը Բուլղարիային կանգնեցրեց կործանման եզրին: Սկսվեց մի նոր պատերազմ, որը վերջացավ Բուլղարիայի զորքերի լիակատար ջախջախումով²³⁰: Հունաստանը գրավեց ողջ Էգեյան ծովի ափերը, Սերբիան նույնպես վերցրեց Նեշ, Վրաց, Մելնիզ, Գուդա քաղաքները: Թուրքիան, օգտվելով այդ իրադրությունից, գրավեց Թրաքիայի Օդրին քաղաքը: Բուլղարիան ստիպված եղավ հաշտություն խնդրել և կորցրեց Թրաքիայի, Մակեդոնիայի, Էգեյան ծովի ափերի տարածությունները: Այսպիսով՝ Գերմանիան հասավ իր նպատակին: Քայքայվեց երեք երկրների կռալիցիան: Բուլղարիան տվեց քսանհինգից-երեսուն հազար զոհ, հինգ հազար հաշմանդամ ու ոչինչ չստացավ, ավելին՝ կորցրեց իր տարածության կեսը:

Համաշխարհային պատերազմ

Չորսհավաքից հետո մի քանի շաբաթ անց լուր ստացվեց, որ Բալկանյան պատերազմը սկսվել է: Պատերազմը վերջացավ, բայց հորիցս ոչ մի լուր չկար²³¹: Ճանապարհները առաջվա մման փակ էին:

Մի հույս կար, որ հայրս՝ Վարդանը, անցած է Բուլղարիա: Առաջվա մնան ես աշխատում էի արտերում, այգիներում: Իրիկունը պարապում դասերս: Շատ ամիսներ անցան, հորիցս ոչ մի լուր չկար:

Հարձակում մեր գյուղի վրա

Հորեղբայրս մի քանի անգամ դիմեց նոր վալիին, որ թույլատրի ինձ մինչև Պոլիս տանել: Այնտեղից գնալու էի Բուլղարիա: Բայց մերժում ստացավ, որը պատճառաբանված էր նրանով, որ ճանապարհները շատ վտանգավոր են: Այսպես անցավ 1913թ.: Չմեռը շատ տխուր էր անցնում, շատ ձյուն եկավ: Տներում ամեն ինչ կար: Մեկ-մեկ թարմ մսի համար մոտակա անտառ էինք գնում՝ որսի: Եկավ գարունը: Ես առաջվա մնան աշխատում էի հորեղբորս հետ արտերում: Աշխատանքի մեջ մոռանում էի գլխիս եկած դժբախտությունները: Հորեղբայրս միշտ իր որսորդական հրացանը վերցնում էր իր հետ, բայց այս անգամ վերցրել էր ատրճանակը: Հորեղբայրս, ատրճանակը ինձ տալով, ասաց. «*Դու պիտի սովորես կրակել*»: Այդպես ես սովորեցի կրակել, օրվա մեջ մի քանի փամփուշտ կրակում էի: Մի օր նոր էինք վերադարձել արտերից, երբ եկավ Նուբար²³² գիրին. վերջերս այդպես էի ասում նրան, երբ որ մեկ-մեկ գալիս էր: Այս անգամ նա եկավ շատ վրդովված. «*Հովսեփ, աշխարհի գործերը լավ չեն: Եվրոպայի մեծ պետությունների մեջ նոր պայտերազմ է սկսվելու: Ինչպես երևում է, Թուրքիան էլ է մասնակցելու, նաև Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան*»: «*Ալ հա՛, Նուբա՛ր գիրի: Ասա ամբողջ աշխարհը*»: Նուբար գիրիի ասածը ճիշտ էր. սկսվեց Համաշխարհային պատերազմը: Նորից գորահավաք: Եկավ 1915թ. գարունը, Աֆրիկայում ապստամբություններ էին, Եմենում, Լիբանանում, Սուրիայում, Իրաքում՝ ներքին խռովություններ: Կորցնելով իրենց գաղութները՝ թուրքերը շուն էին դառել: Մյուս կողմից էլ՝ Հայկական հարցը: Երիտասարդ թուրքերի կառավարությունը Թալեաթի և Էնվերի գլխավորությամբ որոշեց հայերին տեղահան անել դեպի Տեր-Չոք և ոչնչացնել: Հայ ժողովրդի համար 1915թ. եղավ սև տարի: Մի ամբողջ ժողովուրդ տեղահան արվեց և քշվեց Տեր-Չոքի անապատները: Այդ օրերին ես հորեղբորս հետ գնացել էի հեռավոր անտառի եզրին գտնվող

արտերից մեկը: Կեսօրն արդեն անցել էր, արևն արդեն թեքվում էր դեպի արևմուտք: Հեռվից լավեցին հրացանի կրակոցի ձայներ: Հորեղբայրս ականջ դրեց.

-Անդրանիկ, լսո՞ւմ ես:

-Հա՛, հորեղբա՛յր, կրակոցի ձայներ են:

Վազեցինք դեպի գյուղ: Հեռվից դեպի մեզ վազող մարդիկ տեսանք: Հետ դարձանք անտառ: Պատրաստվեցինք կռվի. ես՝ իմ ատրճանակով, հորեղբայրս՝ իր որսորդական հրացանով: Թաքնվելով թփերի հերևում՝ նայում էինք, թե ինչ է կատարվում: Նահանջողները հատուկեցնում էին կրակում, հայտնի էր, որ լավ զինված չեն: Արդեն շատ մոտիկ էին, երբ դիմավորեցինք: Երկուսով ուղիղ կրակ բացեցինք հալածողների վրա: Հալածողները հետ դարձան: Նահանջողները մտան անտառ: Փախստականները երեք գյուղերից էին: Ջոկատը մոտ քառասուն հոգի էր, բայց մեր գյուղից էին տասը հոգին: Նուբար գիրին ալ հետներն էր: Միայն մի քանիսն էին զինված, մյուսները՝ որը բահով, որը՝ քլունգով, բոլորն ալ տարիքն առած մարդիկ: Հորեղբայրս, որը մի գլուխ ցած էր, Նուբար գիրին բռնեց ուսերից և թափ տվեց. «*Նուբա՛ր, ի՞նչ պատահեց*»:

Նուբար գիրին ոչինչ չպատասխանեց: Յույց տվեց անտառի խորքը՝ *զնանք*:

Մի կիլոմետրից ավել մտանք անտառի խորքը, դադար առանք, բոլորը մատուտեցին խոնավ գետնին: Նուբար գիրին հորեղբորս հետ առանձնացավ: Կես ժամ տևեց նրանց խոսակցությունը: Եկան: Հորեղբայրս շատ մռայլ էր: Նուբար գիրին խոսեց. «*Բարեկամներ, մենք ամեն ինչ կորցրինք՝ տուն-տեղ, ընտանիք, մնաց միայն վրեժը լուծենք մեր այս դժբախտության համար*»: Ոտքի ելավ մի փախըստական, որի ձեռքին կար մի բահ՝ այս է իմ զենքը: Տեղից բարձրացավ հորեղբայրս, որը նստած էր մի կտրած ծառի բնին. «*Հանգիստ, բարեկամներ, բոլորս ալ կզինվենք, միայն կամք ունենանք: Ո՞վ գյուղերում զենք ունի թաքցրած: ...Լավ, ոչ մեկը: Այս մի քանի օրը բոլորս ալ զենք կունենանք: Հիմա զնանք անտառի ավելի խորքը*»: Բոլորս բարձրացանք ու հետևեցինք հորեղբորս: Արդեն մթնում էր: Տեղ հասնելով՝ բոլորը մատուտեցին: Հորեղբայրս խոսեց. «*Մենք բոլորս անտուն, անտեր թշվառականներ ենք: Մահը մեր գլխին է*

կախված, ով որ կուզե, մնա, ով որ կուզե, թող հեռանա, ազատ է: Ով որ պիտի մնա, պիտի կռվի անվախ»: Բարձրացավ հիսունին մոտ մի ամրակազմ մարդ ու նայելով բոլորին՝ ասաց.«Եղբայրներ, լսեցե՞ք մեր եղբորը,-բոլորն ալ լռում էին,-չե՞ր անունը Հովսեփի է... Եղբայր Հովսեփ, ինչպես տեսնում ես, հեռացող չկա: Այս մարդկանց մեջ վահկոտներ չկան»: Հորեղբայրս նորից խոսեց.«Այս գիշեր երեք հոգի պետք է գան ինչ հետ»: Մեր գյուղից կանգնեց Նուբարը: «Ե՛ս էլ կգամ,-նորքի ելավ մի ամրակազմ մարդ,- ե՛ս էլ, ե՛ս էլ, ե՛ս էլ»: «Տեսնում եմ, որ բոլորդ ուզում եք գալ: Վաղը բոլորս կգնանք, հիմա՛ երեքը»: Կեսգիշերն անց հորեղբայրս իր մարդկանց հետ ճամփա ելավ: Վերցրեց իմ գեները, չորսն ալ լավ զինված գնացին: «Անդրանիկ, մնա՛ այստեղ, երեք-չորս ժամ հետո կգաս մեզ դիմավորելու անտառի եզրին: Հիմա ով որտեղ տեղ գտնի, թող քնի»:

Պայծառ, աստղոտ, բայց ցուրտ գիշեր էր: Մի ծառի բնին թիկն տված՝ մտածում էի, թե ինչ եղան Անուշ մայրիկս, հորեղբորս կինը, զոհվեցի՞ն, թե՞ քշեցին, տարան: Ժամեր էին անցնում, տեսա, թե ինչպես հոգնած, դադրած մարդիկ քնեցին: Կարծես ոչինչ չէր պատահել: Գնացի մինչև անտառի եզրը՝ դիմավորելու. տեսա, որ գալիս են: Չորսն ալ լավ բեռնված էին: Բոլորից մի-մի բան վերցրի, գնացինք մեր խոճուկ ճամբարը: «Մի՛ աղմկեք, թողե՛ք քնեն», -ասաց հորեղբայրս, իրենք ալ թիկն տվեցին²³³, քնեցին, իսկ ես մենակ նորից գնացի անտառի եզրը: Հանկարծ անակնկալի չգանք: Ճամբար եկա այն ժամանակ, երբ արևը մարդաբոյ բարձրացել էր: Մարդիկ արդեն լվացվում էին փոքր առվակում: Հորեղբայրս բերած երկու խուրջին հացը բաժանեց բոլորին.«Այսօր այսքանը»: Նստոտեցին ու կերան մի մասը, մյուսը պահեցին: Բերեց մի տասնհինգ հատ գեներ, մի արկղ փամփուշտ ու թափեց գետնին.«Ով հասկանում է, թող վերցնի»: Տասը հատը վերցրին, մնաց հինգ հատը: «Ասունք վերցնող չի կա՞ն», -իրար երես էին նայում: Լավ զինվածները անցան այս կողմ: Արդեն քսանը զինված էին, իսկ տասնութը մնացին անգեն: Անգեններից մեկին կանչեց՝ վերցրո՛ւ: «Բայց ես չեմ հասկանում»: «Վերցրո՛ւ»: Վախվախելով վերցրին ևս չորս հոգի: Կանչեց.«Անդրանիկ, զբաղվի՛ր այս մարդկանց հետ, մինչև իրիկուն սովորեցրո՛ւ կրակել, խնայե՛ք փամփուշտները: Այս գեները բոլորն էլ մի տեսակի են,

փամփուռները բոլորին ալ կըլլա: Հավասար վերցրե՞ք: Անդրանիկ, այն պայուսակը վերցրու՛»: Իմ գեների համար պայուսակի մեջ կար հիսուն փամփուռ: Ուրախության չափ չկար: Այդ պահին մի փոքրիկ տղա տեսանք. կարծես գետնի տակից դուրս եկավ: Բոլորս զարմացանք, հորեղբայրս մոտեցավ, բռնեց ձեռքից ու թուրքերեն հարցրեց. «Դու ո՞վ ես, որտեղի՞ց ես, հա՞յ ես, թե՞ թուրք»: «Հա՛յ եմ, մեր գյուղ կորրին, քշին փարսան, ես փախա, լսեցի մարդկանց չայներ, եկա այս կողմը»: «Միայն դու՞ փախար»: «Ոչ, մի փասը հոգի էլ մեծ մարդիկ փախան, չգիտեմ՝ որ կողմը»: «Որտե՞ղ է չե՞ր գյուղը»: Յույց տվեց դեպի արևելք. «Այն կողմը»: «Մի փասը մարդ թող գնա անփառի եզրը՝ պահակություն անելու, մի փասը մարդ ալ թող գնա անփառ՝ անփառի խորքը փնտրելու: Պզտիկի գյուղից փախչողներին կարող եք գրկել ու բերել մեզ մոտ»: Պզտիկը թե. «Ես ալ գնամ»: «Չէ՛, դու ուրիշ գործ ունիս»: Տեսա, թե ինչպես հորեղբայրս փափսում է պզտիկի հետ: Պզտիկը ինչպես եկավ, այնպես ալ կորավ: Ամեն մարդ իր պարտականությունն էր կատարում: Հորեղբայրս Նուբար գիրիի և ուրիշ երկու հոգու հետ տաք-տաք խոսում էր: Չզացվում էր, որ մի բան է պատրաստվում: Տեսանք՝ մեր մարդկանց հետ մի տասը հոգի եկան. փոքրիկի գյուղի փախստականներն էին: Միայն երեքն էին զինված: Հորեղբայրս դիմավորեց. «Բարով եկաք, եղբայրներ՛»: «Բարե՛, եղբայ՛ր, չե՞ր մարդիկ գտան մեզ, չափից ավելի հուսահատված ենք»: «Կոխանա՞ք մեր խմբին: Մենք մոտ քառասուն հոգի ենք: Մենք որոշել ենք վրեժ լուծել թուրքերից»: «Բայց մենք զենք չունենք»: «Կունենաք, մարդ միայն կամք ունենա: Ուրիշ անելիք չունենք՝ բացի վրեժից»: Այսպես, մեր խումբը դարձավ հիսուն հոգի: Հորեղբայրս նորեկներին մի քիչ հաց բաժանեց, որն արդեն վերջանում էր: Երբ փոքրիկը եկավ ու տեսավ իր համագյուղացիներին, ուրախությանը չափ չկար: Հորեղբորս հետ առանձնացավ: Տասը ըստ հետո ամբողջ խումբը հավաքվեց: Հորեղբայրս խոսեց. «Եղբայրներ, այս փոքրիկը շատ օգրակար հեղափոխություն արեց մեր գյուղում»: «Չե՞ր գյուղում մի հարյուր ասկյար կա, որոնք տեղավորված են մեծ մարագում, իսկ սպաները՝ տներում: Շատ նորաբնակներ արդեն տեղավորվել են տեղահանված հայերի տներում: Չինամթերքը գրկվում է խարախոլում (քաղմաս)»: «Այս գի-

շեր հարչակում պիտի գործենք»: Լսվեց մի մարդու ձայն. «*Եղբայրներ, մեզ մի ղեկավար է պետք*»: Բոլորը իրար նայեցին: Նորից խոսեց նույն մարդը. «*Ես կարծում եմ, որ ամենեն հարմարը եղբայր Հովսեփն է: Ի՞նչ կրտք, եղբայրներ*»: Բոլորը համաձայնեցին: Այսպես հորեղբայրս եղավ խմբի ղեկավար:

Հարձակումը

Հորեղբայրս սկսեց բացատրել, թե ինչպես պետք է հարձակումը կազմակերպել: «*Հարչակման պետք է գնանք բոլորս: Խումբը պիտի բաժանվի հինգ մասի: Ամեն մի խմբի ղեկավար է լինելու մեր գյուղից մեկական մարդ: Ես ինչ հետ վերցնում եմ փոքրիկին, Անդրանիկին և ուրիշ յոթ մարդու: Իմ փունը կա մի վարիլ²³⁴ նավթ: Իմ խումբը կգբաղվի մարազը վառելով: Դու, Նուբա՛ր, երկու խմբով կգբաղվես քաղմասով: Մյուսները կգբաղվեն նորաքնակներով և մյուս բնակիչներով, կոտորել անխնա, րանը պետքածու ամենը վերցնելուց հետո կրակի րալ ամեն փուն: Մինչև մարազը չբռնկվի, ոչ մի հարչակում: Ազդանշանը մարագի բոցն է: Նուբա՛ր, մինչև գինամքերքը չվերցնես, քաղմասը կրակի չրաս: Պահակներին վերցնել առանց աղմուկի, սպանել սառը գեներով»:*

Ամեն ինչ պատրաստ էր հարձակման համար: «*Նուբա՛ր, նրանց, ովքեր ժամացույց ունեն, հայրներ, որ ժամը րասնմեկն է, մի ժամից ավելի ճանապարհ ունինք, գնանք*»: Բոլորը մեկ մարդու նման ոտքի ելան: Մոտեցանք հարազատ գյուղին, որը անօրենյանների ձեռքն էր: «*Փոքրիկ, մի նայի գյուղին վիճակը, շուր կգաս*»: Սատանի նման անհետացավ, կես ժամ ալ չանցավ, եկավ. «*Բոլորը քնած են, գնացինք*»: «*Ամեն ղեկավար վերցնի իր րասնյակը: Ամեն ինչ պա՞րզ է, եթե պարզ է, առա՛ջ*»: Մեր խումբը հորեղբորս առաջնորդությամբ գնաց ուղիղ մեր տուն: Փոքրիկը բարձրացավ երկրորդ հարկ, ապա եկավ հայտնեց, որ երկու սպա քնած են առանց հանվելու, լամպն ալ վառած է: Հորեղբայրս վերցրեց մարդկանցից մեկին, բարձրացավ վերև: Ես ալ բարձրացա. վագրի նման հարձակվան, մի վայրկյանում առանց աղմուկի հաշիվները մաքրեցին: «*Փոքրիկ, գնա՛ նայի՝ երդիկը ինչ վիճակի է, քանի՞ պահակ կա*»: Փոքրիկը եկավ հայտնեց, որ դռանը երկու պահակ կա քնած, մեկն ալ ման է գալիս: «*Տղե՛ք, դուք գբաղվե՛ք դույլերը լցնելով, մենք հիմա կգանք*»:

Վերցնելով չորս հոգու (ես և փոքրիկը սովերի պես հետևում էինք հորեղբորս)՝ շատ արագ շարքից հանեցին պահակներին: «*Գնացե՛ք նավթը բերեք, ես այստեղ պահակ կկանգնիմ*»: Երեք անգամ գնացինք-եկանք, մարագի չորս կողմը լողում էր նավթի մեջ, ամենից շատ դռան վրա լցրինք: Բոլոր լուցկիները պատրաստեցինք: «*Հրացաններն ալ պատրաստ, ոչ մեկին չթողնեք դուրս գան: Պաշարե՛ք, երդիկը՝ կրա՛կ*»: Մարագը մի անգամից բոցերի մեջ մնաց: Աղմուկաղաղակ սկսվեց, «ալլա՛հ, ալլա՛հ» էին բռռում: Հորեղբայրս հրամայեց՝ կրա՛կ: Բոլորը մեկեն կրակեցին: Երդիկից ոչ մեկը չփրկվավ, բոլորը վառվեցան: Հորեղբայրս հրամայեց.«*Յրվե՛՛ն, ամենը կուրբե՛՛ն, ո՛չ մի գուրք*»: Ես այստեղ հասկացա, որ հորեղբորս կինը և հորքուրս գոհվել էին: Երեք ժամ տևեց այս կոտորածը, ամբողջ գյուղը վառվում էր: Գնացինք մեր տան կողմը, վերցրինք վերմակներ, տաք շոր, պահած ոսկեղենը և ամբողջ ուտելիքը: Հորեղբայրս վառելանյութ լցրեց վերի հարկից մինչև աստիճանների վերջը ու կրակի տվեց իր պապենական տունը: Մեր խմբից մնացել էինք երեքս՝ հորեղբայրս, փոքրիկը ու ես: «*Գնա՛նք*», -ասաց: Մեր ճանապարհի վրայի տների բնակիչները փախել էին: Ամեն ինչ կրակի էինք տալիս: Սկզբից մոտեցանք պայմանավորված հավաքատեղին: Հորեղբայրս երեք կրակոց արձակեց օդում, որ ազդանշան էր, որ նահանջենք: Արդեն աստղերը սկսել էին դժգուրել²³⁵, շուտով լույսը կը բացվեր: Հավաքատեղիում պարզ դարձավ, որ մի քանիսը վերք են ստացել, հինգ հոգի էլ պակաս էր: Հորեղբայրս նորից երեք անգամ կրակեց օդում, և ճանապարհ ընկանք: «*Եթե ողջ եմ, մեզ կհասնին*»: Լուսադեմին մտանք անտառ: Հորեղբայրս ասաց.«*Պիտի գնանք անտառի ամենախորքը: Այսօր մեզ անհանգստացնող չըլլար*»: Նայեցա, ամեն մեկն ալ բռնավորված էր: Մի ժամ անտառում խորանալուց հետո դադար տվեցինք:

Նուրբարը շատ զգույշ մոտեցել էր քաղմասին: Անաղմուկ վերցրել էին պահակներին, որոնք քնած էին եղել: Ամբողջ զինամթերքը վերցնելով՝ կրակ էին տվել քաղմասը:

Հորեղբայրս, նայելով խմբին, որ նստոտել էր գետնին, ասաց.«*Բոլորը ուրքի՛: Մի րուպե լռություն մեր գոհված ընկերների համար... Եղբայրներ՛, մեր մեջ հեքիմ կա՞*»: «*Ես եմ, արդեն զբաղվում եմ վիրավորներով*»: «*Ապրե՛ս, հիմա, եղբայրներ՛, ով ինչ*

մթերք բերել է, բերե՛ք մեջտեղ, նաշենք»: Տասը բույե հետո արդեն բոլորը ծամում էին: Առվակը, որ գլգլում էր հարյուր մետրի վրա, մեզ ապահովում էր ջրով: Դաշեցիներ, վերջացրինք: «Նուբա՛ր, հրացանները բե՛ր մեջտեղ, ում հրացանը հիմ է, քանի պեպք չէ, թող նորը վերցնի, այնպես որ բոլորին ալ զինված տեսնին... Նուբա՛ր, բոլորն ալ զինվա՞ծ են»: «Բոլորն ալ զինված են»: «Մնացած զինամթերքը հիմա անտառում պիտի պահենք, եթե նոր մարդիկ գան, պիտի զինենք»: Վերցրած իրերի մեջ կար երեք շատ հզոր²³⁶ հեռադիտակ: «Փոքրիկ, բարձրացի՛ր այն ծառը, հեռադիտակով դիտի՛ր, մինչև որտե՞ղ է տեսնվում»: «Հրամանատար՛, շար հեռու է տեսնվում, ոչինչ չկա»: «Իջի՛ր փոքրի՛ն, և դու, Անդրանիկ, այս գործով կզբաղվիք: Հերթով, մեկ-մեկ կբարձրանաք, կդիտեք... Եղբայրներ, երկու օր հանգստանում ենք, ով ինչպես կուզի, ինչպես գիտեմ, այս երկու օրում սննդամթերքը չի պակասի»: Այս երկու օրը անցավ, ոչ մի դեպք չպատահեց: Բոլորն ալ լավ հանգստացան: Երբորդ առավոտ ժողով եղավ, հորեղբայրս խոսեց.«Բարեկամներ, մենք պիտի գնանք դեպի արևմուտք, պիտի հարչակվենք այն գյուղերի վրա, որտեղ նորաբնակներ և սակյարներ կան: Յերեկը փոքրիկը կհետախուզի, գիշերը կհարչակվինք: Մեր վրեժը պեպք է սուկայի լինի, կորրել անխնա, ինչպես իրենք արեցին: Մեր խմբի ամեն մի **ընդհանրից զոհված յուրաքանչյուր անձի համար տասնապատիկ պիտի սպանենք**²³⁷: Ինչքան կարող ենք, շար սպանենք»: Այս մի քանի օրը հորեղբորս երեսին չէի նայել: Նայեցի, սարսափեցի. այդքան փոքրիկ մարդու աչքերը վառվում էին, դեմքը դաժան էր:

Հեռվից աղոտ լույսեր էին երևում: «Հրամանատար՛, գյուղը այնտեղ է»: «Պեպք է շար զգույշ մտրենանք: Փոքրիկ, գիտե՞ս՝ քաղմասը որտեղ է»: «Գիտեմ»: «Կտաջնորդես այնտեղ... Բարեկամներ, ամեն մարդ իրա համար պիտի կռվի: Սննդամթերքից բացի՝ ոչինչ չեք վերցնի: Ամեն ինչ կրակի՛ տվեք»: Շատ զգույշ մտանք գյուղ: Փոքրիկը մի փոքր հրապարակում կանգնեց, մի շինություն ցույց տվեց, որտեղ աղոտ լույս էր պլպլում: «Իրա քաղմասը»: «Տղե՛ք, պատրաստե՛ք նռնակները: Ավելի մտրենանք»: Շատ դանդաղ առաջ ենք գնում: «Պաշարե՛ք քաղմասը: Իմ կրակոցը ազդանշան կըլլա նռնակները նետելու համար»: Արդեն պաշարումը վերջացած էր: Հորեղբայրս կրակեց, նետեցիներ երեսունից ավելի

նունակ, քաղմասը պայթեց: «*Կրակ,-հրամայում էր հորեղբայրս,-մի մասը թող ցրվի, րևերը կրակի՛ րվեք, մյուսները մնան ինչ հեպ: Քաղմասից դուրս եկողներին զնդակահարել՛: Նորից նունակ նեպեք*»: Քաղմասը բոցերի մեջ էր: Ամեն կողմից պայթյուններ էին լսվում: Նունակները կատարում էին իրենց դժոխային գործը: Քաղմասից ոչ ոք չէր կարող դուրս գալ, մենք ալ ցրվանք: Գյուղը լրիվ վառվում էր: Սկսեցինք նահանջել: Մեզնից ալ կային սպանվածներ և վիրավորներ: Հիսունի չափ ոչխարներով և ուրիշ սննդամթերքով հասանք հավաքատեղի: Վիրավորներին հանձնեցինք հեքիմին: Միայն մեկն էր ծանր վիրավորված, մյուսները՝ ավելի թեթև: Ծանր վիրավորը մահացավ, թաղումը կատարինք համազարկով: Մի տասը օր մնացինք այս ճամբարում, փոքրիկը հետախուզում էր գյուղերը, իսկ ես նայում էին դիտակետից: Գիտում էի շրջակայքը: Ամեն ինչ հանգիստ էր: Սննդամթերքը սկսեց պակասել: Մի առավոտ հորեղբայրս իր մոտ կանչեց փոքրիկին: Ես էլ մասնակցեցի զրույցին: «*Մուշեղ, հարուստ գյուղ որտե՞ղ կա*»: «*Կա, հրամանապարհ: Վալին նորաբնակներին է բաժանել գյուղից րեղահասն արած հայերի րևերը*»: «*Այսօր կգնաս ու լավ կուսումնասիրես՝ ինչքան ասկյար կա, ինչով են զինված, շուր կգաս, որ գիշերը հարչակվենք*»: «*Գնացի, հրամանապարհ*»: «*Զգու՛յշ եղիր: Բարեկամներ, ամեն ինչ պարրասպ պիրի լինի գիշերը հարչակման համար*»:

Արևը մայր չմտած՝ փոքրիկը եկավ և հայտնեց.«*Գյուղում հիսունից ավել ասկյար չկա, քաղմասի բակում շնթրկել են, գյուղում երիտասարդություն չկա, բոլորին ալ թուրքերը բանակ են րարել: Ինչպես երևում է ռազմաճակատում շար նեղն են ընկել*»: «*Ինչքա՞ն ճանապարհ է մինչև այնրեղ*»: «*Երկու ժամ կքաշե*»: «*Գնա հանգրսրացի՛ր, գիշերը նորից ճանապարհ պիրի քայլես*»:

Արդեն ժամը տասն էր, երբ ճանապարհ ընկանք: Երկու ժամ հետո փոքրիկը կանգ առավ: «*Տեսնու՞մ ես գյուղը*»: Հարձակումը շեշտակի և արագ էր, ոչ մի դիմադրություն: Արագ ալ նահանջեցինք: Ավարը շատ էր՝ պարկերով հաց, պանիր: Հովիվն ընդունեց ոչխարներին: Հարձակմանը մասնակցող մարդիկ հնձածի պես ընկան գետնին ու քնեցին: Ավելի ամուրները օգնում էին ոչխար մորթողին, որ ժամանակին հասցնի ճաշը:

Այսպես անցան ամիսները: Հեռուներում տարածվեց մեր համբա-

վր: Բանակից փախած հայ դաշադները գալիս էին մեզ մոտ, և լավ ստուգումից հետո, որ կատարում էր հեքիմը, ընդունում էինք ջուկատ: Այսպես մեր ջուկատի մարդկանց թիվը հասավ վաթսունի: Նուբարը, նորեկներից մի տասը հոգի վերցնելով, գնաց ու բերեց պահած հրացանները, այնպես որ անգեն մարդ չկար: Մեր ջուկատը, գիշեր-ցերեկ ահուսարսափ սփռելով մոտակա գյուղերում, կոտորում, վառում, թալանում էր ու մի հարյուր կիլոմետր գնացել էր արևմուտք: Ծանր վիրավորները մնում էին թեթև վիրավորների խնամքի տակ: Հեքիմը ամեն ինչ անում էր վիրավորների ցավը մեղմացնելու համար: Թեթև վիրավորները ծանր վիրավորներին պատզարակներով տեղից տեղ էին տանում: Ոչ մի տեղ երկու օրից ավել չէինք մնում: Թուրքական արևելյան խայմախասմը շունչը կտրած ամեն ինչ անում էր մեզ ոչնչացնելու համար: Նա երեք հատուկ զորամաս ուղարկեց, բայց՝ ապարդյուն: Փոքրիկը ժամանակին հետախուզում և հայտնում էր և կազմ-պատրաստ դիմավորում, ջախջախում էինք: Շատ էին սպանվածները, վիրավորները, ասկյարները թողնում ու փախչում էին: Վերջին հարձակումը շատ դաժան էր: Հորեղբայրս, տեսնելով, որ պետք է նահանջենք, սկզբից հրամայեց վիրավորներին հեռացնել անտառի խորքը: Ինքը, վերցնելով քսան հոգի, շրջանցեց թուրք ասկյարներին: «Նուբա՛ր, նահանջի՛ր»: Նուբարը մնացածներով սկսեց նահանջել, թուրքերն ուրախացան: Ես քայլ առ քայլ հետևում էի նահանջողներին: Հորեղորոս խումբը հասավ թուրքերի թիկունքը: «Կրա՛կ»,-հրամայեց հորեղբայրս: Հինգ նոճակն ու քսան կրակոցը միանգամից շփոթեցրին թուրքերին: Գրանից հետո սկսվեց սոսկալի կոտորածը: Շատերը գիշերը փախան: Մեր գոհվածներն ու վիրավորներն էլ քիչ չէին: Չոհվածներին թաղելով ու վերցնելով վիրավորներին՝ գնացինք անտառի խորքը: Արդեն խոր աշուն էր, պետք է մտածեինք ձմեռվա մասին: Որոշվեց հեռանալ այս վայրերից դեպի արևելք:

Հետդարձ դեպի առաջվա ճամբարը

Երեք օր շարժվեցինք դեպի արևելք: Իրիկնադեմին հասանք մեր հին ճամբարը, դադար առանք: Առավոտյան պետք է որոշվեր, թե ինչ ենք անելու: Առավոտյան ժողով գումարվեց: Շատերը արտահայտվեցին: Վերջում խոսեց փոքրիկը: «Գերիները գրկվում են իմ

գյուղում, այսպեղից մի երկու ժամվա ճամփա է : Գյուղի մոտակայքում կա մի ջաղաց, որտեղ շար ալյուր, ցորեն, գարի կա, Կերթ բուրբ է, ես հորս հետ շար էի գնում ցորեն աղալու, ես կերթամ ու լավ կհետազոտեմ: Այնպեղի մթերքը մեզի մի փարի կը հերիքեն: Երեք օրից կգամ»: «Փոքրիկ, մենք գնում ենք անլուսոյի ամենախորքը, կգտնես մեզ»: Փոքրիկը գնաց: Վերջում Նուբար գիրու որոշումը ընդունվեց: Պիտի գնալինք անտառի խորքը, փորելինք գետնափոր տնակ, ձմեռը այնտեղ անցկացնելինք: Անտառը մեզ թարմ մտով կապահովեր: Այդպիսով՝ սկսվեց գետնափոր տնակի կառուցումը: Երրորդ օրն անցավ, փոքրիկից՝ ոչ մի լուր, սկսեցինք անհանգստանալ: Չորրորդ առավոտը եկավ: «Շունը իր տղաներին բռնացրեց ու աշխարհը բաղում: Այսպես ուրբաթ օրը ոչ մեկը ջաղաց չի գալիս: Թուրքերի կիրակին է: Մենակ ինքն է լինում կամ տղան»: «Դու ա՛յն ասա, ալյուրը շա՛ր է»: «Շար, պարկերը՝ լեցուն, կառքը՝ լծած երկու հիանալի ձիերով: Բացի ուրբաթ օրերից՝ մյուս օրերին շար մարդ կա»: «Լա՛վ, գնա հանգստացի՛ր: Բարեկամներ, բոլորդ ալ լսեցիք փոքրիկի բերած տեղեկությունները: Այսօրվանից դադարեցնում ենք գյուղերի վրա հարձակումները: Պիրի մրաժենք՝ ինչպես գրավենք ջաղացը»:

Հորեղբայրս, մի կոճի վրա նստած, մտածմունքի մեջ էր, մոտեցա նրան: «Հորեղբայր, ի՞նչ ես մրաժում, մենք արդեն մեռած մարդիկ ենք»: «Ո՛չ, տղա՛ս, գարունը կերթանք դեպի Ռուսաստան, այնտեղ կցրվենք»: Հոկտեմբերի վերջին արդեն գետնափոր տունը պատրաստ էր, ուներ երկու բաժին, մեկը մարդկանց համար, մյուսը՝ սննդամթերքի: Մի առավոտ հորեղբայրս կանչեց փոքրիկին. «Հը՞, ժամանակը չէ՞՞ հարձակվենք ջաղարչի վրա»: «Նույնիսկ ուշացանք»: «Այսօր հիևզաբթի է: Կգնաս, շար զգույշ կստուգես, թե ով է ջաղարչում՝ տղա՛ն, թե՞՞ հերը: Վաղ առավոտ կսպասես մեզ անլուսոյի եզրին»: Ուրբաթ առավոտ՝ դեռ լույսը չբացված, արդեն անտառի եզրին էինք: Փոքրիկը հայտնվեց, հորեղբայրս հարցրեց. «Ո՞վ է ջաղարչում»: «Հերը: Նա հիմա քնած կլինի: Շունը, որ վարժվել է ինչ, ինչ հետ այստեղ եմ բերել: Ամենամեծ խոչընդոտը նա է»: Հորեղբայրս ջոկեց քսանհինգ հոգի, որոնք պիտի երթային հետը, մնացածը պիտի մնալին անտառի եզրին: Գնացինք, արտերը հնձած

էին, միայն եզիպտացորենի մի մասը դեռ չէր հավաքած: Ջաղացը պաշարեցինք: Ձեն-ձուն²³⁸ չկար, ջաղացպանն ալ չէր երևում: Կես ժամից ավել սպասեցինք: Ջաղացի դուռը բացվավ, ջաղացպանը դուրս եկավ: Քսանհինգ հրացան դեմ արին: «*Թեսլին յազարս (հանձնվիր, կվառենք)*»: Մարդը շշմած մեզ էր նայում: Մի ակնթարթում արդեն կապված էր: «*Փոքրիկ, բարձրացիր ծառը, նայիր՝ մարդ-մուրդ չգա*»: Սկսանք կառքը բառնալ ալյուրի պարկերով: «*Հրամանատար, փրկեն գալիս է*»: Ես կայծակի արագությամբ բարձրացա ծառը, որը ճամփի եզրին էր: Մի քանիսը պառկան ծառի տակ: Ես անելիքս գիտեի: Տղան մոտեցավ ջաղացին, ու ձին դանդաղեցրեց վագրը: Արդեն ծառի տակն էր: Ցատկեցի վրան, նույն բուպեին տասը հոգի ձիուց վար առին, կապեցին տարան հոր մոտ: «*Անցնենք գործի: Փոքրիկ, ծառը*»: Սկսանք գործը, կառքը բարձանք.«*Տղե՛ք, լծե՛ք կառքը*»: Ամեն մեկը երեքական փութ շալակեց: Ծանապարհ ընկանք: Մանձր բռնած՝ առաջից ես էի գնում, փոքրիկը նստել էր կառքի մեջ: Հասանք այնտեղ, որտեղ մեզ սպասում էին: «*Փոքրիկ, իջիր: Այս մարդկանց հետը գնա՛ ջաղաց: Ինչքան ալյուր, ցորեն կա և ուրիշ պիպանի բաներ, բերե՛ք անպատի խորքը*»: «*Մենք այս բեռը փանենք, կվերադառնանք*»: «*Տնային թռչուններին ձեռք չլաք: Գիշերը թող թառին, հետո կը վերցնիմք*»: Դրանք հարյուրի էին հասնում: Ամբողջ օրը մինչև շաբաթ առավոտ բոլորը կրինք ու հասցրինք ճամբար: Հավերի, սագերի, հնդկահավերի համար հատուկ տեղ սարքեցինք: Ջաղաց տարանք ջաղացպանին ու որդուն, դուռը կողպեցինք իր շատ խոշոր ժանգոտ կողպեքով, այնպես որ եկողները տեսնեին, որ փակ է, ու հետ գնային:

Մեր ճամբարը շատ խոր անտառում էր, բայց գիշեր-ցերեկ ժամապահում էինք: Դեկտեմբերին սկսվեց սաստիկ ձմեռը, շատ ձյուն եկավ: Տեղավորվեցինք գետնափոր տնակում, ցերեկը մեզ լավ էինք զգում: Շատերը զբաղված էին որսորդությամբ: Ես ժամապահում էի փոքրիկի հետ: Մեծ ծառի վրա դիտատեղ էինք սարքել: Հեռադիտակով մեծ տարածություն էինք դիտում: Մեր ջոկատում երկու շատ հետաքրքիր մարդ կար. մեկը՝ հեքիմ Ավետիսն էր, որ զբաղված էր վիրավորներով ու իր գործում շատ հմուտ էր (վիրավորներից միայն մեկը չդիմացավ ու մահացավ, մյուսներն արդեն լավ էին ու շուտով ոտ-

քի էին ելնելու), մյուսը տիրացու Խորենն էր: Նա մեր օրացույցն էր, հայտնում էր օրը, շաբաթը, ամիսը: «*Տղե՛ք, վաղը կիրակի է, ոչ մի աշխատանք*»: Մի առավոտ հավաք արեց, հայտնեց.«*Այսօր Նոր տարվա գիշեր է՝ դեկտեմբերի երեսունմեկը: Վաղը 1916թ. հունվարի մեկն է*»: Բերեցինք ջաղացից վերցրած նավթով լամպերը, որոնք հազվագյուտ դեպքում էինք վառում: Մի տակառիկ զինի ունեինք, հորեղբայրս կարգադրեց մսագործին, հացթուխին, ճաշ պատրաստողին ամեն ինչ անել: Գիշերը ճոխ անցկացրինք: Ժամը տասնմեկ անց կես ամեն ինչ պատրաստ էր Նոր տարին դիմավորելու համար: Մեր ջոկատի կազմում կար քառասունհինգ հոգի: Բոլորը իրենց համար կավե բաժակներ ունեին: Նուբար գիրին ժամացույցը ձեռքին սպասում էր, որ հայտնի ժամը տասներկուսը: «*Եղբայրներ, ուրքի՛*»: Բոլորը ելան ոտքի: Խոսեց հորեղբայրս.«*Եղբայրներ, շնորհավոր Նոր տարի*»:

Գնաց 1915թ.՝ հայ ժողովրդի համար սև տարին, կորցրեցինք տուն-տեղ, ամեն ինչ, որ սրբություն էր մեզ համար: Ողջ մնացածները գաղթում էին Ռուսաստան: Մենք ալ, գարունը բացվի, պիտի գնանք միանանք ռուսական զորամասերին ու շարունակենք պայքարը Թուրքիայի դեմ:

Հունվարի կեսերին ցրտերը սաստկացան: Անընդհատ ձյուն էր գալիս: Ամեն ինչ ունեինք: Որսորդները միս էին հասցնում: Մի մասը փայտ էր պատրաստում, մյուսը՝ ձյուն հալեցնում: Այնպես որ բոլորն ալ աշխատում էին: Ես ու փոքրիկը ամբողջ օրը ժամապահում էինք: Ամեն ինչ մեռած էր: Տասնյակ կիլոմետրերի վրա դաշտերում, արտերում ոչ մի շունչ չէր երևում:

Անցան ծանր օրերը: Մի առավոտ տիրացուն հայտնեց.«*Վաղը սկսվում է գարունը, մարտի քսաներկուսն է*»: Ապրիլի կեսերին անտառը սկսեց կանաչել: Հորեղբայրս ժողով գումարեց.«*Եղբայրներ, մայիսի սկզբին պեղք է նահանջենք դեպի Ռուսաստան: Տիրացու՛, ինչքան կա մայիսի սկզբին*»: «*Մի շաբաթ ալ չի մնացեր, հրամանատար՛*»: «*Հացթուխներ, օգնականներ, վերցրե՛ք ամբողջ ալյուրը ու հացի վերածե՛ք, հացը լավ եփե՛ք, որ շատ դիմանա*»: Արդեն մայիսի սկզբներին գումարեց երկրորդ ժողովը: «*Եղբայրներ, երկու օրից ճամփա ենք ելնում: Ժողովի ժամանակ դուք էլ արտահայտվե՛ք իմ*

առաջ: Համամի^օր եք գնալ դեպի արևելք՝ Ռուսաստան, և միանալ ռուսական զորամասերին»: Խոսեց մի տարեց մարդ.«Մենք ուրիշ անելիք չունենք այսօրեղ: **Մենք մեր վրեժը լուծեցինք փասնապատիվ:** Կարծում եմ՝ բոլորն ալ համամի^օր են ժողովի որոշմանը»: «Համամի^օր ենք», - ամեն կողմից լավեցին ձայները: Կառքը և ձիու մեկը չկար: Առավոտ շուտ ամեն ոք, իրա բեռը²³⁹ կապած, պատրաստ էր ճանապարհ ելնելու: Չին լավ բարձած էր հացով:

Մայիսի վեցին՝ առավոտ կանուխ, ճամփա ընկանք: Երեք օր գնացինք: Գիշերները հանգստանում էինք, ցերեկները՝ քայլում: Բացվեց չորրորդ առավոտը: Սկսանք պատրաստվել ճանապարհ ելնելուն: Արդեն երկու ժամ քայլել էինք: Հանկարծ մեր առաջ կարծես գետնից բուսան թուրք ասկյարները: «Տղե՛ք, դարան ընկանք»: Առաջինը կրակեց հորեղբայրս: Այսպես սկսվեց կյանքի և մահու մարտը: Ես բարձրացա մի հսկա ծառի վրա. իմ առջև բացվեց մի սուսկալի տեսարան. հարյուրից ավել ասկյարներ զինված էին գնդացիներով և անգլիական կարճ հրացաններով: Ինչպես երևում էր, այս ասկյարները մահանջում էին ռուսական ճակատից: Երակներումս արյունը սառեց: Զգացի մեր կործանումը: Իմ անելիքը ծառի վրա մնալն էր ու առաջ շարժվող սպաներին սպանելը, որ խառնաշփոթ առաջացնեմ ասկյարների մեջ: Ներքևում շարունակվում էին ուժեղ կրակոցները: Իմ առաջին կրակոցը ուղղված էր հրամաններ արձակող սպային: Ասկյարներից ոչ մեկը գլխի չընկավ, որ կրակոցը արձակված էր ծառից: Կրակոցները սաստկացան: Չնայած ընկածներին՝ ասկյարները առաջ էին շարժվում: Ծառից անընդհատ կրակում էի, ամեն կրակոցից մեկը գլորվում էր: Ինչպես երևում էր, թուրքերը, չիմանալով, թե ինչ ուժ կա իրենց դիմացը, դադարեցրին հրաձգությունը և հետ քաշվեցին: Մերոնք ալ դադարեցին: Թուրքերի կողմից սպիտակ դրոշակով երեք հոգի եկան.«Հե՛յ, չեզնից թող երեք հոգի գան, րեսնենք՝ ուլքեր եք»: Մինչ այդ՝ ես արդեն իջել էի ծառից ու գնացել մերոնց կողմը: Հորեղբայրս հարցրեց ինձ.«Ինչպե՞ս են գործերը»: «Շատ վատ, հարյուրից ավել զինվորներ են՝ զինված գնդացիներով, անգլիական հրացաններով»: Թուրքերը սպասում էին: «Նահանջենք, քանի շուր է»: Նուբարն ասաց.«Չգնա՞նք հեյրները խոսենք»: «Պետք չէ, մեզ չեն թողնի, որ հեռանանք»: Սկսեցինք մա-

հանջել անտառի խորքը: Հորեղբայրս կանչեց.«Անդրանիկ, դու պետք է հեռանաս այստեղից, հասնես Բուլղարիա, պարսնես մեր մասին»: «Հորեղբայր, ոչ մի տեղ չեմ գնա»: «Հրամայում եմ, հեռացիր»: Հորեղբորս տեսքը սարսափեցրեց ինձ: Ես հեռացա նրա մոտից, բայց մարտից հեռանալու միտք չունեի: Թուրքերը, հասկանալով, որ մարդ ուղարկելու միտք չունենք, սկսեցին հարձակումը: Մարտը նորից բորբոքվեց: Իմ ատրճանակի համար հիսուն փամփուշտ ունեի, որ իմ պայուսակում էին: Արտակարգ դիպուկ էի կրակում: Հաստաբուն ծառերի հետևից թուրքերը գործի դրին գնդացիները: Ժամերը դանդաղ էին անցնում: Գեռ մեր կողմից լավում էին կրակոցները: Ինձ մոտ շատ քիչ փամփուշտ էր մնացել: Ընկա մի փոսի մեջ, այնտեղ ալ մնացի: Կրակոցները դադարեցին: Պարզ էր՝ ամեն ինչ վերջացավ: Գլխիս վրա խոսակցություն լսեցի.«Գլավուրներ էին, լավ կոտորեցինք»: «Մենք ալ լավ կոտորվանք»: Ես տեղիցս չշարժվեցի: Վրա հասավ գիշերը: Սպասեցի մինչև կեսգիշեր: Փոսից ելա ու փորտոլ գնացի մեր կողմը, այն հույսով, որ գտնեմ հացով բարձած ձին: Առանց հացի հեռանալով՝ անտառում սովամահ կլինեի: Շատ ջանք թափեցի, մինչև ձին գտա: Չին ընկած էր կողքի: Վերին խուրջինում հաց չկար, մյուսը ձիու տակ էր մնացել: Մի կերպ երեք հաց հանեցի: Մի գիշեր հորեղբայրս ինձ մի փայլուն աստղ էր ցույց տվել ու ասել, որ այդ աստղը արևելքն է ցույց տալիս:Նայեցի երկրնքին, գտա փայլուն աստղը: Գնացի այդ ուղղությամբ, որ ինձ պիտի տաներ արևելք: Սկսեց բացվել մայիսյան արշալույսը: Արևի առաջին ճառագայթներից հայտնի եղավ, որ գնում եմ դեպի արևելք: Մի երկու ժամ էլ քայլեցի և ուժասպառ մտա մացառների մեջ: Մի հացը լրիվ կերա, քսանչորս ժամ ոչինչ չէի կերել: Խմեցի կողքիցս կախված տափաշշի մեջ եղած ջրի կեսը և քնեցի ոգնու նման կծկված: Այսպես ցերեկը քնում, գիշերը քայլում էի: Ինձ համար բացվեց երրորդ օրը, ես այլևս ուտելիք չունեի: Ամբողջ գիշերը աստղի հետքով քայլել էի դեպի արևելք: Ստիպված վայրի տանձ ու խնձոր կերա, սիրտս խառնեց: Մարդկանց աչքերից հեռու մի հարմար տեղ ճարեցի, որ քնեմ: Չգիտեմ՝ ինչքան քնեցի, երբ ականջիս մարդու ձայն հասավ, որը օգնության էր կանչում՝ իմդա՛ք: Ուշքի եկա ու վազեցի ձայնի կողմը: Տեսա մի սուկալի տեսարան: Մի երիտասարդ մարդ

ու մի արջ իրար բռնած քաշքշում էին: Ժամանակ չկար կորցնելու: Ատրճանակս լցված էր ու պատրաստ: Նշան բռնեցի արջի գլխին, որը բարձր էր մարդուց, ու կրակեցի: Արջը հետ ընկավ, երկրորդ գնդակը արջին տապալեց գետնին: Երիտասարդն էլ հնձածի պես ընկավ արջի կողքին: Վազեցի ու երիտասարդին մի կերպ քարշ տվի մի ծառի տակ, որտեղ նրա իրերն էին գտնվում՝ երկու տափաշիչ ու որսորդական հրացանը: Հեռվում արածում էր մի հիանալի ձի՝ առջևի ոտքը շղթայված: Երիտասարդը ուշաթափ վիճակում էր: Տափաշներից մեկի մեջ թունդ օղի էր, մյուսի մեջ՝ ջուր: Ջուրը ցանեցի երեսին, օղին լցրեցի բերանը, կուլ տվեց, մի երկու ապտակ տվի, ուշքի եկավ: Աչքերը բացեց, ապուշ-ապուշ ինձ էր նայում: Երիտասարդը, որը երեսունից պակաս չէր, թուրք էր: Նա հարմար նստեց, նայեց արջի կողմը: «*Ժամանակին հասար, թե չէ հիմա Մուհամադի քով կըլլայի*»: Նորից նայեց ինձ: Ինչպես երևում էր, տեսքս բանի նման չէր: «*Ուրյեդի՞ց ես գալիս*»: «*Քեզ համար մեկ չէ՞*»: «*Շորերդ ամբողջովին քրքրված եմ: Հեռվից ես գալիս*»: «*Ինչնով շար մի՛ հեղաքրքրվիր: Անոթի եմ, մի բան րու՛ր ուրեմ ու գնամ*»: «*Ուրեղը կուրես, բայց ոչ մի րեդ չես գնա*» ասելով՝ բարձրացավ, ձիու վրայից բերեց խորջինը, միջից հանեց մի բողորչա²⁴⁰ պանիր: Սկսեցի ուտել: «*Ես հիմա խորոված կպարրասարեմ, միասին կուրենք*»: Ապա գնաց արջի կողմը ու ինձ դառնալով՝ ասաց.«*Անհրավը մարդու հոտ էր առել ու եկել, ու նկարեցի, հազիվ կարողացա որսորդական սուրս հանել ու հարվածել, բայց չկարողացա, որ սուրս հանեմ ու երկրորդ անգամ հարվածեմ,-ապա մուրեմնալով արջին՝ ասաց,- դու լավ ես աշխարել, երկու գնդակն էլ գլխին ես կրակել*»: Նա սուրը, քաշելով արջի մարմնից, հանեց ու սկսեց մաշկել: Մի կտոր փափուկ միս կտրեց, սկսեց խորոված պատրաստել: «*Անհրավը առավորվա ճաշը հարամ արեց, հիմա միասին կճաշենք*»: Ես արդեն բողորչայի կեսը կերել էի: Մի կտոր հանեց, սկսեցինք ճաշել: Ի՛նչ համեղ միս էր արջի միսը: Նա վերցրեց օղիով տափաշիչը և մի կում խմեց, ապա սրբեց տափաշի բերանը ու տվեց ինձ: Ես առաջին անգամ հորեղորոս տանն էի օղի խմել: Մի կում խմեցի.«*Այս ինչ թունդ է, ինչպե՞ս ես խմում*»: «*Քեզ համար րանը ավելի թույլը կա*»: «*Ի՞նչ է, կարծում ես քեզ հետ գյու՞ղ կգամ*»: «*Բա ու՞ր պիրի գնաս, թշվա-*

ռակա՛ն: Քսնի օր է՝ թափառում ես անտառում, լավ է, մարդու չես հանդիպել, թե չէ առաջին ծառից կկախեիս: Պարսի՛ր, ո՛վ ես, ի՛նչ ազգ ես»: «Ատրի եմ, անունս Վախթանգ է»: «Չեթաների հեպ կոչվու՞մ էիր ասկյարների դեմ: Հաղթեցին, ցրվեցիր: Հիմա ու՞ր ես գնում»: «Ուզում եմ հասնել Ռուսաստան»: «Ոչ մի տեղ չես հասնի, քեզ փրկել է հրաշքը, իսկ դու իմ կյանքը փրկեցիր: Ես ամեն ինչ կանեմ, որ քեզ ոչ մի վնաս չգա: Մայրս շար ազդեցիկ կին է, ամեն ինչ կանի, որ քեզ մի թեսգերի հանի, կապրես մեր գյուղում»:

Չզգացի, թե ինչպես քնեցի: Չարթնեցի, տեսա, որ արջը լրիվ մաշկված է: «Հը՛, լավ քնա՞ր: Դե արի հիմա օգնի՛ր»: Միսը փաթաթեցինք կաշվի մեջ, կապեցինք ու բարձանք ձիու վրա: Նստեց և սկսեց ծխախոտը փաթաթել: «Ծխախոտը վերցրու՛, փաթաթի՛ր»: «Ես չեմ ծխում»: «Շար լավ էլ անում ես»: Ծխելով թունդ ծխախոտը՝ ասաց.«Հիմա ես էլ մի քիչ քնեմ»: Թիկունքը տվեց ծառին ու քնեց: Ես մտածեցի, որ գնամ, բայց չհամարձակվեցի: Ծիշտ է, եթե թուրքերը բռնեին, մահս անխուսափելի էր: Արևն արդեն թեքվում էր դեպի արևմուտք: Նա զարթնեց, ելավ, գնաց ձիու ոտքերի շոթան քանդեց: «Գնանք», -ասաց: «Անունդ ի՞նչ է»: «Հալի՛չ»: «Հալի՛, եղբայր, լավ մտածիր, քեզ ալ վնաս կգա, ինչ ալ»: «Այդ քո գիտենալու բանը չէ, միևնչև գյուղ հասնելը մութ կլինի»: Բռնելով ձիու սանձը՝ ընկավ առաջ: Արդեն մութն ընկել էր, երբ գյուղը երևաց: Մտանք գյուղ, մի քանի փողոց անցնելուց հետո կանգնեցինք մի երկհարկանի տան առաջ: «Անա՛, արի տե՛ս՝ ինչ եմ քերել»: Դռան մեջ, լամպը ձեռքին, երևաց մի շատ համակրելի կին: «Այս գնչուին որտեղի՞ց ես գրել»: «Այդ գնչուն եթե չըլլար, հիմա իմ ոսկորները կքերեիս»: «Ինչպե՞ս թե»: «Այս արջին տեսնում ես, ամենամեծ կտորս ականջս կթողներ: Վախթանգ, օգնի՛ր՝ իջեցնենք, ներս տանենք: Մայրս այնպիսի դավուրմա կպարտասարի, որ մարկերդ հեպը կուտես»: Ամեն ինչ վերջացնելուց հետո վերև բարձրացանք: «Նարի՛ր այստեղ, մտածենք, թե ինչպես վարվենք քեզ հեպ»: Հալիլը երկու խոսքով պատմեց այդ օրվա դեպքերի մասին: «Գնամ քաղնիքը վառեմ, լողացնենք, մաքրենք, քո առաջվա շորերը նրա վրա կըլլան: Վաղը մի բան կմտածեմ»: Բոլոր շորերս լցրեցի թոնդիրը²⁴¹, վառեցի, լողացա, ոտից գլուխ նոր շորեր հագա, ապա ներկայացա իրենց: Մայրը

զարմացավ. «Ի՛նչ սիրուն երիտասարդ է, քանի՞ օր փարեկան ես»: «Տասնութ փարեկան կամ»: Նստանք, ճաշեցինք: Մայրը սկսեց հարցուփորձ անել ծնողներին մասին: «Ծնողներին չեմ հիշում: Հորեղբորս մոտ էի ապրում, այս վերջին դեպքերից հետո անկառ բարձրացանք, ասկյարները բոլորին կոտորեցին, ես հազիվ ազատվա: Երեք օր սոված, դադրած անկառում քափառեցի, մնացածը Հայիլ եղբայրս պատմեց: Հիմա աշխարհում ոչ ոք չունեն»: «Խեղճ փրս, ոչինչ, մեզ մոտ կմնաս»: Առավոտ լսեցի, որ մայրը հարցնում էր Հայիլին. «Անունը ինչ դնենք»: «Նուրի»²⁴² կդնես»: Իջանք պարտեզ, պարտեզը շատ անկարգ վիճակում էր, սկսեցի հավաքել: Հայիլը ասաց, որ կգա մի ժամից, ու գնաց: Վառելիքի փայտը մի կողմ հավաքեցի: Տնային կենդանիներին արդեն արոտավայր էին տարել: Երկու շատ հիանալի ձի ունեին, որոնց հանեցի ախոռից և գոմաղբը դուրս բերեցի: Ախոռն այնպես մաքրեցի, որ հիանան, ապա մաքրեցի հավաքները: Երկու ժամից մայրը եկավ: «Այ Նուրի, այս ի՞նչ ես արել»: «Դու ախոռը նայի՛ր, արդեն չիերին փարել եմ գոմ»: Նայեց, ներս մտավ. «Ահանի՛ի՝ դեղատրան ես նմանացրել: Քոքողուն մի օր էլ այսպիսի քան չի անում: Տանը ոչ մի գործ չի անում: Ամբողջ օրը քրև է գալիս գյուղում կամ էլ որսորդության գնում»: «Սրանից հետո ես կանեն»: «Ու՞ր գնաց, քան չասա՛ց»: «Ոչ մի քան, ասաց, որ մի ժամից կգա: Չեմ ուզում ասել, բայց արդեն երկու ժամ է անցել»: «Շան փղան նորից այդ քածի մոտ գնաց»: Ճաշին եկավ: «Ու՞ր էիր: Նորից նրա մո՞տ էիր գնացել: Մտքովդ չանցնի, որ հարս կբերես այս փուն»: «Տեսնում եմ սարուկ ես գրել, լավ էլ աշխարեցրել ես»: «Ես էլ նոր եկա, նա ինքը իր հայեցողությամբ է արել»: «Բաղմասի պեղն ի՞նչ ասաց»: «Այդ շունն ասաց, որ մի երկու ժամ հետո երթանք ու վերցնենք անձնագիրը»: «Նուրի՛, որ կհարցնի անունդ ու ազգանունդ, կասես՝ Նուրի օղլի Նուրի: Քիչ խոսենք: Անա՛, անոթի ենք»: «Ճաշը պատրաստ է, հիմա կրաքացնենք, կուրենք»: Սուրփան պատրաստ էր, երեքով նստանք ճաշի: Ի՛նչ համեղ ճաշ էր պատրաստել արջի մսից: Մի տարուց ավել այսպիսի համեղ ճաշ չէի կերել:

«Հայիլ, այս մի քանի օրը պիտի գնաս Տրասիզոն»: «Գնաք Տրասիզոն». այսպես պիտի ասես: Սրանից հետո առանց Նուրիի ոչ

մի րեղ չեմ գնա, այդպես չէ՞, Նուրի»: «Այդպես է»: «Պոռնիկասնոցն ալ հե՞րդ պիտի փանեն, շուն»: «Լռի՛ր, պառա՛ւ, ի՛նչ ես ուզում ինչանից»: «Շուն ես, շուն ալ կմնաս»: «Ի՞նչ պիտի բերենք»: «Ինչ կա րունը որ, ամեն ինչ վերջացած է»:

Ճաշից հետո գնացինք խարախուլ (քաղմաս): Մի շատ ազդեցիկ թուրք, բարևելով Հալիլին, ոտքից գլուխ գննեց ինձ. «Դու՞ ես Նուրիև»: «Այո՛, ես եմ, Էֆենդի»: «Այսրեղ բութ մայրովդ կնքի՛ր»: Երեք տեղ կնքեցի: Հանձնելով թեզգերին՝ շնորհավորեց: Մի քայլ էլ չէինք արել, որ դուրս գանք քաղմասից, հանկարծ քաղմասի պետը կանչեց. «Նուրի»։ Հետ մայեցի: «Մեր գյուղում անկարգություն չանես, մեր գյուղը անկարգ գյուղ չէ»։ «Հանգի՛սր եղի՛ր, Էֆենդի՛,-ասացի ես,-այդպիսի բան չի պատահի»։ Քաղմասից դուրս եկանք: «Տեսնում ես, թե շունը ինչպես է քեզ փորձում»։ Գնացինք տան կողմը: Հալիլը շեղվեց: «Գնանք սրճարան», -ասաց նա: Գնացի հետևից: Սրճարանը գոմի մման մի սրահ էր: Սուրֆաների առաջ՝ պատի տակ նստոտած մարդկանց մի մասը սուրճ էր խմում, մի մասը թուրք էր խաղում, մյուս մասն էլ՝ նարգիլե քաշում: Սրճարան կոչվածը ծխախոտի ծխի մեջ կորած էր: Նստեցինք մի անկյունում, սուրճ խմեցինք: Հալիլը առաջարկեց թուրք խաղալ, սակայն ես մերժեցի. «Չէ՛, ծուխը խեղդում է ինձ, գնանք այսրեղից»։ «Դու գնա՛, ես հեկոն կգամ»։ Այսպիսով՝ ես այդ գյուղի բնակիչ դարձա:

Առավոտ շատ շուտ արթնացանք: Հալիլը երկու ձի ուներ, որոնք, բացի հեծնելուց, ուրիշ նպատակի համար չէին գործածում, և մեկ բեռնակիր ջորի: «Կարո՞ղ ես չի թամբել», -հարցրեց Հալիլը: Հորեղբայրս գյուղական կյանքից ինձ ամեն ինչ սովորեցրել էր: «Ինչու չէ», -պատասխանեցի ես: «Այս չիուն՝ Յղըրիև, քեզ եմ նվիրում»։ Մյուս ձիու անունը Մելք էր: Իմ ձին որձ էր, նրանը՝ էգ: Երկուսն էլ գեղեցիկ, արագավազ մտույզներ էին: Չորրոն բարձեցինք երկու դատարկ տակառ ու ճանապարհ ընկանք դեպի Տրապիզոն: «Այս դաևնդալոշ ջորիով հինգ ժամ է հարկավոր՝ մինչև Տրապիզոն հասնենք», -ասաց Հալիլը: Մի ուրիշ անգամ առանց ջորու կերթանք, երկու ժամից կհասնենք: Կեսօրին հասանք: Չմայած ամառվա կեսն էր, քաղաքը կորած էր կեղտի, ցեխի և փոշու մեջ: Մտանք մի իջևան, ճաշեցինք, հանգստացանք: Վերցրինք տակառներով ջորին ու գնա-

ցինք առևտրի: «Մայրիկը *օճառի մասին ոչինչ չասաց, եթե չառնենք էլ կշղայնանա*»: Ամեն ինչ գնեցինք ու վերադարձանք իջևանատուն: «Դու մնա *հսկապահի՞ր, ես մի քիչ գործ ունեմ*», -ասաց ինձ Հալիլը: Սենյակում մի խալի կար: Չեռքիս հենվեցի ու քնեցի: «Նուրի՛, վե՛ր կաց, գնում եմք»: Տեսա, որ քեֆը լավ էր:

Արևը մայր էր մտնում, երբ գյուղ հասանք: Ամիսներն անցնում էին, առաջվա նման թափառում էինք անտառում, որս էինք անում: Ես զբաղված էի պարտեզով, Հալիլը թափառում էր սրճարաններում: Այդ ընթացքում նորից մի քանի անգամ գնացինք Տրապիզոն: Արդեն սեպտեմբերի վերջն էր: Գնացինք որսի: Երկու տափաշիչ օղի վերցրինք. մեկը ինձ համար՝ թույլ, մյուսը Հալիլի համար՝ թունդ: Մի խոզի գոծի սպանեցինք, սկսեցինք խորոված պատրաստել: «Այ թե մայրս *լուեսնի, որ խոզի միս եմ ուրում, սևս կլրս*», -ասաց Հալիլը: «Հանկարծ *թեռանիցդ քաց շթողնես*»: Ամեն ինչ պատրաստ էր, սկսեցինք ճաշել: Ուտում և խմում էինք մեծ ախորժակով: Հալիլը իր տափաշիչի ամբողջ օղին ամբողջը խմեց և թիկնեց ծառին: Աչքերը կիսաբաց նիբիում էր: Հանկարծ փոքրիկ ուլունքով պատրաստված մի շոթա հանեց վզից, որի ծայրից կախված էր փոքրիկ պայուսակ: Կարծեցի՝ մուսխա²⁴³ է, բայց միջից շատ հետաքրքիր իր հանեց: Մի թզբեհ: Նայեցի ու զարմացա: Թզբեհը շատ հետաքրքիր նյութից էր պատրաստված: Ցանկացա վերցնել: Չովեց: Խնդրեցի, որ ցույց տա: «Հալի՛լ, *լրու՛ր Լուեսնես*»: «Դու *այսպիսի բաներից չես հասկանա*»: Օ՞ զարմանք, ամբողջ թզբեհը պատրաստված էր կանացի կրծքի պտուկներից: «Մա *ի՞նչ է*», -հարցրի զարմացած: Չայրացած ասաց. «Չե՞ս *հասկանում, չե՞*»: «Բայց *ինչպե՞ս ես ջեռք բերելի*», -նորից հարցրի ես: «Շար պարզ, *ես մասնակցել եմ հայերի Կեղահասնանանր*»: Իսկ ես նրա խոսքը լրացրի. «Եվ *կոտորածի*»: «Ինչպես *կուզես, այնպես էլ հասկացիր*»: Ես հաշվեցի թզբեհի կանանց պտուկները. երեսունվեց հատ էին: Նայեց ինձ. «Ի՞նչ է, *վրդովվեցի՞ր*»: «Չէ՛, *ինչու՞... Հեղաքրքիր է, սրանց Կերերը մեռած էին, որ կտրեցիր*»: «Ո՛չ, *ինչու՞, ես սրանց հետ կենակցել եմ, որի հետևանքով կա՛մ վախից եմ մահացել, կա՛մ ես եմ սպանել*: Այդ *խոշորները, որոնք Կարբերվում են մյուսներից, պարկանում էին մի կնոջ, որը իսկական վագր լիներ*: Նա *ինչ կսպաներ, եթե ես մի քիչ թույլ լինեի*»: Ինձ եթե կայծակ խփեր, այդքան չէի շշմի:

Նայեցի Հավիլին, որ արդեն քնել էր, զարմացա, թե ինչպիսի ոճրագործի եմ փրկել ստույգ մահից: Այն ատրճանակը, որով սպանել էի արջին, յոթ փամփուշտով ինձ մոտ էր:

Արթնացրի նրան, ու երբ տեսավ ձեռքիս ատրճանակը, հարցրեց. «*Ուրեմն հա՛յ ես,-հեզնական ժպտաց ու ասաց,-ուրեմն չես կրակի*»: Կրակեցի ուղիղ ժպտացող բերանին: Մինչ այդ նա ձեռքով հասցրեց փակել բերանը: Տարա ձիու մոտ, գցեցի թամբին: Կապեցի թամբին: Չիու ոտքերից շղթաները հանեցի ու հարվածեցի ձիու հետևին: Համոզված էի, որ ուղիղ գյուղ կգնա: Հանելով նրա ձիու շղթաները՝ գնացի դեպի Տրապիզոն: Վերցրի նրա անձնագիրը և պայուսակով թզբեխը: Չիերին փոխեցի, որովհետև Մելեքը ավելի արագաշարժ էր և ավելի դիմացկուն: Մոտավորապես երկու ժամից հասա Տրապիզոն: Նժույզը փրփուրի մեջ կորած էր, լավ հանգստացրի ու մաքրեցի: Երբ լավ հանգստացավ, գնացի կենդանիների շուկան: Շուկայում բազմազան կենդանիներ էին ծախում՝ թռչուններից մինչև ուղտեր: Շուկայում մի քիչ շրջեցի մժույգի հետ: Տեսա՝ մի մարդ առանց թամբի ձի է ծախում: Հարցրի՝ ինչ արժի: Պատասխանեց՝ հիսուն ոսկի:

Մտտեցավ մի գնորդ ու հարցրեց ինձ. «*Նժույզը ի՞նչ արժի*»: Ասացի՝ հարյուր ոսկի: «*Չարժի*»,-ու թողեց գնաց: Մի քանի հոգի էլ եկան, բայց նրանք էլ չհամաձայնեցին իմ ուզած գնի հետ: Վերջապես եկավ մի լազ: Նայեց ձիուն. հասկանալի էր, որ ձիերից հասկանում էր: «*Ի՞նչ տամ*»: «*Հարյուր ոսկի*», -ասացի ես: «*Չէ՛, չարժի*»: «*Ինչու՞ չարժի, մի թամբին նայիր, ի՛նչ գեղեցիկ է*»: «*Թամբն էլ հե՞տն ես ծախում* »: «*Այո՞*»: «*Գողացե՛լ ես*»: «*Գողի նմա՞ն ես,-ու կանչեցի մժույգին,-Մելեք*»: Չին վրնջաց և սկսեց սմբակով հարվածել գետնին: «*Տեսար, որ չիև իսև է, չես գողացել*»: Լազը տվեց հարյուր ոսկին, նայեց ձիուն ու հեռացավ: Երկար նայեցի հետևից: Արդեն կեսօրն անցել էր, գնացի ճաշարան՝ ճաշելու: Հիմա պետք է հեռանալ այս շան երկրից: Ինձ համար ամենահարմար քաղաքը Օդեսան էր: Այնտեղ էին գալիս բուլղարական նավեր:

Գնացի նավահանգիստ: Բացի առագաստանավերից՝ ուրիշ նավ չկար: Տեսա, որ մի առագաստանավի մոտ չորս-հինգ հոգի գրուցում էին: Մտտեցա, լսեցի, որ թուրքերեն չէին խոսում: Հույներ էին:

Բարևեցի: Նրանցից մեկը բարձրահասակ էր, թավ մորուքով, պատասխանեց բարևիս ու հարցրեց: «Քեզ ի՞նչ է հարկավոր»: Նայեցի ու չպատասխանեցի: «Ասա՛, մի՛ ամաչիր»: «Ես Օդեսա պետք է գնամ»: «Օդեսա, այդքան փող ունե՞ս որ»: «Փողի մասին չխոսենք, ունենմ»: «Քեզ ե՞րբ է հարմար ճանապարհ ընկնել»: «Այս երեկոյան ճանապարհ ընկնենք, լավ կլինի»: «Լա՛վ, այս երեկո էլ ճանապարհ կընկնենք: Քսանհինգ ոսկի կտաս»: «Չեր առագաստանավը շարժիչ ունի՞»: «Ունի, վառելիքը շարք բանկ է, դրա համար էլ առագաստներով ենք աշխարհում»: «Ինչքա՞ն վառելիք է հարկավոր, որ միևնչև Օդեսա հասցնի»: «Հինգ ոսկու վառելիք է հարկավոր»: «Հինգ ոսկի էլ կտամ, միայն թե շուր հասցնեք»: «Այդ ինչ էլ է հարմար: Միայն մի բան պետք է իմանաս: Ես քեզ կտանեմ Օդեսայից քսար կամ հեռու ու նավակով կիջեցնեմ ասի: Հետո քայլելով կգնաս ու Կիև կհասնես: Մի բան էս, այսպեղ հնավաճառի խանութներ կան: Մի չեռք ծովայինի հագուստ գնիր: Օդեսայում այդ տեսքով քեզ ոչ ոք չի հարցնի, թե ով էս, որտեղից էս: Եղա՞վ»: «Լա՛վ, գնանք»: Բարձրացանք նավը: «Հիմա ինչ կտաս քսանհինգ ոսկի: Տասնհինգն էլ ասի իջնելուց հետո»: Հաշվեցի տասնհինգ ոսկի և տվեցի նրան: «Իսկ մթերք ունե՞ք»: «Ունենք»: «Ինչ համար ուրելիք չգնե՞մ»: «Ո՛չ, ոչինչ հարկավոր չէ: Մի ժամից հետո այսպեղ կլինես: Մի՛ վախեցիր, չենք փախչի: Երկու ժամ հետո այսպեղից դուրս կգանք»: Գնացի, ծովայինի հագուստ գնեցի ու մի գլխարկ, որի վրա գրված էր «Черноморский флот²⁴⁴»: Առաջին անգամ մի ժամացույց գնեցի: Ամեն ինչ գնելուց հետո վերադարձա նավահանգիստ: «Եկա՞ր, արի գնանք վերև, սուրճ խմենք: Տղաներն արդեն վառելաւոյութը լցնում են»: Ինքն իր ձեռքով սուրճ պատրաստեց ու երկու բաժակ կոնյակի հետ դրեց սեղանին: Նստեցինք և սկսեցինք խմել: Գեսից-դեմից հարցուփորձ էր անում.«Դու թուրք չե՞ս»: Հանեցի անձնագիրս.«Թուրքերեն կարդալ գիրե՞ս»: «Գիրեն, նայեց անձնագրին ու կարդաց անունը,-Հալիլ Մեհմեդ Օղլու: Այսպեղ երեսունութ տարեկան էս»: «Այդ իմը չէ»: «Բա ո՞րն է քոնը»: Իմը ցույց տվեցի: «Նուրի Մեհմեդ Օղլու»: «Երկու եղբայր եք: Բա եղբայրդ ու՞ր է»: «Գնում եմ փնտրելու: Երկու տարի առաջ գնաց Օդեսա ու չվերադարձավ: Մայրս հոգիս կերավ: Ասում էր՝ գնա՛, գրի՛ր ու բեր՛:

Երկու քույր էլ ունեն: Այնպես որ, եթե ես էլ չվերադառնամ, քույրերիս հետ կնիսիքարվի: Եթե չգտնեմ եղբորս, չեմ վերադառնա, մայրս հոգիս կուտի»: «Պատմածդ հետաքրքիր է, բայց ես չեմ հավատում»: «Կապիտան, քեզ համար միևնույն չէ, թե ով եմ ես, հասցրու՛ ինչ Օդեսս, փողդ վերցրու՛ ու գնա՛»: «Ճիշտ ես ասում»: Մինչ այդ նավաստիները հայտնեցին, որ ամեն ինչ պատրաստ է: «Հեղեղի ինչ»: Իջանք առաջին հարկ: Բանալիով բացեց նավախցերից մեկը: «Քո խուցը սա է, բանալին վերցրու՛ և ներսից փակի՛ր: Ճաշի ժամանակ ես քեզ կկանչեմ»: Առաջին գործս եղավ զենքս ստուգելը: Դրեցի բարձիս տակ: Հանվեցի ու պառկեցի քնելու: Արթնացա լուսադեմին, լավում էր շարժիչի դռըռոցը: Նայեցի փոքրիկ լուսամուտից. չորս կողմը ջուր էր: Նավաստիներից մեկը կանչեց ինձ: «Նուրի՛ էֆենդի, կապիտանը կանչում է քեզ նստահաշտելու»: Այս անգամ ծովային զգեստս հագա, կապեցի զենքս ու դուրս եկա: Կանչողը սպասում էր ինձ: Նայեց ու զարմացավ: «Գնանք, տեսնենք կապիտանը կճանաչի՞ քեզ»: Ճաշարանը փոքր էր, կապիտանը առանձին էր նստած: Նայեց ինձ ու ծիծաղեց.«Իսկական ռուս ծովային»: Նստեցի սեղանի մոտ և սկսեցի ճաշել: Առաջինը սուպ էր, երկրորդը՝ կարտոֆիլով սոուս, հետը՝ հարյուր գրամ կոնյակ և մածուն ու թան: «Տրապիզոնի ծխախոտ փաթաթի՛ր»: «Ես չեմ ծխում»: «Ապրեն, օրական երկու ժամ վարկում եմ ծխախոտ փաթաթելու համար»: «Կապիտան, եթե այսպես գնանք, քանի՞ օրից Օդեսս կհասնենք»: «Եթե ոչինչ չպատահի, հինգ օրից կհասնենք»: Խոսեցինք պատերազմից, դեսից-դենից: «Գերմանիային շուրով կջախջախեն»: «Մեր վիճակն ինչպե՞ս է»: «Մենք արդեն կորցրել ենք Աֆրիկայի բոլոր գաղութները: Մերձավոր Արևելքում՝ Եմենում, Լիբանանում, Սիրիայում, սպասարմություններ են, մնաց Փոքր Ասիայի փարածությունը, որը թուրքինը չէ»: «Բա ու՞մն է»: «Կեսը մերն է, կեսը՝ հայերինը»: «Հայերը չկան, բայց երկիրը կա և կոչվում է Հայաստան»: Գիշերը բավականին առաջացել էր, զնացի քնելու:

Հինգ օր տևեց մեր ճանապարհորդությունը: Վեցերորդ առավոտ բարձրացա տախտակամած: Կապիտանը կանգնած հեռադիտակով նայում էր դեպի հեռուն, որտեղ պիտի լիներ ռուսական ափը: Մոտեցա.«Բարի լույս, կապիտան»: «Դու՞ ես, բարի լույս, նայի՛ր,

Օղեսասն երևում է: Հիսուն կիլոմետր հազիվ լինի»: Վերցրի հեռադիտակը ու նայեցի. ապակիները շատ ուժեղ էին, և քաղաքը պարզ երևում էր: «Մինչև կեսօր կմոտենանք ասիին: Զեզ կհասցնեն ասի, նրանից հետո՝ Աստված քեզ հետ»: Նստեցիմք նախաճաշելու: Սա կրկնվում էր ամեն օր, ապա նստեցիմք տախտակամածի նստարանին և նայեցիմք դելֆիններին, որոնք լողում էին մեր շուրջը: Հիանալի եղանակ էր: Կապիտանը պատմեց ձկնորսության ժամանակ իր հետ տեղի ունեցած մի քանի արկածների մասին: «Մի անգամ ուռկանի մեջ ընկել էր մի դելֆին: Հանեցիմք ուռկանից: Մեզ այնպես քվաց, թե խնդրում է, որ իրեն նորից ջուրը նետենք: Տղաներից մեկը ուզեց հարվածել, բայց ես նրան թույլ չտվեցի: Նրան նորից ջուրը նետեցիմք: Մի քանի րոպե հետո փեսանք, որ մեր կողքին մի դելֆին իրեն բարձրացնում ու գցում է ջուրը: Մի ժամից ավելի խաղ էր անում մեր կողքին: Ես չեմ կարող պնդել, թե դա այն դելֆինն էր, որին մենք վերադարձրինք կյանքի, բայց դելֆինները շատ խելացի ու հասկացող կենդանիներ են»: Ծաշին շատ լավ հյուրասիրեց, նորից բարձրացանք տախտակամած, նայեց ավիին ու ասաց. «Գնա՛ ու պատրաստվի՛ր»: Վերցրի պայուսակս ու բարձրացա տախտակամած: Առագաստանավը արդեն կանգնել էր, իսկ նավակը արդեն իջեցրել էին ծով: Հրաժեշտ տալով բոլորին՝ իջա նավակ: Կապիտանը շարժիչը միացրեց ու սլացանք դեպի ասի: Ափից մի քանի մետր հեռու կանգ առանք: Կապիտանը հագել էր իր երկարաճիտ կոշիկները, որոնք հասնում էին մինչև ծնկները: Նա իջավ ջուրն ու ինձ կանչեց: Մինչև ուշքի եկա, արդեն կապիտանի գրկում էի, նրա հզոր ձեռքերում: Մի ակնթարթում ինձ իջեցրեց ավիին: Փողը սկզբից էի պատրաստել, տվեցի նրան: Նայեց ինձ. «Վերջը չասացիր, թե ով ես»: «Մորից բուլղարացի եմ, մի քիչ էլ՝ հույն, հորից՝ հայ, - ու հանելուով անձնագիրը՝ պատրեցի ու նետեցի ծովը, - Մեհմեդ Օղլու Հալիլը մասնակցել էր հայերի կոտորածին»: Հանեցի ու ցույց տվեցի թզբեխը: Զարմացավ. «Այդ ինչ կատաղած շուն է եղել»: «Աղջիկների վրեժը փասնապարհիկ լուծեցի»: Վերջում հրաժեշտ տվեցիմք, իրար ձեռք սեղմեցիմք, ու նա ասաց. «Գնա՛, Աստված քեզ հետ»: Երկար ժամանակ նայում էի հեռացող նավակին:

Ես գտնվում էի ռուսական հողի վրա: Ծովի ավազոտ ավից հե-

ուացա մի նեղ կածանով: Իմ առաջ բացվեց մի լայն ճանապարհ, որը ինձ տարավ դեպի քաղաք: Շատ ծովայինների հանդիպեցի, բայց ոչ ոք վրաս ուշադրություն չդարձրեց, որովհետև բոլորն էլ ինձ նման էին հագնված: Մի ժամից ավել քայլեցի ու մտա քաղաք: Ես ոչ ոքի հետ խոսել չէի կարող, քանի որ ռուսերեն չգիտեի: Ես պետք է անպայման գտնեի նավահանգիստը: Մի քանի փողոց անցնելուց հետո տեսա նավահանգստի մուտքը: Ավելի մոտեցա: Տեսա, որ ժամապահը, կանգնած մուտքի մոտ, ստուգում էր փաստաթղթերը: Ծովայիններիմը չէր ստուգում: Գլուխս բարձր բռնած՝ մոտեցա մուտքին ու շտապ անցա: Ժամապահը վրաս ուշադրություն չդարձրեց: Առաջացա դեպի նավերի կանգառը: Ջանազան նավեր էին կանգնած, բայց ոչ մեկը բուլղարական դրոշակ չէր կրում: Գնացի ավելի խորքը: Տեսա բուլղարական տորպեդոն՝ «Смелый»²⁴⁵ անվամբ, որի վրա ծածանվում էր բուլղարական դրոշակը: Աչքերս արցունքոտվեցին: Հեռվից նկատեցի, որ մի նավաստի, կամուրջի մոտ կանգնած, ժամապահում է: Մոտեցա նրան: Ոտքից գլուխ ինձ զննեց: Բուլղարերեն բարևեցի: Հարցրեց, թե բուլղարացի՞ եմ: Պատասխանեցի՝ այո՛: «Ռուսական նավարորնու՞մ ես ծառայում»: «Ո՛չ»: «Իսկ ի՞նչ ես ուզում»: Նրան ձգեցի մի ոսկի: Նա չուզեց վերցնել: Ստիպեցի, որ վերցնի: Հարցրեց «Ի՞նչ ես ուզում»: «Ուզում եմ ձեր կապիտանին տեսնել»: «Կապիտանը կգա մի ժամից: Գնա՛, այն անկյունում կանգնի՛ր, ես քեզ կկանչեմ»: Երբ կապիտանը եկավ, ժամապահը, ցույց տալով ինձ, կանչեց: Մոտեցա, կապիտանը հարցրեց.«Ո՞վ ես, ինչա՞ցու ես, ինչու՞ ես ռուսական ծովայինի զգեստով»: «Գնանք մի ճաշարան, նստենք, ամեն ինչ կբացատրեն»: «Գնա՛, դարպասի առաջ կանգնի՛ր»: Կես ժամից եկավ: «Կապիտան, ես այստեղ ոչ մի տեղ չգիտեմ, ինչ մի ճաշարան տար»: «Գնանք», -ասաց ու ինձ տարավ մի հոյակապ ճաշարան: Մատուցողը, մեզ տեսնելով, մոտեցավ բուլղար կապիտանին ու առաջնորդեց մի շատ փոքր սենյակ, որտեղ դրված էին սեղան ու երկու աթոռ: Նստանք: Դառնալով ինձ՝ ասաց: «Ի՞նչ ես ուրեղու»: «Ինչ որ ըլլա, կուրեմ»: Դառնալով մատուցողին՝ ասաց.«Օղի և ամենալավ ուրեղիքները բե՛ր»: Մատուցողի գնալուց հետո ասաց.«Դե՛, պարմի՛ր»: «Անունս Անտոն է: Ծնվել եմ Պլովդիվ քաղաքում: Հորից հայ եմ, մորից՝ բուլղար»: Պատմեցի

ողջ կյանքս՝ ոչ մի բան չթաքցնելով: Նայեց, զարմացավ. «Այսքան երկիրասարդ ու այդքան բա՞ն ես անցրել... Հիմա ի՞նչ ես ուզում»: «Ուզում եմ ինչ Բուլղարիա փանեա»: «Տանեմ, բայց մենք շատ ենք մնալու՝ մի երկու շաբաթ»: «Ոչինչ, ես մի կերպ կապրեմ այսպեղ»: «Չէ՛, ես քեզ բուլղարական զգեստ կփրամ, միասին կապրենք փորպեղոյում²⁴⁶»: Մինչ այդ ճաշեցինք: «Դու սպասի՛ր, ես հիմա կգամ»: Կես ժամ էլ չքաշեց, եկավ մի ծովային՝ ձեռքին մի կապոց բռնած: Նա, ինձ տալով կապոցը, ասաց. «Չգեսարափոխվիր»: Ես հիմա բուլղարացի ծովային էի, միայն թե՛ սպա: Ծովայինը, հավաքելով իմ ռուսական զգեստները, հեռացավ: Մնալով մենակ՝ կապիտանին ասացի. «Ես ռուբլի չունեմ, մի քանի ոսկի մանրեմք²⁴⁷, ծախսենք»: «Դրա համար դեռ չուր է»: Այսպես ես դարձա «Смелый» տորպեդոյի անձնակազմի անդամ: Օդեսան եռում էր, ցար Նիկոլայի տապալումից հետո ամեն օր միտինգներ էին լինում: Կառավարության դեմ բանվորները սովետական լոզունգներով գործադուլներ էին անում: Օրեցօր միտինգները ավելի բազմամարդ էին դառնում: Մի օր կապիտանը հայտնեց, որ մի քանի օրից պիտի բաց ծով ելնենք: Ես կապիտանին հինգ ոսկի տվի, որ մանրի, սթերք առնենք: Մեր անձնակազմը, բացի ինձնից և կապիտանից, բաղկացած էր հիսուն հոգուց: Մթերքը արդեն սպառվելու վրա էր, չնայած մեկ օրից կարող էինք Վառնա հասնել: Ամեն ինչ պատրաստ էր հեռանալու համար: Գիշերը՝ տասներկուսին, դուրս եկանք Օդեսայի նավահանգստից: Առավոտ արդեն ցամաքը չէր երևում, չորս կողմը ծով էր, բայց մեր տորպեդոն չէր շարժվում: Եկավ կապիտանը և հայտնեց. «Մեզ նորից գերի է վերցրել ցարական Ռուսաստանի նավարորդը: Թագավորի փառալուծից հեղո մեզ ազատ էին արչակել: Բուլղարական կառավարության կողմից ոչ մի կարգադրություն չունեինք: Երեկ կարգադրություն էր սրացվել, որ բաց ծով դուրս գանք: Այսօր սպասում ենք նոր հրահանգի, շուրտով կսրանանք»: Գնացինք սուրճ խմելու և ճաշելու: Հիանալի եղանակ էր, ծովը այնքան խաղաղ էր: Նստած վերևի հարթակում՝ ճաշում էինք: Մինչ այդ կապիտանը ոչինչ չէր ասում իր և անձնակազմի անդամների մասին: Հանկարծ նա շարունակեց.

-Վեց ամիս առաջ ռուսական «Մարիա» գծանավը մեզ գերի

վերցրեց ու բերեց Օդեսա, այդ օրվանից ոչ մի տեղեկություն չունենք մեր ընտանիքներից: Անձնակազմի գրեթե բոլոր անդամները ընտանիքներ ունեն: Ես մայր, հայր, կին ու երկու երեխա ունեմ: Մեծը տղաս է՝ հինգ տարեկան, փոքրը աղջիկ է՝ երեք տարեկան, անունը՝ Ելիզավետա:

Ամբողջ օրը ոչ մի լուր չեկավ: Առավոտյան բարձրացա վերև: Նավաստիները լվանում էին տորպեդոյի տախտակամածը: Մի նավաստի եկավ ու ասաց, որ կապիտանը ինձ է կանչում: Մտա նրա առանձնասենյակը. նստած քարտեզի առաջ՝ չափումներ էր անում: «*Բարի լույս*»: «*Բարի լույս*»: Յույց տվեց աթոռը. «*Նսարի՛ր: Լավ լուր չենք սրացել: Հրամայված է այցելել Սամսոն, Տրապիզոն և այլ թուրքական նավահանգիստներ, մինչև Կ.Պոլիս: Իմ հաշիվներով երկու ամսից ավել կտրեմ*»:

Մի պահ լռեցի, ամբողջ այդ տարիներին անցկացրածս թշվառությունը աչքիս առաջ եկավ: «*Հիմա նորից այդ ավերակն եմ գնալու*»: Կապիտանը նայեց ինձ ու ծիծաղեց: «*Ոչինչ, հիմա բուլղարական ծովային սպա ես: Ես քեզ չեմ տանի Օդեսա: Եթե սպասես մեր նավերին, ի՞նչ գիտես՝ երբ կգան: Այնպես որ մնա մեզ մոտ: Միասին կշրջենք թուրքական ավերակը*»: «*Ես միտք էլ չունեմ քեզ խնդրելու, որ ինչ հետը՝ Օդեսա տանես: Ավելիև, ուր էլ գնաք, ես չեմ հետ եմ գալու*»: «*Արի հիմա գնանք ճաշենք ու սուրճ խմենք*»:

Բարձրացանք տախտակամած: Նավը ուղղություն վերցրեց դեպի հարավ՝ թուրքական ավերակը: «*Կապիտան, վառելիանյութը կհերիքե՞*»: «*Մինչև Սամսոն կերթանք, մեր կառավարությունը կհոգա, որ թուրքերը մեզ վառելիք տան: Մթերքն ալ կգնենք: Քո տված ուկիների կեսն ալ չեմ ծախսել: Այնպես որ ամեն ինչ կարգին է*»:

Անցնում էին օրեր, շաբաթներ, թափառում էինք թուրքական ավերում: Եղանք Սամսոնում, Տրապիզոնում, Սինաբում և ուրիշ մեծ ու փոքր գյուղաքաղաքներում: Տրապիզոնից բացի՝ ոչ մեկը նավահանգիստ չունեք: Ամեն տեղ իջնում էի կապիտանի և մյուս սպաների ու նավաստիների հետ: Ամեն տեղ դիմավորում էին ուրախությամբ, բացականչություններով. «*Բարով եք եկել*» (հոշ կիլմիշիմից): Եթե ձեռքիցս գար, բոլորին ցից կհանեի: Մի էֆենդի եկավ, բոլորի ձեռքերը սեղմեց: Ես ձևացրի՝ իբրև թե չտեսա: Կապիտանը նկա-

տեց.«Ի՞նչ է, վախեցա՞ր այդ էֆենդիի շեռքը սեղմել»: «Դրա շեռքը իմ ցեղի արյունով է քաթախված»:

Հասանք Բոսֆորի նեղուցին, պետք է այցելեինք Կոստանդնուպոլիս, բայց մեզ կանգնեցրին թուրքական կատերները, որոնք մեզ հասկացրին, որ հետևենք իրենց: Մտանք Բոսֆոր, նավ բարձրացավ լոցմանը, և մեր թորպեդոն հանձնվեց նրա հրամանատարության տակ: Լոցմանը և նրա երկու օգնականները մեր թորպեդոն Բոսֆորով առաջ անցկացրին: Արդեն ուշ էր: Ես գնացի քնելու: Առավոտ արդեն Կոստանդնուպոլսում էինք: Ես հինգ տարի առաջ էի եղել այդտեղ: Կոստանդնուպոլիսը այն ժամանակ այդքան մեծ տպավորություն չէր թողել ինձ վրա, ինչ այս անգամ: Հեռացա Այս Սոֆյայի ճանապարհով, որ մի հոյակապ շինություն էր: Այս հոյակապ եկեղեցին, որը կառուցվել էր շատ դարեր առաջ հույն թագավորների կողմից, կոչվել է Սուրբ Սոֆյայի եկեղեցի: Թուրքերն այն վերածել են ջամիի²⁴⁸ թողնելով միայն Այս Սոֆյա անունը, հանել են բոլոր խաչերը, մինարներն²⁴⁹ կանգնեցրել եկեղեցու վրա:

Կապիտանի հետ շատ տեղեր եղանք: Եղանք «Գ-ցը գուլեսի» (աղջկա թիակ)²⁵⁰ կոչվող վայրում: Այդ թիակը ունի շատ հետաքրքիր պատմություն: Թուրք սուլթաններից մեկը շատ գեղեցիկ աղջիկ է ունեցել, բայց գուշակները գուշակել են, որ այդ աղջկան խայթելու է օձը, և այդ խայթոցից աղջիկը մահանալու է: Սուլթանը աղջկան պաշտպանելու համար ծովի մեջտեղում շինել է տալիս այդ թիակը, որը ցամաքի հետ ոչ մի կապ չուներ, և այնտեղ բնակեցնում իր միակ աղջկան՝ իր մաժիտներով, դայակներով, պահակներով: Մի անգամ մեծ կողովով խաղող են բերում, որի մեջ օձ էր մտել: Այս օձն էլ խայթում է սուլթանի աղջկան, որի պատճառով աղջիկը մեռնում է: Դրանից հետո այդ թիակը կոչվում է «Գ-ցը գուլեսի»: Շատ ուրիշ տեղեր նույնպես եղանք՝ Գում Գ-ափու²⁵¹, Ուսկիտար²⁵², գաբալը չարշը (բակ, տոնավաճառ): Այս տոնավաճառում ամեն ինչ վաճառվում էր՝ ասեղից սկսած մինչև ուղտը: **Այստեղ կար մի հատուկ վայր, որտեղ գտնվում էին խանութները: Խանութներում վաճառվում էին ամեն տեսակ ապրանքներ: Դրանց տերերը ընդհանրապես հայեր և հրեաներ էին, որոնք իրար հետ մրցակցում էին:** Պատմում էին նաև հետաքրքիր պատմություններ: Ահա այդ պատմություններից մի քանիսը:

Խորամանկ հրեաների վերջը

Մի հայ, որ շատ փող ուներ, ուզում է խանութ բանալ, որ իր փողը ավելացնի: Երկու խանութների միջև մի դատարկ խանութ է նկատում: Մտնում է խանութներից մեկը և բարևելով հարցնում, թե ով է այդ պարապ խանութի տերը: Խանութի տերը նայում է մարդուն և հարցնում.

-Ինչի՞նչ է պետք այդ խանութը:

-Ուզում եմ մի գործ բռնել:

-Հիմա կկանչեմ:

Նա գնում է պարապ խանութի մյուս կողքի խանութպանին կանչելու: Երկու խանութպաններն էլ հրեա էին: Առաջինը ամեն ինչ պատմում է երկրորդին: Բմանալով, որ հայ է, որոշում են գլխին մի խաղ խաղալ: Միասին գալիս են հայի մոտ, ու երկրորդ խանութպանը ասում է, որ խանութը իրենն է: Հայն ասում է.

-Այս խանութը վարձով ի՛նձ տուր:

-Տամ, բայց ի՞նչ ես վաճառելու:

-Չգիտեմ, մի բան կվաճառեմ:

-Արի դու մեզ լսի՛ր, այս չարշում գիշերանոթ ծախող չկա, այնպես որ շատ եկամտաբեր ապրանք է: Գիշերանոթ արտադրող հրեան մեզ ծանոթ է, ինչքան կուզես, ապրանք կառնես: Մենք քեզ կծանոթացնենք:

-Համաձայն եմ: Վաղը կգամ, խանութը ինձ կհանձնես ու կծանոթացնես ապրանքատիրոջ հետ:

-Վաղը ամեն ինչ կարգին կլինի:

Եվ այսպես, կիրակի աղան իր ողջ փողը՝ հինգ հարյուր ոսկին, բերում է ու մուրհակ է ստորագրում և այդ հսկա խանութը լցնում գիշերանոթներով: Օրական մի քանի հատ անգամ չի վաճառվում: Աղան հասկանում է, որ իրեն խաբել են: Մի առավոտ նա տխուր-տըրտում նստած է լինում իր խանութի առաջ: Բարևելով ներս է մտնում մի պատկառելի մարդ և զարմանում: Նայելով խանութպանին՝ նա հարցնում է.

-Ուրիշ բան չկա՞ր, որ լցնեիր խանութը:

-Խաբեցին:

-Ո՞վ:

-Այս կողքի հրեա խանութպանները:

-Հա՞յ ես:

-Հա՛, հայ եմ:

Այդ մարդը թողնում ու հեռանում է: Նա խացից Հարությունն էր՝ սուլթանի սիրելին: Գնալով պալատ՝ սուլթանին խնդրում է, որ իրեն մի ամսով առևտրի մինիստրի պաշտոն տա: Սուլթանը զարմանում է.

-Ուրիշ պաշտոն չկա՞, գլխացավա՞նք ես ուզում:

-Չէ՛, ուրիշ չեմ ուզում:

Սուլթանի հրամանով խացից Արթինը մի ամսով առևտրի մինիստրի պաշտոնն է ստանում: Նա, գնալով Կիրակոս աղայի խանութը, նրան տալիս է հազար ոսկի ու ասում, որ գնա ու ֆաբրիկայից գնի բոլոր գիշերանոթները ու բերի լցնի խանութը, որը շատ մեծ էր: Կիրակոս աղան զարմանում է.

-Դու՞ էլ ես ինձ նման պակաս, ա՛յ մարդ:

-Քո գործը չէ, դրամներն իմն են:

Կիրակոս աղային ուրիշ անելիք չի մնում: Անում է այնպես, ինչպես ասում է օտարականը. հրեա խանութպանները ծիծաղում են: Խացից Արթինը հրաման է արձակում, որ գիշերանոթի ֆաբրիկան, որը Պոլսում միակն էր, երկու ամսով փակվի, և գիշերանոթի գինը հարյուր տոկոսով ավելացնում է: Երբ այդ ամիսը վերջանում է, նա գնում է սուլթանի մոտ ու ասում.

-Վերցրու՛ ինձնից առևտրի մինիստրի կոչումը:

-Վերջացրի՞ր գործը:

-Չէ՛, մի ուրիշ բան եմ խնդրելու:

-Ի՞նչ ես ուզում:

-Տասն օրով ներքին գործերի մինիստրությունը տու՛ր ինձ:

-Ա՛յ գործ է,-ասելով՝ հրամանը տալիս է:

Ամսի մեկին՝ առավոտյան, գնալով մինիստրություն, մի շատ հետաքրքիր հրաման է արձակում ու թմբկահարներին տալով պատճենը՝ հրամայում է կարդալ բոլոր հրապարակներում, փողոցներում, շուկաներում, ամեն տեղ: Ահա հրամանը.«*Ամսի ութին ողջ հրեա բնակչությունը՝ տղամարդ թե կին, չորս տարեկանից մինչև իննսուն տարեկանը, առավոտ ժամը ութին պիտի գա Ելրց հրապարակ:*

Յուրաքանչյուր որ գլխին գլխարկի տեղ պիտի գիշերանոթ ունենա: Ով չկատարի հրամանը, հինգ տարով բանտարկվելու է: Գիշերանոթը վաճառվում է գարալ չարսում՝ վեցերորդ խանութում: Ներքին գործերի մինիստր»: Ապա խացից Արթինը, վերցնելով տասը հոգի իր հավատարիմ մարդկանցից, գնում է Կիրակոս աղայի խանութը և հրամայում. «Այս աղային կօգնեք առևտրի մեջ»:

Արդեն առևտուրը սկսվել էր: Հրեաները խառնվել էին իրար: Մի մասը գնացել էր ֆաբրիկա, բայց ֆաբրիկան փակ էր: Խացից Արթինը, անցնելով մի անկյուն, նայում է, թե ինչ է կատարվում: Երկու օր հետո խանութում ոչ մի ապրանք չի մնում: Ամսի վեցին գնում է Կիրակոս աղայի մոտ ու վերցնում երկու հազար ոսկին, ապա Կիրակոս աղայի ականջին ասում.

-Հավաքիր փասափուսադ ու գնա՛ այնտեղ, որտեղից որ եկար, մեկ ալ Պոլիս ոտք չկոխես:

Ամսի ութին՝ առավոտյան, գնում է պալատ ու սուլթանին ասում՝ գնանք:

-Ու՞ր:

-Արի՛, հետաքրքիր բան կա:

Հետևելով Արթինին՝ բարձրանում է պալատի ամենավերին հարթակը, որտեղից ամբողջ Ելտց հրապարակը երևում էր ինչպես ափի մեջ:

-Սուլթան՛, նայի՛ր այն հրապարակին:

Սուլթանը նայում է Ելտց հրապարակի կողմը: Չարմանում է՝ այդ ի՞նչ է:

-Պոլստ հրեա բնակչությունն է:

-Ինչպե՞ս թե:

-Այդպես:

-Գլուխներին ի՞նչ են դրել:

-Գիշերանոթներ:

-Ինչի՞ համար:

-Բողոքում են, որ գինը հարյուր տոկոսով ավելացրի:

-Ե՞րբ ավելացրիր:

-Երբ առևտրի մինիստր էի:

-Չի կարող պատահել, դրա համար ինձնից բան խնդրիր,-նորից

նայելով այն կողմ՝ քահ-քահ²⁵³ ծիծաղեց,-ասա՛, ի՞նչն է պատճառը, որ այս մարդկանց այս օրին բերիր:

Խացից Արթինը պատմեց ամբողջ պատմությունը: Սուլթանը նորից քահ-քահ ծիծաղեց: Սուլթանը շատ ազահ մարդ էր:

-Արթի՛ն, այս գործի համար քեզ հազար ոսկի տուգանում եմ:

-Վերցրո՛ւ:

Այսպես պատժվեցին հրեաները:

Անթաց մարդը

Պոլսում կոշիկ վերանորոգող շատ կա, բայց այս վերանորոգողը պանպաշդա²⁵⁴ մարդ էր, ուներ չորս-հինգ երեխա, կին ու զոքանչ: Մի սենյակի մեջ էին ապրում, հազիվ հաց էր հասցնում՝ երկու ծայրը իրար կապելով: Նա մի գիշեր երազ է տեսնում: Տեսնում է մի պարտեզ, որտեղ ծառերի տեղը **գարի**²⁵⁵ սյուներ էին: Սյուների ճակատին՝ ջրի ծորակներ: Նայում և զարմանում է: Ջրի ծորակներից ջուր է հոսում, բայց բոլորը մի տեսակ չեն հոսում: Կային այնպիսիները, որ պայթում էին հոսքից, և կային այնպիսիները, որ քիչ էին վազում, մի մասն էլ կաթում էր: Այսպես ման է գալիս, մեկ էլ մի մարդու է տեսնում, որի մորուքը մինչև պորտն էր հասնում: «*Բարև, ա՛յ ծերուկ*»: «*Բարև, Սելիմ*»: «*Դու ի՞նչ գիտես, որ իմ անունը Սելիմ է*»: «*Ես քո ամբողջ կյանքը գիտեմ*»: «*Լավ, դա կարևոր չէ: Այս ծորակները ի՞նչ են*»: «*Այս ծորակները Պոլսի բնակչության բախարերն են*»: «*Այս ու՞մն է այսպես առաջ վազում*»: «*Պոլսի դարախազիներ*»: «*Բա սա՞ն*»: «*Մեհմեդ փաշայիներ*»: «*Բա իմը ու՞ր է*»: «*Ըն՞ըր, արի՛-մի քանի ոլորապարույր անելուց հետո,-սհա, սա է քոնը*»: Սելիմը նայում է ու զարմանում, ծորակը հազիվ է կաթում: «*Ես հիմա քեզ ցույց կդրամ ինչպես հոսել*»: Նա վերցնում է մի սրած փայտ ու մի քար և սրած փայտը հրելով ծորակի անցքի մեջ՝ սկսում է քարով խփել: Փայտը կոտրվում է ծորակի անցքի մեջ: Հոսքը դադարում է: Ինչքան տանջվում է, որ զոնե առաջվա նման հոսի, ապարդյուն է լինում: Զրտինքից մարմինը ջրոտվում է: «**Թզանրզոր, քզանրզոր**» (խափանվեց, խափանվեց) ասելով՝ զարթնում է: Կինն էլ է զարթնում: «*Այ մարդ, ի՞նչդ խափանվեց*»: «*Բախարս*»: «*Որտեղ բախար ունեիր, որ խափանվեց*»: «*Մի քիչ ունեի, ան ալ խափանվեց*», - ու

պատմում է իր տեսած երազը: «Բախար չունիս, խելք ալ չունիս»: Ալ չքնեց, իսկ առավոտյան «**թգանրգթր, թգանրգթր**», ասելով՝ գնաց գործի: Երկու մեխ էր խփում, մեկ «**թգանրգ թրր**», ասում: Այսպես անցնում էին օրեր, բայց Սելիմը իր «**թգանրնգ**»-ը չէր մոռանում: Մի ժամանակ սուլթանը իր վեզիրի հետ ծպտված մասն էր գալիս քաղաքում՝ տեսնելու համար, թե ով ինչպես է ապրում: Անցնելով խեղճուկրակի խանութի առջևով՝ լսում են, որ Սելիմը իր «թգանրնգ» էր երգում, զարմանում են: «Մուսրաֆա՛ փաշա (գեներալ), վաղը մի գույգ կոշիկ կքերես ու կինանաս, թե այս մարդը ինչի համար է «**թգանրգ**» երգում»: Փաշան գնում է Սելիմի խանութը.«Բարի լույս, վարպե՛ր»: «Բարի լույս, **թգանրգթր**»: «Այս կոշիկները կվերանորոգե՛ս»: «**Թգանրգթր, ինչու չէ**»: «Վարպե՛ր, այդ ինչու՛ է **թգանրգ խմեքս**²⁶: Ի՞նչ գիրես, որ խափանված է»: Սելիմը պատմում է իր երազը: Վեզիրը գնում է պալատ և ամենը պատմում սուլթանին: «Փորչենը»: Արդեն աշնան վերջն է լինում, մի վերարկու տալով վեզիրին՝ գրպանում հարյուր ոսկի է դնում ու ասում.«Տա՛ր, թող հագնի»: Վեզիրը վերարկուն տանում է ու ասում.«Այս վերարկուն քեզ ուղարկել է իմ տերը»: Նայելով վերարկուին՝ Սելիմը շատ է ուրախանում, շնորհակալություն հայտնում ու կախում պատին: Վեզիրի գնալուց հետո մեկ իրեն է նայում, մեկ վերարկուին: «Այդ վերարկուն ինչ չի սագի, կծախես, ինչ մի շուք²⁷ կառնես, ավելացած փողով էլ մի տասն օր կապրես»: Այդպես ալ անում է ու վերարկուն ծախում: Մի քանի օր հետո նորից շարունակում է: Սուլթանը հարցնում է վեզիրին.«Ինչպե՞ս է կոշկակարը»: «Այնպես, ինչպես առաջ՝ **թգանրգ տրր, թգանրգթր տի թգանրգթրր**»: Կզնաս, հարցուփորձ կանես: Ինչպես որ ասում է սուլթանը, այդպես էլ անում է: «Բարե՛, վարպե՛ր»: «**Թգանրգթ**»: «Ի՞նչ արիր վերարկուն»: «**Թգանրգ տրր թգանրգթր**»: «Հասկացանք, վերարկուն ի՞նչ արեցիր»: Ցույց տվեց պատին կախած շուքը: «Այդ վերարկուն այն չէ, որ տերս քեզ նվիրեց»: «Ծախեցի», - և պատմեց իր դրությունը: Վեզիրը Սելիմի պատմածը հայտնում է սուլթանին: Սուլթանը մի եփած սագի մեջ հարյուր ոսկի է դնում և ասում է վեզիրին՝ տա՛ր: Վեզիրը կատարում է հրամանը: Սելիմը, նայելով եփած սագին, մտածում է.«Այս որ տանես տուն, կուտենք, մի օրից կվերջանա, կծախես ու այդ փողով մի շաքաթից

ավել կապրեն»: Ծախում է: Նորից մի օր վեզիրը անցնում է այնտեղով ու նորից նույն բանն է լսում՝ **թզանըզ փրբ**: Մտնում է, հարցնում.«Ի՞նչ արիր սազր»: «*Ծախեցի, թզանզփրբ*»: Վեզիրը գնում ու իրողությունը հայտնում է սուլթանին: «*Լավ,-ասում է,-կսիրուզես, թե որտեղ է սպրում և որ ճանապարհով է անցնում, որ գնա աշխատանքի*»: Վեզիրը ստուգում է և հայտնում սուլթանին, որ սպրում է Պոլսո կամուրջի աջ թաղում, իսկ աշխատում է կամուրջի ցածի թաղում: «*Լավ, վաղ առավոտ մի քանի հոգի կվերցնես, այս փոսպակը կդնես կամուրջի մեջտեղը, քո մարդկանց հետ կթաքնվես: Տեսնենք՝ կվերցնի՞, թե՞ ոչ*»: Վեզիրը այդպես էլ անում է ու թաքնվում է: Հեռվից ձայն է լսվում.«**Թզանըզ փրբ, թզանըզ**»,-գալիս կամուրջի գլխին կանգնում է ու արտասանում.«*Է՛յ ալլահ, այս կամուրջով քսան փարի է՝ աչքերս բաց են անցնում, այսօր փակ աչքերով պիտի անցնեմ*»: Փակում է աչքերը ու փակ աչքերով անցնում: Վեզիրը, վերցնելով տոպրակը, գալիս է պալատ ու հայտնում եղածը: Սուլթանը գլուխը շարժում է.«*Մուսրաֆա՛ փաշա, վաղը առավոտյան կերթաս ու այդ Սելիմին կչերքակալես ու կբերես այստեղ*»: «*Ի՞նչ ես մրածում անել այդ իտեղ՝ մարդուն*»: «*Վերջին անգամ պիտի փորձես*»: «*Լավ*»: Առավոտ փաշայի զգեստով գնում է կամրջի գլխին կանգնում, ձերքակալում է Սելիմին ու բերում է բանտարկում պալատում, հետո հայտնում սուլթանին, որ Սելիմին բերել է: «*Բեր այստեղ*»: Վեզիրը կատարում է սուլթանի հրամանը: Սելիմի լեզուն բռնվում է, նա չի կարողանում պատասխանել սուլթանի հարցերին: «*Սելիմ, հանգստացիր, մի՛ վախեցիր: Փոքր ժամանակ սապանով²⁵⁸ քար նետել՞ էս*»: «*Նետել եմ*»: «*Հիմա կարո՞ղ ես նետել*»: «*Կարող եմ*»: «*Վերցրու՛ այս սապանը, գնա՛ վեզիրի հետ: Մուսրաֆա՛ փաշա, Սելիմին կրանես գլխավոր փողոցի սկիզբը, կկանգնեցնես, այս ոսկի գնդակը կդնես սապանի մեջ, թող նետի: Սելիմ, քեզ տեսնեմ, ինչքան հեռու նետես, այնքան լավ քեզ համար: Այդ գնդակը որտեղ որ ընկնի, քո կանգնած տեղից մինչև այդ տեղը երկու շարքի խանութների վարձը ամեն ամիս դու կհավաքես*»: Ուրախությունից Սելիմի լեզուն բացվում է: Նա խաբար չունի՝ ում հետ է խոսում: «*Ճի՞շտ ես ասում, փաշա*»: «*Ճի՞շտ եմ ասում*»: «*Գնանք*»: Գնում են գլխավոր փողոցի սկիզբը, կանգնում: Սապանը ոսկե գնդակով տալիս են

Սեյիմին: Սեյիմը սկսում է պտտեցնել: Էնքան է պտտեցնում, որ փաշան իր մարդկանցով հետ է փախչում: Սեյ էլ տեսնում են Սեյիմին գետնին փռված՝ ոսկե գնդակը կողքին: Առաջինը վեզիրն է ուշքի գալիս, մոտենում է ու տեսնում, որ Սեյիմը մեռած է: Ոսկե գնդակը բաց թողնելուց հետո դիպչում է հեռագրասյունին ու հետ գալով՝ դիպչում Սեյիմի ճակատին, տեղնուտեղը սպանում: Վեզիրը, գալով պալատ, սուլթանին պատմում է եղածը: *«Ճիշտ են ասում՝ անբախար մարդը անբախար ալ կմեռնի: Գնա՛, ամբողջ ընտանիքը հավաքի՛ր, քե՛ր պալատ, թող պալատի հաշվին ապրեն»:*

Հաճի աղան

Պոլսի մեծ հրապարակում մի փոքր ճաշարան է լինում: Այդ փոքր ճաշարանի տերը մի հայ էր՝ Հաճի աղան: Նա հաճախորդների բերած ճաշերն էր եփում: Այս ճաշարան էին հաճախում Պոլսի լիդերները՝ վեզիրը, դատախազը, զինվորական գլխավոր հրամանատարը, ոստիկանապետը: Մի խոսքով, այս ճաշարանը հասարակ մարդու համար չէր: Մի առավոտ կանուխ Պոլսի հարուստ հրեա վաճառականներից մեկը՝ Ավրամը, շատ գեղեցիկ ամանի մեջ դրած մի սագ է բերում ճաշարան: *«Բարի լույս, Հաճի՛ աղա»:* *«Բարի լույս, Ավրամ՛ն Էփենյրի, ինչպե՞ս ես, աղե՞կ ես»:* *«Ամեն ինչ լավ է, այս սագը լավ կեփես, Մոշոն ընտանյոք հյուր է գալու, իրիկվա դեմ կգամ կվերցնեն»:* *«Անհո՞գ եղիր, Ավրամ՛ն Էփենյրի»:* Հաճի աղան եփելուց հետո սագը հատուկ տեղ է դնում, որ տաք մնա: Ճաշը անցնում է, բոլորը գալիս ճաշում, գնում են իրենց գործերին: Արդեն ամեն ինչ սպառվում է, իսկ Հաճի աղան մոռանում է, որ գլխավոր դատախազը չի եկել: Նստած իր համար ծխում է, մեկ էլ գնդակի նման ներս է ընկնում գլխավոր դատախազը: *«Բարև, Հաճի՛ աղա, գեյի պես անոթի եմ»:* *«Դարախա՛զ Էփենյրի, ոչինչ չկա, շար ուշացար, չու փապակեմ, կե՛ր»:* *«Ի՞նչ է, չե՞ն ես առնում ինչ»,-* ու բացում է հատուկ տեղը ու տեսնում է յուրի մեջ պլպլացող եփած սագը: *«Էս ի՞նչ է»:* *«Ամա՛ն, դրան չեռք չտաս: Հայրնի հրեա վաճառական Ավրամն է բերել, գիշերը հյուր է ընդունելու»:* *«Հեթո ինչ, հրեա-մրեա չեմ ճանաչում, գեյի պես անոթի եմ, դու պարտավոր ես ինչ կերակրել»,-* ասում է, վերցնում ամանով եփած սագը ու դնում սեղանին: Հաճի

աղան շիվարում է, ապա իրար խառնվում: «Ի՞նչ վախկոտ մարդ ես, ամենալավ գինին բե՛ր և նարի՛ր»: «Դատախա՛զ Էփենյոփ, ի՞նչ պատասխան պիտի տամ»: «Ըն գործը չէ, կասես, որ եփելուց հետո սազը թռավ: Եթե չի հավարտ, կբերես ինչ մոտ՝ դատախազություն: Ես միևնույն ուշ այնպեղ եմ»: Նա, մի կշռաքար վերցնելով, նետում է ու բարձր ապակիներից մեկը ջարդում: «Կասես, ապակին ալ ջարդեց, թռավ»: «Դատախա՛զ Էփենյոփ, դու հավարտո՞ւմ ես քո ասածին»: «Նարի՛ր, շար գլուխ մի՛ ցավցնե»: Հաճի աղան դատախազի հետ նստում, միասին սազի ոսկորներն էլ ուտում են: Գլխավոր դատախազի գնալուց հետո Հաճի աղան տեսնում է, որ Ավրամը մենակ չի գալիս, Մոշոն ալ հետն է: Հաճի աղան վախկոտ մարդ չէր, բայց ամոթ էր զգում, որ այդքան մեծ սուտ խոսի: Անգամ հիմարը չի հավատա, որ սազը եփելուց հետո կթռչի: «Բարե՛, Հաճի՛ աղա, սազը պատրաստ է»: «Այդ ինչ սազ ես բերել, եփելուց հետո թռավ, նաջի՛ր, ապակին ալ ջարդեց, գնաց»: «Հաճի՛ աղա, խո չես խելագարվել»: «Էդպես է, թռավ»: Երկուսը մեկեն հարձակվում են վրան: Հաճի աղայի ձեռքը մի ձող է լինում, որով էլ հանում է Մոշոյի աչքը: «Վա՛յ» ասելով՝ Մոշոն բռնում է գլուխը: Հաճի աղան, տեսնելով, որ գործը բարդանում է, իրեն դուրս է գցում ու վազում դեպի դատախազություն: Երկու հրեաները վազում են հետևից՝ բռնե՛ք, բռնե՛ք: Մի մարդ իր հոլի կնոջ հետ գնում է ճանապարհով, որ լսում է՝ բռնե՛ք, բռնե՛ք, ուզում է բռնել Հաճի աղային: Հաճի աղան հրում է մարդուն կնկա կողմը: Կինը ընկնում է ու տեղնուտեղը վիժում է: «Վա՛յ, քո հերևն անիծես», -ասում է այս թուրքը ու միանում հրեաներին: Հաճի աղան, տեսնելով, որ հալածողները դարձան երեքը, ճարահատյալ մտնում է ճամփ: Տեսնելով, որ իրեն նորից հալածում են, բարձրանում է միևարեն: Բայց հալածողները նույնպես բարձրանում են: Նայում է ցած, այնքան էլ բարձր չէ, խաչ է հանում ու նետվում ցած և թարսի նման ընկնում է մի մարդու վրա, որը տեղնուտեղը մեռնում է: Մարդու եղբայրը միանում է հալածողներին ու «բռնե՛ք» բռռալով՝ վազում հետևից: Դատախազության շենքի դիմաց Հաճի աղայի ճանապարհն է կտրում մի հաղթանդամ մսավաճառ: Հաճի աղան մի ուժեղ ապտակ է տալիս մսավաճառին ու մտնում է դատախազի սենյակը, նրա հետևից էլ՝ հինգ հոգի ուրիշ մարդ: Դատախազը զար-

մանում է, նա մի հոգու էր սպասում: «Ի՞նչ է պարտախել»: Բոլորը մեկեն են խոսում: «Կայնե՞ք, Հաճի՛ աղա, բացարթի՛ր»: «Ավրամից սկսի՛ր, մասվաճառով վերջացրու՛»: «Ավրամ, ի՞նչ ես ուզում Հաճի աղայից»: «Դարտախա՛զ էփենրի, մի սագ րարա, որ եփի, ասում է, որ եփելուց հետո թռավ»: «Հաճի՛ աղա, ճի՞շտ է»: «Հա՛, ճիշտ է, թռավ»: Դատախազը վերցնում է մի հաստափոր օրենսգիրք, թերթում է ու ասում.«Ավրամ էփենրի, Գերմանիայում մի տեսակ սագեր կան, որոնք եփելուց հետո թռչում են: Չե՞ս հավատում»: «Հավատում եմ»: «Գնա՛»: Ավրամը գլուխը կախ դուրս է գնում: «Մոշո՛, քեզ ի՞նչ է պարտախել»: Մոշոն աչքը բռնած կանգնել էր.«Դարտախա՛զ էփենրի, Հաճի աղան աչքս հանեց»: Դատախազը նայեց Հաճի աղային՝ ճի՞շտ է: «Հա»,-գլուխը շարժեց Հաճին: Դատախազը սկսեց օրենքի գիրքը թերթել.«Մոշո՛, հիմա լա՛վ լսիր, թե ինչ է գրված օրենսգրքի մեջ: Օտար դարեր առաջ, երբ Հրեաստանում իմաստուն Սողոմոնն էր թագավորում, Հայաստանում թագավորում էր Աբգարը: Երկու թագավորների մեջ պայմանագիր կար, որ եթե հայը երկու աչք ունի, ապա հրեան մի աչք պիտի ունենա: Հիմա ա՛ռ այս չոդը ու հանի՛ր Հաճի աղայի մի աչքը: Սակայն այս պայմանագրի համաձայն՝ Հաճի աղան պետք է հանի քո մյուս աչքը: Եթե Հաճի աղան մի աչք ունենա, ապա դու աչք չպիտի ունենաս: Համաձայն ես»: «Ո՛չ, դարտախա՛զ էփենրի, մի գլխին մի աչքը հերիք է»: «Դու գիտես»: Մոշոն ալ գնում է: «Ես իմ հղի կնոջ հետ ճանապարհով գնում էի, մեկ էլ լսեցի՝ բռնե՛ք: Այս մարդը վազում էր, ուզեցի բռնել: Հրեց ինչ, ընկա կնոջս վրա: Կինս վիժեց»: «Վա՛յ, Հաճի՛ աղա, վա՛յ, այդ ի՞նչ ես արել»: Հաճի աղան գլուխն է շարժում: «Անունդ ի՞նչ է»: «Հասան»: «Հիմա ինչ լա՛վ լսիր, Հասան՛ն, կնոջդ կողարկես Հաջի աղայի րունը, մի շաքաթ կմնա, նորից կիղիանա»: Հասանը նայում է դատախազին, բռունցքը ցույց տալիս ու հեռանում: «Քեզ ի՞նչ է պարտախել»: «Այս մարդը, որին Հաճի աղա են կոչում, միևարեից ցարկեց եղբորս վրա, եղբայրս մեռավ»: «Հաճի՛ աղա, ճի՞շտ է»: Հաճի աղան գլուխն է շարժում: «Անունդ ի՞նչ է»: «Մեհմեդ»: «Մեհմեդ, հիմա ինչ լա՛վ լսիր: Կերթաք միասին ճամի, դու կբարչրանաս միևարե, Հաճի աղան միևարեի տակ կկանգնի, դու կցարկես վրան ու Հաճի աղային կպանենա»: «Դարտախա՛զ էփենրի այդ չեղավ»:

«Դու գիրես», - ու մի ձեռքով էլ թուրն է ցույց տալիս: Մեհմեդն էլ է գնում: «Դու ի՞նչ ես ուզում»: «Այս մարդը ինչ մի սպրակ զարկեց»: «Հաճի՛ աղա, ճիշտ է»: Հաճի աղայի լեզուն բացվում է, կրկնում է՝ հա՛, ճիշտ է: Դատախազը թերթում է օրենսգիրքը ու հայտարարում: «Մի սպրակի համար փուժողը պետք է ոսկի սրանա: Հաճի՛ աղա, այս մարդուն հարյուր ոսկի՛ փուր»: «Մոլորս դուրուչ ալ չկա, գնամ քերեմ», - ու ճղում է արանքը: Մսավաճառը սպասում է կես ժամ, մի ժամ: Դատախազը գիտեր, որ Հաճի աղան չի վերադառնալու, բայց չէր սպասում, որ մսավաճառը այսքան համբերություն ունի: Մսավաճառի համբերությունը հատնում է, մոտենում է գլխավոր դատախազին՝ *դարասիսա՛զ էփենլրի*: Դատախազը գլուխը կախ օրենսգիրքն է թերթում: Նա գլուխը վեր է բարձրացնում: Մսավաճառը մի այնպիսի ապտակ է տալիս գլխավոր դատախազի այտին, որ աչքերից կայծ է թռչում: «Է՛, *դարասիսա՛զ էփենլրի, Հաճի աղան որ հարյուր ոսկին քերի, դու՛ վերցրու*», - ասում է մսավաճառն ու հեռանում:

Այս անեկդոտները մեզ պատմեց մի հայ թղթակից, որի հետ ծանոթացանք Պոլսում թափառելու ժամանակ:

*
* *
*

Մի առավոտ գնացինք բուլղարական հյուպատոսարան: Հյուպատոսը հայտնեց, որ մեր տորպեդոն պետք է վերադառնա Բուլղարիա՝ Վառնա՝ իր բազան: Կապիտանը նկատեց իմ ուրախությունն ու քթի տակ ծիծաղեց: «Ե՞րբ եք մեկնելու այսպրեդից»: «Ամեն ինչ պարասարե՛ք, առավորյաս կմեկնե՛ք: Ես կգամ չեզ ճանապարհ դնելու»: Հյուպատոսը մեզ հյուրասիրեց սուրճով ու կոնյակով: Հետո նախաճաշեցինք: «Գնանք, պատրաստվենք վաղվա համար»: «Կապիտան՛ն, դրամի նեղություն չքաշես, ինչ մոլոր կա»: «Չէ՛, մենք մի փարուց ավել վարչ չէինք սրացել: Երեկ հյուպատոսը ինչ հարյուր հազար լիա հանձնեց, որ բաժանեմ փորպեդոյի անչնակազմին: Մի բան էլ քեզ է հասնում»: «Ինչ պետք չէ, բաժանե՛ք իրար մեջ»: «Հիմա գնանք մեր փորպեդոն՝ դրամները բաժանեմ: Ամեն ծովային կուզի նվեր առնել իր ընտանիքի համար»: Գնացինք, բարձրացանք տորպեդոն: Կապիտանը հայտնեց, որ վաղ առավոտ մեկնում ենք:

Մի այնպիսի «ուռա» բարձրացավ, որ մեր կողքի նավակների տերերը, որ հարյուրներով են լողում ծովի վրա, վախեցան: Հետո կապիտանը հայտնեց, որ մի տարվա վարձն է բաժանելու: Երկրորդ «ուռան» թնդաց: Կապիտանը, մի տարվա վարձը բաժանելով, հրամայեց, որ երկու հոգի մնա տորպեդոյում, իսկ մյուսները գնան իրենց ընտանիքների համար նվերներ առնելու: «Իվան, դու և Պեդրո երկու ժամ շուր կգաք, որ չեք երկու ընկերներն էլ գնան առևտրի: Ժամը վեցին բոլորն ըլլան այսրեդ»: «Լուսն հեք, կապիտան: Գնանք, մեզ համար առևտուր անենք»: «Ու՞ր գնանք»: «**Կարալ շարշը, այնրեդ ամեն ինչ կճարենք**»: «Կապիտան, գնանք ճաշենք, ես անոթի եմ»: «Իմ ախորժակը բացվեց»: Գնացինք ամենահայտնի «Լոնդոն» հյուրանոց-ճաշարանը: Մատուցողը եկավ և շատ հարգալից բարևեց: Թուրքերեն հարցրեց, թե ինչ մատուցի: Կապիտանը, չնայած թուրքերեն գիտեր, ինձ աչքով արեց: Ես հասկացա. «**Հարյուր-հարյուր գրամ կոնյակ, երկու հարյուր գրամ ընդիր շոկոլադ, չեք ամենալավ ճաշերից՝ մեկ-մեկ բաժին**»: Կապիտանը, նայելով ինձ, ասաց. «Չե՞ս ասում, իմ ամսվա վճարս ու՞ր է»: «Կապիտան, ես քեզ ասացի, որ ինչ դրամ պետք չէ»: «Բայց ես տորպեդոյի անձնակազմին ասացի, որ դու հրաժարվում ես քո բաժնից: Անձնակազմը վրդովված ասաց, որ քեզ էլ մորցնենք ցուցակի մեջ և բաժինդ տանք: Այնպես որ, ինչ մոտ ունես հազար լիս»: Շան որդի մատուցողը ամեն ինչի լավը բերեց, շատ սուղ մստեց վրաներս: Կապիտանը հանեց դրամապանակը, ինձ հանձնեց երկու հինգհարյուրանոց թղթադրամ և իմ տված հինգ ոսկիները: Ես առարկեցի ոսկիների համար: Նա ասաց, որ հյուպատոսին ամեն ինչ պատմել է իմ մասին, և հյուպատոսը վճարել է իմ՝ բուլղարական պետությանը ունեցած պարտքը: Երկուսս էլ ծիծաղեցինք: «**Հիմա գնանք առևտրի**»: Երկու ժամ տևեցին խանութներում մեր թափառումները: Երկու մեծ լեցուն պայուսակով վերադարձանք տորպեդո: Արդեն ժամը վեցի մոտերն էր, երբ բոլորը հավաքվեցին: «**Պա՛յ Սրոյան**»: «Լուսն եմ, կապիտան»: Պետք է սսեր «գոսպողին կապիտան», բայց գերի ընկնելուց հետո կապիտանը «գոսպողինը» վերացրել էր, այնպես որ բոլորն էլ կապիտան էին ասում: «**Վերցրու՛ երկու-երեք ծովային, գնա՛ քաղաք: Մթերք ունենք, խմի՛չք վերցրեք: Էսօր մեր վերադարձի առթիվ**

մի ուրախությունն անենք: Մի քսան կիլո քարն երշիկ վերցրեք: Քեզ եմ թողնում: Ամեն ինչի լավը կբերես: Պայուսակներ վերցրեք»: «Կապիտան, ես էլ երթամ»: «Երեք հոգին քիչ է, հի՛նգը վերցրեք: Պայ Սյրոյան, վերջում հաշիվը կներկայացնես ինչ»: «Լսում եմ, կապիտան»: Հինգ-վեց հոգով գնացինք քաղաք: Մի ժամից եկանք լավ բարձված: «Այ րնաշեններ, ամբողջ Պոլիսը վերցրե՞լ եք»: Արդեն սեղանները վերին հարթակում պատրաստել էինք: Բոլորը նստեցին: Կապիտանը վեր կացավ, բաժակ վերցրեց: «Ծովայիններ, ութ-ինը ամիս առաջ հեռացել ենք մեր հարազատ հայրենիքի ասիերից, վաղը մենք ճանապարհ ենք ելնում դեպի մեր ասիերը: Խմենք մեր անվրանգ ճանապարհորդության կենսաքը»: Նորից թնդաց «ուռան»: Կերուխումը տևեց մինչև կեսգիշեր: Առավոտ արդեն բոլորն անցել էին իրենց գործին, մաքրում էին ու լվանում: Տորպեդոն փայլում էր մաքրությունից: Ժամը տասին եկավ հյուպատոսը՝ բարձրաստիճան թուրք ծովայինների հետ: Բացի կապիտանից՝ բոլորս շարք կանգնեցինք: Կապիտանը դիմավորեց եկողներին: Հյուպատոսը և բարձրաստիճան թուրք ծովայինները բարևեցին մեզ: Բարձրացավ լոցմանը՝ իր օգնականների հետ, և տորպեդոյի հրամանատարությունը վերցրեց իր ձեռքը: Լոցմանը տորպեդոն ուղղեց դեպի Բոսֆորի նեղուցը: Շատ դժվար անցանք Բոսֆորը: Նեղուցը լիքն էր ամեն տեսակ նավերով, կատերներով: Մի կողմի էր թեքվել «Համիդիե» փոքր գրահանավը: Ջրից մի քանի սանտիմետր վերև երևում էր անցքը, որը դեռ չէր նորոգված: Այդ ավերածությունը 1913թ. Բալկանյան պատերազմի ժամանակ արել էր բուլղարական «Ստրոգիյ»²⁵⁹ տորպեդոն («Խիստ» ականակիրը) Սև ծովում: «Համիդիեի» հրամանատարությունը մի կերպ նավը մտցրել էր Բոսֆոր, հատուկ հարմարություններով թեքել էին մի կողմի վրա և այդպես թողել: Մեր ծովայինները մի հատ էլ «ուռա» կբռային, եթե թուրք ծովայինները տորպեդոյում չլինեին:

Առավոտ Բոսֆորից դուրս եկանք: Աշման հրաշալի օր էր: Սև ծովը արեգակի ճառագայթների ներքո հանդարտ փայլում էր: Թուրք բարձրաստիճան ծովայինները և լոցմանը՝ իր օգնականներով, հեռացան մեր տորպեդոյից, իսկ հյուպատոսը մնաց մեզ հետ և ուղեկցեց մինչև Վառնա: Կապիտանը վերցրեց մեր տորպեդոյի հրամա-

նատարությունը և նավը ուղղեց դեպի Բուլղարիա՝ Վառնա:

-Կապիտան, ե՞րբ կհասնենք Վառնա:

-Եթե դեպք չպատահի, երկու օրվա ճանապարհ է:

Վառնայի նավահանգիստը

Կեսօրին կապիտանը, դեկը հանձնելով իր օգնականին, հյուպատոսի հետ գնաց իր առանձնասենյակը: Ես կանգնած էի վերին հարթակում և նայում էի դեպի թուրքական ափը: Կամաց-կամաց ափից հեռացանք: Չորսբոլորը ծով էր, միայն մեզնից մեկ կիլոմետր հեռու դելֆիններն էին խաղում: Ես մտածում էի, թե ինչ դեպքեր էին կատարվել այս տարիներին իմ՝ Պլովդիվից հեռանալուց հետո: Արդյոք հայրս անցե՞լ էր Բուլղարիա, թե՞ զոհվել էր պատերազմում: «Գուպողի՛ն պորուչիկ, -ինչ այդպես էին դիմում, -կապիտանը քեզ է կանչում»: Գնացի կապիտանի առանձնասենյակը: Կապիտանը հյուպատոսի հետ նստած գրուցում էր: «Արի՛, պորուչիկ: Սա այն երիտասարդն է, որի մասին պարմեցի: Նսրի՛ր, Անյո՛: Հիմա սուրճ կբերեն»: «Կապիտան, մի բոպեով, հիմա կգամ»: Ես մի շիշ բուլղարական կոնյակ էի ճարել և մի սալիկ շոկոլադ²⁶⁰: Վերադառնալով սեղանին դրեցի շիշը: «Այդ ի՞նչ է»: «Նայի՛ր, -կապիտանը վերցրեց շիշը, -բուլղարական կոնյակ»: «Կապիտան, շների ջրերից դուրս չեկա՞նք»: Կապիտանը նայեց ինձ ու շարժեց գլուխը. «Թուրքիայում բուլղարական հյուպատոսի մոտ այդպես՞ես անվանում թուրքերին»: Ես շփոթվեցի: Հյուպատոսը բռնեց ձեռքս: «Նսրի՛ր, քեզ շարեն վառել»: «Անյո՛, ցույց տուր թգրեհը»: «Կապիտան, կարիք չկա»: «Հրամայում եմ»: Ես միշտ ինձ մոտ էի պահում փոքր պայուսակը, հանեցի թգրեհը, ցույց տվեցի: Հյուպատոսը նայեց. «Ես շար գազանությունների մասին էի լսել, բայց սա անողը չափն անցել է»: «Ես սրա տիրոջը մասից ազատեցի, բայց հետո սրիպված այլանդակեցի»: «Անյո՛, կարո՞ղ էր ողջ մնալ»: «Ես ողջ տուն ուղարկեցի: Մայրը շար հմուտ հեքիմ է: Հնարավոր է, որ ողջ մնաց: Ես շար էի ուզում, որ ողջ մնար»: Մինչ այդ սուրճը բերին: «Կապիտան, դու ինչ չպարասիսանեցիր»: «Հա՛, շների ջրե՞րը... դեռ կա: Վաղ առավոտյան արդեն բուլղարական ջրերը կմրմենք: Հիմա բա՛ց կոնյակը, որտեղի՞ց ճարեցիր»: «Էն հայ թղթակիցը տվեց, որ անեկդորներ էր

պատմում: Ասաց՝ ճանապարհին կիսմեք: Շատր հին կրլլա»: Հյուսպարտը նայեց շին.«Տասը թվի է: Ինչքան հին, այնքան լավ»: Հյուսպատոսը իր ձեռքով լցրեց.«Բարչրացրե՞ք բաժակները: Չեր վերադարձի համար... Կոնյակը իսկապես որ լավն էր,-հյուսպարտը նայեց ինչ,-Բուլղարիա երթալուց հետո ի՞նչ ես անելու»: «Շարունակելու եմ ուսումս»: «Լավ ես մտածել»:

Ժամանակն անցնում էր: Մինչև ուշ գրուցեցինք: Հյուսպատոսը, շնայած ամեն ինչ գիտեր իմ մասին, սակայն ուզում էր, որ ես պատմեմ: Պատմեցի թուրքերի վայրագությունների մասին: «Բայց դու վրեժդ լուծեցիր»: «Քիչ չեն այն գոհերը, որ Կովեց հայ ժողովուրդը: Կգտնվեն մարդիկ, որոնք դեռ վրեժ կլուծեն: Էնվերը, Թալեսթը, Նազրընը դեռ ողջ են, դրանցից դեռ պետք է վրեժ լուծվի»: Կապիտանը ծիծաղեց: «Կապիտան՛ն, ինչու՞ ես ծիծաղում: Քի՞չ են արել բուլղարներին: Հինգ հարյուր տարի ծծեցին բուլղար ժողովրդի արյունը: Ո՞վ չի Կոնյակը թուրքերից՝ հույներ, սերբեր, հայեր, բուլղարը»: Արդեն ուշ էր: Ես բարձրացա.«Գտնեմ պայ Սյրոյանին, որ հաշվենք ծախսած դրամը ու ներկայացնենք կապիտանին»:

Պայ Ստոյանը, նստած նավաստիների սենյակում, ծխում էր: «Պայ Սյրոյան, ցուցակ կազմեցի՞ր»: «Հա՛, պարտաստ է»: «Ինչքա՞ն է»: «Մի հազար հինգ հարյուր լևա»: «Նոր ցուցակ կանենք»: «Ինչի՞ համար»: «Հինգ հարյուր լևան իմ հաշվին կանես, հազար լեվան կներկայացնես կապիտանին»: «Լսում եմ, գոսպողին պորուչիկ»:

Գնացի իմ նավասենյակը. պառկելս ու քնելս մեկ եղավ: Առավոտ «ուռա» բացականչություններ լսեցի: Արագ, արագ հագնվեցի, բարձրացա վերևի հարթակը: «Բարի լույս, կապիտան՛ն»: «Հա՛, գոսպողին պորուչիկ, շներից ազատվեցիր: Վերցրու՛ հեռադիտակը, նայի՛ր բուլղարական ափերին»: Նավաստիներից մեկը տվեց հեռադիտակը: Նայեցա. մշուշի մեջ տեսանելի էր ափի բարակ շերտը: Մինչ այդ հյուսպատոսն էլ եկավ, նա էլ էր հեռադիտակով նայում: «Էլ վախի չունես թուրքերից»: «Ես ոչ մի վախ չեմ ունեցել շներից: Ամեն թեժ կռվի ժամանակ անցնում էի թփից թուփ, ծառից ծառ, միայն թե իմ գնդակը պարսպ չգնար: Ամենաթեժ մարտը վերջինն էր, որտեղ գոհվեցին մեր մարդիկ: Մինչև վերջ կրակում էի, և իմ ամեն մի կրա-

կոցը մի սակյարի էր գեյրնին րասպալում»։ «Քեզ գնդակ չէ՞ր դիպչում»։ «**Իմ անունը Անդրանիկ է, Անդրանիկ անուն ունեցողին գնդակ չի դիպչում։ Գեներալ Անդրանիկը շատ փարիներ կովել է քուրք սակյարների դեմ, բուլղարների կողմից մասնակցել Բալկանյան պատերազմին, ոչ մի անգամ չի վիրավորվել**»։ «Հյուսպարո՛ւ, գնանք, սրա պատմությունը չի վերջանա։ Պորու՛չիկ, գնա՛, վերևի հարթակում բոլորի համար սեղա՛ն պատրաստիր»։ Կես ժամ հետո արդեն ամեն ինչ պատրաստ էր։ Ինչքան մթերք կար, հանել դարսել էինք սեղանների վրա. խմիչքը քիչ էր։ Եկան կապիտանն ու հյուպատոսը, մյուս սպաներն էլ բարձրացան վերև։ «**Պա՛յ Սյրոյան, գնա ասա՛ թող շարժչներն անջարեն, ու բոլորը վերև բարձրանան**»։ «**Լսում եմ, գոսպողի՛ն կապիտան**»։ «**Պա՛յ Սյրոյան, այդ ի՞նչ եղավ քեզ**»։ «**Գոսպողի՛ն կապիտան, էլ գերության մեջ չեմք**»։ «**Կատարի՛ր հրամանը։ Հիանալի մարդ է պայ Սյրոյանը**»։ Բոլորն արդեն բարձրացել էին վերևի հարթակը։ «**Լցնել բոլոր բաժակները... Նավաստիներ, մենք ցարական Ռուսաստանում գերության մեջ շատ րառապեցինք, հեյրո՛ թուրքական ավերում մինչև Պոլիս հասնելը։ Այդ ամենը մնաց հեյրևում։ Հիմա մենք մեր հարազատ ջրերում ենք։ Վաղ առավոտյան կլինենք Վառնայում՝ մեր բազայում։ Խմենք գերությունից մեր ազատվելու առթիվ**»։ Թնդաց հզոր «ուռան», բոլորը դատարկեցին բաժակները։ Խոսեց հյուպատոսը ու շնորհավորեց բոլորին վերադարձի առթիվ։ Կես ժամ հետո արդեն բոլորն անցան իրենց աշխատանքին։

Տորպեդոն ամբողջ հզորությամբ գնում էր առաջ։ Կապիտանը սկզբից չնախազգուշացրեց Վառնա ժամանող «Սմելիյ» տորպեդոյի մասին, որ մեծ աղմուկ չբարձրանա՝ ի նկատի ունենալով, որ գերությունից ենք վերադառնում։ Այդ գիշեր ոչ մեկը չքնեց, երգում և ուրախանում էինք։ Առավոտ երևաց հարազատ օփը։ «**Սմելին**» ուղիղ իր բազան գնաց, որտեղ կանգնած էին երկու տորպեդոները՝ «**Գերսկին**»²⁶¹ և «**Խրաբրին**»²⁶²։ Ամբողջ գորանոցի ծովայինները դուրս թափվեցին՝ զարմանալով, թե որտեղից հայտնվեց «**Սմելին**»։ Արդեն «**Սմելու**» անձնակազմը շարք էր կանգնած, երբ տախտակամած բարձրացավ ինքը՝ **աղմիրալը**։ Ողջունեց անձնակազմին ու գնաց կապիտանի հետ։ Մի ժամից գորանոց եկավ կապիտանը։ Բոլորը հավաքվեցին շուրջը։ «**Ծովայիններ, չեզ մի ամիս արշակուրդ է**

տրվում: Հինա կգա գովչիչնիզը՝ դրամ բաժանողը, կստանաք երկու ամսվա ռոճիկ, կգնաք շեր տները, մի ամսից կվերադառնաք: Հաջողություն եմ ցանկանում բոլորիդ: Գնանք, գոսպողի՛ն պորուչիկ»: Իջանք նրա առանձնասենյակը: Հյուպատոսը նստած ծխում էր: «Հը, գործերդ ինչպե՞ս են»: «Ոչինչ, այս երկու օրը գնալու եմ Սոֆիա՝ զինվորական նախարարություն՝ զեկուցելու մեր բացակայության մասին»: «Միասին ենք գնալու, ես էլ Սոֆիա պիտի գնամ»: «Գոսպողի՛ն կապիրան, գոսպողի՛ն պորուչիկ, եկեք սրացե՛ք շեր ռոճիկները»: «Անտո՛, քո նոր փաստաթղթերը պատրաստ եմ, կգնաս յոթերորդ սենյակ ու կստանաս, ցերեկը քաղաքում կանցկացնես, գիշերը՝ փորպեղոյում»: «Լսում եմ, գոսպողի՛ն կապիրան»: «Երկու օր հետո երեքով կգնանք Սոֆիա, ապա՝ Պլովդիվ՝ շերունց մոտ»:

Ես երկու օր թափառեցի Վառնայում: Վառնան փոքր գյուղաքաղաք էր՝ նեղ փողոցներով, երեքհարկանի տներով: Միայն մի փողոց կար, որ ուներ հինգ-վեցհարկանի տներ: Այդ փողոցը կոչվում էր «**Ցար Ֆերդինանդ**»: Ծովից մի հիսուն մետր բարձրության վրա էր գտնվում չորս կիլոմետր երկարությամբ, հինգ հարյուր մետր լայնությամբ ծովային պարտեզը՝ «**Մորսկայա կրապինան**»: Այս գեղեցիկ պարտեզում աճում էին հաստաբուն և մատղաշ ծառեր, կար շատ մեծ մի ավազան, որտեղ խաղում էին զանազան ձկներ:

Երկու օր հետո մենք ճանապարհ ընկանք դեպի Սոֆիա: Երեսուն ժամ տևեց Վառնայից դեպի Սոֆիա ընկած ճանապարհը: Սոֆիան եռում էր: Ցար Ֆերդինանդը, կոալիցիայի պատերազմից դաս չառած, նորից մտել էր նոր՝ Գերմանական կոալիցիայի մեջ, նորից զավթել էր Էգեյան ծովի ափերը: Գերմանիան ապրում էր իր վերջին օրերը: Վերդենի տակ ջախջախվելուց հետո հաշտություն էր խնդրել Անտանտից: Նոյ քաղաքում²⁶³ կնքված պայմանագրի համաձայն՝ Բուլղարիան պետք է հետ քաշեր իր զորքերը Էգեյան ծովի ափերից և Ռումինիային հանձներ հարավային Գորբուջան, որն ուներ մոտ ութ հազար քառակուսի կմ տարածություն, որը Բուլղարիայի **ժիլկուցան** էր և աչքի էր ընկնում ցորենի առատությամբ: Բուլղարիան վճարելու էր մեծ ռազմատուգանք: Հետևանքը ցար Ֆերդինանդի տապալումն էր, ինչից հետո գահ բարձրացավ Բորիս III-ը: Բորիս I-ը այն ցարն էր, որի գահակալության ժամանակ Բուլղարիայում քրիս-

տոննությունը ընդունվեց որպես պետական կրոն: Յար Բորիս II-ի մասին պատմությունը շատ քիչ բան գիտի: Այսպիսի վիճակ էր Սոֆիայում, երբ մենք ժամանեցինք: Երկու օր մնացինք Սոֆիայում:

Գեայի Պլովդիվ

Կապիտանը իր գործերը վերջացնելուց հետո ինձ հետ ուղևորվեց Պլովդիվ: Հյուպատոսը մնաց Սոֆիայում, շատ ջերմ բաժանվեցինք:

-Անտո՛, շատ տխուր ես, ամեն ինչ լավ կլինի:

-Չէ՛, գոսպողի՛ն կապիտան, հորիցս ոչ մի տեղեկություն չունեմ: Հույս ունեմ, որ անցել է Բուլղարիա: Այդ ինձ շատ է մտահոգում:

Գնացքը, որը նստեցինք, իր ճանապարհը սկսում էր Բեռլինից, ապա գնում Վիեննա, Բելգրադ, Սոֆիա, Պլովդիվ, որտեղ կանգնելով երկու րոպե՝ գնում էր ուղիղ Պոլիս: Այս գնացքը իսկապես առավոտ շուտ մեզ հասցրեց Պլովդիվ: Օգոստոսի վերջերն էր, ամբողջ քաղաքը կորած էր կանաչ այգիների մեջ: Փոքր ժամանակ չէի նկատել, որ Պլովդիվը այսքան գեղեցիկ է: Միտքս հայտնեցի կապիտանին:

-Պլովդիվը մեծ ապագա ունի: Տարիների ընթացքում նա մեծ և սիրուն քաղաք կդառնա: Անտո՛, ու՞ր ես ուզում սկզբից գնալ:

-Գնանք մի սրճարան, մի-մի բաժակ սուրճ խմենք, հանգստանանք: Ես էլ նյարդերս²⁶⁴ հանգստացնեմ:

Կայարանամերձ հրապարակում՝ հինգհարկանի բնակելի շենքի տակ, շատ մաքուր սրճարան էր բացվել: Առավոտ քիչ հաճախորդներ կային: Նստեցինք մի փոքր սեղանի առաջ: Կապիտանը շատ մաքուր էր հագնված, ես էլ՝ նույնպես. պորուչիկի ուսաթևերով էի: Մատուցողը, մեզ որ նկատեց, իսկույն մոտեցավ:

- Գոսպողի՛ն կապիտան, ի՞նչ եք հրամայում:

-Հարյուր-հարյուր գրամ կոնյակ, երկու թիչգո սլաթկո՝ շատ անուշ սուրճ:

-Կոնյակը արտոնված չէ, բայց ձեզ համար կարելի է: Հետևե՛ք ինձ:

Կապիտանը նայեց ինձ:

-Գնանք:

Մատուցողը մեզ տարավ մի փոքրիկ, շատ լավ կահավորված սենյակ:

Այստեղ կարող եք վերարկուները հանել ու հանգիստ նստել: Ես հիմա կբերեմ ձեր պատվերը: Մինչև մենք խմում էինք մեր սուրճն ու կոնյակը, ներս մտավ սև մորուքով մի հիսուն տարեկան մարդ:

-Ռագրեշիտե, զոսպողի՛ն կապիտան, արտոնեցե՛ք, զոսպողի՛ն կապիտան: Ես հին ծովային եմ, ծառայել եմ «Խրաբրիյ» տորբեդո-յի վրա, կռվել եմ թուրքերի դեմ, 1912թ.²⁶⁵ հետո զորացրվել եմ: Հիմա այս սրճարանն եմ պահում:

Եղավ ժամը տասը:

-Գնանք, կապիտա՛ն:

-Գնանք:

Գրամապանակը հանեց, որ վճարի: Ծեր ծովայինը առարկեց:

-Ամոք է, կապիտա՛ն:

Մեզ մինչև դուռը ճանապարհեց:

-Գոսպողի՛ն կապիտան, նորի՛ց համեցե՛ք:

-Կզանք:

Հարազատներիս գրկում

Մենք գնացինք դեպի այն թաղը, որտեղ գտնվում էին հարազատներիս տները: Արդեն շոգ էր, բայց ես դողում էի: Կապիտանը նկատեց իմ հուզմունքը:

-Անտո՛, ի՞նչ ես անում, հո երեխա չե՞ս:

-Ոչինչ, կանցնի:

Մի կես ժամ անց արդեն կանգնած էինք մեծ մորս դռան առաջ: Մեծ մայրս պարտեզում տնային թռչուններին կեր էր տալիս: Գարպասը բացեցի, մտանք պարտեզ: Մեծ մայրս նայեց մեզ:

-Բարի լու՛յս, տիկի՛ն Ստոյանկա:

-Բարի լու՛յս,-աչքերը ճպճպացնելով մեզ նայեց մա:

«Մե՛ծ մայր» ասելով՝ գնացի առաջ: Մի ակնթարթում փոխվեց.

-Անտո՛, զավա՛կս, կլիներ, որ չպահեի կրծքիս:

Արցունքներս արդեն թրջել էին աչքերս, լաց էի լինում՝ մեծ մորս ամուր գրկած:

-Չավա՛կս, այս որտեղի՞ց,-միանգամից սթափվեց,-Արշալու՛յս, տե՛ս՝ ով է եկել:

Նայեցի հորեղբորս տան ուղղությամբ: Պատշգամբում երևաց հո-

րեղբորս կինը՝ իր երկու զավակների հետ: Երեքն էլ վազեցին ու ինձ խեղդելու էին, եթե կապիտանը չմիջամտեր.«Ի՞նչ եք անում, խեղդելու եք մեր պորուչիկին»: Լացն ու ծիծաղը խառնվեցին իրար: Մեծ մայրս կանգնած նայում էր այս սրտաճնլիկ տեսարանին: Առաջինը սթափվեց հորեղբորս կինը:

-Էդվարդ, վագիր և հորդ ու պայ Գմիտրիին ասա՛ թող գան: Բռնեցի հորեղբորս կնոջ ուսերից ու նայեցի աչքերի մեջ:

-Հայրս ո՞ր է, չեկա՞վ Բուդարիա:

Հորեղբորս կինը ապշած երեսիս էր նայում:

-Հայրդ այս կողմերում չի երևացել: Որտե՞ղ էր որ:

-Մեր գյուղ հասնելուց միառժամանակ հետո հորս բանակ տարան՝ մասնակցելու Բալկանյան պատերազմին: Չվերադարձավ, հույս ունեի, որ անցել է Բուդարիա:

-Չեր՝ Թուրքիա գնալուց հետո՝ սկսվեց պատերազմը, ձեզանից ոչ մի լուր չունեինք, պատերազմից հետո նույնպես:

-Էլի մի գոհ, աշխարհում ոչ ոք չմնաց ինձ հարազատ, ի՞նչ սև ճակատագիր եմ ունեցել:

Մինչ այդ եկան մեծ հայրս և հորեղբայրս՝ Վահանը: Ընկա մեծ հորս գիրկը: Վահանի աչքերը լցվել էին, գրկեց ինձ, համբուրեց: Նայեց չորս կողմը, զգացի որ հորս է փնտրում:

-Չկա, հորեղբայր Վահան, չկա: Ոչ ոք չկա՝ Անուշ մայրիկն ալ, հորեղբայրս ալ, կինն ալ: Միայն ես հրաշքով փրկվա և հասա այստեղ:

-Վա՛յ մեզ, վա՛յ, է՛յ Աստված, ո՞նց ես հանդուրժում այդ պիղծերին, որոնք այդքան անմեղ արյուն են թափում և կրակ ու պատիժ չես թափում գլուխներին:

-Մե՛ծ հայր, հորեղբայր Վահան, ծանոթացե՛ք կապիտան Իվանովի հետ: Կյանքիս կեսը նա է փրկել:

Կապիտանը մոտեցավ, սեղմեց հարազատներիս ձեռքերը:

-Չեր Անտոն շատ է տառապել, քանի-քանի անգամ է մահը գլխին կախվել, բայց հաղթահարել է ամեն վտանգ: Նա ինձ ամեն ինչ պատմել է: Ես Օդեսայում նրան վերցրի իմ խնամակալության տակ՝ տալով պորուչիկի կոչում: Հիմա Անտոն իր հարազատների գրկում է, և այլևս ոչ մի վտանգ չի սպառնում նրան:

Ջերմ շնորհակալություն հայտնեցին կապիտան Իվանովին:

Բարձրացանք մեծ հայրիկիս տան երկրորդ հարկը: Մեծ հայրիկս, դառնալով մեծ մորս ու հորեղբորս կնոջը, ասաց.

-Ի՞նչ եք մոլորվել, եղածը եղած է, սեղան պատրաստեք, այս ծովայինները անոթի կլինեն: Էդվարդ, ա՛ռ բանալիները, գնա՛ խանութ, ինչքան երշիկ ու պանիր կա, բե՛ր: Այսօր այսպես կանցկացնենք, վաղը կապիտանի և պորուչիկի վերադարձը ավելի ուրիշ տեսակ կշնորհավորենք:

Նայեցի երկու հարազատներիս, զգացի, որ ծերացել են: Մեծ մայրս ավելի ծանր էր տարել մորս մահը և ավելի ծեր էր երևում, քան մեծ հայրս, չնայած տասը տարով փոքր էր նրանից: Հորեղբորս կինը իր տարիքի համեմատ երիտասարդ էր մնացել: Հասմիկը, որի քսանը լրացել էր, սև, փայլուն աչուկներով, գանգուր, փարթամ սև մազերով աղջնակ էր: Հորեղբայր Վահանը նկատեց իմ ուշադիր նայելը և հարցրեց. «*Անդրանիկ, շա՞տ եկք փոխվել*»: «*Ծերակնում եք, Վահան հորեղբայր, ծերակնում եք*»:

Մեծ հայրս զրուցում էր կապիտանի հետ, զգացի, որ խոսակցությունը նրա և իմ մասին է: «*Այսքան բանից հետո ո՞րք ես մնացել*»: «*Մնացի, մե՛ծ հայր, որ հորս զոհվելն ալ քսանիս*»:

Մեղանն արդեն պատրաստ էր, նստեցինք ճաշելու: Հորեղբայր Վահանը, նայելով ինձ, ասաց. «*Անդրանիկ, պատմի՛ր, այսպրեղից երթալուց հետո ի՞նչ եղավ*»: Համառոտ պատմեցի: Հարազատներս, նայելով ինձ, զարմանում էին, թե ինչպես եմ ողջ-առողջ ազատվել այդքան ընդհարումներից²⁶⁶: Հորեղբայր Վահանը հարցրեց. «*Ոչ մի գնդակ չի՞ կպել քեզ*»: «*Իմ ակունը Անդրանիկ է: Անդրանիկ ակունը ունեցողին գնդակ չի կպչի*²⁶⁷: *Լսե՞լ եք Անդրանիկ զորավարի վիրավորվելու մասին*»:

Անդրանիկին ընկերները երկու ամիս անտառում տեղից տեղ պատգարակով էին տեղափոխում, որովհետև նա տիֆով էր հիվանդ: Այդ ժամանակ մի քանի անգամ փորձել էր անձնասպան լինել: Մի անգամ ատրճանակը **ասեչկա** է տալիս: Ստիպված զինաթափում են: Նա աղաչում, խնդրում էր, որ իրեն սպանեն, որ ինքը անբուժելի հիվանդ է և ընկերների համար ծանր բեռ է: Բայց առողջացավ, մասնակցեց Բալկանյան պատերազմին²⁶⁸, որը տևեց շատ ամիսներ: Լսել էինք վիրավորվելու մասին:

Ես թզբեհի մասին չպատմեցի: Տրապիզոն հասնելուց հետո պատմեցի, թե ինչպես մի քանի ձկնորսներ ինձ Օդեսա հասցրին: Կապիտանը նայեց ու գլուխը շարժեց. «*Թզբեհը մոռացար*»: «*Հարմար տեղ չէ, գոսպողի՛ն կապիրան*»: Հորեղբայրս նայեց ինձ: Կապիտանն արդեն պատմել էր մեծ հորս: «*Անդրանիկ, այդ ի՞նչ թզբեհ է*»: Մեծ հայրս նայեց ինձ: Ես հասկացրի, որ Հասմիկի մոտ չի կարելի պատմել: Հասմիկին ընկերուհիների հետ ուղարկեցին զբոսնելու: «*Իմ կյանքում դա շատ տխուր պատմություն է*», - սկսեցի պատմել իմ՝ փոսի մեջ ընկնելուց հետո եղածը:

Այսպես անցան ժամեր, նրանք պատմում էին պատերազմի ժամանակ անցկացրած նեղությունների մասին: Կապիտանը պատմում էր գերության մեջ անցկացրած օրերի մասին: Ուշ էր, երբ ցրվեցինք: Ես ու կապիտանը մնացինք մեծ հորս տանը: Առավոտ իջանք այգի, մեծ մայրս զբաղված էր իր ամենօրյա գործերով: «*Բարի՛ լույս, տիկի՛ն Սյրոյանկա*»: «*Բարի լու՛յս*»: «*Ի՛նչ հիանալի այգի ունես*»: «*Նեղի՛ն ու Անտոյին կորցնելուց հետո ինչ ուրիշ անելիք չէր մնում: Այս այգիներով էի զբաղվում*»: «*Մե՛ծ մայրիկ, ու՞ր է մեծ հայրիկը*»: «*Վահանի հետ զնացին, հիմա կգան: Նստե՛ք այս սեղանի մոտ, ես հիմա սուրճ կբերեմ: Սա խուզումադով խմորեղենի մի տեսակ է, խմե՛ք*»: «*Անտո՛, քեզ մոտ բան չի՞ մնացել*»: «*Մի քանի շիշ կոնյակ կա՝ երկու տարուրգրամանոց*»: Մեծ մայրս կոնյակի բաժակներ էլ բերեց: Մինչ այդ եկան մեծ հայրս և հորեղբայր Վահանը. նրանք մի մեծ ոչխար էին բերել: «*Ի՞նչ է մտածում մեծ հայրդ*»: «*Հիմա կտեսնես: Սրանք ուրող-խմող մարդիկ են: Կնքահորս կտեսնես*»: «*Բարի լու՛յս, ծովայիններ՛, լա՞վ եք. կոնյակ, սուրճ, գուցունակ*⁶⁹»: Նայեցի հորեղբորս տան կողմը: Հորեղբորս կինը, պատշգամբում կանգնած, մեզ էր նայում. աչքերը թաց էին: «*Հորեղբորդ կհինը լավ կին է*»: «*Նա շատ էր սիրում մորս*»: «*Աղջի՛ Արշալույս, Էդվարդին ասա՛, թող զնա, Մեսրոպ աղային կանչի*»: Մեսրոպ աղային Էդվարդը բան չէր ասել իմ մասին: Եկավ, նայեց մեզ՝ երկուսիս, զարմացավ: Նայեց մյուս կողմը. ոչխարն արդեն մորթել էին: «*Պա՛յ Դմիտրի, ասունք ո՞վ են*»: Ես մոտեցա. «*Բարի՛ լույս, կնքահայր*»: Մեսրոպ աղան հետ քաշվեց: «*Անդրանիկ, վա՛յ, յավրուն, ո՞ղջ ես*»: Այնպես սեղմեց իր կրծքին, որ ոսկորներս ճտճտացին: «*Հարագայրներ, աչքներդ լույս: Բա այս*

ն՞վ է,-եկավ ու սեղմեց կապիտանի ձեռքը,-գազվա սիլա իմա թոցի սրարիկ²⁷⁰»: «Ի՞նչ է սառում, ի՞նչ ուժ ունի այս ծերուկը, հա՞»: Մեսրոպ աղան այնքան էլ բուլղարերեն լավ չգիտեր: «*Ունեմ, ունեմ, բայց ու՞մ է պեպք:*» «*Մեզ է պեպք, արի օգնի՛ր, որ երեքով մինչև ճաշի ժամը միտը կանսանց հանձնենք:*» Եկավ կնքամայրս՝ տիկին Շուշանիկը, ինձ սեղմեց կրծքին, լաց եղավ: «*Այ կնիկ, լացուկո՞ծի ժամանակը չէ, գնա կանանց օգնիր:*» Մեսրոպ աղան մեկ ինձ էր նայում, մեկ հորեղբորս: «*Հանգի՛սր, Մեսրոպ աղա, ոչ ոք չի մնացել՝ բացի Անդրանիկից, բոլորը գոհվել են: Վարդանն էլ:*» Մի պահ բոլորը լռեցին: Եկան մի քանի ծանոթ բարեկամներ, որոնք լսել էին իմ վերադարձի մասին: Կանայք բարձրացան վերև, տղամարդիկ մնացին մեզ մոտ: Խոսում էինք զանազան բաների մասին, ինձ էին հարցուփորձ անում: Մեղանն արդեն պատրաստ էր, մենք էլ բարձրացանք վերև: Մեսրոպ աղան բարձրացրեց բաժակը, բոլոր հարագատներին աչքալույս մաղթեց, մեզ էլ՝ բարի գալուստ: Բոլորը ոտքի ելան: Կապիտանն առաջարկեց զոհվածների հիշատակը հարգել մեկ րոպե լռությամբ: Սկսվեց կերուխումը, Մեսրոպ աղան նորից բարձրացավ տեղից, տիկին Շուշանիկի ականջին ինչ-որ բան փսփսաց: Տիկին Շուշանիկը գլխով հավանություն տվեց: «*Հարգելի՛ ծանոթներ, բարեկամներ, հարազատներ, այս աշխարհում ես ու կիևս ոչ ոք չունենք ու մեր մահից հետո մեր ունեցվածքը լրիվ կրակում ենք մեր սանիկին՝ Անդրանիկին:*» Այս խոսքերը ասվեցին թուրքերեն: Բոլորը հասկացան, նույնիսկ՝ կապիտանը: Ով թուրքերեն գիտեր, ծափ տվեց: Տիկին Շուշանիկը եկավ ու համբուրեց ինձ.«*Սրտանց նվիրում եմ քեզ:*» Ես չգիտեի՝ ինչ ասեի.«*Սրտանց շնորհակալ եմ ձեզանից:*»

Անցան օրեր: Մի առավոտ կապիտանն ասաց, որ մի քանի օրից պետք է մեկնի: Ես շատ տխրեցի, բայց ի՞նչ արած: Մեր բաժանումը շատ ջերմ եղավ: Կապիտանի գնալուց հետո ես պետք է մտածեի ուսումնա շարունակելու մասին: Պետք է գնայի Սոֆիա՝ բարձրագույն ընդունվելու համար քննություններ տալու: Դրամի կողմից ես ապահովված էի. ունեի Հալիլի տնից վերցրած և Մելքե ձիու վաճառքից գոյացած ոսկիներից, նաև բուլղարական նավատորմի գրասենյակից իբրև ամսավճար ստացած լւաները:

Քննություններ

Արդեն քննությունների ժամանակը գալիս էր. մեկնեցի Սոֆիա, որտեղ իմացա, որ թուրքական թեքումով բարձրագույն համալսարան կա, գործերս տվեցի այնտեղ: Հիանալի հանձնեցի քննություններս ու վերադարձա Պլովդիվ: Տասն օրից սկսվելու էին դասերը: Սոֆիայում մեծ հայրիկիս կողմից մի հեռու ազգական մեծ կին կար, որն ուներ երկու-երեք սենյականոց բնակարան: Նա սենյակներից մեկը հատկացրեց ինձ, իմ համար ճաշ էր պատրաստում: Ամուսնուց մնացած մի կլորիկ գումարի տոկոսներով էր ապրում: Այսպես անցնում էին տարիները: Արձակուրդներին գնում էի Պլովդիվ և զբաղվում երկու այգիներով, գնում էի մեծ հորս խանութ՝ օգնելու, մեկ-մեկ օգնում էի հորեղբայր Վահանին իր արհեստանոցում:

Մերին

Չորրորդ կուրսում էի, երբ մի գիշեր տուն վերադառնալիս տեսա, թե ինչպես երեք տղաներ ընկել էին մի աղջկա հետևից և անշնորհք խոսքեր էին ասում: Մինչև կհասնեի, նրանցից մեկը հասավ աղջկան ու սկսեց քաշքշել: Կայծակի արագությամբ հասա ու մի հարվածով տապալեցի գետնին: Մյուս երկուսը հարձակվեցին վրաս: Այնպես ստացվեց, որ երկուսին բռնեցի ու իրար զարկեցի: Հնձածի պես ընկան գետնին: Վազեցի աղջկա կողմը, որը ուշաթափված ընկած էր մայթին: Նրան ձեռքերիս վրա վերցրի: Հարվածեցի առաջին պատահած տան դռանը: Գուռը մի կին բացեց: Իմ ձեռքերին տեսնելով ուշաթափված աղջկան՝ ասաց. «Ի՞նչ է պատահել, նե՛րս արեք»: Աղջկան դրեցի մահճակալին: Կինը, ինչպես հետո իմացա, բուժքույր էր: Նա մի սրվակ բերեց ու մոտեցրեց աղջկա քթին: Աղջիկն ուշքի եկավ: Երեսն էլ թաց սրբիչով սրբեցի: «Ի՞նչ էր պատահել»:
Պատմեցի եղելությունը: Աղջիկը նստեց մահճակալին ու զարմացած նայում էր չորս կողմը. «Որտե՞ղ եմ ես»: Բուժքույրը մոտեցավ ու ձեռքը դրեց ճակատին. «Հանգստացի՛ր, ամեն ինչ անցավ»: «Ինչ ի՞նչ էր պատահել»:
«Ոչինչ էլ չի պատահել: Մի քիչ ուշաթափվեցիր: Այս երիտասարդը քեզ բերեց այստեղ»:
Աղջիկը լաց եղավ: «Հանգստացի՛ր, աղջիկս, ոչինչ չի եղել: Անունդ ի՞նչ է»:
«Մերի»:
«Հիմա սուրճ կիսենք, հետո այս երիտասարդը քեզ կրանի րուն»:

Մերին առաջին անգամ նայեց ինձ, հետո աչքերը ցած իջեցրեց: Ես զարմացա՝ ինչ գեղեցիկ աղջիկ եմ փրկել անզգամներից՝ մեծ սև աչքերով, շագանակագույն փարթամ վարսերով, որոնք փռված էին ուսերին, կոկիկ հագնված մի հիանալի անճնավորություն: Տանտիկիներ բերեց սուրճը և դրեց սեղանին, հետո թխվածք բերեց: «*Եկե՛ք, նստե՛ք սեղանի շուրջ*»: «*Ես պետք է գնամ, մայրս կանհանգստանա*»: «*Ոչինչ, փասը թուպեից ավել չեմ պահի*»: Նստեցինք և սուրճ ու թխվածք ճաշակեցինք: Մերին ելավ ոտքի.«*Գնամ, ուշ է*»: «*Սպասի՛ր, ես քեզ փանելու եմ ձեր փուն*»: Բուժքրոջը շնորհակալություն հայտնելով՝ դուրս եկանք փողոց: «*Օրիո՞րդ, որտե՞ղ եք սպրում*»: «*Իվան Վացով, թիվ 27*»: Մի ֆայտոն երևաց: Կանգնեցրի: «*Ու՞ր եք գնում*»: «*Իվան Վացովի փողոց*»: «*Նստե՛ք*»: Տասը թուպեից հասանք: «*Ինչ հեղ կրանե՞ս*»: «*Ո՛չ, չիերը հոգնած եմ, փուն եմ գնում*»: Վճարեցի, իջանք, գնացինք մինչև այգու դուռը: Ուզեցի հեռանալ, բայց Մերին բռնեց ձեռքս ու ասաց.«*Ո՛չ մի րեղ չես գնա, միևնչե մայրս շնորհակալություն չհայրնի: Գնանք*»: Այս խոսքերը այնպես քնքուշ ասաց, որ մերժելն անհնար էր: Մտանք միջանցք: Հանեց բարակ վերարկուն: «*Հանե՛ք ձեր վերարկուն էլ: Մայրի՛կ*»: «*Այդ ու՞ր մնացիր, Մերի՛*»: Մայրը այնպես մաքուր խոսեց հայերեն, որ ես զարմացա: «*Մայրի՛կ, այսօր ինչ ուրիշ մարդ բերեց, Բարկենը ուշացավ, մենակ ճամփա ելա, ճանապարհին անզգամները հարչակվեցին վրաս, այս երիտասարդը ազատեց, բերեց փուն: Չթողեցի երթա, որ շնորհակալություն հայրնես*»: «*Դու ճանաչու՞մ ես նրան*»: «*Ո՛չ, առաջին անգամ եմ տեսնում*»: Այս խոսակցությունը տարվում էր հայերեն: «*Ներս համեցեք,-ասաց բուլղարերեն,-ես հիմա սեղան կպատրաստեմ, կճաշենք*»: «*Նեղություն մի՛ քաշեք, ես նոր եմ ճաշել*», -չնայած տուն էի գնում ճաշելու: «*Մայրի՛կ, շարքադած եմ, նա էլ քադած կլինի, կա՛մ աշխատանքից, կա՛մ էլ համալսարանից փուն էր գնում*», -ասաց Մերին հայերեն: Ես հայերեն պատասխանեցի.«*Օրիո՞րդ, ես համալսարանից էի գալիս, բայց քադած չեմ*»: Մայր ու աղջիկ իրար նայեցին, մայրը հարցրեց.«*Երիտասարդ, հա՞յ ես*»: «*Մորից՝ բուլղար, հորից՝ հայ*»: «*Անունդ ի՞նչ է*»: «*Հայերը Անդրանիկ են կանչում, բուլղարները՝ Ան-իր*»: Մեղանը պատրաստ էր. թեյ, պանիր, երշիկ, թխվածք, մուրա-

բա: «*Անդրանիկ, համեցե՛ք, նստե՛ք սեղանի մոտ, թեյով թխվածք - ճաշակե՛ք*»: Նստեցինք սեղանի շուրջ: Մայրը պատմեց իր անցյալը: Հակառակ ծնողների կամքին, որ ուզում էին ուրիշի հետ ամուսնացնել նրան, նա ամուսնացել էր բուլղարի հետ: Մերիի ծնվելուց հետո հաշտվել էին: «*Ես նրանց միակ աղջիկն էի, հիմա նրանք չկան, այս փունը ամուսնուս փունն է, ամուսինս մահացել է վեց փարի առաջ, երբ Մերին փասնչորս փարեկան էր: Ես սկսեցի աշխատել, կյանքը փխուր էր, բայց պետք էր պայքարել: Գիմնագիան ավարտելուց հետո Մերին էլ սկսեց աշխատել*»: Ես էլ մի թեթև իմ մասին պատմեցի, մորս և հորս մահվան մասին: Տիկին Վարսենիկին իմ պատմությամբ մեծ ցավ պատճառեցի: «*Խեղճ փղա, ինչքան դժբախտություն էս փեսե՛ր*»: Արդեն ուշ էր, երբ հրաժեշտ տվի: Մայրը բռնեց ձեռքիցս ու ասաց. «*Անդրանիկ, մեզ չես մոռանա, Իվան Վացով, թիվ 27*»: «*Չէ՛, փրկի՛ն Վարսենիկ, չեմ մոռանա*»: Մերին այնպես էր նայում ինձ, կարծես ասում էր՝ մի՛ գնա:

Թուրքական հյուպատոսը

Այս օրերին մի ուրիշ դեպք էլ պատահեց իմ կյանքում: Համալսարանական մի ծանոթ ունեի, որի հետ շատ մտերիմ էի: Համալսարանից դուրս եկանք: Հարցրեց. «*Անյո՛, ո՞ր էս գնում*»: «*Տուն*»: «*Գիշերը երթալու փեղ չունե՞ս*»: Մտքումս ասի. «*Ինչպես չունեմ. գիշեր-ցերեկ միայն Մերիի մասին եմ մտածում*»: Արդեն չորս օր էր անցել: «*Չէ՛, փանն եմ մնալու, որ պարսպեմ*»: «*Անյո՛, ժամը ութին արի՛ մեր փուն, շար հեղաքրքիր հյուր պիտի ունենանք*»: «*Հարմա՞ր է, որ գամ*»: «*Ծայր*»: «*Որ այդպես է, կգամ*»: Այս ծանոթս մի քիչ գիտեր իմ՝ թուրքերի հանդեպ ունեցած հայացքների մասին: Ես մի քանի անգամ եղել էի նրանց տանը: Գնացի, ինձ դիմավորեց, տարավ հյուրասենյակ, որտեղ բացված էր մի ճոխ սեղան՝ լիքը զանազան ուտելիքներով, զանազան խմիչքներով: Սեղանի շուրջ, բացի ծանոթիս ծնողներից, նստած էին երեք տղամարդ՝ իրենց կանանց հետ, որոնք երիտասարդ չէին:

Համալսարանական ծանոթս ինձ ներկայացրեց. «*Ծանոթացե՛ք, Անյո՛ Հովսեփյան: Անյո՛, ծանոթացի՛ր, հորեղբայրս է՛ Պեպրով, այս էլ մորեղբայրս է՛ Սյոռյանով: Այս էփենյոփին Սոֆիայում թուր-*

քական հյուպատոսն է»: Մի ակնթարթ կանգ առա, նայեցի. իմ առաջ նստած անձնավորությունը ոչինչ չուներ թուրքական: Ֆրանսիական մորուքով մի հիսուն տարեկան տղամարդ էր: Կողքի կինն էլ ոչինչ չուներ թուրքական: Ծանոթս ասաց. «*Ծանոթացի՛ր, րիկի՛ն - Մազլենա*»: Ես խոնահրվեցի և համբուրեցի տիկնոջ ձեռքը: Չեռքս մեկնեցի հյուպատոսին, որը շատ հաճույքով սեղմեց ձեռքս: Նստեցի տիկին Մազլենայի և ընկերոջս միջև, ուտում և խմում էինք, երբ ընկերոջս հայրը, նայելով հյուպատոսի կողմը, ասաց. «*Մեյի՛մ Էփենկրի, Անյոնն շար մաքուր թուրքերեն գիրի, համալսարանում թուրքերեն է սովորում*»: Ընկերս, ինձ նայելով, ասաց. «*Ոչ միայն թուրքերեն, այլև ֆրանսերեն, անգլերեն, հայերեն, բուլղարերեն: Անյոնն շար արագ է սովորում և րիբապետում օրար լեզուներին*»: Հյուպատոսը նայեց ինձ և թուրքերեն հարցրեց. «*Հա՞յ ես, Սոֆիայի՞ց ես*»: «*Հորից՝ հայ, մորից բուլղար եմ: Ծնվել եմ Պլովդիվում*»: «*Ծնողներդ այնպե՞ր են*»: «*Ծնողներս մահացել են: Մայրս մահացավ, երբ փասը փարեկան էի, հայրս՝ Բալկանյան պատերազմում*»: Հյուպատոսը թարգմանում էր տիկին Մազլենային: Տիկին Մազլենան հարցրեց ֆրանսերեն. «*Մայրդ այդքան երիտասարդ ինչի՞ց մահացավ*»: «*Մայրս իր ընկերուհուց վարակվել էր թոքախտով*»: Հյուպատոսը հարցրեց. «*Անյո՛, ո՞ր կուրս ես*»: «*Չորրորդ*»: «*Կարծեմ վեց կուրս է*»: «*Այո՛, վեց կուրս է*»: «*Երկու փարի դեռ կա: Մինիստրությունում ծանոթ ունեմ, քեզ արտոնագիր կրան, երբ ուզես, կգաս ինչ մուր՝ հյուպատոսարան: Դու ինչ շար ես պետք իմ աշխատանքի ընթացքում, իմ աշխատակիցները բոլորը դանդաղուններ են. բացի թուրքերենից՝ ուրիշ լեզու չգիրեն, իսկ երբ վերջացնես, կնշանակվես ինչ մուր աշխատանքի»*: Այսպես ես ծանոթացա թուրքական հյուպատոսի հետ: Ընկերս արտոնագիրը բերեց: Ես թուրքական հյուպատոսին շատ էի դուր եկել: Ինչքան փախչում էի թուրքերից, այնքան խճճվում էի նրանց մեջ: Այդ թուրքը թուրքական ոչինչ չուներ. ֆրանսիայում էր սովորել, ամուսնացել ֆրանսուհու հետ: Ի՞նչ մնաց թուրքական: Ես շաբաթը մի քանի անգամ գնում էի հյուպատոսարան, թարգմանություններ էի անում, վիզաներ լրացնում՝ անգլերեն և ֆրանսերեն, գրում հասցեներ և ուրիշ զանազան գործեր անում: Մի ամիս արդեն անցել էր այն օրից, երբ առաջին անգամ գնացել էի

հյուպատոսարան: Հյուպատոսը ինձ կանչեց. «Մի ամիս արդեն աշխատել ես, այստեղ ստորագրիր»: Ստորագրեցի, ինձ հանձնեց հինգ հարյուր լևա: «Մրանից հետո ամեն ամիս կատրանաս հինգ հարյուր լևա ամսավճար»: Այսպես դարձա թուրքական հյուպատոսի աշխատողը: Այս ամիս մի քանի անգամ եղա տիկին Վարսենիկի բնակարանում, որտեղ շատ ուրախ էին ինձ ընդունում: Մերին ամբողջ ժամանակ ծիծեռնակի նման ծվծվում էր, հարցնում համալսարանի գործերից: Թեյում էինք, սուրճ խմում, այսպես անցնում էին ժամերը: Էլ չէր կարելի այսպես շարունակել, երկու կանայք և ես՝ երիտասարդ, գրավում էի դրացիների ուշադրությունը: Եթե Մերիի սիրտը ազատ է, ես կամուսնանամ, և այդպիսով ամեն ինչ կհարթվի:

Քացատրությունը

Մի կիրակի ցերեկով գնացի նրանց տուն: Շատ ջերմ ընդունեցին: Տիկին Վարսենիկը խոհանոցում զբաղված էր իր գործով: Մերիի հետ նստած գրուցում էինք: Բռնելով ձեռքը՝ նայեցի սև, փայլուն աչքերին:

-Մերի՛, շատ եմ խնդրում, չնեղանաս, ասա՛, սիրտդ ազա՞տ է:

Մերին խոնարհեց աչքերը, մի պահ լուռ էինք:

-Անդրանիկ, քեզնից բացի ոչ ոքի չեմ սիրել:

-Մերի՛, եկուր պնակները տա՛ր, սեղանը պատրաստի՛ր, նստենք ճաշելու:

-Հիմա, մայրիկ:

Ես դեռ ձեռքը բռնած էի, զգացի, որ շատ թեթև ձեռքը քաշեց ու գնաց մորը օգնելու: Նստեցինք ճաշելու, խոսեցինք դեսից-դենից: Ես ուզում էի իմանալ տիկին Վարսենիկի կարծիքը, բայց ինչպե՞ս: Ես ոչ մի դեպքում չէի կարող հարցնել: Հիշեցի տանտիրուհուս: Արդեն մթնում էր, երբ հրաժեշտ տվեցի ու գնացի ուղիղ տուն: Ես տանտիրուհուս մեծ մայր էի ասում, քանի որ նա մեծ հորս բարեկամուհին էր: «Մե՛ծ մայր»: «Ի՞նչ է, Անյո՛ր»: «Ես սիրահարվել եմ»: Նայեց ինձ. «Ինչպե՞ս թե»: «Այդպես»: «Ու՞մ աղջկան»: «Չգիտեմ՝ կճանչե՞ս արդյոք: Մոր անունը Վարսենիկ է: Հայրը բուլղար է եղել, անունը՝ Նիկոլայ, մահացել է: Աղջկա անունը Մերի է»: «Որտե՞ղ ես ապրում»: «Իվան Վացով, թիվ 27»: «Հա՛, իմացա, շատ եմ աղքատ,

բայց պատվավոր ընկրանիք են: Ինչո՞վ կարող եմ օգնել»: «Մենք իրար սիրում ենք: Մեժ մայր, շար եմ ինդրում, դու պետք է իմանաս փիկին Վարսենիկի կարծիքը»: «Դրանից հեշտ բան չկա, բայց ինչպե՞ս ես ծանոթացել Մերիի հետ»: Մի քանի խոսքով պատմեցի այն դեպքի մասին, որ պատահել էր ինձ հետ: «Լավ, վաղը ես կերթամ, կիմանամ»:

Այսպես ամուսնացա Մերիի հետ: Երկու տանն էլ սենյակ ունեինք: Մնում էինք մեկ Մերիի տանը, մեկ՝ մեծ մորս տանը: Հինգերորդ արձակուրդս անցկացրի կնոջս հետ Պլովդիվում՝ հարազատներիս մոտ: Աշնանը վերադարձանք Սոֆիա: Ես արդեն վեցերորդ կուրսում էի, վերջին տարին էր: Առաջվա նման աշխատում էի թուրքական հյուպատոսարանում: Արձակուրդից հետո, Պլովդիվից վերադառնալով, գնացի ուղիղ հյուպատոսի մոտ, բայց նա գնացել էր Պոլիս՝ գործերով: Տիկին Մազլենան ասաց, որ գնամ արտաքին գործերի մինիստրություն՝ Կերկենի մոտ: Ներկայացա Կերկենին: «Հա՛, դու՞ ես Հովսեփյան Անյրոն»: «Հա՛, ես եմ»: «Քեզ աշխատանքի նշանակեցինք թուրքական հյուպատոսարանում: Այսօրվանից կանցնես աշխատանքի: Ամսավճարը հազար հինգ հարյուր լիա»: Ես արդեն ունեի մի տղա և մի աղջիկ: Հորս ու մորս անուններն էի դրել:

Շուտով եկավ հյուպատոսը, ֆրանսերեն բարևեց ինձ և շնորհավորեց իր մոտ աշխատանքի ընդունվելու առթիվ: «Գնանք»: Հետևելով նրան՝ մտա նրա հարկաբաժինը: Մազլենան դիմավորեց: Նստեցինք սեղանի շուրջ, սուրճ և կոնյակ խմեցինք: Պատմեց Պոլսի մասին, եղած փոփոխությունների մասին, հարցրեց, թե ես Պոլսում եղե՞լ եմ: Ես չէի ուզում ստել. «Եղել եմ»: Նա էլ չպնդեց, թե երբ:

Անցան տարիներ: Այդ տարիներին ես ուսումնասիրեցի հյուպատոսին, որը չափից ավելի առաջադեմ հայացքներ ուներ: Այս ընթացքում նա նորից գնաց Պոլիս: Վերադարձավ շատ ուրախ: «Մեյիմ էփենյրի, ուրախ փրանսիականություն ունես»: «Գնանք, այս դանդաղունները չիմանան»: Գնացինք նրա աշխատասենյակը: Սպասուհուն, որ ֆրանսուհի էր, ասաց. «Գնա՛, ասա՛ փիկնոջը, թող գա, սուրճ, կոնյակ քերե՛ք»: Նստեցինք: «Անյրո՛, գիրե՞ս, ես եղա բուլղարական հյուպատոսի՝ Վլադիմիր Պետրովի մոտ հյուր: Հոգի մարդ էր», - և նայեց ուղիղ աչքերիս մեջ: Բերեցին կոնյակ, սուրճ,

թխվածք: Տիկին Մազլենան նստեց ամուսնու կողքին. «Սեյի՛ն, մյուս աշխատակիցներին հեյր մի օր չնստար սուրճ խմելու»: «Դու գիտես՝ ինչքան եմ սիրում դրանց: Գիտե՛ս՝ ինչու եմ ուրախ: Մի արյունարբու է սատրկում»: «Սեյի՛ն, ինչե՞ր ես ասում»: «Քեմայլը ծանր հիվանդ է»: «Սեյի՛ն էփենյրի, այդ ինչեր ես ասում: Քեմայլը փրկեց Թուրքիան»: «Եվ կոտորեց հայերին ու հույներին: Էնվերը, Թալեսթը, Նազրմը, Քեմայլը, Իսմեթը և ուրիշներ սև բիծ թողեցին թուրք ազգի ճակատին: Ամաչում եմ, որ թուրք եմ: Շուրով կատրիկ, կերթամ քաղման»: «Սեյի՛ն էփենյրի, այդքան խիստ մի՞ դարապարտիր քեզ: Թուրքերի մեջ էլ լավ մարդիկ կան»: Տիկին Մազլենան արդեն գնացել էր, մնացել էինք երկուսով: «Սեյի՛ն էփենյրի, ինչ էլ քեզ հեյր կրանե՞ս Պոլիս»: «Ինչու չէ, կերթանք բուլղարական հյուպարոսին հյուր»: Ես ոչինչ չասացի, բայց ինձ մի բան էր տանջում, թե Վլադիմիր Պետրովը իմացե՞լ էր, որ ես աշխատում էի Սեյիմ էփենյուրի մոտ: «Հիմա գնանք աշխատանքի»:

Մի շաբաթ չէր անցել, երբ հայտնեց, որ պատրաստվեմ Պոլիս գնալու: Ես շնորհակալությոն հայտնեցի, որ հաջողացրել էր վիզան: «Անդրանիկ»: Ես շշմած նայեցի հյուպատոսին: «Ինչ այդպես մի՛ նայիր: Ես ամեն ինչ գիտեմ: Վլադիմիր Պետրովը գիտի իմ հասցքների մասին, դրա համար ամեն ինչ պատմեց ինչ»: «Շատ իզուր, այդ եղև է շատ տարիներ առաջ»: «Թզբեհը դեռ մո՞տրդ է»: «Սեյի՛ն էփենյրի, ինչու՞ ես հին վերքերս քացում»: «Ուղղակի խնդրում եմ, ինչ ցույց տուր»: Ես իմ բաճկոնին հատուկ գրպան էի պատրաստել, որտեղ պահում էի թզբեհով փոքրիկ պայուսակը, հանեցի և ցույց տվեցի: Ուզեց վերցնել, ասացի, որ պետք չէ: «Տու՛ր, մի՛ վախենա, չեմ ոչնչացնի»: Վերցրեց, նայեց: «Եվ սրա տիրոջը ո՞նջ թողիր»: «Ոչ: Մահն ի՞նչ էր Հալիլի համար, փրկություն»: Ձեռքը երկարացրեց դեպի զանգը: «Սեյի՛ն էփենյրի, ի՞նչ ես անում»: «Մազլենան պետք է տեսնի»: Եկավ սպասուհին: «Սեյի՛ն էփենյրի, պետք չէ, մի՛ արա»: «Ասա՛ տիկնոջս, թող գա»: Ես ամոթից գետինն էի մտնում: Եկավ Մազլենան: «Տե՛ս՝ ինչն՞վ է զբաղված քո սիրելի Անյուն: Ասում էիր, որ սրբի պես տղա է»: «Այդ ի՞նչ է»: «Թզբեհ, հասարակ թզբեհ: Բայց ինչի՞ց է պարտաւորված... Կանանց կրծքի պրուկներից»: «Տե՛ր Ասրված, այս ինչ սուկալի եղեռնագործութ-

յուն է արել սրա տերը: Անտո՛, քո՞նն է»: Իմ լեզուն կապ էր ընկել: «Հը՛, Անտո՛, պապանչվեցի՞ր»:

«Մազլենա՛, դու Անտոյին այդպես մի՛ նայիր, մի տարի պարտիզան է եղել Արևմտյան Հայաստանում, կռվել թուրք սակյարների դեմ: Ես հետո կպատմեմ: «Վաղը գնալու ենք Պոլիս, իրեն ալ հետս եմ տանելու, որ հանչենեմ թուրք կառավարությանը»: «Իսկ թուրք կառավարությանը ու՞մ պիտի հանչենս, որ պատասխան տա, մեկուկես միլիոն հայ զոհերի համար», -նայելով մեզ՝ վրդովվեց Մազլենան: Հյուպատոսը ելավ, եկավ գրկեց ինձ, համբուրեց: Մազլենայի աչքերը արցունքակալվեցին: «Գնա՛, Մազլենա՛, գնա՛: Նա հայ ժողովրդի հերոս է, Անտո՛, դու էլ գնա՛, պատրաստվի՛ր»:

Պոլիս, Անկարա

Իրիկվա դեմ արդեն Պոլսում էինք, կայարանամերձ հրապարակում կանգնած սպասում էինք: «Սեյի՛մ Էփենլրի, ինչի՞ ենք սպասում»: «Էն մեքենան, որ գալիս է, դրան ենք սպասում»: Տեսա, որ մեքենան մտավ հրապարակ, մեքենայի վրա փոքր բուլղարական դրոշակ էր դրված: Բուլղարական հյուպատոսի մեքենան էր: «Ու՞ր պիտի գնանք»: «Քո և իմ ամենամոտ քարեկամի մոտ»: Նստանք մեքենան: Կես ժամից մեքենան կանգնեց բուլղարական հյուպատոսարանի շենքի առջև: Մեզ դիմավորեց քարտուղարը ու հայտնեց, որ Վլադիմիր Պետրովը մեզ է սպասում: Բարձրացանք երրորդ հարկ, մեր առաջ դռները լայն բացվեցին: Պետրովը մեզ էր նայում: Նայեցի և տեսա, որ գլխի մազերը սպիտակել էին, բայց առաջվա նման առույգ էր: «Սեյի՛մ Էփենլրի, այդ ու՞մ ես բերել»: «Ասի, որ բերելու եմ, միասին եկանք»: Ողջագուրվեց Սեյիմի հետ, ապա ինձ առավ հզոր բազուկների մեջ, մենք համբուրվեցինք: «Նսրեք, հոգնած կլինեք»: Սի կես ժամ հետո հայտնեցին, որ սեղանը պատրաստ է: Անցանք հյուրասենյակ, ծանոթացա Պետրովի տիկնոջ՝ Ելիզավետա Պետրովայի հետ: «Անտո՛, ինչպե՞ս անցկացրիք այս տարիները»: «Սրացա քարշրագույն կրթություն, վերջացրի համալսարանի թուրքերեն թերմոնով բաժինը, թուրքական հյուպատոսարանում նշանակվեցի աշխատանքի, իհարկե, Սեյիմ Էփենլրիի պահանջով, որի հետ դեռ չորրորդ կուրսում էի ծանոթացել: Ամուսնացա, ունեմ մի

տղա ու մի աղջիկ»։ «Կապիտան Բվանովից ի՞նչ լուր ունես»։ «Պլովդիվում երկու օր մնալուց հետո գնաց Վառնա։ Շար փարիներ նամակներ էինք գրում։ Վերջին նամակով հայրնեց, որ այդ հասցեով նամակ չգրեմ, որովհետև նրան խորհրդական էին նշանակել (Ապրսենյա²⁷¹) Եթովպիայի բուլղարական հյուպատոսի մոտ, դրանից հետո էլ նամակ չեմ սրացել»։

«Բարեկամներ, այսօր ձեզ պիտի ծանոթացնեմ մի սովետական դիվանագետի²⁷²՝ Կարախանի²⁷³ հետ։ Նա սովետական հյուպատոսն է Թուրքիայում²⁷⁴։ Հիանալի անձնավորություն է»։ «Կարախան, լսել եմ։ Հիմա հյուպատոս է նշանակված Թուրքիայում։ Շար ուրախ կլինես»։ Հայտնեցին սովետական հյուպատոսի գալստյան մասին։ Բոլորս ոտքի կանգնեցինք։ Հյուրասենյակ մտավ հիսունին մոտ, խիստ դեմքով, ունքերի տակ սև աչքերով, կարճ խուզած մորթով մի անձնավորություն։ Նա մեզ նայեց։ Պետրովը ծանոթացրեց. «Բուլղարիայի թուրքական հյուպատոսը՝ Սելիմ Էփենկիրի»։ Կարախանը սեղմեց թուրքական հյուպատոսի ձեռքը։ «Բուլղարիայի արտաքին գործերի մինիստրության կողմից թուրքական հյուպատոսարան նշանակված թարգմանիչը՝ Անյոն Հովսեփյան»։ Կարախանը նայեց ինձ ու հայերեն հարցրեց՝ *հա՞յ ես*։ «Հորիցս հայ եմ, մորիցս՝ բուլղար»։ Այսպես ես ծանոթացա ազգությամբ հայ սովետական մի հիանալի դիվանագետի հետ²⁷⁵։

Անցան տարիներ. երեսունվե՞ց, թե՞ երեսունյոթ թիվն էր՝ չեմ հիշում։ Գնացի պալատ, ես այս տարիներին շատ անգամ եմ եղել պալատում։ Մտանք ընդունարան։ Յար Բորիսը տաք-տաք վիճում էր Բուլղարիայում սովետական հյուպատոս Ռասկոլնիկովի²⁷⁶ հետ։ Նայեցի և զարմացա. նրա հետ էր Թուրքիայում խորհրդային հյուպատոս Կարախանը։ Յար Բորիսը նայեց մեր կողմը։ Սելիմը բարևեց։

-Բարև, Սելիմ Էփենկիրի, արի մեր վեճին մասնակցի՛ր։

Սելիմը ճանաչեց Թուրքիայում խորհրդային հյուպատոսին։ Նա ֆրանսերեն ասաց.

-Ի՞նչ է պատահել, պարոններ։

-Ստալինը պարոն Կարախանին հետ է կանչում Մոսկվա, իսկ մենք համոզում ենք, որ չերթա։ Մոսկվայում հիմա գործերը շատ խառն են։

-Ես կոմունիստական կուսակցության անդամ եմ, չեմ կարող չկատարել հրամանը:

Ռասկոլննիկովը մայեց Կարախանին ու գլուխը շարժեց:

-Գնա՛, գնդակահարվի՛ր:

Վերադարձանք հյուպատոսարան: Մելիմը ասաց.

- Ռասկոլննիկովը ճիշտ է ասում, պետք չէ գնալ:

-Ինչպե՞ս չերթա, նրան Ստալինը չի կանչում, կուսակցությունն է կանչում:

Մի քանի շաբաթ հետո թերթերից իմացանք, որ Կարախանը, Շահվերդյանը²⁷⁷ և ուրիշներ գնդակահարվել են Մոսկվայում:

Այս դեպքերից մեկ տարի անց Քեմալը մեռավ²⁷⁸: Վաղը գնալու ենք Պոլիս՝ Քեմալի թաղմանը: Մյուս օրը բոլոր պետությունների հյուպատոսները հատուկ գնացքով Պոլսից մեկնեցին Անկարա, որտեղ կատարվելու էր Քեմալի թաղումը: Նրա աճյունը դրվելու էր դամբարանում: Ես մնացի Պոլսում: Հյուպատոսներին Անկարա ճանապարհ դնելուց հետո գնացի քաղաք, ման եկա:

Նորից հանդիպում Հալիլի հետ

Քայերս ուղղեցի դեպի կամուրջը: Պոլսում այնքան շատ մուրացկաններ կան, ամեն քայլափոխի կհանդիպես: Այս հաշմանդամ մուրացկանները նստում են կամրջի կողքերին: Ո՛վ զարմանք: Հանկարծ մի ուշացած հաշմանդամ եկավ՝ մի տասը տարեկան աղջկա ձեռքից բռնած: Աղջիկը օգնեց նրան, որ նստի մյուսների կողքին: Նայեցի. լրիվ մազերի մեջ կորած մի սարսափելի անձնավորություն էր: Միայն մի աչքն էր երևում, մոտեցա, մի մեճիտիե դրի աղջկա ձեռքը: Նայեց ինձ: «*Այս մուրացկանի անունը ի՞նչ է*»: «*Հալիլ է*»: Մտքիս մեջ ասացի.«*Ողջ է մնացել*»: «*Ո՞վ է այսպես այլանդակել այս մուրացկանին*»: «*Մայրն ասում է, որ մի ասորի՝ անունը Վախթանգ*»: «*Մայրը ո՞ղջ է, որտե՞ղ է ապրում*»: «*Ողջ է, այսրեղ մուր է ապրում*»: Աղջկան տվեցի մի մեճիտիե ևս: «*Մուրացկանը քո ի՞նչն է*»: «*Մոր եղբոր թոռն եմ*»: «*Դու իրենց մո՞տր ես ապրում*»: «*Այո՛, ես եմ ինսամում Հալիլին*»: «*Կրանե՞ս ինչ չեր րում*»: «*Ես արդեն րում պիտի գնամ, գնանք*»: Դնելով ամառային ակնոցս՝ գնացի աղջկա հետևից: Շատ նեղ փողոցներով անցնելով՝ կանգնեցինք մի փոքր

դռան առաջ: Աղջնակը դուռը բացեց, մտավ ներս, մի քիչ հետո ինձ հրավիրեց: Մտա ոչ անքան լուսավոր սենյակը: Թախտին մի կին էր նստած՝ Հալիլի մայրը, շատ էր ծերացել: Բարևեցի, հանեցի մի ոսկի տվեցի: «Տիկին, ես զբոսաշրջիկ եմ, Բուլղարիայից եմ եկած, տեսա այս այլանդակված մուրացկանին: Ո՞վ է այսպես այլանդակել»: «Մա շար հին դեպք է: Մուր տասնհինգ-տասնվեց տարի առաջ Հալիլը մեր տուն բերեց մի թափառաշրջիկ տղա: Ասաց, որ իրեն մահից է փրկել: Մի տարուց ավել մնաց մեզ մուր: Մի առավուր նորից իրար հետ զնացին որսի: Կեսօրին մուր Նուրիի (այդպես էին անվանում տղային, չնայած որ ասորի էր) շիու թամբին կապված՝ Հալիլը եկավ կանգնեց դռան առաջ: Չին վրնջաց: Ես պարտեզում գործ էի անում: Նայեցի շիու կողմը. ի՞նչ տեսնեմ, Հալիլը շիու թամբին էր կապված բոլորովին այլանդակված վիճակում: Իմ վայ տալը լսելով՝ եկան դրացիները, իջեցրեցինք թամբից, տարանք թախտին դիմը: Հալիլ, քեզ ո՞վ է այսպես այլանդակել: Հալիլը ուշքի էր, բայց չէր կարող խոսել: Դրացիների տղաներից մեկը չի նստեց ու զնաց եղբորս բերելու: Մինչ այդ ես, ինչքան կարողացա, դարմանեցի վերքերը: Երկու ժամից երկու չի լծած կառքով եկավ եղբայրս: Եղբայր, շուր պետք է հասցնենք Էրզրում, այնպեղ ամերիկյան հիվանդանոց կա: Տասը րոպեից ամեն ինչ պարտասար էր: Ծանապարհ ընկանք: Մյուս առավուր արդեն Էրզրումում էինք: Կառքը ուղղեցինք դեպի ամերիկյան հիվանդանոցի առջևը: Հիվանդանոցի սանիտարները Հալիլին պարգարակով տարան վիրահատարանի բաժանմունք: Երկու ժամ հետո Հալիլին դուրս բերեցին՝ լրիվ բիւրով փաթաթված: Բժիշկը, որը վիրահատել և վիրակապել էր Հալիլին, հարցրեց. «Հանուն, նա քո ի՞նչն է»: «Իմ որդին է»: «Այս ի՞նչ է արել, որ այդպես վրեժ են լուծել»: «Երեկվանից հարցնում ենք, ոչինչ չի ասում»: «Կապրի՞»: «Ոչինչ չեմ կարող ասել»: «Երեք ամիս մնաց հիվանդանոցում, ամբողջ դարմաներս ծախսեցի: Հետո տունս-տեղս ծախեցի ու փոխադրվեցի Պոլիս, այս փոքրիկ տունը առա, հինգ տարի է՝ այսպեղ եմ ապրում: Այս էլ եղբորս թոռն է, խնամում է Հալիլին»: Ես խղճացի այս պառավին, որ ժամանակին հարազատ մոր նման խնամում էր ինձ: «Ոչինչ չմտացա՞ք Նուրիի մասին»: «Վերցնելով Հալիլի անձնագիրն ու չին՝ հեռացել էր: Եղբայրս մի քանի տարի ինչսանից պահել էր այն գաղտնիքը, որ Հալի-

լը մասնակցել է հայերի տեղահանմանը: Նա կասկածում էր, որ Նուրիին հայ է: Նուրիին եկել և իմացել էր, թե Հալիլը ինչ ոճրագործ է եղել, այլանդակել ու փախել էր»: Ինձ համար ամեն ինչ պարզ էր: Հանելով փոքրիկ պայուսակը, որի մեջ էր գտնվում թզբեռը, հինգ ոսկի էլ դրեցի մեջը և տալով պառավին՝ հեռացա: Գնացի նորից կամրջի կողմը, հեռվից նայում էի Հալիլին, թե ինչպես է ողորմության համար երկարացնում ձեռքը:

Ես մնում էի բուլղարական հյուպատոսարանում, ինձ հատուկ սենյակ էին հատկացրել: Երեք օր հետո Անկարայից հետ վերադարձան հյուպատոսները: Առավոտ գնացի հյուրասենյակ: Երկուսն էլ նստած սուրճ էին խմում և կոնյակ: «Բարի լույս»: «Բարի լույս, նստի՛ր, սուրճդ հիմա կքերես»: Բուրավետ սուրճն ու կոնյակը խմեցի, ծիծաղեցի՝ գլուխս շարժելով: Երկուսն էլ նայեցին ինձ: «Այդ ի՞նչ է պատահել, ուրախ ես երևում»: «Ընդհակառակը, տխուր եմ»: Նայեցի՝ ժամը տասն էր: «Զգեստափոխվե՛ք, մի ժամից հետաքրքիր բան եմ ցույց տալու»: Համաձայնեցին: Մի ժամից դուրս եկանք: Մի տաքսի կանգնեցրի: «Տա՛ր մի՛նչև կամուրջը»: Տասը րոպեից արդեն կամրջի մոտ էինք: Իջանք: Ուղեկցեցի այն կողմը, որտեղից երևում էր մուրացկանների կանգառը: Ինչպես երևում էր, նոր էր եկել, աղջնակը կողքը կանգնած էր: «Նայե՛ք այդ աղջկա կողքը նստած մուրացկանին»: «Այդ ի՞նչ ստակալի տեսք ունի, ո՞վ է այդ գործիլան»: «Հալիլն է՝ թզբեռի տերը»: «Ի՞նչ ես ասում, հասարա՞տ»: «Երեկ եղա նրա տանը՝ մոր մոտ»: Մանրամասն պատմեցի: «Բա թզբե՞հը»: «Հինգ ոսկի դրի փոքր պայուսակի մեջ և թզբեռի հետ հանձնեցի մորը»:

Մի քանի օր մնալուց հետո վերադարձանք Բուլղարիա: Ես խնդրեցի Սելիմին, որ թույլ տա մի քանի օր մնալ Պլովդիվում՝ հարազատներին մոտ:

Վերջաբանը

Ես առաջվա նման աշխատում էի Սելիմի մոտ, բայց նրան հետ կանչեցին Անկարա: Մեր բաժանումը շատ ջերմ եղավ, իսկ հետո իմացա, որ նա նշանակվել է Ֆրանսիայի հյուպատոս, և շատ ուրախացա: Նոր հյուպատոսը մի՛նչև ուղնուծուծը արյունարբու թուրք էր: Մի ամսվա մեջ երեք անգամ ընդհարվեցինք: Նա պնդում էր, թե ես

թուրքերենին չեմ տիրապետում: Եթե ուրիշ տեղ լինեի, Հալիլի օրին կբերեի: Արտաքին գործերի մինիստրությունում ծանոթ ունեի, խնդրեցի, որ ինձ ազատեն աշխատանքից և ուրիշ տեղ նշանակեն: Ինձ ազատեցին և նշանակեցին մինիստրությունում թարգմանիչ: Ես երեք օտար լեզու գիտեի: Այդ տարիներին ես ևս մի տղա ու մի աղջիկ ունեցա, որոնց անունները դրեցի Անուշ և Հովսեփ: Նորից անցան տարիներ, մահացան մեծ պապս, մեծ տատս ու հորեղբայր Վահանը: Հորեղբորս կինը ողջ էր, զբաղվում էր իր թռռներով: Մեծ տղաս ամուսնացել էր և ապրում էր Պլովդիվում՝ մեծ հորս տանը, նա էլ մի տղա և մի աղջիկ ուներ՝ Ստոյանկան և Դմիտրին:

Աշխարհը նորից տակնուվրա էր լինում: Գերմանիայի ֆաշիստական կառավարությունը երեքկողմյան համաձայնագիր կազմեց՝ Հռոմ-Բեռլին-Տոկիո: Այս կոալիցիայի մեջ մտան Հունգարիան, Ռուսիան: Բուլղարական կառավարությունը տատանվում էր: Նա պահանջում էր հարավային Դորբուջան, որը Ռուսիան գավթել էր 1914-15թթ²⁷⁹: Բավականին քաշքշուկներից հետո այն հանձնվեց Բուլղարիային: Յար Բորիսը անդամակցեց այդ կոալիցիային: Սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Յար Բորիսը կրկնեց հոր սխալը, գավթեց Էգեյան ծովի ափերը, օկուպացրեց մի քանի բնակավայրեր Հարավսլավիայում²⁸⁰: Բուլղարական պատժիչ ջոկատները սկսեցին գազանություններ անել, գյուղեր այրեցին Հունաստանում: Մարդկանց քշում էին Բուլղարիա՝ ճանապարհաշինություն կատարելու: 1941թ. հունիսի 22-ին սկսվեց պատերազմի ամենատեսակի փուլը. Գերմանիան հարձակվեց Խորհրդային Միության վրա: Բուլղարական կառավարության գլուխ դարձավ մինչև ուղնուծուծը ֆաշիստ Ֆիլևը²⁸¹: Մոսկվայի հալածանքներ սկսվեցին բուլղարական բանվորական կոմունիստական կուսակցության դեմ: Սկսվեց պարտիզանական շարժումը: Ֆաշիստները շատ դաժան էին վարվում պարտիզանների հարազատների ու բարեկամների հետ: Բուլղարական ֆաշիստների ուրախությանը չափ չկար: Մտածում էին, որ շուտով Մոսկվան կընկնի, և Սովետների վերջը կգա: Մոսկվայի տակ գերմանական անպարտելի բանակների ջախջախվելուց հետո բուլղարական ֆաշիստներն էլ ավելի կատաղեցին: Սակայն ֆաշիստական ռեյխի կործանումը սկսվեց Ստալին-

գրադի տակ: Այս պատերազմում բուլղարական զոհերը քիչ էին: Անհայտ մահով մեռավ ցար Բորիսը: Բուլղարական պատժիչները ստիպված հեռացան Էգեյան ծովի ափերից: Հարավային Դոբրուջան մնաց Բուլղարիային:

Ես առաջվա նման աշխատում էի արտաքին գործերի մինիստրությունում: Պատերազմի տարիներին մահացավ իմ տանտիրուհին՝ բնակարանը թողնելով ինձ: Մահացան կնոջս մայրը, հորեղբորս կինը: Վաճառեցի գոքանչիս բնակարանը և մշտական բնակություն հաստատեցի իմ բնակարանում: Պատերազմից հետո սկսվեց խաղաղ կյանքը, միայն սոսկալի հիշողություններս խիստ խաթարում էին անդորրս:

ՑԱՆԿԱՏՈՐԸ՝ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ԽԱՐԱԶԱՆԸ՝ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՇԽԱՐՀԻ ՍԱՐՍԱՓԸ

Թիակը

Շատ տարիներ առաջ երկու անգլիական լորդեր ապրում էին Լամանչի ափին՝ թիակներում²⁸²: Լորդերից մեկը Կրիսթոֆն էր, որն այդտեղ էր ապրում իր կնոջ, հոր, մոր և երկու որդիների հետ: Լեոնարդը ութ տարեկան էր, Ռոբերտը՝ վեց տարեկան: Մյուս լորդը Հարիմանն էր, որն ապրում էր իր կնոջ, տղայի և դստեր հետ: Ռոդին՝ Հարին, տասը տարեկան էր, դուստրը՝ Ռոզանան՝ չորս:

Երկու թիակները բաժանված էին շատ մեծ այգիներով, որտեղ աճում էին փարթամ ծառեր, կային հրաշալի պուրակներ, որոնք գարնանը այնքան գեղեցիկ ու բուրավետ էին: Մարդու գլուխը պտտվում էր վարդերի, ժասմինների և ուրիշ հոտավետ ծաղիկների բույրից: Այդ բուրավետ այգիներում խաղում էին չորս երեխաները: Ամենափոքրը՝ Ռոզանան, չէր պոկվում Ռոբերտից: Աշունը Հարին և Լեոնարդը գնալու էին Լոնդոն՝ ուսանելու: Ծնողների մոտ մնում էին Ռոզանան և Ռոբերտը: Նրանք մի օր անցկացնում էին Ռոբերտենց տանը, մյուս օրը՝ Ռոզանայենց: Ռոզանան, մինչև Ռոբերտի կողքին չպառկեր, չէր քնում: Միշտ իրար կողք կողքի էին քնում: Անցնում էին տարիներ: Եկավ մի աշուն, երբ բոլորը միասին գնացին ուսանե-

լու: Հարին և Լեոնարդը բարձրագույն էին սովորում: Ռոբերտը և Ռոզանան հաճախում էին դպրոց:

Այն երջանիկ և մանկական օրերից անցել էր տասնհինգ տարի: Ռոբերտը ստացել էր բժշկի մասնագիտություն և ծովային կապիտանի կոչում: Այդ տարիների ընթացքում ինչեր ասես չէին սովորել այդ չորս երեխաները: Լամանշում լողում էին ձկան նման, անտառներում որս էին անում, հիանալի ձիավարում էին: Ռոզանան մի հիանալի աղջիկ էր դարձել: Առաջվա նման նա միայն Ռոբերտի հետ էր կապված: Նրանք սիրում էին միմյանց, բայց չէին բացատրվում: Լեոնարդի ուշքն էլ գնում էր Ռոզանայի համար, բայց նա շատ լավ գիտեր, որ աղջիկը սիրում է Ռոբերտին: Լեոնարդը մի քանի անգամ ամուսնության առաջարկություն էր արել Ռոզանային, բայց մերժում էր ստացել: Աղջիկը պատճառաբանում էր, որ դեռ շատ երիտասարդ է: Ատելությունը եղբոր հանդեպ հանգիստ չէր տալիս Լեոնարդին: Նա ամեն կերպ ուզում էր Ռոբերտից ազատվել, բայց ինչպե՞ս... - Հարազատ եղբայրներ էին: Սպանության առիթը ներկայացավ, երբ երեքով գնացել էին որսի: Ռոբերտը ընկել էր մի քարայծի հետևից և բավականին հեռացել էր իրենցից: Հարին նկատողություն արեց Լեոնարդին, որ այլևս չանհանգստացնի բրոջը: Վիճեցին: Վեճը թեժացավ: Տղաները մեկը մյուսի ուղղությամբ երկու գնդակ արձակեցին: Լեոնարդի արձակածը ավելի դիպուկ էր, որի հետևանքով Հարին սպանվեց: Լեոնարդը շատ շուտ կողմնորոշվեց, որ կարելի է սպանության մեջ մեղադրել Ռոբերտին և անմիջապես ազատվել երկու խոչընդոտներից՝ մեկին սպանելով, մյուսին դատապարտելով: Այս պարագայում Ռոզանային ուրիշ անելիք չէր մնում, և նա մի քանի տարի հետո ստիպված ամուսնանալու էր Լեոնարդի հետ: Լեոնարդը այսպես էր մտածում, երբ եկավ Ռոբերտը: Նա տեսավ Հարին սպանված.«*Այս ի՞նչ էս արել*»: «*Ես չեմ, դու էս սպանել Հարիին*»: «*Ես նոր եկա*»: «*Մարդասպան, հիմա քեզ կհանչեն սկսական անվտանգության բաժին*»: «*Սրիկա՛*»,-բացականչեց Ռոբերտը և հարձակվեց Լեոնարդի վրա: Լեոնարդը սպասում էր այդ հարձակմանը: Նա մի հարվածով Ռոբերտին տապալեց գետնին:

Արդեն մութն ընկնում էր: Լեոնարդը ուշագնաց Ռոբերտին կապեց ձիուց, և ինքն էլ հեծնեց այն: Նա Ռոբերտին տարավ դեպի

թիակը, այնտեղ բանտարկեց նրան և դուրս գալով այգի՝ ամբողջ կոկորդոզ սկսեց բռռալ, որ Ռոբերտը սպանեց Հարիին ու փախավ: Բոլոր ստրուկները և ծառաները խառնվեցին իրար: Ջահերը վառած՝ վազեցին Լեոնարդի ետևից: Երկու լորդերն էլ հետևեցին նրանց: Հարին ընկած էր իր ձիու մոտ, որը չէր հեռանում տիրոջ կողքից: Երկու լորդերի բժիշկները կռացած ստուգում էին Հարիի վերքերը: Գնդակը, ծակելով կուրծքը և անցնելով սրտի միջով, թիկունքից դուրս էր եկել՝ հարուցելով վայրկենական մահ: Ռոզանան եկավ՝ մազերն արձակած, նրան հետևում էին երկու նաժիշտներն ու երկու ծառաները: Ջահերի լույսի տակ նա աստվածուհու էր նման: Նա ընկավ եղբոր դիակի վրա: «Ո՞վ սպանեց քեզ, ու՞մ էր պետք քո մահը»: «Ռոբերտը սպանեց ու փախավ»: Ռոզանան այնպիսի մի հայացք գցեց Լեոնարդի վրա, որ նա սարսռաց: Լեոնարդը հասկացավ, որ Ռոզանան չի հավատում իրեն: Ռոզանան չէր հավատում, որ Ռոբերտն է սպանողը, բայց Ռոբերտը չկար: Այս փորձանքը մեծ վիշտ²⁸³ պատճառեց երկու լորդերի ընտանիքներին: Հարին սպանված էր, Ռոբերտը՝ փախուստի մեջ:

Ծովահենները

Այդ դարերում ծովերում և օվկիանոսներում վիստում էին ծովահենները: Այսպիսի մի հին նավ, որ ուներ քառասուն թի, ղեկավարում էր ազգությամբ իսպանացի Պեդրո Ալվերոսը²⁸⁴: Այս ծովահենը կողոպտում էր պատահած նավերը և կողոպտածը, այդ թվում նաև գերիներին, տանում էր Գիբրոն և վաճառում ստրկավաճառներին: Նա երբեմն ապրանքը բերում էր ու վաճառում Լամանչի ափերին գտնվող փոքրիկ քաղաքում: Այս ընթացքում ծովահենը նավը ապահովում էր խմելու թարմ ջրով: Մինչև անգլիական նավահանգիստ մտնելը նա փոխում էր նավի տեսքը: Նավի վրա ամրացնել էր տալիս «Էլեոնորա» անունը և իսպանական դրոշակը: Այդ օրերին, երբ պատահեց սպանությունը, Պեդրո Ալվերոսի նավը գտնվում էր Լամանչի նավահանգստում: Լեոնարդը փոքր-ինչ ծանոթ էր Պեդրո Ալվերոսի հետ: Նա տեղնուտեղը որոշեց եղբորը հանձնել նավապետին: Լեոնարդը Ռոբերտին պահում էր նկուղում բանտարկված, նրան քիչ հաց ու ջուր էր տալիս:

Առավոտյան, այցելելով եղբորը, Լեոնարդը հայտնեց, որ այսօր ազատելու է նրան: Այն սարսափելի օրվանից Ռոբերտը ոչ մի խոսք չէր փոխանակում եղբոր հետ: Այս անգամ էլ նորից չպատասխանեց: Հեռանալով Ռոբերտի մոտից՝ Լեոնարդը ուղիղ գնաց նավահանգիստ՝ այն գինետունը, որտեղ հավաքվում էին ծովայինները: Պեղրոն, նստած իր մարդկանց հետ, ուտում ու խմում էր: Լեոնարդը մոտեցավ նրանց, բոլորին բարևեց և մի կողմ կանչեց Պեղրոյին. «Արի՛, գործ կա: Հեղափոխություն է»: «Այո»: Նրանք մի առանձին սեղանի շուրջ նստեցին: Լեոնարդը վիսկի պատվիրեց, սկսեցին խմել: «Ի՞նչ է պարտադեմը»: «Քեզ մի գերի եմ հանձնելու, բայց չես վաճառելու: Պիրի շղթայես քիերին»: «Երիտասարդ է»: «Շուտով կլինի քսանհինգ տարեկան»: «Սպիրտականություն է»: «Այո»: «Շատ վրանգավոր է»: «Բան չկա, բացի ինչանից՝ ոչ մեկը չի փնտրելու»: «Ինչքան պիրի վճարեմ»: «Մի հարյուր ոսկի: Տանուլ եմ տվել, խաղաթղթիս պարտքը պիրի վճարեմ»: «Համաձայն եմ, ե՞րբ պիրի հանձնես»: «Այս իրիկուն ես կգամ այստեղ, երեք հոգի մարդ կվերցնես, կերթանք»: «Եղավ»: Այսպես Լեոնարդը ծախեց իր եղբորը ծովահենների հրամանատարին:

Շղթայվածը

Երեք օր հետո նավը հեռացավ Լամանշից: Իսպանական դրոշակը իջեցնելով՝ բարձրացրին ծովահենների դրոշակը: Հանեցին «Էլեոնորա» անունը կրող էմբլեման: Բաց ծովում ծովահենների հրամանատարը հրամայեց բերել գերված երիտասարդին: Գիշերը Պեղրոն չէր նկատել Ռոբերտի գեղեցկությունը: Նրա առջև կանգնեց մի քիչ գույնը գցած, շատ համակրելի երիտասարդ: Պեղրոն նայեց ու զարմացավ: «Մրա համար հարյուր ոսկի՞ եմ վճարել: Մա մի շաքաթ էլ չի դիմանա... Անունդ ի՞նչ է, երիտասարդ»: Ռոբերտը որոշել էր չխոսել ու չպատասխանեց նրան: «Չե՞ս լսում, անունդ ի՞նչ է»: Նորից ոչ մի պատասխան: «Բոցման»: «Լսում եմ»: «Տա՛ր, շղթայի՛ր Սելիմի մոտ, ինչքան դիմանա, դիմանա, սարկավ, գցեք ծովը»: Այսպես Ռոբերտը շղթայվեց Սելիմի կողքին:

Սեվիմը

Սեվիմը քառասուն տարեկան արաբ էր, գերի էր ընկել Պեղոռյի ձեռքը, որը նրան չէր վաճառել, այլ պահել էր թիերի համար: Երեք տարի նա շոթայված էր թիերին, կողքի թիավարը մի տարի առաջ մեռել էր: Կողքին ուրիշ մարդ չէին տվել: Շատ թիերի մեկական մարդ էր շոթայված՝ սնունդը խնայելու համար: Թիավարների միայն ոտքերն էին շոթայված, այնպես որ ձեռքերը ազատ էին:

Սեվիմը, նայելով իր կողքին շոթայված երիտասարդին, շատ զարմացավ: Չնայած Ռոբերտը տասն օր էր, որ չէր սափրվել, սակայն երևում էր, որ նա շատ նուրբ մեծացած երիտասարդ էր: Բացի մայրենի լեզվից՝ Սեվիմը զիտեր թուրքերեն, անգլերեն, իսպաներեն: «*Երիտասարդ, անունդ ի՞նչ է, ի՞նչ ազգ ես*»: Ռոբերտը, որ տասն օր չէր խոսել, պատասխանեց. «*Անունս Ռոբերտ է, անգլիացի եմ*»: «*Անգլիացի՞ ես, ինչպե՞ս ես ընկել այս ավազակի ձեռքը*»: «*Եղբայրս է վաճառել*»: «*Եղբա՞յրդ*»: «*Ի՞նչ զարմանալի բան կա: Մի հարվածով երկու հակառակորդից ազատվեց: Մեկին սպանեց, մյուսին՝ ինչ ալ, վաճառեց*»: «*Ինչի՞ համար*»: «*Որ փրսևս իմ սիրած աղջկան: Սպանվածը աղջկա եղբայրն էր*»: «*Ի՞նչ դաժանություն... Ես արաբ եմ, անունս Սեվիմ է: Այսրեղից ազատվելը անհնարին բան չէ, ինչ մուր մի հիևզ-վեց իսարոց կա, ես արդեն մի ուրքիս շոթան կտրել եմ, շուրով մյուսն ալ կկտրեմ: Առաջին հարմար առիթի դեպքում պիտի փախչեմք: Կդիմանամ այս ծանր աշխատանքին, ամեն ինչ կանեմ, որ քեզ օգնեմ, և աշխատանքը քեզ համար ծանր չգա: Երկու փարի է, ինչ մենակ եմ աշխատում: Ես քեզ թուրքերեն և արաբերեն կսովորեցնեմ, պետք կգա»:*

Սեվիմը հիանալի մարդ դուրս եկավ: Նա ամեն ինչ անում էր, որ թեթևացներ Ռոբերտի ծանրությունը: Ռոբերտը օրեցօր ամրանում էր: Ձեռքի մկանները պողպատ էին դարձել: Մի տարի էր անցել այն օրից, ինչ Ռոբերտը շոթայված էր: Նրա ոտքի մեկն արդեն ազատել էին շոթայից: Սեվիմի երկու ոտքերն էլ արդեն ազատված էին: Այդ մեկ տարվա ընթացքում իսպանացիները շատ ավազակային հարձակումներ գործեցին այլ նավերի վրա: Միշտ հաղթող էին դուրս գալիս: Առաջվա նման գերիներին տանում էին Գիբթուն²⁸⁵, իսկ թալանված մյուս սպրանքը՝ Անգոլայի Լուանդա նավահանգիստ:

Երկու անգամ «Էլեոնորան» եղավ Լամանշի նավահանգստում, բայց ոչ մի անգամ Պեդրոն չհանդիպեց Լեոնարդի հետ: Մեկ-մեկ Պեդրոն գալիս ու հարցնում էր թիավարների առողջության մասին: Հենց նրանից էլ Ռոբերտը իմանում էր, որ Լեոնարդը չի երևացել:

Երկրորդ տարին էր բոլորել: «Էլեոնորան» նորոգման էր կանգնած Գիբբունի նավահանգստում: Նորոգումը ամիսներ տևեց: Այդ ժամանակ Ալժիրից մի խումբ գերիներ էին բերել՝ Գիբբունի սարուկների շուկայում վաճառելու նպատակով: Այդ երկար ճանապարհին գերիներից շատերը մահացել էին, բայց հինգ հարյուրից ավելիին հասցրել էին Գիբբուն: Գերիներին ուղեկցողների հրամանատարը մի սուկալի տեսքով պորտուգալացի էր:

Գաշինքը

Մի գիներտնում հանդիպելով Պեդրոյին՝ այդ պորտուգալացին հայտնեց. «Միջերկրական ծովում կա ծովահենների մի սքանչելի նավ, որն ունի վաթսուն թի: Ոչ մի նավ չի կարող մրցել նրա արագության հետ: Նավը պարկանում է Ալժիրի փաշային: Հրամանատարը Յանկարորն է: Ազգով եգիպտացի է: Շարք քաջ և անվախ մարդ է: Մուր քառասուն տարեկան է: Նավի անունը «Ծիծեռնակ» է: «Քո հրամանատարության տակ քանի՞ հոգի կա»: «Շարք էինք, բայց ցրվեցինք: Այժմ՝ մի տասը հոգի»: «Կռիվներում իմ անչնակագվը պակասել է: Քո մարդկանց հետ կմիանաս իմ անչնակագվին, միասին կհարչակվենք Յանկարորի վրա: Նավը գրավելուց հետո կուզես, մնա ինչ մուր, չես ուզում, քո մարդկանց հետ վերցրենք չեք բաժինը ու զնացենք, ուր ուզում եք: Չեզ կիջեցնեմ Մարդինիս կղզի»: «Նավը գրավելուց հետո կմտածենք»: «Համաշայն եմ»: Այսպես Պեդրոյի կովող անձնակազմը համարվեց պորտուգալացու տասնոգանոց ավազակախմբով: Պորտուգալացին այն հույսով էր, որ Յանկատորի նավը գրավելուց հետո մաքրելու է իսպանացի նավապետի հաշիվը և տիրանալու է «Ծիծեռնակին»՝ դառնալով նավի նոր հրամանատարը: Պեդրոն շատ լավ հասկանում էր պորտուգալացու միտքը: Պեդրոն էլ իր հաշիվն ուներ. նավը գրավելուց հետո նա ողջ մնացած պորտուգալացիներին կախելու էր «Ծիծեռնակի» կայմից: Այս երկու ծովահեն ավազակները պատուհաս էին

դարձել Գիբթունի գինետների և հասարակաց տների տերերի համար:

Արդեն ամեն ինչ պատրաստ էր մեկնելու համար: Մի առավոտ, դուրս գալով Գիբթունի նավանորոգման նավահանգստից և բարձրացնելով իսպանական դրոշակն ու ամրացնելով «Էլեոնորա» էմբլեմը՝ ամբողջ արագությամբ ընթացան դեպի Ջիբրալթարի նեղուցը, որտեղով պետք է մտնեին Միջերկրական ծով՝ «Ծիծեռնակին» փնտրելու: Ճամփորդությունը շատ երկար տևեց: Օրեցօր բոցմանի մուրճի հարվածն ավելանում էր: Մուրճի յուրաքանչյուր հարվածին զուգահեռ թիավարները շարժում էին իրենց թիերը: Չնայած թիավարները լավ էին սնվում, բայց հալից ընկնում էին: Քսանչորս ժամվա մեջ հազիվ հիմզ-վեց ժամ էին հանգստանում:

«Մեյիս, բան հասկանու՞մ ես, այս արագ առաջ շարժվելու իմաստը ո՞րն է»: «Բոցմանը ոչ մի բան չի ասում: Ինչպես երևում է, մի քեղ մեծ ավար կա»: Օրերն անցնում էին: Արդեն Ռոբերտի շղթաներն էլ կտրված էին: Մի առիթ էր մնում այս գերությունից ազատվելու համար: Մի առավոտ բոցմանը դադար տվեց՝ ասելով. «Այսօր հանգստացե՛ք: Վաղը լողալու ենք Միջերկրական ծովում: Մեյիս, դու արար ես և Միջերկրական ծովի ամերից ես: Լսե՞լ ես ծովահեն Յանկայորրի մասին»: «Ալժիրի փաշայի նավի մասին լսել եմ: Ի՞նչ է, չի՞նք թե մրքներովդ անցել է հարձակվել Յանկայորրի վրա»: «Հա՛, ի՞նչ կա որ: Մեր նավը հնացել է, պետք է փոխենք»: «Լավ կանե՞ք»: Մեյիմը ուրիշ ոչինչ չասաց: Բոցմանի զնալուց հետո քար լուծություն տիրեց: Թիարանում շատերը հասկացան, թե ինչ մտադրություն ունեյր նավի հրամանատարը, որ ուզում էր հարձակվել ծովահենների ուժեղ նավի վրա, ինչը շատ վտանգավոր ձեռնարկ էր: «Ռոբե՛րտ, հիմա հասկացա՞ր, թե այս խելագար արագությունը մեզ ուր հասցրեց»: «Իսկապե՞ս լսել ես այդ ծովահենի մասին: Իրո՞ք հրամանատարի անունը Յանկայորր է»: «Այդ ծովահենի անունը Յանկայորր է, նավը վաթսուներեսնոց անգլիական ֆրիգատ»²⁸⁶ է, նրան որևէ նավ դժվարությամբ է հասնում: Յանկայորրը ազգով եգիպտացի է, մոտ քառասուն տարեկան գեղեցիկ տղամարդ է»: «Դու տեսե՞լ ես նրան»: «Մի անգամ Ալժիրում տեսել եմ»: «Ի՞նչ ես կարծում, Պեդրոն կարո՞ղ է գրավել Յանկայորրի նավը»: «Պեդրոն

իր գլուխը կջարդի, իր նավն ալ հեւրը: Մենք պեւրք է օգտւենք առիթից. կռիւլը սկսվելուն պես բոցմանը վերև կբարձրանա: Մենք ալ հեւրկից: Կլուվիկնք Յանկայորոի կողմից»: Այսպես անցավ օրը, լավ հանգստացան: Առավոտ՝ լույսը չբացված, շարժվեցին առաջ: Մի ամսից ավել թափառեցին Միջերկրական ծովում, բայց «Ծիծեռնակը» չկար: Պեղրոն որոշել էր ոչ մի նավի վրա չհարձակվել, սակայն նավի սննդամթերքը սպառվում էր, պետք էր, որ գոնե մի նավի վրա հարձակում գործեին: Այդ առիթը չուշացավ, մի բեռնատար անգլիական նավ, որ բեռնված էր մթերքով, գնում էր Բեյրութ: Չկասկածելով, որ իսպանական դրոշակի տակ կարող է ծովահենների նավ լինել, բեռնատարը հանգիստ լողում էր իր ճանապարհով: Հարձակումը եղավ շատ արագ, այնպես որ անգլիացիները չհասցրին ուշքի գալ: Անգլիական նավի կապիտանը անձնասպան եղավ, նավը գրավվեց: Այդ ամենը կատարվեց առավոտյան: Ամբողջ մի օր տեղց նավի մթերքի տեղափոխումը:

Մինչև մյուս առավոտ թիավարները հանգստացան: Նրանց շատ լավ կերակրեցին: Առավոտյան շարժվեցին: Անցավ ևս երկու ամիս: Նրանք թափառում էին Միջերկրական ծովում, բայց «Ծիծեռնակը» չկար ու չկար: Պեղրոն հուսադրում էր: Մի առավոտ նա իր մոտ կանչեց պորտուգալացուն ու հարցրեց. «*Ու՞ր է քո Յանկայորոը*»: «*Ի՞նչ իմանամ, վեց ամիս առաջ նա թափառում էր այս ծովում: Եթե խորտակված լիներ, կիմանայիկնք*»: «*Հրամանատար՛ր, մեր շախ կողմում նավ է երևում*»: Պեղրոն և պորտուգալացին վեր թռան: Վերցնելով հեռադիտակները՝ նայեցին այն կողմը, որտեղ սև էր: Մի նավ էր գալիս: «*Հր՞, ի՞նչ ես կարծում, Յանկայորո՞րն է*»: «*Ոչինչ չեմ կարող ասել, շար հեռու է, կմոտենանք, կպարզենք*»:

«Էլեոնորայի» խորտակումը

Հայտնի էր նաև, որ «Ծիծեռնակի» հրամանատարն ալ տեսել էր Պեղրոյի նավը: Պեղրոն, չիմանալով, թե ինչ նավ է, դադարեցրեց առաջ ընթանալը: Պարզվեց, որ եկողը «Ծիծեռնակն» էր: Նա նոր էր դուրս եկել Ալժիրից, որտեղ կանգնել էր վերանորոգման համար: «Ծիծեռնակը» ամբողջ արագությամբ առաջ էր շարժվում: Կեսօրին արդեն երկու հրամանատարներն էլ անգեն աչքով տեսնում էին

իրար: Պորտուգալացին, որը ոչ մի բույս հեռադիտակը չէր իջեցրել, տեսավ ծովահենների դրոշակը, որի կողքին ծփում էր Յանկատորի՝ կիսալուսինով ալ դրոշակը: «Հրամանատար՛ր, Յանկատորն է, պարտասարվիր՛ ճակատամարտի»: Հնչեցին փողերը: Կռվող ողջ անձնակազմը պատրաստվեց կռվի: Բոցմանը ամբողջ թափով առաջացավ դեպի թշնամու նավը: «Արագ թիավարե՛ք, շուրով նոր նավ կունենանք»: Ամբողջ թափով «Էլեոնորան» սլացավ դեպի թշնամի նավը:

«Ռոբե՛րտ, պարտասարվիր՛. կա՛մ մահ, կա՛մ ազատություն: Այս առիթը պետք չէ բաց թողնել»:

Անցավ մեկ ժամ: Բոցմանն արագությունը ավելացնում էր: Լսվում էին մարդկանց գոռում-գոչյունները: Հանկարծ մի մուրճի հարված լսվեց, «Էլեոնորան» սարսուռաց, ու երկու նավերը բախվեցին իրար: Բոցմանը թռավ իր տեղից ու բարձրացավ տախտակամած: «Ռոբե՛րտ, պոկվիր՛»: Ռոբերտից առաջ պոկվեց Սելիմը: Մինչև նկուղի անցքին հասնելը մեկը, անգլուխ յաթաղանը²⁸⁷ ձեռքին, գլորվեց Սելիմի ոտքերի տակ: Հայտնի դարձավ, որ կռիվն ընթանում է «Էլեոնորայի» վրա: Սելիմը, վերցնելով յաթաղանը, դուրս թռավ. «Ռոբե՛րտ, վերցրու՛»: Մի յաթաղան անցքից ցած ընկավ: Ռոբերտը, վերցնելով յաթաղանը, դուրս եկավ անցքից և անհետացավ: Արդեն Սելիմը մահ էր սփռում իր առաջ: Ռոբերտը մի վահան առավ, և ինքն էլ սկսեց կոտորել իսպանացիներին: Միևնույն ժամանակ նկատեց ալժիրցիների՝ ոտքից գլուխ սպառազինված առաջնորդին: Այդ ռազմիկը Յանկատորն էր: Իսպանացիները սկսել էին նահանջել նավի հետնամասը: Ռոբերտը աչքը չէր կտրում ահասարսուռ²⁸⁸ տեսքով մի հաղթանդամ մարդուց: Նրա մի ձեռքում յաթաղանն էր, մյուս ձեռքում՝ աղեղը: Ռոբերտը նկատեց, թե ինչպես նա, նետելով յաթաղանը, նետը դուրս քաշեց կապարճից: Այս տզեղ հսկան նշան բռնեց Յանկատորի կրծքին: Ռոբերտը, այս ամենը տեսնելով, կայծակի արագությամբ նետվեց առաջ ու վահանով կտրեց նետի առաջը, ապա մի հուժկու հարվածով թռցրեց այդ սոսկալի պորտուգալացու գլուխը: Յանկատորը նույնպես նկատել էր հսկային, սակայն ուշ էր: Նա զարմացավ՝ տեսնելով քրջեր հագած, մազերի մեջ կորած այդ մարդուն: Հայտնի չէր անգամ՝ այդ մարդը երիտասա՞րդ է, թե՞ տարիքով: Մարդու արագ շարժումներից երևում էր, որ երիտասարդ

է: Յանկատորը գոռաց. «*Պաշտպանենք այդ գործիլային, ես ուզում եմ որջ տեսնել ինչ ազատողին*»: Ռոբերտը մխրճվել էր ամենաթեժ կովի մեջ: Նա տեսավ, թե ինչպես ընկավ Սելիմը: Ավելի կատաղեց: Մի ակնթարթ տեսավ Պեղորյին, որ երկու բեշթոփով անկանոն կրակում էր: Ռոբերտը նորից տեսավ, թե ինչպես Պեղորյն նշան բռնեց մի կետի: Նա սուկաց, երբ նկատեց, որ այդ կետը Յանկատորն է: Նա ամբողջ թափով նետեց յաթաղանը, սակայն գնդակը իր սև գործը կատարեց: Յանկատորն ընկավ մեջքի վրա: Մի խումբ ռազմիկներ նրան տարան իրենց նավը: Ռոբերտը երկու ցատկով հայտնվեց Յանկատորի կողքին, որը պառկած էր փափուկ գորգի վրա: Հեքիմը աշխատում էր բաճկոնը քանդել: Ռոբերտը իր կողքին կանգնած ռազմիկի գոտուց քաշեց սուրը ու կտրեց բաճկոնը: Նա տեսավ գրահաշապիկը²⁸⁹, որ չէր կարողացել պաշտպանել Յանկատորի կործանքը: Գնդակը փշրել էր գրահը և անցնելով սրտից շատ քիչ ցած՝ սրտին ալ մեծ վնաս էր տվել: Ռոբերտը, հանելով գրահը, տեսավ, որ գնդակը մխրճվել է թիկունքի գրահի մեջ: Հեքիմը զարմացած նայում էր, թե ինչպես է օտարականը հմուտ ձեռքերով առաջին օգնությունը ցույց տալիս²⁹⁰: Մինչ այդ պահը օտարականը ոչինչ չէր խոսել: «*Հեքիմ, ի՞նչ ունես ցավը մեղմացնելու համար*»: Հեքիմը մի սրվակ տվեց: «*Խմեցրու՛, իրեն լավ կզգա*»: «*Ուրիշ ի՞նչ ունես վերքը լվալու համար*»: Մի ուրիշ սրվակ տվեց: «*Ասորով լվա՛*»: Սրվակի պարունակության մեջ բամբակը թաթախելով՝ Ռոբերտը լվաց վերքը, փրփուր դուրս եկավ: «*Քսուք ունե՞ս*»: Մեհլեմի մի սրվակ ալ տվեց: Այդ բոլոր գործողություններից հետո նա կապեց վերքը: Նորից խմեցրեց առաջին սրվակի պարունակությունը: Ուշաթափված Յանկատորը ուշքի եկավ ու տեսավ իր վրա կռացած, ամբողջովին մազերի մեջ կորած մարդուն՝ գործիլային:

«*Ո՞վ ես, ի՞նչ ազգ ես*»: «*Ինչանով մի՛ հեղափոխություն: Քեզ ինչպե՞ս ես զգում... ես բժիշկ եմ, ամեն ինչ կանեմ քեզ փրկելու համար*»: «*Չանկերդ իզուր կըլլաս: Ես զգում եմ, որ ուժերս պակասում եմ: Հալի՛*»: «*Այստեղ եմ, հրամանատար*»: «*Այս ռազմիկը մի անգամ փրկեց իմ կյանքը: Բայց այլահը որոշել էր, որ ես պետք է մեռնեմ: Մահից հետո այս աշխարհում ոչ ոք չունեմ: Ամեն ինչ կտրակում եմ այս ռազմիկին: Նավի հրամանատարությունը հանձնում եմ*

նրան: Նա է երկրորդ Յանկապորը: Ալժիր հասնելուց հետո փաշան ինչպես ուզի, թող այդպես էլ վարվի: Այս ամենը իմ ականից կհաղորդես փաշային»:

Ռոբերտը կարգադրեց. «Յանկապորին րարե՛ք իր նավասենյակը»: Նա, մի թուր վերցնելով, գոռաց. «Առաջ, ինչ հետ, բայց մի՛ քնեք, թշնամու վերջը րվեք»: Արդեն կոծվր վերջանում էր: Իսպանացիները նետում էին զենքերն ու հանձնվում: «Հալի՛լ, վերցրու այդ ավազակին», - հրամայեց Ռոբերտը՝ ցույց տալով Պեդրոյին: «Գլխովդ ես պարասիսան րարու դրա համար: Կբանարակես հարուկ նավասենյակում: Ամեն ինչ կվերցնես նրա մտրից, որ անչնասպան չլինի»: «Ծիծեռնակը»՝ ծովահենների նավը, վերջերս էր կառուցվել և ուներ գերիների համար նախատեսված նկուղային բաժին և հրամանատարի օգնականների համար՝ հինգ-վեցտեղանոց նավասենյակներ: Միայն Յանկատորի նավասենյակն էր մեկտեղանոց: Այստեղ էր նաև վառողի պահեստը: Գիշտ է, պիստոնավորները²⁹¹ քիչ էին. բացի հրամանատարներից և օգնականներից՝ մի տասնյակն ալ կռվող անձնակազմն էր:

Յանկատորի մահը

Բարձրանալով մի բարձր տեղ՝ Ռոբերտը հայտարարեց. «Ռազմիկներ, չեք հրամանատարը ծանր վիրավորված է և հրամանատարությունը հանչնեց ինչ: Չեք վիրավորներին րարեք չեք նավ, գերիներին՝ նկուղ: Դարբին, որտե՞ղ ես»: «Այստեղ եմ, հրամանատար՝»: «Վերցրու՝ օգնականիդ ու թիակների մարդկանց ազարի՛ր շղթաներից: Ռազմիկներ, ինչ որ պիտանի է այս նավում, փոխարե՛ք չեք նավը: Հալի՛լ, փակեցի՞ր ավազակին»: «Փակեցի, հրամանատար՝»: «Ես գնամ Յանկապորի մուր: Դու մնա՛ այստեղ և հետևի՛ր, որ այս նավի բեռնաթափումը շուր կարարվի, հետո կայրե՛ք և կհեռանանք»: «Լսում եմ, հրամանատար՝»:

Երբ Ռոբերտը մտավ Յանկատորի նավասենյակը, հեքիմից բացի այստեղ էր նաև մոլլան: Մոլլան աղոթում էր: Տեսնելով Ռոբերտին՝ նա հարցրեց: «Դու հմուր բժիշկ ես և լավ ռազմիկ, կարո՞ղ ես ստել՝ ինչ վիճակի է Յանկապորը»: Ռոբերտը, ձեռքը դնելով Յանկատորի ճակատին, զգաց, որ ջերմությունը շատ բարձր է: Նա նայեց հեքի-

մին: Հեքիմը գլուխը շարժեց: Հայտնի էր, որ Յանկատորը հոգեվարքի մեջ էր: Ռոբերտը սրվակի հեղուկից լցրեց Յանկատորի բերանը: Յանկատորը բացեց աչքերը ու նայեց շուրջօրլորը: Նա հարցրեց Ռոբերտին. «*Ընդհարումը վերջացա՞վ²⁹²*»: «*Վերջացավ: Թշնամին գլխովին ջահիջահվեց*»: «*Ահա՛ն, որ մեռնում եմ*»: Նայելով մոլլային՝ ասաց. «*Ինչ Ալժիր չբասնեք: Ինչ ծովը կզգեք*»: Այս էին Յանկատորի վերջին խոսքերը: Նա կեսգիշերին մահացավ:

«*Հրամանատար, ամեն ինչ վերջացրի՞նք*»: «*Թիավարները որդեհող են*»: «*Իրենց նավում*»: «*Գնանք*»: Ռոբերտը անցավ Պեղրոյի նավը, որտեղ շղթայված էր մոտ երկու տարի: Այստեղ, գլուխները խոնարհած և հայացքները դեպի հատակ հառած, կանգնած էին նրա բախտակիցները: «*Թիավարներ, նայե՛ք ինչ: Ծանաչեցի՞՞ք*»: Մոտ հիսուն հոգի մի մարդու պես նայեցին: Տեսնելով խոսողին՝ շշմած իրար նայեցին: «*Ես էլ չեմ ընկերն էի: Հիմա այս նավի հրամանատարն եմ: Դուք մինչև Ալժիր վերադառնալը կմիանաք իմ անչնակազմին և ռազմիկներին: Ալժիրում ով չի ուզում, թող հեռանա, ով ուզում է, թող մնա: Այսպիսին է հրամանը, ես չեմ իբրև գերի չեմ վերցնի: Համաձա՞յն եք: Ով համաձայն է, թող անցնի այն նավը*»: Մի մարդու նման բոլորն անցան Յանկատորի «Ծիծեռնակ» նավը: «*Էլեռնորայի*» վրա մնացին վիրավոր և մեռած իսպանացիներն ու պորտուգալացիները: Իջնելով տախտակամած՝ Ռոբերտը սկսեց փնտրել Սելիմին: Սելիմն ընկած էր երեսնիվայր: Վերցնելով նրա դին՝ բերեց «Ծիծեռնակ»: «*Հայի՛՛, մթերքը հասնե՛ք նավից և կրակի՛ րվեք այն*»: «*Հրամանատար, ավելի լավ է րակը՝ քանդե՛նք, թող ընկղմվի*»: «*Ինչպես կուզես, այնպես էլ արա՛*»:

Առավոտ կատարվեց Յանկատորի և Սելիմի թաղումը: Նրանց անշունչ մարմինները ընկղմվեցին օվկիանոսի ջրերի մեջ: Մոլլան կատարեց արարողությունը: Ողջ անձնակազմը լաց էր լինում, թաց էին նաև երկրորդ Յանկատորի աչքերը: Սրանից հետո Ռոբերտին Յանկատոր Երկրորդ պիտի կոչեին: Նույն օրը նա հավաք արեց և հարց տվեց. «*Հարգելի՛ օգնականներ, դուք համաձա՞յն եք չեմ մահացած հրամանատարի այն կարծիքին, որ ինչ նշանակեց չեմ նոր հրամանատար*»: Խոսեց մոլլան: «*Միայն ալլահը կարող է իսպիտել մեր սիրելի Յանկատորի կամքը: Մինչև Ալժիր հասնելը դու ես հրա-*

մանասրարը: Ես անչափ փաշային կզեկուցեմ, որ Ալժիր հասնելուց հետո էլ դու մնաս մեր հրամանասրարը»: «Դուք ի՞նչ եք ասում, համաչա՞ն եք մոլլայի ասածին»: Խոսեց Հալիլը: «Մեր հանգուցյալ հրամանասրարի վերջին կամքն էր, որ դու ընդունես հրամանասրարությունը»: Նայեց չորսրորը: «Ծիծեռնակի» հարվածային ուժը կազմում էր մոտ քսան հոգի: Նրանք գլխով համաձայնության նշան արեցին:

Այսպես Ռոբերտը, երկու տարի քիերին շրթայված մնալով, Սելիմի օգնությամբ ազատություն ձեռք բերեց: Ավելին՝ դարձավ ծովահենների նավի հրամանատար՝ Յանկատոր Երկրորդ անվամբ:

«Բոլորդ ազատ եք: Հալիլ, գնանք ինչ մոտ: Մոլլային այստեղ կանչիր... Հալիլ, դու այս նավի ամեն ինչին տեղյակ ես. ի՞նչ մթերք ունենք, ինչքա՞ն ժամանակից պեղք է վերադառնանք Ալժիր: Ես քեզ նշանակում եմ բոլոր գործերի հրամանասրար և իմ առաջին օգնական»: «Հրամանասրար, մենք նոր ենք դուրս եկել Ալժիրից, առաջին հանդիպած նավը այս էր, որ մեզ դժբախտություն բերեց: Մենք հաղթեցինք, բայց շատ ծանր գնով: Կորցրինք մեր սիրելի հրամանասրարին»: «Այսպիսին է ալլահի կամքը», - ասաց մոլլան: Հալիլը շարունակեց: «Այդ նավը շատ աղքատ էր, այնպես որ այս վիճակով Ալժիր վերադառնալ չենք կարող: Պեղք է մի հարուստ նավ կողոպտելը: Դրա համար պեղք է դեպի արևելք գնանք: Մեր-չավոր Արևելքից թալանված ոսկով և ուրիշ թանկարժեք մեքադենտով ու քարերով բեռնված նավերը ուղևորվում են դեպի արևմուտք»: «Ի՞նչ նավեր են դրանք»: «Ընդհանրապես պարսահում են անգլիական և պորտուգալական նավեր, երբեմն՝ իսպանական»: «Դրանց ֆրիզարներ չե՞ն ուղեկցում»: «Միայն անգլիականներին: Դրանց թնդանոթները շատ փոքր են: Մեր թնդանոթները խորրասկում են դրանց»:

Մի ամսից ավել գնացին դեպի արևելք, ոչ մի նավի չհանդիպեցին: «Հրամանասրար, գործերը լավ չեն, կարծես ծովը ամայացել է: Ոչ մի նավ չի երևում: Ալժիր չենք կարող վերադառնալ: Շատ ենք հեռացել, վերադառնալու համար մթերքը չի հերիքի: Պեղք է մի նավի հանդիպելը: «Ես չեմ կարծում, որ կարող ենք ափ դուրս գալ և մի քաղաքի վրա հարչակվել»: «Դրա մասին չխոսենք: Հարավում Եգիպտոսն է, հյուսիսում՝ Հունաստանը: Եգիպտոսի վրա չենք կա-

րող հարձակվել: Այնպե՞ղ փաշան է՝ մեր փաշայի եղբայրը: Հյուսիսում Հունաստանն է, որ ունի շար ուժեղ նավատորմ: Այնպես որ ասի էլնեխոց հույսներս կտրենք»:

Անցնում էին օրեր: Դիտակետում, հեռադիտակը ձեռքին, գիշեր-ցերեկ նավաստի էր կանգնած: Դիտում էր հեռուն: Մի առավոտ՝ արևը դեռ չծագած, երբ Միջերկրական ծովը ծփում էր մեռած ալիքներով, հանկարծ դիտակետից նավաստին ձայն տվեց:

Առանց կովի գրավում

«Հրամանատար, մեր առաջ նավ է երևում»: Բոլորը վազեցին այն կողմը, դեպի ուր ցույց էր տալիս դիտակը, բայց անգե՛ն աչքով ոչինչ չէր երևում: Եկավ Յանկատորը՝ հեռադիտակը ձեռքին: Հալիլը նրա կողքին էր: «Հալիլ, նա՞վ է, թե՞ աչքերիս է երևում: Մոված հավը երագում գարի է րեսնում»: «Նավ է, հրամանատար, բայց ի՞նչ նավ է՝ հայրնի չէ: Հրամանատար, հրաման րամ՝ ամբողջ թափով առաջ գնանք: Այսօր պետք է հարձակվենք, վաղը ուշ կըլլա»: «Կանչի՞ր բոցմանին... Բոցման, ինչպե՞ս են գործերդ: Քանի՞ թիավար ունես»: «Մի երեք հոգի պակաս է»: «Դու սպասի՞ր: Հալիլ, քանի՞ հոգի կարգը խախտող և քանտարկված կա»: «Հինգ հոգի: Երկուսին պետք է կախենք, երեքին պետք է բաց թողնենք այն պայմանով, որ երկրորդ անգամ խախտում կատարելու դեպքում պետք է կախադան բարձրացվեն»: «Իսկ իմ գերին ի՞նչ է անում»: «Ուրում-խմում, քեֆ է անում»: «Իմ գերուն և երկու մահվան դատապարտվածներին կհանչնես դարբինին: Թիավարները երեք հոգով պակաս են: Թող դրանց շղթայի թիերից... Բոցման, քեզ մի ժամ ժամանակ, լավ կկերակրես: Վերջրո՛ւ հեռադիտակը ու նայի՞ր, թե ինչ կա այնպե՞ղ»: «Նավ է, հրամանատար»: «Դե հիմա գնա՛ ու կատարի՞ր հրամանս»: «Լիովին»: «Գնա՛»:

Մի ժամ հետո «Ծիծեռնակը» նետի պես սլացավ դեպի անծանոթ նավը: Երեք ժամ տևեց այս արագ ընթացքը: Արդեն նավերից մարդիկ տեսնում էին իրար: Ֆրիգատները սկսեցին ուժեղ ունբակո՛ծել «Ծիծեռնակին», բայց արկերը ընկնում էին ծովը: «Ծիծեռնակը» ավելի էր մոտենում: Պարզ դարձավ, որ նավը անգլիական բեռնատար է: Հալիլը հրամայեց, որ վերին տախտակամածի թնդանոթը

կրակ բացի ֆրիգատի վրա: Հինգ թնդանոթները միասին կրակ բացեցին ֆրիգատների վրա: Քիչ անց դրանք արդեն գոյություն չունեին: Ցանկատորը բարձրացավ վերևի հարթակը ու բարձրախոտով անցվերեն հայտարարեց, որ կապիտանը նավը հանձնի ծովահենների հրամանատարին, հակառակ դեպքում նավի ունեցվածքը վերցնելուց հետո նավը և անձնակազմը կխորտակվեն: Նա հինգ ըոպե ժամանակ տվեց: Մինչ այդ անգլիական նավի կողերին անցկացվեցին կիլերը²⁹³: Երկու նավերը կիպ կպած էին իրար: «Ծիծեռնակի» կռվող անձնակազմը ներխուժման հրամանին էր սպասում: Անգլիական նավի նավահարթակին երևացին սպիտակ դրոշով զինվորական համազգեստով չորս ծովայիններ: Նրանք անցվերենով հարցրին. «*Ի՞նչ պայման էք մեզ առաջարկում*»: Երևաց Ցանկատորը՝ իր օգնականների հետ: «*Անվերապահ անձնապու՛ր եղեք: Նավի ամբողջ հարստությունը հանձնե՛ք մեզ*»: «*Հեյրո՞*»: «*Հեյրո նորից կերթաք Մերչանտոր Արևելքի ժողովուրդներին կկողոպտեք: Այս անգամ ձեզ չենք իսկզարի: Եթե պայմանը ընդունեք, կապիտանն էլ իր օգնականների հետ ամբողջ անձնակազմով մեզ հյուր կգա: Եթե չընդունեք, կհարչակվենք, բոլորիդ գերի կվերցնենք ու կվաճառենք Գիբբունի շուկայում*»: «*Մեզ տասը ըոպե ժամանակ տվե՛ք*»: Ժամանակը լրանալուց հետո անգլիական նավի ողջ անձնակազմը կապիտանի և օգնականների հետ եկավ «Ծիծեռնակի» տախտակամած: Մոտ երեսուն հոգի էին:

Վերծինյան

«*Հալի՛լ, դու կազմակերպի՛ր բեռնաթափումը: Ո՛չ մի անկարգություն*»: «*Կապիտան, քանի՞ օրից կհասնես Բեյրութ*»: «*Ինչի՞ համար ես հարցնում*»: «*Որ մթերք թողնեն*»: «*Մի հինգ օրում*»: «*Հալի՛լ, կատարի՛ր հրամանը: Երեսուն հոգու համար հինգ օրվա մթերք թո՛ղ նավի վրա: Մնացածը ամբողջությամբ կտեղափոխեք մեր նավը*»:

Ցանկատորի ուշադրությունը գրավեց անգլիական անձնակազմի նավաստիներից մեկը: Նա կապիտանին և օգնականներին առաջարկեց իր առանձնասենյակը, հյուրասիրեց զանազան խմիչքներով և մրգերով: Անգլիացի կապիտանը նայում էր Ցանկատորին, որն արդեն սափրվել էր, հարդարել մազերը ու տարբերվում էր մյուս ծո-

վահեցններից, և զարմանում, թե այսպիսի սիրուն ջենտլմենը ինչ գործ ունի այս վայրենի ծովահեցների մեջ: Կապիտանը, նայելով Յանկատորի աչքերի մեջ, հարցրեց. «*Ծովահեցների՛ կապիտան, անզլիացի՞ ես*»: «*Ես ոչ ոք եմ: Ինչ կարող եք կոչել Յանկատոր*»: «*Շատ մաքուր անզլերեն եք խոսում*»: «*Ես մաքուր խոսում եմ արաբերեն, թուրքերեն, ֆրանսերեն և ուրիշ շատ լեզուներով*»: «*Շատ զարմանալի է*»: «*Ինչը՞*»: «*Այս վայրի ծովահեցներին ինչպե՞ս ես ենթարկում քեզ*»: «*Կապիտան, դուք նարե՛ք, ծխե՛ք, խմե՛ք, ես մի քիչ գործ ունեմ*»: Յանկատորը բարձրացավ վերևի հարթակ և աչքերին սև ակնոց դնելով՝ մոտեցավ այն նավաստուն, որն իրեն ծանոթ էր թվացել: «*Հեղևի՛ր ինչ*»: Նա այդ նավաստուն տարավ մի ուրիշ նավասենյակ, ուր նախապես զանազան խմիչքներով ու մրգերով սեղան էր պատրաստել տվել: «*Նայի՛ր, անուևո՛ր ի՞նչ է*»: «*Վերծիւյա*»: «*Անզլիացի՞ ես*»: «*Այո*»: «*Ինչքա՞ն ժամանակ ես աշխատում այս նավի վրա*»: «*Մի վեց ամիս*»: «*Անզլիայում որտե՞ր ես ապրում*»: «*Ես Լոնդոնում եմ ապրում, բայց մեկ-մեկ գալիս էի Լամանչի ափին գրկվող լորդ Հարիմանի թիակը: Ծնողներս լորդ Հարիմանի ծառաներն են*»: «*Վերջին անգամ ե՞րբ եղար այնպե՛ր*»: «*Աշխատանքի մրկելուց մի շաբաթ առաջ... Հիմա այնպե՛ր շատ փիտուր է, չկա այն ուրախությունը, որ կար մի ժամանակ*»: «*Այդ ի՞նչ է պատահել որ*»: Մի քանի բաժակ խմելուց հետո Վերծիւյայի լեզուն բացվեց: «*Լորդ Հարիմանի կողքի թիակը զբաղեցնում էր լորդ Կրիսթոֆի ընտանիքը, որը երկու տղա ուներ, իսկ լորդ Հարիմանը՝ մի տղա և մի աղջիկ: Երկու տարի առաջ լորդ Կրիսթոֆի տղան՝ Ռոբերտը, սպանելով լորդ Հարիմանի տղային՝ Հարիին, անհետ կորավ*»: «*Ռոբերտի եղբայրը հիմա ի՞նչ է անում*»: «*Ուզում է ամուսնանալ լորդ Հարիմանի գեղեցկուհի դստեր՝ Ռոզանայի հետ, բայց ինչպես երևում է, ոչինչ չի սրացվի: Ռոզանան, որ սիրում էր Ռոբերտին, չի հավատում, որ եղբորը Ռոբերտն է սպանել*»: Յանկատորը չէր սխալվում, նա մի քանի անգամ Վերծիւյային տեսել էր Հարիմանի թիակում: Նույնիսկ խանդ էր զգացել՝ տեսնելով Ռոզանայի հետ խոսելիս: Յանկատորը կգրկեր, կհամբուրեր Վերծիւյային, բայց չէր ուզում հայտնել իր ով ըլլալը: Նա հարցրեց. «*Զսկի՞ տարեկան ես*»: «*Զսանութ*»: «*Կին, երեխաներ ունե՞ս*»: «*Ո՛չ ամուս-*

նացած չեմ: Բացի հորիցս ու մորիցս՝ ոչ ոք չունեմ»: «Վերժինյա՛, քեզ մի առաջարկություն պիտի անեմ, արի մնա՛ ինչ մուր»: «Ես ավազակ չեմ, այնպես որ չեմ միանա ծովահենների ավազակախմբին, որի գլխավորը դու ես»: «Շար խիստ ես դալուս: Եթե ես ավազակ ըլլայի, չեմ անչնակազմը կապիտանի գլխավորությամբ ծովի րակ կըլլար»: «Շար հեղափոխություն է, թե դու ինչպես ես ընկել այս ավազակախմբի մեջ»: «Նախապայմանները այդպես դասավորվեցին»: «Ինչու՞ ես կողոպտում մեր նավը, ամբողջ անչնակազմը հույսը դրել է այս շահույթի վրա, ես՝ նույնպես: Բաժինս առնելուց հետո ես ամուսնանալու էի»: «Շար եմ ցավում, բայց ուրիշ ելք չկար: Մթերքս վերջանում էր: Նավում ոչ մի հարսություն չկա: Հեղափոխությունը նավի ասրանքները նույնպես կողոպտված են Մերձավոր Արևելքի ժողովուրդներից: Այնպես որ ես քվիթ²⁹⁴ եմ անում անգլիական կողոպտող կառավարությանը»: «Ես գնամ իմ ընկերների մուր»: «Ոչ մի րեդ չես գնա, ես քեզ գերի եմ վերցնում: Չեր նավի հեռանալուց հետո ես կհայրենեմ իմ ով ըլլալը, և դու չես գոջա, որ մնացել ես ինչ մուր: Բոցման»: «Այսպեղ եմ, հրամանատար՛ը»: «Կնարես այս երկրասարդի հետ ու կզրուցես, կպարմես քո արած ավազակությունների մասին, մինչև իրենց նավը հեռանա: Գլխովդ պարասխաս ես րալու նրա համար»:

Բոցմանը շատ հետաքրքիր մարդ դուրս եկավ: Խոսում էր մաքուր անգլերեն: Վերժինյան մի բան էր ուզում իմանալ հրամանատարի մասին: «Այս ո՞վ է չեղ հրամանատարը»: «Ոչ մեկը ոչ մի բան չգիտի: Մի քանի ամիս առաջ ծովահենների մի նավ հարձակվեց մեր նավի վրա: Այս գործիլան (այդպես էր մեր հրամանատարին անվանում մեր նախնիները հրամանատարը՝ Ցանկատորը) և իր ընկերը դուրս եկան թշնամու թխարանից և սկսեցին կոտորել յուրայիններին: Մոսկալի դեմքով հաղթանդամ մի ավազակ աղեղը լարեց ուղիղ մեր հրամանատարի կրծքին: Կայծակի արագությամբ գործիլան վահանով կրեց ներքի ճանապարհը և այդ պահին փրկեց մեր հրամանատարի կյանքը: Նույն արագությամբ նա կրեց ավազակի գլուխը: Նա ամեն ինչ սրբում էր իր առաջ: Թշնամու հրամանատարի բեշթուի²⁹⁵ արշակած գնդակը ծանր վիրավորեց Ցանկատորին: Գործիլան ամբողջ թափով չեռքի թուրը ներքեց դեպի թշնամու հրամանատարը, բայց վրիպեց: Ցանկատորին փոխադրեցինք մեր

նավը: Մեր հեքիմը փանջվում էր և ուզում էր հասնել բանկոնը: Գորիլան վայրկենաբար²⁹⁶ հայրնվեց վիրավորի մոտ: Շար հնույր չևով հասնեց բանկոնը, բայց ուրիշ արգելք ալ կար՝ գրահաշապիկը²⁹⁷: Նա դա էլ հասնեց: Մենք գլուխներս կախ նայում էինք, թե ինչպես է այս վայրենին աշխատում փրկել մեր սիրելի հրամանատարին՝ Յանկատորին, բայց ալլահի կամքն էր, որ հրամանատարը չսպրի: Մահվանից առաջ Յանկատորը իր փոխարեն հրամանատար նշանակեց գորիլային: Ով է, ինչ է՝ չգիտենք»: «Ըսել է, մի երեք ամիս չկա, որ չեր հրամանատարն է»: «Հազիվ էդքան ըլլի»: «Եվ այս ավազակախումբը հնազանդվու՞մ է նրան»: «Յանկատորի կամքը սուրբ է բոլորիս համար»:

Յանկատորը, դուրս գալով իր նավասենյակից, անցավ անգլիական նավը, որը բեռնաթափվում էր: «Հալի՛, ինչպե՞ս է ընթանում աշխատանքը»: «Շար հարուստ նավ է, ամբողջ գիշեր պեղք է աշխատենք, որ կարողանանք տեղափոխել, վաղը մինչև կեսօր կվերջացնենք»: Մյուս օրը՝ արևը դեռ մայր չմտած, անգլիական նավը լրիվ դատարկված էր. կապիտանն իր անձնակազմի հետ, բացի Վերծինյայից, հեռացավ ծովահենների նավից: «Հալի՛, կարո՞ղ ենք ներկայանալ փաշային»: «Լիովին»: «Թափով առաջ ենք ընթանում դեպի Ալժիր... Բոցման, ազար ես: Գնա՛ գործիդ: Թիավարներին շար չբանջես, լավ կկերակրես: Կեսգիշերից հետո հսկգիսը կդաս: Չեր հրամանատարին սպանողի կյանքի համար գլխովդ ես պարասխանարու: Նա ինչ առողջ է պեղք: Պարո՞գ է»: «Պարո՞գ է, հրամանատար»»: Հանելով ակնոցը՝ նա նստեց Վերծինյայի դիմաց: Վերծինյան գլուխը կախ մի կետի էր նայում: «Վերծինյա, նայի՛ր ինչ»: Վերծինյան գլուխը բարձրացրեց և ուղիղ նայեց Յանկատորի աչքերին: Մի քանի վայրկյանից նա վեր թռավ տեղից: «Բո դեմքին նման դեմքով մի նկար կար Ռոզանայի սենյակում: Հիմա էլ կա»: «Ես Ռոբերտն եմ»: «Դու՞ ես սպանել Հարիին՝ Ռոզանայի եղբորը»: «Ո՛չ, եղբայրս սպանեց, ինչ ալ ծախեց հարյուր ոսկով»: Ռոբերտը պատմեց ամբողջ եղելությունը: Վերծինյան գլուխը շարժեց: «Ի՛նչ դաժանություն»: «Հիմա ամբողջ թափով գնում ենք Ալժիր: Ինչ կնշանակեն այս նավի հրամանատար: Կշարունակեմ ծովահենություն անել: Հակառակ դեպքում, իբրև Յանկատորի ժառանգ, կսպրեմ Ալժիրում: Ալժիր հասնելուն պես քեզ կվարչարեն ամբաստան, որ ամ-

բողջ կյանքիդ ընթացքում ապահովված լինես: Ալժիրից անգլիական զառուրթ Թանժիրը²⁹⁸ մտր է: Միասին կերթանք Թանժիր, դրանից հետո դու կշարունակես ճանապարհը»: «Դու չե՞ս ուզում վերադառնալ Անգլիա»: «Չէ՛, ինչ ոչ ոք չի հավատար: Եթե հավատարան, Լեռնարդին կգլխարեն: Չեմ ուզում ավելորդ ցավ պարճառել ծնողներիս»: «Բայց Ռոզանան քեզ է սպասում»: «Կապասի, կապասի, կամուսնանա Լեռնարդի հետ, ամեն ինչ կվերջանա»: «Առաջարկդ խելոք է, բայց ես ոչ մի տեղ չեմ գնա, մնում եմ քեզ հետ»: Ցանկատորը կանգնեց, գրկեց և համբուրեց Վերժինյային: Այսպես երկու տարի անց նա մի հարազատ ընկեր ունեցավ:

Հանդիպում իսպանացիների նավին

Հնչեցին փողերը, Հալիլը ներս մտավ: «Հրամանարա՛ր, մեր առաջ նավ երևաց»: «Վերժինյա՛, գնանք»: Բարձրացան վերի հարթակը: Հեռադիտակը տվեցին Ցանկատորին: «Կարծում եմ՝ իսպանական նավ է, արագացնել ընթացքը»: «Ծիծեռնակը» ամբողջ թափով առաջ ընթացավ: «Ռոբե՛րտ...»: «Ես այստեղ երկրորդ Ցանկատորն եմ, մեկ ալ չլսեմ այդ անունը»: «Լավ, Ցանկատոր՛ր, հարձակվելու՞ ես այս նավի վրա»: «Ուրիշ ելք չունենք, ինչպես երևում է, փաշան շար ագահ մարդ է, քչով չի բավարարվի: Հալի՛լ, մարդկանց պարտաստի՛ր գրոհին: Նավը վերցնելու ենք, ոչ մի գուրթ իսպանացիների նկատմամբ: Գնանք, Վերժինյա, մենք ալ պարտաստվենք կռվին»: «Ես չեմ մասնակցի կռվին»: «Դու կմնաս նավասենյակում»: «Ինչու՞ ես այրում իսպանացիներին»: «Հետո կիմանաս»: Ցանկատորը բաճկոնի տակից հագավ նախկին հրամանատարի գրահաշապիկը և դուրս եկավ նավահարթակ: Ինչպես երևում էր, նավից նկատել էին ծովահենների նավը, արագ փախչում էին դեպի արևմուտք: «Հալի՛լ, ի՞նչ է կատարվում»: «Մեզ նկատեցին և փախչում են»: «Բոցմանին ասա՛, թող ավելացնի արագությունը»: Նայեց, Վերժինյան կողքին կանգնած էր: «Ի՞նչ ես անում այստեղ, մնայիր նավասենյակում»: «Տեսնում եմ՝ նավը փախչում է»: Իսկապես նավը հեռանում էր: «Է՛հ, բարձր առագաստներ ունենայինք, ավելի շուր կհասնեինք»: «Հույս ունես հասնե՞լ»: «Հիմա կդեսնես»: Նավը ամբողջ թափով առաջ սլացավ: «Գնանք, տե՛ս թիավարներին»:

Իջան թիավարների բաժինը: Բոցմանը մուրճի հարվածով կարգավորում էր թիերը: Թիավարների մկանները պրկվում էին: «*Ինչքա՞ն կդիմանա մարդը այս ծանր աշխատանքին*»: «*Ես երկու տարի դիմացա: Սեղիմը հինգ տարի աշխատեց*»: Կանգնեցին Պեդրոյի կողքին: «*Ցանկատո՞ր, ես ճանաչում եմ այս մարդուն: Նա «Էլեոնորա» նավի կապիտանն էր: Նույնիսկ առաջարկեց իր մուր աշխատանքի մրկել*»: «*Ավելի շուրջ ծովահեն կդառնայիր. «Էլեոնորան» ծովահենի նավ էր, հրամանատարն էլ՝ այս թշվառական փակնաբը, որ ինչ գնեց հարյուր ոսկով և շոթայեց թիերին: Հարցնում էիր, թե ինչու եմ արում իսպանացիներին: Այս ավազակը իսպանացի է: Հարյուր ոսկի տալուդ ախտացիր: Հիմա ինչքա՞ն կրաս, որ քեզ ազատես: Բոցմանին ասել եմ, որ եթե սատկի, ծովը չգցի: Դու որ սատկես, քեզ ծովը չեմ գցելու, պիրի վառես, որ ծովը չսպականես*»:

«*Հրամանատար, հասնում եմք*»: Հալիլն էր... «*Գալիս եմ: Հալիլ, ամեն ինչ պատրաստիր*»: «*Պատրաստեցի, հրամանատար*»: Հակառակորդի նավը ամեն ինչ անում էր ճողոպրելու համար: «*Թնդանոթ գցողին կանչի՞ր ինչ մուր: Քեզ մի հանձնարարություն. կջարդես առազաստի գլխավոր կայմը*»: «*Հեռու է, երբ մտրենանք, կջարդեն*»: Հակառակորդը ուժեղ կրակ բացեց թնդանոթներից՝ մինչև գիշերվա վրա հասնելը ծովահեններին նավից հեռու պահելու համար: «*Ծիծեռնակից*» որոտաց առաջին համազարկը, որը ցնցեց իսպանական նավը: Երկրորդ և երրորդ համազարկերից հետո մեծ կայմը շարքից դուրս եկավ: Մի քանի համազարկերից հետո արդեն ամեն ինչ վերջացած էր: Դրանից հետո ամեն ինչ շատ արագ կատարվեց: Ցանկատորի մարդիկ նավ ներխուժեցին: Մի ժամից նավի վրա իսպանացի արդեն չկար, շատ արագ կատարվեց նաև բեռնաթափումը: Նավը պատկանում էր Իսպանիայի թագավորին, որը Թուրքիայի սուլթանի հետ պայմանագիր ուներ Մերձավոր Արևելքի երկրներից բնական հարստությունները արտահանելու մասին: Ըստ պայմանագրի՝ այս երկրներում Իսպանիան գործ և բանվորներ ուներ, որոնք պաշտպանում էին իսպանական թագավորի շահերը:

Այդ նավը տեղափոխում էր երեք ամսվա ռոճիկը, զանազան մթերք, այնպես որ նավը շատ հարուստ էր:

Վերժինյան դիտում էր, երբ Ցանկատորը եկավ նրա սենյակ:

Վերժինյան ոտքի կանգնեց: «*Լա՛վ գործ ես բռնել, մի օր գլուխդ կուտրես*»: «*Դրանում կասկած չկա: Ես մահվան դատապարտվեցի այն օրը, երբ եղբայրս ինչ ծախեց, բայց ես դեռ ողջ եմ*»: «*Ի՞նչ կար նավում*»: «*Ամեն ինչ, բացի կանանցից*»: «*Կանանց շա՞ր ես կարուրել: Ալժիրում Ցանկատորի հարեմը լրիվ քեզ է պարկանում*»: «*Այդ մասին չեմ մտածել: Գնանք վերև*»: «*Վերևն ի՞նչ կա*»: «*Տեսնենք՝ ինչպես են բեռնաթափում նավը*»: «*Ես չեմ գա, դու գնա՛*»: Ցանկատորը, բարձրանալով տախտակամած, տեսավ, որ մարդիկ մրջյունի նման կրում են գերված նավի ապրանքը:

Փաշան

«*Հալի՛, ի՞նչ ես մտածում, կարո՞ղ եմք Ալժիր գնալ ու ներկայանալ փաշային: Ի՞նչ տեսակ մարդ է նա*»: «*Ինքը, ոչինչ, լավ մարդ է, տղան շար նեխած է: Նա գիշեր-ցերեկ աղոթում է, որ Ցանկատորին մի բան պարտահի, և ինքը վերցնի «Ծիծեռնակի» հրամանատարությունը*»: «*Ի՞նչ ես ասում*»: «*Բայց քիչ հույս կա, որ փաշան ու մոլլան համաձայնեն: Հույս կա, որ մոլլան և անձնակազմը քեզ կընկրեն*»:

Այսպես անցան օրերը, մի առավոտ երևաց Ալժիրի նավահանգիստը: Մտվար բազմություն էր հավաքվել դիմավորելու: Ինչպես երևում էր, դիտակը տեսել էր «Ծիծեռնակի» գալը և հայտնել: Եկած էր փաշայի ներկայացուցիչը՝ իր մարդկանց հետ: Մոլլայի կողքին ուրիշ մարդ տեսնելով՝ ներկայացուցիչը առաջ եկավ, բարևեց ու հարցրեց. «*Ի՞նչ է պարտահել, Ցանկատորը ու՞ր է, հիվա՞նդ է*»: «*Այստեղ բացատրվելու տեղ չէ, գնանք փաշայի մոտ*»: Փաշայի մարդիկ, երկրորդ Ցանկատորը, մոլլան, Հալիը և Ցանկատորի չորս օգնականները գնացին փաշայի ապարանքը: Փաշան, գլխին կարմիր չալմա հագած, մոտ հիսուն տարեկան մարդ էր՝ խնամված մորուքով: Երևում էր, որ շատ ազդեցիկ անձնավորություն էր, կողքին կանգնած մարդիկ զինվորական զգեստներով էին, դրանցից միայն մեկի հագուստն էր չափազանց պճնված: Հայտնի էր, որ փաշայի տղան է:

Փաշային գլուխ տալով՝ մոլլան ուղիղ նայեց նրա աչքերին: «*Աղե՛ր է պարտահել: Ու՞ր է Ցանկատորը*»: Մոլլան գլուխը խոնար-

հեց: «Ալլահի կամքը կարարվեց: Յանկարորը չկա»: «Ալլահն ի՞նչ գործ ունի այսրեդ: Չկարողացա՞ք պաշտպանել ձեր հրամանատարին»: Փաշան նստեց: Հայտնի էր, որ աչքերը թաց էին: Չեռքով ցույց տվեց, որ նստեն: Երկրորդ Յանկատորից բացի՝ բոլորը նստեցին: «Այս երկրասարդը ի՞նչ գործ ունի այսրեդ: Ո՞վ է, ինչացու՞ է»: Փաշայի տղան աչքերը չռած նայում էր նրան: Մոլլան պատմեց ամբողջ իրողությունը մինչև այն րոպեն, երբ Ռոբերտը հայտնվեց թշնամու տախտակամածին և սկսեց կոտորել իսպանացիներին: «Մնացածը թող ինքը պարմի»: «Երկրասարդ, ի՞նչ ունես պարմելու»: Յանկատորը, առաջ գալով, գլուխը խոնարհեց ու պատմեց: «Մրանից մի երկու և կես րարի առաջ մի սրիկա ինչ րասն օր բանարկելուց հետո վաճառեց «Էլեոնորա» նավի հրամանատարին, որը ինչ շղթայեց թիերին: Այս թիերին էր շղթայված նաև մի արար՝ Սելիմ անունով: Ես շար թույլ էի, հազիվ րասն օր դիմանայի, բայց Սելիմը, որը երեք րարի մենակ էր աշխատել, ամեն ինչ արեց, որ իմ վիճակը թեթևացնի: Սելիմը ինչ հայրեց, որ իր մուր իարտոցներ կան, որ իր մի ուրբի շղթան ինքն արդեն կտրել է: Ես էլ սկսեցի կտրել իմ ուրբի շղթան: Մի րարի րեկեց: Սելիմի ուրբերն արդեն ազատ էին: Մի օր իմացանք, որ «Էլեոնորան» վերանորոգման համար կանգ է առել Գիբթունում: Այդ ընթացքում նավի հրամանատարը ծանոթացավ մի պորտուգալացու հետ, որի շեռքի րակ կար րասը հոգի: Այս պորտուգալացին պարմեց, որ Միջերկրական ծովում կա մի արագաշարժ և ամուր նավ՝ Յանկարոր անունով մարդու հրամանատարություն րակ: Նրանք որոշեցին միասին գրավել այդ նավը՝ հետո միասին աշխատելու նպատակով: Դա մեզ պարմեց բոցմանը: Սելիմը Ալժիրում րեսել էր այս նավը և ճանաչում էր հրամանատարին: Ես հարցրի. «Ի՞նչ ես մրածում այս մասին, Սելիմ»: «Յանկարորը կջախջախի սրանց, մենք պետք է օգրվենք այս առիթից»: Վեց ամսից ավել րեկեց «Էլեոնորայի» վերանորոգումը: Մի առավուր Գիբթունի նավահանգրից դուրս եկանք դեպի Միջերկրական ծով: Շար ամիսներ րեկեց, շար փոթորիկներ անցկացրինք: Շրջում էինք Միջերկրականի ջրերում: Իմ ուրբի շղթան ալ կտրեցինք: Ուժեղ բախումից հայրնի եղավ, որ երկու թշնամի նավեր իրար են հանդիպել: Տասը րոպե չանցած՝ արդեն կռիվը «Էլեոնորայի» վրա էր: Բոցմանը անցքից դուրս թռավ, նրա երևից՝

Մեխմը: Նա մի յաթաղան ներեց իմ կողմը: Առնելով ընթացա դեպի վերև, հայրնվեցի փախարակամածին: Մնացածը թող մոլլան պարմիր»: «Չե՞ս ասի ի՞նչ քավնագ²⁹⁹ ունես, ի՞նչ ազգ ես»: «Մուսուլման չեմ, քայց արում եմ քրիստոնյաներին: Ուրիշ ասելիք չունեմ»: Փաշայի տղան կատաղեց.«Գյավուր է, դու՛րս արեք դրան, ես եմ «Ծիծեռնակի» հրամանարարը: Ի՞նչ ես հանչնելու նավը»: «Լռի՛ր, վախկո՛ւր: Նապաստակի սիրտ ունիս, առյուծ ես չեանում: Կորի՛ր այսրեղից, գնա՛ հարեմդ: Մինչև չկանչեմ, աչքիս չերևա՛ս... Չես ուզում ասել ով ըլլալի, ինչպե՞ս նախ վարահեմ»: «Փաշա՛, ես աշխարհում շատ բան եմ կորցրել, քայց ինչ շատ մեծ ցավ պատճառեց Մեխմի և Յանկարոորի մահը: Երդվում եմ նրանց արևով³⁰⁰, հավատարիմ կծառայեմ քեզ: Եթե չես վարահում, ես քեզանից մի խնդրանք ունեմ: Նավում կա երեսուն հոգի, ովքեր ինչ հետ եմ թիավարում: Ես նրանց խոստացա Ալժիրում ազատ արչակել: Երկրորդ խնդրանքս հետևյալն է. նավում է Յանկարոորին ապանողը: Նրան ինչ պիտի հանչնես: Ես դրա հետ հաշիվ ունեմ, ես դրան կկախեի, քայց կսխաղանը դրա համար փրկություն է: Մեկ էլ մի ծառա ունեմ: Երրորդ խնդրանքս այն է, որ թողնես Ալժիրում ապրեմ՝ քո հպարակ Յանկարոորի ապարանքում, որ ինչ է կրակելի»: «Երիտասարդ, ի՞նչ ուսմունք ունես»: «Երկու համալսարան եմ վերջացրել: Ծովային ֆրիգատի կապիտանի և առաջին կարգի բժիշկի դիպլոմ³⁰¹ ունեմ»: «Զերի՛մ, այս երիտասարդին տա՛ր Յանկարոորի ապարանքը և այս նամակը հանչնի՛ր կառավարիչին, ասա՛, որ այս օրվանից Յանկարոորի ունեցվածքը պարկանում է այս երիտասարդին»: «Գնա՛, երիտասարդ, մեր որոշումը մի քանի օրից կհայրենեմք քեզ»: «Փաշա՛, ծառայիս վերցնե՞մ նավից»: «Գնա՛, մի քիչ հետո ծառան կըլլա քեզ մոտ»:

Յանկատորի ապարանքը ծովափին գտնվող գեղեցիկ շենքերից մեկն էր, ուներ գեղեցիկ այգի, որտեղ աճում էին հիանալի վարդեր և ուրիշ ծաղիկներ: Այգին հատուկ մի մաս ուներ, որտեղ մի շարքի վրա նարնջի, մանդարինի և ուրիշ մրգերի ծառեր էին աճում: Թզենիները և ընկուզենիները աճում էին պարտեզի ծառերի մասնաբաժնի վերջնամասում: Պարտեզի դուռը պատրաստված էր կաղնուց, դռան կողքին կախված էր թակը: Թակի հարվածից կողքից մի փոքր պատուհանի պես անցք բացվեց: «Ու՛ն եք ուզում»: Ուղեկցողը փա-

շայի նամակը հանձնեց այս մարդուն, որը, ինչպես պարզվեց, կառավարիչն էր: Տեսնելով փաշայի կնիքը՝ համբուրեց նամակը, հետո բացեց ու կարդաց այն: Նա բացեց դուռը և ներս թողեց եկվորներին: Գլուխ տալով երկրորդ Ցանկատորին՝ ընկավ նրա առաջ հենց քարե աստիճանների մոտ, որոնցով արդեն բարձրանում էր երկրորդ Ցանկատորը: Կառավարիչը մի ապակեպատ դուռ բացեց: «Սա նախասրահն է»: Այսպես ցույց տվեց բոլոր սենյակները: «Ծառաների ու սարրուկների բաժինը առաջին հարկում է»: «Հարենը որտե՞ղ է»: «Այս շենքի կողքին՝ երկու հարկանի առանձնասրահը»: Մինչև այդ Ցանկատորը չէր նկատել այդ շինությունը: «Գնանք, հարենը տեսնեն»: «Այդ իմ ուժերից վեր է, կնոջս ուղարկեմ՝ կառավարիչին³⁰² կանչի»: «Այդքան խի՞սար է հարենի մուտքը»: «Բացի հանգուցյալ Ցանկատորից՝ ոչ մի տղամարդ ուրք չի դրել այնտեղ: Բոլոր նաժիշկները, ծառաները և կառավարիչը կանայք ու աղջիկներ են»: «Հիմա մի՞ ուղարկիր: Ես քեզ կասեմ, երբ ուղարկես: Հիմա ինչ մուր ուղարկիր գանձապահին, խոհարարին³⁰³ և իմ համհարզին»: Տասը ռուպե հետո եկան երեք հոգի: «Ինչպես գիտեք, չեք տերը գոհվեց՝ ինչ ժառանգ թողնելով: Ամեն ինչ մնում է առաջվա մման»: Խոհարարին հանձնարարություն տալով՝ ուղարկեց՝ իր մոտ պահելով համհարզին ու գանձապահին: «Խոհարար, դու ազատ ես, -սպա դառնալով գանձապահին՝ հարցրեց, -անունդ ի՞նչ է»: «Իբրահիմ»: «Ի՞նչ վիճակի է դրամի խնդիրը»: «Շատ գոհացուցիչ, շատ խնայողաբար եմ ծախսում»: «Բոլորի ամսավճարները ժամանակի՞ն ես տալիս»: Մինչ այդ բերեցին Վերժինյային: «Այս ի՞նչ սպարանք է, ի՞նչ հոյակապ այգի է... Հիանալի ժառանգություն ես ստացել»: Համհարզի անունը Շաքիր էր: «Շաքիր, կարգադրի՛ր մեզ ճաշ մատուցել»: «Տե՛ր իմ, ամեն ինչ պատրաստ է ճաշատենյակում»: «Գնանք, Վերժինյա»: Շատ հիանալի ճաշատենյակ էր, սեղանին դրված էր բյուրեղապակյա սպասք՝ համեղ ուտեստներով և ճաշատեսակներով, քանկարժեք բաժակներում լցված էին շերբեթ³⁰⁴ և հատուկ պատրաստված պաղպաղակ: Սեղանին, խմիչքից բացի, ամեն ինչ կար: Առավոտյան ներկայացավ հարենի կառավարչուհին, որը շատ համակրելի կին էր՝ ոտքից գլուխ մետաքսե քողով ծածկված: Միայն Վերժինյայի գնալուց հետո նա իջեցրեց քողը և գլուխ տալով

հայտնեց իր ով ըլլալը: «Խանութն, չեզ ազար զգացեք... Ի՞նչ վիճակում է հարեմը»: «Ձերդ վսեմություն, հարեմը սպասում է ձեր այցելությանը»: «Ես հարեմ չեմ այցելելու, ես ուզում եմ հարեմը արշակել: Ով ուզում է, թող մնա, ով ուզում է գնալ, ազար է, թող գնա, ես կապահովեմ այնքան դրամով, որ կարողանա ապրել ազար կյանքով: Մնացողները կապրեն առաջվա պես իմ հաշվին»: «Ձերդ վսեմություն, չե՞ք ուզում հարեմ պահել, բայց այդ հակառակ է բարձր աստիճան ունեցող անձնավորության համար: Մուսուլման չե՞ք»: «Ո՛չ»: «Ի՞նչ արած, ձեր առաջարկը կհաղորդեմ աղջիկներին»: Հարեմի կառավարչուհու գնալուց հետո ներս եկավ Վերժինյան: «Վերժինյա՛, ես ցրում եմ հարեմը»: «Այդ քո գործն է, քրիստոնյայի համար հարեմ պահելն ամոթ է»: Յանկատորը կանգնեց. «Այս երկու օրում հայրնի կըլլա իմ վիճակը: Տեսնե՛ք՝ նավը ինչ կհանձնե՞ն, թե՞ ոչ: Եթե նավը ինչ հանձնեն, վա՛յ քրիստոնյա իսլամացիներին, եթե չհանձնեն, ես կապրեմ այսպեղ՝ այս թիակում, իբրև փրկված ընդունելով փաշայի հպարակությունը: Կարանամ իմ բաժինը, որը փոքր չէ, ու կապահովեմ քեզ: Մինչև Թանժիր կողեկցեմ: Դու կխոսարանաս, որ իմ մասին ոչինչ չես հայրնի: Քեզ կրամ այսպեղի իմ հասցեն: Ալժիր եկողների միջոցով ինչ նամակ կուղարկես ու կհայրնես երկու լորդերի կյանքի մասին»:

«Ծիծեռնակի» վերանորոգումը և նոր հրամանատարը

Այսպես անցավ մի քանի օր: Մի առավոտ եկավ այն անձնավորությունը, որը Յանկատորին ուղեկցել էր առաջին անգամ: Հայտնեց, որ փաշան ուզում է նրան տեսնել: Փաշայի առանձնասենյակում նստած էին նավի անձնակազմի ներկայացուցիչները, հրամանատարությունը՝ մոլլայի և Հալիլի գլխավորությամբ: Յանկատորը, փաշային գլուխ տալով, մնաց ոտքի կանգնած: «Երիտասարդ, սրանից հետո քեզ Յանկատոր կկոչեն: Նավի հրամանատարությունը միահամուռ քեզ ընկրեց «Ծիծեռնակի» գլխավոր հրամանատար: Ի՞նչ ունես ասելու»: «Կարդարացնեմ ձեր վարսահությունը»: «Դրանում կասկած չունեմ: Յանկատորը, մոլլան և Հալիլը թող մնան, մնացածը ազար են»: Բոլորը ոտքի ելան ու անաղմուկ հեռացան: «Նարե՛ք: Յանկատոր՛ը, դու էլ նստի՛ր»: «Փաշա՛, Յանկատորը մի միտք է հայրնել ինչ, որը շար

կարևոր է: Թող ինքը հայրենի իր մրսածածը», -ասաց Հալիլը: «Յանկա-
տոր՝, ինչի՞ մասին է խոսքը»: «Դա ծախս է պահանջում: Մեր նավի
առագաստները քիչ են, մեջլեղի կայմը փոքր է: Եթե մեջլեղի կայ-
մը³⁰⁵ մեծացնենք և մյուս առագաստների փոփոխություն անենք, նավի
արագությունը կավելանա, ու թիավարների գործը կթեթևանա»: Փա-
շան, նայելով Յանկատորին, գլուխը շարժեց: «Շատ էս մրսածում թիա-
վարների մասին»: «Դրանք ալ մարդ են»: «Մոլլա՛, դու ի՞նչ ես ասում:
Խելոք միտք չէ՞»: «Ես այդ բաներից գլուխ չեմ հանում, բայց Յանկա-
տորի ասածը ինքիս մտք բան է»: «Նավը իմն է, բայց գլխավոր հրա-
մանատարը դու ես: Հալիլի հետ կերթաս իմ ծախսարարի մտք, ինչ-
քան փող որ պետք է, կվերցնեք: Ինչքա՞ն ժամանակից ծով դուրս
կգաք»: «Մի ամսից ամեն ինչ պատրաստ կլինի: Ե՞րբ եք նավը ինչ
հանձնելու»: «Այսօրվանից նավը քո տրամադրության տակ է: Հա՛, մո-
ռացա, ծախսարարը քո բաժինը տարել է, կվերցնես: Բո երեսուն
թիավարները քո տրամադրության տակ են, ինչպես կուզես, այնպես
վարվի: Ազատ եք»: Երեքով նավ գնացին: Նավի ողջ անձնակազմը
կոչերով՝ «Յաշարև՞³⁰⁶, ապրի Յանկատորը», - դիմավորեց նրան:
Բռունցքով բոլորին ողջունեց: «Հալի՛, իմ թիավարներին հավաքի՛ր
այստեղ»: Տասը ռուպե հետո բոլոր երեսուն հոգին ալ կանգնած էին
Յանկատորի առաջ: «Թիավարներ՛, այս նավի գլխավոր հրամանա-
տարը ես եմ: Ես չեզ սորուկներ չեմ հաշվում: Չեզկից ով որ կուզի
մնալ ինչ հետ կռվող անձնակազմի մեջ, բոլորի նման հավասար բա-
ժին կտրանա: Ով որ չի ուզի, կարող է հեռանալ: Հեռացողները տասը
նուկի կտրանան, մինչև իրենց հարմար աշխատանք ճարեն: Մնացածը
կուտեն, կիմեն նավում, մեկ նուկի կտրանան քաղաքում ծախսելու հա-
մար, մինչև նավի նորոգումը վերջանա»: Ոչ մեկը տեղից չշարժվեց:
«Թիավարներ՛, լսեցի՞ք ինչ»: «Հրամանատար՛, մի ժամ ժամանակ
տու՛ր, մրսածենք»: «Լա՛վ, չեք մեջ մի ավագ ընկրե՛ք, որ ինչ հետ կապ
ունենա: Գնացե՛ք»: Մի ժամից եկավ թիավարների ավագը, հայտնեց,
որ հեռացող չկա, բոլորը մնում են Յանկատորի հետ: Այսպես հարթվեց
նաև թիավարների գործը, որ շատ կարևոր էր Յանկատորի համար:
Հիմա նա ուներ երեսուն կողմնակից: «Հալի՛, հարցրու՛, թե անձնակազ-
մի մեջ արտաշագործներ կա՞ն, առագաստից հասկացողներ կա՞ն:
Բե՛ր ինչ մտր»: Պարզվեց, որ շատերը այդ գործի մասնագետներն են:
«Հալի՛, վաղը կսկսենք աշխատանքը: Հիմա կգաս ինչ հետ, կրամ

երեսուն ոսկի, կրածանես իմ թիավարներին»։ Թիակուն Յանկատորին դիմավորեց Վերժինյան։ «Ի՞նչ նորություն»։ «Ամեն ինչ լավ է, նաև վր ինչ հանչնեցին։ Վաղվանից սկսում ենք առազապրների նորոգումը։ Մեկ ամիս հետո բաց ծով դուրս կգանք։ Դու միպրդ չե՞ս փոխել»։ «Չգիտեմ՝ ինչ ասես, չեմ ուզում քեզ այդ ավազակների հետ մենակ թողնել։ Մի կողմից էլ հայրենիքն է քաշում»։ «Մի երկու օր ես շար զբաղված եմ լինելու, մինչև աշխատանքները սկսեն։ Դրանից հետո, ինչպես իտարացա, քեզ դրամով կապահովեմ և մինչև Թալեֆր միասին կերթանք, դրանից հետո՝ Ասրված քեզ հետ... Շաքիր, գանձապահին կանչիր... Իբրահիմ, ինչ հասանելիք դրամը բերի՞ն»։ «Ճիշտ այդպես»։ «Ինչքա՞ն»։ «Մոտ յոթանասուն հազար ոսկեդրամ»։ «Իսկ մինչ այդ ինչքա՞ն կար»։ «Առաջ այդքան ալ կար»։ «Հիտուն հազարը կբերես իմ փրամադրության փակ, այս պահարանում կպահենք»։ «Չե՞րդ գերազանցություն, մինչև վերջին դրամը ամբողջությամբ այսփեղ է, այս էլ բանալիները»։ «Ազար եք, գնացե՛ք»։ «Յոթանասուն հազար ոսկի։ Հայրդ այսքան հարուստ չէ»։

Համհարզը հայտնեց, որ հարեմի կառավարչուհին խնդրում է իրեն ընդունել։ «Թող գա, Վերժինյա՛, դու գնա՛ այգի»։ Վերժինյայի գնալուց հետո կառավարչուհին եկավ ու քողն հանելով՝ գլուխը խոնարհեց։ «Հանուն՛, նստե՛ք»։ Նստելով՝ նա հայտնեց. «Հարեմի բոլոր աղջիկները, բացի մեկից, ուզում են, որ իրենց սեփական նաժիշկներով ու սպասուհիներով իրենց հանչնես փաշայի փողուն»։ «Այդ ինչու՞, ի՞նչ է փչել խելքներին»։ «Փաշայի փղան ասուլի մեկն է, ուզածի պես կիսադացնեն»։ «Իսկ այդ մե՞կը»։ «Նա հույն է, ուզում է ինչ հետ գալ»։ «Դու, հանուն, ու՞ր ես գնալու»։ «Այսփեղ կուսանոց կա, գնալու եմ, որ մայրապետ աշխատեմ»։ «Միայնանից³⁰⁷ ի՞նչ մայրապետ»։ «Ես միայնանն չեմ։ Ես ալ հույն եմ»։ «Այ քեզ հանելուկ... Եվ Յանկատորը գիտե՞ր, որ դու հույն ես»։ «Բասն փարի առաջ իմ փերը ինչ գնեց Ալժիրի սարուկների շուկայից ու բերեց այս թիակը»։ «Ամեն ինչ պարզ է, դու և հույն աղջիկը մնում եք այսփեղ։ Դու՛ իբրև ինչ մայր, որ կորցրի երկու փարի առաջ, իսկ նա՛ իբրև ինչ քույր։ Այսպես չե՞զ համար ավելի լավ չէ՞»։ «Բայց չեմ հասկանում, ինչու՞ ես ցրում հարեմը»։ «Ես էլ եմ քրիստոնյա, գնացե՛ք ու հարեմը պատրաստե՛ք գնալու համար։ Դու էլ մրաժիր իմ

ասածի մասին»: «Հալի՛, վերցրո՛ւ այս երեսուն ոսկին ու գնա՛, քաժանի՛ր: Վերժինյա՛, ի՞նչ ես մտածում: Գործով գնալու եմ փաշայի մոտ, միևնույն ժամանակ արտոնություն եմ խնդրելու քեզ մինչև Թանժիր փանելու համար»: Վերժինյան մտածմունքի մեջ ընկավ: «Չեմ ուզում քեզ առանչին թողնել էս ավազակախմբի մեջ, մնում եմ քեզ հետ, տեսնենք՝ վերջը ի՞նչ կըլլա»: «Տո՛ր ձեռքդ, դու կլինես իմ օգնականը նավի վրա: Ես գնացի փաշայի մոտ, շուր կվերադառնամ, ապա կգնանք քաղաքում ման գալու»:

Փաշայի մոտ

Հայտնեցին Յանկատորի գալու մասին: Փաշան նրա գալը ուրախությամբ ընդունեց: Յանկատորը մտավ փաշայի առանձնասենյակը: Փաշայից գատ այնտեղ կային երկու բարձրաստիճան զինվորականներ և նրա տղան: Յանկատորը գլուխ տալով հայտնեց, որ մի խնդրանք ունի: Չինվորականները հեռացան, փաշան ուզում էր տղային էլ հեռացնել, բայց Յանկատորը ասաց, որ նա մնա: Փաշայի տղան կատաղած նայում էր Յանկատորին:

«Յանկատոր՛, նստի՛ր»: Նա նստելուց հետո հայտնեց.«Փաշա՛, ես ուզում էի հարեմը ցրել, որ կանայք, ուր ուզեին, գնային: Ես նրանց դրամ կտայի, որ նրանք ապահովված լինեին: Սակայն նրանք մերժեցին՝ հայրարարելով, որ ցանկանում են Չեր տղայի հարեմին միանալ: Եթե Չեր տղան համաձայն է, ապա հենց այսօր ալ կարող է վերցնել նրանց՝ բացի երկուսից՝ կառավարչուհուց և նրա սպասուհուց: Նրանք՝ որպես սպասուհիներ մնում են ինչ մոտ»: «Յանկատոր՛, այդ ի՞նչ է փչել խելքիդ: Մի՞թե կարելի է առանց հարեմի... Հա՛, հասկացա...»: Այսպես հարթվեց հարեմի գործը: Փաշայի տղան ողջ հարեմը տարավ:

Ալժիրը

«Վերժինյա՛, գնանք քաղաք ման գալու: Այնքան զբաղված էի, որ դեռ չեմ ուսումնասիրել այն»: «Ես եղել եմ քաղաքում, քաղաք չէ, դժոխք է»:

Ալժիրը Աֆրիկայի Միջերկրական ծովի ափի հին քաղաքներից մեկն է³⁰⁸: Թուրքերը, զավթելով Կոստանդնուպոլիսը, իրենց հորդա-

ների մի մասին ուղարկեցին դեպի արևմուտք, մյուս մասը արշավեց հարավ և Միջերկրական ծովի ափով գրավեց Լիբանանը³⁰⁹, Եգիպտոսը, Ալժիրը³¹⁰: Այդպես Ալժիրը հայտնվեց թուրքական տիրապետության տակ: Վերժինյան իրավացի էր. քաղաքը սոսկալի կեղտոտ էր: Ուներ շատ մեծ շուկաներ, մաս ստրուկների և կենդանիների շուկա: Շուկաներում ուժեղ առևտուր էր գնում: Քաղաքն ուներ մեծ ճամիներ, որոնց կողքին կային բարձր մինարետներ, որտեղ ամբողջ օրը նամազ էին կարդում մոլլաները: Կաբարետները և հասարակաց տները լեփ-լեցուն էին մարդկանցով: Այստեղ կարելի էր հանդիպել ամեն տեսակ մարդկանց, որոնք տարբերվում էին մաշկերի գույներով: Ալժիրն ուներ հարուստ և աղքատ թաղամասեր:

Ցանկատորը և Վերժինյան եղան երկու թաղամասերում էլ: Հարուստ թաղամասերում աղմուկն ավելի քիչ էր: Սրճարաններն ու գինետները ավելի մաքուր էին: Այսպես շրջելով քաղաքում՝ իրիկնադեմին վերադարձան ապարանք, որտեղ նրանց սպասում էր ճոխ սեղանը: Սպասարկում էին երկու հույն սպասուհիները, որոնք մնացել էին Ցանկատորի մոտ: Առավոտ գնալով նավահանգիստ՝ նրանք տեսան, որ վարպետներն արդեն սկսել էին «Ծիծեռնակի» կայմի և առագաստի վերանորոգումը: Հալիլը, տեսնելով Ցանկատորին, մոտեցավ և հայտնեց. «*Աշխատանքը սկսվել է: Մի ամիս ալ չի քաշի, նավը պատրաստ կլինի*»: Եկավ փաշայի համհարզը. «*Հրամանատար՝, փաշան ուզում է քեզ տեսնել*»: «*Վերժինյա՛, դու մնա՛ աշաբեդ, ես շուրով կգամ: Գնանք*»: Փաշան մատած նարգիլե³¹¹ էր քաշում: Նա, տեսնելով Ցանկատորին, ուրախացավ: Նստեցրեց իր կողքին ու ասաց. «*Մի ժամանակ աշաբեդ նստում էր առաջին Ցանկատորը... Նավի վրա եղա՞ր, ինչպե՞ս են գործերը*»: «*Ամեն ինչ կարգին է, շուրով դուրս կգանք*»: «*Ցանկատոր՛ր, ուզում եմ նավի անունը փոխել, ի՞նչ կասես*»: «*Փաշա՛, նավը քոնն է, ինչ անուն կուզես, դի՛ր, ես համաձայն եմ*»: «*Այսօրվանից էմբլեման կփոխես, նավի անունը «Աքմանա» («Ուրուր») կդնես*»: «*Լսում եմ, փաշա՛*»: «*Հա՛, չմոռանամ սես, տղես չի ուզում քեզ տեսնել, իմ միջոցով շատ շնորհակալություն է հայտնում հարենի կանանց*³¹² *համար*»: «*Հասկանում եմ նրա վրդովմունքը: Ես չըլլայի, նա կըլլար նավի հրամանատարը*»: Փաշան քահ-քահ ծիծաղեց. «*Այդ քյոփօղլուն*³¹³ *մի նավակ չի կարող*

կառավարել, ուր մնաց այս սհռելի նավը»: «Փաշա՛, քեզ մի խնդրանք ունեմ: Ինչ մի գրություն րուր, որ ներկայանամ թնդանոթաշուրարան: Ուզում եմ րասը կարարելագործված թնդանոթ չուլել րալ և րեդադրել «Ուրուրի» վրա, գծագիրը ես ունեմ»: «Դժվար գործ է: Այնրեդ շար են զբաղված»: «Ես մարդ կրանեմ, որ օգնեմ: Փորձե՞նք»: Մի ժամից Յանկատորը արդեն ձուլարանում էր: Ջինագործները մի քիչ մտմտացին, բայց երբ իմացան, որ մի երեսուն մարդ կստանան, որ ձուլարանում իրենց օգնեն, համաձայնեցին:

Մի ամիս անց նավը պատրաստ էր: Յանկատորը ներկայացավ փաշային: «Ձե՛րդ պայծառափայլություն, համեցե՛ք նավը սրուզելու»: «Արդեն պարրա՞սար է»: «Լիովին»: «Դուք դուրսը սպասե՛ք, մի քիչ գործ ունեմ, վերջացնեմ, կերթանք... Այս իմ նա՞վն է, այս ի՞նչ հրաշալի րեսք ունի»: Նավը ներկված էր երկնագույն՝ բաց կապույտ: Նոր թնդանոթները փայլում էին արևի ճառագայթների տակ: Դրանք տեղադրված էին նավի առաջամասում և հետնամասում՝ հատուկ պատրաստված հարթակի վրա: «Ե՞րբ ես դուրս գալու»: «Վաղը կսկսեմ զինամթերք և մթերք բեռնելը, նավը խմելու ջրով կապահովեմ: Մյուս օրը դուրս կգամ: Փաշա՛, նորից կգա՞ս՝ առագասարները բաց վիճակում րեսնելու»: Երեք օր տևեց նավի բեռնումը:

Չորրորդ օրը «Ուրուրը» դուրս եկավ Ալժիրի նավահանգստից: Փաշան կանգնած հրճվում էր նավով: «Ուրուրը» կուրս³¹⁴ վերցրեց դեպի արևելք: Մի ամսից ավելի թափառեցին Միջերկրական ծովում: Ոչ մի նավի չհանդիպեցին: Մի առավոտ Յանկատորն ու Վերժինյան, իրար հետ կանգնած, դիտում էին ամայի ծովը³¹⁵:

*
* *
*

...Մոլլան գլուխ տալով հայտնեց.«Հեշր չէր, փաշա՛, նավին չորս ֆրիգատ էր ուղեկցում, բայց մեր նոր թնդանոթները երկուսին շարքից հանեցին, երկուսն էլ փախան»: «Նավը ի՞նչ արեցիք»: «Կապիւրանը անչնասապան եղավ: Նավը թողեցինք կապիւրանի օգնականին ու հեռացանք»: «Գնացե՛ք: Յանկատոր՛, դու մնա՛»: Երկուսի գնալուց հետո փաշան Յանկատորին նստեցրեց իր մոտ: «Դու զիւրե՞ս, որ անգլիական կառավարությունը նուրա՞³¹⁶ է ուղարկել

Սրամբույ, որ քեզ բռնեն և հանձնեն իրենց»: «Այս հարստության մի մասը կուղարկեմ Սրամբույ, ամեն բան կհարթվի»: «Ես ալ այդպես եմ մտածում»:

Մի առավոտ հայտնեցին, որ փաշայի գանձապահն է եկել: Յանկատորն ընդունեց նրան: Գանձապահը Յանկատորին հանձնեց երեք հարյուր հազար ոսկեդրամ: «Այս էլ քո բաժինը, Վերժինյա: Ըն բաժինը հարյուր հազար է»:

Գանձապահը, ոսկիները հանձնելով, ուզեց հեռանալ: Յանկատորը պահեց նրան, հյուրասիրեց ու հինգ հազար ոսկի նվիրելով բաց թողեց: Գանձապահը շնորհակալություն հայտնեց ու հեռացավ:

Անցնում էին օրեր: Յանկատորը երկու-երեք օրը մի անգամ լինում էր փաշայի մոտ: Մի առավոտ, երբ նա եկավ փաշայի մոտ, տեսավ, որ փաշան շատ ուրախ է: «Արի՛, Յանկատոր՛, ուրախ լուր կա: Սրամբույից բանքեր եկավ, սուլթանը շատ գոհ էր ու գրում է, որ ամեն ինչ հարթվել է: Յանկատոր՛, հիմա ի՞նչ ես մտածում»:

«Սլաստում եմ քո հրամանին»:

«Մի շաբաթից կարո՞ղ ես արշավի դուրս գալ: Ուրիշ անգամ այսպիսի սխալ չանես: Հեյրեթդ կորցրու: Մարդկանց կբերես այստեղ, նավը կանհետացնես: Այսպիսին է սուլթանի հրամանը»:

Միջերկրական ծովի սարսափը

Այսպես սկսվեց Յանկատորի արշավը Միջերկրական ծովում: Ոչ մի նավ իրեն ապահով չէր գտնում, չնայած որ այդ նավերին ուղեկցում էին ֆրիգատները: «Ուրուրի» ծանր թնդանոթները կա՛մ ջարդուփշուր էին անում ուղեկցող ֆրիգատներին, կա՛մ ստիպում հեռանալ: Յանկատորի նավը մի տարուց ավել սարսափ էր սփռում բեռնատար նավերի վրա: Անգլիան, Իսպանիան և Պորտուգալիան արշավ կազմակերպեցին «Ուրուրին» ոչնչացնելու համար: Հանդիպումը շատ դաժան էր:

Լույսը նոր էր բացվել, երբ սկսվեց ֆրիգատների հարձակումը «Ուրուրի» վրա: Յանկատորը նոր էր դուրս եկել Ալժիրից և շատ թեթև էր ընթանում, այդ էլ փրկեց նրան: Մի ամբողջ օր տևեց ճակատամարտը: Գիշերով ֆրիգատները շատ էին մոտեցել «Ուրուրին»:

Թնդանոթների արձակած ռումբերը հասնում էին «Ուրուրին»:

Մի

ակնթարթում ամբողջ նավի անձնակազմը ոտքի ելավ: Պետք էր հեռանալ ֆրիգատներից: Մինչ այդ տասը ծանր արկերը թափվել էին ֆրիգատների վրա: «Ուրուրն» արդեն հեռացել էր ֆրիգատներից այնքան, որ թնդանոթները չէին հասնում նրան: Ֆրիգատները քայլ առ քայլ հետևում էին «Ուրուրին», բայց «Ուրուրի» ծանր թնդանոթները մոտ չէին թողնում ֆրիգատներին: Նրանցից շատերը ջարդուփշուր էին եղել: Գիշերը «Ուրուրը» իր ամբողջ արագությամբ հեռացավ ճակատամարտի վայրից: Առավոտ հայտնի եղավ, որ չի կարելի առանց նորոգման ծովում թափառել: Ջրից կես մետրի վրա երեք անցք էր բացվել: Նավը կարող էր վտանգվել ամենափոքր փոթորիկի պատճառով: Վերանորոգումից հետո «Ուրուրը» նույն սարսափն էր ներկայացնում Միջերկրական ծովի բոլոր նավերի համար:

Ժողեֆը

Գրավված անգլիական նավերից մեկի գերեվարված նավաստիների մեջ Վերժինյան մի նավաստու տեսավ ու ճանաչեց նրան: Նա աշխատում էր լորդ Հարիմանի թիակում: Նա այդ մասին հայտնեց Ցանկատորին: «*Վերժինյա, քեզ կճանաչի՞*»: «*Եթե հայտնեմ ով ըլլալս, կճանաչի*»: «*Կհայտնես քո ով ըլլալը, իմ մասին՝ ոչ մի խոսք: Կբերես իմ նավասենյակ ու կխոսեսցնես, որ իմանանք, թե ինչ է կատարվում այնտեղ*»: Անգլիական նավաստիները, «Ուրուրի» ցածր տախտակամածին նստած, գլուխները կախ մտածում էին, երբ Վերժինյա եկավ, կանգնեց այդ նավաստու առաջ: Նավաստին զարմացած նայեց ու ոտքի ելավ: «*Վերժինյա՛, դու ի՞նչ գործ ունես այստեղ, հերո՛, մերդ գիշեր-ցերեկ արցունք են թափում քեզ համար, իսկ դու այստեղ ավազակությունես անում, ծովահենես ևս դարձել*»: «*Հերևի՛ր ինչ*»: Նավաստին հետևեց Վերժինյային: Մտան Ցանկատորի նավասենյակը: «*Նստի՛ր, Ժողեֆ*»: Ժողեֆը նայեց Ցանկատորին: «*Վերժինյա, այս մա՞րդն է, որին կոչում են Ցանկատոր: Նա՞ է առևտրոր անող պետությունների առևտրաևնավերի սին ու սարսափը*»: «*Ինչպես տեսնում ես, նա է*»: «*Ա՛յ հրաշք, ես ճանաչում եմ նրան, նա Ռոբերտն է՝ լորդ Կրիսթոֆի որդին, որ սպանեց Հարիին ու փախավ: Դուք երկուսդ էլ կախադանի եք արժանի*»: Նա նստելով գլուխը շարժեց: Վերժինյան, վերցնելով վիսկիի շիշը, լցրեց երեք

բաժակների մեջ: «Շոզեֆ, խմիր»: Շոզեֆը բարձրացրեց բաժակը ու մինչև վերջ դատարկեց այն: Սի քանի բաժակ խմելուց հետո նրա լեզուն բացվեց: «Դուք ինչանից տեղեկությունների³¹⁷ եք սպասում, ես ամեն ինչ կպատմեմ... Վերժինյա, քո ծնողները գիտեն, թե դու մեռած ես: Իրենց օրը անց կացնում են լաց ու կոծով: Գանք քեզ, ավազակապե՛ր Յանկապոր: Քո հոր վիճակը ծանր է: Անգլիական կառավարությունը սարույզ չգիտի, բայց կասկածում է, որ Միջերկրական ծովում ահուսարսափը տարածողը լորդ Կրիսթոֆի որդին է»: Յանկատորը խոսեց առաջին անգամ: «Քանի՞ տարի է, որ աշխատում ես լորդ Հարիմանի թիակում: Ես այնպե՛ղ եմ ծնվել: Ըսել է, լավ ես ճանաչում երկու լորդերին և նրանց որդիներին: Ի՞նչ ես կարծում, ե՞ս եմ սպանել Հարիին, թե՞ Լեոնարդը»: «Շարերն են կասկածում, որ Ռոբերտը մարդասպան լինի, հատկապես Ռոզանան: Բայց փաստը մնում է փաստ, Ռոբերտը չկա»: «Ուրիշ ի՞նչ կարող ես ասել ծնողներիս մասին»: «Ոչինչ, ամեն ինչ լավ է: Շուրով Լեոնարդը կամուսնանա Ռոզանայի հետ, չնայած Ռոզանան լսել անգամ չի ուզում, բայց երկու լորդերի պահանջը այդ է»: «Շոզեֆ, ինչ հիմա լավ լսիր: Ես Հարիին սպանողը չեմ: Հարիին սպանողը Լեոնարդն է»: Նա պատմեց ամբողջ եղելությունը: «Եվ դու, քո հրամանատարությունից փակ ունենալով այս նավը, չե՞ս գնա Ռոզանայի երևից, որը գիշեր-ցերեկ արցունք է թափում քեզ համար: Քույրս շար է գնում չեր թիակ և ինչ պատմել է Ռոզանայի՝ քո հանդեպ ունեցած սիրո մասին»: «Վերժինյա, ի՞նչ ես մտածում Շոզեֆի սասածի մասին»: «Կախաղան կհանեն, եթե գնաս այնպե՛ղ: Ինչպե՞ս ես անցնելու Ձիբրալթարը»: «Նավի ակունը կփոխենք, կրկենք «Էլեոնորա»: Էմբլեմին զուգահեռ կբաշենք³¹⁸ իսպանական դրոշակը: Դրանք կտանք, կանցնենք»: «Երբ վերադառնաս, փաշան կկախի»: «Փաշայի հետ լեզու գրկելը հեշտ է, ամենակարևորը Ձիբրալթարն է»: «Շոզեֆ, բոլոր գերված մարդկանց Ալժիրի շուկայում ծախում են, եթե քանակը շար է լինում, փանում են Գիբբուն: Ըս ճանապարհը շար երկար է: Մնում ես մեզ հե՞տ, թե՞ ուզում ես որպես ստրուկ վաճառվել»: «Եվ ծովահե՞ն դառնամ: Երբե՞ք»: «Լավ մտածիր»: «Մտածելու բան չկա, ես ծովահեն չեմ դառնա»: «Ես ալ չե՛ի դառնա, բայց այդպես սրացվեց»: Վերժինյան նայեց Շոզեֆին և հարցրեց: «Ինչքան գիտեմ, ամուսնացած չես, քեզ սպասող չկա:

Եթե մեզ միանաս, կհարստանաս, Աստված մեծ է, մի օր կազարվենք ու այսրեղից կզնանք Անգլիա ու ազար կապրենք»: «*Լավ ես երգում, բայց լսող չկա»:*

Ներս եկավ Հալիլը և հայտնեց, որ նավ է երևում: «*Կանչի՞ր Մուրադին... Մուրա՛դ, այս մարդուն փա՛ր առաջին նավաստենյակը, լավ կպահես, մինչև հասնենք Ալժիր»:* Բարձրացան վերևի տախտակամած: «*Հրամանդ կատարեցի»:* «*Մյուսներին ալ փար գերիների բաժնը»:* Վերցնելով հեռադիտակը՝ Ցանկատորը նայեց այն կողմը, որտեղ անգեն աչքով երևում էր նավը: Դա մի պորտուգալական նավ էր՝ հավանաբար միջին հարստություն ունեցող: Գրոհը շատ արագ կատարվեց, որից հետո բռնեցին Ալժիրի ճանապարհը:

Դեպի Լամանշ

Ցանկատորը գիշեր-ցերեկ մտածում էր Ժոզեֆի ասածի մասին: Ժոզեֆը համաձայնեց մնալ «Ուրուրի» կռվող անձնակազմի մեջ: «*Վերժինյա, ես գնալու եմ մեր փուն: Պետք է վերցնեմ Ռոզանային և Լեոնարդին ու բերեմ Ալժիր: Այսրեղ Պեդրոյի վկայությամբ արդարանալու եմ Ռոզանայի առաջ: Դրանից հետո ինչ լինելու է, թող լինի: Եթե ուզում ես, դու մնա՛ այսրեղ: Կասենք, որ հիվանդ ես ու չես կարող մասնակցել արշավին»:* «*Ի՞նչ ես ասում, ես, Ցանկատոր՛, կախաղան ալ քեզ հետ կերթամ»:* «*Որոշված է, փաշան ասաց, որ մի շաբաթ հետո դուրս գանք բաց ծով»:* Ցանկատորը Վերժինյային հանձնեց երեսուն հազար ոսկի: «*Տա՛ր քո նավաստենյակը: Ինչքան կարող ես շար մթերք վերցրու՛: Նավը ջրով ապահովի՛ր»:* Որոշված օրը բաց ծով դուրս եկան, բայց արևելք գնալու փոխարեն կուրս վերցրին դեպի արևմուտք: Այստեղ նրանք մի իսպանական նավի հանդիպեցին, որը «Ուրուրին» ավելի շատ մթերքով ապահովեց: Եկան մոլլան և Հալիլը ու հարցրին Ցանկատորին. «*Ինչու՞ եմք գնում դեպի արևմուտք»:* Ցանկատորը բացատրեց. «*Պետք է գնանք Արլանդյան օվկիանոս: Այնրեղ շար հարուստ նավեր կան»:* «*Ցանկատոր՛, ուզում ես փաշայի նավը կործանե՞լ»:* Այս ասելով՝ մոլլան դուրս եկավ: «*Հալի՛լ, դու ինչ վստահու՞մ ես, ես չեզ կործանման չեմ փանում: Մի փոքր գործ կա: Մեկի հետ հաշիվ ունեմ մաքրելու: Գնա՛, մարդկանց հանգուրացրու՛, հիմա մոլլան կբորբոքի դրանց»:* «*Հանգի՛սր եղի՛ր, առանց ինչ ոչինչ չի անի»:* Արդեն մոտենում էին

Ջիբրալթարի նեղուցին: Նավի տեսքը փոխեցին. «Ուրուրի» փոխարեն փայլում էր «Էլեոնորա» էմբլեման, իսկ ծովահենների դրոշակի փոխարեն ծածանվում էր իսպանական դրոշակը: Կես ժամ հետո Վերժինյայի ուղեկցությամբ եկավ լոցմանը՝ իր օգնականների հետ: «Անեն ինչ կարգին է»:

Առավոտ արդեն կապույտ Ատլանտիկայի ջրերում էին: Հարյուրական ոսկի տալով լոցմանին և նրա օգնականներին՝ Ցանկատորը ցուցումներ տվեց, ինչից հետո նրանք հեռացան:

Տան շեմին

Մի ամսից ավել տևեց ուղևորությունը: Մի քանի փոթորիկ անցկացրին ու մի իրիկնադեմի կանգնեցին այնտեղ, որտեղ ընդհանրապես կանգնում էր «Էլեոնորան»: Կեսգիշերին Վերժինյայի գլխավորությամբ, իրենց հավատարիմ մարդկանց հետ ծպտված, Վերժինյան և Ցանկատորը նավակով ափ իջան: Խմբի ղեկավարը Վերժինյան էր: Երկու թիակները կորած էին լույսերի մեջ, հայտնի էր, որ ինչ-որ բան է կատարվում: «Վերժինյա, սիրուզի՞ր, թե որտեղ ես հավաքված»: Վերժինյայի ստուգումից հայտնի եղավ, որ հավաքվել էին լորդ Հարիմանի տանը: Նրանք անաղմուկ բարձրացան քարե սանդուղքներով ու ներխուժեցին այն մեծ սրահը, որտեղ հավաքված էին երկու լորդերի բարեկամներն ու ազգականները: Ցանկատորի տասը կողմնակիցները, բեշթոփներով զինված, պաշարեցին սրահը: Ցանկատորը իր հուժկու ձայնով հրամայեց. «Ոչ մեկը չջարժվի: Բռլորին կգնդակահարենք»: Մի ակնթարթում Լեոնարդը Ցանկատորի կողմնակիցների ձեռքում էր, իսկ ուշագնաց Ռոզանան՝ Ցանկատորի: Ինչպես եկել էին, այնպես էլ հեռացան՝ բացի մեկից, որը, երկու բեշթոփները ձեռքին, մնաց կանգնած: Նա մի բեշթոփը դեմ էր արել լորդ Հարիմանին, մյուսը՝ լորդ Կրիսթոֆին: Մի քսան թույլ աշպես կանգնած, զենքը պահելով՝ նա ահաբեկում էր սրահի մարդկանց: Սակայն երկու բեշթոփներից արձակած կրակոցների արդյունքում ամբողջ թիակը մթնեց: Պայթյունից բոլոր մոմերը հանգել էին:

Կես ժամ հետո «Ուրուրը» ամբողջ հզորությամբ դուրս եկավ Լամանչից, մինչև լուսաբաց նույն արագությամբ սլացավ Ատլանտյան օվկիանոսով:

Ստրկավաճառների նավը

Ռուսվոտյան օվկիանոսը խաղաղ էր: Արևի ճառագայթները փայլում էին օվկիանոսի երկնագույն ջրերում՝ փոխակերպվելով արծաթագույն³¹⁹ շողերի: Լեոնարդին բանտարկել էին հատուկ բանտասենյակում և հսկողությունը հանձնել Մուրադին: Ռոզանայի նավասենյակը երկու բաժնից էր: Այն բոլորովին վերջերս հատուկ Ռոզանայի համար էին կահավորել: Սենյակն ուներ լողարան, տուալետ և ննջարան՝ բոլոր հարմարություններով: Աղջկան սպասարկում էր եթովպացի Ավգուստը, որը Յանկատորի ամենահավատարիմ մարդկանցից էր:

«Հրամանատար՝ մեր աջ կողմում նավ է երևում, նրանք, մեզ նկատելով, խույս են տալիս: Ինչպես երևում է, ստրկավաճառների նավ է, որը ստրուկ է տեղափոխում Ամերիկայի անգլիական գաղութների համար»: «Վերժինյա, չգրավե՞նք նավը, վերցնենք ստրուկներին ու տրանենք փաշային նվեր... Հալի՛, ի՞նչ ես մտածում, չգրավե՞նք նավը»:
«Հրամանատար՝ էդ նավը ստրկավաճառի նավ է: Էդ նավում ոչ մի էական հարստություն չկա, չնայած երկու ամիս է՝ թափառում ենք ծովերում, եթե գրավենք, այս անգամ էլ ստրուկներ կտրանենք Ալժիր»: Մինչև կեսօր նավի անձնակազմը, ստրուկները և այն ամենը, ինչ որ պիտանի էր, տեղափոխվեց «Ուրուրի» ստրկաբաժին: Ստրուկ կանանց խմբի մեջ Յանկատորի աչքից չվրիպեց մի տասնութամյա մետիս³²⁰ գեղեցկուհի: «Ավգու՛ստ, այդ աղջկան տար՛, թող տիրուհուն սպասարկի»:
«Այս բուպեին, տե՛ր իմ»:

Ռոզանան չգիտեր, թե ով է առևանգել իրեն, բայց կասկածում էր, որ Ռոբերտի ձեռքի գործն է: Նա շատ ջանք թափեց Ավգուստից մի բան իմանալու համար, բայց Ավգուստը ձկան նման համր էր, չնայած անգլերեն գիտեր: «Ավգու՛ստ, ո՞վ է այս նավի հրամանատարը»:
«Յանկատորը»: Ռոզանայի համար ամեն ինչ պարզ էր: Անգլիական կառավարության կասկածները ճիշտ էին, որ լորդ Կրիսթոֆի փախած որդին և Յանկատորը նույն մարդն էին: Մի ամսից ավել թափառելուց հետո և երկու ուրիշ ստրկանավեր գրավելով՝ «Ուրուրը» մոտեցավ Ջիբրալթարի նեղուցի ջրերին: Նավը նկատելով՝ լոցմանը իր օգնականների հետ դիմավորեց իսպանական նավը, որը կասկած չէր հարուցում և որի վրա էին գտնվում հարյուրավոր ստրուկներ: Բարե-

բախտաբար, լոցմանը այն նույն մարդն էր, որ մոտ երեք ամիս առաջ նավը անցկացրել էր դեպի Ատլանտյան օվկիանոս, այժմ էլ պիտի անցկացներ դեպի Միջերկրական ծով: Վերծինյան եկավ ու արտոնություն վերցրեց, որ նավը շարունակի իր ճանապարհը: Անցնելով Ջիբրալթարը՝ «Ուրուրը» կուրս վերցրեց դեպի Ալժիր:

Ալժիրի ստրկավաճառների շուկայում

Այսպես վերջացավ Յանկատորի համար շատ վտանգավոր ճանապարհորդությունը: Փաշայի մարդիկ դիմավորեցին Յանկատորին, Հայիլին ու մոլլային: Նրանք արտնետած հանդիմանեցին, թե որտեղ էին կորած այսքան ատեն: Ներկայանալով փաշային՝ ծառաներից իմացան, որ փաշան խիստ վշտացած է: «*Յանկատոր, ու՞ր էիր կորել այսքան արեւն*»: «*Գործով գնացել էի Լամանչի ափերը, ինչպես տեսնում ես, ողջ և առողջ վերադարձա՝ սարրուկներով և չուլածո ոսկե սալիկներով*»: «*Իսկ Ջիբրալթարը ինչպե՞ս անցար*»: «*Իսպանական դրոշակով, նավի անունը փոխեցի՛նք «Էլեռնորա» անունով*»: «*Այ դու շեյթան*³²¹, *Ջիբրալթարը անցել ես հազարից ավել սարրուկներով*»: «*Ճիշտ այդպես*»: «*Լամանչի ափից ի՞նչ վերցրիր*»: «*Մի աղջիկ և մի տղամարդ*»: «*Դրանք քո ինչի՞ն էին պետք*»: «*Թու՛յլ տուր՝ այդ հարցին չպատասխանեմ*»: «*Երկուսին ալ կհանձնես իմ ստրկավաճառին, որ վաճառեն շուկայում: Ազատ եք*»: Յանկատորը գնաց ստրկավաճառի մոտ, որի հետ ծանոթ էր ու հայտնեց. «*Վերծինյան երկու սարրուկի կրեթի, մեկը՝ սպիրտակամորթ, մյուսը՝ մեդիս: Հարուկ սենյակ կտրամադրես*», - ու տալով հարյուր ոսկի՝ հեռացավ: Արդեն սկսել էին ստրուկներին լցնել բարաքները³²²: Վերծինյան, Ռոզանային և Ժոզեֆինային տանելով, հանձնեց ստրկավաճառներին:

Մի շաբաթ հետո սկսվեց ստրուկների առուծախը: Վերծինյան և Ժոզեֆը պետք է ամեն ինչ անեին Ռոզանային, Լեոնարդին և Ժոզեֆինային գնելու համար: Մինչ այդ Ժոզեֆին ոչ մեկը դեռ չէր ճանաչում: Նրան տալով հազարից ավել ոսկի՝ Յանկատորը հրամայեց գնել Ռոզանային: Ժոզեֆին հսկելու էր Վերծինյան, որը ծպտված գտնվելու էր շուկայում: Ժոզեֆը հազնված էր պլանտատորի նման, աչքի չընկնելու համար նա պետք է գներ մի տասնյակ սևամորթ

ստրուկներ: Սկսվեց ստրուկների վաճառքը: Մի քանի տասնյակ ստրուկներ վաճառելուց հետո սկսեցին սևամորթ ստրուկների առուծախը: Ժոզեֆը մի տասը սպիտակամորթ ստրուկ գնեց: Վերջը երևաց Լեոնարդը: Նա գլուխը կախ կանգնած էր ստրուկների համար հատուկ պատրաստված տախտակամածի վրա: Ստրկավաճառը մի հսկա էր՝ այլանդակ դեմքով, ազգությամբ՝ պորտուգալացի: Նա առաջարկեց Լեոնարդի նախնական գինը՝ տասը ոսկի: «*Suavis hinc*», լավեց պլանտատորներից մեկի ձայնը: «*Suavis nulyh*», առաջարկեց Ժոզեֆը: «*Suavis hinc*», շարունակեց պլանտատորը: Այսպես՝ մինչև հիսուն ոսկի: Ժոզեֆը վերցրեց Լեոնարդին:

Սկսվեց կանանց առուծախը: Տախտակամածին հայտնվեց Ռոզանան՝ գլուխը Ժոզեֆինայի փարթամ մազերի մեջ թաղած: Ստրկավաճառը հայտնեց. «*Կանայք միասին են վաճառվելու: Նախնական գինը երկու հարյուր ոսկի*»: Վերժինյան ճանաչեց փաշայի հարեմի մատակարար Ջեմալին: «*Երկու հարյուր*», հնչեց Ժոզեֆի ձայնը: «*Երկու հարյուր հիսուն*»: «*Երեք հարյուր*», ավելացրեց Ժոզեֆը: «*Ինը հարյուր*», բղավեց Ջեմալը: «*Հազար*»: Ամբողջ շուկան կանգ առավ զարմացած: «*Հազար՝ մեկ, հազար՝ երկու, հազար՝ երեք*»: Երկու ստրկուհիներին հանձնեցին Ժոզեֆին: Ստրուկների կանոնավոր վաճառքը տևեց մի շաբաթ: Շատ մեծ գումար էր հավաքվել: Փաշան ոչ մեկին չէր ընդունում: Ցանկատորը երկու անգամ գնաց փաշայի ընդունարան, բայց փաշան նրան չընդունեց՝ պատճառաբանելով, որ հիվանդ է:

Ռոզանան և Ժոզեֆինան ապրում էին հարեմի բաժնում՝ երկու հույն կանանց հետ: Կանայք գիտեին մի քանի լեզու՝ հունարեն, թուրքերեն, անգլերեն և ֆրանսերեն: Չնայած դրան՝ Ռոզանան ոչ մի բան չիմացավ Ռոբերտի մասին: Նա չգիտեր, թե որտեղ է գտնվում, ով է այս ապարանքի տերն ու տիրակալը: Լեոնարդն ու Պեդրոն բանտարկված էին զատ-զատ սենյակներում և իրարից տեղեկություն չունեին: Մի առավոտ հայտնեցին, որ Ցանկատորը գալու է տեսության: Հույն կինը ներկայացավ, սպասեց հրամանի: «*Անգլերեն գիրեն՞ս*»: «*Գիրեն*»: «*Ոչինչ չե՞ս խոսացել սպիտակ ստրկուհու հետ*»: «*Նա չգիրի, որ ես անգլերեն գիրեն*»: «*Իսկ Ալիսա՞ն*»: «*Նա ալ գիրի*»: «*Չե՞զ հարցուսիրո՞չ արե՞լ է ինչ-որ բան իմանալու հա-*

մար»: «*Հարցուվորչ արեց, քայց մենք լուռ էինք*»: «*Գնա՛ և առաջ-
նորդի՛ր ինչ մուր*»:

Հինգ ըոպե հետո Ռոզանան հույն կնոջ հետ մտավ արևելյան վերջին ոճով կահավորված սենյակներից մեկը: Յանկատորի նշանով հույն կինը հեռացավ: Ռոզանան նայեց Յանկատորի մաքուր սափրած և արևահարված դեմքին: Յանկատորը ելավ և մի քանի քայլ մոտեցավ Ռոզանային: «*Ճանաչեցի՞ր*»: «*Ճանաչելու կարիք չկա: Մարդասպան, ավազակ, ծովահեն: Եղբորս սպանեցիր ու փախար, ծովահեն դարչար: Ահուսարսափի մեջ ես պահում Միջերկրական ծովը: Տասնյակներով նավերը խորտակեցիր, հարյուրներով մարդկանց գերեվարեցիր, բերեցիր այստեղ ու ծախեցիր: Ինչպե՞ս ինչ վաճառեցիր: Այսքանից հետո ուզում ես՝ քեզ գրկեմ, փախվայեմ, համբուրեմ, սիրե՞մ*»: «*Ես չեմ սպանել Հարիին*»: «*Գիտեմ, քայց ո՞վ սպանեց, ինչու՞ փախար*»: «*Ես չեմ փախել*»: «*Ինչպե՞ս թե չես փախել*»: «*Չեմ փախել, ինչ ծախել եմ ծովահենների կապիտանին: Երկու տարի շրթաված եմ եղել թիերին, որտեղ ինչ նման նուրբ մեծացած երիտասարդը երկու ամիս ալ չէր դիմանա, քայց կողքիս շրթաված արաբ Սելիմը ինչ փրկեց մահից*»: «*Բայց ո՞վ, ո՞վ*»: Յանկատորը ձայն տվեց, ներս եկավ մի մարդ: Յանկատորը մի քանի խոսք ասաց Ռոզանային անհասկանալի լեզվով և գնաց դեպի լայն բացված պատուհանը: Մարդը ներս բերեց Լեոնարդին՝ ձեռքերը հետևը կապած: Մարդը հեռացավ: Լեոնարդը նայեց սենյակի չորս կողմը ու տեսավ Ռոզանային: Մի քանի քայլ արեց դեպի նա: Մի ակնթարթում Յանկատորը կանգնեց Լեոնարդի առաջ: Լեոնարդը մի քայլ հետ գնաց: «*Դու ո՞ղջ ես*»: «*Այո՛, ողջ եմ*»: «*Հարիին սպանելուց հետո փախար, ծովահեն դարչար, հիմա էլ մեզ բերեցիր այստեղ: Ինչի՞ համար*»: «*Որ արդարանամ Ռոզանայի առաջ: Ռոզանա՛, նրան հարցրու՛, թե ով սպանեց եղբորդ*»: «*Ո՞վ սպանեց եղբորս*»: «*Չեռքերս կապած հարցաքննու՞մ եք*»: Յանկատորը մոտեցավ ու քանդեց ձեռքերը: Լեոնարդը մի շարժում արեց, որ հարվածի, քայց հնձվածի պես ընկավ հատակին³²³: Յանկատորը բռնեց Լեոնարդի ուտերից ու պարկի նման զցեց բազկաթոռին: «*Պարսախանի՛ր Ռոզանայի հարցին*»: Ռոզանան նորից հարցրեց. «*Ո՞վ սպանեց եղբորս*»: Լեոնարդը լուռ էր: «*Չե՞ս սաի, ե՛ս կասեմ: Դու՛ սպանեցիր,*

ինչ էլ հարյուր ոսկով ծախեցիր ծովահենների կապիտան Պեդրո Ալվերոսին: Իսկ գիրե՞ս, թե ինչքան ժամանակ մնացի թիերին շղթայված: Երկու տարի»: «Դու դրա համար վկաներ չունես»: Ցանկատորը ձայն տվեց, եկավ նույն մարդը: Մի քանի վայրկյան հետո նա մի այլանդակ մարդու բերեց: «Ալվերո՛ս, ճանաչու՞մ ես այս մարդուն»: «Ճանաչում եմ, Լեոնարդն է, որ քեզ ինչ ծախեց հարյուր ոսկով»: Նույն մարդը տարավ Ալվերոսին: Չանգի ձայնը լսելով՝ ներս եկավ Ժոզեֆը: «Այս երկու տակալներին տա՛ր նա, հանչնի՛ր - դարբնին, ասա՛, որ կողք կողքի շղթայի թիերին»:

«Դու շար ես տառապել, բայց ես քեզ չեմ կրնար ներել: Ինչ հե՛ր տար», -ասաց Ռոզանան: Հույն կինը Ռոզանային տարավ: Ռոբերտը գիտեր Ռոզանայի համառությունը. մի բան ասաց՝ վերջ: Ռոբերտը ընկավ մտածմունքի մեջ: Նա ենթարկվեց վտանգների, երկուսին էլ բերեց, որ արդարանա, բայց իզուր:

Եկավ գանձապահը: «Փաշան քեզ իր մոտ է կանչում»: Գանձապահի գնալուց հետո Ցանկատորը ընկավ մտածմունքի մեջ: Ի՞նչ էր սպասում իրեն: Փաշայի մոտ արդեն հավաքվել էր հրամանատարական ամբողջ կազմը: Ցանկատորը գլուխ տալով կանգնած մնաց: «Ցանկատոր՛, ես ներում եմ քո վերջին արարքը: Ես քեզ ուզում էի հեռացնել գլխավոր հրամանատարի պաշտոնից, բայց գրկվեցին մարդիկ, որ քեզ պաշտպանեցին: Դու մնում ես գլխավոր հրամանատար, բայց երկրորդ անգամ ներում չկա: Բոլորդ գնացե՛ք ու պատրաստվե՛ք նորից ծով դուրս գալուն: Ցանկատոր՛, դու մնա՛: Նստի՛ր: Ի՞նչ արեցիր այն աղջկան, որի համար Անգլիա հասար, ոսկի վճարեցի՞ր»: «Այո՛, ես նրան գնեցի: Նա իմ նշանածն է, նրա հետ պիտի ամուսնանամ այս արշավից հետո գալուց հետո»: «Մրքովդ չանցնի Միջերկրական ծովից դուրս գալ»: «Լսում եմ, փաշա՛»: «Գնա՛, պատրաստվի՛ր ու բարեխղճորեն կատարի՛ր պարտականություններդ»: Ցանկատորը, դուրս գալով փաշայի մոտից, ուղիղ գնաց նավ, որտեղ արդեն սկսել էին մթերք, վառող, ջուր բեռները: Մի քանի բան կարգադրելով՝ նա տուն գնաց: Հոգնած էր, մտքերը խառնվել էին իրար: «Արդարացա Ռոզանայի առաջ, բայց նա չի ուզում մնալ Ալժիրում: Ինչպե՞ս էլնել այս դրությունից»:

Եկավ Վերժինյան: «Նավում ամեն ինչ լավ է»: «Այստեղ կարգին

չէ, Ռոզան ոչ մի դեպքում չի ուզում մնալ այստեղ: Ի՞նչ արած, պիտի հետ փակենք»: «Ինչպե՞ս հետ կրանես: Ուրիշ էլք չկա՞: Ի՞նչ ես մտածում»: «Մտածում եմ բաց ծով դուրս գալ: Թեկուզ վերջին անգամը լինի: Ճանապարհ ընկնելուց հետո կմտրենանք Բուրախայի ավերին՝ Սարդինիա կղզուն: Անգլիա հասնելու համար դրամով կապահովեմ: Հալիլին կբացատրեմ եղելությունը: Իրեն ալ կվերցնենք հետներս: Երբ իջանք, կասենք՝ հեռանա: Այս է պայմանը: Հիմա գնա՛ նալ, այնտեղ շատ մարդ չի լինելու, վերցրու՛ ամենահավատարիմ մարդկանցից փառք հոգի: Մի ավելի աչքի չընկնող փեղում ամեն հարմարություններով սենյակ պատրաստի՛ր: Ժոզեֆին էլ վերցրու՛: Ռոզանային փղամարդու շորերով կմրցնեք նալ»: «Շատ վրանգավոր գործ ես բռնում», - գլուխը շարժելով՝ ասաց Վերժինյան: «Ուրիշ ճար չկա»: Ցանկատրոի գիշերը շատ անհասկալի էր, առավոտ արթնացավ գլխացավով:

Ցանկատորը գնաց փաշայի մոտ: Փաշան, նրան տեսնելով, շատ ուրախացավ: «Ապրե՛ս, որ առանց կանչելու եկել ես: Նարի՛ր: Ցանկատոր՛, նավում եղե՞լ ես»: «Ո՛չ, բայց Վերժինյան հայրենեց, որ ամեն ինչ կարգին է: Սքերքով, ջրով, ուրիշ մանր-մունր պիտույքներով ապահովում եմ, շուրով բաց ծով դուրս կգանք: Փաշա՛, ուրիշ կարգադրություն ունե՞ս»: «Ո՛չ, ամեն ինչ կանես, որ լավ լինի»:

Ցանկատորը փաշայի մոտից դուրս գալուց հետո փնտրեց գանձապահ Յանիին: Գեր Յանին իր տանն էր: Տեսնելով Ցանկատորին՝ շատ զարմացավ: «Նե՛րս արի»: «Գե՛ր Ցանի, այսօր արի՛ ինչ մոյր: Հիմա շատ զբաղված եմ ու ներս գալու ժամանակ չունեմ»: «Հանգիստ եղիր, երկու ժամից կգամ»: Ցանկատորը գնաց նավ, տեսավ՝ ամեն ինչ լավ է: Վերժինյան պատրաստում էր սենյակը: Ցանկատորը տուն գնաց, գեր Յանին չուշացավ, նա եկավ կեսօրին: Ցանկատորը շատ գունատ էր: «Նարի՛ր, գե՛ր Ցանի: Քեզ մի հանցնարարություն պիտի փամ, որը վրանգավոր է»: «Ցանկատոր՛, ես քեզ համար ամեն ինչ կանեմ, եթե իմ ուժերից վեր չէ»: «Այստեղ երեք կին կա, երկուսը հույն են: Դու նրանց ճանաչու՞մ ես: Կանանցից մեկը մերիս է: Նրանց պիտի հասցնես անգլիական գաղութ՝ Թանժիր և հանչնես անգլիական անհանգստեպիին³²⁴: Նահանգապետը պիտի ուղարկի Անգլիա՝ իմ փակ հասցեով: Դրամով կապահովեմ»: Գեր³²⁵ Յանին ընկավ մտածմունքի մեջ: Ցանկատորը շա-

րունակեց. «Ես քեզ նամակ կ'ըսամ՝ ուղղված Թանժիրի նահանգապետին, որ շեզ ուղարկի Լոնդոն: Կրամ նաև Լոնդոնի հասցեն ու շեզ կ'ըսանեմ Լամանշի իմ թիակը: Պա՞րզ է»: «Պարզ է»: «Վերցրո՛ւ այս հինգ հազար ոսկին: Մի՛ խնայիր: Ամեն ինչ արա՛, որ Թանժիր հասնես: Թանժիրի ճանապարհին չորս հիսնայի շիերով կառքը մեզ է սպասելու: Մեկ օր ես կ'վարեմ: Հեղո կ'հանձնեմ քեզ»: Այսպես ալ եղավ: Յանկատորը, նրանց տանելով, ցերեկը հետ եկավ:

Ամեն ինչ կատարվեց այնպես, ինչպես որ որոշված էր: Ռոզանան արդեն տեղափոխվել էր նավասենյակ և գտնվում էր Հերկուլեսի հսկողության տակ: Ամեն ինչ պատրաստ էր բաց ծով դուրս գալու համար: Առավոտյան նավը դուրս էր գալու նավահանգստից, բայց պատահեց անսպասելին: Փաշան որոշեց իր չորս բարձրաստիճան մարդկանց հետ գնալ Իզմիր, այնտեղից էլ՝ Պոլիս: Նրա հետ էր նաև տղան: Նավը մոտենալու էր Իզմիրի ափերին, որտեղ փաշան և ուղեկցողներն ափ էին իջնելու: Հալիլի կարգադրությամբ հյուրերի համար հատուկ տեղ պատրաստվեց: Շոգ ամառ էր, որի պատճառով վերին հարթակում հատուկ տեղ պատրաստեցին՝ ճիշտ Ռոզանայի սենյակի դիմաց. նավասենյակներում շատ շոգ էր, և չէր կարելի հյուրերին նավասենյակներում բնակեցնել: Այդ պատճառով բաց ծով դուրս գալը մի երկու օր ուշացավ: Փաշայի հրամանով նավի ամուրը փոխեցին և դրեցին «Յելուզ» («Աստղ»), դրոշակը փոխարինեցին թուրքականով: Նավը կուրսը բռնեց դեպի Թուրքիա:

Ռոզանայի սենյակը կասկածելի չէր: Հերկուլեսը միշտ մի բանով զբաղվում էր ու կասկածի տեղիք չէր տալիս:

Երկու խոսք Հերկուլեսի մասին

Մի անգամ Յանկատորը ստրկավաճառների շուկայում նկատեց մի հսկա սևամորթի: Վաճառքի ժամանակ հիսուն ոսկիով վերցրեց նրան: Այդ օրվանից այս հսկան հլու-հնազարդ ծառայում էր Յանկատորին: Հիմա էլ Ռոզանայի պահապան հրեշտակն էր դարձել:

Երկու օր հետո դուրս եկան բաց ծով և կուրս վերցրին դեպի թրքական ափերը՝ դեպի Իզմիր: Յանկատորը հայտնեց, որ փաշային ափ իջեցնելուց հետո կկատարի իրենց որոշածը:

Կախաղանի սովերի տակ

Չորրորդ օրը Յանկատորը վերևի տախտակամածում աղմուկ լսեց: Բարձրացավ վերև ու տեսավ մի խումբ ենթասպաների: Սրանք հատուկ հարմարություններով պնակները վերև էին թռցնում, իսկ նետաձիգները նետերով փշրում էին: Ամեն մեկը՝ տասը հատ: Ամենալավ նետաձիգը չորս պնակից ավել չէր կարողանում փշրել: Փաշայի տղան, որ նետ ու աղեղ բռնել չգիտեր, կաշվից դուրս էր գալիս, որ մի պնակ խփի, բայց փորձերը ապարդյուն էին անցնում: Փաշան նայում էր տղային ու ծիծաղում: Յանկատորը մոտեցավ փաշային, բարևեց ու նայեց նետաձիգներին: Փաշան նկատեց Յանկատորին ու կանչեց: «*Յանկատոր՛ր, նայի՛ր դանդալոշին, դեռ ուզում է նավը կառավարել*»: «*Ոչի՛նչ, փաշա՛, կսովորի*»: Վերժինյան, որ դիտում էր այս խաղը, զգաց, որ խաղը կարող է վատ վերջանալ: Փաշայի տղան ամեն ինչ կաներ Յանկատորին վնասելու համար: Դրա համար իր հավատարիմ երեսուն սպաներով հարմար պահի էր սպասում:

Փաշան նայեց Յանկատորին ու հարցրեց. «*Յանկատոր՛ր, տասից քանիսը՞ կփշրես*»: Փաշայի տղայի աչքերը փայլեցին կատաղությանից: «*Կարիք չկա, փաշա՛, տղեդ կվշտանա: Ես նեպաշիզ չեմ*»: «*Բո գործը չէ, տղեն թող ուրիշ գործով զբաղվի: Մոլլան ասում է, որ մարդու գլխից խնչոր ես թռցնում*»: Բոլորը ծիծաղեցին՝ բացի Հալիլից, մոլլայից, փաշայի մարդկանցից և սպայակույտից: Յանկատորը գնաց ու բերեց իր աղեղը: Ջոկեց տասը նետ ու փշրեց նետված բոլոր տասը պնակները: «*Յաշա՛³²⁶*», - ծափ տվեցին բոլորը: «*Յաշա՛, Յանկատոր՛ր*»: Փաշայի տղան ավելի կատաղեց: Վերցնելով մի բեշթոփ՝ գնաց ու Ռոզանայի սենյակի դռան վրա կավիճով նշան արեց: Նետն ու աղեղը սենյակում տեղավորած Յանկատորը հետ վերադարձավ և լսեց փաշայի որդու ձայնը: «*Աթա՛³²⁷, այս գնդակով այդ կլորի ճիշտ մեջտեղը կծակես*»: Յանկատորը գույնը գցեց: Նա ստիպված մի կողմ ցատկեց և իր բեշթոփը ուղղեց փաշայի տղայի կրծքին: «*Շան լսկուր, կսպանեն, շան սատրակ կանեն, եթե կրակես*»: Հիմա փաշան գույնը գցեց ու կայծակի արագությամբ վեր թռավ տեղից՝ չնայած իր ծանրությանը: «*Յանկատոր՛ր, ի՞նչ կա այնտեղ, որ իմ որդու կյանքը վրանագում ես ու նրա կյանքից ավելին ես*

զնահատում»: Մինչև Յանկատորը կայատասխաներ, փաշայի հրամանով զինվորները դուռը բացեցին, ներս մտան և դուրս բերեցին Ռոզանային ու Հերկուլեսին: Փաշան շշմեց: Փաշայի տղան գոռաց. «*Շեյթան, բռնե՛ք սրանց*», և *կրակեց բեշթովից*: Հնչեց երկրորդ հրացանի կրակոցը: Մինչև երկրորդ հրամանը կհնչեր, տասը բեշթովով զինված զինվորները և քսան նետածիզները Վերժինյայի և Ժոզեֆի գլխավորությամբ պաշարեցին խմբին: Մինչ այդ Յանկատորը, վառված պատրույզը ձեռքին, կանգնած էր բարութի³²⁸ բաց պահեստում: «*Փաշա՛, ինչպես տեսնում ես, ինչ կախել այդքան հեշտ չէ՞*»:

Դիտակը զիլ³²⁹ ձայնով հայտնեց, որ անգլիական երեք ֆրիգատներ հարձակվում են «Ուրուրի» վրա: «*Յանկատոր՛ր, հրամայի՛ր, որ արագացնեն թիերի շարժումը*»: «*Ընդհակառակը, տեսնու՞մ ես այս պատրույզը, եթե ներսում բարութի պահեստը, ամեն ինչ օդը կբռչի*»:

Մինչև ուշքի կգային, արդեն ֆրիգատներից սկսվեց թնդանոթածությունը: Փաշան խառնվեց իրար, արդեն արկերը շատ մոտ էին ընկնում: «*Յանկատոր՛ր, հրաման՛ն տուր, որ նավը հեռանա վրանգավոր գոտուց*»: «*Ժոզեֆ, բարձրացի՛ր և դրոշակներով հայտնի՛ր, որ կրակը դադարեցնեն ու հրամանատարի ֆրիգատը մտրենա մեզ, առանց կրակելու հսկանվում ենք*: Փաշա՛, խոստանում եմ, քեզ ու քո նավին ոչ ոք վնաս չի հասցնի, կհեռանամ իմ մարդկանց հետ, իսկ դուք կշարունակեք ձեր ճանապարհը... Դադարեցրե՛ք թիերը շարժելը, իջեցրե՛ք արագությունը: Բոցման՛, բե՛ր այն երկու մարդկանց»:

Փաշան ստիպված նույնպես հրամայեց դադարեցնել նավարկությունը և իջեցնել առագաստները: Արդեն ֆրիգատները պաշարել էին «Ուրուրին»: Անգլիական ծովայինները արդեն նավ էին խուժում: Յանկատորը հուժկու ձայնով անգլերեն հրամայեց. «*Դադարեցրե՛ք խուժումը և թող կապիտանը գա բանակցելու, հակառակ դեպքում երկու նավերն էլ օդը կցնդեն*»: «*Դադարեցրե՛ք խուժումը*»: «*Վերժինյա, զնա՛, հայտնի՛ր ֆրիգատի հրամանատարին, որ գա բանակցություններ վարելու*»: Եկավ կապիտանը ու տեսավ մի մարդու, որ, վառված պատրույզը ձեռքին, կանգնած էր բարութի պահեստի առաջ, ու մի աղջկա՝ Հերկուլեսի կողքին կանգնած: Սկսվեցին բանակցությունները: Յանկատորի բոլոր պայմանները կապիտանն ընդունեց: Խոստացավ առանց որևէ պայմանի նավը բաց թողնել, իսկ

նավի վրա գտնվող մարդկանցից երեսունչորսին վերցնել իր նավի վրա: Վերժինյան անձամբ ուղեկցեց Ռոզանային և Հերկուլեսին: Նա նաև անգլիական ֆրիգատ տարավ մի արկղ ոսկի: Ժոզեֆի գլխավորությամբ ֆրիգատ տեղափոխվեցին նաև երեսուն նավաստիները: «*Դարբի՛ն, բե՛ր այն երկու մարդկանց*»: Վերժինյան, վերադառնալով ֆրիգատ, տեղափոխեց նաև Լեոնարդին և Պեդրոյին: Այն մարդիկ, որոնք պաշտպանեցին Յանկատորին, անոնք ալ անցան ֆրիգատ: Վերջում մնացին կապիտանն ու Յանկատորը: «*Այսփեղ մի քրիստոնյա շուն ալ կա՝ Յանկատոր անունով, դրան ալ պիտի հանձնեն*»: «*Այդ քրիստոնյա շունը ես եմ, հանձնվում եմ*»: Բոլորի գնալուց հետո փաշան ձեռքերը տարածեց ու կանչեց. «*Յանկատոր, ու՞ր կերթաս, ու՞ն ես թողնում նավը*»: «*Դանդալոշ փողով... Փաշա՛, Հալիլը լիովին կփոխարինի ինձ*», -ասաց Յանկատորը թուրքերեն, որ կապիտանը չհասկանա: Ֆրիգատի կիլերից ազատվելուց հետո «Ուրուրի» թիերը սկսեցին աշխատել:

Անձնասպանը

Ֆրիգատ բարձրանալուց հետո Յանկատորին բանտարկեցին հատուկ բանտախցում: Ռոզանային հատուկ սենյակ տրամադրեցին, Հերկուլեսը քնում էր նրա սենյակի դռան առաջ: Մյուսները ստանում էին իրենց սնունդը և սպասում կապիտանի որոշմանը: Այսպես անցնում էին օրերը: Երկու սրիկաները ազատ ման էին գալիս իրենց համար: Ռոզանան սարսափելի տազնապի մեջ էր: Նա մտածում էր Ռոբերտի մասին և պարբերաբար մերժում հաշտվելու՝ Լեոնարդի ձեռնարկած փորձերը:

Մի առավոտ ուժեղ պայթյուն լսվեց: Մարդիկ վազեցին ձայնի ուղղությամբ: Տեսան, որ մի մարդ ծանր վիրավորված ընկած է տախտակամածին: Նրա կրծքից արյուն էր հոսում: Վիրավորը Լեոնարդն էր, որ թույլ ձայնով ասաց, որ ուզում է կապիտանին տեսնել: Կանչեցին կապիտանին՝ ասելով, որ Լեոնարդը նրան ուզում է ինչ-որ բան ասել: Կապիտանը բժիշկի հետ արդեն դեպքի տեղում էին: Բժիշկը ստուգեց Լեոնարդի վերքը և ասաց, որ մահացու է: Վիրավորը ձեռքի նշանով հասկացրեց, որ ուզում է խոսել կապիտանի հետ: Կապիտանը կռացավ, բարձրացրեց նրա գլուխը: Լեոնարդը սկսեց

խոսել: «Ես լորդ Կրիսթոֆի որդին եմ՝ Լեոնարդը՝ Ռոբերտի եղբայրը: Ես սպանեցի լորդ Հարիմանի որդուն՝ Հարի Հարիմանին և բարդեցի եղբորս՝ Ռոբերտի վրա: Նա գրկնվում է այսպեղ, այժմ նրան Յանկապորո են կոչում: Նա այդ սպանության միակ վկան է: Ես հարվածեցի նրա գլխին, նա ուշագնաց եղավ: Ես նրան մի շաբաթ բանտարկելուց հետո հարյուր ոսկով վաճառեցի ծովահեն Պեդրո Ալվերոսին, որը գրկնվում է այս նավի վրա: Օրիորդ Ռոզան Հարիի քույրն է, նա էլ է չեք նավի վրա»: Մինչ այդ եկան Ռոզանան, Վերժինյան, Պեդրոն: Բժիշկը նորից քննեց ու ասաց, որ մեկ-երկու ժամից կմահանա: Վերժինյան Ռոզանային տարավ իր նավասենյակը: Երկու ժամ հետո Լեոնարդը մահացավ: Նրան պատանքեցին, որ հոգևորականի կատարած արարողությունից հետո զգեն ծովը:

Դատ և վճիռ

Կապիտանի կարգադրությամբ Պեդրո Ալվերոսին բանտարկեցին: Կապիտանը գնաց իր առանձնասենյակը, հրամայեց, որ կալանավորին՝ Յանկատորին, բերեն իր կաբինետը և սկսեց քննել: «Անուն, ազգանուն, հայրանուն»: «Յանկապորո»: «Այդ ծովահենի քո անունն է: Ես քո անունն եմ ուզում»: «Ձեր ինչի՞ն է պետք իմ անունը: Ինչ կդատեն իբրև ծովահեն՝ Յանկապորո անունով»: «Դու լորդ Կրիսթոֆի որդին՝ Ռոբերտն ես»: «Հետո ի՞նչ»: «Երեք ժամ առաջ քո եղբայրը՝ Լեոնարդը, անչնասպան եղավ»: Ռոբերտը ոտքի ելավ: «Նարի՛ր, արդեն աճյունը պատրաստել ենք ծովը զցելու համար: Եղբայրդ ինչ ամեն ինչ պատմեց: Ես դատարանում վկայություն եմ տալու: Քեզ մի հինգ տարի կտան: Մնացածը դու՛ պատմիր. թիերին շրթայվելուց մինչև իմ կալանավորը դառնալը... Այսքան բանից հետո ո՞նջ մնացիր»: «Փաշան կկախեր ինչ Լամանշ գալուց հետո, բայց սպայակույրը՝ Հալիլի գլխավորությամբ, մոլլան և մյունները պաշտպան կանգնեցին: Ես ներողություն խնդրեցի: Ես մի խնդրանք ունեմ, այն երեսուն մարդիկ ոչ մի մեղք չունեն, նրանք գերի են ընկել ծովահեն Ալվերոսի չեռքը, որը նրանց շրթայել էր թիերին: Վերժինյան և Ժոզեֆը անզլիացի են: Ես նրանց գերի եմ վերցրել անզլիական նավից: Նրանք ալ ոչ մի մեղք չունեն: Սևամորթ օրիորդը Ռոզանայի պահապան հրեշտակն է»: «Բոլորին ա-

գալար եւ թողնելու՝ բացի քեզանից և Պեղորոյից, որին շուրջով բանտարկելու եմ»։ «Թողե՛ք՝ Վերժինյային մի քանի կարգադրութիւն անեն»։ «Դու ազալար ես, քեզ նա՛վասենյակ կրան»։

Ռոբերտը ոտքի ելավ ու գնաց դեպի դուռը։ Կապիտանը նրան չպահեց։ Արդեն դռան առջաց նրան սպասում էին Վերժինյան, Ժոզեֆը և Ռոզանան։ Նրանք Ռոբերտին ուղեկցեցին դեպի տախտակամած, որտեղ նա՛վաստիները արդեն պատրաստվել էին Լեոնարդի անշունչ մարմինը ծովը գցելուն։ Ցանկատորը մեծ ցավ զգաց Լեոնարդի մահվան համար։ Այստեղ էր գտնվում նաև Պեղոր Ալվերոսը։ Վերժինյան, Ժոզեֆը, Ցանկատորը և Ռոզանան նույնպէս կանգնեցին դիակի մոտ։ Կապիտանի և մի քանի սպաների ուղեկցությամբ եկավ նա՛վի հոգևորականը։ Հոգևորականի կատարած արարողութիւնից հետո չորս ծովայինները դիակը գցեցին ծովը։ Արարողութիւնից հետո, կապիտանի հրամանով, Պեղոր Ալվերոսին ձերբակալեցին։

Առավոտյան իրար բարևելուց հետո նրանք գնացին Վերժինյայի սենյակը։ «Կապիտանը սասց, որ բոլորին բաց է թողնելու՝ բացի երկուսիցս։ Լոնդոնից բոլորդ միասին կերթաք Լամանը՝ հորս կալվածքը, ու կապրեք այնպէ՛ղ մինչև իմ գալը։ Ռոզանայի մորաքրոյրը ապրում է Լոնդոնում։ Հերկուլեսի հետ կերթաք մորաքրոջ մոտ, մինչև հորդ գալը կապրեք նրա մոտ»։ «Ռոբերտը, եթէ կարող ես, ների՛ր ինձ, այսքան դժբախտութիւններ բերեցի քեզ»։ «Ես դեռ Ցանկատորն եմ, ոչ թէ Ռոբերտը»։ Ռոզանան հուզված դուրս գնաց։ «Շալր դաժան վարվեցիր Ռոզանայի հետը», -սասց Վերժինյան։

Կապիտանը, բռնելով Ռոբերտի թևի տակից, նորից տարավ իր նա՛վասենյակը։ «Նորից մանրամասն պարամի՛ր ողջ եղելությունը»։ Ռոբերտը նորից պատմեց բանտարկութիւնից մինչև ձերբակալութիւնը ընկած ժամանակահատվածում իր գլխով անցածի մասին։ Կապիտանը կրկնեց. «Այսքան քանից հետո ո՞ղջ ես մնացել»։ «Երկու անգամ փաշան կախել ուզեց։ Առաջին անգամը՝ Լամանչից վերադառնալուց հետո, երկրորդ անգամը՝ վերջին դեպքերի ժամանակ։ Եթէ մի քիչ ուշ հասնեիք, դժվար է պարկերացնել, թէ ինչ կպարտահեր։ Կապիտան, ես քեզ մի խնդրանք ունեմ, կրկին կխնդրեմ այն մարդկանց մասին»։ «Պեղորոյին արդեն ձերբակալել եմ, բացի ձեզանից՝ բոլորին ազալար եմ արձակում։ Գնա՛, հանգարա-

ցիբ»: Նավաստին, որ կանգնած էր դրսում, Ռոբերտին ուղեկցեց դեպի նավախցիկ:

Առավոտյան Վերժինյան Ցանկատորի մարդկանց հայտնեց կապիտանի որոշումը:

Մի ամսից ֆրիգատը Լոնդոն ժամանեց: Եղավ այնպես, ինչպես խոստացել էր կապիտանը: Վերժինյան վերցրեց ամբողջ խումբը, բոլորը գնացին դեպի Լամանշ, Ռոզանային մորաքույրը տարավ իր տունը, իսկ Պեդրոյին և Ցանկատորին հանձնեցին դատախազություն: Մի քանի օր հետո եղավ դատը, որի ժամանակ զեկուցեց նաև կապիտանը: Դատավարությունը տևեց մի շաբաթ: Ռոբերտին մի շաբթ հարցեր տալուց հետո մեղավոր ճանաչեցին: Դատախազը նրա համար հինգ տարի ազատազրկում պահանջեց, Ալվերոսի համար՝ կախաղան: Կապիտանը ամեն ինչ արեց, որպեսզի Ցանկատորին փրկի կախաղանից: Մինչ այդ Լոնդոն եկան երկու լորդերը: Դատարանը որոշեց Պեդրոյին հանձնել իսպանական կառավարությանը, իսկ Ցանկատորին դատեցին՝ տալով հինգ տարի պայմանական: Դատարանը նրան վերադարձրեց Ռոբերտ անունը: Ռոբերտի հայրը, հինգ օր մնալով Լոնդոնում, նրան տարավ Լամանշ: Նույն կերպ վարվեց նաև Ռոզանայի հայրը: Ռոբերտը ամեն օր գնում էր նավահանգիստ՝ Թանժիրից եկած նավերը դիմավորելու, բայց ոչ մի տեղեկություն չէր ստանում ուղևորներից:

Քոլորը հավաքված մի տեղ

Երկու թիակներում տխրությունն ու ուրախությունը խառնվել էին իրար: Օրերն ու ամիսներն անցնում էին, բայց Թանժիրից ոչ մի լուր չկար: Ռոբերտը մտածում էր, թե արդյոք եկողները ընկան փաշայի մարդկանց ձեռքը: Մի առավոտ նա հավաքեց իր երեսուն մարդկանց ու ասաց. «*Ես իմ կյանքով պարտական եմ ձեզ: Ուստի առաջարկում եմ, ով ուզում է, թող գնա, ես նրան կրամ հիսուն ոսկի, իսկ ով ուզում է մնալ, թող մնա, նա կապրի երկու թիակներում ու կաշխարհ արարելում, պուրակներում, անպառններում որպես ազատ մարդ, ոչ թե ստրուկ: Գնացե՛ք, մտածե՛ք*»: Տասնհինգ հոգին գնացին՝ ստանալով խոստացած դրամը: Շատ ջերմ բաժանվեցին: Այս մարդկանցից հինգը ամուսնացել էին թիակի կանանց հետ: Մնացողները աշ-

խատում էին լորդերի կալվածքներում: Բոլորը շատ ուրախ էին՝ բացի Ռոբերտից: Թանժիրից ոչ մի լուր չկար:

Արդեն երրորդ ամիսն էր վերջանում: Ի՞նչ պատահեց գեր Յանիին, արդյոք ընկան փաշա՞յի ձեռքը: Մի առավոտ Ռոբերտը նստած էր տաղավարում, եկավ փոստատարը ու մի հեռագիր տվեց, որ ուղարկված էր Թանժիրից: Այստեղ գրված էր, որ շուտով գեր Յանին անգլիական նավերից մեկով ժամանելու է Լոնդոն: Կարծես մի ռումբ պայթեց: Բոլորը հավաքվեցին: Ռոզանան էլ եկավ: Այն օրվանից, ինչ եկել էին թիակ, Ռոզանան և Ռոբերտը մի քանի անգամ էին հանդիպել: Այդ պատահական հանդիպումների ժամանակ ոչ մի խոսակցություն չէին ունեցել, միայն գլխով սառը բարև, և վերջ:

Մի ամիս հետո եկավ երկրորդ հեռագիրը, որտեղ ասված էր, որ մի ամսից նավը Լոնդոնում է լինելու: Ռոբերտը և Վերժինյան գնացին նավը դիմավորելու: Տեղի ունեցավ շատ ջերմ հանդիպում: Եկողները հոգնած էին ու նիհարած: Գեր Յանին շատ հոգնած տեսք ուներ, կարծես ծերացել էր: Նույն օրը հյուրերին բերեցին Լամանշ: Ռոզանան կանանց տարավ իր ապարանքը: Գեր Յանին մնաց Ռոբերտի մոտ: Ամենից լավ իրեն զգում էր Հերկուլեսը: Նա զբաղված էր այգիների ծառերը հարդարելով: Երեք օր հետո Պենելոպեն եկավ Ռոբերտի ծնողների հետ ծանոթանալու: Չնայած տարիքին (նա մոտ քառասունհինգ տարեկան էր)՝ նրա տեսքը շատ թարմ էր:

Տաղավարում նստած էին Ռոբերտը, Վերժինյան, Ժոզեֆը: Գեր Յանին պատմեց գլուխներից եկածը: «*Կախաղանից հագիվ ենք ազատվել: Քեզանից բաժանվելուց հետո երեք օր գնացինք առանց միջադեպի: Յերեկները գնում էինք, գիշերները՝ մնում իջևանատներում: Լավ կերակրում էինք չիերին: Տասնհինգ օր այդպես ճանապարհ կորեցինք: Մի առավոտ մեր ճանապարհը կորեցին մի խումբ չիավորներ.* «Հանչնվեք, ի՞նչ կա կառքում»: «Երեք կին»: «Ու՞ր ես գնում»: «Թանժիր: Քեզ ի՞նչ է պետք»: Նայեցա՝ Հուսեինն էր՝ հինգ ավազակների գլխավորությամբ: Հուսեինը մի ժամանակ ծովահեն էր: Իրեն լավ չպահելու համար փաշան ուզում էր կախել, իմ միջնորդությամբ արտաքսեցին Ալժիրից: Այդ ժամանակ ես նրան հարյուր ոսկի րվեցի ու ասացի. «Գնա՛, մա՛րդ դարձիր»: Նորից նրան րեսնելով՝ ես հարցրի. «Հուսեին, այդ ի՞նչ գործի ես»: Նա շշմած ինչ նայեց. «Գեր Յանի՛, դու՞ ես»: «Այո՛, ես եմ: Ես քեզ շասս-

ցի, որ լավ մարդ դառնաս»: «Եթե ավագակ չըլլայի, քեզ չէի հանդիպի: Ինչ հարյուր ոսկի՛ րոր»»: Նա հիսունական ոսկի րպեց ավագակներին ու ասաց.«Ինչ մի ամիս սպասե՛ք Կարարում³⁰»: Ավագակները հեռացան: Նա նսրեց մեր կառքը ու ճանապարհը շարունակեց մեզ հետ: Ճանապարհին մի քանի դեպք պատահեց: Հուսեհներ ոսկու ուժով այդ ամենը հաղթում էր: Նա միշտ մինչև արամները զինված էր, այնպես որ միջադեպերը շար հեշտ էր հարթում: Մի իրիկնադեմ հասանք Թանժիր: Հուսեհին րալով երկու հարյուր ոսկի՛ ճամփու դրի: Նա էլի խոստացավ, որ մարդ դառնա: Մինչև փաստաթղթերը պատրաստեցինք, անցավ մի ամիս: «Այնրեղից այսրեղ դուք էլ շար վրանգներ անցկացրիք ու Հուսեհի շնորհիվ ողջ մնացիք», -ասաց Յանկատորը:

Վերջապես բոլորի համար մի խաղաղ կյանք սկսվեց: Երեք կանայք ապրում էին լորդ Հարիմանի դղյակում՝ Ռոզանայի հետ: Երեք տղամարդիկ մնացին Ռոբերտի մոտ: Կյանքն իր պահանջներն ունի: Մի օր Վերժինյան հայտնեց, որ երթան խնամախոս ու Ալիսին իր համար ուզեն: Ռոբերտը ծիծաղեց: «Այս ի՞նչ փչեց գլխիդ»: Այդ մասին հայտնեցին տիկին Պենելոպեին: Պենելոպեի եկած օրվանից Ռոբերտը նրան մայրիկ էր կոչում: «Մայրիկ, եթե զանք խնամախոս ու Ալիսին Վերժինյայի համար ուզենք, ի՞նչ կասես»: «Ալիսան չի եղել Յանկատորի հարեմի մասնաբաժնում և սուրբի պես աղջիկ է, մաքուր, ինչպես ասրվածամայր: Վերժինյան ալ լավ րդա է: Ես նրան լավ ուսումնասիրած եմ: Նա արժանի է Ալիսային: Կարծում եմ՝ Ալիսան կամուսնանա նրա հետ»: Մի քանի ամիս հետո Ալիսան դարձավ Վերժինյայի կինը:

Մինչ այդ Ժոզեֆն ալ անտարբեր չէր Ժոզեֆինայի հանդեպ: Երկու հարսանիքն ալ համարյա միասին արեցին: Այս ամուսնությունների մեջ մեծ դերակատարություն ունեցավ Պենելոպեն: Նորից ուրախություն: Գեր Յանին ամեն առավոտ գալիս էր տաղավար, որտեղ Ռոբերտն էր և սուրճ, վիսկի ու թիվածք էր ճաշակում նրա հետ: Մի առավոտ նրան միացավ Պենելոպեն: «Ա՛հ, Ռոբերտ, երկու ընկերներդ երջանկացել են: Բո գործը շար դժվար է, շա՛ր: Ոչ մի դեպքում Ռոզանան չի մոռանում իրեն գողանալու մասին»: Այսպես անցնում էին օրեր, շաբաթներ ու ամիսներ: Այս ամիսներին մի քանի անգամ Ռոբերտը հանդիպեց Ռոզանային, որն իր նաժիշտների ու

ընկերուհիների հետ շրջում էր այգում: Ռոզանան հարցրեց Ռոբերտի առողջության մասին և շարունակեց իր ճանապարհը:

Մի առավոտ եկավ Գեր Յանին՝ ճնշված ու հոգնած, բարևեց, մի երկու բաժակ վիսկի խմեց, սուրճ ու թխվածք ճաշակեց: Չէր խոսում: «Գե՛ր Յանի, այս օրերին շար ես փոխվել: Դրամի պե՞տք ունես»: «Չէ՛, տվածդ և իմ ոսկիների կեսը դեռ կա»: «Ուրիշ բան կա՞»: Գեր Յանին մի երկու բաժակ ալ խմեց: «Ռոբե՛րյր, քո գործը իմ ուժերից վեր է, բայց դու կարող ես օգնել ինձ»: «Ի՞նչ է, ուզում ես Հունաստան գնալ»: «Չէ՛, մտքովս անգամ չի անցել, որ այսպեղից գնամ: Ուրիշ բան կա, բայց ամաչում եմ ասել»: «Ասա՛, մի՛ ամաչիր, ես ամենը կանեմ քեզ համար: Դու կյանքդ վրանագեցիր ու իմ խնդրանքը կատարեցիր»: «Հինգ տարի առաջ մահացավ կինս՝ մեծ վիշտ պատճառներով ինձ, բայց տարիները բուժեցին ինձ: Հիմա սիրահարվել եմ մի կնոջ և ուզում եմ ամուսնանալ: Իմ տարիքի համար ամոթ է, բայց սերը տարիքի չի նայի: Ծիշտ է, ես հիսուն տարեկան եմ, բայց այդ կինը ոչ մի դեպքում չի ուզում ամուսնանալ ինձ հետ՝ պատճառաբանելով իր անցյալը»: «Ես հասկացա, դու ուզում ես ամուսնանալ Պենելոպեի հետ: Ծիշտ է, նրա անցյալը դատապարտելի է, բայց նա իր կամքով չի ընկել հարեմ: Յանկատորը նրան գնել էր ստրուկների շուկայից ու տարել հարեմ»: «Ես ամեն ինչ կներեմ, միայն թե նա դառնա իմ կինը... Ռոբե՛րյր, նա գալիս է այս կողմ, ո՛չ մի խոսք»: Եկավ Պենելոպեն, բարևեց ու նստեց Ռոբերտի ցույց տված բազկաթոռին՝ Ռոբերտի և գեր Յանիի միջև: Գեր Յանին ուզեց գնալ: Ռոբերտը պահեց: «Բարի լույս, այս քանի օր է՝ չես երևում: Գե՛ր Յանի, ուզու՞մ ես Հունաստան գնալ»: «Ո՛չ, մայրիկ, ընդհակառակը, մնում է այսպեղ: Սիրահարվել է, ուզում է ամուսնանալ»: Պենելոպեն մեկ Յանիին նայեց, մեկ՝ Ռոբերտին: «Ո՞վ է այդ բախտավոր կինը, որ ուզում ես ամուսնանալ: Այս օրերին երկուսդ ալ շար եք փոխվել, մի՛ մտածեք, ամեն ինչ լավ կլինի, ամեն ինչ կհարթվի»: Գեր Յանիի լեզուն կապ էր ընկել: «Մայր, ուզում է քեզ հետ ամուսնանալ»: Պենելոպեն շառագունեց, այտերը վառվեցին: Նա, բռնելով գեր Յանիի ձեռքը, նայեց աչքերի մեջ ու ասաց. «Գե՛ր Յանի, ի՞նչ է, խելքդ թռցրե՞լ ես: Ես հարեմից դուրս եկած եմ, քսան տարի Յանկատորի հարեմում եմ ապրել, Ալիսան ալ եղել է այն շենքում, բայց հարեմում չի եղել, իսկ ես շար տարի-

ներ եղել են Յանկապորոի սիրուհին... Դու դա լավ գիտես, դու դա հաշվի առնու՞մ ես: Այս հիևզ-վեց ամիսների ընթացքում ես հասկացա, որ դու հիանալի մարդ ես: Դու՛, որ կյանքդ վրասնզեցիր մեզ համար ու բերիր հասցրիր այս երկիրը, դու ի՞նչ ես արժանի: Ընկնեիր փաշայի մարդկանց ձեռքը, քեզ առաջին ծառից կկախեին, իսկ մեզ կվաճառեին ստրուկների շուկայում: Քանի անգամ մահը կախվեց մեր գլուխներին, իսկ դու հաղթահարեցիր ամեն վրանգ ու մեզ անվնաս այստեղ հասցրիր: Այսբանից հետո ես՝ հարեմից դուրս եկած կին, ամուսնանա՞մ քեզ հետ: Բա դու ի՞նչ ես արժանի: Չէ՛, գեր Յանի, չեմ կարող»: «Ա՛հ, Ռոբերտ, մեր չորսի գործը շար դժվար է, շար»: «Մա՛յր, շար դաժան և խիստ ես դաբում քեզ: Դու քո կամքով չէ, որ հարեմ ընկար: Քեզ Յանկապորոի հարեմի մաքահարարը գնեց»: «Հետո ի՞նչ»: «Պենելոպե՛, ես ամեն ինչ գիտեմ, ես ամեն ինչ ներում եմ: Մի՛ մերժիր ինչ, ես աշխարհում ոչ ոք չունեմ. դու էլ... մեր ամուսնությունով ամեն ինչ կհարթվի, մենք երջանիկ կլինենք»: «Գեր Յանին ճիշտ է ասում»: «Ա՛հ, Ռոբերտ, ինչքան կուզեի, որ մենք բոլորս ալ երջանիկ լինեիր: Չորսին երջանկացրիր: Նրանք իրենց շար երջանիկ են զգում: Մեր չորսի գործը դժվար է, շար խոչընդոտներ կան: Ռոզանան ոչ մի դեպքում չի ուզում մոռանալ քո անցյալը, ինչպես ես չեմ ուզում մոռանալ իմը, բայց հույսս չեմ կորում»: «Տիկին Պենելոպե, եթե դուք ամուսնանաք, ես կհսով չափ երջանիկ կզգամ ինչ»: «Ռոբերտ, դու սրբանց ուզու՞մ ես, որ ամուսնանամ Գեր Յանիի հետ»: «Սրբանց: Չեր ամուսնությամբ ես կհսով չափ երջանիկ կզգամ»: «Լա՛վ, որ Գեր Յանին այդքան պնդում է, դու էլ կամենում ես, ես կամուսնանամ ու կդառնամ նրա կինը»: «Գնացե՛ք, պարասարվե՛ք հարսանիքին»: Այսպես երկու անձնավորություններ, որոնք միայնակ էին աշխարհում, իրենց ամուսնությամբ շատ խոչընդոտներ հարթեցին իրենց կյանքում: Մի շաբաթ Յանին չերևաց...

Մի ամիս էր անցել այն օրվանից, երբ Պենելոպեն և գեր Յանին ամուսնացան: Ռոբերտը օրեօր հասկանում էր, որ Ռոզանան իր համար կորած է: Նա հանգեց այն համոզման, որ պետք է հեռանա այդտեղից: Ռոբերտը, տեսնելով, որ Ռոզանան չի ուզում իրեն տեսնել, իսկ ինքը որոշել է հեռանալ Լամանշից, այս մասին հայտնեց Յանիին: «Բնչպես երևում է, Ռոբերտ, քեզ նորից իմ օգնությունն է

պեպք»։ «Ո՛չ, գեր Յանի, այս անգամ դու չես կարող օգնել ինձ»։ «Գիտեմ՝ այդ իմ ուժերից վեր է»։ Յանին շատ վշտացավ ու այդ մասին հայտնեց կնոջը՝ Պենելոպեին՝ շատ մեծ ցավ պատճառելով նրան։

Մի առավոտ Պենելոպեին գնաց Ռոզանային տեսնելու։ «Մ՛հ, մայրիկ, լավ է, որ եկար, այսօր շատ փառք եմ ու դժբախտ։ Երագունս փեսա եղբորս։ Նա ինձ հանդիմանեց, որ չեմ ներել Ռոբերտին... Մ՛հ, մայրիկ, այդքան բանից հետո ինչպե՞ս ներեմ։ Ծովահեն է դարձել, նավեր կործանել, մարդկանց գերեվարել ու շուկաներում ծախել, Միջերկրական ծովում ահուսարսափ սփռել։ Ինչպե՞ս ներեմ։ Չէ՛, չեմ կարող ներել»։ «Ռոբերտը քո սիրուց կորեց անցավ ծովերն ու օվկիանոսները, եկավ այսպեղ հասավ, փարավ Ալժիր, որ քո առաջ արդարանա։ Դու գիտես՝ ինչ գնով։ Փաշան կկախեր, բայց գրկվեցին մարդիկ, որ փրկեցին նրան»։ «Հետո էլ ինձ վաճառեցին սարուկների շուկայում»։ «Մ՛հ, Ռոզանա, դու բախտավոր ես։ Ես, ես քսան փարեկանում մորից մերկ կանգնեցի փախարակամածին՝ լիտի հայացքների ներքո։ Սյրկավաճառը ցուցադրում էր ինձ, շոյում կուրծքս, մազերս, պրտեցնում փախարակամածի վրա, ասում. «Նայե՛ք, հրեշտակի նման աղջիկ է»։ Ես չգիտեմ, թե ինչպես կաթվածահար չեղա։ Դու հազնված էիր, Ժոզեֆինան՝ կողքիդ։ Ռոզանա, լավ մտածիր։ Ասրված ներեց Ռոբերտին, մարդիկ ներեցին, դու չես ուզում ներել։ Ռոզանա, այս մի քանի օրը Ռոբերտին չեմ փեսել։ Ամուսինս միշտ լինում է Ռոբերտի մոտ։ Երեկ երևի հայրնել է, որ հեռանում է Լամանշից։ Ես դրա համար եկա։ Եթե դու չներես նրան, նա կհեռանա, երկուսդ էլ դժբախտ կլինեք»։ «Մ՛ի, մայրիկ» ասելով՝ նա փարվեց Պենելոպեի փարթամ գրկին։ Երկուսն էլ հուզված լաց եղան՝ արցունքներով ողողելով միմյանց։

Ներումը

Ռոզան լոզանք ընդունեց, ապա գնաց դեպի տաղավար։ Ռոբերտը մենակ նստած էր մտորումների մեջ։ Չգաց, որ մեկը նուրբ մատներով շոյեց իր ճակատը։ Ռոբերտին թվաց, թե մայրն է։ Նա բռնեց նուրբ ձեռքը, բայց տեսավ, որ մոր ձեռքը չէ։ Նա կանգնեց ոտքի, բռնեց սյուս նուրբ ձեռքը, նայեց, սթափվեց։ Նրա առաջ արցունքա-

կալված աչքերով կանգնած էր Ռոզանան: «*Ռոզանա*»: «*Ռոբեյր*»: Սիրահարները հայտնվեցին իրար գրկում: Հեռվից երկու զույգեր նայում էին այս տեսարանին: Երկու սրտերը այսքան տառապանքներից հետո միացան: Այժմ աշխարհում ոչ մի ուժ չէր կարող բաժանել այս երջանիկ զույգին:

Անցավ տասնհինգ տարի: Չորս զույգերը ունեցան վեց երեխա: Ռոզանան ուներ մի տասնչորս տարեկան տղա: Տղայի անունը Ցանկատոր էին դրել՝ երրորդ Ցանկատորը, Պենելոպեի աղջիկը տասներկու տարեկան էր: Վերժինյան ուներ մի տղա ու մի աղջիկ: Ժոզեֆը՝ երկու աղջիկ, որոնք զույգեր էին: Տասնհինգ ծովայիններից բոլորը ամուսնացել ու ընտանիք էին կազմել, ունեցել էին մի դուստրի՞ն³³¹ երեխա: Ռոբերտը նրանց աշխատանքով ապահովելու համար մի քանի հեկտար հողամաս էլ վերցրեց: Շուտով Պենելոպեն ունեցավ մի տղա նույնպես, որի անունը Հարի դրեցին:

Մինչ այդ Ֆրանսիայի իմպերիալիստական կառավարությունը և գաղութարարները գաղութացրին Թունիսը, ապա՝ Ալժիրը³³²: Այս դեպքերը Ռոբերտի առջև ճանապարհ բացեցին Ալժիր մեկնելու և իր ունեցվածքը ետ ստանալու համար: Ռոբերտը գեր Յանիին, Վերժինյային ու Ժոզեֆին հայտնեց, որ ուզում է գնալ Ալժիր ու տիրանալ իր ապարանքին: Յանին ասաց. «*Դժվար գործ է*»: «*Ոչինչ պարույր կանենք ընտանյոք հանդերձ՝ չորս ընտանիքներով*»: Բայց գեր Յանին մերժեց՝ ասելով, որ իր տարիքի մարդու համար դժվար ճանապարհորդություն կլինի: Ռոբերտը շատ ջանքեր թափեց նրան համոզելու համար: Ճանապարհ էին դուրս գալու Ռոզանայի հարուստ մորաքրոջ զբոսանավով, որը նա նվիրել էր Ցանկատորին՝ ամուսնության տասնամյա հորելյանի կապակցությամբ: Նավի շարժիչը վերջին արտադրության էր, շարժվում էր ժամում երեսուն կիլոմետր արագությամբ: Մի առավոտ չորս զույգերը ճանապարհ ընկան դեպի Ալժիր: Մի քանի փոթորիկ անցկացրին ու մտան Ալժիրի նավահանգիստ: Չբոսանավի վրա ծածանվում էր անգլիական դրոշը, կողքին էլ՝ ֆրանսիականը: Ժոզեֆը կնոջ հետ մնաց զբոսանավի վրա: Ռոբերտը և Վերժինյան իրենց կանանց հետ ափ իջան և գնացին հյուրանոց, ապա երկուսով ծովափով գնացին դեպի Ցանկատորի ապարանքը: Ճանապարհին նրանք տեսան «Ուրուրին», որը

կանգնած էր ծովախորշում՝ մի կողմի վրա թեքված, կեսից ավելին ջրի մեջ էր ընկղմված: «Ուրուրի» վրա ոչինչ չկար՝ ո՛չ բնդանոթները, ո՛չ կայմերը, միայն կմախքն էր մնացել: Ծովահենների հզոր «Ուրուրը» վերածվել էր ավերակի: «*Վերժինյա, նայի՛ր, «Ուրուրը» տեսա՞ր*»: «*Տեսա: Գնանք առաջ*»: Հասան ապարանքին ու, ինչպես տասնհինգ տարի առաջ, կանգնեցին ապարանքի դռան առաջ: Դուռը խփեցին: Դռան փոքր անցքից երևաց մի ֆրանսիացի սպա, որը բարևեց ու հարցրեց. «*Ո՞վ եք, ու՞մ եք ուզում*»: «*Կառավարիչին ու այս թիակի տիրոջը*»: «*Հիմա, գնանք նստենք, տեսնենք՝ ինչ եք ուզում*»: «*Մենք ուզում ենք իմանալ այս թիակի նախկին տիրոջ մասին*»: «*Այս թիակը պարկանել է Յանկարոյր անունով ծովահեն հրամանատարին, որը, փաշայի հետ ընդհարվելով, հանչնվել է անզիացիներին և գլխավրվել է*»: «*Յանկարոյրը ես եմ: Ոչ ոք ինչ չի գլխարել: Այստեղ կանչե՛ք աշխարողներին, նրանք կարող են ինչ ճանաչել*»: Ֆրանսիացի սպայի հրամանով բոլորը ներկայացան: Յանկատորը ճանաչեց դռնապանին, որը շատ էր ծերացել: «*Յանկարո՛ր, այդ որտեղի՞ց եկար: Քեզ չե՞ն գլխարել: Փաշան գիշերցերեկ ախուվախ էր անում, հրամանատարությունը հանչնեց Հալիլին: Փաշայի տղան փաստ-փուտան հավաքեց, գնաց Պոլիս, ալ չվերադարձավ: Այստեղ որոշ ժամանակ Հալիլը սպրեց: Մի երկու ամիս առաջ, ֆրանսիացիները դեռ չեկած, փաշան ալ գնաց Պոլիս՝ իր ամբողջ ունեցվածքն ալ հետը: Հալիլը ցրեց ծովահեններին ու ինքն ալ հեռացավ: Տեսած կըլլաս՝ հզոր «Ուրուրը», որը Միջերկրական ծովու սարսափն էր, ավերակի է վերածված*»: Եկավ զանձապահը, մոտեցավ Յանկատորին: «*Տե՛ր իմ, չե՞ս ճանաչում*»: «*Իբրահիմ*»: «*Այո՛, տե՛ր իմ, Իբրահիմն եմ: Այս ալ Շաքիրը*»: «*Ժամանակն անցնում է, լավ է, որ իրար ճանաչեցիք*»: «*Ալլահի ողորմությամբ սպրում ենք*»: Նրանք խոսում էին արաբերեն: Այնպես որ ֆրանսիացին ոչինչ չէր հասկանում: «*Մենք վկա կկանգնենք, որ այս բնակարանը ամբողջովին կպարկանի քեզ*»:

Տասը րոպեից եկավ կառավարիչը: Դուռը բացեց ու ներս մտավ: «*Յանկարո՛ր, դու՞ ես, եկել ես*»: «*Նե՛րս արի*»: «*Այսբան ժամանակ է՝ քեզնից լուր չունեիր: Հալիլը ամեն ինչ պարմեց, ասաց, որ կախադանից չես փրկվի*»: «*Այն պարանը, որով ինչ պիրի կախեին,*

դեռ չի պատրաստվել: Ո՞վ է հիմա իմ տան տեր-տիրականը»: «Մի ֆրանսիացի, նա առանձին է ապրում»: Մինչ այդ եկավ ֆրանսիացին: Ցանկատորը բացատրեց. «Այս թիակը իմն է և իմ ծառաները վկայություն են տալու այդ մասին»: «Ես ժամանակավորապես եմ աշատեղ ապրում: Այս ինդիքը պիտի պարզես նահանգապետի հետ»: Ամիսներ քաշեց մինչև հաստատումը: Ֆրանսիացի սպան մույն օրը հեռացավ: Ֆրանսիացու հեռանալուց հետո ապարանքի տեր-տիրականը դարձավ Ցանկատորը: Ցանկատորը բոլորին շնորհակալություն հայտնեց:

Անցան սրահ: «Պատմի՛ր, ինչ կա, ինչ չկա, ամեն ինչ լա՞վ է», - հարցրեց Ցանկատորը կառավարիչին: Արդեն տան մի մասը ազատել է: Մյուսները աշխատում են: Դրամը, որ թողել էիր, շատ խնայողաբար եմ ծախսել: Դու ինչ թողել էիր հիսուն հազար ոսկի, այդ ոսկիները ես բանկ դրեցի, որ ֆրանսիացիները չկարողանան բռնագրավել: Այժմ թիվը մոտ յոթանասուն հազարի պիտի հասած լինի: Այդ գումարը քեզ է պարկուսում: Բերեմ, դնեմ սեյֆում³³: Հիմա զանչարանում հազար ոսկուց կա ութ հարյուրը»: «Իբրահիմ, ճիշտ է ասում»: «Ալլահը վկա, այն, ինչ ասում է, ճիշտ է»: «Լավ գումարը բանկից վերցրե՞ք ու բերեք դրե՞ք սեյֆը: Իբրահիմ, քա՞նի հոգի կա սկզբից մնացող ծառաներից»: «Ֆրանսիացիների կազմի մեկնելուց հետո կա տասը հոգի, պարտիզայանը, խոհարարի օգնականները»: «Բոլորին կանչի՛ր»: Բոլորի գալուց հետո Ցանկատորը խոսեց: «Բոլորդ ալ ինչ ճանաչու՞մ եք»: «Այո»: «Մնալու՞ եք ինչ մոտ աշխատելու»: Իբրահիմը բացականչեց. «Տե՛ր իմ, ես ամուսնացած եմ, ունեմ երկու երեխա, տղայիս անունը Ցանկատոր է, աղջկանս՝ Ռոզանա: Ես օրիորդ Ռոզանայի հետ մի անգամ խոսեցա, քրոջ նման համակրեցի նրան և դարերս նրա անունով կոչեցի: Ես ընկրանիք ունեմ, եթե թույլ տաս, ես կգնամ»: «Ոչ մի տեղ չես գնա: Կգաս աշատեղ, կապրես ու կօգնես կառավարիչին: Մյուսները բոլորն ալ մնում են: Յուրաքանչյուրը կտրանա հարյուր ոսկի: Այս քսան հազար ոսկուց ինչ որ ավելանա, Իբրահիմի փրամադրության տակ է: Հիսուն հազարը անչեռնմխելի է: Իբրահիմ, բաժանի՛ր դրամը և կնոջդ ու երեխաներին բեր տեսնեմ»: «Կնոջս չի կարելի, որ տեսնես, բայց երեխաներիս կբերեմ»:

Ցանկատորը ևս տասն օր մնաց, շատ դժվարությամբ կարողա-

ցավ վերականգնել եղածը: Նա հայտնեց. «*Ես մեկնելու եմ մեկ ամսով, հեպոն հեպո եմ գալու շեզ շար ծանոթ մարդկանց հետ, այնպես որ չեմ պարտականությունները կատարե՞ք բարեխղճորեն*»: Որոշ ժամանակ անց թիակը լցվեց մարդկանցով, զույգերը և իրենց երեխաները այցելեցին Յանկատորի դղյակը: Չույգերի յոթ երեխաները խաղում էին Իբրահիմի երեխաների հետ, այնպես որ ամբողջ թիակը զնգում էր երեխաների ձայնից: Ամենափոքրը Հարին էր՝ գեր Յանիի ու Պենելոպեի որդին. նա երեք տարեկան էր: Այսպես անցավ ևս մեկ ամիս:

Մի օր Ռոբերտը, Վերժինյան և Ժոզեֆը զրուցում էին: Ռոբերտը հայտնեց. «*Ուզում եմ զնալ Պոլիս՝ փաշային տեսության*»: Ժոզեֆը, Յանին և Պենելոպեն առարկեցին: Վերժինյան ասաց. «*Դու ակզիացի հպարտակ ես, քեզ վրասնզ չկա*»: Երկու օր հետո զբոսանավը արդեն դեպի Պոլիս էր ընթանում: Երբ մի առավոտ նավը կանգնեց Պոլսի նավահանգստում, եկան նավահանգստի տեսուչներն ու ստուգեցին փաստաթղթերը, որոնք կարգին էին: Ռոբերտը, Ռոզանան և փոքրիկ Յանկատորը, ափ իջնելով, գնացին հյուրանոց, ապա՝ անգլիական հյուպատոսի մոտ՝ Ալժիրի փաշայի հասցեն իմանալու: Դեսպանատան աշխատողը տվեց հասցեն: Գնացին այդ հասցեով և տեսան մի երեքհարկանի շքեղ բնակարան: Հնչեցրին զանգը: Դուռը բացվեց: «*Ու՞մ եք ուզում*»: «*Ալժիրի փաշան այստե՞ղ է ապրում*»: «*Այո*»: «*Փաշային հայտնե՞ք, որ եկել է լորդ Կրիսթոֆը՝ կնոջ և որդու հետ, և ուզում է, որ փաշան նրան ընդունի*»: «*Լավ*»: Եկավ մի աղջիկ, ներս հրավիրեց. «*Փաշան համաշայն է շեզ ընդունել... Համեցե՞ք, հիմա փաշան շեզ կընդունի*»: Մտան հյուրասենյակ: Փաշան նարգիլ էր քաշում մի շատ լուսավոր սենյակում, նրա կողքին խաղում էին երկու փոքրիկ տղաներ: Փաշան, նայելով Ռոբերտին, ուզեց վեր կենալ: Ռոբերտը երկու քայլ արեց, բռնեց փաշայի ուսերից ու նստեցրեց: «*Յանկատոր՛ր, դու՞ ես*»: Փաշայի աչքերը թրջվեցին: «*Ես եմ, փաշա՛*»: «*Վա՛յ, Յանկատոր՛ր, ո՞նջ ես*»: «*Ոնջ եմ*»: «*Շեյթան, այսքան քանից հեպո ողջ մնացիր*»: «*Այո՛, որ գամ, քեզ տեսնեմ*»: «*Նարի՛ր կողքիս, առաջվա նման*»: Փաշան ձայն տվեց: Եկավ նույն աղջիկը: «*Հանումին փա՛ր մեծ տիկնոջ հարկաբաժինը ու ասա՛, որ սեփը գա*»: Այս ողջ խոսակցությունը տարվում

էր թուրքերեն: Փաշան նորից ձայն տվեց: Հայտնվեց առանց չադրա-
յի մի սիրուն աղջիկ: «Թռռներիս դաստիարակչուհին է, անգլուհի
է... Երեխաներին տա՛ր փոքր հանունի մոտ: Թող մեծ հանունն էլ
պարոնի հետ եկած հանունի հետ զնա փոքր հանունի մոտ... Թռռ-
ներս երկուսն ալ տղա են, մեկի անունը Յանկատոր է, մյուսինը՝ Սե-
լիմ, որը Յանկատորի իսկական անունն է: Բացի ինչանից՝ ոչ ոք
չգիտեր, որ Յանկատորի իսկական անունը Սելիմ էր»: Եկավ փա-
շայի տղան, նա զարմացած աչքերը շեց Յանկատորի վրա: «Սելիմ
սեհո՞, դեռ արու՞մ ես ինչ: Սեհո՞, լսի՛ր ինչ, քեզ անան բարկ սիրտ
ունեցողը այդպիսի նավի հրամանատար չէր կարող դառնալ: Ես ալ
առաջ, ինչպես ասում էին, մոր փեշի տակ մեծացած էի ու չէի կարող
ծովահենների նավի հրամանատար լինել: Բայց նակարագիրը ինչ
կոտե՛ց. այն տարիները, որ ես անցկացրի իսպանացի ծովահեննե-
րի նավի թիարակում, կոտեցի՛ն մարմնիս մասերը, շեռքերս երկաթի
վերածվեցի՛ն, կամքս պողպատ դարձավ: Այդ էլ պարճառ եղավ, որ
ես կարողացա Յանկատորին փոխարինել»: Սելիդը մի քայլ հետ
քաշվեց: «Սեհո՞, եթե կարող ես, ների՛ր ինչ: Ես քեզ ներում եմ»: Սեիդը
ձեռքը երկարացրեց: Երկու ախոյանները հաշտվեցին:
«Յա՛շա»: Յանկատորը նստեց փաշայի կողքին, սելիդը՝ մյուս կող-
քին: «Պատմի՛ր, մանրամասն պատմի՛ր՝ ինչպե՞ս եղավ, որ ազատ-
վեցիր կախադանից»: «Հինգ տարի պայմանական փվեցի՛ն: Ես եկա
Ալժիր և վերականգնեցի թիակի տիրոջ իմ իրավունքները»: «Շար
ուժեղ պահապան հրեշտակ ունես, այսքան բաներից հետո ողջ
մնացիր»: «Փաշա՛, արդարությունը չի կորի, ես իմ կամքին հակա-
ռակ ոչինչ չեմ արել: Եղբայրս, որը իմ բոլոր դժբախտությունների
պարճառն էր, ֆրիզարի վրա անչնասպան եղավ: Մինչև մահանա-
լը նա կապիտանին ամեն ինչ պատմեց, թե ինչպես է ինչ ծախել իս-
պանական ծովահենների կապիտանին, թե ինչպես էր սպանել Ռո-
զանայի եղբորը»: «Ես այդ պարմությունը լրիվ գիտեմ, մոլլան էր
իմացել, չգիտեմ, թե որտեղից, քո զնալուց հետո նա պարմեց ինչ...
Յանկատոր՛, ի՞նչ եղավ իմ ծախսարար³³⁴ Յանին»: «Իմ ինդրակ-
քով հարեմի տեսչուհուն և ծառայիս տարավ Թանժիր, այնտեղից էլ
եկան Լոնդոն: Հետո նա ամուսնացավ տեսչուհու հետ: Այժմ ունի մի
տասներկու տարեկան աղջիկ և մի երեք տարեկան տղա»: «Ինչ-
պե՞ս թե, քրիստոնյան ամուսնացել է մուսուլմանի հետ»: «Նա մու-

սուլման չէ, հույն է: Հույնը հույնի հետ ամուսնացավ»: «Դու ի՞նչ արիր այն աղջկան»: «Այն աղջիկը հիմա մեծ փրկինոջ մուր է: Ես և նա ամուսնացանք, մի տղա ունենք՝ երրորդ Յանկատորը: Իմացա, որ Հալիլը Եզիպտոս է գնացել»: «Տասը տարի շարունակեց քո գործը: Հետո եկան ֆրանսիացիները, սրիպված ցրվեցինք»: «Սեյի՛դ, դու ուզում էիր նավը ղեկավարել: Եթե ես այլ չըլլայի, դու նավի կապիտան չէիր կրնա լինել: Այդպիսի սահռելի նավը միայն Հալիլը կարող էր ղեկավարել, միայն նա էր կարող փոխարինել ինձ: Հալիլն արժանի էր դրան: Ինչպես հետո իմացա, նա էր դարձել «Ուրուրի» հրամանատարը: Հալիլն արժանի էր»: «Աղաթ³⁵ էր, որ նավը ինձ հանձնեին»: «Վրդովվեցիր, որ հայրդ Հալիլին նշանակեց, եկ այդ մասին չխոսենք այլևս... Փաշա՛, ծերանում ես, առաջ ավելի առույգ էիր»: «Էլ մի ասա, տարիներն անցնում են, յոթանասունհինգ տարեկան եմ»:

Երեք օր մնալուց հետո շատ ջերմ բաժանվեցին փաշայից և նորից հետ եկան Ալժիր: Փաշան բաժանվելիս ամուր գրկեց Յանկատորին, համբուրեց ճակատը, հիլալ (ներում) շնորհեց: Սեհրը կանգնեց, մի քայլ առաջ եկավ, երկու ձեռքերով բռնեց Յանկատորի ձեռքերը, ամուր սեղմեց և ասաց.«Հիլալ, Յանկատոր՛: Գնա՛, ալլաիք քեզ հետ, բայց նորից կգաս, փաշայիդ չմոռանաս»:

Մի շաբաթից Ռոբերտը արդեն Ալժիրում էր: Ապարանքի կառավարիչին մի շաբթ ցուցմունքներ տալով՝ վերադարձան Լոնդոն:

Աշնանը երեխաները գնում էին Լոնդոն՝ սովորելու, իսկ չորս գույգերը գնում էին Ալժիր, ձմեռը այնտեղ անցկացնում, իսկ գարունը նորից հետ էին գալիս Լամանշ: Անցավ ևս տասը տարի: Գեր Յանին լավ ծերացել էր: Պենելոպեն լավ էր խնամում նրան: Երեք գույգերը գնացին Յանիի ու Պենելոպեի աղջկան երրորդ Յանկատորի համար ուզելու: Նրանք իրար էին սիրում: Շատ ճոխ հարսանիք արեցին: Որոշ ժամանակ հետո Վերժինյան տղային ամուսնացրեց Ժոզեֆի և Ժոզեֆինայի աղջկա հետ: Կախաղանից փրկված այս չորս տղամարդիկ հանգիստ կյանք վայելեցին:

ՏԱՐՉԱՆԸ³³⁶

Դարեր առաջ անգլիական գաղութատերերը մահ ու սարսափ էին սփռում Հնդկաստանում երկիրը գաղութացնելու համար: Դաժան էր հնդիկների դիմադրությունը: Այսպիսի մի կոտորածի ժամանակ սպանվեց վերջին բրիտանացին³³⁷: Անգլիացիները ստիպված լուր ուղարկեցին գաղութատերերի մինիստրություն, որոշեցին այդ պոստում³³⁸ նշանակել լորդ Կրիսթոֆին, որ նոր էր ամուսնացել: Ֆրիգատը, որը պետք է Հնդկաստան հասցներ լորդ Կրիսթոֆի³³⁹ կնոջը, փոքր էր՝ քսան ծովայիններ զինվորական կապիտանի գլխավորությամբ: Ֆրիգատում հատուկ սենյակ կար՝ մեծ հարմարություններով՝ լոգարան, տուալետ: Երբ ֆրիգատը դուրս եկավ Թեմգայի ջրերից դեպի Հնդկաստան, կապիտանի հաշվով չորս ամսից հազիվ հասնեին նպատակակետին: Ատլանտիկան ծփում էր իր մեղմ ալիքներով, իսկ ֆրիգատը ամբողջ հզորությամբ գնում էր առաջ: Արդեն երկու ամիս էր անցել այն օրից, ինչ դուրս էին եկել Անգլիայի ափերից: Հասան Գիբթունի նավահանգիստ, ջուր և մթերք վերցնելուց հետո նորից ճամփա ելան և լողացին Աֆրիկայի ջրերում: Մի առավոտ աղմուկ-աղաղակ լսվեց: Լորդ Կրիսթոֆը բարձրացավ վերև՝ տախտակամած, այն ժամանակ, երբ կապիտանը ասորճանակը ուղղեց ծովայինի վրա: Կայծակի արագությամբ լորդ Կրիսթոֆը հարվածեց կապիտանի այտին: Կրակոցը բարձր ստացվեց: Ծովայինը փրկվեց մահից: Կապիտանը շատ զայրացավ լորդ Կրիսթոֆի վրա՝ ասելով, որ այս դեպքը կարող է վատ հետևանք ունենալ: Դեպքը պատահեց առավոտյան, իսկ ծովայինները շարունակեցին իրենց առօրյա գործը: Այսպես անցավ մի քանի օր ևս: Մի առավոտ նորից ուժեղ կրակոց լսվեց: Լորդ Կրիսթոֆը վերցրեց իր զենքը, ուզեց դուրս գալ, բայց դռան առաջ հրացանը ձեռքին կանգնած էր մի ծովային, որը հրամայեց. «*Չշարժվե՛լ, զնացե՛ք, նստե՛ք Ձեր սենյակում*»: Վերևում հրաձգությունը շարունակվում էր: Մի ժամ հետո լռեց: Այդ ժամանակ հայտնեցին, որ ամեն ինչ վերջացած է, բայց ո՞վ էր հաղթել: Դուռը բացվեց, և ներս մտավ այն ծովայինը, որի կյանքը փրկել էր լորդ Կրիսթոֆը: «*Ես Մայքլն եմ, մենք գրավեցինք ֆրիգատը: Մենք քեզ չենք կարող Հնդկաստան հասցնել: Մենք քեզ*

էլ կվերացնեիւնք, քայց դու իմ կյանքը փրկեցիր, դրա համար ես քո կյանքը կապահովեմ: Չնայած մյուսների հակառակորթանը՝ ես քեզ կիջեցնեմ մի կղզի, կապահովեմ ամեն ինչով, կտամ մթերքի մի մասը, հրացան, փամփուռլուներ, որսորդական հրացան: Այն կղզին, որի մոտով մենք անցնելու ենք, ունի հարուստ որսատեղիներ»: Երեք օր հետո ֆրիգատը կանգնեց փարթամ բուսականությունով ծածկված մի կղզու մոտ: Սկսվեց բեռնաթափումը: Մայքլն ինքն էր կառավարում աշխատանքը, որ մի բան պակաս չըլլա: Ամենեն կարևորը իջեցրին՝ երկու բարել նավթ լամպերի համար: Վերջում Մայքլը նավակով ինքը տարավ Էլինային ու լորդ Կրիսթոֆին և խոստացավ, որ առաջին հարմար առիթի դեպքում նրանց գտնվելու մասին կհայտնի անգլիական կառավարությանը: Նա հրաժեշտ տարով հեռացավ: Լորդ Կրիսթոֆը և Էլինան մնացին երկուսով: Էլինան հայտնեց. «*Ես ոչինչից չեմ վախենում, քայց վախենում եմ նրանից, ինչ որ պիրի գա*»: Էլինան արդեն հինգ ամսական հղի էր: Ռոբերտը սթափվեց, նայեց չորս կողմը: Ծովեզրից տասը-քսան մետրի վրա փարթամ բուսականություն էր: Մաքուր առուն, որ կլկլում էր, ապահովում էր ջրով: Տեղ էր պետք գիշերելու համար: Ռոշեցին հանգստանալու ու քնելու տեղ պատրաստել բարձր ծառի վրա: Անցան գործի:

Ամենամոտ ծառի վրա պատրաստեցին քողտիկը, տախտակներով սանդուղք պատրաստեցին, որ Էլինան կարողանա բարձրանալ: Առաջինը բարձրացավ Էլինան ու զարմացավ, որ ամուսինը այսպիսի հիանալի սենյակ էր պատրաստել: Նախաճաշելուց հետո պառկեցին քնելու: Թե որ ժամն էր, Աստված գիտի: Հանկարծ մի սուսկալի ոռնոց բարձրացավ, Ռոբերտը զարթնեց ու դուրս նայեց: Ամբողջ կղզին ողողված էր լիալուսնով, կարծես ցերեկ լիներ: Ցայգում տեսավ ածուխի նման սև պանտերային³⁴⁰, որը սարսափ էր սփռում իր շուրջը: Բուն ամբողջ ձայնով գոռում էր: Ամբողջ կղզին արձագանքում, կորչում էր այդ ոռնոցի մեջ: Էլինան զարթնեց. «*Ռոբե՛րտ, այս ի՞նչ է*»: «*Էլինա՛, մենք ասպահով տեղում ենք, այնպես որ վախենալու բան չկա: Նայի՛ր այնտեղ*»: Էլինան սարսափով տեսավ պանտերային, որը դանդաղ մոտենում էր առվին՝ ջուր խմելու: «*Ռոբե՛րտ, այդ ի՛նչ սիրուն է պանտերան*»: «*Այո՛, ինչքան սիրուն է, այնքան էլ*

դաժան է»: Առավոտը բացվեց թռչունների ծվլլոցով: Այնքան հիանալի էր բնությունը: Գիշերվանից ոչինչ չէր մնացել: Ռոբերտի առաջին գործը երկու մասից բաղկացած սենյակ սարքելն էր: Դրա համար ամեն ինչ կար: «*Էլի՛նա՛, տե՛ս, ինչքան հիանալի կղզի ունենք: Գնամ մի դույլ ջուր բերեմ, լվացվենք, ճաշենք, հեպո սկսենք գործը*»: Ռոբերտի առաջին գործը եղավ բնակարան սարքելու համար հարմար տեղ ճարելը: Այդ ծառերի տակ երկուսով սկսեցին աշխատել: Էլի՛նան, չնայած իր հղիությանը, ամեն ինչում օգնում էր ամուսնուն: Մայքլը այնքան տախտակ էր իջեցրել, որ անգամ երկու բնակարան սարքելուն կբավարարեր: Ռոբերտի երկրորդ գործը եղավ Էլի՛նային հրացանով և ատրճանակով կրակել սովորեցնելը և հրացանի մեջ փամփուշտներ տեղադրելը: Մի ամիս հետո Էլի՛նան արդեն վարժ կրակում էր: Շինարարությունը առաջ էր գնում: Ռոբերտն ուզում էր, որ մինչև երեխայի լույս աշխարհ գալը բնակարանը պատրաստ լինի: Արդեն հղիության ութերորդ ամիսն էր, իրենք ապրում էին բնակարանում, որն ամեն հարմարություն ուներ՝ երկփեղկանի ապակիներով լուսամուտներ, երկու մահճակալ, երեխայի կախովի մահճակալ, կացարանի երկրորդ բաժնում մթերքն էր և ուրիշ պիտույքներ: Ռոբերտը սկսել էր որսորդություն անել, այնպես որ թարմ միս միշտ կար: Նա որսացել էր երկու քարայծ, որոնք փոքրիկ ընտանիքը թարմ կաթով էին ապահովում: Ընտանիք, որը շուտով երեք հոգուց էր բաղկացած դառնալու: Բայց դժբախտությունը հալածում էր Ռոբերտին: Առավոտյան կացինը առած՝ նա գնաց խոհանոցի համար փայտ կոտորելու և, ինչպես միշտ, գենք չվերցրեց, քանի որ շատ մոտ էր բնակարանին: Հանկարծ նա իր հետևում մի մռնչյուն լսեց, սարսափած հետ դարձավ ու տեսավ իր առջև կանգնած մարդանման կապիկին, որն իրենից երկու գլուխ բարձր էր: Նա ուժեղ բռռաց.«*Էլի՛նա՛, հասի՛ր*»: Ռոբերտը կացինով պաշտպանվում էր, բայց կապիկը, կացինը նրա ձեռքից խլելով, մի կողմ շարտեց: Ռոբերտը զինաթափված էր: Էլի՛նան դուրս մայեց ու տեսավ, որ կապիկը հարձակվում է Ռոբերտի վրա, որը ստիպված մի մահակով էր պաշտպանվում: Ներսից վերցնելով հրացանը՝ Էլի՛նան կրակեց կապիկի թիկունքին: Կրակոցը դիպուկ էր, կապիկը ծանր վիրավորվեց ու թողնելով Ռոբերտին՝ հարձակվեց Էլի՛նայի վրա, բայց տապալ-

վեց Էլինայի երկրորդ կրակոցից՝ նրանից երկու մետր հեռավորությամբ վրա: Էլինան ընկավ հնձածի մասն և կորցրեց գիտակցությունը: Ռոբերտը հասավ Էլինային: Երեխայի ծնունդը արդեն սկսվել էր... Ռոբերտը վերցրեց երեխային: Նա շատ քիչ էր հասկանում այս գործից, բայց առաջին օգնությունը ցույց տվեց փոքրիկին: Նա նետվեց Էլինայի մոտ, որը շատ ծանր էր շնչում: Սկզբից երեխային, հետո Էլինային տեղափոխեց մահճակալի վրա: Ամեն ինչ արեց, բայց Էլինան ուշքի չեկավ: Անցնում էին ծանր օրերը, Էլինայի վիճակը նույնն էր, ինչ առաջին օրը: Ռոբերտը կերակրում էր նրան, կաթ խմեցնում, որ երեխային կերակրելու համար կաթ ունենա, նստեցնում, երեխային գիրկը տալիս: Ռոբերտը նստում էր Էլինայի կողքին և հետևում, որ երեխան ծծի մոր կուրծքը: Անցան ամիսներ, երեխան օր օրի մեծանում էր: Շուտով պիտի լրանար տարին, բայց Էլինան արդեն չկար, նա հանգիստ մահացավ Ռոբերտի գրկում: Ռոբերտը նրան թաղեց կացարանի կողքին և գերեզմանի վրա իր ձեռքով պատրաստած մի գեղեցիկ խաչ դրեց: Ինչպես երևում էր, Ռոբերտի միտքն էլ մթազնում էր:

Այդ տակալի դեպքից հետո առավոտյան կապիկից ոչինչ չէր մնացել, վայրի գազանները հոշոտել էին անշունչ մարմինը, մնացել էին միայն ոսկորները, որոնք Ռոբերտը հավաքեց ու շարտեց հեռու: Այս սպանված կապիկի հոտը³⁴¹ ապրում էր կղզու անտառի խորքում: Բաղկացած էր տասնհինգ գույգերից: Սպանված կապիկը, նեղանալով իր ընկերներից, թողել էր ու հեռացել, հասել մինչև ծովափ, որտեղ, մեծ դժբախտություն բերելով Կրիսթոգների ընտանիքին, սպանվել էր: Կապիկի էգ գույգրնկերը սկսում է նրան փնտրել: Այս մասին հայտնելով կապիկ առաջնորդին՝ Գերչակին³⁴², պահանջում է, որ միասին փնտրեն: Խույմբը սկսում է միասին որոնել, բայց որոնումները ոչ մի արդյունք չեն տալիս: Անցնում էին ամիսներ, էգ կապիկը շատ անհանգիստ էր: Նա նեղում էր Գերչակին և ստիպում դիմել համապատասխան քայլերի: Գերչակը ստիպված ամբողջ խումբը տանում է դեպի ծովափ: Այդ խմբում իր գույգի հետ հաշտ ու խաղաղ ապրում էր մի փոքր կապիկ, որն ուներ երկու նորածին ձագուկ՝ Թիրգոգ³⁴³ և Տարգան: Կապիկի անունը Գալա էր: Կապիկը, ձագուկներին վզից և թիկունքից կախած, գնում էր ծովափի ճանապար-

հով: Ծառից մի միրգ է պոկվում և ընկնում Տարգանի վրա, որը տեղ-նուտեղը մահանում է, բայց Գ-ալան չի թողնում իր մահացած ձագուկին և գրկած շարունակում է իր ճանապարհը հոտի հետ: Խումբը հասավ այնտեղ, որտեղ սպանված կապիկի ոսկորներն էին: Գերչակը նկատեց շինությունը և Ռոբերտին: Մինչ Ռոբերտը ուշքի կգար, արդեն կատաղած Գերչակի ձեռքերում էր, որն էլ սպանեց նրան: Սենյակից լսվեց երեխայի ճիչը: Մինչև Գերչակը կմտներ ներս, Գ-ալան կայծակի արագությամբ Թիրգոզին գցեց շալակից ու մտավ ներս, որտեղ օրորոցի մեջ ճշում էր երեխան: Վերցնելով ողջ երեխային՝ նա իր սպանված ձագին դրեց օրորոցի մեջ: Գերչակն արդեն փակել էր դուրս գալու ճանապարհը: Գ-ալան մոտեցավ պատուհանին ու այնտեղից էլ դուրս թռավ ու վերցնելով Թերգոզին՝ բարձրացավ ծառը: Որձ կապիկը սկսեց համոզել, որ ճամփին գցի երեխային, բայց Գ-ալան ավելի ամուր սեղմեց նրան կրծքին: Երեխան, առնելով կաթի հոտը, սկսեց ծծել Գ-ալայի կուրծքը: Գերչակը փրփրեց³⁴⁴ և հրամայեց, որ կապիկը ծառից իջնի և այդ ճչանին գցի: Գ-ալան հայտարարեց, որ եթե իրեն հանգիստ չթողնեն, նա կհեռանա խմբից:

Մի տարի էր անցել այն օրից, ինչ Գ-ալան կորցրեց Տարգանին: Թիրգոզը ծառից ծառ էր անցնում, բայց Տարգանը Գ-ալայի մեջքից չէր իջնում: Անցավ տասը տարի: Հիմա արդեն Տարգանը կարող էր շատ լավ ցատկել ծառից ծառ: Նա այնպես էր թռչում, որ Գ-ալայի սիրտը ճաքում էր. հանկարծ ներքև չընկնի: Տասնհինգ տարեկան էր, երբ առաջին անգամ ներքև իջավ, գտավ հոր բնակարանը, սուրը, մտավ սենյակ, տեսավ զանազան նկարներ: Աչքին դիպավ որսորդական դանակը, որը վերցրեց ու մի քանի անգամ փորձեց իր մարմնի վրա: Մարդու բնագորը հաղթեց, նա հասկացավ, որ սրանով կարելի է հարվածել: Մինչ այդ Տարգանը մերկ էր ման գալիս, նա նկարի վրա տեսավ, որ մարդիկ հագնված են: Նայեց մեծ հայելու մեջ ու տեսավ, որ ինքը իր եղբոր՝ Թիրգոզի նման մերկ է: Վերցրեց կիսաշալվարներից մեկը, մի վերնաշապիկ ու հագավ: Իրեն ավելի վստահ զգաց: Այդպես Տարգանը այլևս մերկ ման չէր գալիս: Որսորդական դանակը կապած էր մեջքին: Այդպես հագնված ու զինված՝ վերադարձավ խումբ: Դրանից հետո նա ամեն օր գնում էր այդ տու-

նր ու մի բան սովորում: Սկսեց մկրատով երկարած եղունգները և մազերը կտրել, երեսը սափրել, օճառով երեսը և ձեռքերը լվանալ: Մի խոսքով, ամեն օր մի բան սովորում էր:

Մի անգամ նա մնացել էր հոր տանը զգած անկողնու մեջ: Նա ուզեց վերադառնալ խումբ, բայց մի տասը քայլ էլ չէր արել, երբ հանդիպեց մի սարսափելի գորհիլայի: Գորհիլան ելել էր որսի: Հանդիպելով Տարզանին՝ նա, ահարկու ձայն արձակելով, հարձակվեց Տարզանի վրա: Տարզանը հազիվ կարողացավ հանել սուրը և ուժեղ հարվածեց գորհիլային: Միևնույն ժամանակ Տարզանը ուժեղ ձայնով օգնության կանչեց: Գալան լսեց Տարզանի օգնության կանչը և սլացավ ձայնի ուղղությամբ, բայց ձայնը թույլ էր: Գորհիլայի ձայնը ավելի ուժեղ էր, քան Տարզանինը: Գորհիլան քրքրում էր Տարզանի մարմինը, իսկ Տարզանը նրան անընդհատ խոցում էր սրով: Երկուսն էլ տապալվեցին գետնին. գորհիլան՝ սպանված, իսկ Տարզանը՝ վիրավորված: Գալան հասավ Տարզանի վերջին ճչին: Նա տեսավ սարսափելի գորհիլային արյունլիվա ընկած: Գորհիլայից բոլորը վախենում էին՝ բացի վագրից, պանտերայից և առյուծից: Գալան զարմացավ, թե ինչպես իր փոքրիկ Տարզանը սպանեց սարսափելի գորհիլային: Վերցնելով Տարզանին՝ նա գնաց խմբի մոտ և սկսեց վերքը լիզել: Տարզանը միայն առավոտյան ուշքի եկավ ու տեսավ, որ մերկ է: Ոչինչ չէր մնացել նրա շորերից, նա նաև կորցրել էր սուրը: Տասն օր Գալան լիզեց Տարզանի վերքերը և բուժեց դրանք: Մի առավոտ, երբ իրեն լավ էր զգում, Տարզանը գնաց պայքարի տեղը և տեսավ, որ գորհիլայից ոչինչ չէր մնացել՝ բացի ոսկորներից, իսկ արյունից ժանգոտած սուրը ընկած էր ոսկորների կողքին: Նա տարավ և սուրը լվաց առվի ջրով, սակայն ժանգը չէր մաքրվում: Սկսեց ավազով շփել, տեսավ, որ փայլեց: Կես ժամ տանջվելուց հետո տեսավ, որ սուրը ունեցավ առաջվա փայլը: Հիմա պետք էր հագնվել: Գնաց դեպի հոր բնակարանը ու հագավ նոր շորեր:

Տարզանը ամենից շատ վախենում էր առյուծից, որին իր լեզվով «սիմ» էր կոչում, և վագրից ու պանտերայից, մեկ էլ...

Կղզում կար մի մեծ լիճ, որտեղ լողում էր, բայց հեռու չէր գնում: Լճում վխտում էին սոսկալի կոկորդիլոսներ: Մի անգամ բացատում նրա վրա ֆշշալով հարձակվեց մի օձ: Տարզանը նայեց չորս կողմը.

ծառ չկար, որ բարձրանար: Վազեց դեպի լիճ: Դեռ հինգ մետրից իր հուժկու ցատկով նետվեց ջուրը, բայց այստեղ վտանգը փոքր չէր, կոկորդիլոսներից մեկը հարձակվեց վրան: Սկսվեց մահու և կյանքի պայքարը: Սրի մի քանի հարվածով կոկորդիլոսը սպանվեց: Տարզանը դուրս եկավ լճի մյուս ափը:

Այսպես անցնում էին տարիները: Տարզանը արդեն քսան տարեկան էր: Մի անգամ նա տեսավ, որ փղերը իրենց բարակ ձայնով ողբ են անում: Մոտեցավ ու տեսավ, որ փղի փոքր ձագերից մեկն ընկել է փոսի մեջ: Փղերը անօգնական պտտվում էին փոսի շուրջը, ինչը անօգուտ էր: Տարզանը վազեց դեպի հոր կացարանը ու վերցնելով պարանը՝ եկավ նետվեց փոսի մեջ, որը հինգ մետրից պակաս խորությամբ չուներ: Երեք տեղից պարանի ծայրերը ամուր կապելով՝ նետեց վերև: Դուրս եկավ ու ծայրերը ամուր կապեց փղերի կնճիթներին: Սկսեց վեր հրել: Կես ժամ հետո փղի ձագին արդեն դուրս էին հանել: Մոտենալով փղիկին՝ սկսեց շոյել նրան: Փղիկը սկսեց կնճիթը շարժել: Այսպես Տարզանը ձեռք բերեց մի բարեկամ, որի վրա նստած ման էր գալիս անտառում: Նրա հուժկու ձայնից փղերը գալիս էին օգնության:

Մի առավոտ Տարզանը նորից գնաց դեպի հոր բնակարանը: Տեսավ իրեն նման մի խումբ մարդկանց: Նա բարձրացավ ծառին: Չնայած ծառը հեռու էր, բայց Տարզանի աչքերը ամեն ինչ զանազանում էին: Խմբի մեջ կար մի էակ, որը մյուսներից զանազանվում էր երկար վարսերով, շատ սիրուն երեսով ու երկար փեշերով սպիտակ զգեստով: Ամբողջ օրը նա հետևեց այդ խմբին ու միայն իրիկվա դեմ գնաց կապիկների մոտ: Տարզանը խմբից հեռու՝ մի ծառի վրա, իր համար քողտիկ էր պատրաստել: Այսպես շատ առավոտներ նա գնում նայում էր, թե ինչպես սպիտակ զգեստ հագած էակը հեռանում էր մարդկանց խմբից ու գալիս Տարզանի ծառի տակ, առվում լվացվում ու ծաղիկներ հավաքում: Տարզանը ուզում էր փախցնել նրան, բայց մտածում էր, որ կվախեցնի, ու դրա համար չէր փախցնում: Մի առավոտ Տարզանը դեռ հեռվից գոռում-գոչյուն ու աղաղակ լսեց: Ծառից նայեց, որ էակը չկա: Նա զգաց, որ էակին փախցրին: Մի անգամ Տարզանը տեսել էր, որ Թիրգոզը նույնպես հեռվից նայում էր մարդկանց խմբին: Տարզանը գլխի ընկավ, որ Թիրգոզը փախցրել է էակին: Նա հոտոտեց օդը և զգաց, որ Թիրգո-

զը շատ հեռու չէ: Վազեց հետևից ու տեսավ, որ Թիրգոզը էակին շալակած տանում է: Տարզանի հուժկու ձայնը սթափեցրեց Թիրգոզին: Թիրգոզը ելավ ծառին, բայց էակին բաց չէր թողնում: Տարզանը նույնպես ելավ ծառը, երկուսը կանգնեցին դեմ դիմաց: Մի ակնթարթ անց Թիրգոզը, էակին մի կողմ հրելով, հարձակվեց Տարզանի վրա: Տարզանը կարող էր իր սրով վերջ տալ Թիրգոզին, բայց չէր ուզում սպանել: Թիրգոզը իր եղբայրն էր ու խմբում ամենատեղը Գերչակից հետո: Նա երկու անգամ ավելի ուժեղ էր Տարզանից, բայց Տարզանը ավելի ճարպիկ էր: Էակի ուշքը չէր գնացել, նա նայում էր, թե ինչ պայքար է գնում մարդու և կապիկի միջև: Մարդու հարվածը շատ ուժեղ էր, կապիկը տապալվեց, բայց արագ բարձրացավ ու նորից հարված կերավ: Այս անգամ մարդը բռնեց ու իր լեզվով հասկացրեց, որ հեռանա³⁴⁵

*
* *
*

-Պաշտպանվիր:

Բայց կանգնած կապիկը գալիս էր: Իջավ թաթերով, բայց Տարզանին մոտեցավ ոտքերով, բռնեց ձեռքից ու տարավ իր հետ: Ամբողջ խումբը ուրախությամբ աղաղակեց: Խումբը շատ նեղություն էր քաշում մսի կողմից, սնվում էր մրգերով և խոտ արածելով: Տարզանը առաջին օրվանից իր համար կրակ ստեղծեց, որի վրա խորովում էր միսը և ուտում: Տարզանը լուծում էր մսի խնդիրը: Օր չէր ըլլա, որ խումբը միս չունենար: Տարզանը միշտ շրջում էր ծովափով: Խարույկ պատրաստեց: Նավ երևալու դեպքում կրքնզցներ³⁴⁶, բայց օվկիանոսը դատարկ էր: Մի օր, իր քողտիկում պառկած, հանգստանում էր, երբ մի խղճալի ոռնոց լսեց: Ծառից ծառ թռչելով՝ նա մի լեռպարդ³⁴⁷ տեսավ, որի ոտքերը և մեջքի մի մասը հաստ գերանի տակ էին մնացել: Գազանը տանջվում էր, որ դուրս գա, բայց ապարդյուն: Տարզանը իջավ ծառից, գերանը շարտեց մի կողմ, բայց պատրաստվեց պաշտպանվելու: Լեռպարդը, գերանից ազատվելով, փորձեց քայլել, բայց հետևի ոտքերը չէին ենթարկվում: Տարզանը, լեռպարդին շրջանցելով, հետևից գրկեց նրան ու տարավ առում: Լեռպարդն այնպես ազահ էր խմում: Ծարավը հագեցնելուց հետո սկսեց կամաց-կամաց քայլել: Տարզանը, տեսնելով, որ գազանն իր կարիքն

այլևս չունի, բարձրացավ ծառը ու ծառից ծառ ցատկելով շարժվեց դեպի իր քողտիկը: Լեռպարողը, նայելով իր ազատարարին, ինքն էլ ավելացրեց ընթացքը: Տարզանը հասավ իր քողտիկին, մտավ, որ հանգստանա, բայց լսեց, որ գազանը ծառի տակ խեղճ-խեղճ մռնչում է: Նայեց ցած: Լեռպարողը տեսավ նրան ու սկսեց ծառի բունը ճանկոռտել: Տարզանը իր մոտ միշտ խորոված միս ուներ: Նա, մի մեծ կտոր վերցնելով, իջավ ներքև, մոտեցավ գազանին, դրեց առաջը: Կենդանին սկսեց ուտելը: Միևնույն ժամանակ նա նայում էր իրեն ազատողին: Ուտելուց հետո նա շատ դանդաղ մոտեցավ ու սկսեց լիզել Տարզանի ձեռքերը: Տարզանը շոյեց գլուխը, լեռպարողը պառկեց կռնակի վրա: Տարզանը սկսեց ավելի համարձակ շոյել: Այսպիսով, Տարզանը մի հավատարիմ բարեկամ ունեցավ, որը իր ազատարարից մի քայլ անգամ չէր հեռանում: Երբ Տարզանը գիշերները քնում էր, լեռպարողը քնում էր նրա ծառի տակ: Անցնում էին ամիսներ, բայց կղզուց ազատվելու ոչ մի հույս չկար: Այդ առիթը եկավ շատ անսպասելի ձևով: Մի առավոտ Տարզանը նստած էր մի տապալված ծառի բնին, լեռպարողը պառկած էր նրա ոտքերի տակ: Արևը շողում էր: Օվկիանոսի վրա՝ հեռու հորիզոնում, մի կետ երևաց: Կետը քանի գնում, մեծանում էր: Մի ժամից հայտնի դարձավ, որ նավակ է: Տարզանը գնաց ու կանաչ թավուտի³⁴⁸ մեջ թաքնվեց: *Նավակը* մոտեցավ ափին: Նավակից իջան երկու սևամորթներ: Նավակը ափ քաշելով՝ նրանք ավազի վրա գցեցին մի երիտասարդի, որի ձեռքերն ու ոտքերը կապված էին: Նրանք սկսեցին մացառ ու փայտ հավաքել: Պարզ էր, որ երիտասարդին պատրաստվում էի խորովել և ուտել: Նրանք շատ էին մոտեցել Տարզանի թաքնված տեղին: Տարզանը լեռպարողին շատ բան էր սովորեցրել: Նա լեռպարողին ցույց էր տալիս որսը, և նրա մի զարկով որսը բերում էր տիրոջը: Տարզանը ցույց տվեց ավազակներից մեկին: Լեռպարողը ավելի շուտ ցատկեց սևամորթի վրա: Երկրորդ ավազակը Տարզանի մի հարվածից շունչը փչեց: Լեռպարողը ուզում էր հոշոտել, համտես անել ավազակին, սակայն Տարզանը սաստեց նրան: Նա գլուխը կախ եկավ ու տիրոջ ոտքերին քավեց: Տարզանը մոտեցավ ափին ընկած երիտասարդին, որը ուշաթափված էր: Վերցրեց ավազակներից մեկի որսորդական դանակը, կտրեց երիտասարդի կապանքները

րը ու տարավ առուն: Սառը ջրով երեսը շփելով՝ մի քանի ապտակ տվեց: Երիտասարդը ուշքի եկավ, ապշած նայեց այս կիսամերկ մարդուն ու կողքին նստած լեռպարդին:

-Անգլերեն գիտե՞ս:

-Գ-իտեմ:

-Որտեղի՞ց եկաք:

-Յոթանասուն կիլոմետր հեռու մի մարդաբնակ կղզի կա, որտեղ մի քանի ցեղեր են ապրում: Այս ցեղերից մի քանիսը մարդակերներ են, ինչպես այս երկուսը: Ես անգգուշաբար ընկա սրանց ձեռքը: Եթե դուք չլինեիք, մինչև հիմա խորովված ու կերված կլինեի:

-Անունդ ի՞նչ է:

-Մապութո: Իմ ցեղը կոչվում է թապո, մեր ցեղում մարդակերներ չկան:

-Այս նավակով կարո՞ղ ենք գնալ ձեր կղզին:

-Ինչու չէ: Այնտեղից ենք եկել, կարող ենք հետ էլ գնալ: Եթե թիե-րը լավ աշխատեցնենք, տասը ժամից այնտեղ կլինենք:

-Մի քանի օր քնի՞ր, հանգստացի՞ր, կգնանք:

Այսպես մի վեց ամիս ապրեցին այս կղզում: Մի առավոտ, երբ արևը դեռ չէր ծագել, պատրաստվեցին երթալու: Նավակում կային ջրի ամաններ, որոնք լցրեցին: Մի քարայծ ամբողջությամբ խորովեցին: Տարզանը լեռպարդին ցույց տվեց նավակը: Լեռպարդը ցատկեց նավակի մեջ: Երկուսով նավակը հրեցին օվկիանոսի ջրերի մեջ, ու իրենք էլ նստեցին: Թիերը սկսեցին աշխատել: Առաջին մի ժամը Տարզանն էր թիավարում: Նրանք այնպես թիավարեցին, որ նավակը նետի պես սլացավ դեպի հեռավոր կղզին: Հինգ ժամ նավարկելուց հետո դադարեցին: Երեքով լրիվ կերան խորոված քարայծը: Մի ժամ ալ հանգստանալուց հետո նորից ճանապարհ ընկան: Ոչ մի խոչընդոտի չհանդիպեցին: Հասան կղզի: «Մինչև մեր ցեղին հասնելը մի օր պիտի քայլենք»: Առջևից լեռպարդն էր քայլում: Մինչև արևի մայր մտնելը քայլեցին: Որսացին մի քարայծ, խորովեցին ու կերան: «Հիմա պետք է քնենք, որ առավոտը նորից ճանապարհ գնանք»: Նրանք քնեցին, լեռպարդը հսկում էր: Մյուս օրը՝ մինչև ճաշ, հասան իրենց ցեղին: Մապութոն ներկայացրեց իր հորը, մորը, եղբայրներին, քույրերին, հարազատներին: Բոլորն էլ ուրախանում

էին, որ երիտասարդները ողջ-առողջ են եկել: Լեոպարդը Տարզանի ոտքերի տակից չէր հեռանում: Մապութոն մի բույն ցույց տվեց իր ազատարարին: «*Հիմա կկարգադրեմ, որ մաքրեն, լեոպարդին այն-տեղ կապրեցնենք*»: Մաքրելուց հետո Տարզանը ցույց տվեց բույնը: Լեոպարդը գնաց մտավ, շուտ եկավ, երկու թաթերի վրա գլուխը դրեց ու նայեց: «*Մապութո, կենդանին անոթի է*»: «*Մենք էլ անոթի ենք, ճաշը պատրասարվում է*»:

Ճաշից հետո բարձրացան հանգստանալու համար նախատեսված հատուկ տեղը, որը նման էր վերանդայի: Մապութոյի հայրը սկսեց հարցուփորձ անել: Մապութոն թարգմանում էր: Տարզանը պատմեց իր առևանգման մասին, որը կազմակերպել էր Ռագովսկին: Մապութոյի հայրը զարմացած նայեց Տարզանին: «*Ռագովսկի՞ն, որը գրոսասնա՞վ ունի: Նա այստեղ է գալիս, չարչիի սպրանք բերում, ուլունքներ, ասեղներ, կոճեր, կերպաս և զանազան սպրանքներ: Այստեղից տանում կաշիներ, մորթիներ և ուրիշ սպրանքներ, նույնիսկ՝ սարուկներ*»: «*Ե՞րբ է երևացել վերջին անգամ*»: «*Մրանից մի վեց ամիս առաջ: Նա եթե գալիս է, սպա ինչ հանդիպում է*»: «*Մեր կղզին թողնելուց հետո եկել է այստեղ*»: «*Այստեղից մինչև նավահանգիստ ինչքա՞ն տարածություն է*»: «*Մի հիսուն կմ*»: «*Գնանք*»: «*Գնանք ալ, այնտեղ նավ չի լինի, եթե նավ լինի էլ, սպա նավաստիները այս կողմ կգան: Այնպես որ հիմա հանգստացի՛ր, մինչև տեսնենք՝ ինչ կլինի*»:

Անցնում էին օրեր, ամիսներ: Մապութոն եկավ և հայտնեց, որ մի խումբ նավաստիներ են եկել: Գնացին: Եկողներից ոչ մեկը Ռագովսկու նավաստին չէր: Հարցուփորձ արեց, թե ուր են գնալու: Հայտնեցին, որ Գիբթուն են գնալու: Երկու-երեք ամսից գալու են, որ գնան Եվրոպա: Նորից անցան ամիսներ: Մի առավոտ նստած էին ապակեպատ պատշգամբում³⁴⁹, լեոպարդը նստած էր իրենց ոտքերի տակ: Բակ³⁵⁰ մտավ Ռագովսկին՝ իր երեք ծովայինների հետ: Ռագովսկին նկատեց Տարզանին ու հանեց ատրճաճակը: Տարզանը ցույց տվեց Ռագովսկուն: Լեոպարդը թռավ, բայց Ռագովսկին կրակեց և ծանր վիրավորեց նրան: Լեոպարդը, չնայած իր ծանր վերքին, կրծոտում էր Ռագովսկու կոկորդը: Մինչ այդ Տարզանը և Մապութոն կապկպեցին նավաստիներին: Տարզանը վագեց լեոպարդի

մոտ, որը կողքի ընկած ծանր շնչում էր: Վերցնելով նրան՝ տարավ վերանդա: Գազանը հանգավ Տարզանի ձեռքերի մեջ՝ մեծ վիշտ պատճառելով նրան: Տարզանը հարցաքննեց նավաստիներին ու եկավ այն եզրակացության, որ նավում վեց հոգի կա: Այստեղ առևտուրը վերջացնելուց հետո նավը վերադառնալու էր Եվրոպա: Որոշեցին միասին նավը գրավել: «Մապուրո՛ր, չե՛ր ցեղում կա՞ն մարդիկ, որոնք կարող են զենք գործածել»: «Կան, մի հինգ հոգի, երկուսն ալ մենք, կլինենք յոթը հոգի: Կզինվենք, այսպեղ կա չորս սարրճանակ, երեք կարաբին³⁵¹, այնպես որ յոթս էլ կարող ենք զինվել»:

Մապուրոն եկավ ու հայտնեց, որ տղաները պատրաստ են ու սպասում են հրամանի: «Վաղ առավոտը ճանապարհ կելնենք: Հորդ ասա՛, թող ավազակներին բանւարկի ու միայն հաց ու ջուր տա մինչև մեր գալը»:

Առավոտ կանուխ յոթ լավ զինված տղամարդ ճանապարհ ելան, մյուս օրը հասան նավահանգիստ, որը օվկիանոսից մի հիսուն մետր հեռու՝ գետի վրա էր: Զբոսանավը հանգիստ օրորվում էր: Նավի կամրջակին մի նավաստի էր կանգնած՝ կարաբինը ուսին: Մի ցատկով Տարզանը հայտնվեց նավաստու կողքին.«Չարժվես»։ Նավաստու լեզուն կապ ընկավ: «Ո՞վ կա վերևը» ասելով՝ բռնեց թևից ու տարավ վերև: Մինևույն ժամանակ եկան նաև մյուսները ու ստուգեցին նավը, որի վրա ոչ ոք չկար: «Որտե՞ղ են նավաստիները»: Մի կերպ պահակի լեզուն բացվեց.«Գնացի՛ն իրենց սարանքը ծախելու»: «Ե՞րբ են վերադառնալու»: «Երեք օր հետո պետք է այսպեղից հեռանանք»: «Ճանաչեցի՞ր ինչ»: «Ճանաչեցի»: «Հիմա ինչ լավ լսիր, եթե պոչ խաղացնես, նապաստրակի պես կխեղդես ու զեպր կզցես»: Տարզանը վերցրեց կարաբինը, հանեց փամփուշտները ու տվեց նավաստուն: «Քեզ փամփուշտ պետք չէ, գնա՛, տեղդ կանգնիր: Վերևից քեզ հսկելու են: Եկողին բաց կթողնես: Ռազովսկին սարկած է, իսկ հետի երեք նավաստիները՝ բանւարկված: Հույսդ դրանց վրա չդնես: Փախչելը մտքովդ չասցնի, տեղնուրեղը կզնդակահարվես»: Տարզանը Ռազովսկուց վերցրել էր նավախցի³⁵² բանալիները, բացեց սեյֆը, որտեղ հիսուն հազար ֆունտ ստերլինգ կար՝ մի ամբողջ կարողություն: Գարանակալելով մեկ-մեկ որսացին

նավաստիներին: Տարզանը հարցրեց. «Ո՞վ կարող է վերցնել նավի դեկը մինչև Անգլիա»: Հայտնի եղավ, որ Ռագովսկու հետ եղողներից մեկը նավապետ³⁵³ է և կարող է նավը հասցնել Անգլիա:

-Հիմա ինձ լավ լսեք, եթե խելոք մնաք, ես ձեզ անգլիական կառավարությանը չեմ հանձնի: Յուրաքանչյուրդ հինգհարյուրական ֆունտ ստերլինգ կստանաք ու կերթաք ձեր գործին: Այս զբոսանավի տերն ու տիրականը ես եմ: Ռագովսկին սատկեց: Ես Մապուրոյի հետ գնալու եմ այն երեքին բերելու, նորից ասում եմ, մնու՛մ եք այստեղ, նավից դուրս չեք գա: Ամենափոքր անհնազանդության դեպքում տեղնուտեղը կզնդակահարվեք: Այս տղաները կատակ չեն անի:

Երեք օր հետո ամբողջ խումբն արդեն հավաքվել էր նավի վրա: Հարրի էր այն նավաստու անունը, որը պիտի վերցներ նավի դեկը:

-Հարրի, եթե մեզ Անգլիա հասցնես առանց պոչ խաղացնելու, հազար ֆունտ ստերլինգ կստանաս, մյուսները՝ հինգ հարյուր: Համաձայն եք:

-Համաձայն եմք:

-Հիմա անցնենք գործի: Ձեզանից ո՞վ է խոհարարը:

-Ես եմ:

-Մթերքի գործն ինչպե՞ս է:

-Չի հերիքի: Կարևորը դրամն է: Այստեղ ամեն ինչ կա:

-Այս երիտասարդի հետ կերթաք, կվերցնեք, ինչ որ պետք է: Մապուրո, վերցրու՛ այս դրամը: Երկու հոգի էլ վերցրե՛ք, գնացե՛ք: Հարրի, վառելիքը կհերիքի՞:

-Երկու բարել կվերցնենք, այստեղ՝ նավահանգստում կա:

-Ձրի գործը ինչպե՞ս է:

-Գետից պիտի վերցնենք, եռացնում ենք ու խմելու ջուր դարձնում:

Այդ բոլոր գործողությունները երկու օր տևեցին: Երբ Տարզանը տեսնում էր, որ ճանապարհին առանձին-առանձին նավաստիներ էին աշխատում, նրանց առաջարկում էր.

-Տղաներ, դուք ինձ հետ Անգլիա կգա՞ք, այս ավազակների վրա հույս չեմ դնում, այնպես որ զգու՛յշ եղեք: Ամեն փոքր անկարգության դեպքում զնդակահարե՛ք: Հարրիին ես պիտի հսկեմ: Անգլիա հասնե-

լով՝ սրանց ցրելու են: Նոր անձնակազմ և նոր նավապետ են վերցնելու, որ միասին նորից գանք այստեղ: Համաձայն եք:

-Համաձայն ենք:

Մի առավոտ, գետի ջրերից դուրս գալով, նավը մտավ օվկիանոսի ջրերը: Մի ամիս անբարենպաստ եղանակ էր՝ անձրև, փոթորիկ, ուժեղ ալեկոծում: Հարրին հմուտ նավապետ էր, և նավի դեկը վարում էր անսխալ: Տարզանը մոտից չէր հեռանում: Մի առավոտ Ատլանտիկը սկսեց շողալ արևի ճառագայթների տակ: Ջրոսանավը շատ ամուր էր, այն կառուցված էր վերջին նորամուծություններով³⁵⁴ և արագ սլանում էր առաջ: Մի ամիս խաղաղ նավարկեցին, բայց եղանակը փոխվեց դեպի վատը: Ալեկոծությունը շատ ուժեղ էր: Ոչ մեկը չէր կարող կանգնել տախտակամածին: Հարրին ու Տարզանը անընդհատ դեկի խցիկում էին. հսկում էին, որ գիշերը նավը մի խոչընդոտի չհանդիպի: Արդեն երկու ցերեկ ու գիշեր չէին քնել: Առավոտ Տարզանը Հարրիին ուղարկեց քնելու: Հարրին ցույց տվեց կողմնացույցը ու ասաց. «Այս սլաքը տեղից չշարժվի»: Տարզանը արդեն հմտացել էր, այնպես որ սխալ չէր վարում: Շատ անգամ ցերեկները ինքն էր վարում, բայց այս անգամ քունը տանում էր: Նա կանչեց Մապութոյին, որ խոսեն, ու չքնի: Հինգ ժամ հետո Հարրին եկավ. «Պարտո՛ն, զնա՛, հանգիստ քնի՛ր: Այիքները դաժան են, բայց վրասնգավոր չեն»: Տարզանը հագիվ էր ոտքի կանգնում: Նրանք փոխնեփոխ էին վարում:

Մի առավոտ Հարրին հայտնեց. «Այսպես չի կարելի զնալ, շարժչները շար են նեղվում, պետք է հանգստանանք: Պորտուգալիան մուր է: Կոմունենք Լիսաբոնի նավահանգիստ: Մի հարյուր ֆունտ սրերլինգ կիրուզանեն: Հինգ օր կհանգստանանք: Եղանակն էլ կփոփոխվի: Համաշա՞յն ես»: Տարզանը նայեց Հարրիի աչքերին. այնտեղ բարություն կար: «Հա՛րրի, ես զարմանում եմ՝ ինչպես ընկար այդ ավազակ Ռազուվսկու խմբի մեջ»: «Դա աններելի սխալ էր, բայց ուրիշ ելք չկար: Ես պորտուգալացի եմ, Անգլիայում ամուսնացա մի անգլուհու հետ: Մի տարի ապրեցիևք միասին: Մի օր հայրնի դարձավ, որ սկսել է հանդիպել իր նախկին սիրելանի հետ: Ասում էին, չէի հավարում: Սկսեցի հետամուտ լինել: Այն ժամանակ լոցման էի աշխատում, պարտահում էր՝ երկրորդ հերթ էի գնում:

Լոցմաններին հերթափոխության ժամանակ արճանակ էին փախա: Մի անգամ, երբ երկրորդ հերթի էի, կարծես մեկն ասաց. «Գնա՛ րուն»: Գնացի, նայեցի՝ լույսը վառվում է: Կեսգիշերն անց էր, ու կասկածը մտավ փորս: Ապրում էինք երկրորդ հարկում: Բանալիով բացեցի դուռը, մեկը դռնից դուրս թռավ: Կհևս կհասմերկ կանգնած էր: Փահչողի հերեկից երեք գնդակ արչակեցի, ընկավ, մոտ գնացի, արդեն մեռած էր: Արճանակը զցեցի ու հեռացա: Մի ամիս անգործ թափառեցի: Դրամ չունեի, որ Պորպուգալիա վերադառնամ: Այդ ժամանակ հանդիպեցի Ռազովսկուն, որը նավասարհներ էր հավաքագրում: Դա երկու փարի առաջ էր: Անում էինք ամեն կեղտոտ գործ՝ երեխաներ փախցնում, դրամ շորթում: Գնում էինք Անգլիայի հեռու գաղութները և կողոպտում այնպեղի բնակիչներին: Թալանածը բերում էինք Անգլիա ու վաճառում բանկ գնով: Թմրադեղերը մեծ շահույթ էին բերում»: «Ձեզ ինչպե՞ս էր վճարում»: «Նա դրամ շար էր սիրում, այն դրամից, որ բերում էր, քսան հազարը իրեն էր պահում, մնացածը բաժանում մեզ: Մենք չեռք էինք քաշում խոշոր դրամից, նա մեզ վճարում էր խոստացածի չափով»:

Մինչ այդ նավն արդեն մտել էր Լիսաբոնի նավահանգիստը: «Հա՛րրի, ես ուրիշ բան եմ մտածել: Ձեր մեջ ուրիշ պորպուգալացիներ կա՞ն»: «Կան, ինչանից բացի՝ երեքը»: «Հիմա այսպես կանենք, կանչի՛ր այդ երեքին: Դուք երեքդ էլ պորպուգալացի՞ եք»: «Այո՞»: «Ուզո՞ւմ եք մնալ այստեղ»: «Այո՞»: «Հա՛րրի, դու ուզո՞ւմ ես մնալ»: «Բա նա՞վը»: «Այստեղ անգլիացի կապիտան կճարվի»:

Մինչ այդ եկան նավահանգստի աշխատողները: Իմանալով, որ նավը նավահանգստում մնալու է հինգ օր, տուգանեցին հարյուր ֆունտ ստերլինգ: «Հա՛րրի, կանչի՛ր մյուսներին... Փովայիներն, ինչպես րեսնում եք, գրկվում ենք Պորպուգալայում, չե՛ր այս ընկերները ուզում են մնալ այստեղ: Ձեզանից ուրիշ մեկը կա՞, որ ուզում է մնալ այստեղ: Ես միտքս փոխեցի, չեզանից յուրաքանչյուրին երկու հազար հինգ հարյուր ֆունտ ստերլինգ եմ տալու: Գնացե՛ք, մտածե՛ք, չե՛զ կես ժամ ժամանակ եմ տալու»:

«Մենք համաշայն ենք գնալու»: Երեքին տալով խոստացած դրամը՝ բաց թողեց: Վերցնելով իրենց հասանելիքը՝ գնացին: «Հա՛րրի, դու մնա՛»: Ու նրան տալով հինգ հազար ֆունտ ստերլինգ՝ ասաց. «Այս դրամը քամուն չրասս, մի խանութ բաց, նորից ընդհանր

կազմի՞ր»։ «Բայց, պատրո՞ն, ինչ այսքան չի հասնի»։ «Գնանք, Հա՛րրի, դու ազնիվ մարդ ես, քեզ դժբախտություն է պատահել, բայց հուսով եմ, լավ մարդ կդառնաս»։

Միասին գնացին անգլիացի ծովայինների ակումբ։ Նստեցին, ճաշեցին, հարցուփորձ արեցին, թե անգլիացի կապիտան և զբոսանավի շարժիչից հասկացող կա՞, որ նավը մինչև Անգլիա՝ Լոնդոն հասցնեն։ Մի կապիտան հայտնվեց։ «Ես նավի կապիտան եմ»։ «Իսկ շարժիչից հասկացող չունե՞ս»։ «Կես ժամից կգա իմ օգնականը, որը այսրեղ միակն է, ով հասկանում է շարժիչներից»։ Համաձայնեցնելով վարձատրության հարցը՝ գնացին դեպի նավ։ Հարրիի հետ բաժանվելու ժամանակ նրա աչքերը լցվեցին արցունքներով։ Տարզանը տվեց Լոնդոնի իր հասցեն։ Այսպես բաժանվեցին։

Մեխանիկը Տարզանի տղաներից երկու հոգի վերցրեց՝ Մապուրոյին և խոհարարին։ Օգնականն անցավ գործի։

Արդեն եղանակն էլ բարենպաստ էր։ Երկու օրից Լիսաբոնի նավահանգստից դուրս եկան դեպի Լոնդոն։ Մի քանի փոթորիկներ անցկացնելուց հետո հասան Անգլիա։ Նավը կանգնեցնելով Լոնդոնի նավահանգստում, վարձատրելով կապիտանին և մեխանիկին՝ ասաց. «Տղանե՛ր, դուք մնացե՛ք նավի վրա, ես առավուրյան հեղր կգամ»։ Նա, մի կառք նստելով, գնաց տուն։ Իրենց հոյակապ պարտեզում Ջեկը խաղում էր դայակի հետ։ Դայակը չէր ճանաչում Տարզանին և զարմացավ, երբ անձանոթը վերցրեց երեխային ու սեղմեց կրծքին։ Եկավ մեծ հայրը։ Գրկախառնվեցին։ Գրկախառնվելուց հետո մեծ հայրը հարցրեց. «Ջեյնիկն ու՞ր է»։ Տարզանը շշմած նայեց մեծ հորը։ «Ջեյնիկն այսրեղ չէ՞, վա՛յ ինչ»։ Եկավ մեծ մայրը, ընկավ Տարզանի գիրկը. «Յավրու՛ս, որրե՞ն էիր»։ «Ջեյնիկն որրե՞ն է»։ Մեծ հայրը բացատրեց. «Տարզան, քո գնալուց հեղրո Ջեյնիկն, Ջեկիիկն փրկանքով ազատելու համար վերցնելով րասը հազար ֆունդ սրերլիկնգ, գնաց ու դեռ չի վերադարձել»։ Տարզանը կռահեց, որ մեկը մյուսի մասին տեղեկություն չունենալու պատճառով Ջեյնին էլ, ինքն էլ ընկել էին ավազակների ձեռքը։ «Ջեկիիկն ո՞վ քերեց»։ «Մի նավաստի, որը պահանջեց րասը հազար ֆունդ սրերլիկնգ։ Գումարը սրանալով՝ նա Ջեկիիկն հանձնեց մեզ»։

Նրանց մոտեցավ մի ոչ այնքան երիտասարդ ջենտլմեն։ «Մի րո-

պեով չեզ կարելի՞ է»: «Ի՞նչ է պարսեել»: Մի երկու քայլ հեռանալով՝ մարդն ասաց. «Ուզու՞մ ես կնոջդ մասին բան իմանալ... Կես ժամ առաջ նավահանգիստը մտալ այն զբոսանավը, որը կնոջդ տարավ Նիգեթիա: Չբոսանավի տերն ու տիրակալնը Պավլովսկին է: Հիմա անապարհի՛ր, գնա՛ քո նավ: Ես գլխի ընկա, որ Ռագովսկին չկա, և նավի տերն ու տիրակալնը դու ես: Ես ամեն ինչ գիտեմ, դու Տարգանն ես: Հիմա անապարհի՛ր»: Տարգանը, մի կառք նստելով, հասավ նավահանգիստ ու տեսավ, որ, իրոք, իր նավից հինգ հարյուր մետրի վրա մի զբոսանավ է կանգնած:

Ինչպես ասել էր ջենտլմենը, մի հիսունին մոտ մարդ մոտեցավ Տարգանի նավին և կողքերը չնայելով՝ բարձրացավ տախտակամած: Երկու սևամորթ նավաստիներ բարձրացան ու նրանից գենքը խլելով՝ նրան տարան նավասենյակներից մեկը: Այդ տղաներից մեկը Մապութոն էր: «Նարե՛ք, դու Պավլովսկի՞ն ես»: «Այո՞»: «Ռագովսկու՞ն ես ուզում»: «Հա՛»: «Հիմա կգա»: Դուռը բացվեց, ու ներս մտավ Տարգանը: Պավլովսկին վեր թռավ տեղից: «Դու՞»: «Այո՛, ես եմ, չէի՞ր սպասում: Գիտեմ, կյանքդ քեզ համար թանկ է: Ուզու՞մ ես այստեղից ողջ դուրս գալ: Ասա՛, որտե՞ղ է կինս»: «Դու՛ ասա՛՝ որտեղ է Ռագովսկին»: «Ռագովսկին՝ ի վերին Երուսաղեմ»: «Ես քեզ ոչինչ չեմ ասի»: «Կասես, երբ մի քանի օր սոված մնաս: Ուրքերն ու ձեռքերը կապե՛ք ու զգե՛ք այն անկյունը, որ փախչելու կամ անչնասպան ըլլալու փորձ չսևի: Գլխով եք պարսախասն փալու: Ավազակ Պավլովսկի, հիմա կգնամ ու նավահանգստի ուտրիկանությունը կհայրենեմ, թե չեր զբոսանավը ինչ զբոսանավ է, ինչով է զբաղվում, և ինչ ասրանք կա վրան: Չեր ավազակախումբը կչեքրակալեն, նավը և ասրանքը կհանձնեն նավահանգստի վարչությանը: Մի քանի օրից կասես, թե որտեղ է կինս: Քեզ ալ կհանձնեն: Տասնհինգ տարուց պակաս չես սրանս, պա՞րզ է»: Պավլովսկուն արդեն կապկպել էին: «Սպասի՛ր, եթե ասես, թե որտեղ է կինդ, ինչ բաց կթողնե՞ս»: «Ինչքա՞ն դրամ կա նավում»: «Մի հարյուր հազար ֆունտ ստերլինգ»: «Հիմա մի գրություն կգրես կապիտանին, որ հիսուն հազարը քերի այստեղ, այն քանի դիմաց, որ ես տուժել եմ և այն ծախսի համար, որ պիտի փնտրեմ կնոջս»: «Բակ դրանից հետո ի՞նչ պիտի անես»: «Երկուսիդ էլ բաց պիտի թողնեմ: Մի ժամվա ընթացքում պիտի հեռանաք Անգլիայից: Հակառակ դեպքում կհայր-

նեմ ուսրիկանությանը... Քանդեցեք և թուղթ ու գրիչ տվե՛ք»։ Գրելուց հետո Տարզանը կարդաց՝ համոզվելու համար, որ գրված է այն, ինչ ինքն է պահանջել։ «Ինչ տուր սեյֆի բանալիները»։ «Վերցրու»։ ««Մապուրո՛ւ, վերցրու՛, գնա՛ նավ, նամակը և սեյֆի բանալիները հանձնի՛ր կապիտանին»։ Մի ժամից Մապուրոն եկավ կապիտանի հետ։ «Բոլորդ դուրս գնացե՛ք բացի Պավլովսկուց», -ասաց Տարզանը։ «Հիմա ասա՛, որտե՞ղ է կիևս»։ «Կիևո՞ւ ասպահով տեղում է, Նիգերիայի ցեղերից մեկում՝ մի հիսանալի աղջկա հովանավորություն տակ։ Ժոզեֆինան ցեղի առաջնորդի աղջիկն է։ Ցեղը կոչվում է Թապո։ Ժամանակ մի՛ կորցնի։ Այս զբոսանավը հիսանալի նավ է։ Գնա՛ Նիգերիա։ Նիգերիայի մայրաքաղաք հասնելուց հետո այնտեղ քարավաններ³⁵⁵ կան, որոնք զանազան ցեղերի ուղղությամբ են գնում։ Կհարցնեք, թե ո՞ր քարավանն է գնում դեպի Թապո ցեղը, և այդ քարավանի հետ կգնաք հյուսիս։ Մի ամսից կհասնեք։ Ուրիշ ասելիք չունեն»։ «Հիմա ազատ կարձակեմ, կգնաք ձեր նավ ու մի ժամից, ինչպես ասացի, կհեռանաք Անգլիայից։ Մապուրո՛ւ, կապիտանին և Պավլովսկուն բա՛ց թող»։ Գրանց հեռանալուց հետո Տարզանը հայտնեց. «Մի շաբաթից մեկնելու ենք Նիգերիա։ Կնոջս վերցնենք, հետո ես ձեզ էլ կտանեմ ձեր կղզին»։ Այս տալով հազարհազար ֆունտ ստերլինգ՝ ասաց. «Մեկը կմնա նավի վրա, իսկ մյուսները կգնան առևտուր անելու։ Փոխանիդու գնացե՛ք։ Նավը դադարի չթողնեք։ Ինչքան կարող եք, գնե՛ք այն ապրանքը, ինչ ձեր ցեղում պիտանի է և անհրաժեշտ։ Էլի դրամ կտամ, այնպես որ դրամը չխնայեք»։

Մի քանի օր հանգստանալուց հետո Տարզանը սկսեց նավաստիներ հավաքագրել։ Պարզվեց, որ կապիտանը Ջեյմիի ազգականն էր։ Կապիտանն ինքը սկսեց նավաստիներ հավաքագրել։ Ամբողջ կազմը տասը հոգի էր։ Խոհարարը և մեխանիկը զբաղվեցին մթերքով և վառելիքով։ Այս օրերին Տարզանը նավ եկավ։ Տղաներն արդեն վերջին կուպեկը ծախսել էին։ Նա նորից վերջին պակասները լրացնելու համար հազար-հազար ֆունտ ստերլինգ տվեց ու զգուշացրեց, որ պատրաստ լինեն երեք օրից ճանապարհ ելնելու։

Մի առավոտ ճանապարհ ելան դեպի Նիգերիա։ Քսան օր էր անցել, երբ մի առավոտ՝ դեռ լույսը չբացված, կարծես ծովի խորքից դուրս եկավ մի նավ ու հարձակում գործեց զբոսանավի վրա։ Պարզ-

վեց, որ հարձակում գործողը Պավլովսկին է: Նրա նավը սկսեց մոտենալ Տարզանի զբոսանավին: Կրակոցները չէին դադարում: Երկու կողմերն էլ կրակում էին: Մապութոն մի արկղ բերեց: «Այս ի՞նչ է»: «Նռնակներ են, երեք արկղ վերցրել ենք: Ձուևգլիներում մեզ պետք կգան»: «Դադարեցրե՛ք կրակը»: Կրակը դադարեցրին: Մինչև այդ արդեն լուսացավ: «Մապութո՛, մի արկղ էլ բե՛ր, բոլորի մոտ հինգ-հինգ հասր դի՛ր»: Պավլովսկին բարձր ձայնով գոռաց. «Հանձնվե՛ք, նստե՛ք նավակներն ու հեռացե՛ք, թե չէ բոլորիդ կկոտորենք»: «Տղանե՛ր, պատրաստ եք, կրակ»: Տասնհինգ նռնակներ թռան Պավլովսկու նավի ուղղությամբ: «Կրակ, կրակ»: Արդեն թռչում էր յոթանասունհինգերորդ նռնակը: Պավլովսկու նավը լրիվ բոցավառվեց, և ավազակախումբը անձնակազմով գնաց օվկիանոսի հատակը: Անցան առաջ: Շատ փոթորիկներ, վտանգներ անցկացրին ու մի օր հասան Նիգերիայի մայրաքաղաք: Տարզանի առաջին գործը եղավ քարավան գտնել թապո ցեղը գնալու համար: Քարավաններ կային, բայց այդ կողմը չէին գնում, այլ ուրիշ ուղղություններով էին գնում: Մի ամիս էր անցել, երբ մի շատ մեծ քարավան եկավ, որը գնում էր Թապո ցեղը: Տարզանը ներկայացավ քարավանի կառապանների պետին և հայտնեց, որ ուզում է իրենց հետ գնալ Թապո ցեղը: «Բանի՞ հոգի եք»: «Մի չորս հոգի»: «Ի՞նչ գործով եք գնում»: Տարզանը բացատրեց: «Սպասի՛ր, սպասի՛ր: Մի սպիրակամորթ Ջեյնի, մի սևամորթ Շոգեֆիևա: Ես եմ տարել: Դա շատ վաղուց էր: Մի խոսքով, Ջեյնին քո կիևն է»: «Հիմա այնպեղ կլինի՞»: «Բա ու՞ր պիրի գնա: Երեք օրից ձանապարհ կելնենք: Մթերք գնե՛ք ու լավ զինվե՛ք կարսափններով ու արրճանակներով»: Ջենքից բացի տղաները զինվեցին նաև հինգական նռնակներով:

Տարզանը, Մապութոն և երկու տղաները ճանապարհ ընկան: Արդեն մի տասը օր գնացել էին, երբ տեղաբնիկները հարձակվեցին նրանց վրա: Սկսվեց հրաձգությունը: Այնպես էին գոռում, որ մարդ սարսափում էր: Տարզանը իր հուժկու ձայնով գոռաց և չորս նռնակ գցեց: Ավազակները կարծես գետնի տակ կորան: Նույնիսկ քարավանի մարդիկ Տարզանի ձայնից և պայթյուններից կուչ եկան: Այսպիսի դեպքեր եղան մի քանի անգամ: Մի առավոտ հասան թապո ցեղը: Տարզանը ներկայացավ ցեղապետին: «Ես Տարզանն եմ, կիևս

պեղք է այսրեղ ըլլա»: Մնապոթոն քարգմանեց: Մինչ այդ հայտնը-վեց Ժոզեֆինան: «Այս ի՛նչ ուրախություն, ի՛նչ դժբախտություն: Ձեյնին այսրեղ չէ, վեց ամիս առաջ եղբայրս մեր ծանոթի միջոցով մայրաքաղաք Կարսով ու Անգլիա մեկնող մի նավ նսրեցրեց: Հիմա արդեն Լոնդոն հասած կլինի, իսկ դու այսրեղ ես»: «Եղբայրդ ու՞ր է»: «Գնացել է որսի, շուրով կգա: Նարե՞ք, հանգարացե՞ք, մի բան կմտածենք: Եղբայրս չեզ ալ հեղ կտանի»: Ինչպես երևում էր, ճաշը պատրաստ էր, կերցրին, խմեցրին իրենց պատրաստած գարեջուրը: Մինչ այդ եկավ Բատիստան ու զարմացավ, երբ տեսավ անծանոթներին: «Ժոզեֆինա, ովքե՞ր են»: Մինչ Ժոզեֆինան կպատասխաներ, Տարզանն ասաց.«Ես Ձեյնիի ամուսինն եմ»: «Յավալի է, բայց փաստ: Ես ինքս նրան նավ նսրեցրի, այնպես որ հիմա արդեն Անգլիայում է, չնայած նավը բեռնափար էր: Մի քանի օր կհանգարանաք, սրբկալածառների քարավան կգա, որի հեղ կզնաք Լագոս»: «Մեր զբոսանավը Լագոսում է կանգնած: Եկած ճանապարհով հեղ գնանք: Ծար վրանգավոր է, ամբողջ ճանապարհին վիպրում են ավազակները»: «Նույնիսկ սրբկալածառների քարավանները հաճախ այդպես չեն գնում»:

Անցել էր մի ամիս, բայց ոչ մի քարավան չէր եկել: Ամեն առավոտ Բատիստան գնում էր քարավանների հանգստատեղը, որը գյուղից մի քանի կիլոմետր էր հեռու: Մի առավոտ Բատիստան եկավ ու ասաց.«Քարավանը եկել է, մի քանի օր հանգարանալու է, գնանք քարավանարհրոջ հեղ պայմանավորվենք, որ չեզ էլ վերցնի: Մի հարյուր ֆունտ սրերլինգ կտաք, կհամաշայնի»:

Բատիստան պատրաստվում էր Տարզանի հետ գնալ, բայց Տարզանը առարկեց.«Կարիք չկա»:

Բատիստան հասկացրեց.«Ժոզեֆինան պիտի ամուսնանա, բան-ման պեղք է գնեմ և ուրիշ քարավանով հեղ կգամ»:

Որոշված օրը ճանապարհ դուրս եկան ու մի ամսից հասան մայրաքաղաք: Կապիտանը շատ էր անհանգստացել, թե մի բան պատահած չլինի⁶: Տարզանը հատուկ նվերներ առավ Ժոզեֆինայի համար՝ վճարելով մոտ հազար ֆունտ ստերլինգ: Բատիստայի բախտը բանեց, մի քարավան պատահեց, որը մեկնելու էր դեպի Թապո ցեղը: Տարզանը մի ֆուրգոն գնեց, ողջ ապրանքը լցրեցին ֆուրգոնի մեջ ու

շատ ջերմ բաժանվեցին միմյանցից: Բատիստան նստեց ֆուրգոնի մեջ, սանձերը վերցրեց ու քշեց: Մի քանի օր անց Տարգանը ճանապարհ ելավ դեպի տղաների կղզին՝ կուրսը վերցնելով դեպի հարավ, որտեղ գտնվում էր այն: Մի ամսից նրանք կանգ առան գետի վրա կառուցված տախտակե նավահանգստում: Հազար-հազար ֆունտ ստերլինգ տվեց ու ճամփու դրեց: Նավը վառելիքով ու մթերքով ապահովելուց հետո ճամփա ելավ: Մի քանի փոթորիկ անցկացնելուց հետո մտան Պորտուգալիայի ջրերը: Պարզվեց, որ շարժիչը վերանորոգման կարիք ունի: Ստիպված երկրորդ անգամ Լիսաբոնի նավահանգիստ մտան: Եկան նավահանգստի աշխատողները: «*Պա՛հ, նորի՞ց դուք: Այս անգամ էլ եք եկել վերանորոգման: Լավ, այս անգամ չեմք փուզանի*»: Բայց Տարգանը, նրանց տալով հարյուրական ֆունտ ստերլինգ, ճանապարհեց: Վերանորոգումը տևեց մեկ ամիս:

*

* * *

Հիմա գանք Ջեյնիին³⁵⁶ և Ժոզեֆինային: Իրար հետ վատ չէին ապրում, ուտելիք, խմելիք կար: Ջեյնին ամեն ջանք թափում էր որդու մասին տեղեկություն իմանալու համար, սակայն ոչ մի նավաստի ոչ մի բան չէր ասում.«*Չգիտեմ*»: Ռագովսկին ոչ մի տեղ չէր երևում: Անցան օրեր, ամիսներ:

Մի առավոտ խարիսխ են գցում մի փոքր նավահանգստում: Դրանից երկու օր առաջ Ջեյնիի մոտից հեռացրին Ժոզեֆինային: Ջեյնիին չէին թողնում նավասենյակից դուրս գալ: Մի նավաստի հսկում էր նրան, տանում էր ճաշարան ու բերում բանտարկում: Նավահանգստում կանգնելուց երեք օր հետո Ջեյնիին իջեցրին ու տարան մի բացատ, որտեղ կանգնած էին ուղտերով և ձիակառքերով մի քարավան ու մի խումբ զինված մարդիկ: Մի ձիակառք փակ էր վրանի ձևով: Ջեյնիին մոտեցրին այդ ձիակառքին, մուտքի մոտ փոքր սանդուղք դրեցին ու ստիպեցին բարձրանալ: Ջեյնին, բացելով վարագույրը, մտավ կիսախավար կառքի մեջ: Այստեղ նա նկատեց Ժոզեֆինային, որի գրկում մի երեխա կար: Ժոզեֆինան մատը շուրթերին դրեց: Տույց տվեց, որ կողքը նստի: Ջեյնին տեսավ, որ Ժոզեֆինայի ձեռքի փոքր երեխան սևամորթ է: Կառքը բավականին ընդարձակ էր, և այնպես որ կառքում մի կախովի օրորոց³⁵⁷ կար: Ժոզեֆի-

նան տարավ ու փոքրիկ երեխային դրեց օրորոցի մեջ ու եկավ՝ նստեց Ջեյնիի կողքին: Նա նորից մատը դրեց շուրթերին: Դրսում խառնաշփոթ էր, բռռում էին ու կանչում: Կառքը շարժվեց դեպի Ժոզեֆինայի ցեղը, որը կոչվում էր Թապո:

-Ամեն ինչ լավ է, ինչպես երևում է, որդիդ Լոնդոնում է, իր հոր կողմից մեծ մոր մոտ: Ամուսինդ առևանգված է Ռազովսկու կողմից, ուր են տարած՝ չգիտեն: Այս կառքը հատուկ ինձ համար հայրս է ուղարկել: Կառապանը հորս շատ մոտիկ մարդ է, այնպես որ մեզ ոչ մի վտանգ չի սպառնում: Երեխայիդ փախցնելուց հետո բերեցին նավ ու հանձնեցին Պավլովսկուն: Սա, երեխային նավաստիներից մեկին հանձնելով, հրամայեց տանել նավասենյակ՝ գլխով պատասխան տալու հրամանով: Հետո Ռազովսկին ամուսնուդ նամակ գրեց, իսկ Պավլովսկուն հրաման տվեց որոշակի դրամ բերելուց հետո երեխային հետ վերադարձնել: Այդ ժամանակ ես նավում չեմ եղել: Գնացել էի քաղաք: Եթե նավում ըլլայի, երեխայիդ ինձ կհանձնեին: Մինչև քո նավ գալն արդեն այդ նավաստին երեխայիդ փախցնում, տանում հանձնում է ձերոնց ու վերցնում տասը հազար ֆունտ ստերլինգ: Քիչ բանտարկվելուց հետո նա փախչում է ու էլ նավ չի վերադառնում: Պավլովսկին գնում է երեխային վերցնելու, բայց դատարկ է տեսնում նավասենյակը: Կանչում է նավաստիներին ու հարցնում երեխայի մասին, բայց ոչ մեկը ոչ մի բան չգիտեր: Մինչ այդ նավն արդեն շարժվում է, իսկ Պավլովսկուն ուրիշ անելիք չի մնում, ու նա ինձ ուղարկեց քեզ մոտ:

-Այդ քեզ ո՞վ պատմեց:

-Այն նավաստին, որ օգնել էր նրանց փախցնելու երեխայիդ: Նրան խոստացել էին Լոնդոն վերադառնալուց հետո տալ երկու հազար ֆունտ ստերլինգ: Ես հարցրի.«*Չի՞ խաբի*»: Նա ասաց.«*Շարք մոտը ընկերներ ենք, այնպես որ չի խաբի*»:

-Իսկ որ երեխաս նավի վրա լինեք, ինձ չե՞ր բաց թողնի:

-Ո՛չ: Երկու ավազակները որոշել էին, որ մեր ցեղում ապրես:

-Ինչու՞ ինձ սկզբից չասացիր այդ մասին:

-Երկու օր առաջ ինձ որ վերցրին քո մոտից, նույնպես բանտարկեցին, ու իմ պահակը այդ նավաստին էր:

-Իսկ այդ երեխան ու՞մն է:

-Այստեղ երեխա՞ չկա. հարյուր ֆունտ ստերլինգով տասը երեխա կառնես: Պավլովսկին չգիտեր, որ ես ամեն ինչ գիտեմ: Հանձնելով երեխային ինձ՝ նա ասաց.«*Սա քո տիրուհու երեխան է*»:

-Քանի՞ օրից կհասնենք ձեր ցեղին:

-Մի ամսից ավել կտևի, քարավանը շատ դանդաղ է առաջ գնում:

Ամեն չորս ժամը մեկ հանգիստ էին տալիս, կառապանը, գենքը ձեռքին, խիստ հսկում էր երկու կանանց: Պատահում էր, որ կանգնում էին մեծ գետերի ափին: Այս դեպքերում կանայք վերցնում էին երեխային ու կառապանի հսկողության տակ գնում մի գողտրիկ տեղ էին գտնում ու լողանում:

Օրերն անցնում էին: Փոքրիկը հագիլ երկու տարեկան լինել, նա այնպես էր կապվել Ջեյնին, որ նրան մամա էր ասում: Ջեյնին մխիթարվում էր նրանով, որ իր երեխան ապահով վայրում է: Մի հանգրստի ժամանակ կառապանը հայտնեց.«*Տասն օրում գյուղ ենք հասնելու, այնպես որ մի քիչ էլ համբերեք*»: Ջեյնին հարցրեց.«*Գյուղից մինչև Նիգերիայի մայրաքաղաքը որքա՞ն է*»: «*Շատ հեռու է: Մուրավորապես հինգ հարյուր կմ: Ընդհանրապես ճանապարհ չկա*»: «*Եթե սարկավաճառների քարավան պատահի, որը սարրուկներ է տեղափոխում դեպի մայրաքաղաք, ինչ համապատասխան դրամի դիմաց պատգարակով կրանե՞ն*»: «*Հիմա դրա մասին խոսելը վատ է*»:

Այդպես մի ամիս ճամփորդությունից հետո հասան գյուղ: Ժոզեֆինայի ծնողների հանդիպումը շատ ջերմ էր, Ջեյնին էլ գրկաբաց ընդունեցին: Կառապանը գնալուց առաջ հայտնեց, որ մի տասն օրից կգա ու Ժոզեֆինայի եղբոր՝ Բատիստայի հետ կմտածեն Ջեյնիի մասին: Ջեյնին հայտնեց կառապանին, որ իր մոտ հազար ֆունտ ստերլինգ կա, այնպես որ դրամի կողմից ապահովված են:

Փոքրիկ Լուլումբան, այդպես էր Ջեյնին անվանել երեխային, խաղում էր Բատիստայի երեխաների հետ: Բատիստան հագիլ երեսուն տարեկան լինել, առողջ տղամարդ էր, շատ հմուտ որսորդ:

Մի ամիս էր անցել, բայց կառապանը չկար: Մի առավոտ նա հայտնվեց ու հայտնեց.«*Սարրուկներ տեղափոխող մի քարավան մի շաբաթից այստեղ է լինելու: Պետք է օգտվել առիթից ու քարավանատիրոջը տալով հարյուր ֆունտ ստերլինգ՝ համոզել, որ համա-*

չայնի՝ իր հետք ճամփորդենք: Նա նույնիսկ երկու ստրուկ կլրա, որ փոխնեփոխ փանեն ցատգարակը: Բարի՛սրա, դու համաշա՞յն ես, որ տիկնոջը հասցնենք մայրաքաղաք»: «Քույրս խոստացել է, որ ամեն ինչով օգնենք տիրուհուն, այնպես որ համաշայն եմ»:

Սկսեցին պատգարակ պատրաստել: Արեցին այնպես, որ թեթև լինի և հարմար, ինչպես որ ասել էր կառապանը: Քարավանը եկավ ու գյուղից մի քանի կմ հեռու հանգիստ տվեց ստրուկներին: Բատիստան և կառապանը ներկայացան: Քարավանատերը պորտուգալացի էր, համաձայնեց հարյուր ֆունտ ստերլինգով կնոջը սնունդով ապահովել ու տալ երկու օգնական ստրուկ: Նա նաև ասաց, որ երկու օրից լինեն այդ վայրում ու բերեն դրամը, որով մթերք և ուրիշ պետքական բաներ էին վերցնելու: Բատիստայի կինը համաձայնեց երեխային վերցնել: Տխուր էր Ժոզեֆինայի բաժանումը հորից ու մորից, հարսից և ընդհանրապես երեխաներից: Երկու օրից քարավանը ճանապարհ ընկավ դեպի մայրաքաղաք: Ճանապարհը ծանր էր: Կացիներով ճանապարհ էին բացում, գիշերները հանգստանում էին, ցերեկները՝ գնում: Մի քանի անգամ տեղաբնիկները հարձակում գործեցին քարավանի վրա, բայց կոտորվեցին ու հեռացան:

Պորտուգալացի հսկիչները շատ լավ էին զինված: Տասներեք օրից հասան մայրաքաղաքի արվարձաններին: Մնում էր հինգ կիլոմետր: Կառապանին տալով երեք հարյուր ֆունտ ստերլինգ՝ ճանապարհ դրեցին: Կանայք, Բատիստայի հետ քայլելով, առաջացան դեպի նավահանգիստ, որտեղ կանգնած էին անգլիական մի քանի նավեր: Դրանք մի քանի օրից բաց օվկիանոս³⁵⁸ էին դուրս գալու և ուղևորվելու աշխարհի զանազան կողմերը: Կանայք գտան այն նավը, որը ուղևորվելու էր Անգլիա և հարյուր ֆունտ ստերլինգ արժողությամբ տոմս գնեցին: Չորս հարյուր ֆունտ ստերլինգ Ջեյնին նվիրեց Բատիստային, որ բոլոր տանեցիների համար նվերներ առնի: Բաժանվելով Բատիստայից և Ժոզեֆինայից՝ նա նավ բարձրացավ, որը երկու ժամից դուրս էր գալու նավահանգստից և ուղևորվելու էր դեպի Անգլիա: Այդ նավը զբոսանավ չէր, ոչ էլ մարդատար նավ, այլ հասարակ առևտրանավ էր, այնպես որ կապիտանը հայտնեց, որ մի քանի ամսում հազիվ տեղ հասնեն:

Նավը կուրս բռնեց դեպի Անգլիա: Նավը բեռնատար էր և կանգ-

նում էր Աֆրիկայի քաղաքներում: Եղան ուժեղ փոթորիկներ: Ջեյնին տառապում էր ծովային հիվանդությամբ: Բարեբախտաբար, նավում երեք աղջիկներ կային, որոնք աշխատում էին ճաշարանում որպես մատուցողուհիներ: Նրանք ամեն ինչով օգնում էին Ջեյնիին:

Մի առավոտ, երբ Ատլանտիկան ծփում էր ալիքներով, իսկ արևը շողում էր օվկիանոսի վրա, Ջեյնին, որն իրեն ավելի լավ էր զգում, եկավ տախտակամած: Աղջիկների ուրախությանը չափ ու սահման չկար, որ Ջեյնին իրեն լավ է զգում:

Նավը շարունակում էր իր ճանապարհը Պորտուգալիայի ջրերում: Մի առավոտ, երբ Ջեյնին նորից նստած էր տախտակամածի բազկաթոռին, մի զբոսանավ տեսավ, հաջորդ առավոտ՝ էլի մեկը: Առաջինը Պավլովսկին էր, երկրորդը՝ Տարզանը: Ջեյնիի մտքով անգամ չէր կարող անցնել, որ դա իր ամուսնու զբոսանավն էր: Նա պարզապես նստում և հիանում էր, որ նավերը արագ հեռանում էին դեպի հարավ:

Լիսաբոնում նավը տասն օր մնաց: Ջեյնին մի քիչ դրամ ուներ, ամբողջ քաղաքում ման եկավ ու աղջիկներին հիանալի նվերներ առավ, Ջեյնիին ալ՝ մի խաղալիք: Տասնմեկերորդ օրը դուրս եկան դեպի Լոնդոն: Տասնհինգ օր հետո հազիվ հասան տեղ: Ջեյնին մի կառք նստեց և ուղիղ տուն գնաց: Ի՞նչ մեծ եղավ նրա հիասթափությունը, երբ իմացավ, որ ամուսինը գնացել է իր հետևից Նիգերիա: Նա մխիթարվում էր Ջեյնիով, որ կարոտից խեղդում էր մորը և անընդհատ հարցնում.«*Մամա՛, որտե՞ղ է պապան, ու՞ր է գնացել*»: «*Չազուկս, շուրով կգա*»: Հիմա նա գլխի ընկավ, որ զբոսանավերից մեկնումեկը իր ամուսնունն էր: Ջեյնին ուրիշ անելիք չունե՛ր՝ բացի սպասելուց: Օրերն անցնում էին, բայց ամուսինը չկար: Նա շատ լավ գիտեր, թե ինչ վտանգավոր երկիր էր Նիգերիան: Նրա քունը գիշերները չէր տանում, սուկալի երազներ էր տեսնում, վեր էր ցատկում, փաթաթվում Ջեյնիին, լաց էր լինում.«*Մի՛, ի՞նչ պապահեց*»:

Էլի շատ օրեր ու ամիսներ անցան, ամուսնուց ոչ մի տեղեկություն չկար:

Տարզանը հեռագիր ուղարկեց տուն, որտեղ հայտնում էր, որ գտնվում է Լիսաբոնում և շուտով հետ է դառնալու տուն: Ջեյնին ստացավ հեռագիրը և շատ հուզվեց: Նա Տարզանի մեծ հորն ու մորը հայտնեց, որ Լիսաբոնից ուղարկված հեռագիր է ստացել նրանից, և

շուտով Տարզանը տանը կլինի: Մեծ մայրն ու հայրը տանջվում էին, բայց միշտ հարսին սիրտ էին տալիս:

Մի գեղեցիկ օր զբոսանալը խարիսխ գցեց Լոնդոնի նավահանգստում: Տարզանը նավի վրա մի քանի կարգադրություններ անելուց հետո տուն գնաց:

Ջեկին, որ խաղում էր պարտեզում, տեսավ հորը և նետվեց գիրկը: Ջեյնին չէր երևում: Եկան մեծ մայրն ու մեծ հայրը: Ջեյնին հոր տուն էր գնացել: Մեծ հայրն ասաց. «*Նարի՛ր, հանգաբացի՛ր, հիմա կգա*»: Տարզանը պատմեց Պավլովսկու նավի կործանման մասին: Մինչ այդ Ջեյնին եկավ: Ջեկին վազելով ընկավ մոր գիրկն ու ասաց, որ հայրը եկել է: Լացն ու ուրախությունը խառնվեցին իրար: Այսպես երկար բաժանումից հետո սկսվեց խաղաղ կյանքը:

*
* * *

Անցավ հինգ տարի: Ջեյնին պարզեց ամուսնուն մի տղա ու մի աղջիկ: Երեխաներին, ի պատիվ Տարզանի հորն ու մոր, անվանեցին Էլինա և Ռոբերտ: Տարզանը վերցրեց հոր ազգանունը և դարձավ լորդ Կրիսթոֆ:

Մի առավոտ, նստած իրենց տաղավարում, թեյում էին: Մի ջենտրլմեն հայտնվեց ու հարցրեց. «*Այսրե՞ղ է ապրում Տարզանը*»: Տարզանը բարձրացավ ու նայեց դեպի մուտքը: Ա՛յ քեզ զարմանք. մուտքի առաջ կանգնած էր Հարրին: Տարզանը ընդառաջ գնաց, գրկախառնվեցին: «*Հա՛րրի, այս որդեղի՞ց*»: «*Լիսաբոնից: Սպասի՛ր կնոջս ու փոխյիս ներս բերես, կառքում եմ*»: Կինը եկավ, ծանոթացան բոլորի հետ: «*Պատրո՛ն, գիրե՞ս փոխյիս սևուներ ինչ եմ դրել*»: Տղան կլինեք երեք տարեկան: «*Անունս Տարզան է*»: «*Վա՛յ, հոգիդ սիրես*» ասելով՝ Տարզանը երեխային վերցրեց իր գիրկը: «*Պատրո՛ն, դու ինչ՞ ճիշտ ճանապարհ ցույց փվեցիր: Առևտրի փուն ունես, փվածդ դրամը քսանապարհիկ ավելացրել եմ*»: Քսան օր մնալուց հետո նա հայտնեց. «*Գործերս շատ եմ, պետք է հեղ գնանք*»: Տարզանն իր հերթին հայտնեց. «*Ես էլ գնալու եմ իմ կղզին, ապա՝ Նիգերիա: Այնպես, որ կգանք Լիսաբոն, կայցելենք ձեզ, միառժամանակ կննանք*»: Հարրին տվեց հասցեն ու շատ ջերմ բաժանվեցին:

Կապիտանի հետ խորհրդակցելով՝ եկան այն եզրակացության, որ նավը հուսալի է, և կարելի է ամբողջ աշխարհով պտտվել: Եվ այսպես ողջ ընտանիքը և պրոֆեսորը, որը մեծ փափագ ուներ, որոշեցին նորից այցելել կղզի: Հատկապես պրոֆեսորը, որը վաթսուներեք տարեկան էր, շատ խնդրեց, որ իրեն էլ վերցնեն մյուսների հետ բաց օվկիանոս:

Ճանապարհորդությունը սկսվեց, սկզբից ուղևորվելու էին Լիսաբոն: Այստեղ նրանք այցելեցին Հարրիին: Լիսաբոնում մնալով տասն օր՝ կուրս վերցրին դեպի Գիբթուն, որտեղ վառելիք և մթերք էին վերցնելու: Երեխաները Ջեյնի հսկողության տակ խաղում էին տախտակամածին: Եղանակն այնքան բարենպաստ էր, որ երեխաները չէին ուզում իջնել նավասենյակ: Այսպես անցնում էին օրերը: Մի առավոտ մտան Գիբթունի նավահանգիստ: Վերցնելով երկու բարել վառելիք, մթերքներ և ուրիշ պիտույքներ՝ ճանապարհ ընկան դեպի կղզի: Պրոֆեսորը գիտեր, թե մոտավորապես որտեղ է գտնվում կղզին ու կառավարում և ցուցումներ էր տալիս կապիտանին: Սակայն մի առավոտ հայտնվեց մի ֆրիգատ, որը երկու համազարկ արձակեց ու դրոշակներով պահանջեց, որ կանգնեն:

*
* *
*

Մի շաբաթ առաջ պրոֆեսորը, նստած վերևի տախտակամածին, Տարգանին պատմեց նրա հոր և մոր մասին, որոնք գաղութների մինիստրության կողմից ուղարկվել էին Հնդկաստան՝ իբրև Հնդկաստանի փոխարքա³⁵⁹: «Ֆրիգատը, որով մեկնել էին, անհայտ կորել էր: Նավի անունը «Վիկտորյա» էր, կապիտանի անունն ու ազգանունը՝ Ուիլիս Հարիման: Անձնակազմը ուներ փաստ լավ զինված ծովային սպաներ և զինվորներ: Ամբողջ անձնակազմը բաղկացած էր քսան նավաստիներից՝ Չոնի Մայքլի գլխավորությամբ: Մինիստրությունը ամեն ջանք թափեց մի բան իմանալու համար, բայց ապարդյուն: Ես ամեն ջանք թափեցի, որ իմանամ, թե ինչպես մայրդ ու հայրդ հայրնվեցին այդ կղզում: Եթե նավը վթարի ենթարկված լիներ, հայրդ չէր կարողանա այդքան ապրանք ափ հանել: Մայրդ շատ առողջ կիև է եղել: Ինչի՞ց է մահացել: Մայրդ մեկնելիս երեք ամսական հղի է եղել, իսկ դու ծնվել ես կղզում: Իմ հաշ-

վով՝ ճամփորդությունից երկու ամիս հետո նրանք կղզու ափն են իջել, բայց ինչի՞ համար են իջել: Ինչպես երևում է, մայրդ կղզում ապրել է մեկ տարի և չորս ամիս: Ընծավելուց հետո ապրել է մի տարի: Հայրդ ոչ մի օրագիր չի պահել: Ժամանակ չի ունեցել: Մորդ մահից հետո հայրդ քիչ է ապրել: Գալսյի նշաններից երևում է, որ հորդ սպանել է Գերչակը: Ես դրանից հետո ամեն ինչ պարզեցի»:

*

* *

Կապիտանը ուրիշ ելք չուներ, կարգադրեց, որ նավը կանգնի ու խարխախ գցի: Մի նավակ մոտեցավ: Նավ բարձրացան երեք նավաստիներ, մեկը մնաց նավակում: Երեքից մեկը թավ մորուքով, խիստ դեմքով, մոտ վաթսույն տարեկան մարդ էր: Երեքն ալ զինված էին կարաբիններով: «Ո՞վ եք և ու՞ր եք գնում»: Տարզանն առաջ եկավ: «Ես լորդ Կրիսթոֆն եմ, անունս Տարզան է: Ի՞նչ եք ուզում»: «Լորդ Կրիսթոֆ, այդ ազգանունն ինչ ծանոթ է»: «Մայքլ, սկսեցիք»: «Մի թույե... Ձե՞նի Մայքլ»: Մայքլը սթափվեց, նայեց պրոֆեսորին: «Դու որտեղի՞ց գիրես ին անունն ու ազգանունը»: «Ձեր նավի անունը «Վիկտորյա» է, իսկ ֆրիգատի կապիտանի անուն-ազգանունը Ուիլիս Հարիմանն է»: Մայքլը ապշած նայեց պրոֆեսորին: «Դուք իջե՞ք նավակ ու սպասե՞ք ինչ... Դա շար վաղուց էր, իմ խումբը Լոնդոնում շան կյանքով էր ապրում: Բորորս էլ նավաստիներ էինք, բայց անգործ էինք: Մանր գողությունով գլուխ էինք պահում և ուզում էինք մի փոքր նավ փախցնել ու զբաղվել ծովահենությամբ: Այդ առիթը եկավ: Հանդիպեցինք կապիտան Ուիլիսին, որը նավաստիներ էր հավաքում: Ես նրան ասացի, որ մենք քսան հոգի ենք և պայմանագիր ստորագրեցինք, որ Հնդկաստան գնալ-գալուց հետո նոր վճարի: Մի փոքր կանխավճար³⁶⁰ սրացանք մանր-մունր³⁶¹ կարիքների համար: Ամեն ինչ պատրաստ էր ճանապարհ ելնելու համար: Մենք որոշեցինք, որ Էֆիոպիայի³⁶² ափերում խռովություն չանենք և միևնչև Գիբթուն բարեխղճորեն աշխարեցինք: Ամեն օր Էլիանն և Ռոբերտը բարչրանում էին տախտակամած, գրուցում ու կարակում էին մեզ հետ: Այսպես անցնում էին օրերը: Կապիտանը որոշեց, որ մենք Գիբթունից հետո ուրիշ տեղ էլ չենք կանգ առնելու և ուղևորվելու ենք ուղիղ Հնդկաստան: Դրա համար շար

մթերք վերցրինք և երկու բարեյ վառելիք շարժիչների համար: Գիթթունից հետո որոշեցինք խռովություն բարձրացնել, որը չսխողվեց: Ռոբերտը ինչ մահից փրկեց: Աղմուկ-աղաղակ լսելով՝ նա փախարակամած բարձրացավ այն ժամանակ, երբ կապիտանը, արքանակը ինչ վրա պահելով, ուզում էր կրակել: Ռոբերտը հարվածեց կապիտանի ձեռքին, և գնդակը բարձր գնաց: Կապիտանը ուզեց երկրորդ անգամ կրակել: Ռոբերտը ձեռքը բռնեց՝ ասելով, որ չի ուզում, որ իր աչքի առաջ մարդ սպանվի: Կապիտանը զայրացած ասաց. «Սա մեզ վրա շատ քանկ է նսրելու»: Մեզանից սպանվել էր երկու հոգի, և մենք եկանք այն եզրակացության, որ առանց զենքի մեր խռովությունը չի հաջողվի: Որոշեցինք զինվել: Ձեռքի պահեստը շատ ուժեղ էր հսկվում: Մի փասն օր հանգիստ աշխարեցինք: Ամուսինները փախարակամած չէին բարձրանում: Մի գիշեր հաջողվեց պահակին վերացնել: Պահեստից չորս կարաքին վերցրինք ու մի արքանակ: Արքանակը ես վերցրի: Փամփուշտները քիչ էին: Կարաքիները հինգսկան փամփուշտ ունեին, արքանակը՝ ինը: Առավոտյան լույսը չբացված, ամեն ինչ պարտասար էր: Մեկին ուղարկեցի Ռոբերտի դռան մոտ, որ խռովության ժամանակ վերև չբարձրանա: Նավը կապիտանի օգնականն էր վարում: Յուրաքանչյուրս զինված էինք մի-մի բանով: Առաջինը կապիտանը դուրս եկավ նավասենյակից: Մի գնդակով փապալեցի գերբին: Չինվորները խուժեցին փախարակամած: Կրակեցին չորս կարաքիները: Չինվորներն էլ կրակեցին: Մեր երկրորդ կրակոցից հետո չինվորներն արդեն սպանված էին: Կապիտանի օգնականին հաջողվեց սպանել մեր մարդկանցից մեկին: Իմ գնդակը անոր ալ փապալեց: Արդեն լրիվ լուսացել էր: Վիրավորներին և մեռածներին բոլորին քափեցինք օվկիանոսը: Մեզանից դարձյալ սպանվել էր երկու հոգի: Մնացինք փասնվեց հոգով: Բոլորն էլ ուզում էին սպանել Կրիսթոֆների զույգին: Բարձրացնելով արքանակին՝ հրամայեցի, որ եթե որևէ մեկը մի քայլ անի դեպի նավասենյակ, րեդնուրեղը կգնդակահարվի, որ նրանք իմ գերբներն են, և ես կվարվեմ այնպես, ինչպես որ ուզեմ: Մեզանից մեկը կապիտանի կոչում ուներ, անունը Պեյրի էր: Ես հրամայեցի. «Պեյրի, վերցրու՛ նավի դեկը: Այժմ դու ես կապիտանը: Հրամանատարը ես եմ: Բոլորդ անցեք գործի»: Գնալով Կրիսթոֆների նավասենյակ՝ հայրենեցի. «Նավը

գրավված է: Քեզ ալ ուզում էին վերացնել, բայց ես, արտճանաչող շեռքիս, հրամայեցի, որ նա, ով մոտենա ձեր դռանը, րեղնուրեղը կզնդակահարվի, այնպես որ ձեր կյանքը վրանգի մեջ չէ, բայց ձեզ Հնդկաստան չեմ կարող տանել: Կիջեցնեմ մի կղզի, ամեն ինչով կապահովեմ: Այսրեղ մթերքը շար է: Մթերքի կեսից ավելին կտամ, նավթ էլ կտամ՝ լամպերի համար: Խոսարանում եմ առաջին հնարավորությամբ դեպքում իմաց տալ ձեր րեղը»: Այդպես ալ չարացվեց, որ հայրենի: Մի քանի օրից մի կղզու առաջ խարիսխ գեցի ու սկսեցի բեռնաթափվել: Վերջում ես ինքս նրանց տարա այդ կղզին: Դրանից հետո սկսեցինք ծովահենություն անել: Ապրանքը կամ տանում էինք Գիբթուն, կամ Նիգերիայի մայրաքաղաք Լագոս³⁶³ ու վաճառում: Դրանը շար արագ էր վերջանում, ծախսում էինք ուրեղ-իմեղու և ազարամիր կանանց վրա: Այսպես անցան շար տարիներ: Ինչնից զար մեր անչնակազմից մնացել էր չորս հոգի: Երկուսին ես գնդակահարեցի անկարգությունների համար, մի քանիսը իրենց մահով գնացին, մի քանիսը հեռացան: Ես նորերին էի հավաքում: Հիմա նորից քսան հոգի ենք: Լագոսում ալ դրամ չունեինք, որ մթերք ու վառելիք գնեինք, հոյսներս դրեցինք մի փոքր նավ հանդիպելուն: Դժբախտաբար՝ թե՞ բարեբախտաբար, չգիտեմ, հանդիպեցինք ձեզ: Հիմա ի՞նչ եք մտածում, դուք ու՞ր եք գնում»: «Այն կղզին, որտեղ թողել ես այն դժբախտ զույգին: Այդ զույգից մնացել է այս երիտասարդը՝ Էլիանայի և Ռոբերտի որդին»: Մայքը ելավ ոտքի: «Իսկ հայրն ու մա՞յրը»... «Մայրը մահացել է ծննդաբերությունից մի տարի հետո, հայրնի չէ, թե ինչից: Իսկ հայրը՝ մարդանման կապիկներին սպանելուց մի քանի օր հետո: Այնպես որ Տարգանին մեծացրել է Գալա անունով կապիկը»: «Ձեր ասելով՝ Կրիսթոզները այնրեղ ապրել են մի տարի չորս-հինգ ամիս: Այնրեղ երկու-երեք բառել վառելիք պիրի լինի»: «Ո՛չ, մեր արշավախումբը³⁶⁴ վերցրեց, այնրեղ պիրանի ոչինչ չկա: Մի ութինը տարի առաջ ես այնրեղ էի: Հայրնաբերեցի Տարգանին ու տարա Անգլիա, որտեղ նա ամուսնացավ ու ունեցավ երկու տղա ու աղջիկ, որոնք հիմա մեզ հետ նավի վրա են»: «Ի՛նչ ճակատագիր, Մայքը աչքերը լցվեցին արցունքներով, նա մի պահ լռեց, ապա շարունակեց իր խոսքը,-երիտասարդ, ների՛ր ինչ, եթե կարող ես, այն չարիքի համար, որ պարճառել եմ քեզ, քո մորն ու քո հորը»: «Այս-

յրեղ ներելու ոչինչ չկա, եթե դու գղջում ես քո արածի համար, որեմն ինքնըստիկնյան ներված ես: Հիմա ի՞նչ ես առաջարկում»: «Օգնե՛ք՝ միևնչև Գիթթուն հասնենք»: «Ամեն ինչով կօգնեմ. հիևզ հագար ֆունյր սրերլիևզ կրամ, վառելիք և մթերք կվերցնեք»: «Ո՛չ, ոչ մի դրամ: Գիթթուն հասնելուց հետո այս ֆրիգայրը վաճառելու եմ և դրամը բաժանելու եմ անչնակազմի մեջ, թող ցրվեն և ով ինչպես ուզում է, թող ապրի: Ես ալ գլուխս մի կերպ կպահեն»: «Այդ հասարա՞ր ես որոշել»: «Այո՛, այս դեպքից հետո ես ուրիշ անելիք չունեն»: «Մյուսները կհամաշայնե՞ն»: «Գրանք ալ զգվել են այս գործից»: «Ինչքա՞ն են գնահատել ֆրիգայրը»: «Մի հարյուր հագար ֆունյր սրերլիևզ»: «Ես վերցնում եմ նավը, Գիթթունում՝ անգլիական բանկում, ես հաշիվ ունեմ, դրամը կվերցնեմ ու կրամ քեզ: Ինչպես կուզես, այնպես կբաժանես: Կապիտան, գնում ենք Գիթթուն, հետո՝ մեր կղզին: Տղանե՛ր, մի բառել վառելիք իջեցրե՛ք մեր նավակի մեջ և րարե՛ք ֆրիգայր ու մի րասն օրվա մթե՛րք րվեք: Հեյրո նորից կրանք: Մայրլի հեյր միասին պիտի գնանք»:

Հաշիվը մաքրելուց հետո Տարզանը ֆրիգատը հանձնեց անգլիական նավային ընկերության տնօրինությանը: Նորից վառելիք ու մթերք վերցրին և ուղղվեցին դեպի կղզիները: Մի ամիս էր անցել, երբ կանգնեցին կղզու մոտ: Լավ ուսումնասիրելուց հետո մի նավակ իջեցրին: Տարզանը ափ իջավ՝ չորս զինված նավաստիների հետ: Տնակը կանգուն էր մնացել, պարզ էր, որ ոչ մեկը տնակին չէր մոտեցել: Ազդանշանով բոլորը իջան նավակներից և եկան կղզու ափը: Բոլորը զինված էին՝ բացի պրոֆեսորից: Ջեյնին երեխաների հետ մնաց նավի վրա:

Տարզանը, ազատվելով իր հագուստներից և վերցնելով իր հին սուրը, վազեց ու մի ցատկով միառժամանակ կորավ ծառերի ճյողերի մեջ: Լսվեց նրա ուժգին ձայնը: Չայնից ծովայինները կուչ եկան: Կապիտանը ասորճանակը հանեց: Պրոֆեսորը մարեց ծիծաղից: Կապիտանը նայեց պրոֆեսորին ու զարմացած հարցրեց. «Էդ ո՞վ էր»: «Տարզանը»: «Խո չե՞ս գժվել»: «Այդ չայնից նույնիսկ վագրերը, առյուծներն ու պանկերաներն են փախչում, իսկ փղերը գալիս են օգնության: Մի անգամ ես մեկնակ էի այս սենյակում: Այս պարտահանից առյուծը գլուխը ներս կոխեց և փորձեց ներս մտնել: Իր հուժկու չայնով Տարզանը հասավ օգնության: Երբ ուշքի եկա, րեսս մի

փոքրիկ փղիկի, որը կնճիթն էր շարժում: Տարզանն էլ էր թրջված, ես էլ էի թրջված: Մի կողմում սափկած առյուծն էր: Պարզ եղավ, որ Տարզանը, առյուծի կոկորդից բռնելով, սրով մի քանի հարված էր հասցրել նրան: Փղիկը հասել էր Տարզանին օգնության, նրա գրկից վերցրել էր կիսամեռ, ցավից կարաղած զազանիև, խիտել գեյրնիև և սկսել էր ուրքերով կոխտրել: Առյուծի վերջը տալով՝ նա կնճիթով ջուր էր բերել առվակից և ցողել ուշագնաց Տարզանի վրա, սալս տեսնելով, որ ես էլ եմ ուշաքափված, ջուրը ցողել էր ինձ վրա»:

Պրոֆեսորը նորից իրերը խառնշտեց, նա ջանում էր ինչ-որ բան իմանալ Էլինայի մասին, բայց սպարոյուն: Դարակի մի անկյունում մի գիրք դիպավ նրա աչքին: Պրոֆեսորը վերցրեց այդ գիրքը, բացեց, որի միջից մի տետր ընկավ: Վերցրեց այդ տետրը. դա Ռոբերտի օրագիրն էր: Օրագրում գրված էր այն ամենի մասին, ինչ որ պրոֆեսորը գիտեր: Նա շարունակեց կարդալ, և, ո՛վ զարմանք, մի քանի տողերում հայտնի դարձավ, թե ինչպես է մահացել Էլինան: Ռոբերտը գրում էր.«Ես տեսնեցի մի քիչ հեռու գնացի, ուզում էի փայտ բերել: Մի սոսկալի մարդանման կապիկ հարձակվեց վրաս: Կացինից բացի ուրիշ զենք չունեի: Ես, որքան ուժ ունեի, բռնացի: «Էլի՛նա, հասի՛ր»: Արդեն կապիկը իմ կացինը առել էր ու շարտել, մի փայտով էի պաշտպանվում: Տեսա, որ Էլինան դուրս եկավ՝ հրացանը չեռքին: Նա կրակեց: Կապիկը մահացու վիրավորվեց: Նա, ինչ թողնելով, հարձակվեց Էլինայի վրա: Երկրորդ կրակոցը կապիկին տապալեց գեյրնիև Էլինայից մի երկու քայլ հեռավորության վրա: Հասա ու տեսա, որ երեխան ծնվել է: Առաջին օգնությունը ցույց տվեցի երեխայիս ու վերադարձա Էլինայի մոտ: Նա ծանր էր շնչում, վերցնելով նրան՝ տարա մահճակալի մոտ: Պառկեցրի ու ամեն ինչ արեցի, սակայն ուշքի չեկավ: Կենդանի դիակ էր: Ես երկու քարայծ էի բռնել, որոնք անարար կաթ էին տալիս: Այդ կաթը ես խմեցնում էի Էլինային, որ կրծքի կաթ ունենար ու երեխային կերակրեր: Ես նստում էի Էլինայի կողքին, գրկում երեխային և օգնում, որ երեխան կուրծքը ծծի: Այսպես անցան օրերն ու ամիսները, բայց Էլինան ուշքի չեկավ: Երեխան մի տարեկան էր, երբ Էլինան գրկումս մահացավ»: Այստեղ նրա գիրը ընդհատվում էր: Պարզ էր, թե դրանից հետո ինչ էր կատարվել:

Պրոֆեսորը նոր էր վերջացրել, երբ դրսում խառնվեցին իրար:

Պրոֆեսորը դուրս եկավ. Տարզանը նստած էր փղի վրա, կողքին էլ մի ծերացած կապիկ էր: Նավաստիները մի հիսուն մետր հեռու էին, գենքերը բռնած՝ պատրաստ էին կրակելու: Կապիտանը, ատրճանակը ձեռքին, հետ-հետ գնաց: «Չկրակե՛լ»: Փիղը գնաց առաջ և իր կնճիթը շարժելով՝ ողջունեց մարդկանց: Պրոֆեսորը մոտեցավ ու շոյեց փղի գլուխը: Կապիտանը, աչքերը լայն բացած, նայում էր պրոֆեսորին, թե ինչպես է նա շոյում փղի գլուխը, և թե ինչպես է հսկա փիղը շոյում պրոֆեսորին: Փիղն ավելի ուժեղ էր շարժում իր հսկա գլուխը: Տարզանը իջավ, գրկելով իջեցրեց կապիկին, որն իրենից փոքր չէր: Պրոֆեսորը սկսեց շոյել կապիկին: Տարզանը փղին ցույց տվեց անտառը: Փիղը հետ դարձավ ու ծառերի ճյուղերը ջարդելով՝ հեռացավ:

Կապիկը մնաց: Կապիտանը մոտեցավ, ձեռքը երկարացրեց: Կապիկը բռնեց և ուժեղ-ուժեղ թոթվեց: «Մայրս է՝ Գալան, նա է մեծացրել ինձ: Շար է ծերացել: Դուք պետք է լինեիք այնպեղ, որպեղ նրա հոտն էր: Ես իմ հուժկու կանչով իջա ծառից: Գալան մի ցարկով հայրնմեց գրկումս: Թիրկոզն ալ ճանաչեց ինձ, եկավ ուրքերիս փակ թապլրեց: Հորը շարացել էր: Իրենց կանչերով ողջունեցին ինձ: Հայրս չկար»: «Ես նորութուն ունեմ», -ասաց պրոֆեսորը և ցույց տվեց տետրը: Տարզանը չնայած կարդալ-գրել սովորել էր, սակայն ձեռագիրը չէր կարող շատ վարժ կարդալ: «Այսպեղ պարզ գրված է մորդ մահվան պարճառը, այնպես որ քո կյանքի ամբողջ պարմութունը պարզ է»: Տարզանը վերցրեց տետրակը և ասաց. «Այսպեղ գրված է, որ մայրս սպանել է հսկա կապիկին»: «Այո՛: Որ մի փարի ապրելուց հետո մահացել է»: «Ի՛նչ դժբախտութուն, ի՛նչ ճակատագիր»:

Տարզանը համբուրեց Գալային և ցույց տվեց անտառը: Դրանից հետո Տարզանը լավ ուսումնասիրեց մոտակա անտառն ու եկավ այն եզրակացության, որ ոչ մի տեղաբնիկ չի եկել ծովափ: Դրանից հետո նա գնաց նավ ու Ջեյնիին երեխաների հետ ափ իջեցրեց: Երեխաների ուրախությանը չափ չկար: Մի քանի ամիս նրանք նավի մեջ էին: Տարզանը որոշեց մի քանի ամիս մնալ կղզում, լավ հանգստանալ, հետո գնալ Նիգերիա՝ թապո ցեղը: Տարզանը սկսեց որսորդություն անել: Նավում մսի պակասություն չէր զգացվում: Այսպես անցան

օրերը: Տարզանը վերջին անգամ գնաց մորը տեսության, դրանից հետո ընդմիջտ հեռացան կղզուց՝ կուրսը վերցնելով դեպի Նիգերիա: Այս անգամ Ատլանտիկը դաժան էր: Սարսափելի փոթորիկներ էին և ուժեղ անձրևներ: Այս գոտում անձրևները շատ հազվադեպ էին: Որոշեցին Գանայի մայրաքաղաք մտնել: Աքրայում³⁶⁵ մնացին մի տասն օր:

Առավոտյան արևը ծփում էր Ատլանտիկայի վրա, կարծես ոչին չէր պատահել: Շարունակելով իրենց ճանապարհը՝ մի առավոտ հասան Նիգերիայի մայրաքաղաք Լագոս: Այստեղ միշտ գտնվում էին քարավաններ, որոնք գնում էին դեպի հյուսիս՝ Նիգերիայի խորքերը, որտեղ գտվում էր Թապո ցեղը: Խմբի մեջ մտան Ջեյմին, Տարզանը, կապիտանը, հինգ զինված ծովայիններ: Ուղտերի քարավանը շատ դանդաղ էր առաջ շարժվում: Արդեն մի ամիս էր անցել, երբ հասան Թապո ցեղը: Ի՛նչ մեծ ուրախություն էր Բատիստայի և Ժոզեֆինայի համար: Ժոզեֆինան մի տղա էր ունեցել և Հարրիի նման երեխայի անունը Տարզան էր դրել: Եկած ճանապարհով հետ գնալը վտանգավոր էր, պիտի սպասեին ստրուկների քարավանին, որը չուշացավ: Բաժանվելուց հետո ճանապարհ ընկան դեպի ծովափ, որտեղ մի փոքր նավահանգիստ կար, որը հինգ հարյուր կիլոմետր արևելք էր Լագոսից: Մի ուրիշ նավով հասան Լագոս, այստեղից էլ՝ Անգլիա:

Այսպես վերջացան Տարզանի արկածները:

ՄԱՐԻԱՄԸ

Առաջին դարի սկզբին Երուսաղեմում ապրում էր մի չքավոր ընտանիք, որն ուներ մի աղջիկ, անունը՝ Մարիամ: Այդ տարիներին Հրեաստանի թագավորը Հերովդեսն էր, որի պալատում, բացի արքունի տիկնանցից, կային նաժիշտներ՝ հիանալի սիրուն աղջիկներ: Նրանցից մեկը Մարիամն էր, որին թագուհին շատ էր սիրում: Նա օժտված էր բարությամբ և սիրունությամբ: Իսկապես որ, Մարիամը շատ գեղեցիկ էր: Նշաձև սև աչքերով, սլացիկ իրանով, վարսերը հասնում էին մինչև կոնքերը: Պալատի նաժիշտների վերակացուն

մի պառաված օրիորդ էր, որը ո՛չ խիղճ ուներ, ո՛չ զգացմունք, բայց հլու-հնազանդ էր Հերովդեսին: Հերովդեսը որ օրիորդին հավաներ, վերակացուի միջոցով այդ օրիորդը հայտնվում էր նրա ննջարանում: Վա՛յ նրան, ով հղիանար: Վերակացուի արբանյակները հեռացնում էին նրան պալատից: Այդպես պատահեց Մարիամի հետ, որը երեք ամիս է, որ հղի էր: Այդ մասին գիտեր միայն նրա ամենամոտ ընկերուհին՝ Ռեբեկան, որի եղբայրը թագավորական պալատում կարգ ու կանոնն էր վարում: Մինևույն ժամանակ պատրաստի թամբած մի ձի ուներ և կատարում էր սուրհանդակի դեր:

Ռեբեկան ասաց Մարիամին, որ նա պետք է հեռանա պալատից, որ եղբայրը կօգնի նրան: *«Ու՞ր գնամ, մայրս ճնայած շարքարի է, քայց ներս կառնի՞»:* *«Չգիտեմ, դու պետք է հեռանաս պալատից»:* Ընկերուհու եղբայրը Մարիամին հեռացրեց պալատից: Ու՞ր գնալ, որոշեց գնալ տուն, մոր ոտքերն ընկնել ու ներում խնդրել: Իսկ ի՞նչ ասեր նշանածին՝ Հովսեփին: Փեսացուն նրան իբրև կին չէր վերցնի: Իրեն միայն մահը կփրկեր: Գնաց տուն ու մորը պատմեց: Մայրը ուշաթափվեց, որ միակ աղջիկը մահվան է դատապարտված: Մի քանի ժամ հետո մայրը ուշքի եկավ: Նա Մարիամին խիստ արգելեց պատահածի մասին հորը պատմել: *«Հիմա ի՞նչ ես մտածում»:* *«Կհայրնեմ Հովսեփին, եթե ինչ չվերցնի իբրև կին, կգնամ կկորչեմ, գազանների բաժին կդառնամ»:*

Ամեն իրիկուն, ինչպես միշտ, Մարիամի մասին իմանալու համար Հովսեփը այցելում էր զոքանչին և աներոջը: Այդ երեկո նա, Մարիամին տեսնելով, զարմացավ: Աները տանը չէր: Նա զգաց, որ մի բան պատահել է: Կարծես տանը սուգ լիներ: Հարցրեց, թե ինչ է պատահել: Մարիամը տարավ իր սենյակը ու ամեն ինչ պատմեց: Հովսեփը շատ վշտացավ, նույնիսկ զոքանչի սենյակը չմտավ ու հեռացավ: Մայրը տեսավ, որ ուշանում է, գնաց դեպի սենյակի դուռը: Ոչ մի ձայն չէր լսվում: Մտավ ներս, տեսավ աղջկան, որը ո՛չ ողջ, ո՛չ մեռած ընկած էր հատակին: Ամեն ինչ պարզ էր. Հովսեփը հեռացել էր: Նա, աղջկա վրա ծածկելով, դուրս եկավ: Ամուսինը եկավ ու տեսավ, որ կնոջ երեսին գույն չկա: *«Ի՞նչ է պատահել»,-* հարցրեց նա: *«Մարիամը հիվանդացել է, եկել է: Իր սենյակում է»:* Հայրը գնաց, տեսավ, որ քնած է, ձայն չհանեց: Ճաշելուց հետո գնաց քնելու: Տիկին Մա-

ռան ուզում էր փրկել աղջկան, բայց ինչպե՞ս: Այն ժամանակ այդպիսիներին քարկոծում էին ու սպանում: Վերջը որոշեց Մարիամին ուղարկել գյուղ՝ իր քրոջ մոտ: Քույրը շատ էր սիրում Մարիամին ու անտարբեր չէր մնա նրա դժբախտության նկատմամբ: Տիկին Մառան մինչև լույս չքնեց: Մի քանի անգամ գնաց, նայեց աղջկան, որը նույն դիրքով պառկած էր: Առավոտ գնաց տեսավ, որ Մարիամը պատրաստվում է դուրս գալ: «*Ոչ մի տեղ չես գնա, գնում եմք գյուղ՝ մորաքրոջդ մոտ: Մորքուրդ քեզ շար է սիրում և ամեն ինչ կանի, որ քեզ վնաս չհասնի: Հայրդ որ գա, զվարթ դիմավորի՛ր, համբուրի՛ր, ասա՛, որ մինչև ամուսնությունդ պետք է գյուղ գնաս, իսկ մի քանի շաբաթ հեյո՛ղ պալատ*»: Այսպես ալ եղավ:

Հիմա գանք Հովսեփին: Շատ ճնշված հասավ տուն: Նա մի անգամ արդեն ամուսնացել էր: Մի տարի առաջ առաջին կինը մահացել էր: Երեխաներ չունեք: Սառային հեռու ազգական էր: Այդ պատճառով էլ Մառան համաձայնեց իր մի հատիկ աղջկան տալ Հովսեփին, որը տասնհինգ տարով մեծ էր Մարիամից: Ըստ Ավետարանի՝ Հովսեփը երագին հրեշտակին է տեսել, որը նրան հայտնել է, թե Մարիամը կույս է և Աստծո հրամանով է հղիացել: Հովսեփը ինչպե՞ս երագ տեսավ որ, եթե մինչև առավոտ չքնեց: Ամբողջ գիշեր նա մտածում էր, թե ինչ անի: Եթե ինքը Մարիամին չվերցնի կնության, կորած են թե՛ մայրը, թե՛ Մարիամը: Ընդհանրապես Սառայի համար էր մտածում, որ իր ազգականն էր: Հովսեփը շատ խղճով մարդ էր: Նա գիտեր, որ եթե Մարիամին կնության չվերցնի, ապա նրանց սպանելու են, և նահատակների համար խիղճը ամբողջ կյանքում տանջելու էր իրեն:

Առավոտյան Մառան պատրաստվում էր Մարիամին գյուղ ուղարկել: Հովսեփը եկավ, ոչ մի խոսք չասաց Մարիամին: Ձեռքից բռնեց ու տարավ: Մառան շշմեց: Հովսեփը Մարիամին տարավ մի ուրիշ սենյակ, որտեղ կատարվեց պսակադրությունը: Մարիամը հիպնոսացվածի պես հետևում էր Հովսեփին: Նա միայն հիշում էր, որ հոգևորականը հարցրեց ամուսնուն.«*Տե՞ր ես*»: «*Այո՞*», -պատասխանեց Հովսեփը: Նա տարավ Մարիամին իր տուն, բացեց սենյակներից մեկի դուռը և ասաց.«*Սա քո սենյակն է, կապրես ինչ մոտ իբրև իմ կինը մինչև երեխայի լույս աշխարհ գալը*»: Մարիամին ուրիշ անելիք չէր մնում,

պետք է հաշտվեր իր ճակատագրի հետ: Հովսեփը արհեստով ատաղձագործ էր, ուներ փոքրիկ արհեստանոց: Նա մահվան դատապարտվածների համար փայտե խաչեր էր պատրաստում: Մառան չհամբերեց, գնաց Հովսեփի արհեստանոցը: Ծունկի եկավ, համբուրեց Հովսեփի ձեռքերը: Հովսեփը բարձրացրեց նրան. «*Մայր, ի՞նչ ես անում, ամեն ինչ լավ կլինի, երկու ժամ առաջ ես պասկվեցի Մարիամի հետ: Նա ինչ մուր կապրի: Մի փասը-փասնիհիզ օր հետո կգանք քեզ փեսություն»*: «*Հովսեփ, դու փրկեցիր Մարիամի և իմ կյանքը, թող Աստված քեզ երջանիկ կյանք տա»*:

Հիմա գանք պալատ: Մարիամի պալատից անհետանալը առաջին անգամ վերակացուն նկատեց ու հարցուփորձ արեց աղջիկներին, բայց ոչ մեկը ճիշտ տեղեկություն չտվեց: Ամիսներ հետո թագուհին նկատեց, որ Մարիամը անհետացել է ու հարցրեց վերակացուին. «*Մարիամը ու՞ր է*»: Վերակացուն ոչ մի պատասխան չկարողացավ տալ: «*Մարիամը եղե՞լ է թագավորի մուր*»: Վերակացուն լրնեց: «*Քեզ եմ հարցնում, եղե՞լ է, թե՞ ոչ*»: Վերակացուն ծունկի եկավ: «*Ներհր ինչ, թագուհի՛, եղել է*»: «*Հեռացի՛ր*»: Վերակացուի հեռանալուց հետո թագուհին շատ վրդովված գնաց ամուսնու մոտ: Այստեղ պետք է նշել, որ ամուսիններն ունեին երկու աղջիկ ու մեկ տարեկան մի տղա: Ավելի վաղ հարճերից մեկը նույնպես տղա երեխա էր ունեցել: Մոր դրոմամբ նա պայքար է սկսում, որ իր որդին դառնա հրեական գահի ժառանգը: Այդ էր պատճառը, որ թագուհին գնաց ամուսնու մոտ: Մտնելով առանձնասենյակ՝ նա կանգնեց շեմին: Թագավորը ընդառաջ եկավ: «*Ի՞նչ է պատրասեղ*»: «*Մարիամը ու՞ր է*»: «*Ի՞նչ Մարիամ*»: «*Նա, որ եմ վերակացուն բերել էր քո ննջասենյակ*»: «*Դա վաղուց էր՝ մի ութ ամիս առաջ*»: «*Իսկ ու՞ր է նա հիմա... հղիացել, փախել է պալատից, վա՛յ մեզ*: Դու՛ ես մեղավոր, բոլոր աղջիկների հետ կենակցում ես»: «*Գրկնելը դժվար չէ*»: «*Որքե՞ղ գրկնես*»:

Մարիամը հիանալի կին դարձավ Հովսեփի համար. եփում-թափում, լվանում-մաքրում էր: Հովսեփը օրեցօր ավելի էր համակրում Մարիամին: Նա մտածել էր, որ երեխայի ծնվելուց հետո բաժանվելու է Մարիամից: Այդպես անցնում էին ամիսները: Արդեն ութերորդ ամիսն էր: Հովսեփը որոշեց, որ գնան գյուղ՝ Մարիամի մորաքրոջ

մոտ, որ այնտեղ էլ ծննդաբերի, բայց ստացվեց ուրիշ բան: Կառավարության որոշումով՝ ով որտեղ ծնվել էր, այնտեղ պետք է գրանցվեր: Մարիամը, որ Երուսաղեմում էր ծնվել, գրանցվեց այնտեղ, իսկ Հովսեփը, որ ծնվել էր Բեթղեհեմում, գրանցվելու համար պետք է գնար այնտեղ: Հովսեփը չուզեց Մարիամին այդ վիճակում թողնել: Մի ավանակ վերցնելով և հարմարություն ստեղծելով՝ Մարիամին վրան նստեցրեց: Ինքը սանձերը վերցրեց ու շարժվեց դեպի Բեթղեհեմ: Ցերեկները գնում էին, իսկ գիշերներն անցկացնում հովիվների կացարաններում, որոնք երկու բաժին ունեին: Մի բաժնում քնում էին կանայք, մյուսում՝ տղամարդիկ:

Արդեն մի շաբաթ է, ինչ ճանապարհ էին ելել: Մի գիշեր Մարիամի ցավերը սաստկացան: Կանայք խառնվեցին իրար, մոտակա կացարանում մանկաբարձուհի կար: Նրան բերեցին: Մարիամն իր հետ վերցրել էր ամենը, ինչ որ պետք էր: Մանկաբարձուհու գալուց երկու ժամ հետո Մարիամը ազատվեց ու մի հրաշալի տղա ունեցավ: Հորը հայտնեցին, որ տղա է ունեցել: «*Անունը ի՞նչ դնենք*»: Կանայք ինչ գիտնային, որ երեխան Հովսեփից չէ: Հովսեփը մտածեց ու ասաց. «*Հիսուս, իսկ ազգանունը՝ Քրիստոս: Երեխան պիտի կոչվի Հիսուս Քրիստոս*»:

Հրեական օրենքով ազատվելուց հետո կինը քառասուն օր տնից դուրս գալու իրավունք չուներ: Մինչև հիմա քրիստոնյա աշխարհում այդ օրենքը կիրառվում է: Հովսեփը պետք է առանձին շարունակեր ճանապարհը: Առավոտ այդ հովիտի հովիվները և նրանց կանայք եկան շնորհավորելու: Կանայք շնորհավորեցին երեխայի մորը, տղամարդիկ՝ հորը: Նրանք բերել էին մթերք, զանազան ընծաներ, դրամ: Այնպես որ Մարիամը մի ամիս էլ կարող էր առանց Հովսեփի այստեղ մնալ: Հովիվների և նրանց կանանց ուրախությունը այնքան մեծ էր, որ հովիտում այս պայմաններում մի հրաշալի տղա ծնվեց: Կանայք Մարիամի և տղայի խնամքը իրենց վրա վերցրին: Երկու օր հետո Հովսեփը ճանապարհ ընկավ դեպի Բեթղեհեմ³⁶⁶: Հեռու երկրներից երեք մոզեր³⁶⁷ եկան Հրեաստանի թագավորություն որպես պատգամավորներ: Դեռ թագավորին չներկայացած՝ նրանք լսել էին, որ հովիտում՝ հովիվների կացարանում, մի հրաշալի տղա է ծնվել ու փափագում են տեսնել նրան: Նրանք պատրաստել էին

թանկագին նվերներ, արծաթե դրամներ:

Մոզերը բարձրահասակ, հսկա մարդիկ էին: Նրանց անունները՝ Մելքոն, Գասպար և Բաղդասար³⁶⁸: Նրանք ներկայացան Մարիամին: Ընծաները տալուց հետո ծունկի եկան և օրհնեցին մորն ու երեխային: Հովիվների կանայք և տղամարդիկ զարմացան, որ այս հոգևորականները երկրպագեցին Հիսուսին և մորը: Դրանից հետո մոզերը հեռացան:

Պալատում օր օրի ավելի էին հետաքրքրվում Մարիամի անհետանալով: Թագուհին հրամայեց վերակացուին գտնել Մարիամի ծնողներին և իմանալ, թե որտեղ է նա: Թագուհու հաշվարկով արդեն ութ-ինը ամիս էր անցել: Վերակացուն նաժիշտների միջոցով իմացավ Մարիամի ծնողների բնակարանի տեղն ու ներկայացավ իբրև թագուհու նաժիշտների դաստիարակ: «Տիկի՛ն, դուք մի աղջիկ ունե՞ք, թագուհու նաժիշտն էր: Եթե կարիք կա, օգնենք: Կարո՞ղ է հիվանդ է: Թագուհին շար գթասիրտ է. ամեն ինչով կօգնի»: «Աղջիկս ամուսնացավ իմ ազգականի՝ Հովսեփի հետ»: «Հիմա որտե՞ղ են»: «Հովսեփը ծնված է Բեթղեհեմում: Նոր հրամանի համաձայն՝ կնոջ հետ գնաց գրանցվելու: Ծար հուզված եմ, աղջիկս հղի է, վերջին ամիսներն են, վախենամ՝ Բեթղեհեմ չհասնեն»: Այս ամենը իմանալով՝ վերակացուն եկավ պալատ և ամեն ինչ պատմեց թագուհուն: Թագուհին թագավորին հայտնեց. «Մարիամը ամուսնացել է ու ամուսնու հետ գնացել է Բեթղեհեմ: Ամուսնու անունը Հովսեփ է: Ինչպես երևում է, արդեն երեխա ալ ունեցած է»: Թագավորն իր հավատարիմ մարդկանց ուղարկեց Բեթղեհեմ, որ գտնեն ամուսիններին. եթե երեխա ալ ունեն, բերեն պալատ: Բեթղեհեմը ծայրից ծայր լցված էր հրեա ժողովրդով, որը ծնված էր այս քաղաքում և եկել էր գրանցվելու: Քաղաքը եռում էր: Այս եռուզեռի մեջ Հովսեփ ու Մարիամ կարո՞ղ ես գտնել: Վերադարձան ու հայտնեցին, որ Բեթղեհեմում Հովսեփ ու Մարիամ ամուսիններ չկան: Այդ լսելով՝ թագավորը կատաղեց ու հրաման արձակեց քաղաքը գործով պաշարել ու ոչ ոքի քաղաքից դուրս չթողնել: Երկրորդ հրամանով հայտարարեց, որ նորածիններից մինչև մեկ տարեկան երեխան՝ տղա թե աղջիկ, սրի քաշեն: Թագավորը այն հույսն ուներ, որ Մարիամի երեխան ալ կսպանվեր: Եթե հավատանք Ավետարանում գրվածին, քառասուն

հազար երեխա էր սպանվել: Այդ կոտորածի ժամանակ Հովսեփը Բեթղեհեմում էր: Պաշարման վերջանալուց հետո նա շտապեց հովիտ: Հովսեփը կռահեց, թե այս կոտորածը ինչի համար է: Պետք էր կնոջն ու երեխային փախցնել Հրեաստանից: Շուտով լրանում էր Մարիամի ծննդաբերության քառասուն օրը: Հովիվների հետ շատ ջերմ բաժանվելով՝ նրանք ճանապարհ ընկան դեպի Եգիպտոս:

Եգիպտոսում Հովսեփը արհեստանոց բացեց ու իր արհեստով էր զբաղվում: Մարիամը առաջվա նման ամեն ինչ անում էր, որ Հովսեփի համակրանքը շահի և խնամում էր փոքրիկ Հիսուսին: Ամուսինների մեջ սեր ծագեց, և Մարիամը Հովսեփին նվիրեց ևս երկու որդի: Տարիներն անցնում էին: Հիսուսը տասը տարեկան էր: Մայրը նրան կարդալ ու գրել էր սովորեցնում: Իբրև Եգիպտոսի հպատակներ՝ մյուս երկու տղաները գնում էին եգիպտական դպրոց: Օտարերկրյա հպատակներին դպրոց չէին ընդունում: Հիսուսին նույնպես դպրոց չընդունեցին: Հիսուսը Եգիպտոսում չէր ծնված: Տասը տարեկանում նա ծանոթացավ մի հոգևորականի հետ, որը հմուտ հեթիմ էր: Գիտեր հիպնոսի նրբությունները, միաստվածություն էր քարոզում: Ուներ ընդամենը հինգ աշակերտ, որոնց սովորեցնում էր իր բոլոր գիտելիքները: Այդ աշակերտներից ամենաունակը և ըմբռնողը Հիսուսն էր: Նա սովորեց զանազան բույսերից պատրաստել դեղեր՝ քսուքներ՝ բորոտների համար, հեղուկներ՝ աչքերի հիվանդությունների համար: Ընկնավորներին և ցավագարներին բուժում էր հիպնոսի միջոցով: Ուսուցիչը բացատրում էր. «*Աշխարհում մի աստված կա, այն ալ՝ երկնքում: Մարդիկ պաշտում են կրակը, արևը, կենդանիներին, նույնիսկ խոզերին: Չէր քարոզներով պետք է համոզեք մարդկանց, որ աշխարհում մի աստված³⁶⁹ կա: Նա է սրեղծել աշխարհն ու մարդկանց: Չէր քարոզներով մարդկանց դարձի՛ բերեք: Չէր հավատքը ընդունողների ու հավատացողների հոգին մաքրելովում է իրենց գործած մեղքերից: Այնպես՝ արեք, որ մարդիկ հավատաս չեզ: Չէր սարքած դեղերով բուժե՛ք հիվանդներին»:*

Հիսուսը ուսուցչի մոտ սովորեց հինգ տարի: Այդ տարիների ընթացքում Հերովդես թագավորը մեռավ: Հովսեփն իր ընտանիքով վերադարձավ Հրեաստան, բայց չգնաց Երուսաղեմ, այլ հաստատվեց Նազարեթ քաղաքում: Հերովդեսի որդին դարձավ Հրեաստանի թա-

գավոր: Այդ ժամանակ Հիսուսը տասնհինգ տարեկան էր, ուներ հարուստ գիտելիքներ:

Հրեաների ամենամեծ տոնը Չատիկն էր, որը տոնում էին մեծ շուքով: Մարդիկ երկրի բոլոր ծայրերից գալիս էին Երուսաղեմ: Այդ տոնակատարությանը մասնակցելու համար Հովսեփը իր ընտանիքով եկավ Երուսաղեմ: Չատիկի շքերթը տևում է մի շաբաթ: Շքերթից հետո եկածները վերադառնում են իրենց բնակավայրերը: Հովսեփի ընտանիքը նույնպես վերադառնում է Նազարեթ, բայց ճանապարհին նկատում են, որ Հիսուսը չկա ու ստիպված վերադառնում են: Շատ փնտրելուց հետո գնում են տաճար³⁷⁰, տեսնում Հիսուսին ուսուցանելիս մի քանի սարկավազների, որոնք էլ զարմանում էին, թե այս տարիքում այդքան գիտելիքներ այս պատանուն որտեղից:

Մայրն ասաց. *«Ինչու՞ մեզ հետ չեկար րուն»*: *«Մայր, դու չգիտե՞ս, որ տաճարը իմ րունն է»*:

Այսպես անցնում էին տարիներ: Հիսուսը հիվանդներին էր բուժում: Քսան տարեկանում հեռացավ տնից ու սկսեց իր թափառական կյանքը: Քարոզում էր գյուղերում և ավաններում. *«Աստված միակն է երկնքում: Չեր հավատի Աստծո նկատմամբ կնաքրի չեր մեղքերը, սիրե՛ք իրար, մի՛ սրեք, մի՛ կոպտեք, մի՛ դավաճանեք, պահպանե՛ք չեր հոգու մաքրությունը, և դուք երջանիկ կապրեք»*:

Մի ավանում տեսավ երկու կույր մուրացկանների: Նայեց նրանց ճպոտ ու թարախակալված աչքերին: Պայուսակից, որ միշտ իր հետ էր, հանեց մի սրվակ, լաթը թրջեց սրվակի պարունակությամբ և լվաց երկու կույրերի աչքերը: Հետո քսուք քսեց նրանց աչքերին ու ասաց. *«Նսրե՛ք, չեռք չրաք»*: Մինչ այդ հավաքվեցին կանայք և տղամարդիկ, որոնք ճանաչում էին այդ կույրերին ու տեսան, որ այդ մարդը բուժում է նրանց: Հիսուսը նորից լվաց կույրերի աչքերն ու ասաց, որ բացեն կոպերը: Կույրերը բացեցին աչքերը ու բռռացին. *«Տեսնում ենք, բուժվեցինք»*: Նրանք ընկան ծնկների վրա ու երկրպագեցին Հիսուսին: Հիսուսը նրանց բարձրացրեց: *«Ինչ մի՛ երկրպագեք, երկրպագե՛ք նրան, ով երկնքում է: Հավատացե՛ք նրան, ով երկնքում է, և սուրբ հավատով ապրե՛ք»*: Հիսուսը մի մարդու տեսավ, որը երկու ոտքից կաղ էր: Այդ մարդը ծնկների ու թաթերի վրա սողում էր իր կողմը: *«Տե՛ր, իմ ալ ոտքե՛րը բուժի՛ր»*: Հիսուսը

շոշափեց նրա ոտքերը և տեսավ, որ երկու ոտքերը ծնկներից դուրս են ընկած: Նա կանչեց կույրերից մեկին, որ բավականին հաղթանդամ մարդ էր, ու ասաց. «*Անուր բռնի՛ր ուսերից*»: Ինքը, բռնելով ոտքերից, երկուսն էլ տեղը գցեց: Կաղը ցավից ուշաթափվեց: Մեկ ուրիշ սրվակ մոտեցրեց կաղի քթին: Կաղը ուշքի եկավ: «*Հանգստացի՛ր, չչարծվես*»: Հիսուսը տեսավ, որ ժողովուրդը շատացել է: Նայելով կաղին՝ հարցրեց. «*Անունդ ի՞նչ է*»: «*Սամվել*»: «*Սամվել, ելի՛ր ու քայլի՛ր*»: Սամվելը ելավ ոտքի ու քայլեց: Նորից ծունկի եկավ ու ասաց. «*Ժողովու՛րդ, ծունկի՛ եկեք այս սուրբ մարդու առաջ, որ ասրված է, թող բուժի կաղերին, կույրերին և ուրիշ հիվանդներին*»: Ժողովուրդը ծունկի եկավ և ձեռքերը երկինք բարձրացրեց: Հիսուսը նորից սկսեց քարոզել: Նա ասում էր ժողովրդին, որ գնան Հորդանան գետի ափերը, որտեղ մի սուրբ մարդ կա, որը գետի մաքուր սուրբ ջրով է մկրտում: Հիսուսը, ձեռքերը վերև բարձրացնելով, ասաց. «*Ով հավատում է Ասրծուն և սուրբ հոգուն, թող ինչ հեղ կրկնի այս աղոթքը*.

Հանուն Հօր և Որդույ և Հոգույն Սրբոյ.

Հայր մեր, որ յերկինս ես,

սուրբ եղիցի անուն Քո:

Եկեսցէ արքայութիւն Քո

Եղիցին կամք Քո, որպէս յերկինս և յերկրի:

Չհաց մեր հանապազորդ փոռ մեզ այսօր:

Եվ թող մեզ զպարտիս մեր,

Որպէս և մեք թողումք մերոնց պարտապանաց

Եվ մի՛ փանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկես՝ զմեզ ի չարէն, զի Քո է արքայութիւն, զօրութիւն և փառք յավիտեանս. ամէն»:

«*Փառք երկնային Ասրծուն*» ասելով՝ ցրվեցին: Հիսուսը վերջում ասաց. «*Գնացե՛ք ու չե՛ր սուրբ հավատով ապրե՛ք: Կույրե՛ր, չե՛ր աչքերը մաքու՛ր պահե՛ք, ամեն առավոտ զուլալ ջրով լվացե՛ք*»: Այս բազմության մեջ կային ծպտված հրեա հոգևորականներ և փարիսեցիներ, որոնց դուր չեկավ Քրիստոսի քարոզը, որը հակասում էր հրեական օրենքներին: Սրանք այս մասին հայտնեցին հրեա վերադասներին: Պատմեցին կույրերին բուժելու մասին, որոնք այս քանի

տարի էր՝ չէին տեսնում ու լույս աշխարհը տեսան: Պատմեցին կաղի ոտքերը բուժելու մասին, թե ինչպես Հիսուսը հրամայեց, որ ելնի ու քայլի, ու կաղը, ելնելով ոտքի, քայլեց, կարծես ոչինչ չէր պատահել: «Ձերբակալե՞ք ու բերե՞ք այստեղ»: «Չի կարելի, բազմությունը չի թողնի»:

Հիսուսը գնաց դեպի Մեռյալ ծովը: Ծովում կային տեղեր, որտեղ ջուրը մինչև ծնկները չէր հասնում: Շոգ էր, մտավ ջուրն ու քայլեց, մոտ հինգ հարյուր քայլ արեց, տեսավ, որ ձկնորսները նստած են: Ձկնորսները նայում էին ու գլուխները շարժում.«Այս մարդը ջրի վրայով է քայլում»:

Բարևեց, մոտ տասը հոգի էին, նստեց նրանց մոտ և հարցրեց: «Շատ փխուր ու փրփուր եք նստած: Ի՞նչ է պատահել»: «Գործներս լավ չէ, այսօր ջուկ չկա»: Հիսուսը ապրել էր Ալեքսանդրիայում, որտեղ միառժամանակ ձկնորսություն էր արել, ձկան շարժումը գիտեր: Ծովով եկած ժամանակ նա նկատել էր, որ մոտակա խոր տեղում ձկները խաղում են: «Եկեք մեկ էլ փորձեք, ես ալ կմիանամ»: «Հովհաննես, Փրիլպոս, նավակը ջուրը հրեք»: Հիսուսը ցույց տվեց այն խոր տեղը, որտեղ էլ գցեցին ուռկանը: Գցելուց հետո սկսեցին քաշել: Շատ ծանր էր գալիս: Նայում էին, թե անձանոթը ինչ հմուտ էր իրենց հետ քաշում ուռկանը: Ուռկանի մեջ առատ ձուկ կար: Ուռկանը քաշելուց հետո հոգնած նստեցին հանգստանալու: Պետրոսը, որ հրաման էր արձակում, թավ մորուք ուներ ու տարիքով ամենամեծն էր: Նայելով Հիսուսին՝ հարցրեց.«Դու ի՞նչ մարդ ես, ջրի վրայով ես քայլում, չկների շարժումներից ես հասկանում»: Այդ ժամանակ այդպիսի մարդկանց Աստված էին կոչում: «Ես Աստված չեմ, Աստված երկնքում է: Նա է սրեղծել փեղեկերքը, աշխարհը և մարդկանց: Հավատարացե՞ք երկնային Աստծուն: Նա ձեզ երջանիկ կյանք կրա: Ձեր հոգիներին փրկություն կպարգևի»: «Հիմա անոթի ենք, ջուկ խորովենք, ուրենք»: Հովհաննեսը, որ ամենեն երիտասարդն էր ու սիրունատեսը, հացի մատակարարն էր, ասաց, որ հացը չի հերիքի: «Հովհաննես, հավատու՞մ ես երկնային Աստծուն»: «Այո՛, ուսուցի՛չ»: «Չուկը մարդի՛ր, խորովի՛ր: Հացը կհերիքի»: Մինչ այդ Հիսուսը իր մոտի երեք բողոքյաները³⁷¹ տեղավորեց Հովհաննեսի հացի պայուսակի տակ: Նստան ճաշի: Հովհաննեսը բերեց երեք բո-

դորչա, բրթեց, լցրեց սփռոցի վրա: «Ա՞յս է հացը,-ասաց Հիսուսը,- գնա՛, գնա՛, լա՛վ նայիր»: «Ուսուցի՛չ, ալ չկա»: «Որ ասում եմ, գնա՛, լա՛վ նայիր»: Գնաց, ո՛վ զարմանք, պայուսակի տակ երեք ալ բողորչա կար, բերեց: «Դու՛, որ երկնային Աստուծուն հավատարացիր, Աստուծո՞ւ քեզ հաց ուղարկեց: Հիմա նստենք, ուտենք»: Հիսուսը «Հայր մերը» ասաց.«...Փառք քեզ, Աստուծո՛ւ, որ այսօր ալ մեզ կշտարցիր,-եղավ ուրբի և շարունակեց,- ով հավատաց երկնային Աստուծուն, թող հեղուկ ինձ»: Հինգը հետևեցին Քրիստոսին, նրանց ճանապարհին միացան յոթ ուրիշ աշակերտներ, որոնք հետագայում կոչվեցին առաքյալներ: Առաքյալներից գատ Հիսուսն ուներ յոթանասուներկու աշակերտ, որոնց սովորեցնում էր իր գիտելիքները, քարոզում երկնային Աստծո մասին: Տասներկու առաքյալների անուններն էին³⁷² Սիմոն, որ կոչվեց Պետրոս, նրա եղբայր Անդրեասը³⁷³, Չեբեդեոսի որդի Հակոբոսը և նրա եղբայր Հովհաննեսը³⁷⁴, Փիլիպոսը և Բարդուղիմեոսը³⁷⁵, Մատթեոսը, որ մաքսավոր էր, Հակոբոսի որդի Հուդան³⁷⁶, որը Թադևոս կոչվեց³⁷⁷, Սիմոն Կանանացի, Թովմաս, Ալփեոսի որդի Հակոբոսը և Հուդա Իսկարիովտացին, որը մատնեց Հիսուսին: Հիսուսի մահից հետո դավաճան Հուդայի փոխարեն Աստուծո՞ւ ընտրում է Պողոսին³⁷⁸:

Հովհաննեսը շատ էր սիրում սպիտակ աղավնիներ, որոնք հետևում էին նրան և Հիսուսին: Աղավնիները հաճախ նստում էին Հիսուսի ուտերին, ձեռքերին, գլխին: Այսպես նրանք թափառում էին, բուժում մարդկանց և միևնույն ժամանակ քարոզում:

Մի ավանում նրանց մոտեցավ մի կին՝ տասը տարեկան տղայի հետ: «Ուսուցի՛չ, օգնի՛ր որդուս, րասը րարեկան է, չի խոսում»: «Հավատու՞մ ես երկնային Աստուծուն և Սուրբ հոգուն»: Կինը ծունկի եկավ, ձեռքերը վեր բարձրացրեց, «Հայր մերը» ասաց: «Հայր մերը» շատ էր տարածվել հավատացյալների մեջ: Հիսուսը մոտեցավ, մայեց երեխայի աչքերին: Երեխան մնաց սառած, նա նայում էր Հիսուսի աչքերին: «Անունդ ի՞նչ է»: Երեխան տատանվեց, կակազեց.«Հակոբոս»: «Ըսնի՞ր րարեկան ես»: «Տասը»: «Հավատա՞ ինձ և խոսի՛ր, ասա՛ մայրի՛ն, ես խոսում եմ»: Տղան չէր կարող հեռացնել հայացքը Հիսուսից: Նա կակազելով ասաց.«Մայրի՛ն, ես խոսում եմ»: Երկրորդ անգամ ավելի ուժեղ ասաց.«Մայրի՛ն, ես խոսում եմ, ես խո-

սում եմ»: Ժողովուրդը քար կտրած նայում էր այս հրաշքին, որ կատարվեց իր աչքի առաջ: Տղայի երկրորդ կանչից հետո բազմությունը ընկավ ծունկի, ձեռքերը վեր բարձրացրեց և սկսեց «Հայր մերը» երգել: Այս տեսնելով՝ փարիսեցիները ուզեցին բռնել Հիսուսին, բայց Հիսուսը, խառնվելով աշակերտներին և բազմությանը, հեռացավ: Գնացին դեպի Հորդանան գետը և տեսան, որ Հովհաննես Սկրտիչը մկրտում է մարդկանց: Հիսուսը և իր աշակերտները չէին մկրտված: Նրանք հերթով մկրտվեցին: Երբ հերթը հասավ Հիսուսին, Հովհաննես Սկրտիչը ձեռքերը վեր բարձրացրեց և ասաց. «*Փա՛ռք քեզ, Աստված, որ քո գառնին եմ մկրտում*»: Գետից թատվ ջուր վերցրեց, որ մկրտի Հիսուս Բրիստոսին: Հովհաննեսի աղավնիները թռչում էին երկնքում: Դրանցից մեկը եկավ ու նստեց Հիսուսի գլխին: Հովհաննես Սկրտիչը երկրորդ անգամ փառք տվեց, որ Աստծո ուղարկած աղավնին եկավ իջավ Հիսուսի գլխին:

Բրիստոսի առաքյալներից միայն փոքրը՝ Հովհաննեսը, չէր ամուսնացած: Բոլորն ալ ունեին իրենց ընտանիքները: Արդեն բոլորը ցրվեցին իրենց տները: Հիսուսը, Հովհաննեսին վերցնելով, գնաց իր վարձած բնակարանը: Հովհաննեսը միայն հացամատակարար չէր, նա միևնույն ժամանակ ուսուցչի դեղորայքի պայուսակն էր կրում:

Անցնում էին տարիներ: Հիսուսի համբավը տարածվեց ամբողջ Հրեաստանում և հարևան երկրներում, իսկ հրեա հոգևորականների և փարիսեցիների կողմից հալածանքները ավելի էին սաստկանում: Մի դեպք պատահեց, որը ցնցեց ներկա ամբողջ ժողովրդին: Մի փոքր քաղաքում Հիսուսը մի կին տեսավ, որը փախչում էր մի խումբ մարդկանց հալածանքներից: Նա մի պատի հասավ ու հենվեց, հագիվ էր շնչում: Հիսուսը նայեց մարդկանց, որոնք, մի-մի քար առած, հասան այնտեղ, որտեղ կանգնած էր կինը: Հիսուսը, մի քար առած, կանգնեց կնոջ կողքին: Աշակերտները տեսան և հասկացան իրենց ուսուցչի միտքը: Աշակերտներն էլ, մի-մի քար առած, խառնվեցին մարդկանց: Հիսուսը այնպես նայեց մարդկանց, որ մարդիկ մի քայլ հետ գնացին: «*Ի՞նչ է արել այս կինը, որ ուզում էք քարկոծել*»: «*Անպատիվ է, շնացել է, պետք է մեռնի*»: Հիսուսը մի պահ տատանվեց, նայեց մարդկանց սոսկալի դեմքերին: Նրանք ձեռքերում ամուր սեղ-

մեկ էին քարերը: Եթե Հիսուսը մի քիչ տատանվեր, կինը կորած էր: «Ով կյանքում մեղք չի գործել, թող առաջինը քարը գցի կնոջ վրա»: Եվ ինքը քարը գցեց գետնին, հետո առաքյալները գցեցին: Մարդիկ մեկ առ մեկ քարերը թափեցին ու հեռացան: Աշակերտներն էլ հեռացան, մնացին երկուսով: «Անունդ ի՞նչ է»: «Մարիա Մագդալենա»³⁷⁹: Մարիան ծունկի եկավ Քրիստոսի առաջ, գրկեց ոտքերը, Քրիստոսը բռնեց նրա բաց ուսերից, բարձրացրեց ու նայեց աչքերին՝ այնքա՛ն բարի, այնքա՛ն գեղեցիկ: Կինն ուներ փխրուն և նուրբ մարմին: Ինչպե՞ս էր շեղվել ուղիղ ճանապարհից, ընկել հորձանքի մեջ, որի համար նրան դատապարտել էին մահվան: Մի ուշացում, և այս չքնաղ էակը սպանված կլիներ: «Մարիա, տուն գնա, Աստված քեզ հետ»: «Ու՞ր գնամ առանց քեզ, պիտի գնանք մեր տուն, քույրս՝ Մարթան, եղբայրս՝ Ղազարոսը, քեզ շնորհակալություն պիտի հայտնեն»: Բռնելով Հիսուսի ձեռքից՝ տարավ իր հետ: Աշակերտներն ալ հետևեցին նրան: Մտան մի հիանալի այգի, որտեղ շարքերով աճում էին նարնջի, մանդարինի ծառեր, թզենիներ և ուրիշ ծառեր: Ծաղիկների բուրմունքից մարդու գլուխը պտտվում էր: Խմբին դիմավորեցին Մարթան և Ղազարոսը: Աշակերտները նստեցին այգում: Հիսուսը Մարիայի հետ մտավ պատշգամբ: Բոլորին հյուրասիրեցին ուտելիքներով և մրգերով: Ուշ ատեն ցրվան: Մագդալենան Հիսուսին չթողեց, որ երթա: Հիսուսը Հովհաննեսին ճանապարհի դրեց, ինքը մնաց: Այդպես Հիսուսը կապվեց Մարիայի հետ: Շաբաթը մի քանի անգամ գալիս էր տեսության: Մի այցելության ժամանակ, Ղազարոսի հետ այգում նստած, զրուցում էին: Ղազարոսը իրեն վատ զգաց, ուշաթափվեց: Հիսուսը, բռնելով զարկերակը, սեղմեց: Ղազարոսը ցավից ուշքի եկավ: «Ղազարո՛ս, քեզ ի՞նչ եղավ»: «Մեկ-մեկ այսպես պատահում է: Տնեցիք բա՛ն չգիտեն»: «Քեզ հանգիստ պահիր, ես քեզ կբուժեմ: Մարիա, ես մի քանի օրով պիտի գնամ Երուսաղեմ, եթե Ղազարոսի հետ բա՛ն պատահի, չթաղեք մինչև իմ գալը»:

Նույն օրը Հիսուսը մի քանի աշակերտների հետ գնաց Երուսաղեմ՝ հանդիպելու իր մյուս աշակերտներին, որոնք արդեն մեծացել և քարոզում էին Հիսուսի ուսմունքը: Մի մասը ցրվել էր աշխարհով մեկ: Հիսուսը պետք է հանդիպեր իր համակիրների հետ, որոնք Երուսաղեմում շատ էին: Գնաց տաճար³⁸⁰, որը վաճառականները վերածել

էին շուկայի: Խարազանով բոլորին քշեց: Նա իր հավատացյալներով պատարագ մատուցեց: Փարիսեցիները ուզեցին բռնել, բայց ժողովուրդը քշեց նրանց: Գնացին, բողոքեցին հրեաների գլխավոր խախսամին (հրեաների բարձրագույն հոգևորականին): Միասին որոշեցին բռնել և մահվան դատապարտել:

Հիսուսը նորից խույս տվեց հալածողներին: Իրիկունը այցելեց մորը. Հովսեփն արդեն մահացած էր, տատ, պապ չկային: Մայրը շատ զարմացավ, որ տղան Երուսաղեմում է, երբ նրան փնտրում էին փարիսեցիները: «*Մա՛յր, մի՛ վախնա, եթե Աստված որոշել է, որ պիտի մահվան դատապարտվիմ և խաչվիմ, դա նրա կամքն է, ոչ ոք չի կարող մարդու ճակատագիրը փոխել: Հանգի՛սր մնա*»: «*Որդի՛, լավ է, որ եկար: Այս գիշեր մեր ազգականների տանը հարսանիք կա: Դու էլ կգաս ինչ հետք*»: Հարսանիքին մասնակցում էին երիտասարդներն ու ծերերը, արարողությունը տևում էր երկու օր: Կաղնու փոքր տակառները լեփ-լեցուն էին թունդ գինիով: Հարսանքավորները խմում էին փարչերով, բռռում էին, գոչում, պարում, ուտում: Շունը տերը չէր ճանաչում: Հիսուսը իր մի առաքյալի հետ³⁸¹ մասնակցում էր կերուխումին: Երկրորդ օրը պարզվեց, որ գինին վերջացել է: Հարսանքավորները գռռում-գոչում էին, որ գինի բերեն: Որտեղի՞ց: Մարիամը եկավ Հիսուսի մոտ.«*Որդի՛, մի քան արա*»: «*Այ կի՛ն, ի՞նչ ասեն*»: Բայց կարգադրեց աշակերտներին, որ մինչ այդ գինիով լցված դատարկ տակառները մինչև կեսը լցնեն ջրով ու կես ժամ շարժեն, ապա նոր հարսանքավորներին մատուցեն: Հարսանքավորները արդեն հարբած էին, նրանք հաճույքով սկսեցին խմել ու գովաբանել, որ այս գինին ավելի լավն է ու համեղ, իսկ երբ իմացան, որ գինի սարքողը Հիսուս Քրիստոսն է, սկսեցին «*Հայր մերը*» երգել: Հարսանիքին մասնակցում էին փարիսեցիները, որոնց դուր չեկավ այս հակակրոնական երգը: Սկսվեց տուրուրմբոցը: Հիսուսը, վերցնելով մորը, առաքյալի հետ հեռացավ: Մյուս առավոտ շատ ջերմ բաժանվեց մորից ու հեռացավ Երուսաղեմից: Նա գնաց Մարիա Մագդալենայի մոտ, որը, արցունքներն աչքերին, դիմավորեց նրան: «*Մարի՛ս, ի՞նչ կա*»: «*Ղազարոսը մեռավ*»: «*Որտե՞ղ է*»: «*Դամբարանում*»: Մի ակնթարթում արդեն Ղազարոսի դագաղի մոտ էր: Ղազարոսը շատ սիրուն էր պատանված: Հիսուսը քանդեց պատանքը:

Ղազարոսը մեռած չէր: Մինչ այդ արդեն պարտեզի առաջ հավաքվել էին կանայք ու երեխաներ: Հիսուսը կարողացավ Ղազարոսին ուշքի բերել: Ղազարոսը ելավ, նստեց, նայեց չորս կողմը, տեսավ Հիսուսին, փաթաթվեց վզին ու սկսեց հեկեկալ: Ուշքի գալուց հետո առաջին խոսքը եղավ. «*Ինչու՞ ուշացար*»: «*Չեմ ուշացել: Դու հիմա քեզ լս՞վ ես զգում*»: «*Ջուր եմ ուզում*»: Մարիան, դամբարանի առաջ կանգնած, արցունքակալված աչքերով նայում էր Ղազարոսին: «*Մարի՛ս, ջուր քեր*»: Ջուրը խմելուց հետո ոտքի կանգնեց: «*Քայլել կարո՞ղ ես*»: Մի քանի քայլ արեց, բայց իրեն շատ թույլ էր զգում ու նստեց: Մարիան վազեց դուրս ու բռնաց. «*Ղազարոսը ողջ է: Հիսուսը փրկեց նրան*»: Կանայք ծունկի եկան՝ «Հայր մերը» երգելով: Փարիսեցիները Հիսուսին բռնելու համար պաշարեցին պարտեզը և տունը, բայց մի դեպք պատահեց: Մի երևելի անձնավորություն անարգել մտավ պարտեզ: «*Հիսուս Զրիսարոսը այստե՞ղ է*»: Հիսուսը ընդառաջ ելավ. «*Ես եմ Հիսուս Զրիսարոսը*»: «*Աղջիկս անհուսալի հիվանդ է, փրկե՛ք նրան*»: «*Տեսնու՞մ ես, բնակարանը պաշարված է, ինչ ուզում եմ ձերբակալել*»: «*Գնա՛նք*»: Հիսուսը հեռևեց մարդուն: Փարիսեցիները մի կողմ քաշվեցին: Իրենք շարունակեցին առաջ գնալ: «*Կնե՛րես, պարո՛ն, աղջիկդ ի՞նչ հիվանդ է*»: «*Չգիտեմ, բժիշկները ոչինչ չեն հասկանում, հեքիմները՝ նույնպես: Օրեցօր նիհարում, դեղնում է*»: Հիսուսը այստեղ մտածմունքի մեջ ընկավ. «*Բժիշկները ոչինչ չեն հասկանում, հեքիմները բուժել չեն կարող, ես ի՞նչ կարող եմ անել*»: Այսպես շարունակեցին ճանապարհը: Հասան մի հոյակապ ապարանքի: Հիսուսը նկատեց մի շատ կոկիկ հագնված հռոմեացի սպայի, որ տխուր-տրտում ման էր գալիս փողոցում: Տեսնելով նրանց՝ ուզեց նրանց ճանապարհը կտրել: Հիսուսը մտածեց. «*Այս հռոմեացի սպան մի կապ չունի այս աղջկա հետ*»: Առջևից անցած ժամանակ Հիսուսը, որ գիտեր հունարեն³⁸², ասաց. «*Դու՛, այստեղ սպասի՛ր*»: Հռոմեացին զարմացավ, իսկ աղջկա հայրը, կլանված նրա հիվանդությամբ, ոչինչ չնկատեց: Հիսուսին դիմավորեց քառասուն տարեկան մի արտակարգ գեղեցիկ կին՝ գտարյուն իտալուհի: Ծունկի գալով Հիսուսի առաջ՝ ձեռքը համբուրեց: Հիսուսը լատիներեն ասաց. «*Բարձրացե՛ք, փկկի՛ն, ի՞նչ եք անում*»: «*Հիսու՛ս, փրկե՛ք աղջկաս*»: «*Հավատացե՛ք Աստծուն, և ձեր*

հավատքը կիրկի շեր աղջկան: Առաջնորդե՛ք ինձ հիվանդի մոտ»: Մտան մի փոքրիկ սենյակ, որը շատ հիանալի էր կահավորված և առատ լուսավորվում էր շատ մեծ պատուհաններով: Մի փոքր մահճակալի վրա հանգչում էր մի գունատ աղջնակ: Հիսուսը մոտեցավ, բռնեց ձեռքը: Աղջիկը շատ էր նման մորը, ուներ առատ, շագանակագույն վարսեր և փայլուն աչքեր՝ երկար թարթիչների տակ: «*Տիկի՛ն, մեզ առանձին թողե՛ք»:* Տիկնոջ դուրս գալուց հետո հարցրեց. «*Ամուսնո՞րն է՞:*»: «*Շուշանիկ»:* «*Քանի՞ տարեկան ես»:* «*Տասնութ»:* «*Շուշանիկ, ճիշտ ասա, դու սիրու՞մ ես ինչ-որ մեկին»:* Շուշանիկը լաց եղավ: «*Այն երիտասարդին, որը դրսում սպասում է»:* Շուշանիկը գլուխը շուռ տվեց հակառակ կողմը ու սկսեց ավելի բարձր հեկեկալ: Հիսուսը գնաց տիկնոջ հյուրասենյակը, որը ձևավորված էր մեծ ճաշակով և հռոմեական ոճով: Տիկինը նստած էր մի հոյակապ բազկաթոռի վրա, տեսնելով Հիսուսին՝ նա ընդառաջ գնաց: «*Ի՞նչն է աղջկաս հիվանդության պատճառը: Ո՞չ մի բժիշկ բան չհասկացավ»:* «*Հանգի՛սր եղիր, տիկի՛ն, ու՞ր է շեր ամուսինը»:* «*Նա գործով գնաց, կգա մեկ ժամից, ասաց, որ իրեն սպասե՛ք»:* «*Տիկի՛ն, դուք չե՞ք հասկանում շեր աղջկա հիվանդության պատճառը... Նա սիրում է այն երիտասարդ հռոմեացուն»:* «*Մի՛ ասե՛ք, ամուսինս կասկածում է, բայց լսել չի ուզում այդ սիրո մասին»:* «*Այդ դեպքում ինչու՞ է նա ամուսնացել Ձեզ հետ»:* «*Դուք սխալվում եք, պարո՛ն»:* «*Ո՞չ, տիկի՛ն, դուք իրեա չեք, դուք իրալուսի էք»:* Այս խոսակցությունը երկուստեք տարվում էր հունարեն: «*Դա հին պատմություն է: Ամուսինս եկավ Հռոմ իբրև պարզամտվոր, որտեղ մենք հանդիպեցինք իրար: Մեր հանդիպումը վերջացավ ամուսնությանը: Ես հեյրենցի ամուսնուս»:*

«*Ձեր աղջիկը դատարարված է մահվան: Նա կմահանա մի երկու ամիս հետո, եթե չլռեսի իր սիրեցյալին: Թախծախորից կմեռնի»:* Տիկինը արտասովեց: «*Արրասովելով ոչինչ չես փոխի, պեղք է արագ գործել: Այս րուպեին երիտասարդը փողոցում սպասում է ինձ: Ես Ձեր ամուսնու խոսքերից հասկացա, թե Ձեր աղջկա հիվանդությունը ինչից է: Երբ ես տեսա այդ երիտասարդին՝ տխուր-տրտալից փողոցում կանգնած, նրան հասկացրի, որ ինձ սպասի: Ես ամեն ինչ կանեմ, որ Շուշանիկին փրկեմ»:* «*Ամուսնուս չես կարող*

համոզել: Առաջին խոսքից քեզ դուրս կանի»: «Բայց նա շար է սիրում Շուշանիկին»: «Շուշանիկի մահը նրա մահն էլ է, էլ ինչ համար չեմ խոսում: Աշխարհում բացի Շուշանիկից ոչ ոք չունեմ»: «Ես առաջարկում եմ, որ Շուշանիկը մի թուղթով փեսուհի իր սիրեցյալին: Երկուսն էլ փառապում են սիրուց: Հուսամ, որ այդ երիտասարդը խաբերա չէ: Խաբերան ամբողջ օրը չէր գա ու թափառի այս ապարանքի շուրջ»: «Ի՞նչ ես ասում, անկարելի է»: «Աշխարհում անկարելի բան չկա»: Տիկինը ընկավ մտածմունքի մեջ: «Գնա՛ պարտեզ, հեղուկ դնից քեր»: «Ամուսինս դեռ կես ժամ կուշանա: Ես Շուշանիկին կպատրաստեմ»:

Հինգ թույն հետո Հիսուսը երիտասարդի հետ արդեն հյուրասենյակում էր: Երիտասարդը ծնկի եկավ տիկնոջ առջ, համբուրեց ձեռքը և ասաց. «Մայր, փրկի՛ր մեզ: Մենք երկուսս ալ կմեռնինք սիրուց»: Երիտասարդի աչքերը լցվեցին արտասուքով, որը թրջեց տիկնոջ ձեռքը: «Ի՞նչ եք անում, երիտասարդ, բարձրացե՛ք, Աստված ուղարկեց Հիսուսին, որ չեզ փրկի»:

Հիսուսը երիտասարդին տարավ Շուշանիկի սենյակը: Վարագույրները ձգված էին, սենյակը լույսի ներքո խորհրդավոր տեսք էր ստացել: Շուշանիկը նստած էր մահճակալին, գունատ էր, միայն աչքերն էին փայլում: Երիտասարդը ծունկի եկավ Շուշանիկի մահճակալի մոտ ու բռնելով նրա ձեռքը՝ մոտեցրեց շուրթերին: Հիսուսը նրանց առանձին թողեց: Մի տասը թույն հետո Հիսուսը կանչեց. «Երիտասարդ, գնանք, ուշ է»: Երիտասարդը դանդաղ քայլերով հետևեց Հիսուսին: Փողոց դուրս գալով՝ հարցրեց. «Անունդ ինչ է՞»: «Ռոսին³⁸³»: «Ես ամեն ինչ կանեմ, որ դուք երջանիկ լինեք: Մի քանի թուղթից Շուշանիկի հայրը կգա: Տեսնենք, թե ինչպես պիտի համոզենք: Հինա ասա՛՝ որտեղ ես ապրում ու գնա»: Ռոսինոն ասաց իր տան տեղն ու գնաց:

Հիսուսը վերադարձավ հյուրասենյակ: Տիկինը սենյակում չէր, նստեց բազկաթոռին ու ընկավ մտածմունքի մեջ: Երբ տիկինը մտավ սենյակ, Հիսուսը ցնցվեց: «Քեզ ի՞նչ եղավ»: «Ոչինչ, փրկի՛ն, երիտասարդների փրկության մի մասը արեցինք, մնաց մյուս մասը: Ինչպե՞ս պիտի համոզենք Ձեր կամակոր ամուսնուն»: «Այդպես մի ասեք, նա շար խղճով մարդ է: Ահա՛, նա եկավ»: Ամուսինը մտավ

հյուրասենյակ, նայեց ու տեսավ, որ երկուսն էլ մտածմունքի մեջ են ընկած: «*Օլիմպիա, ինչպե՞ս է մեր աղջիկը: Պարոնը մի բան հասկացա՞վ նրա հիվանդությունից*»: «*Լիովին, նա հիվանդ չէ, այլ փառասպում է սիրուց*»: «*Միրու՞ց, ի՞նչ սեր: Վա՛յ ինչ: Կասկածներս իրականացան*», - ու նստելով ընկավ մտածմունքի մեջ: «*Հեռացե՛ք*»: «*Ո՛չ, ես չեմ հեռանա, մինչև այս խնդիրը լուծում չստանա*»: «*Ես ծառաների միջոցով քեզ դուրս կշարքեմ*»: «*Դրանով դու քո աղջկան մահվան կրպակարարես: Արդեն նա դադարարարված է: Միայն հրաշքը կփրկի նրան*»: Շատ դանդաղ Շուշանիկը մտավ հյուրասենյակ: Հայրը զարմացավ, որ Շուշանիկին ոտքի վրա տեսավ: Շուշանիկը ծունկի եկավ հոր առաջ: «*Հայր, փրկի՛ր մեզ, մենք երկուսս ալ կմեռնինք*»: Հայրը բռնեց Շուշանիկի գլուխը, սեղմեց կրծքին, համբուրեց: Չորսն ալ արտասովեցին: Հիտուր ելավ, գնաց դեպի դուռը: «*Թշվառակա՛ն, ու՞ր ես գնում*»: «*Գնում եմ փաճար³⁸⁴, աղոթելու, որ Աստված քեզ խելքի բերի*»: «*Նսրի՛ր, հեյրո կաղոթես*»: «*Ի՞նչ ես առաջարկում*»: «*Գնանք մի առանձին սենյակ*»: Մտան մի լուսավոր սենյակ, որտեղ ճաշելու համար սեղան էր պատրաստված: Նստեցին ճաշելու: Դրված էին հիանալի խմիչքներ, անուշեղեն, ճաշատեսակներ: «*Իմ պաշտոնը թույլ չի տալիս աղջկաս ամուսնացնել հռոմեացու հետ: Դա անկարելի է, պետք է ուրիշ բան մտածել*»: «*Շուշանիկին մոր հետ կողարկես Հռոմ³⁸⁵: Երիտասարդն էլ կերթա այնտեղ, կամուսնանան, մի փարի հետո կվերադառնան, ու ամեն ինչ կհարթվի*»: «*Վար միտք չէ: Կինս իրալուի է*»: «*Գիտեմ*»: «*Նա՞ հայրնեց*»: «*Նա պնդում էր, որ հրեա է, ես կռահեցի: Նա պարմեց Չեր՝ Հռոմ այցելության, չեր հանդիպման և ամուսնության մասին*»: Միաժամանակ խոսելուց հետո եկան այն եզրակացության, որ ուրիշ ելք չկա, ու պետք է տիկնոջ համաձայնությունը: Անցան հյուրասենյակ: Հիտուր բացատրեց որոշումը: «*Եթե ամուսինս համաձայնի, ես մեր աղջկա համար ամեն ինչ կգոհաբերեմ*»: Մնում էր երիտասարդի համաձայնությունը: «*Ես հանձն կառնեմ ու կլուծեմ այդ հարցը*»: Հիտուր բաժանվեց ամուսիններից: Ելավ փողոց: Փողոցում նրան էին սպասում առաքյալները: Միասին գնացին դեպի գորանոց: «*Դուք այստեղ սպասե՛ք, ես հիմա կգամ*»: Նա մտնեցավ գորանոցի դռանը, սակայն Ռոսինոյին կանչելու հարկ չեղավ: Նա

ինքը եկավ, գնացին ու մի փոքր պուրակում նստեցին: Հիսուսն ասաց. «*Ես խոսել եմ Շուշանիկի մոր հետ, որ գնաք Հռոմ և այնտեղ ամուսնանաք*»: «*Ես այսօր կդիմեմ, որ ինչ ազատեն պաշտոնիցս*»: Այսպես Հիսուսը ստույգ մահից փրկեց երկու շատ երիտասարդ սիրեցյալներին: Մի շաբաթ հետո Շուշանիկը իր մոր և Ռոսինոյի հետ հեռացավ Հրեաստանից և ուղևորվեց դեպի Հռոմ:

*
* *
*

Անցան ամիսներ, առաջվա նման իր տասներկու աշակերտների հետ նա թափառում էր ամբողջ Հրեաստանով մեկ և քարոզում, որ մարդիկ սիրեն իրար: Նա զանազան հիվանդություններ էր բուժում, բայց հալածանքները ավելի էին սաստկանում: Փարիսեցի հոգևորականները ուզում էին բռնել և մահվան դատապարտել նրան, բայց Հիսուսը խույս էր տալիս: Այն զինվորները, որոնց հրաման էր տրված բռնել Հիսուսին, չէին ճանաչում նրան: Բոլորն էլ բարձրահասակ էին և մորուքով: Պետք է աշակերտներից մեկին կաշառեին, որ ցույց տար նրան: Այդպիսին գտնվեց: Անունը Հուդա Իսկարեովտացի էր: Նա էր Հիսուսի գանձապահը:

Էլի օրեր ու ամիսներ անցան: Հիսուսը գլխի ընկավ, որ առաքյալներից մեկը իրեն դավաճանելու է: Նա սկսեց չվստահել Հուդային: Վերջերս Հուդան շատ էր փոխվել. քիչ էր խոսում, Հիսուսի հայացքից խույս էր տալիս: Մի օր հայտնվեց Շուշանիկի հայրը: Հանդիպումը երկար չտևեց: Նա հայտնեց, որ գնում է Հռոմ, որ չի կարող դիմանալ կարոտին: Նա գիտեր, որ Հիսուսը ոչ մի դեպքում փող չի վերցնի, բայց առաջարկեց բոլորին հետևել իրեն: Նա տարավ Հիսուսին և նրա հետևորդներին մի ուրիշ փոքր պարտեզով ապարանք և ասաց. «*Այս բնակարանը հարկացնում եմ ձեզ: Այստեղ կհավաքվեք*»: Նա հետաքրքրվեց և հասկացավ, որ Հուդայից հետո փոքր Հովհաննեսն է գանձապահը: Մի կլորիկ գումար դրեց պայուսակի մեջ: Տան մարագը լիքն էր ամեն տեսակ մրգերով: «*Այս մթերքը մինչև իմ գալը կօգտագործեք, որ չփչանա, այնպես որ ձեզ եմ հանձնում*»: Հիսուսը առարկեց, բայց պարոնը չուզեց ոչինչ լսել: Շատ ջերմ բաժանվեցին: Հիսուսը սրտագին բարևներ ուղարկեց Օլիմպիային, Շուշանիկին և Ռոսինոյին: Պարոնը գնաց Հռոմ:

Փոքր Հովհաննեսը պայուսակի մեջ գտավ գումարը ու ցույց տվեց Հիսուսին: Հիսուսը շատ բարկացավ: «Ինչու՞ վերցրիր»: «Պարոնը պայուսակի մեջ էր դրել»: «Կբաժանենք աղքատներին»: Հուդան առարկեց: «Կբաժանենք մեր մեջ»: Հիսուսի ասածը վերջնական էր:

Անցնում էին ամիսներ: Երկար ժամանակ Մարիային չէր այցելել: Նա առանձին գնաց այն կողմերը ու այցելեց Մարիային: Տնեցիք բոլորը ողջ առողջ էին. Ղազարոսը իրեն լավ էր զգում: Մի շաբաթից ավել մնալուց հետո բոլորը եկան Երուսաղեմ: Հիսուսի համախոհները նախագոյացրին, որ հալածանքները սաստկացել են, և ամեն տեղ նրան են փնտրում: Հիսուսը զգում էր, որ իր վերջին օրերն են:

Մի գիշեր նա բոլորին հավաքեց ճաշկերույթի: Աղոթքից հետո սկսեցին ճաշել: Հիսուսը անտրամադիր էր: Պետրոսը, որ Հիսուսի մտերիմն էր և տարիքով ամենամեծը, հարցրեց. «Ուսուցի՛չ, անիրաւմադիր ես»: «Այո՛, այս ճաշկերույթը վերջինն է, որ ես չեզ հեղ եմ: Չեզանից մեկը ինչ պիտի հանչնի իմ թշնամիներին»: Բոլորը նայեցին իրար: Պետրոսը ելավ ոտքի: «Այդ ե՞ս եմ»: «Ո՛չ, ո՛չ, այս հացի պատարը ում տամ, նա է»: Նա պատարը թաթախեց ճաշի մեջ ու տվեց Հուդային: Հուդան վրդովված թողեց հեռացավ: Պետրոսը խոսեց. «Ուսուցի՛չ, մենք քեզ կպաշտպանենք»: Հիսուսը խնդաց: «Պետրոս՛, աքլորը մինչև երեք անգամ կանչի, դու ինչ կուրանաս երեք անգամ»:

Հուդան երեսուն արծաթե դրամով հանձն առավ ցույց տալ, թե որն է Հիսուս Քրիստոսը: Նա զինվորների հետ պայմանավորվեց և ասաց. «Ում համբուրեմ, նա է Հիսուսը»: Բացի Հուդայից՝ գիշերը բոլորը բարձրացան Եղեմական պարտեզը³⁸⁶ աղոթելու: Հիսուսը աշակերտներին թողեց ներքևում, ինքը բարձրացավ ավելի բարձր ու սկսեց աղոթել. «Երկնային Աստված, եթե քո կամքն է, որ ես գոհվեմ հանուն մարդկանց փրկության, թող քո կամքը կատարվի»: Նա եկավ առաքյալների մոտ. բոլորն էլ քնած էին: Սրտնեղած զարթնեցրեց նրանց: «Չե՞ք կարող մի քանի ժամ մնալ արթուն»: Հիսուսը նստեց մի քարի վրա, աշակերտները նստեցին նրա շուրջբոլորը: Չինվորները արդեն պաշարել էին թավուտը, նրանց լուսավորում էին ջահերով: Հուդան եկավ ու համբուրեց Հիսուսին: Հիսուսն ասաց. «Համբուրո՞ւմ ես մատնում»: Հիսուսին բռնեցին: Պետրոսը

սուրը հանեց ու վիրավորեց զինվորներից մեկին: Հիսուսն ասաց. «*Պեպրո՛ս, սուր հանողը սրով կմեռնի*»: Պետրոսը սուրը գցեց: Հիսուսը նայեց վիրավորին, քսուք քսեց վերքին, որը խոր չէր, անցավ: Հիսուսին տարան:

Առավոտ մի մեծ բազմություն հավաքվեց տաճարի առջև: Սլասուսն էին, որ Հիսուսին դուրս հանեն: Հիսուսի աշակերտները ցրված էին ամբոխի մեջ: Նրանք եկան այն եզրակացության, որ իննսուն տոկոսը կաշառված տղամարդիկ ու կանայք էին, որոնք գոռում-գոչում էին.«*Մահ Հիսուսին*»: Պետրոսը բռնեց մեկին ու հարցրեց.«*Գիտե՞ս, թե ով է Հիսուսը: Բա ինչու՞ ես գոռում՝ մահ Հիսուսին*»: «*Դրա համար դրամ են տալիս*»: Վերջապես Հիսուսին դուրս բերեցին՝ ծեծված գլխին փշից պատրաստված պսակ դրած, վզին՝ «Հրեաստանի թագավոր» գրությունը կախած: Այդ բոլորն արևելք կանչեց: Զինվորներից մեկը նկատեց Պետրոսին: «*Բռնե՛ք նրան, սա Հիսուսի ընկերներից մեկն է*»: «*Ո՞վ, ես, ես Հիսուսին չեմ ճանաչում*»: Պետրոսը, խառնվեց ամբոխի մեջ, առաջ գնաց: Աբլորը երկրորդ անգամ կանչեց³⁸⁷: Նորից Պետրոսը ուրացավ, թե այդ մարդուն չի ճանաչում: Աբլորի երրորդ կանչից առաջ Պետրոսը երրորդ անգամ ուրացավ: Աբլորը խոսեց: Հիսուսը նայեց ու տեսավ Պետրոսին, որ առաջանում էր դեպի իրեն: Պետրոսը նկատեց, որ Հիսուսը իրեն տեսավ ու լաց եղավ:

Հիսուսին տարան ատյան, որտեղ դատ եղավ: Դատարանի առաջ Հիսուսը պատասխանեց հարցերին: Դատարանը նրան դատապարտեց մահվան: Ամբոխը սկսեց ավելի կատաղած գոռալ.«*Մահ Հիսուսին*»: Հիսուսին տարան բանտ: Պետրոսը հավաքեց իր ընկերներին, գնացին Հիսուսի մոր մոտ: Այնտեղ հավաքվել էին Ղազարոսը՝ երկու քույրերի՝ Մարթայի և Մարիայի հետ, ուրիշ ազգականներ: Բոլորն ալ մտահոգված էին, թե ինչպես փրկեն Հիսուսին: Միայն մի փրկություն կար: Հրեական դատարանի որոշումը պետք է հաստատեր հռոմեական կառավարիչը³⁸⁸, Բելլան³⁸⁹: Եթե մեկին մահվան էին դատապարտում, կառավարիչը պարտադիր հաստատում էր, եթե ոչ, ազատ էին արձակում: Պետք է սպասեին: Բելլան արդեն երկու ավագակների մահապատիժը ստորագրել էր: Նա ավագակներին իր առանձնասենյակում չէր ընդունել, բայց Հիսուսին ընդունեց: Հարցաքննությունը տևեց մի ժամ: Բելլան եկավ հետևյալ

եզրակացությանը. «Հիսուս ոչ մի մեղք չունի, և հրեաները իզուր են նրան մահվան դատապարտել: Ինչպես երևում է, մի քանում խանգարում է հրեա հոգևորականներին»: Հիսուսի հետ ելավ պատըշգամբ, ձեռքը բարձրացրեց, որ լռություն տիրի: Նա բարձր ձայնով հայտարարեց. «Այս մարդը, որ կոչվում է Հիսուս, ոչ մի մեղք չունի, բայց որ հրեա է, ես չեռքերս լվանում եմ»:

Ծառաները մի փոքր թաս ու ջրաման բերեցին: Ծառաներից մեկը ջուրը լցրեց Բելայի ձեռքերին, Բելան ձեռքերը լվաց: «Հանջնում եմ ձեզ, ինչպես կուզեք, այնպես վարվեք»: (Ի՛նչ մեծահոգություն Բելայի կողմից: Ձեռքերը լվալով՝ անմեղ մարդուն հանձնեց մահվան, երբ ձեռքի մի շարժումով կարող էր ազատել): Կաշառված, կատաղած ամբոխի ձեռքերից զինվորները հազիվ կարողացան ազատել Հիսուսին ու բանտ տանել:

Հիսուսին ազատելու համար նրա համակիրները և աշակերտները շատ աշխատանք տարան, որը ապարդյուն անցավ: Որոշված օրը երկու ավազակների հետ Հիսուսը, իր խաչը շալակած, բարձրացավ Գողգոթա³⁹⁰ լեռը, որտեղ պիտի կատարվեր մահապատիժը: Երկու ավազակներին կապեցին խաչերին ու կանգնեցրին, իսկ Հիսուսին մեծ գամերով գամեցին խաչին և կանգնեցրին: Հիսուսը ջուր ուզեց: Չինվորը, որ պահակ էր կանգնած, սպունգը թրջեց քացախի մեջ և նիզակի ծայրով մոտեցրեց Հիսուսին: Միառժամանակ հետո զինվորը նիզակով ծակեց Հիսուսի կողը՝ տեսնելու համար, թե մեռա՞ծ է: Գողգոթան բարձր լեռ է, այստեղ փոթորիկ սկսվեց: Չինվորը սարսափով տեսավ, որ արյուն չի գալիս³⁹¹: Հիսուսը մեռած էր: Ավետարանը փոթորիկը կապում է Հիսուսի մահվան հետ: Այս ամբողջ ժամանակ Հիսուսի աշակերտներն ու հետևորդները սպասում էին Հիսուսի մարմինը վերցնելուն: Հուդան, այս ամենը տեսնելով, զիջերով գնաց ու երեսուն արծաթը շարտեց խախամի (հրեաների հոգևորականների պետ) երեսին ու առավոտվա դեմ իրեն կախեց ծառի մի հաստ ճյուղից: Չինվորները Հիսուսի մարմինը իջեցնելուց հետո տարան ու քարայրի մեջ դրեցին, մուտքն ալ մեծ քարերով ծածկեցին: Գերեզմանի մոտ մի տասնյակ ալ պահակ դրեցին, որ առավոտ դիակը տանեն ու խաբիսուլի³⁹² վրա այրեն ու փոշին քամուն տան, որ Հիսուսից ոչ մի հետք չմնա: Նրանք սխալվեցին: Կեսգիշերին Հիսուսի աշակերտները ու մի տասնյակ համակիրներ, «*հա՛յ-հարա՛յ*»

բացական չելով, հարձակվեցին պահակների վրա, քարեր շարժեցին ու ցրիվ տվեցին նրանց: Հիսուսի դիակը վերցնելով՝ տարան մորտուին: Այնտեղ էին Մարթան, Մարիան, Ղազարոսը և ուրիշ կանայք: Նրանք Հիսուսին պատանքեցին, նույն գիշերը տարան ու մի ուրիշ վայրում թաղեցին: Առավոտյան եկան զինվորները և սինագոգի սպասավորները ու տեսան դատարկ քարայրը: Պահակներ չկային: Գտան երկու պահակներին՝ լեղապատառ ընկած, իսկ մյուսները մինչև այսօր չկան: Պահակներին ուշքի բերեցին: «*Ու՞ր է դիակը*»: «*Կեսգիշերին փոթորիկ սկսվեց, քարերը սկսեցին թռչել: Դիակը, սպիրակ հագած, քարշրացավ երկինք: Մոսկալի փեսարան էր*»: «*Ապուշներ, մեռած մարդը երկինք կբարձրանա՞*»: Սինագոգի սպասավորները խախտման պատմեցին եղելությունը: Խախտմը կատաղեց միամիտ զինվորների վրա: Հոգևորականը շատ լավ գիտեր, որ Հիսուսի մարմինը առաքյալները փախցրել են: «*Փնդրե՞ք Հուդային ու բերե՞ք այսօրեղ: Նա գիրի, թե որտեղ է Հիսուսի մարմինը*»: Սինագոգի սպասավորները Հուդային գտան կախված: Խախտմը հրաման արձակեց. «*Փնդրե՞ք, գրե՞ք Հիսուսի բոլոր աշակերտներին, առանց դատ ու դատաստանի կալանավորե՞ք ու բանդ նետե՞ք, որ այնտեղ փրեն*»:

*

* *

Անցան տարիներ: Օլիմպիան իր ամուսնու, Շուշանիկի, Ռոսինոյի և փոքրիկի հետ վերադարձավ Հրեաստան: Փոքրիկը երկու տարեկան էր: Պարոնի առաջին գործը եղավ Հիսուսին փնտրելը: Առաջին մարդը, որին հանդիպեց, մի հռոմեացի սպա էր, որ Հիսուսի մասին ամեն ինչ գիտեր: Պարոնը նրան տարավ տուն: «*Ինչ որ գիրեա Հիսուսի մասին, պատմի՞ր*»: «*Զինվորները դավաճանի միջոցով բռնեցին նրան, չարչարեցին, մահվան դատարարեցին ու խաչին զամեցին: Երկու եղբայրներին աքսորեցին, ընտանիքները թողեցին խեղճ ու կրակ: Հիսուսի մայրը ապրում է նրանց մոտ*»: «*Իսկ ի՞նչ եղավ Հիսուսի դիակը, ի՞նչ եղան առաքյալները*»: «*Հիսուսի մասին պատմում են, իբր թե խաչից իջեցնելուց հետո փարել ու փակել են մի քարանձավում, որ առավուր գան փրանեն ու այրեն դին, որ նրանից հետք չմնա: Բայց կեսգիշերին*

քարերը սկսեցին թռչել, քարայրը սկսեց քանդվել, կանգնած պահակները վահից փախան: Հեռվից տեսան, որ Հիսուսի դիակը, սպիտակ հագած, երկինք է բարձրանում: Իսկ դիակի մասին ոչինչ չգիտեմ: Առաքյալներին սկսեցին սաստիկ հալածել: Նրանք էլ ստիպված հեռացան Հրեասրանից»: Պարոնը գլխի ընկավ, որ Հիսուսի մայրը ավելի շատ բան գիտի: Նա վարձատրեց հռոմեացուն և ազատ արձակեց: Պարոնը փնտրեց, գտավ Հիսուսի ամբողջ գերդաստանը, որ կազմված էր յոթ շնչից՝ չորս երեխա, մայրերը և Մարիամը: Պարոնը նրանց վերցրեց ու տարավ այն բնակարանը, որ հատկացրել էր Հիսուսին և առաքյալներին: Նա սրտանց ցավակցություն հայտնեց Մարիամին ու խոստացավ, որ մի քանի շաբաթից նրա որդիներին կազատի արքունից: Որոշ ժամանակ անց արքունականները ետ վերադարձան իրենց հարազատների մոտ: Պարոնը Մարիամից իմացավ, որ Հիսուսի մարմինը փախցրել և ուրիշ տեղ են հուղարկավորել:

Հովհաննես Մկրտչի մահը

Ի՞նչ եղավ Հովհաննես Մկրտչիչը: Քրիստոսի մահից հետո նորից շարունակեց մկրտել Հորդանան գետում: Քրիստոսից հետո մկրտվողները ավելի շատացան: Մի առավոտ, իր աղոթքը վերջացնելով, նա սկսեց մկրտել մարդկանց: Մի շատ գեղեցիկ կին, գետի ափին կանգնած, նայում էր Հովհաննես Մկրտչին ու հիանում նրա գեղեցկությամբ: Հովհաննեսը իրոք գեղեցիկ տղամարդ էր՝ բարձրահասակ, սև վարսերով, դեմքը արևահարված էր և ուներ ցորենի գույն: Նա նկատեց տիկնոջը, որ երեսունհինգ տարեկան կլիներ: Արևի շողքերը ընկել էին կնոջ գեղեցիկ, սլացիկ իրանին՝ լուսավորելով նրա ողջ հասակը: Վարսերը, դուրեկան դեմքը և արտահայտիչ աչքերը փայլում էին: Աստված չէր խնայել նրան և այդքան գեղեցկություն էր շնորհել: «Տիկին, Ձեր գեղեցկության առաջ արևը խավարում է: Ի՞նչ եք հրամայում»: «Ուզում եմ՝ մեզ մկրտես՝ ինչ և իմ տասը տարեկան աղջկան, բայց մի պայմանով. դու պիտի գաս ու մեր ապարանքում մկրտես»: «Դա անհնար է, ես այս հովիտից ու այս գետի ափից չեմ կարող հեռանալ»: Կինը ավելի մոտեցավ: «Դու ինչ դուր ես գալիս»: «Հեռացի՛ր, տիկին: Դու աշխարհի ամենագեղեցիկ կինն ես, ինչ փորձության մի՛ մարմիր: Հեռացի՛ր»: «Դու կղղասս

դրա համար»: «Չե՞ս սաի քո անունը, ամուսնուդ ազգանունը»: «Իմ անունը Հեղինե է, ամուսնուս՝ Պապրիկ Հերովդես՝ Հերովդես քազավորի եղբոր որդին է»: «Դու այն կինն ես, որ վերացրեց ամուսնուն ու ամուսնացավ Կրեգորոջ հետ: Նզո՛վք քեզ, այսբանից հետո եկել ես այստեղ և ինչ հրավիրում ես չե՞ր սպարանք, որ մկրտե՞մ չե՞զ: Այն անմեղ աղջկանդ ալ մկրտեմ... Հեռացի՛ր, Կրիկ՛ն, թող քեզ պատժի երկնային Աստվածը»: «Դու ինչ դուր ես գալիս, դրա համար եկա հասա այստեղ: Ամեն ինչ կանես, որ դու ինչ սիրես»: «Չանքերդ իզուր կանցնեն»: «Կրեսնենք»: «Հեռացի՛ր, նզովյա՛լ կին, եթե չես ուզում, որ իմ հրամանով այս ամբոխը քեզ քարկոծի»: Կինը հեռացավ: Մի քանի օրից գինվորները եկան, ձերբակալեցին Հովհաննեսին ու տարան գցեցին պատրիկ Հերովդեսի նկուղը: Երկու օրը մեկ միայն հաց ու ջուր էին տալիս: Մի առավոտ եկավ մի սպասավոր: «Հեղինի՛ր ինչ»: Նրանք բարձրացան երկրորդ հարկ, սպասավորը բանալիով սենյակներից մեկի դուռը բացեց և ասաց. «Այս սենյակը քեզ համար է»: Հովհաննեսը մտավ կահավորված, լուսավոր մի սենյակ, որտեղ դրված էր մի աթոռ, թախտ, մահճակալ ու սեղան: Մյուս դուռը սենյակից բաղնիք էր տանում: Մի խոսքով, բոլոր հարմարությունները կային: Հովհաննեսը շատ մաքրասեր էր, օրը մի քանի անգամ լողանում էր Հորդանան գետում: Նրա առաջին գործը եղավ լողանալը, քանի որ երկու օր չէր լողացել: Լողանալուց հետո թախտին թիկնեց ու ընկավ մտածմունքի մեջ: Նա գիտեր, որ իրեն այստեղ բերողը այն կինն էր: Դուռը բացվեց, ներս բերեցին զանազան ուտելիքներով լիքը մի զամբյուղ: Ծառան լուռումունջ հեռացավ: Դաշեղուց հետո նստեց աթոռին: Մութն ընկնելուն պես ծառան եկավ ու վառեց սենյակի մոմերը: Սենյակը խորհրդավոր լուսավորության մեջ էր: Երկու գիշեր չէր քնել, շատ էր հոգնած, մտավ անկողին: Նա զարթնեց շուրթերին քնքուշ համբույրից: Սթափվեց ու վեր կացավ: Խորհրդավոր լույսերի մեջ իր առաջ թափանցիկ գիշերանոցով կանգնած էր կիսամերկ կինը: Կինը մի քայլ առաջացավ, Հովհաննեսը սթափվեց: «Չմոտենաս ինչ: Ես արում եմ քեզ: Դու վերացրիք ամուսնուդ, ամուսնացար Կրեգորոջ հետ, հիմա ուզում ես նրան վերացնել ու ի՞նչ հետ ամուսնասնալ... Ինչքան գեղեցիկ ես, այնքան էլ դաժան»: Հովհաննեսը մեծ փորձության մեջ էր: Իր առաջ կանգնած

կիսամերկ երկնային գեղեցկուհին մազնիսի պես ձգում էր դեպի իրեն: Հովհաննեսը նորից սքափվեց, գնաց դեպի դուռը, բացեց. «*Հեռացե՛ք, տիկի՛ն*»: Կինը այնպես նայեց Հովհաննեսին, որ Հովհաննեսը սարսռաց: «*Հեռացե՛ք, ես տարում եմ Ձեզ*»: Կինը հեռացավ: Հովհաննեսը նստեց մահճակալին ու ընկավ մտածմունքի մեջ: Նա զգաց, որ այս կնոջ հետ այդպես վարվելով՝ ինքն իրեն դատապարտեց մահվան: Մինչև առավոտ նա չքնեց: Առավոտյան եկավ ծառան ու նրան նկուղ տարավ:

Պատրիկի տանը մեծ խնջույք կար: Սառայի տարեդարձն էր: Բոլորն ալ արդեն հարբած էին: Պատրիկը հիացած էր փոքրիկ Սառայի³⁹³ պարով: Իրոք որ Սառան հիանալի էր պարում: Պատրիկը կանչեց, համբուրեց և ասաց նրան. «*Խնդրի՛ր այն ամենը, ինչ կուզես, որ քեզ նվիրես*»: Սառան վազեց մոր մոտ: «*Մայրիկ, հայրս ուզում է ինչ մի քանկագին նվեր տալ*»: «*Հորիցդ ինդրի՛ր, որ քեզ տա Հովհաննեսի գլուխը սկուտեղի վրա*»: Հյուրերի մեջ էին Հեղինեի երկրպագուներից շատերը, որոնք, Սառայի պահանջը լսելով, ծափ տվեցին ու բացականչեցին, որ պահանջը արդար է: Հերովդեսը սքափվեց, բայց հյուրերը հարբած գոռում-գոչում էին, որ Սառայի ուզած նվերը արդարացի է: Սառան չէր հասկանում, թե ինչ է կատարվում: Նա էլ մորը նայում ու ծափ էր տալիս: Հերովդեսը ստիպված հրամայեց Հովհաննեսի գլուխը բերել ու նվիրել Սառային: Դահիճը սկուտեղի վրա բերեց Հովհաննեսի արյունաթաթախ գլուխը: Սառան ճչաց և ուշաթափված ընկավ: Բժիշկներն ամեն ինչ արեցին, բայց՝ անօգուտ: Սառան մահացավ երկու օր անց առանց ուշքի գալու: Դեռ քառասունքը չէր լրացել, երբ սոսկալի տանջանքների մեջ մահացավ նաև մայրը: Այսպիսին էր Հովհաննես Սկրտչի վախճանը:

*

* * *

Աշակերտները հավաք արեցին և որոշեցին գոնե ժամանակավոր ցրվել աշխարհով մեկ ու տարածել Քրիստոսի ուսմունքը: Նրանք մեկ-մեկ հեռացան Հրեաստանից: Պետրոսը մնաց իր գործերը վերջացնելու:

Երուսաղեմում միջին հարստության տեր մի մարդ էր ապրում՝ Պողոսը: Նա Քրիստոսի ուսմունքին չէր հավատում, նույնիսկ հալածում էր նրա հետևորդներին: Պետրոսը վերջին օրը ընկավ շրջապատման մեջ, գիշերը մտավ մի պարտեզ, որտեղ գտնվում էր մի փոքրիկ տնակ: Դա Պողոսի բնակարանն էր: Դուռը փակեց: Դուռը բացեց իր տարիքի մի պատկառելի մարդ: «Ո՞վ ես դու, որ այս ժամին անհանգստացնում ես ինձ»: Պետրոսը ցույց տվեց վառվող ջահերը: Պողոսը հասկացավ, որ փախստական է: «Նե՛րս արի, Հիսուսի առաքյալների՞ց ես»: «Այո՛, Պետրոսն եմ»:

Դուռը կրկին փակեցին: «Նարի՛ր այսրեղ»,-ու բացեց դուռը: Ներս մտավ զինվորների ավազը: «Մենա՞կ ես»: «Ո՛չ, եղբորս հետ գրուցում եմ»: «Ուրիշ սենյակ չունե՞ս: Այս մեկն է»: «Մյրեք, սպուգե՛ք»: «Ո՛չ, ո՛չ, հավատում եմ»: Զինվորների ավազը հեռացավ: «Պետրո՛ս, Քրիստոսի ուսմունքին այդքան մեծ հավա՞րք ունես, որ մահվան ես գնում»: «Պողո՛ս, դու սուրբ մարդ ես, դու կարող էիր ինձ հանձնել իմ թշնամիներին, բայց դա չարեցիր: Երկնային Աստվածը քո գործած մեղքերին թողություն կրա: Հավատա՛ երկնային աստծուն և Քրիստոսի ուսմունքին և սպրի՛ր երջանիկ»: Պետրոսը խաչակնքեց Պողոսին: Պողոսը սուրփա բացեց, նստեցին ճաշելու: Պետրոսը «Հայր մերը» ասաց: Ճաշելուց հետո նորից գրուցեցին: Երրորդ օրը Պետրոսը հայտնեց, որ հեռանալու է Հրեաստանից: «Գնալու եմ Հռոմ, որտեղ շար եմ Քրիստոսի հավատացյալները»:

Քրիստոսի յոթանասուներկու աշակերտներից շատերը կործանվեցին, բայց իրենց գործը կատարեցին Հունաստանում, Հռոմում, Հայաստանում, Եթովպիայում³⁹⁴, Պարսկաստանում և շատ ուրիշ երկրներում:

«Պետրո՛ս, ես քեզ առանձին չեմ թողնի, մի քանի օր ալ սպասի՛ր, գործերս կարգավորեմ, միասին երթանք ուր ուզես»: Այսպես Պողոսը դարձավ Հիսուսի տասներեքերորդ առաքյալը: Նա հիանալի ըմբռնեց Հիսուս Քրիստոսի ուսմունքը: Մի քանի օրից հեռացան Հրեաստանից: Մի տարուց ավել քափառեցին, քարոզեցին Հիսուս Քրիստոսի ուսմունքը և հավատը երկնային աստծո նկատմամբ ու մի օր էլ կանգնեցին Հռոմի դարպասների առջև:

Այն ժամանակ Հռոմի կայսրը Ներոնն էր, որ մահ ու սարսափ էր

սփռում քրիստոնյաների վրա, նրանց լցնում կրկես³⁹⁵ ու մի քանի օր սոված պահած՝ վայրի գազաններին բաց թողնում նրանց վրա: Հանդիսականները նայում ու ծափ էին տալիս, գոռում-գոչում ու հրճվում էին՝ դիտելով այդ սարսափելի տեսարանները: Կայսրը իր արքանյակների³⁹⁶ միջոցով հրդեհեց Հռոմը և այդ գործում մեղադրեց քրիստոնյաներին: Բայց քրիստոնեությունը ամուր բույն էր դրել Հռոմում: Սեկին կործանում էին, տասն էին հայտնվում: Պողոսն ու Պետրոսը ժողովներ էին անում ամենուր՝ քարայրների մեջ, արվարձաններում, գյուղերում, բայց պայքարը երկար տևեց: Պողոսին և Պետրոսին խաչին գամեցին: Դատարանում հարցրեցին Պետրոսի վերջին կամքը: Նա ասաց. «*Ես արժանի չեմ իմ ուսուցչի՝ Հիսուս Քրիստոսի նման խաչվելու: Ինչ խաչեք գլխվայր*»: Այսպես է ասում ավանդությունը: Պետրոսին գլխվայր խաչեցին: Երեք հարյուր տարի տևեց քրիստոնյաների պայքարը, մինչև որ Իտալիայում³⁹⁷ քրիստոնեությունը հաստատվեց որպես պետական կրոն: Հռոմը դարձավ ամբողջ աշխարհի քրիստոնեության նստավայր, մինչև այսօր էլ այդպիսին է: Չորրորդ դարում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունեցին հայերը, հույները, եթովպացիները:

*

* * *

Քրիստոնեությունը Հայաստանում քարոզել են Հիսուսի երկու աշակերտները: Թադեոսը և Բարդուղիմեոսը³⁹⁸ եկան Հայաստան և հիմք դրեցին Հիսուս Քրիստոսի ուսմունքին, [հիմնադրեցին առաջին քրիստոնյա համայնքները և եպիսկոպոսական աթոռները]: Տարիներ շարունակ ուսուցանեցին մարդկանց, իրենք նահատակվեցին³⁹⁹, բայց իրենց գործը շարունակեցին իրենց հետևորդները: Հեթանոսությունը, որ ուժեղ բույն էր դրել Հայաստանում, անխտիր հալածում էր բոլոր քրիստոնյաներին, ենթարկում մահապատժի: Քրիստոնյաների պայքարը երկար տևեց: Երեք հարյուր թվին Տրդատ թագավորի ժամանակ Հայաստան եկան Գրիգորը և երկու կույսերը՝ Հռիփսիմեն և Գայանեն, որոնք շարունակում էին քարոզել Հիսուսի ուսմունքը: Նրանք ընկան հեթանոսների ձեռքը: Թագավորի հրամանով կույսերին տանջամահ արեցին: Տրդատը, իմանալով որ Գրիգորը իր հորը

սպանողի որդին է, հրամայեց նրան զցել Խոր վիրապի զնդանը: Այստեղ պետք է ասեմ, որ Գրիգորի հայրը՝ [Անակը որսի ժամանակ մահացու վիրավորել էր] Տրդատ թագավորի հորը՝ հայոց Խոսրով թագավորին: Այդ էր պատճառը, որ Տրդատը այդպես խիստ վարվեց Գրիգորի հետ: Ըստ ավանդության՝ Տրդատը խոզի կերպարանք առավ ու ընկավ սար ու ձոր: Չնայած հսկա տղամարդ էր՝ ահռելի ուժի տեր, բայց խղճով էր ու հավանաբար տառապում էր հոգեկան հիվանդությամբ: Այդ հիվանդության պատճառով արքան խոզի նման ձայներ էր հանում: Մերձավորները, պալատականները, բժիշկները, հեքիմները ոչնչով չօգնեցին: Անցնում էին օրեր, բայց ոչինչ չէր փոխվում: Մերձավորների մեջ կային քրիստոնյաներ: Նրանք եկան այն եզրակացության, որ թագավորը մեկ-մեկ հիշում է Գրիգորին ու տալիս⁴⁰⁰ նրա անունը: Նրանք հաշվեցին, որ Գրիգորը արդեն քառասուն օր է ինչ Խոր վիրապում է և դեռ կարող է ողջ լինել: Այդ միտքը հայտնեցին բժիշկները: Ըստ ավանդության՝ գիշերները մեկ-մեկ Խոր վիրապի վրա լույս էր երևում: Ինչպես երևում է, հավատացյալները մեզ գիշերները ուտելիքը և մոմը պարաններով բաց էին թողնում ներքև, որ Գրիգորը ուտի և վառի: Այդ լույսն էր, որ Խոր վիրապից երևում էր, հենց այդ լույսի համար էր, որ Գրիգորին հավատացյալները անվանեցին Լուսավորիչ:

Բժիշկները համաձայնվեցին: Մարդիկ զնացին Խոր վիրապ ու ձայն տվեցին.« *Գրիգոր՛ր, որպե՞ղ ես*»: Գրիգորին հանեցին, կարգի բերեցին ու տարան թագավորի մոտ: Գրիգոր Լուսավորիչը թագավորին խաչակնքեց, աղոթք ասաց: Մի քանի օր անց թագավորը սթափվեց:

Հայաստանում Քրիստոսի հավատացյալների համար նոր օր բացվեց: Առաջինը թագավորը մկրտվեց: Թագավորի հրամանով սկսեցին մեհյանները քարուքանդ անել, տեղերն էլ եկեղեցի կառուցեցին: Թագավորը և Գրիգոր Լուսավորիչը սկսեցին նոր եկեղեցիներ կառուցել ամբողջ Հայաստանում: Այս եկեղեցիներից մի քանիսը պահպանվել են մինչև այսօր: Գրիգոր Լուսավորիչը իր նստավայրը դարձրեց Վաղարշապատ ավանը, որը անվանեց Էջմիածին: Հայոց առաջին կաթողիկոսը Գրիգոր Լուսավորիչն էր: Մոտ երկու հազար տարում ունեցել ենք հարյուր իննսուն⁴⁰¹ կաթողիկոս՝

Թաղևոս առաքյալից մինչև Վազգեն Ա⁴⁰²: Տասը կաթողիկոսներ կառավարել են քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց առաջ՝ մինչև 302թ.:

Մի քան էլ պիտի ավելացնեն, որ ամբողջ աշխարհի քրիստոնյաները ունեին «Հայր մերի» մի քանի տեսակ, իսկ հայերը՝ միայն մեկը: Մյուսները իսաչ էին հանում աջից ձախ, իսկ հայերը՝ ձախից աջ: Հայերը հավատում են, որ Քրիստոսին խաչելիս առաջին մեխը խփեցին ձախ ձեռքին հետո աջին: Հայերը հինգ նախադասություն են ասում, իսկ մյուսները՝ չորս: Հիսուսը յոթ⁴⁰³ վերք էր ստացել: «*Հսնուն հոր, և որդվոյ, և հոգվոյն սրբոյ, Ամեն*»:

*

* *

Անցավ մի քանի դար, մի քանի պետություններ Քրիստոսի ուսմունքը երկրորդ անգամ խաչեցին՝ զանազան փոփոխություններ մտցնելով: Եկեղեցին պառակտվեց քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական ուղղությունների, ապա՝ կաթոլիկ և պրոտեստանտական⁴⁰⁴: Մի քանի դար հետո ծնվեցին մահմեդականությունը՝ իր տարբեր ուղղություններով, և ուրիշ զանազան ուսմունքներ: Հիմնականում բոլորն էլ հավատում էին Հիսուս Քրիստոսին⁴⁰⁵, չնայած կային որոշ տարբերություններ: Հիմա աշխարհում մեկ միլիարդ հինգ հարյուր հազար քրիստոնյա կա: Կաթոլիկությունը ստեղծվեց 1054թ. Կոստանդնուպոլսի եկեղեցական ժողովից հետո, երբ եկեղեցին երկրորդ անգամ պառակտվեց և ծնվեցին կաթոլիկ՝ տիեզերական, և օրթոդոքս՝ ուղղափառ եկեղեցիները: Կաթոլիկների քանակը այսօր վեց հարյուր միլիոն է: Հիմնական մասը ապրում է Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում, Կանադայում, Լատինական Ամերիկայում: Այս երկրների ազգաբնակչության մեծ մասը կաթոլիկներ են: Բողոքականությունը ծագել է XVI դ.: Բողոքական են անգլիացիները, գերմանացիների մի մասը: Բողոքականների քանակը երեք հարյուր միլիոն է: *Բողոքականները տարին մեկ անգամ են խաչ հանում, քանի որ Քրիստոսը մեկ անգամ խաչվեց*: Բողոքականները պատարագ չունեն, գնում են ժողովարան, նստում, կարդում: Պատվելին⁴⁰⁶ քարոզում է Հին կտակարանի գրվածքները՝ Մովսեսից, Աբրահա-

մից: Ամենահասարակ շարքային բողոքականը, երբ տեսնում է չորս մարդ նստած, մոտենում է, նստում նրանց կողքին և սկսում է քարոզել:

Անգլիայում երկար տարիներ պայքար ընթացավ կաթոլիկների և բողոքականների միջև: Երկու կողմն էլ քիչ գոհեր չի տվել:

Քրիստոնեությունը Բուլղարիայում և սլովեների⁴⁰⁷ մեջ

Յոթերորդ դարում Վուլգայի ափին բնակվող ցեղերը, հալածվելով մոնղոլ-թաթարներից, գաղթեցին դեպի արևմուտք: Նրանց առաջնորդները կոչվում էին խաներ: Յեղերի մի մասն անցավ Դանուբը և հաստատվեց հարուստ արոտավայրերով, հարթ հովիտներով, մեղմ կլիմայով վայրերում: Երկրամասը, որ սակավ էր բնակեցված⁴⁰⁸, խանի հրամանով Վուլգայի անվամբ կոչվեց Վոլկարի: Այս ցեղերը շարունակեցին իրենց երթը և հասան մինչև Ադրիատիկայի ափերը, ապա թեքվեցին հարավ, տարածքը կոչվեց Հարավսլավաց⁴⁰⁹: Ավելի հարավ գնացողները հասան մինչև Մակեդոնիա երկրամաս և իրենց կոչեցին մակեդոնացի՝ չնայած ոչ մի կապ չունեին մակեդոնացիների հետ: Սլովեները հեթանոս էին: Վոլկարները սահմանակից էին քրիստոնյա հույներին: Մի տասնյակ տարի հետո հույները զավթեցին Բուլղարիան⁴¹⁰: Այդ դարերում հույները շատ պատերազմներ ունեցան հայերի ու պարսիկների դեմ: Երբ թուլացան, բուլղարները ապստամբեցին և թոթափեցին հույների լուծը ու վերականգնեցին իրենց անկախությունը: Առաջնորդը, որ ուսանած էր Քրիստոսի հավատով, քրիստոնեությունը դարձրեց պետական կրոն, ժողովրդին օժեց քրիստոնյա, և ինքը դարձավ ցար Բորիս I⁴¹¹: Դրանից հետո այդ շարժումը սկսվեց Ռուսաստանում: Այսպես՝ բոլոր սլովեները ընդունեցին քրիստոնեություն, նրանց հետ էին նաև ռումինացիները, հունգարացիները⁴¹², որոնք սլովեն չէին:

ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

«Իմ կյանքից» վերնագրով տետրում են հավաքված մի քանի երգեր, որոնք Գևորգը փոխադրել է բուլղարերենից հայերեն:

*

* *

Մոտիվը՝ Խրիստոս Դիմիտրիի⁴¹³

Ողջ է, նա ողջ է այնպեղ՝ լեռներում,
 Արյան մեջ կորած՝ ընկած տնքում է:
 Քաջ էր, կրծքին խոր վերք ստացած,
 Դեռ երիտասարդ, ուժեղ փրամարդ:
 Մի կողմ նեղած փշրված հրացան,
 Մյուս կողմը՝ սուրբ, երկուսն էլ կոտրված,
 Աչքերը՝ մթնած, գլուխը պրտվում,
 Շուրթերը անհծում են ամբողջ փիեզերքը:
 Ընկած է հերոսը, բայց բարձր երկնքում,
 Արևն է կանգնած, նեխած է արյուն,
 Հնչվորուհիները երգում էին մի տեղ արարելում
 Իսկ քաջի արյունը ավելի շատ էր հոսում:
 Հնչելու ժամանակ երգեցեք, գերուհիներ,
 Ձեր տիտուր երգերից արևն է խավարում:
 Այս գերված երկրում այս հերոսն ալ պիտի կործանվի
 Բայց լռում է բաբախը սրտերի:
 Նրանց, որ գոհվում են ազատության համար,
 Չեն մահանում, նրանց չեն ողբում,
 Երկիրը և երկինքը, փիեզերքը և բնությունը
 Եվ զուսանները երգ են հորինում նրանց համար:
 Յերեկը շող է անում: Բարձրից արծիվը
 Տիտուր, բարձունքից նայում է հերոսին,
 Նա էլ պատրաստ է ընկած հերոսին օգնել,
 Իսկ գայլն ազահ դառնագին վերքն է լիզում:
 Եկավ գիշերը, լուսինը ծագեց,
 Աստղերը փայլեցին մթնած երկնքում,
 Անկրառը խշշաց, քամին մեղմ փչեց,

Լեռներում լավեցին հայդուկների երգերը:
 Հուրի-փերիները, սպիտակ զգեստ հագած,
 Հրաշալի, չքնաղ երգեր երգելով,
 Հանգիստ քայլերով կանաչ մարգագետիններով
 Ընկած հերոսի մոտ եկան, նսրեցին:
 Մեկը բալասանով վերքն էր կապում,
 Մյուսը սառը ջրով դեմքն էր սրսկում,
 Երրորդը քնքուշ համբույրով շուրթերն էր համբուրում,
 Իսկ վիրավորը նայում էր փիտուր աչքերով:
 Ասացե՛ք, քույրե՛ր, որպե՞ն է՝⁴¹⁴,
 Որպե՞ն է իմ հավատարիմ ջոկատը,
 Ասացե՛ք, և հեյրո հոգիս ավանդեմ,
 Ես ուզում եմ, քույրե՛ր, այսպեղ կործանվեմ...
 Ուժեղ սարսուռով հոգին ավանդեց,
 Երգերը հովիտից երկինք բարձրացան,
 Հուրի-փերիները թողին հեռացան,
 Երկինքը դժգունեց, առավոտը բացվեց:
 Առավոտ բացվեց լեռներում, անլրառներում, հովիտներում⁴¹⁵,
 Քաջը ընկավ՝ արյունը սառած երակներում,
 Գայլը ազահ դառնացած վերքն է լիզում,
 Արևը նեղացած սաստիկ այրում է ու վառում:

Անբաժանելի

Լացե՛ք կալինայի՛ փերիներ, մեզ հովացնելով՝ իշշացե՛ք⁴¹⁶
 Այս հովիտում՝ զեպի ափին առանձին,
 Գեղեցիկ չինարի ճյուղերը հյուսվում են
 Նրա չզցած կանաչ փերիներին:
 Հոգնած, դադրած շոգեմ՝ անոնց փակ
 Ես պատրասեմք նսրա հանգստանալու,
 Ե՛վ այսպես գաղտնի պատմեց ինձ կալինան
 Ե՛վ փիտուր, և՛ ցավալի իր պատմությունը:
 Ե՛վ իշշում, և՛ լացում են փերիները,
 Խշշում են փիտուր և քնքուշ,
 Մի ժամանակ օրիորդ էի
 Այս անիրավ, սուր աշխարհում:
 Տարացնում էր սիրտս քնքուշ

Պայծառ արևն երկնքից,
 Ա՛խ, մի ուրիշ քնքուշ արև
 Տաքացնում էր իմ հոգին:
 Բայց չէր փաքացնում ոչ ծաղկած բարձունքից,
 չեռվից փաքացնում ու նայում հարևանի այգուց,
 Նայում էր առավուր, իրիկուն, նայում գիշերով
 Իվոն այդ ծաղկած այգուց:
 Եվ փխուր ես լսում էի,
 Նա երգում ու խոսում էր,
 Առաջին սեր, առաջին երջանկություն⁴⁷,
 Մի՛ հառաչիր, մի՛ փխրիր:
 Որ չէին համաձայնում՝ միանանք,
 Իմ հայրը և քո մայրը:
 Այն սրտերին, որ սիրում են իրար,
 Մահանալն ալ բաժանում չէ կյանքում:
 Խոսում էր անուշ, սրտանց և փխուր
 Գրված է եղել մեր ճակատագրում՝
 Չմիանալ, քանի որջ ենք կյանքում,
 Սիրուս համար կյանքս չեմ ափսոսում:
 Մի՛ լացիր, մի՛ փխրիր, մահն ալ անուշ է մեզ համար:
 Մի անգամ՝ իրիկնադեմին, գալիս էի աղբյուրից՝
 Փայլուն ջրի դուլեր ուսիս:
 Կանաչ խառնվել էին իրար, հառաչում էին,
 Բակերից⁴⁸ ու այգիներից վազում:
 Ծիշյա Բվոյի բարձր դռան առաջը,
 «Խենդը,-խոսում էին իրար մեջ կանաչը,-
 Ծիշյա սրտին է հարվածել անիրավը,
 Սուրը դեռ ցցված է այնտեղ»:
 Ես սարսուցի և բաց թողի ջրի դուլերը ուսերիցս,
 Հավաքվածների արանքով առաջ անցա վայ փալով:
 Տեսա Բվոյին, րեսա արյունը:
 Չզգացի՝ ինչպես սուրը հանեցի Բվոյի սրտից
 Եվ իմ սրտին հարվածեցի:
 Բվոյի վրա մահացած ընկա,
 Գրկախառնված մնացի:
 Հիմա թող ուրախանան ու ողբան անոր մայրը, իմ հայրը,

Որ չհամաձայնեցին՝ միանանք կյանքում
 Մահացած՝ նորից իրար սիրում ենք,
 Մահն ալ մեզ համար երջանկություն էր:
 Մեզ՝ սիրո երկու զոհերին, գերեզմաններում չթաղեցին:
 Այնպեղ թաղում են նրանց, ովքեր իրենց մահով են մահանում:
 Թաղեցին մեզ այս գերափում, այս հովիտում:
 Ինքը բարձրացավ որպես ծաղկած չինար,
 Իրա կողքին ես՝ կալինա⁴⁹ սլացիկ,
 Ինքը ինչ գրկեց իր նուրբ ճյուղերով,
 Ես՝ իմ քնքուշ տերևներով:
 Մրտերի համար, որոնք սիրում են իրար,
 Մահն ալ բաժանում չէր իրենց համար:
 Մենք գնացինք այս դժբախտ աշխարհից,
 Անոր մոր և իմ հոր պատճառով:

Գալիևայի հայրը՝ Ստոյանը, և Բվոյի մայրը՝ Գալգութան, սիրեցին իրար:

Բայց Գալիևայի հայրը դավաճանել էր Գալգութային, ամուսնացել:
 Ստոյանը ունեցել էր մի աղջիկ,
 Գալգութան՝ մի տղա, որոնք սիրեցին իրար:
 Երկու ծնողները, իրար արելով,
 Չհամաձայնեցին, որ երեխաներն ամուսնանան,
 Որի հետևանքը եղավ այդ դժբախտությունը:

*

* *

Սիրո հուրը ընկավ իմ հոգին,
 Հարվածեց թունավոր նետով,
 Թողեց՝ իմ սիրտը լա ու ողբա
 Եվ արցունք թափի մեկնության մեջ:
 Բայց հիշի՛ր, սիրելի՛ս, որ աշխարհում
 Ոչ ոք չի սիրելու քեզ, ինչպես որ ես սիրեցի,
 Հիշի՛ր և մի՛ մոռացիր:
 Ես գիրեմ, սիրելի՛ս, դու ինչ ես փնտրում:
 Երբ կարդաս իմ մահվան մասին,
 Այն ժամանակ պիտի հպարտանաս,
 Որ հաղթել ես էս սիրուն:

Երբ րեսնես մահվան թափորի կարգը,
 Որ րանում է դժբախտ սիրուց գոհվածին,
 Ելի՛ր ձեր փոքրիկ պատշգամբ,
 Վերջին հրածեշը րու՛ր:
 Մի՛ գա առավուր շուր՝ շաղին,
 Իմ դժբախտ սառը գերեզմանին:
 Արցունք մի՛ թափիր,
 Ըն սիրուն, սևորակ աչքերից:

*

* *

Սիրեցի քեզ, ա՛խ, սիրելի՛ս:
 Ըն սիրուց մեռնելու եմ,
 Սիրուններից ազատի՛ր ինձ
 Ա՛խ, սիրելի՛ս, քեզ սիրեցի:
 Ըն սիրուց ես սթափվեցի:
 Ըն սիրելին քեզ հավարաց:
 Այս րարիքիցս ես ամաչեցի,
 Քեզ սիրեցի, քեզ սիրեցի:
 Սիրուններից ազատի՛ր ինձ,
 Ա՛խ, իմ անմահ սեր,
 Հիշի՛ր, սիրելի՛ս, որ աշխարհում
 Ոչ ոք չի սիրելու, ինչպես սիրեցի ես:
 Ես քեզ հավարացի, սիրելի՛ս,
 Որ ինձ սիրեցիր ամբողջ հոգով,
 Բայց հիշիր սիրուններին, սիրելի՛ս,
 Հեպո շատ ուշ կլինի:

*

* *

Ինչու՞ րեսս քեզ ու երեսիդ դարչնագույն խալը:
 Սիրունի՛կ, ինչու՞ խաբում ես ինձ, ինչու՞ չես գալիս:
 Հե՛ջ, հե՛ջ չես նայում ինձ քո սիրուն աչուկներով:
 Արի՛, արի՛, արի՛ հաշտվենք, արի՛, քնքուշ փայփայի՛ր:
 Արի՛, արի՛, արի՛ ջերմ, ջերմ համբուրվենք:

Կլորակ ոսկի ես, հոգիս այրում ես:
 Ինչ քնքուշ նայում ես այդ քո փայլուն աչուկներով,
 Արի՛, արի՛, արի՛ գրկախառնվենք, արի՛ ջերմ, անուշ համբուրվենք:
 Արի՛, արի՛, արի՛ հաշտվենք, արի՛, քնքուշ փայտափր:
 Աչքերս քեզ համար արցունք են թափում,
 Արցունքներդ փայլում են, դեմք՝ սիրուն, խալդ՝ աննման,
 Սիրունիկ, խաբում ես, ինչու՞ չես գալիս:
 Արի՛, արի՛, արի՛, սիրունիկ, գոնե մի համբույր նվիրի՛ր:

*

* *

Դու սիրեցիր ուրիշին, ինչ թողեցիր,
 Ուրախության սրտանց հանդիպումներ, հանդիպումներ դու մոռացար,
 Բայց հավատա՛, մի՛ նեղացիր,
 Իմ առաջվա սերը քո հանդեպ չի մնացել:
 Անցան ամիսներ, տարիներ տխուր,
 Մոռացար նրան, որիև սիրել էիր,
 Նորից եկար դու ինչ մոտ,
 Բայց հիշի՛ր, չեմ սիրելու քեզ առաջվա նման:
 Սիրոս բաժանումից, մոռացությունից հեղու
 Ուրիշին սիրեց, բայց չկարողացավ սիրել այնպես, ինչպես քեզ:
 Ուրիշի կանանց համբույրները մոռացա:
 Սիրելիս, իմացի՛ր, ես կհենանամ,
 Բայց այս անգամ իմ սերն անկեղծ էր,
 Ների՛ր, ինչ ների՛ր:
 Հեռացի՛ր, հեռացի՛ր, չեմ կարող ներել:

Резюме

Воспоминания пережившего Великий геноцид Г.Амаякяна “Моя история” и его произведение “Четки”

В книге представлен очередной том из серии “Пережившие Великий геноцид”, в котором к очередному юбилею Геноцида будут изданы воспоминания Г.Амаякяна “Моя история”. Воспоминания были написаны в 1980-ых гг., состоят из 6 рукописных тетрадей и содержат важные сведения и факты об исторических событиях 1915-20 гг. и представляют масштабы этой страшной трагедии. Во время депортации 1915 г. новорожденного Геворга спасли бабушка и дядя. Едва избежав смерти от голода, холода и резни, его семья обосновалась в селе Каваклу близ Кони, затем переехала в Константинополь, а потом в Варну. На протяжении всей жизни Г. Амаякян пытается психологически преодолеть ужасы прошлого, он пишет несколько произведений: “Тарзан”, “Цанкатор”, “Мария”, “Четки”. Сюжет повести “Четки” сразу увлекает читателя. Автор представляет события первой половины прошлого столетия, где герои напоминают членов семьи и родственников автора, где события совпадают с реальными и развивается тема скитающихся по свету и оставшихся без родины армян.

Summary

G.Hmayakyan’s memories of “My history” and his work “Chaplet” devoted to Great genocide

The book presents one of the series of “Those who have survived the Great Genocide” where the memories of G. Hmayakyan’s “My history” will be published for the next anniversary of Genocide.

The memories were written in the 1980-s and consisted of 6 handwritten copy-books and contained important facts of historical meetings of 1915-20-s and presented the scales of that drastic tragedy. In the course of the deportation of 1915, the new-born baby was saved by his grandmother and uncles. Escaping from hunger, cold and massacre his family settled in the village of Qavaqlu near Qonia, then

the family moved to Konstantnupolis, then to Varna. Throughout his life G. Hmayakyan has psychologically tried to overcome the horror of the past - he wrote some works: "Tarzan", "Tsankator", "Maria", "Chaplet". The plot of the work "Chaplet" attracts the reader at once. The author presents the meeting of the first half of the last century, where the hero remembers his family members and relatives where events correspond to real facts and the issue of Armenians without motherland is touched upon.

ՀԱՍԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ
անգլ.-անգլերեն**արբ.**-արաբերեն**Արլ**-Արևելյան**Արմ**-Արևմտյան**արմհ.**-արևմտահայերեն**ԲԵՄ**-Բանվորական երիտասարդական միություն**բրբ.**-բարբառային**բուլղ.**-բուլղարերեն**գ.**-գործ**գերմ.**-գերմաներեն**գր.**-գրամ**ԵԹԻ**-Երևանի թատերական ինստիտուտ**ԵՀ**-Երևանի համալսարանի**ԵՊՀ**-Երևանի պետական համալսարան**Եր.**-Երևան**թ.**-թերթ**թրթ.**-թուրքերեն**ԺՀԲ**-Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**լատ.**-լատիներեն**խսկց.**-խոսակցական**խոր**-խորանարդ**կմ**-կիլոմետր**հ.**-հատոր,**հատ.**-հատորով**ՀԱԱ**-Հայաստանի ազգային արխիվ**ՀԱԲ**-Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան**հզ.**-հազար**ՀՀԳԽ**-Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն**ՀՀՀ**-«Հայկական հարց» հանրագիտարան**հնց.**-հնացած**ՀՄՀ**-Հայկական Սովետական հանրագիտարան**ՀՄՍՀ**-Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապե-

տություն

հս-հյուսիս

հվ-հարավ

ՀՏԲ-Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան

հրատ.-հրատարակչություն, հրատարակիչ

ՀՅԹ-Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտ

հունգ.-հունգարերեն

ՄՄ-Մաշտոցի անվան Մատենադարան

ՊԲՀ-Պատմաբանասիրական հանդես

պգք-պատմական գիտությունների թեկնածու

պրսկ.-պարսկերեն

ռազմ.-ռազմական

ռուս.-ռուսերեն

ց.-ցուցակ

փխբ.-փոխաբերական

քառ-քառակուսի

օսմ.-օսմանյան

ֆ.-ֆոնդ

ֆր.-ֆրանսերեն

БРЭС-Большой Российский энциклопедический словарь

БСЭ-Большая Советская Энциклопедия

гос.-государственное

Եր.-Երևան

Изд.-издательство

М.-Москва

Ред.-редакция

РМС-Рабочий Младенческий Союз

СВЭ-Советская Военная Энциклопедия

т.-том

⁴⁷ Հրեաների հոգևորականների պետ:

⁴⁸ Վիպակի ձեռագիրը բաղկացած է տասներեք տետրերից, որոնցից առաջինը և երկրորդի մի հատվածը գրված են արևելահայերեն: Հավանաբար Գևորգը այդ հատվածը թելադրել է: Երկրորդ տետրի մյուս հատվածը և տասնմեկ տետրերը գրվել են Գևորգի ձեռքով արևմտահայերեն:

⁴⁹ *Տես Վ.Սվազյան, Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երկրորդ համալրված հրատարակություն, Եր., 2011, էջ 771:*

⁵⁰ *Նույնը, էջ 170:*

⁵¹ *Նույնը, էջ 461:*

⁵² Անկարա, Կեսարիա, Յուզատ եռանկյունի: *Նույնը, էջ 359:*

⁵³ *Հ. Լիլոյան, Խորհրդային ականավոր դիվանագետը (Լ.Ս. Կարախանի 100-ամյակի առթիվ), Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ), 1989, թիվ 1, էջ 8-11:*

⁵⁴ *Տես Մ.Ներսիսյան, Մուստաֆա Քեմալ փաշան արևմտահայերի 1915-1916թթ. ցեղասպանության մասին, ՊԲՀ, 1998, թիվ 3, էջ 23-26:*

⁵⁵ *Տես Ի. Ավագյան, Հ.Հմայակյան, Հայոց ցեղասպանությունը վերապրած Գևորգ Հմայակյանի «Իմ կյանքը» հուշապատումը և Մեծ եղեռնը արտացոլող «Թզրեիր» ստեղծագործությունը, Գիտական հոդվածների ժողովածու՝ նվիրված Հրաչյա Աճառյանի ծննդյան 140-ամյակին, Եր., 2016, էջ7-22:*

⁵⁶ Հավանաբար, ի նկատի ունի Բուրզ, Բուզիա, Բուրզիե բերդը, որը գտվում է Կիլիկիայի, հվ-արլ կողմում՝ Անտիոք քաղաքից ոչ հեռու՝ Օրոնտես գետի ձախ կողմում: *ՀՏԲ, հ. 1, էջ 761:*

⁵⁷ Քոնիա, Կոնիա, Ղոնյա, Քոնյա-քաղաք Թուրքիայում, համանուն վիլայեթում: Աղանայից հս-արլ, հնում կոչվել է Իկոնիա: *ՀՏԲ, հ. 3, էջ 207:*

⁵⁸ Հովհաննես անունը է կրում Գևորգի արու թոռներից ավագը: Նա այժմ հայտնի օպերատոր է:

⁵⁹ Բնագրում ցեխոտ:

⁶⁰ Բնագրում՝ Մահմեդ:

⁶¹ Հավանաբար, խոսքը ջրծաղիկի մասին պիտի լինի, եթե հաշվի առնենք, որ վարակվողները և մահացողները հիմնականում երեխաներն են եղել: Սև ծաղիկի պարագայում նման տոկոսային հարաբերության դեպքում կմահանային նաև մեծահասակները:

⁶² Ախտագերծում:

⁶³ Քավաքը քոյ, Քավաքըղերե քոյ-գյուղ Իզմիրի իլում՝ նահանգում:

⁶⁴ Սա հնագույն ավանդույթ էր: Օրինակ՝ Հարթ գավառում կինը և ամուսինը այլը՝ նամանավանդ ընտանիքի ավագ անդամների ներկայությամբ չէին կարող անգամ միմյանց կողքին կանգնել, ամոթ էր համարվում նաև իրար նայելը ավագների ներկայությամբ: *Տես, Բուլանդիս կամ Հարթ գաւառ, հաւաքեց Բենսէ, խմբ. և հրատ. Ե. Լալայան, 1901, էջ 146-147:*

⁶⁵ Բնագրում՝ ջաղաղջ:

⁶⁶ Մ.Հմայակյանը պատմում է.«Հայրս ասում էր, որ մեծ մայրը՝ Անուշը, առափոխյան աղոթքից հետո անհծում էր Սմբատ թագավորին: Հայրս ասում էր, որ պատճառն այն էր, որ Սմբատը ամուսնացել էր եղբոր աղջկա հետ: Ես պատանի էի ու չէի հավատում այս բացատրությանը՝ մտածելով, որ պատճառը Բագրատունիների ու Մամիկոնյանների հակամարտությունն է, որն այս ձևով պահպանվել է տարոնցի վերաբնակիչների մեջ, սակայն ավելի ուշ մատենագետներից մեկի աշխատանքում գտա այս տեքստի շարադրանքը: Իսկապես

արքան ամուսնանում է եղբոր աղջկա հետ: Յոզևորականությունը և արքունիքը դատապարտում են աղջկան, հայածում: Աղջիկը վշտից մահանում է: Շուտով հիվանդանում է նաև արքան»: **Տես Ստեփանոս Ասողիկ Տարոնացի, Տիեզերական պատմություն (թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ.Յ.Վարդանյանի), Եր., 2000, էջ 314 (Երրորդ գիրք, ԻԹ):**

⁶⁷ Թվականները հաճախ նշվում էին ժողովրդական ավանդական տոմարով: Անուշը ասել է, որ Կարապետը ծնվել է «չեթիրգեթի» տարին, երբ մորեխների պարսը հարձակվել է գյուղի վրա: Թվականները մոտավոր են:

⁶⁸ Բնագրում առնում:

⁶⁹ Խոսքը պզթ, դոցենմ Ս.Գ.Հմայակյանի մասին է:

⁷⁰ Ըստ Ս. Հմայակյանի. «Ենթադրում էին, որ խոսքը Տարոնի Սեղդի գյուղի մասին է. Սերդիգյոզ բառը բացատրում էին «Սերդին նայող» ձևով, երբեմն գյոզ բառը կապում էին Ակն քաղաքի հետ»: Սեղդին հիշատակում է Յովհան Սամիկոնյանը որպես երեք առասպելական եղբայրների՝ Կուառի, Սեղդեի և Խորյանի հիմնադրած բնակավայրերից մեկը: Սեղդի տեղանունը հավանաբար առնչվում է հայերեն մեղարդ, ուրարտերեն շելարդի՝ լուսին բառի հետ: **Տես Ս. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 49-50: Տես Ս. Հմայակյան, Կուառ-Կուառ աստվածության պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում, ՊԲԳ, թիվ 1, Եր., 1990, էջ 153-167:** Սերդիգյոզցիների խոսվածքը պատկանում է հայերենի բարբառների «կը» ճյուղին: **Տես Գր. Աճառյան, Հայոց լեզվի պատմ., մաս II, Եր., 1951, էջ 328, 352-353:** «Այժմ Սերդիգյոզի անունը փոխված է, Ալջիկեոյ (Որսատեղ, Որսագյուղ),-պատմում է Ս.Հմայակյանը: Այժմյան բնակիչները ծագումով քուրդ են, բոսնիացի, գնչու: Գյուղի գերեզմանոցը վերածված է բալեհիների այգու: Այս և այլ շատ տվյալներ Սերդիգյոզի և մերդիգյոզցիների մասին գիտեն գարնիկիս՝ Դավիթ Թորոսյանի՝ հայտնի ազգագրագետ Վարդան Ավետիսի Պետոյանի թոռան ուսումնասիրություններից: Երկուսիս նախատատիկներն էլ Սերդիգյոզի Մանթաշյան ընտանիքից էին: Դավիթը հավաքել էր շատ ազգագրական ու ժողովրդագրական նյութեր ու լուսանկարներ մերդիգյոզցիներից: Իր արխիվի լուսանկարները մասամբ հրատարակված են: Հուսով եմ՝ երբևէ ամբողջությամբ կիրապարակի: Սերդիգյոզի բառապաշարից առանձնապես հետաքրքրում էր վահանկուց՝ առավոտ բառը: Դեյլոյի Հակոբի (Գ.Չալիկյանի հայրը) ասելով. «Ակզբնապես տարբեր տեղերից եկած յոթ տուն են եղել Ակնից, Տարոնից, Երզնկայի կողմերից, Կիլիկիայից, Ղարաբաղից»:

Ըստ ՀՏԲ-ի՝ Սերդի գյուղը գտնվում էր Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի Մուշի գավառում: Ռուսական քարտեզներում այսպես է նշանակված Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Տարոն գավառի Սեղտի ավանը: **Տես ՀՏԲ, հ 3, էջ 802:**

⁷¹ Փառիվան, փահլևան-ըմբիշ, լարախաղաց, ուժեղ, քաջ և հաղթանդամ մարդ:

⁷² Հայտնի է, որ Աշտիշատում և այլուր տարբեր տոնակատարությունների՝ մասնավորապես Վարդավառի նավասարդյան ծիսական տոնակատարությունների ժամանակ, որպես ծիսական հնագույն արձագանք, տեղի էին ունենում տարբեր մրցահանդեսներ, մասնավորապես՝ ըմբշամարտ, լարախաղացություն կամ փահլևանություն: **Տես Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, 2000, էջ 166-167:**

⁷³ Ֆլաջուխ-հավանաբար՝ ֆլանուղ, ֆըլ-դալար և ճյուղ բառերից:

ՕՏԱՐ, ԲԱՐՔԱՌԱՅԻՆ ԵՎ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Բառարանում բերում ենք գրքում գործածված բոլոր օտար բառերն ու արտահայտությունները՝ նշելով դրանց բացատրություններն ու իմաստները: Օտար բառերի բացատրությունը նշելիս նկատի ենք ունեցել որևէ բառի իմաստն ընդհանրապես, նաև ստույգ կամ մոտավոր իմաստը, որով տվյալ բառը գործածվել է հուշապատումի մեջ: Ակնհայտ է, որ թուրքերեն մի շարք բառեր վերցված են անմիջապես արաբերենից և պարսկերենից: Բառերի ուղղագրությունը պահել ենք բնագրին համապատասխան՝ նշելով նաև ժամանակակից գրական ուղղագրությունը և բարբառային ու խոսակցական ավելի շատ տարածում գտած որոշ ձևեր: Տվել ենք նաև ճիշտ տառադարձումը:

Աղաթ, աղեթ, եղեթ-արբ.. հոգնակին աղեթ բառի, սովորույթ, ավանդույթ, սովորական իրավունք:

Ադմիրալ-ծովակալ:

Ազադե-պրսկ.. ազատ, անկախ, ինքնուրույն, ինքնագլուխ:

Աթա- թրք.՝ հայր, պապ, պապիկ:

Աթմաճա-շահեն, ճուռակ, սակռ, մասնավորապես՝ ուրուր:

Ալաջըմ-ծուլվել, համաձուլվել:

Ալլահ-ալլախ-արբ.՝ Աստված, մուսուլմանական՝ Աստված:

Ակվարիում-ջրավազան՝ ձկներ, ջրային կենդանիներ բուծելու, ցուցադրելու համար, ջրարան:

Ակցիա-գործողություն:

Ահանի, էգահանե-դեղատուն:

Աղա-թրք.՝ աղա, (դրվում է հատուկ անունից հետո), տեր, պարոն, ունևոր գյուղացի, ավագ եղբայր, եղբայր (կոչական): Պատմական՝ որոշ պաշտոնավոր պետերի և դեմքերի տիտղոս, կոչում հին Թուրքիայում: Պատմական՝ որոշ մանր պաշտոնավոր դեմքերի և արհեստավորների տիտղոս, կոչում: Պատմական՝ ցածր և միջին սպաներին տրվող տիտղոս, կոչում:

Ամ-համընդհանուր, համաժողովրդական:

Ամուջա-արաբ. ամեն բառից՝ ժողովուրդ, ռամիկ ժողովուրդ:

Այա-գեղեցկուհի, սուրբ:

Անա-թրք.՝ մայր, մամա, մայրիկ, անա բաբա-ծնողներ:

Անեկդոտ-զվարճապատում, զավեշտասք, խնդուկ:

Անտիֆաշիզմ-հակաֆաշիզմ:

Անտիֆաշիստ-հակաֆաշիստ:

Ապարատ-սարքավորում, սարք, գործիք, գործարան:

Այրսենյա, Աբխսինիա, Աբխսինիա, Հաբեշտան-Եթովպիայի հին անվանումն է:

Ասեչկա, օսեչկա-վրիպում, չկրակել, չպայթել:

Ասկյար, ասբեր, ասքար, ասքյար, էսբեր-արբ. զինվոր, զինվոր-ներ, գորք, զինվորական գունդ:

Ավանս-կանխավճար:

Արմենեց-բուլղ.՝ հայ, հայազգի:

Արտիստ-դերասան:

Բագաժ-ուղեբեռ:

Բայ-տե՛ս բեյ:

Բանկ-դրամատուն:

Բաջանաղ-կնոջ քրոջ ամուսինը, քենակալ:

Բաս-տղամարդու թավ ձայնի տեսակ, բամբ, թավ ձայն:

Բաստիան խան, փաստիան խան, փաստախանե, պաստախանե, պաստանե-հրուշակարան, հրուշակեղենի խանութ:

Բարաք-փայտե տուն, ժամանակավոր շինություն:

Բարութ-թրք.՝ վառող, շուտ բռնկվող և պայթուցիկ նյութ:

Բեյ, պեյ, բեյ-թրք.՝ բեյ, պարոն, ցեղի, տոհմի առաջնորդ, հատուկ անունների բաղադրիչ՝ Իհշան բեյ: Բեյիմ, պեյըմ-իմ պարոն:

Բեն-ես, ըստ իս:

Բեշ-հինգ:

Բեշթուփ, բիշթուփ-հրացան:

Բիզիմ-մեզ:

Բինտ-վիրակապ:

Բիշթոնավոր, պիստոնավոր-հրացանակիր:

Բողորչա, բողաչը-կլոր (հաց, պանիր):

Բորտ-գերմ.՝ մավի կմախքի կողերի բաղկացուցիչ մասերի ամբողջությունը: Չախ մավակողը կոչվում է բակբորտ, աջը՝ շտիրբորտ:

Նավաշուրթ, նավակող, կող:

Քոցման-բոցման՝ ռազմանավի ավագ ենթասպա:

Քռած-եղբայր:

Քրղզցնել-բրբ.՝ հուժկու գոռալ: Բառացի նշանակում է կրակը ուժեղացնել, թեժացնել:

Քրիտանցի-բրիտանացի:

Քրոհոտ, **պոխոտղ**-անցք, անցում, կիրճ, կապան:

Քուկի, **բուկա**-թխվածքի տեսակ:

Քուլյոն-արգանակ:

Քուխանկա- ռուս.՝ բոքոն, հատուկ անոթի մեջ թխված սովորաբար սև հաց:

Քուղա, **բուղ**-առաջնորդ, գորավար, հրամանատար, ցուլ:

Գաղբե, **գալիբե**-հավանաբար:

Գառալ, **կառալ**, **կառա**, **կարա**-սև:

Գարնիգոն-կայազոր:

Գելին, **գելին**, **կյալին**-թրբ.՝ հարս, նորահարս:

Գելմեկ-եկած, ժամանած:

Գելմեկներ-եկածներ:

Գեներալ-լատ.՝ ընդհանուր, գլխավոր: Ջինվորական տիտղոս, գորավար: Առաջին անգամ գործածվել է Ֆրանսիայում XVI դ., Ռուսաստանում՝ XVII դ. II կեսին:

Գեներալ-մայոր-զինվորական կոչում:

Գեներալ-մարշալ-զինվորական կոչում:

Գիրի, **գեր**, **կիրի-արբ**.՝ հաշվառող, հաշվառում: Քերայե՝ վարձ, քիրիջի՝ դրամափոխ:

Գյավուր, **գյաուր**, **գավուր**, **կյավուր**, **գավիր**-պրակ.՝ գյաուր, անհավատ, ոչ մահմեդական, քրիստոնյա, անաստված, սրբապիղծ մարդ, դաժան, անխիղճ, անսիրտ, երդմնազանց, ուխտադրուժ, հեթանոս:

Քյովըու, **քյոլու**-գյուղացի:

Գյունսուս, **գյունդուզ**-օր, ցերեկ:

Գնամխագո-իշխանություն:

Գովչիչնիգ-դրամ բաժանող՝ գանձապահ: Հավանաբար՝ կովա, կովաչ-կռել, դարբնել բառերից:

Գոսպողիկ-տեր, պարոն:

Գորիլա-կապիկի տեսակ, շատ տզեղ մարդ:

Գսրի, դրսր-չոր, մերկ (ծառի համար):

Գցը, գըց, կիզ-աղջիկ, օրհորդ:

Գուլեսի-վարդանոց, դոյակ:

Գևրեգ, գերեգ-փշրվող, փխրուն, պաքսիմատ:

Գայդայ-հորեղբայր, քեռի՝ հասուն տղամարդուն դիմելաձև:

Գանդալոշ-տկարամիտ, տխմար, ապուշ, հիմար:

Գեպուտաստ-պատգամավոր:

Գերսկի՝ ռուս. дерзкий-համարձակ, հանդուգն բառից:

Գերվիշ, դարվեշ, դերվիշ, դարվիշ-արսկ.՝ մահմեդական դերվիշ, աղքատ, կրոնավոր, որ զբաղվում է նաև գուշակությամբ, հեքիմութ-յամբ:

Գիագնոզ-ախտորոշում:

Գիպլոմ-վկայական:

Գիպլոմատ-դիվանագետ:

Գիսպանսեր-հիվանդությունը բուժող և կանխող հիմնարկ:

Գիվան-բազմոց:

Գիրեկտոր-տնօրեն:

Գիրիժոր-նվագավար:

Գյուժին-տասներկու հատ:

Գոկտոր-բժիշկ, գիտական աստիճան:

Գրուժինա-գունդ, զորագունդ, բանակ:

Գրուժինիկ, դրուժինիկ-ջոկատային, դրուժինիկ:

Գունավ- բուլղ.՝ Դանուբ, Դունայ:

Ելոց, ելոզ, ելոս, ելոց, յըղըզ- աստղ:

Չագս-քաղաքացիական կացության ակտերի գրանցում:

Չիլ-բրբ.՝ շատ բարձր և սուր (ձայն):

Չնամյա-դրոշ, դրոշակ:

Չվենար, զվենո-օղակ:

Էմբլեմա-խորհրդանշան, զինանշան:

Էմեգ, էմեկ-խնամք, չարչարանք:

Էսկալատոր-շարժասանդուղք:

Էսրաբ-թմբանյութի տեսակ: Կանեփի տերևներից պատրաստված նյութ, որի մի գրամը սուրճի մեջ զցել խմելուց կամ փաթաթովի ծխախոտի մեջ դրած ծխելիս մարդու վրա երանություն է գալիս:

Էքսպեդիցիա-արշավախումբ:

Էֆենդի, Էփենտի, Էֆենդի-թրք.՝ Էֆենդի, տեր, պարոն, սեփակա-նատեր, ազնիվ, դաստիարակված, վեհանձն, ազնվաբարո:

Թախտ, թահթ, թախթ, թաղթ-պրակ.՝ գահ, գահույք:

Թապո-ցեղի անուն:

Թավասագ-թուլանալ, եռանդը մարել:

Թավնագ, թավրը թակնմակ - արբ.՝ կերպար, տեսք, ձև, կարևորություն, մեծամտություն:

Թառնա, թարմա-քառակուսի չորս սյուն ունեցող կամ այլ ձևի բարձր ձողածածկ հարմարանք, որի վրա բարձրանում և փռվում է խաղողի թուփը. սարքինա:

Թարմայի- բուրմա-հավանաբար՝ թխվածքատեսակ:

Թգանգտրը, թգանըգթ, թգանըգ, թգանըգթը, թգանըգտը, թգանըկ-թըր-խափանվեց:

Թեսլիմ, թէսլիմ-արբ.՝ ընծայում, ապավինում, հանձնում, փոխանցում, անձնատուր լինել, կապիտուլյացիա, հանձնվել:

Թեսկերե, թեսգերի, թեզկերե-անձնագիր:

Թգբեխ, թգբեղ, թեսպիհ, թէսբիհ, թագբեհ, թագբե, թագբեխ-թրք. թագբեհ, տերողորմյա, համրիչ, վարդարան:

Թիակ-պալատ, առանձնատուն:

Թիշգո-եռացնել, եռացած, եփել, եփած:

Թմթի-թեյի նման տաք ըմպելիք:

Թոփ-գնդակ:

Թրեֆ-պտտվել, թրեվ գալ՝ քարշ գալ:

Ժասմին-հասմիկ:

Ժեներալ-ֆր.՝ զեներալ, զորավար:

Ժիտնիցա-ամբար, շտեմարան, հացառատ վայր:

Ժուռնալիստ-լրագրող:

Իլ-նահանգ:

Իմդաթ, իմտաստ-օգնություն:

Ինտերնացիոնալ- միջազգային, նաև պրոլետարիատի հիմնը:

Ինֆակտ, ինֆարկտ-սրտամկանի կաթված:

Ինֆորմացիա-տեղեկույթ, տեղեկություն:

Իստիորսուն, իստյօրսունուս-ուզել, ուզենալ:

Իսմեթս, իսմետ-մաքրություն, կուսություն, անարատություն, ողջախոհություն:

ԼԱԶ-ավտոբուսի մակնիշ, ՄԱ3:

Լա վաշ-ֆր.՝ կով:

Լեվա, լևա, լև-բուլղարական դրամական միավոր, որը պարունակում է 100 ստոտինկա:

Լիդեր-առաջնորդ, գլխավորող:

Լոզունգ-նշանաբան:

Լոցման-նավատար, լոցման:

Խաբար, հաբեր, խապար-արբ.՝ լուր, տեղեկություն, ազդարար, հաղորդում:

Խախամ-հրեաների հոգևորականների պետ, րաբբի, հրեա կրոնավոր:

Խայմախամ, դայմադամ, գայմական, կայմական, կայկամ, քայմաքամ, դայիմախամ, դայմագամ, դայկամ-թրք.՝ կուսակալի տեղակալ, տեղապահ, գավառապետ, ժամանակավոր պարտականություններ կատարող, տեղակալ, փոխարինող, ռազմական, հնացած՝ փոխզնդապետ:

Խան, հան-պատմական տիտղոս՝ խան, պրսկ.՝ իջևանատուն, իջևան, օթևան, պանդոկ, քարվանսարա, գործարարական տուն, որտեղ տեղավորված են զանազան հաստատություններ, հիմնարկություններ ու գրասենյակներ:

Խարխուլ-խարույկ:

Խացից-հավանաբար ուխտագնաց, ուխտավոր, նաև՝ դիմելաձև, ինչպես հաջին:

Խըռթ-կտրելու ձայնը:

Խոլերինա, քոլեռա-խոլերա, ժանտախտ:

Խոջա, հոջա, հոճա, խօջա, խօճա-պրսկ.՝ ուսուցիչ, վարժապետ,

դաստիարակ, խրատատու, հոջա, մոլլա, հոգևոր դեմք, վաճառական, ավագ, պարոն:

Խոջամաններ-խոշորներ, ավագներ:

Խոսկապ-խոսակցական՝ նշանդրեք:

Խրաբրի՝ ռուս. храбрый -քաջ, արի, խիզախ բառից:

Խրդ ու բրդ-խրթ՝ խրթին, թերի, բրդիկ բրբ.՝ կտորի ծվեն, փոքրիկ կտոր:

Խրուշ, դուրուշ, կուրուշ, քուրուշ-դուրուշ՝ թուրքական լիրայի հարյուրերորդ մասը: Մանրադրամ Օսմանյան կայսրությունում:

Խուզունաղ, գուցունակ-կոզինախ /^օ/՝ ընկույզով և մեղրով պատրաստվող քաղցրավենիք:

Խուրջ, խուրջին, հուրչ-արբ.՝ ուսի մի կողմից հետևի կողմը գցվող մեծ տոպրակ:

Կաբալ, կաբալա-պարտավորագիր, կախման գիր, ստրկական, ստրկություն:

Կաբարե-բեմահարթակով փոքրիկ ռեստորան:

Կաբինետ-աշխատասենյակ:

Կազինո-խաղատուն:

Կալինա, գալինա-բռինչ:

Կայմ-նավի վրա բարձր սյուն առագաստների համար, կամ սյունակերպ կառուցվածք զանազան նպատակների համար (ազդանշան հաղորդելու, դիտելու):

Կապիտան-ուշ լատ.՝ զինվորական տիտղոս պետությունների զինված բանակներում: Հայտնվել է Ֆրանսիայում միջին դարերում, Ռուսաստանում՝ XVI դ. (օտարերկրյա սպաների համար): ԽՍՀՄ-ում՝ 1935թ.:

Կավերնա-խոռոչ, դատարկություն, խորշ:

Կատեր-մոտորանավակ:

Կարաբին-կարճափող հրացան:

Կարանտին, կարանտինա-հիվանդի կամ հիվանդների ժամանակավոր արգելափակում, մեկուսացում, ախտագերծում:

Կեսուր-խոսակց.՝ սկեսուր, ամուսնու մայրը:

Կիլ-նավի ողնափայտը:

Կիլո-կիլոգրամ:

Կռալիցիա-դաշինք, միություն, համադաշնություն, դաշնություն:

Կոնկրետ, կոնկրետացում-իրական, որոշակի:

Կոնսուլտացիա-խորհրդատվություն:

Կոնցերթմայսթր-կոնցերտմեյստեր, դաշնակահար նվագակցող, համերգների կազմակերպիչ:

Կոնցլազեր-համակենտրոնացման ճամբար:

Կոպեկ-մանրադրամ:

Կրահած-սրած:

Կվարտալ-թաղ, թաղամաս:

Կուուլա, քուուք, դուուլա, քուիկ, քուլեկ, խարախուլ-թրք.՝ ստրկություն, հնացած՝ պահակակետ, դիրք, կետ, պահականոց, պահակատնակ, քաղմաս:

Կուրս-ուղղություն, ընթացք:

Հայաթ-արք.՝ կյանք, գոյություն: Բարբառային՝ տան արտաքին սրահ (ծածկված), նախասենյակ, նախասրահ, տան առջև գտնվող բակ:

Հայդե, հայդի-լավ, բարի:

Հայդի, հայդի-թեթև, արագ: Բացականչություն, որը համարժեք է դե-ին:

Հայդուկ-հունգ.՝ հետևակ, պարտիզան: Հաճախ գործածվող հոմանիշն է ֆիդայի կամ ֆեդայի բառը (արք.՝ գոհ, ջան ֆեդա՝ ինքնա-գոհ):

Հալ-արք.՝ վիճակ, դրություն, պարագա, հանգամանք, կացություն:

Հալալ, հալալի, հիլալ, հիլալի-արք.՝ թույլատրվածություն, օրինավորություն:

Համալ, ամել, համել-արք.՝ գործ, գործողություն, աշխատավոր, բեռնակիր, բանվոր, շալակով բեռ տեղափոխող:

Հանում, հանըմ, խանում-թրք.՝ խանում, տիկին, տիրուհի, տան-տիրուհի, տանտիկին, օրիորդ:

Հաշտ - թրք.՝ հյուրասենյակ, միջանցք, նախասենյակ:

Հաջ, հաճ-արք.՝ մուսուլմանական հաջ (ուխտազնացություն Մեքքա, որը կատարվում է գիլխիջ ամսին):

Հաջի, հաճի-արք., թրք.՝ ուխտավոր, ուխտազնաց, մահտեսի, կո-

չում, որ տրվում է Մեքքայից եկած ուխտագնացին:

Հասիս, խասիս խացից-ժլատ:

Հիլալ-կիսալուսին, բովանդակային՝ ներում: Տե՛ս հալալ:

Հիպնոզ, հիպնոս-մասնակի քնի վիճակ, որ առաջ է բերվում ներշնչումով (տվորաբար բուժական նպատակներով):

Հոս-արմհ. խակց.՝ այստեղ:

Հրամմե-համեցի՛ր:

Ղաչաղ, խաչաղ, դոչաղ-արի, քաջ, ավագակ:

Ղօչաղություն, դօչախություն-թրք.՝ արիություն, քաջություն:

Ղավուրմա, խավուրմա, կաուրմա, կաղուրմա, քավուրմա, դավուրմա, դաուրմա-թրք.՝ դավուրմա, տապակած, խորոված, չորացրած, շիկացրած: Մառը ձևով պահվող տապակած միս, տհալ:

Մայ-մայիս՝ ամիս:

Մայոր-լատ. մաժոր՝ մեծ, ավագ բառից: Ջինվորական, սպայական տիտղոս, որն առաջին անգամ երևան եկավ Իսպանիայում և գերմանական պետություններում XVI դ.:

Մանուր-մնուր-բրբ.՝ մանր-մունր:

Մառկա-մակնիշ, նամականիշ:

Մաստիքա-Օղու մի տեսակ է, որի մեջ խանված է հերձի ծառի քաղցրահոտ փխրուն մազտաք կոչվող խեժը:

Մարշալ-ֆր.՝ ձիապան բառից, զինվորական կոչում:

Մեկեք, մեկեկ-հրեշտակ:

Մեխանիկ-մեքենագետ:

Մեհլեմ, մահլամ, մայլամ, մեչիեմ, միլամ, մերիեմ-արբ.՝ քսուք, քսաղեղ, դարման:

Մեճիտիե, մեջիդիյե, մեջիդյա, մեջիդյե, մեճիդյե, մեճիդյա, մեճիտյա-արբ.՝ քսան դուրուշ արժեք ունեցող արծաթե դրամի անվանում: Մեջիդիյե ալթիմի-մեկ լիրա արժեք ունեցող ոսկե դրամի անվանում: Մեջիդիյե չէրեդի, չարեկ-հինգ դուրուշ արժեք ունեցող արծաթե դրամի անվանում: Սիմ մեջիդիե-քսանհինգ դուրուշ արժեք ունեցող արծաթե դրամի անվանում:

Մետիս-խառնաբուս, խառնածին:

Մետրո-մետրոպոլիտեն, ստորգետնյա էլեկտրական երկաթուղի:

Մզկիթ-մահմեդականների աղոթատուն, մեջիդ:

Միլ-մդոն, աշխարհագրական մդոն (7420 մետր), ծովային մդոն (1852 մետր):

Միլիցիա-ուստիկան, ուստիկանատուն:

Միլլի-ազգային, ազգայնական:

Միկրով, միկրոք-մանրէ:

Մինարէ, մինարէք-արբ. մինարէք՝ 10-20 մ բարձրություն ունեցող, մզկիթների մոտ աշտարակ, որի վրայից մուլաները բարձրաձայն աղոթքով հավատացյալներին աղոթքի են հրավիրում:

Մինիստր-նախարար:

Մինիստրություն-նախարարություն:

Միսիա-առաքելություն:

Միսլուման-մուսուլման, իսլամի հետևորդ:

Միտինգ-հանրահավաք, ցույց:

Մոգ-իմաստուն, հեթանոս հոգևորական, քուրմ:

Մուլա, մուլա-արբ.՝ մուլա, մուլա, գլխավոր դադի (մուսուլմանական հոգևոր դատավոր), մուսուլմանական իրավունքի դոկտոր, մեդրեսեի (հոգևոր ուսումնարան) աշակերտ:

Մոտիվ-մեղեդի

Մոնաստիր-վանական համալիր, վանք

Մորակայա-ծովային:

Մայո-պարոն:

Մուսիս, մուսիսա-ծախս, ծախք:

Մուսուլման-իսլամի հետևորդ:

Յաբան, յաբանի, յաբանջը-օտար, օտարական, անդաստիարակ մարդ, վայրենի:

Յաթաղան, իթական, յաթական -բրբ.՝ թուրքական կեռ, մի կողմը սուր կարճ թուր:

Յաշա-թրք.՝ կեցցե՛, բրավո՛, ուռա՛:

Յաշիկ-արկղ:

Յավրու, յավրում, յավրուս-թրք.՝ մանուկ, երեխա, զավակ:

Յաբենջի-գրպանահատ:

Յըղըզ-աստղ:

Յլըր-կայծակ, փոխաբերական իմաստով «քթին չղնել»:

Նամագ, նեմագ-պրսկ.՝ մուսուլմանական աղոթք, նամագ, Մու-

համմեղ մարգարեին ուղղված աղոթք:

Նարգիլե, նարգիլե-արսկ.՝ նարգիլե, դայլան, գլգլակ՝ ծխելու սարք, որի մեջ ծուխը անցնում է ջրով լի անոթով ու մաքրվում:

Նարգոզ, նարկոզ-անզգայացում:

Նե-ինչ:

Նենե, նինի-մայր, մայրիկ, մեծ մայրիկ, տատիկ:

Ներվեր-նյարդեր, ջղեր:

Նոտա-հայտագիր, բողոքի հայտագիր:

Նուր, նուրի-արք.՝ լույս, փայլ, ճառագայթ: Նուրի Ալեմ-կրոնական՝ աշխարհի լույս (Մուհամմեդի մականուն):

Շայկա-խումբ, ավազակախումբ:

Շեյթան-արք.՝ սատանա, դև, Գրող:

Շերբեթ, շերպիթ-օշարակ:

Շիլինգ-անգլիական դրամ:

Շուք-մուշտակ:

Չադրա-քող, սպիտակ կամ գույնզգույն շոր, որի մեջ արևելյան կանայք փաթաթվում էին տնից դուրս գալիս:

Չամադան, չեմոդան-ճամպրուկ:

Չարշը, շարսը-շուկա:

Չարչի-մանրավաճառ:

Չեթե, չետնիկ- հայդուկ, ֆիդայի, Բալկաններում՝ տասնապետ:

Չեքիրգե, չախուրգա-մորեխ:

Չիչո-ծամ, խոպոպ, խակց.՝ անկիրթ կին:

Չուլ, չուլ-թրք.՝ անապատ, անջրղի կամ անմշակ վայր, վայրի անմշակ տեղ, տափաստան, փխբ. ավերակ, քարուքանդ

Չումենդեֆեր, շումենդիֆեր- գնացք:

Պալատ-հիվանդասենյակ:

Պալուք, պալուքա-տախտակամած:

Պայ, բայ-պարոն, բեյ:

Պանիհիտ, պանիխիդ-հոգեհանգիստ:

Պանպաշղա, պան պաշղա, բան բաշղա-իրարից տարբեր, տվյալ դեպքում՝ անճար, մարդ որի ձեռքից որևէ բան չի գալիս:

Պանտերա-հովազ:

Պատրիկ-լատ.՝ հայր, հռոմեական տիտղոս:

Պատրոն-հովանավոր:

Պլանինա, բլանինա-սար, լեռ:

Պլանտատոր, պլանտատատեր-խոշոր հողատեր:

Պլիտկա-սալիկ, սալաշերտ:

Պոլ-հատակ:

Պոստ-պահակակետ, դիտակետ:

Պորուչիկ-լեհերեն ռազմ.՝ զինվորական կոչում: Կրտսեր սպայի կոչում լեհական և մի քանի այլ բանակներում: Ռուսական բանակում ի հայտ է եկել XVII դ.:

Պրեմիեր-մինիստր-վարչապետ:

Պրոգրեսիվ-առաջադեմ, զարգացած, առաջադիմական:

Պրոտեստանտ-բողոքական: Պրոտեստանտական եկեղեցի-բողոքական եկեղեցի:

Պրոցես-գործընթաց:

Չաղարջ, ջաղաց, չաղարչ-խսկց.՝ ջրաղաց:

Չամբռ-ֆր. սենյակ, արքունի դիվանատուն: Իրավական և կալվածական փաստաթղթերի ժողովածու:

Չամի, ճամի-արբ.՝ մզկիթ, մահմեդական աղոթատուն, ժողովարան:

Չենտլմեն-բարեկիրք անձ, տղամարդ, ազնվայր:

Չոջ-խոսակցական՝ գլխավոր:

Ռ-ազրեշիտե-թու՛յլ տվեք:

Ռ-եյխ-լատ.՝ կայսրություն:

Ռ-ենտգեն-լուսարկում, լուսադիտում:

Ռ-եջեբ, ռեջաիբ-արբ.՝ մեծ ողորմություն, բարյացակամ, գթասիրտ, բարեգութ, ողորմա՛ծ տեր:

Ռուբլի-ռուս. դրամական միավոր: Սովետական Միության և Ռուսաստանի հիմնական դրամական միավոր, դրամական նշան:

Սադիսի, սանդրկչը-արկղագործ:

Սանատորիա-առողջարան:

Սանիտար-հիվանդապահ, սանիտար, վիրավորներին առաջին օգնությունը ցույց տվող և մարտադաշտից դուրս բերող շարքային

բուժաշխատող զինվոր: Կրտսեր բուժաշխատող, որը զբաղվում է հիվանդների և վիրավորների սպասարկմամբ և բուժհիմնարկի կացարանների մաքրությամբ:

Սանիտարկա-սանիտարուհի:

Սանջակ, սանջախ-գավառ:

Սանտիմ, ցենտ-դոլլարի 1/100, մանրադրամ:

Սապան-սարս, պարսատիկ, պարսետ:

Սեիդ, սեյիդ, սըիդ, սըյեդ-արբ.՝ սեյդ՝ տիտղոս, պատվավոր անձին դիմելու ձև:

Սեյիմ-արբ.՝ առողջ, ողջ, անվնաս, ուշիմ, խելացի, ողջամիտ, ճիշտ, ստույգ, ուղիղ, լուսին /°/:

Սեյֆ-անկիզգելի գանձապահարան, անկիզգելի պահարան, սեյֆ:

Սերվիզ-սպասք:

Սեփեթչի-զամբյուղագործ, զամբյուղավաճառ:

Սեֆերբերլիք-գորահավաք:

Սիմիթ-հացի օղաբլիթ, բուբլիկ:

Սիմ-արծաթ, արծաթյա, առյուծ /?/:

Սինազոզ, սինազոզա-հրեական տաճար:

Սիպտակ-խոսակցական՝ սպիտակ:

Սիվտա-սվադել, տվյալ դեպքում՝ առաջին, սկզբից իմաստով:

Սլատկո, սլադկ, սլադկո-քաղցր, անուշ, մուրաբա, քաղցրություն:

Սմելիյ՝ ռուս. смелый -խիզախ, համարձակ բառից:

Սոկ-հյութ:

Սովետ-խորհուրդ:

Սովետներ-խորհուրդներ:

Սովետական-խորհրդային:

Սոուս-թանճր կերակրահյութ:

Սվետի-լույս, լուսավոր, սուրբ:

Ստայա-խումբ, ռհմակ, երամ:

Ստատիստիկա-վիճակագրություն:

Ստարայա-ծեր, հին:

Ստրոգիյ՝ ռուս. строгий-խիստ բառից:

Սուլթան, սուլտան-արբ.՝ հատուկ անունից առաջ՝ սուլթան, միապետ, տիրակալ, հատուկ անունից հետո՝ սուլթանուհի, սուլթանի աղ-

ջիկ, արքայադուստր:

Սուղնոց-արմհ.՝ թանկանոց, թանկարժեք:

Սուպ-ապուր:

Սուփրա, սուրփա, սօֆրա, սօֆրա, սուփռա, սուփրա-արբ.՝ ճաշի սեղան, գցած սեղան:

Սօֆոա թահթասը-սուփրա (կարճ ոտքերով կլոր սեղան):

Վալերիանի-կատվախոտի հաբեր կամ կաթիլներ:

Վալի-արբ.՝ վալի, կուսակալ, նահանգապետ:

Վարիլ, բարել-նավթի չափի միավոր, մեկ բարելը հավասար է 158,988 լիտրի:

Վեյիշ-հավանաբար արբ. վեշե բառից՝ դեմք, կերպար, կողմ:

Վենա-երակ:

Վեշ-իր, առարկա:

Վերանդա-ծածկապատշգամբ, ապակեպատ պատշգամբ:

Վիզա-այլ երկիր մուտք գործելու կառավարական թույլտվություն:

Վիպուսկ-թողարկում, թողարկ, վաճառահանում:

Վիսկի-վիսկի՝ անգլիական և ամերիկյան թունդ օղի:

Վիցե-պրեզիդենտ-փոխնախագահ:

Վրաչ-բժիշկ:

Տիֆ-սուր վարակիչ հիվանդություն:

Տորպեդո, տորբետո, տորպեդա, թորբետո, թորպետո-տորպեդ, ինքնաշարժ ստորջրյա արկ:

Տրամվայ-տրանսպորտի տեսակ:

Տուալետ-գուգարան, արտաքնոց:

Ցած-բրբ.՝ ներքև:

Ցար-արքա, թագավոր:

Ցարսովո-թագավորություն:

Ցեխ-արտադրամաս, գործամաս:

Ուռ-կեցցե՝:

Փահլիվան, փեհլիվան, փահլևան-բրբ.՝ ըմբիշ, լարախաղաց, ուժեղ, քաջ և հաղթանդամ մարդ:

Փահլևանություն-բրբ.՝ փահլևան լինելը, փահլևանի զբաղմունքը:

Փաշա-բրբ. պատմական՝ փաշա (բարձրագույն քաղաքացիական և ռազմական տիտղոս Օսմանյան Թուրքիայում): Փաշա կապիսի ա) Բարձր դուռ, բ) կառավարական հաստատություն նահանգում, գավառում:

Փասափուսա-խոսակց.՝ եղած-չեղած:

Փարչ-կավե անոթի տեսակ:

Փերչեմ-մազի փունջ, ցցված մազափունջ, քանքուլ, բաշ:

Փիփիջ, փիփիճ-ծխամորճ, ծխափող, փաղակ:

Փոփոլենա, փոփուլենա-ժողովրդական

Փուք-չափի միավոր, մեկ փուքը հավասար է 16 կգ:

Քած-բրբ., խսկց.՝ եգ շուն, ոչ արու, կին, կնիկմարդ, անբարոյական կին:

Քավարըլ քյո-գյուղի անվանում: Քավար՝ բարդի, քյոյ գյուղ: Հավանաբար՝ ծառաշատ:

Քենի-տղամարդու կնոջ քույրը:

Քեֆ, քէյֆ-արբ.՝ ուրախություն, քեֆ, զվարճանք, որակյալ, անկաշկանդ, ինքնական ուրախություն, գինարբուք:

Քյով, քով-մոտ:

Քյոփաք, քյոփագ- շուն, խոսակցական ձեր, տարիքով:

Քյուսպե- կաշվե յուղած վարտիք:

Քոբոլլու, քյոփոլլու, քյոփոլլի-շան տղա:

Քոդտիկ-հյուղակ, խրճիթ:

Քվիթ-փոխհատուցել, փոխհատուցում:

Օթուր, օթուրմակ-նստել:

Օխա-ծանրության միավոր, որը հավասար է 1282 գ:

Օխլամուր, ըխլամուր-թունդ թեյ, տե՛ս թմբի:

Օկեան-օվկիանոս:

Օկուպացիա-ռազմակալում, բռնազավթում:

Օկուպացնել-ռազմակալել, բռնազավթել:

Օղլի, օղլու, օղուլ /օղլու/-բրբ.՝ որդի, զավակ, տղա, երեխա, բյույուկ օղլի-ավագ որդի:

Օռուսիու-լկտի, անբարոյական:

Օվաղիա-ծափողջույններ, ծափահարություններ, պատվացույց, օվսաննա:

Օվիր, Овир-Отдел виз и регистрации -վիզաների և գրանցման բաժին:

Օրունթակ-ներկայացուցիչ:

Օֆիցեր-սպա:

Ֆարրիկա-գործարան:

Ֆաշիստ-իտալական նացիոնալիստական կուսակցություն, այս կերպ էին անվանում գերմանացի ազդեցություններին, այն դեպքում, երբ գերմանական ազգայնականների կուսակցությանը գաղափարախոսությունը նացիոնալ-սոցիալիզմն էր:

Ֆելդշեր- բուժակ, բժշկի՝ միջնակարգ բուժկրթությամբ օգնական:

Ֆես, ֆես-թրք. ֆես՝ գլխարկի տեսակ, ֆես փյուսքյուլու-ֆեսի ծուպ:

Ֆիդայի-արբ.՝ գոհ, ջան ֆեդա՝ ինքնագոհ:

Ֆլիրտ-սեփնեթանք, սիրախաղ:

Ֆրիգատ-նավի տեսակ:

Ֆունտ ստերլինգ, ֆունտ ստեռլինգ-դրամական միավոր Մեծ Բրիտանիայում: Մեկ ֆունտ ստեռլինգը հավասար է 20 շիլլինգի:

Ֆուրգոն-ձիաբեռնասայլ:

**ՕՏԱՐ, ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԵՎ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՌԱԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Բեն Կարապետի ալաջայմ-Ես Կարապետին պիտի առնեմ: Բառացի՝ ես Կարապետի հետ եմ համաձուլվելու:

Բորտ օֆիցեր-հավանաբար՝օդանավի կամ նավի սպա:

Գազվա սիլա իմա թոցի ստարիկ-Վեճից հետո դեռ ուժ ունեմ, ծերուկ:

Գաղբե, օռոսփու- Միայն թուրք հարսն էր պակաս: Բառացի՝ լկտի, պոռնիկի մեկը:

Գարալ չարսում, կառալ չարսում-սև շուկա:

Գյունուս հայիր օլսուն: Գյունդուզ հայիր օլսուն: Գյունուս հայիրի օլսուն-Բարի օր:

Գոսպողի՛ն պորուչիկ-Պարոն պորուչիկ:

Գցը գուլեսի: Կըզը, կիզ կուլեսի-Աղջկա բանա: Աղջկա դոյակ, վարդանոց:

Գուլագ ասամա, կուլակ ամա, կուլակ ամմա-Ականջ մի՛ դիր: Ա՛յ - թե ականջ է, հա՛:

Դուզով կոտիկնե նեստ ցապրավիլ դա գովորիտի ի բեխտի-բուլդ՝ Այդքան տարի չեք մոռացել բուլղարերեն խոսել և երգել:

Դրա մարը պիտի լացցընեմ-արմհ. Դրա մայրիկը պիտի լացացնեմ:

Զլատնի Պյասկի-բուլդ.Ոսկե ավազներ:

Թեսլիմ յագարս: Թեսլիմ յաքարսը-Հանձնվի՛ր, կվառենք:

Թգանըզ, իսմեթս-խափանել մաքրությունը, խափանվեց մաքրությունը, կուսությունը, անարատությունը, ողջախոհությունը, անարատությունը:

Թգանըզ տրը, թգանըզ, թգանըզ տրը, թգանտրըզը, թգանըզ տրը, թգանըզ տի թգանըզթրը-հավանաբար՝ «խափանվեց ողջախոհությունս, խափանվեց երջանկությունս» իմաստով:

Թիզո սլաթկո- շատ անուշ, քաղցր սուրճ:

Իմտա՛տ-օգնություն:

Կաբալ շարշը, Ուսկիտար գաբալ չարսը-Սկյուտար թաղամասի տոնավաճառ շուկա:

Հայիր օլսուն:-Բարև:

Հայիլ օլսուն,օթուր:-Բարև, նատի՛ր:

Հանըմ, նե իստիորսուն:-Տիկի՛ն, ի՞նչ ես ուզում:

Հոշ կիլմիշինից: Հոշ գիլմիշինից: Հոշ գեղիմիգ:-Բարով եք եկել:

Մայգամու գոյթ գացալ:-բուլղարերեն՝ հայեղյանք:

Մորսկայա կրատինա-ծովային պարտեզ (անվանում):

Նե իստիորսուն: Նե իստլօրսունուս:-Ի՞նչ է պատահել: Ի՞նչ եք ուզում:

Յաշասըն-Ապրի՛: Կեցցե՛:

Շեբչինսկի բրոհոտ, Շիպչենսկի պրոխոդ-բուլղ.՝ Շիպկայի լեռնանցք:

Օ՛, բիզիմ քյովըու: Օ՛, բիզիմ քյոյլու -Օ՛, մե՛ր գեղացի:

Օղլում պին քաշ գյուն տինեն, սորա բաքարըզ, մլարը չքմա: Օղլում բին քաշ գյուն դինենեկն, սորա բաքարըզ, մլարը չքմա-Տղաս, քանի մը օր հանգստացի՛ր, հետո կտեսնենք, փողոց դուրս մի՛ գա:

Սաբահնզ հայիր օլսուն: Սաբահնզ հայիրը օլսուն -Բարի լույս:

Սիմիթ գերեզ, սիմիթ գերեզ-Օղաբլիթ, պաքսիմատ:

Սպահնըզ հալիր օլսուն էֆենդիլեր: Սաբահնզ հալիր օլսուն էֆենդիլեր -Բարի առավոտ, էֆենդիներ՛:

Սվետի վրաշ-սուրբ բժիշկ:

Ստարայա Բլանինա, Ստարայա Պլանինա-աշխարհագրական տեղանուն՝ լեռնաշղթա Բուլղարիայի կենտրոնում: Բառացի՝ Ծեր լեռ, Ծեր սար:

Վալերիանի կաթիլներ-դեղանյութ՝ կատվախտի կաթիլներ:

Վար մը բանա լան բաբան- Ինձ խեթ նայող կա: Ինձ թեք մի՛ հայիր:

Տասն օրից ոտքի կելլա-արմհ.՝ Տասն օրից ոտքի կելնի:

Ուսկիտար գաբալը չարշը-բակ, տոնավաճառ: Հնարավոր է՝ Սկյուտար թաղամասի տոնավաճառ-շուկան:

Փիփիճի խան-ծխախտի խանութ:

Доброє утро тате -Բարի՛ լույս, հայրի՛կ:

Идват -Գալիս են:

Рабочий Младенческий Союз -Բանվորական երիտասարդական միություն

Черноморский флот - սևծովյան նավատորմ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քառարաններ

Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. ԱԲ, Հայաստան, Եր., 1976:

Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, ԵՀ հրատ, Եր., 1976:

Հ.Ա.Ասմանգուլյան, Մ.Ի.Հովհաննիսյան, Անգլերեն-հայերեն բառարան, շուրջ 30000 բառ, Հայաստան, Եր., 1984:

Գ.Գասպարյան, Ա.Գրիգորյան, Ա.Հակոբյան, Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.Ա-Բ, Գիտություն, Եր., 2001, 2002:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 4 հատորով, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1969-1980:

Վ.Հ.Հակոբյան, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, ՀՀ ԳԱԱ հրատ., Եր., 1956, էջ 603-613:

Թ.Խ.Հակոբյան, Ստ.Տ.Մելիք-Բախչյան, Հ.Խ.Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 5 հատորով, ԵՀ հրատ., Եր., 1986, 1988, 1991, 1998, 2001:

Ա.Ս.Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, երկրորդ հրատարակություն, Հայաստան, Եր., 1977:

Հ. Մարոյան, Է. Սարգսյան, Հայ-ռուսերեն բառարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1987:

Գ. Ճերեճեան, Կ. Տօնիկեան, Հայոց լեզուի նոր բառարան, հ.1, Պէյրութ, 1992:

Большой Российский энциклопедический словарь, М., 2003.

М.А.Леонидова, Карманный болгарско-русский словарь, 10600 слов, “Русский язык”, М., 1980.

М.А.Леонидова, Карманный русско-болгарский словарь, 8700 слов, “Русский язык”, М., 1978.

Д.А.Магазаник, Турецко-русский словарь, 40000 слов и выражений, Гос.изд. иностранных и национальных словарей, М., 1945.

С.И.Ожегов, Словарь русского языка, около 57000 слов, “Русский язык”, М., 1988.

Иосиф А. Орбели, Избранные труды в двух томах, том II, выпуск 2,

Курдско-русский словарь, “Зангак-97”, Ер., 2002.

Турецко-русский словарь 48000 слов, “Русский язык”, М., 1977.

В.Г.Шербинин, Э.М.-Э.Мустафаев, Карманный Русско-турецкий словарь, 11000 слов, “Русский язык”, М., 1995.

Ю.В.Щека, Русско-турецкий разговорник, СП “Конто”, М., 1992.

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ




Մերթիզուգի բնակիչները գյուղի սրճարանի մուտքի մոտ: Չափից կանգնած պարսկին Եսրապետյան է




Մերդիգյոզի հին փնեռից մեկը (լուսանկարվել է 2010թ.)



Մերդիգյոզի հին փնեռից մեկը



*Քևորգ Հմայակյան՝
անձնագրային լուսանկար, 1976թ.*



*Կարապետ աղա՝ անձնագրային
լուսանկար*



*Կարապետը և Էլմաս Հմայակյանները՝
Քևորգի և Հմայակի հետ, Վառնա, 1924թ.*



Ատնդուհին, 1930-ական թթ.



Մերսեդես Մանթաշյանը՝ ամուսնու և որդու հետ, Վառնա, 1940-ական թթ.



Վերդ Հմայակյանը՝ կենդրոնում՝ ընկերների հետ, Վառնա, 1930-ական թթ.



Ատնդուհին՝ իր զավակների՝ Դշտուհու և Օնիկի հետ, 1922թ.



*Գլխտիի Հմայակյանը՝ վերևից երկրորդ շարքում աջից չորրորդը՝
ուսուցիչների և դասընկերների հետ*



*Վերոգ Հմայակյանի կինը՝ Գլխտիին՝ առաջին շարքի չափից
երկրորդը՝ ուսուցչի և դասընկերների հետ*



Բուլղարահայերի երգչախումբը, ներքևից երրորդ շարքում՝ աջից երրորդ Վևորգն է



Վևորգ Հմայակյանը՝ վերևից աջ եզրի երրորդ շարքում, դասարնիկերների հետ, 1923թ.



Մեներջանների ընտանիքը



*Հունահայ և բուլղարահայ ներգաղթյալ հարևանները նախկին Բաղրամյան
ճ-րդ փողոցում գրմվող նորակառույց բնակարաններից
մեկում՝ այժմյան Օրբելի եղբայրների փողոցում*



*Գևորգ և Գշխուհի Հմայակյանները,
Վառնա, 1941թ.*



*Գևորգ և Գշխուհի Հմայակյանները՝
Օնիկի և կնոջ հետ*



Գշխուհի և Մարիամ քույրերը՝ Հարություն Հմայակյանի հետ, 1947թ.



Դշխուհի և Հարություն Հնայանյանները. 1944թ.



*Դշխուհու կրկանը քույրը՝
Եղսան (Էլիզբեթ)*



*Եղսան և Մարչեն քույրերը՝ Հարությունի
Հմայակյանի հետ, 1950թ.*



*Արշալույսի դուստրը Աշխենը՝
ամուսնու հետ, 1970*



*Դշխուհի Հմայակյանը՝
բրոջ՝ Մարիամի հետ*



*Անանիան և Միմոնը՝ իրենց տան
առաջ, Երևան, 1967թ.*



*Ջախից՝ Օնիկը, կինը և դուստրը՝
Ղևոնդուհին, աջից՝ Գևորգ
Հմայակյանի եղբոր՝ Հմայակի կինը՝
Բնապրիսա, և զավակները՝
Կարապետը ու Էլիզան,
Վառնա, 1955թ.*



Գևորգ Հմայակյանի ընտանիքը, 1968թ.



*Գևորգ Հնայակյանի հարյուրամյակի առթիվ
արված լուսանկար (2015թ.)*



*Բուլղարահայերի երգչախումբը և Լուսինն Չաբարյանը՝ համերգի
ընթացքում, Գևորգ Հնայակյանը աջ կգրում*



Բուլղարահայերի երգչախումբը հյուրասիադերի ժամանակ, չորրորդ շաբթուն` կենդրոնում, Գևորգ Հնայակյանը



Բուլղարահայերի երգչախումբը և հյուրերը` Նոր Արեշի թիվ 7 մշակույթի փան շքամուտքի դիմաց, աջից չորրորդը` առաջին շաբթուն կանգնած, Գևորգ Հնայակյանն է

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից... 3	
Автобиографическое эссе Геворка Амаякяна..... 3	
Երկու խոսք 6	
Իմ կյանքը 19	
Մի հատված Հովհաննես Թաքուկյանի «Կյանքիս տարիները» գրքից..... 104	
Հավելված՝ Գևորգ Հնայակյանի ստեղծագործությունները..... 106	
Թզբեհը 107	
Յանկատորը՝ Միջերկրական ծովի խարազանը, քրիստոնյա աշխարհի սարսափը 208	
Տարզանը 267	
Մարիամը 300	
Բուլղարական երգեր..... 331	
Резюме..... 337	
Summary 337	
Համառոտագրություններ և հապավումներ 339	
Ծանոթագրություններ 341	
Օտար, բարբառային և խոսակցական բառերի բացատրական բառարան 365	
Օտար, բարբառային և խոսակցական արտահայտություններ և բառակապակցություններ 381	
Օգտագործված գրականության ցանկ..... 383	
Ներդիր՝ քարտեզներ, լուսանկարներ	

Ավագյան Ինգա Էդուարդի

**Մեծ եղեռնը վերապրածները
(մատենաշար, գիրք 6)**

Իմ կյանքը.

Պետրոս Հմայակյանի հուշապատումը

Авагян Инга Эдуардовна

**Пережившие Великий геноцид
(серия изданий, книга 6)**

Моя жизнь

Мемуары Геворка Амаякяна

***Гюмри, Эльдorado, 2020 г.
(на армянском языке)***

Գիտական խմբագիր՝

ս. գ. ք. Հասմիկ Հմայակյան

Գրախոսներ՝

*ս. գ. դ. Ռուբեն Կարապետյան
ս. գ. ք. Արդակ Հովհաննիսյան*

Խմբագիր՝

ք. գ. ք. Անահիտ Միրզյան

Սրբագրիչներ՝

*Անահիտ Միրզյան,
Կարինե Գևորգյան
Հասմիկ Թադևոսյան (ռուսերեն)*

***Միրելի՛ ընթերցող, Ձեր առաջարկություններն
ու ցանկությունները կարող եք ուղարկել
ingavagan.76@mail.ru էլ փոստով***

Ստորագրված է տպագրության՝ 13.01.2020թ.
Գրաչափ՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:
25.25 պայմ.տպ. մամուլ: Տպաքանակ՝ 200:

